ԱՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

www.naregatsi.org

www.naregatsi.org

1226

www.naregatsi.org

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ СКАЗКИ

Под общей редакцией академика

ИОСИФА ОРБЕЛИ

III

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван 1962

www.naregatsi.org

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Ընդհանուր խմբագրությամբ
ակադեմիկոս

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ

Ա II 165/39
հատ 256
891.99-54

III

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1962

www.naregatsi.org

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

ՋՈՐՅԱՆ Ս. Ե., ՀՈՎՆԱՆ Գ. Ն., ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Ա. Տ.,
ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՆԱՋԻՆՅԱՆ Ա. Մ.

Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց
Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆԸ

Խմբագիրներ
Գ.Ն. ՀՈՎՆԱՆ, ԷՄ.Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

www.naregatsi.org

www.naregatsi.org

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

«Հայ ժողովրդական հեքիաթների» III հատորը տպագրության էր պատրաստվում, երբ վախճանվեց նրա հրատարակության ընդհանուր խմբագիր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

Ակադեմիկոս Հ. Օրբելին շատ խոշոր վաստակ ունի հայ բանահյուսության հավաքման, հրատարակման ու հետազոտության բնագավառում: Նա եռանդուն մասնակցություն է ցուցաբերել «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հազարամյա հոբելյանին, բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ նվիրելով էպոսին: Ակադեմիկոս Հ. Օրբելու խմբագրությամբ և իմաստալից ներածությամբ է լույս տեսել «Սասունցի Դավիթ» էպոսի համանավամ տեքստը: Ակնառոր գիտնականը տարիների ընթացքում հնագիտական և բանասիրական իր ուսումնասիրություններին զուգընթաց հավաքել է նաև բանահյուսական հարուստ նյութեր, հետազոտություններ գրել և կատարել թարգմանություններ: Գրականության ինստիտուտի հրատարակությամբ վերջին տարիներս լույս տեսան ակադեմիկոս Հ. Օրբելու «Հայ ժողովրդական հերոսական էպոսը», «Միջնադարյան Հայաստանի առակները» աշխատությունները: Մի շարք գործեր տակավին մնում են անտիպ:

Ակադեմիկոս Հ. Օրբելին իր խորհուրդներով և ցուցումներով մեծ օգնություն է ցույց տվել «Հայ ժողովրդական հեքիաթների»

www.naregatsi.org

ներկա գիտական հրատարակության գործին, լինելով այդ հրատարակության ընդհանուր խմբագիրը:

Ակադեմիկոս Հ. Օրբելին հայ ժողովրդի մտավոր մշակույթի ասպարեզում շատ կարևոր ու առաջնակարգ տեղ էր տալիս ժողովրդական բանահյուսությանը: Բանավոր ստեղծագործության հուշարձաններում՝ էպոսում, հեքիաթներում, երգերում, առածներում մեծանուն գիտնականը տեսնում էր ազատության ու անկախության համար աշխատավոր հայ ժողովրդի մղված դարավոր պայքարի գեղարվեստական անդրադարձումը, նրա հոգեբանությունն ու աշխարհընկալումը, երազանքներն ու իղձերը:

Մեծավաստակ հայագետ Հ. Օրբելու ցանկությունը՝ հրատարակված տեսնել հայ բանահյուսության հարուստ ժառանգությունը, Ինստիտուտը շարունակում է իրականացնել՝ տպագրության պատրաստելով «Հայ ժողովրդական հեքիաթների» հետագա հատորները:

www.naregatsi.org

ՆԱԽԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության III հատորը պարունակում է պատմական Այրարատ նահանգի Վաղարշապատ գյուղի (այժմ Էջմիածին քաղաք), Շահրիարի Ջաֆարապատ գյուղի (այժմ Հոկտեմբերյանի շրջանի Գետաշեն գյուղ), Գրամփա գյուղի և Սուրմալուի Կուլաբ ու Ալիճան գյուղերի (այժմ Թուրքիայում) հեքիաթները։ Այս հատորով ամփոփվում են Արարատյան դաշտի հեքիաթները։ Հնարավոր է, որ հետագայում հիշյալ բնակավայրերից նոր հեքիաթներ հայտնաբերվեն. այդ նյութերը որպես հավելված կօգտագործվեն հետագա հատորներում։

Պատմական Վաղարշապատի մասին խոսվել է II հատորի նախաբանում։ Այժմ մի քանի խոսք Սուրմալուի և մյուս վայրերի մասին, որտեղից ժամանակին գրի են առնվել ներկա հատորում զետեղված հեքիաթները։ Սուրմալուն կամ Սուրմառին եղել է հայտնի բերդաքաղաք։ Տեղի բնակիչները զբաղվել են բրնձի, բամբակի մշակությամբ, ինչպես և այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ։ Սուրմալուի բնակիչները հնագույն ժամանակներից սկսած տարբեր ազգությունների և բարբառների ներկայացուցիչներ են։ Հիշյալ Կուլաբ և Ալիճան գյուղերը եղել են հայաբնակ։ Սուրմալուից հեռու չէ Շահրիարի Ջաֆարապատ գյուղը, որն ընկած է Շարուրի դաշտում, Արաքսի հովտում։

www.naregatsi.org

Գրամփա գյուղը գտնվում է Էջմիածնից 3—4 կմ հեռավորության վրա, որի ազգաբնակչությունը ներգաղթածների և բնիկների խառնուրդ է։

Ներկա հատորում տեղ գտած հեքիաթների մեծ մասը հավաքել և հրատարակել է անխոնջ ու բազմավաստակ բանահավաք Սարգիս Հայկունին։ Իր հաղորդած տեղեկության համաձայն Ս. Հայկունին 1890-ական թվականներին շրջագայել է Սուրմալուի գավառում, եղել է նաև Շահրիարում և հավաքել տեղի հեքիաթներից։ Հետագայում Էջմիածնում աշխատելու ժամանակամիջոցում (Գևորգյան ճեմարան) նա ջանասիրաբար գրի է առել նաև Էջմիածնի հեքիաթներից և այդ բոլորը տպագրության պատրաստելով ներկայացրել է «Էմինյան ազգագրական ժողովածուին», որի II (1901) և IV (1902) հատորներում հրատարակվել են վերոհիշյալ նյութերը։

Ս. Հայկունու բանահավաքչական և բանագիտական գործունեությունը շատ ավելի լայն ու բազմակողմանի է եղել։ Նա երկար տարիներ մեղվաջան հավաքել է հայ ժողովրդի բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործությունները։ Նույն «Էմինյան ազգագրական ժողովածուի» II և IV հատորներում լույս են տեսել «Սասնա ծռեր» էպոսի նրա գրի առած նոր տարբերակները, Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների մեծաքանակ ու հետաքրքրական հեքիաթները, ժողովրդական վեպերն ու զրույցները։ «Էմինյան ազգագրական ժողովածուի» V հատորն ամբողջովին ընդգրկում է Ս. Հայկունու ժողոված «Հայ-քրդական վեպը», որտեղ ներկայացված են հայ ասացողներից գրի առած քրդական ժողովրդական սիրավեպերը, հերոսական զրույցներն ու հեքիաթները, իսկ VI հատորն ամփոփում է Արևմտյան Հայաստանի գավառների ժողովրդական երգերի, պարերգերի, առածների, հանելուկների, օրհնանքների և այլ ժանրերի նմուշները։ Առանձին գրքով լույս է տեսել Ս. Հայկունու հավաքած «Առակներն ու կենդանական վեպիկները» (1907)։ Ս. Հայկունու գրչին են պատկանում բանահյուսական, ազգագրական ու տեղագրական այլ աշխատություններ։ Բանահավաքչական ու բանասիրական իր բեղուն գործունեության ընթացքում Ս. Հայկունուն միշտ առաջնորդել է հայ ժողովրդի բանավոր ստեղծագործությունները կորստից փրկելու և դրանցով մեր մշակույթի գանձարանը հարստացնելու բարձր գաղափարը։ Իր ժամանակին և հետագայում ըստ արժանվույն գնահատվել է Ս. Հայ-

www.naregatsi.org

կունու հայրենասիրական անձնվեր գործունեությունը հայ բանահյուսության նշխարների հավաքման ու հրատարակման ասպարեզում։

Անշուշտ, հայ բանահյուսության նյութերի հրատարակման գործում խոշոր դեր է խաղացել «էմինյան ազգագրական ժողովածուն», որի հետ է կապված Ս. Հայկունու գործունեությունը։ Ազգագրական-բանահյուսական այդ հանդեսը, պրոֆ. Գր. Խալաթյանցի խմբագրությամբ, առաջ քաշեց բանահյուսական նյութերի հրատարակման և ուսումնասիրության գիտական մոտեցման խնդիրը և ուղղություն տվեց բանահյուսությամբ զբաղվող բազմաթիվ հայ մտավորականների։

Ներկա հատորի հեքիաթների մյուս խոշոր մասը Տիգրան Նավասարդյանցի գրի առած և նրա արխիվում պահպանվող այլ բանահավաքների անտիպ հեքիաթներն են (Արարատյան դաշտի բնակավայրերից)։ Տ. Նավասարդյանցի գործունեության մասին արդեն խոսվել է II հատորի նախաբանում, որտեղ ամփոփված են նրա տպագիր նյութերը և անտիպ նյութերից մի քանիսը։ Ներկա հատորում ընդգրկված են Տ. Նավասարդյանցի բոլոր անտիպ հեքիաթները, որոնք վերաբերում են Արարատյան դաշտի բնակավայրերին։ Հաճախ բանահավաքը չի նշում գրառման վայրը կամ հեքիաթի հայրենիքը, այդպիսի դեպքում կողմնորոշվում ենք լեզվով՝ բարբառային առանձնահատկություններով և կողմնակի տեղեկություններով։ Տ. Նավասարդյանցի նյութերի մեջ կան այնպիսի հեքիաթներ, որոնք գեղարվեստական տեսակետից քննության չեն դիմանում։ Դրանք այն նյութերն են, որոնք գրի են առնվել անփորձ ուսուցիչների և սիրողների կողմից՝ չպահպանելով բարբառային և ասացողի պատմողական-ոճական առանձնահատկությունները, բայց իրենց մեջ պարունակում են հետաքրքիր միջադեպեր, սյուժետային գծեր ու հանգամանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն գիտական հետազոտությունների համար։ Ե՛վ Տ. Նավասարդյանցի և՛ Ս. Հայկունու նյութերի մեջ կան նաև միևնույն սյուժեի վարիացիաներ, բայց դրանք բոլորն ընդգրկված են հատորի մեջ, մի մասը՝ հիմնական բնագրերի բաժնում, մյուս մասը՝ Հավելվածում։ Մենք առաջնորդվել ենք գիտական հրատարակության սկզբունքով, հաշվի առնելով, որ դրանք ոչ միայն ընթերցանության նյութեր են, այլև ազգագրական, պատմական, գրականագիտական,

www.naregatsi.org

լեզվագիտական և այլ բնագավառների հետազոտության նյութեր։

«Հայ ժողովրդական հեքիաթների» III հատորում նույնպես պահպանված են տեքստաբանական այն սկզբունքներն ու կանոնները, որոնք մշակված են ամբողջ հրատարակության համար, հաշվի առնելով նաև այս հատորի բնույթն ու առանձնահատկությունները։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ համառոտակի նշել տեքստաբանական այն ընդհանուր սկզբունքները, որոնց մասին խոսվել է նախորդ հատորների առաջաբաններում։

1. Պահպանված է հեքիաթների պատումների ամբողջականությունը։ Տպագիր և ձեռագիր աղբյուրներից առնված նյութերը չեն ենթարկված որևէ խմբագրական փոփոխության (հապավում, հավելում և այլն)։ Ասացողների «սխալները»՝ պատմելու ընթացքում սյուժետային գծից խոտորումներ, դեպքերի, թվերի շփոթում ու անհամաձայնություն և այլն, չեն ուղղված, բայց դրանց մասին նշումներ են արված ծանոթության կարգով։ Չեն ուղղված նաև գրական լեզվից ու օտար լեզուներից վերցված այն բառերը, որոնք ասացողները գործ են ածել հնչյունափոխված ձևով։ Այդպիսի բառերը շարված են շղատառով և անհրաժեշտության դեպքում ծանոթագրված։ Հեքիաթների վերնագրերը մնում են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում է։

2. Հեքիաթների լեզուն չի փոփոխված, այսինքն թողնված է այնպես, ինչպես գրի են առել բանահավաքները ասացողներից։

3. Հեքիաթների բնագրերի նկատմամբ շտկումներ է կատարված այն դեպքում, երբ միևնույն բնագրում նույն բառը հընչական-արտասանական տարբեր գրություն ունի։ Հետևողականորեն ճշտված է բնագրերի կետադրությունը։ Որոշակի է դարձված հատուկ անունների գրությունը։ Բացի անձնանուններից ու տեղանուններից բնագրերում մեծատառով են դրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչներին տրված անունները և հեքիաթներում գործող հերոսներին տրված մականունները։

4. Սկզբնաղբյուրներում հանդիպող բանահավաքների ընդմիջարկումները (բառերի և արտահայտությունների բացատրություններ, առանձին դեպքերի ու դրվագների մեկնաբանություններ և այլն) առանձնացված են բուն բնագրերից և դրված էջատակին։ Բոլոր տեսակի ճշգրտումների, բացատրությունների ու ծանոթու-

www.naregatsi.org

թյունների դեպքում էջատակին համապատասխան նշում է կատարված՝ Ս. Բ. (ծանոթություն բանահավաքի), Ս. Կ. (ծանոթություն կազմողի), Ս. Ա. (ծանոթություն ասացողի)։

Այս ընդհանուր սկզբունքների և կանոնների կիրառմանը զուգընթաց հաշվի են առնված նաև սույն հատորի նյութերի առանձնահատկությունները։ Այս հատորի նյութերը լեզվա-բարբառային կողմից և գրառման մակարդակի ու վիճակի տեսակետից իրարից բավական տարբերվում են։

Վերցնենք, օրինակ, Ս. Հայկունու գրառումները։ Թեև դրանք բոլորն էլ պատկանում են Արարատյան բարբառի ճյուղին, բայց արտասանական-քերականական որոշակի տարբերություններ կան Սուրմալուի, Էջմիածնի և Շահրիարի հեքիաթների միջև, անգամ Էջմիածնի և նրա մոտ գտնվող Գրամփա գյուղի հեքիաթների միջև։ Սուրմալուի Կուլապ գյուղից գրի առած հեքիաթների մեջ նկատվում է արևմտահայ («կը» ճյուղի) բարբառների և պարսկահայ (Խոյի, Մարաղայի) բարբառների հնչյունական ու քերականական ազդեցությունը։ Նույն Սուրմալուի Ալիճան գյուղից գրի առնված հեքիաթում Արևմտահայ բարբառների ազդեցությունը համարյա չկա։ Շահրիարի Ջաֆարապատ գյուղի և Էջմիածնի Գրամփա գյուղի հեքիաթներում արդեն պարսկահայ բարբառների ազդեցությունը համեմատաբար թույլ է արտահայտված։ Այս բնակավայրերի հեքիաթների լեզվական խայտաբղետությունը մասամբ գալիս է նաև ասացողներից, որոնք տարբեր տեղեր ապրելով՝ խառնել են լեզուն։ Այդպիսի մի տեղեկություն է տալիս Ս. Հայկունին Շահրիարի Ջաֆարապատ գյուղի հեքիաթների ասացող Ա. Զուլոյանի մասին, որը գաղթած է եղել Քորուն գյուղից (Հին Բայազետի մոտ)։

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Ս. Հայկունին հետևողական չէ հեքիաթների լեզվի հնչյունական և քերականական առանձնահատկությունների պահպանման հարցում, որի մասին նշել են ժամանակին նաև նրա աշխատությունների գրախոսները։ Օրինակ, Գրամփա գյուղի «Անհավատարիմ և հավատարիմ կիները» հեքիաթի մեջ նույն բառը դրված է երեք ձևով՝ (փանՋարա, փանՃարա, փանՋարա)։ Նույն այդ հեքիաթում կան քերականական անհարիր ձևեր («խոխոռց է գալում», «խոսեց թագավորին հետը» և այլն)։ Սուրմալուի հեքիաթների մեջ հանդիպում ենք նույնպիսի անհետևողականության, ինչպես օրինակ՝ աՋԿ, աՋՔ, էԹանք, էՐԹանք

www.naregatsi.org

և այլն։ Էջմիածնի հեքիաթներում ընդհանուր առմամբ լավ է պահպանված բարբառի յուրահատկությունները (մոնց ա, թխա, գիտամ և այլն), բայց կան նաև խոտորումներ (բռնեՐ ես, էկեՐ ես, մե մեշի մեջ մտան, և այլն)։ Ս. Հայկունին իր գրի առած նյութերի մեջ ներմուծել է նաև մայրենի բարբառի (Տրապիզոն) հնչյունական և քերականական որոշ ձևեր, իսկ երբեմն էլ գրական հայերենի տարրեր։

Ս. Հայկունու հեքիաթներում միօրինակ ենք դարձրել այն բառերը, որոնք հնչյունական և քերականական կողմից հեռանում են տվյալ բարբառի օրինաչափություններից, հատկապես երբ կիրառված ենք գտնում ճիշտ ձևը։ Ուղղում ենք կետադրությունը, ավելի հստակ դարձնում առոգանության նշանների գործածությունը։

Տ. Նավասարդյանցի ձեռագիր նյութերը երկու խմբի են բաժանվում։ Մի մասը իրեն՝ Նավասարդյանցի անձնական գրառումներն են (թեև չի նշում այդ մասին), որոնք համեմատաբար լավ վիճակում են (Արարատյան բարբառի լեզվական-բարբառային առանձնահատկությունները պահպանված են), իսկ մյուս մասը Նավասարդյանցին ուղարկված այլ բանահավաքների նյութեր են, որոնք գրեթե վերապատումներ են, գրական լեզվի և բարբառային տարրերի խառնուրդով։ Այդ նյութերի մեջ օգտագործված են նույնիսկ գրական լեզվի արխաիկ ձևեր (նորա, սորա և այլն)։ Ձեռագիր այդ սևագիր նյութերում շատ կան վրիպումներ, շարադասական և շարահյուսական անհարթություններ, հատկապես ու շաղկապի անհարկի օգտագործում։ Հնարավոր չափով այդ վրիպումներն ու անհարթություններն ուղղել ենք։

Մի քանի խոսք հատորի կառուցվածքի մասին։

«Հայ ժողովրդական հեքիաթներիս» III հատորն ունի հետևյալ բաժինները՝

1. Հիմնական բնագրեր.— Այստեղ ընդգրկված են բոլոր այն հեքիաթները (և՛ Ս. Հայկունու տպագիր նյութերից և՛ Տ. Նավասարդյանցի անտիպ նյութերից), որոնք բովանդակության ամբողջականության և ժանրային-գեղարվեստական տեսակետից անթերի են, այսինքն հեքիաթային տվյալ սյուժեն ներկայացնում են անխաթար և առանց աղճատման։

2. Հավելված.— Այստեղ զետեղված են՝ ա) Ս. Հայկունու գրի առած և «Էմինյան ազգագրական ժողովածուի» IV հատորում

www.naregatsi.org

տպագրված «Անգին բիլբուլ և տիկին Մանուշակ» ու «Շեխ-Սատի» հեքիաթները, որոնց ասացողը ծագումով քուրդ է եղել (Մկրտիչ-Կուլան Շահրիմանյան) և պատմել է Վաղարշապատի ու Մոկաց խառը բարբառով։ բ) Ե՛վ Ս. Հայկունու, և՛ Տ. Նավասարդյանցի նյութերից այն հեքիաթները, որոնք բովանդակության ամբողջականության և սյուժետային գծի զարգացման տեսակետից անթերի չեն, ինչպես նաև այն հեքիաթները, որոնք ակնհայտ տարբերակներ են՝ հեքիաթային դեմքերի ու գործողությունների նույնանման զարգացմամբ։ գ) Այնպիսի հեքիաթները (մեծ մասամբ Տ. Նավասարդյանցի անտիպ նյութերից), որոնց մեջ լեզվա-բարբառային առանձնահատկությունները չեն պահպանված և հանդես են բերված որպես ազատ վերապատումներ։ դ) Անավարտ և թերի հեքիաթները, երբ զանազան պատճառներով գրառման ձեռագրերի սկիզբը կամ վերջը պակասում է, բայց միայն այն դեպքում, երբ այդ նյութերը բանահյուսական արժեք և հետաքրքրություն են ներկայացնում։

Ներկա հատորում հիմնական բնագրերի և Հավելվածի նյութերի մեջ ներքին դասակարգում՝ ըստ հեքիաթների բնույթի, սյուժեների ու թեմաների, չի կատարված, որպիսին արված էր նախորդ հատորներում։ Հեքիաթների ներքին դասակարգում չի կատարված՝ նկատի առնելով ներկա հատորի նյութերի տարբեր տեղերից և տարբեր մարդկանց կողմից գրի առնվելու հանգամանքը։ Այդպիսի դասակարգման դեպքում կստացվեր գրառման տարբեր սկզբունքներով ու բարբառային տարբեր երանգ ունեցող նյութերի խայտաբղետ խառնուրդ։ Դրա համար էլ նյութերը դասակարգված են ըստ կոնկրետ բնակավայրերի և ասացողների. օրինակ, Սուրմալուի նյութերը դրված են առանձին, Շահրիարինը՝ առանձին, Վաղարշապատինը՝ Ս. Հայկունու գրառումները՝ առանձին, Տ. Նավասարդյանցինը՝ առանձին։ Այսուհանդերձ տվյալ դասակարգման թերին լրացնելու համար հատորի վերջում տալիս ենք հատորի հեքիաթների բաժանումը ըստ բնույթի և սյուժետային-թեմատիկ խմբերի՝ նշելով հեքիաթների համարները։

3. Բառարան.— Ընդգրկում է տվյալ հատորում հանդիպող օտար բառերի և դժվար-հասկանալի բարբառային բառերի բացատրությունները։

4. Ցանկեր.— ա) Անվանական, որտեղ տրված են I, II, III հատորներում (Արարատյան դաշտի հեքիաթներ) եղած անձնանուն-

www.naregatsi.org

ները, ինչպես նաև բոլոր հեքիաթային հատուկ անունները, անհրաժեշտ դեպքերում՝ մասնակի բացատրությամբ։ բ) Առարկայական, որտեղ ներկայացված են I, II, III հատորներում հանդիպող բնության, հասարակական-տնտեսական, ընտանեկան-կենցաղային և հեքիաթային-առասպելական բոլոր իրերն ու երևույթները, անհրաժեշտ դեպքերում մասնակի բացատրությամբ։ գ) III հատորի հեքիաթների այբբենական և ըստ տեղի ու ասացողների ցանկեր։

www.naregatsi.org

ԱՅՐԱՐԱՏ

www.naregatsi.org

www.naregatsi.org

1. ՀԱԶԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ

Կար ժամանակով մեկ հալիվոր մարդ, թոռչի էր. իրեք ախչիկ ուներ, մի կնիկ. ընդրան ուրիշ փեշակ չուներ. կէթար ձուկ բըռնելու. ինչ ղդար թոռ կքցեր, հինգ հատ ձուկ կբռներ չար իրիկուն. իրիկունը հինգ հատ ձուկը վեր կալեր, կբերեր տուն. հինգ ջան ին, ամենքը մեկը կուտեին։

Ըդրա կնիկը մեռավ, գնաց ուրիշ կնիկ բերեց իրա տունը։

Թոռը վե կալավ, գնաց ձկան. էլի հինգ հատ ձուկը բռնեց, վե կալավ բերեց տուն, տվեց կնկան. կնիկը հինգ հատ ձուկն էլ էփեց. մի հատը թաքուն կերավ։

Մարդը էկավ տուն, ասեց.— Կնի՛կ, ձկները բեր, ուտենք։

Չորս հատ ձուկը բերեց. էրկու հատը տվեց իրեք ախչկան՝ կերան, էրկու հատը դրեց իրանց աղաքը։

Ասեց.— Կնի՛կ, ես հինգ հատ ձուկ եմ բերե, էդ խի՞ էրկուսը տալիս ես իրեք ախչկան, բա մեկը ի՞նչ ես արե։

Ասեց.— Սոված ի՝ մեկը կերա, էգուց վեց հատ կբերես, մի հատ ավել կտամ ըդրանց։

Ասեց.— Անկարելի ա, հինգ հատից ավել չեմ կարա բերի. մեր ղսմաթը էդ ա, ըդով կառավարվենք։

2—2573

www.naregatsi.org

Ասեց.— Որ է՛դ էր քու ղսմաթը, էդ էր քու դրուլիկը, առավոտ քու տանը չեմ մնա։

Կասի.— Ի՞նչ պատճառով չես մնում։

— Օրը հինգ հատ ձուկ ես բերում. էդ ախչկերքը կորցրա. կէթաս էլի հինգ հատ ձուկը կբերես. էրկուսը ես կուտեմ, էրկուսը դու, մեկի կեսը ես կուտեմ, մեկի կեսն էլ դու. կուշտ կուտենք, ապրուստ կանենք։

Ասեց.— Կնի՛կ, մո՞նց կորցնեմ. իմ ջիգյարն են։

Ասեց.— Անկարելի ա, կկորցնե՛ս՝ կնիկ կըլլեմ, չես կորցնի՝ ես կկորեմ. կորեմ լավ ա, թե սովամահ ըլլեմ։

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, դու՝ քու աստված. տանե՛մ, կորցընե՛մ. իրեք հատ աղի բլիթ թխա։

Իրեք հատ աղի բլիթ թխեց. վե կալավ իրեք ախչկան էլ, ընկան ճամփա ու գնացին. մե մեշի մեջ մտան։

Ախչիկները ասեցին.— Պապի՛, էս ո՞ւր ենք էթում։

— Ա՛յ որդի, էթում ենք ցախի։

— Էս ցախերը թոփ անենք, տանենք. բա՛ ո՞ւր ենք էթում։

— Լավ ցախի տեղ գիտամ, էթում ենք ընտի։

Գնացին, նստեցին մի տեղ, սովածացան. էդ աղի բլիթները հանեցին, կերան՝ շատ ծարավեցին։

Ախչիկները ասեցին.— Պապի՛, ծարավեցինք. ջուր ո՞րտի կա։

Ասեց.— Է՞յ, էն բանցը դարը տենո՞ւմ եք։

Ասեցին.— Տենում է՛նք։

Ասեց.— Ընդրա տակին ջուր կա. գնացե՛ք խմեք, էկեք, ես ըստի կնստեմ։

Ասեցին.— Պապի՛, արևը մութն ա, դարն էլ հեռու ա, ի՞նչ անենք։

— Գնացե՛ք,— ասեց,— ես ըստեղ եմ։

Էդ իրեք ախչիկն էլ գնացին դպա դարը. էդ հալիվորը ետ դառավ ու փախավ. էկավ տուն։

Կնիկն ասեց.— Ախչկերքը կորցըրի՞ր։

Ասեց.— Կորցրեցի։

Ասեց.— Թոռը վե կալ գնա ձկան։

Առեց թոռը քցեց, էրկու հատ ձուկը բռնեց. էլ ընդուց դեն, ի՞նչդար քցեց, դարտակ դուրս էկավ թոռը։ Էրկու ձուկը վե կալավ էկավ տուն, տվեց կնկան, կնիկն ասեց.— Բա էն իրեք ձուկն ո՞ւր ա։

www.naregatsi.org

Ասեց.— Էն իրեք ձուկն ընդոնց զսմաթն էր. էն զտար արեցիր, որ իմ ախչկերքն էլ կորցրեցի։

Էդ հալիվորը ասեց.— Էթա՛մ, իմ ախչկերքին էլի գթնեմ, բերեմ։

Գնաց, ման էկավ, չի գթավ. դարտակ հետ դառավ, էկավ դպատունը. օրն էրկու ձկով ապրուստ արեցին։

Խաբարը տանք էդ իրեք ախչկանից։ Գնացին, էն դարի տակ ջուր չի գթան, ետ դառան, էկան, իրանց հորը ման էկան՝ չգթան, իրանց ճանփեն էլ կորցրեցին։ Մի բարալիկ ճանփա ընկավ մեջի մեջին ընդրանց աղաքը. էդ ճանփեն բռնեցին ու գնացին։ Գնացին, դուս ընկան մի քաղաքի ղրաղ. ընդրանց ծարավությունը շա՛տ էր կոխե, ջուր խմեցին ու նստան։ Մութն ընկավ. սովածությունը ընդրանց շա՛տ քյար արեց, մենծ ախչիկն ասեց.— Ախչկե՛րք, էկե՛ք ցեթենք, ո՛ւմ ցեթը կարճ ա՝ ընդրան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.— Ընդենց բան կըլլի՞, որ դուք ասեցիք։

Միջնեկ ախչիկն ասեց.— Բա ի՞նչ անենք, մեր հերը մեզ կորցրեց. մեր մեռնիլը լավ ա, քանց մեր ապրիլը։

Պուճուր ախչիկը ասեց.— Դո՛ւք գիտաք։

Նստեցին, իրեքով ցեթեցին, պուճուր ախչկա ցեթը կարճ էլավ. մենծ ախչիկն ասեց.— Դե՛, պուճուր ախչկան ուտենք։

Պուճուր ախչիկն ասեց.— Մե քիչ քնեք, վե կացեք, կերե՛ք։

Ընդրանք պառկան, քնան, պուճուր ախչիկը վե կացավ, աստված կանչեց, ասեց.— Ընձի աղատա ըստրանց ձեռիցը, հրմի վե կենան, ընձի պըտի ուտեն։

Նստեց, մատով գետինը փորեց, միտք էր անում։

Էրկու հատ չամիչ դուս էկավ գետնիցը. մի չամիչը դրեց էն քվոր բերանը, մեկը՝ էն քվոր։ Մեկ էլ փորեց, իրեք հատ դուս էկավ. մեկը քցեց իրա բերանը թեզ, մեկը էն քվոր, մեկը էն քվոր բերանը դրեց։

Ախչկերքը ասեցին.— Ա՛յ քիր, էդ ինչ ես գթնում։

Ասեց.— Ըստի փորում եմ, չամիչ ա դուս գալի։

Էկան իրեքով էլ փորեցին. մի լտրաչափ չամիչ հանեցին. նըստեցին, կուշտ կերան իրեքով էլ։ Էկան մեկ էլ փորեցին. մի ծակ էլավ, մի ախչիկ գոմբալով ընկավ ծակի մեջը. էդ ախչիկը թամաշա արեց՝տեհավ թաքավորի մեյտարխանեն ա. ձիանոց աղաքը չամիչը, խուրմեն, բատամի մեջը, պոպոքի մեջը՝ ուտում են։ Փեշը լիքը լցեց ու էդ ծակից դուս էկավ։

www.naregatsi.org

էն ախչկերքը ասեցին.— Ա՛խչի, ո՛րտի ընկար, մենք ասեցինք կորար։

Ասեց.— Չէ՛, Թաքավորի մեյտարխանեն ա, ձիանոց աղաքը լիքն էր։

Իրեքով մտան էդ ծակը, գնացին մեյտարխանեն. փեշները լիքը լցեցին, դուս էկան։ Մի ամիս մնացին ըտեղ, իրանց ժամանակին կէթային, թուփ կանեին, կուտեին, ըտի ապրուստ կանեին։

Թաքավորը մեկ օր դուս էկավ ման գալու իրան նազիր-վեզիրի հետնա. գնացին, մտան մեյտարխանեն. թամաշա արեց թաքավորը՝ տեհավ ձիանը առըղ են. մեյտարբաշուն կաղնացրեց աղաքը, բարկացավ, ասեց.— էս ձիանը խի են առըղ, ուրիշ ձիանոց խոտ են տալի, ես իմ ձիանոց շամիշ եմ տալի, խուրմա եմ տալի... դու թուփ ես անըմ՝ յա՛ քու տունն ես տանըմ, յա՛ դու ես ուտում. յա՛ գողը կգթնես, յա՛ գլուխդ կկտրեմ, անպատճառ շարի լիս ինձ պատասխան տուր։

Թաքավորը թողեց գնաց։ Մեյտարը բերեց, խուրմեն, շամիշը... ածեց ձիանոց աղաքը. իրան ճկիթը դանակով կտրեց, աղ ու տաքդեղը արեց յարի վրեն, մոմուռը տվեց իրան ճիկիթը. գնաց, էկավ, քունը չի տարավ։ Մեկ էլ տեհավ գոմի էն պուճախիցը վեր էկան, մինն ասեց.— Ախչի՜կ, թեզ արե՛ք. փեշերը լցրեք, որ դուս գանք։ Փեշները լըցրեցին, էկան ծակի աղաքը, որ դուս գային։ Մեյտարը էկավ, ծակի աղաքը կտրեց, ասեց.— Հը՛, ժաժ մի՜ գաք, իրեքիդ էլ կսպանեմ։ Ընկան ախչկերքը ըդրան աղաչանք.

— Աստծու խաթե՛ր, մենք ախչիկ ենք. բրախ տու, էթա՛նք. մեր հերը մեզ կորցրեց, էկանք, ըստեղ դուս էկանք։

Ասեց.— Ձեր խաթեր բա՛ թաքավոր իմ գլո՞ւխ կտրի։

Ասեց.— Բրախ տու՝ չենք գա, կէթանք, քաղաքի մեջ գլխներս կպահենք։

Ասեց.— Անկարելի ա, ձեզ պըտի տանեմ թաքավորին։

Մոտը շարի լիս պահեց, առավոտը լիսացավ. վե կալավ, տարավ թաքավորի պալատը, թաքավորը դուս էկավ. տեհավ մեյտարը կաղնած ա, կանչեց. ասեց.

— Հը՛, գշերով գողը բռնել ես, որ էկել ես։

Ասեց.— Հրամանք ես, բռնել եմ։

Ասեց.— Իրիկվա իմ բարկությունը չըլլեր, չէիր բռնի. ի՞նչ մարդիկ են՝ բռնել ես։

www.naregatsi.org

Ասեց.— Մարդ չեն, իրեք հատ ախչիկ են։

Ասեց.— Կանչեք գան, ախչկերքին։

Ախչկերքը էկան, թաքավորի աղաքը կաղնեցին։

Ասեց.— Դու ի՞նչ զտար աներկուղ ախչիկ եք, որ էդ բանը անում եք՝ որ գոմը ծակեք, ձիանոց աղաքիցը ամեն բանը վեր եք կալում, տանում. դուք ուրիշ աշխատանք չե՞ք կարա անի։

Էդ ախչկերքը իրանց գլխի էկածը պատմեցին, ասեցին.

— Մեր հերը կորցրեց, էկանք ըդտի դուս էկանք. քաղաքումը մեկ մարդի չէինք ճանաչում, որ էթայինք, աշխատեինք. աստված էդ ծակը բաց արեց մեզ համար, ըդրով ապրուստ ենք անում։ Հըմի, թաքավո՛ր ապրած, խնդրում ենք, բրախ տաս, էթանք, մեր գլուխը պահենք։

— Որ բրախ տամ, ընչո՞վ պըտի պարապեք։

Մենծ ախչիկն ասեց.

— Ինձ մե փեշակ ունեմ։

Ասեց.— Ի՞նչ փեշակ։

Ասեց.— Ես էնենց մի խալիչա կգործեմ, որ քու ղոշունը նստի վրեն՝ կեսը ծալած մնա։

Ասեց.— Լա՛վ, դու էս դիհն արի։

Միջնեկ ախչկան հարցրեց.

— Քեզ ի՞նչ փեշակ ունես։

— Մի պղնձով փլավ կէփեմ, քու ղոշունը ուտի, կեսն էլ մնա։

Ասեց.— Քունն էլ լա՛վ, դու էլ դեսն արի։

Էն պուճուր ախչկան հարցրեց.

— Քեզ ի՞նչ փեշակ ունես։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, ինձ փեշակ չունեմ, ոսկե քաքուլավոր տղա կբերեմ, ոսկե մազավոր ախչիկ։

Ասեց.— Էդ իրեքդ էլ ինձ պետք եք, իրեքիդ էլ բրախ չեմ տա. իրեքիդ էլ կառնեմ ինձ կնիկ. գիտա՞ք, ի՛նչ կա, իրեքիդ որը սուտ դուս գա՝ գլուխը կկտրեմ։ Տարավ, իրեքին էլ առավ։

Մնաց մե ժամանակ, մենծ ախչկան ասեց.— Դու խալիչադ գործե՛, տենա՛մ։

Ախչիկն ասեց.— Արևելքից արևմուտք հինածդ արա, ես գործելով էթամ, գամ։

Ասեց.— Կորի՛, քունը սուտ ա դուս գալի, ընդրանց էլ նոր կըփորձեմ։

www.naregatsi.org

Միջնեկ ախչկան կանչեց, ասեց.

— Քվորդ խոսացրի, սուտ դուս էկավ, փլավը էփա՛, տենա՛մ քունը ո՞նց ա, սուտ ա, թե օղորթ ա։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած՝ մի պղինձ շինել տուր, քառասուն շաքշավոր միջին բանին. շաքշների ձենը ուստեքը չի լսեն։

Ասեց.— Ա՜յ հա՜յ, քունն էլ ա սուտ, դու էլ կորի՛։

Գնացին, պուճուր ախչկանն էլ կանչեցին, ասեց.— էն էրկու քիրդ սուտ դուս էկան, քունը ո՞նց պըտի ըլի։

Ասեց.— Իմը, ես ասածու՝ փեշն եմ բռնե, կըլի։

Ասեց.— Որ քունը դրուստ կըլի, ես գիտամ, դո՛ւ քու պարգևը իմ աչքի վրեն. ընդրանց պատիժն էլ իմ աչքի վրեն։

Ասեց.— Վազի՛ր, մի պառվու կանչիլ տուր։

Պառավը էկավ։ Թաքավորն ասեց.

— Կտանես, էս ախչիկը կպահես Թաքավորի ծախսովը, եփոր կազատվի, ոսկե քաքուլավոր տղա կբերի, ոսկե մազավոր ախչիկ՝ կգաս աչքալիսեք, քեզ կդնեմ կշեռքի թայը, քու քաշովը ոսկի փեշ-քաշ կանեմ քեզ. տա՛ր ու լավ պահա։

Պառավը վե կալավ, տարավ. պահեց, էկավ։

Թաքավորի էրկու կնիկը ասեցին.— Պառա՛վ, մեր քիրը ազատվելու վախտը մեզի իմացրա, քեզ շա՜տ պարգև կտանք։ Ինն ամիսը թամմեց, ինը սահաթը, ցավը բռնեց. պառավը գնաց, էրկու քվորն էլ իմացրեց, էկան. մի թևը մի քիրը բռնեց, մի թևը մի քիրը, ծունկը տվեց գետինը, էրկու էրեխա բերեց՝ ոսկե քաքուլավոր տղա, ոսկե մազավոր ախչիկ։

Պառավն ասեց.

— Աչքներդ լիս...

— Ձենդ կտրա՛,— ասեցին պառավին։ Պառավը սուս կացավ. էրեխեքը մնացին ըտի, ֆողի վրա. ախչկան տարան, քցեցին տեղաշորի մեջ, էկան, պառավին ասեցին.

— Պառա՛վ, մի իլլաճ ունես՝ տե՛ս, էս էրեխեքը պըտի կորցնես։

Պառավն ասեց.— Ես ո՞նց կորցնեմ, պըտի էթամ Թաքավորին աչքալիսեք։

Ասեցին.— Թաքավորն ինչ պարգև կտա՝ մենք հինգ էն ղտար կտանք։ Էրկու էրեխեն դրեցին պառավի գոգը. պառավը տարավ իրա տունը, մե ղութու մեջ դրեց, ղութու բերանը մուշանպեց, տա-

www.naregatsi.org

բավ, քցեց ծովը, էկավ, իրա տունը, էրկու հատ թուլա կար՝ վեր կալավ, տարավ, դրեց կնկա աղաքը։

Թաքավորի մեկել կնանիք ասեցին.

— Ի՞նչ արիր։

Ասեց.— Տարա՛, քցեցի ծովը. էս էրկու թուլեն վեր կալա, էկա։

Հանեցին, մին-մին բուռ ոսկի տվեցին պառավին, ասեցին.

— Պառա՛վ, կէթաս, թաքավորին կասես. «Քու կնիկը էրկու թուլա ա բերեց»։

Ըդոնք թողացին, գնացին։ Պառավ վեր կացավ, գնաց թաքավորի մոտը, թաքավորը ասեց.— Հը՛, պառա՛վ, ի՞նչ կա։

— Բան չկա՛,— ասեց։

Ասեց.— Զըլլի աչքալիսեք ես էկե, իմ կնիկը աղատվել ա։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած կենա, ասելու բան չի։

Ասեց.— Ախչիկ ա՝ փառք իրան[1], տղա ա՝ փառք իրան, ասա՛, ինչ որ տվել ա. ես իմ աստվածանից շնորհակալ եմ։

Ասեց.— Ասելու բան չի՛, համա պըտի ասեմ, էրկու թուլա ա բերե։

Թաքավորը ըտի ոտը տվեց գետինը. նազիր-վազիրին կանչեց, ասեց.

— Նազի՛ր, վազի՛ր, ձեզ մի բան եմ ասըմ. էս կնանիքն, իրեքն էլ, որ ես առա, ամենքը մի փեշակի անուն տվեցին, որ սուտ դուս էկավ. էս կնիկը ասեց. «Ոսկե քաքուլավոր տղա կբերեմ, ոսկե մազավոր ախչիկ», ընդոնց փոխանորդը էրկու թուլա ա բերե. որ ըդրանը դրուստ ըլներ, պատիճ ուներ էս էրկու կնկան. ըսդոնք թե որ սուտ դուս էկան՝ խնայեցի. էդ էլ սուտ դուս դար՝ կըխնայեի, համա էրկու թուլա ա բերե, էլ խնայել չկա։ Ըսդրան ի՞նչ վճիռ տանք։

Ասեցին.— Խնդրում ենք, ըսդրան էլ խնայես. քու քաղաքիցը հանես, ուրիշ երկիր էթա։

Ասեց.— Անկարելի ա, վճիռ որ դուք չեք տալի, ես պըտի տամ։ Գնացեք, էրկու հատ գոմշի կաշի բերեք, մեկը քցեք տակը, մեկը վրեն, կուպրն ու ձութը հալեք, լցրեք ըդրա վրեն, կաշիքը կպչեն ըդրա ջանիցը. տարե՛ք դարվազի աղաքը դրեք, էթող գալողը թքի էրեսին։

---

1 Աստծո (Մ. Բ.)։

www.naregatsi.org

Գնացին, թաքավորի ասածի պես արեցին. էթող-գալողը թքեց։ Էդ էրկու կնանիք պառավին կանչին, ասեցին.

— Պառա՛վ, բերնիցդ բան չի հանես. թաքավորն ո՛ր իմացավ՝ մեզ էլ կկորցնի, քեզ էլ։

Պառավը գնաց իրանց տուն։

Լափինը տվեց ծովը, ղութին տարավ էն էրեսը։ Էն էրեսումը մի հատ մարդ կար Ղովտ անրմավոր, ըտի մինակ բհամ էր էկել։ Ղովտին տավար, մալ, դոլվաթ շա՛տ. ձին բերեց ծովի ղրաղը ջրելու՝ տեհավ մի հատ ղութի ջրի ղրաղը, ծովի միջին ա։

Ղովտն ասեց.— Կյամի ա կոտրվե՞ր, ի՞նչ ա, էս ղութին ընկեր ա ջրի էրես, էկել ա։

Գնաց, ղութին բերեց դուս. բաց արեց, տեհավ, ըհա՛, միջին մի տղա, մի ախչիկ՝ նոր էլած։

Ղովտն չոքեց, աստված կանչեց. ասեց.

— Աստվա՛ծ, հենց ինչ ուզում ի, էն տվեցիր. քեզանից խընդրում եմ, ըսոնց կենդանություն տաս. իմ ամակը չկորցնես. ըսդոնք ինձ բախշես։— Վե կալավ, տարավ իրա տունը. մի տարի կաթով պահեց, մի տարվա ետնա կաթից կտրեց, ընկան հացի։

Ասեց.— Իմ էրեխեքս մի տարի բերել եմ, չեմ լեղացրե. դնեմ տաշտի մեջ, լեղացնեմ։

Դրեց, լեղացրեց, էրեխեքը հանեց. տեհավ տաշտի ջուրը սառեց՝ էլավ ղուրս ոսկի[1]։ Թաղատան Ղովտը փառք տվեց աստծուն, ուրախացավ։

Ասեց.— Ըսդա՞ր մալ, դոլվաթ ունեմ, ըսդա՞ր ոսկի ունեմ, ի՞նչ պտի անեմ, փառք քե՛զ, աստված։

Տասնըհինգ տարի պահեց կշտին. տասնըհինգ տարի ետքը Ղովտը իմացավ, որ պտի մեռնի. ախչկան ու տղին կանչեց մոտը։

Ասեց.— Որդի՛, ես կմեռնեմ։— Որ ասեց «ես կմեռնեմ», տղեն ու ախչիկը իրանց գլխին տվեցին ու լաց էլան՝ իմացան որ ըդրանից են էլե։

Ասեց.— Որդի՛, խի՞ եք լաց ըլլում։

Ասեցին.— Որ դու մեռնես, մենք ո՞նց անենք, չենք կարա ապրի։

Ասեց.— Որդի՛, ես հարուր իցցուն տարի ա՝ ընկել եմ ըստի.

---

1 Քյուլչա (Ս. Բ.)։

www.naregatsi.org

երկիր կա, թաքավորություն կա, ախչիկ, կնանիք կան. ամեն տեսակ բան կա աշխարքումը, էն Սև ձին տենում եք, որ օխտը կեմով կապած ա, էն ծովիցն եմ հանե, հրեղեն ձի ա. ձեր ապրանքը բարձեք ղաթիրներին, ձիանոցը, Սև ձին կքցեք աղաքը, դվո՛ը կէթա՝ հետը կէթաք, ո՛րտի կնստի՝ էնտի տեղ կառնեք, ձեզ տներ կշինեք. ձին ինչ ասի՝ խոսքից դուս չեք գա։

Ասեց ու հոգին տվեց։

Քիր ու ախպերը լաց էլան, գլխընեերին տվին. գնացին, տեղը փորեցին, մեկը ոտներիցը բռնեց, մեկը գլխից, տարան, քցեցին փոսն ու հողը վրա տվին։ Էկան, իրանց ապրանքը բարձեցին. Սև ձին քցեցին աղաքը, ընկան ճանփեն ու էկան-էկան, իրանց հոր քաղաքի լավ չիմանի վրեն նստեց։

Ըտի թաքավորի մեյդանն էր, ինչդար ուրախությունի օր ըլեր, կգար, կնստեր, թամաշա կաներ. աղիզ օրը ըդուց էլ լավ մեյդան չուներ։ Բեռները ըտի վեր ածեց, քվորը թողաց բեռների մոտը, ինքը գնաց քաղաքը. տասը հատ նոքար բռնեց, բերեց քվոր մոտը. մեկը ձիանը պահեցին, մեկը տավարը, ամեն նոքարին մե գործ տվեց։

Գնաց թաքավորի պալատը. վեզիրը դռանը կաղնած էր։

Ասեց.— Էկել եմ թաքավորի մոտը, գործ ունեմ։

Վեզիրը մտավ թաքավորի մոտը։

— Մի ըսենց տղա քու մոտն ա գալի,— ասեց։

Վեզիրին ասեց.— Գնա՛ կանչա, գա՛։

Էկավ, կանչեց. գնաց, թաքավորի մոտը կաղնեց, օխտը անգամ գլուխ տվեց թաքավորին, վրա ութին ձեռը բռնեց դոշին, կաղնեց։ Թաքավորը որ տեհավ էդ տղի սրֆաթը, ոնց որ իրա սիրտը ճղեն, տղեն կոխեն սրտի մեջը։

Թաքավորը մտքի միջին ասեց. «Ես թաքավոր ըլնեմ, էս թավուր տղա չունենա՞մ»։ Ասեց. «Ինչ որ էս տղեն խնդրվի, պտի կատարեմ»։

Թաքավորն ասեց.— Ասա՛, տենամ, ա՛յ տղա, ի՞նչ խնդիրք ունես։

Ասեց.— Քու քաղաքի ղրաղը մի չիման դուզկյահ տեղ կա, էն ընձի ծախես։

Ասեց.— Էն տեղը քեզ փեշքեշ ա, գնա՛, շինա՛։

Տղեն գլուխ տվեց, որ ետ դառնար, էթար.

www.naregatsi.org

Թաքավորն ասեց.— Մի ղայֆա քցեք, խմենք։

Ղայֆան խմեցին, տղի հետնա էփեյճա խոսաց. ասեց.— Ի՛նչ-ղդար որ պարապ մնաս, գաս, խոսանք։

Տղեն վե կացավ, գնաց բազարը. հինգ հարուր ուստա բռնեց, հազար ֆահլա բռնեց, վե կալավ, տարավ, մի հատ ուստաբաշի էլ վերակացու դրեց, իրավունքը տվեց ըդրան։

Ասեց.— Ջափ ու ձև արա՝ օթախները, դոմերը ամեն տեսակը շինա։

Տղեն շինել տվեց, վե կացավ, էկավ Թաքավորի մոտը։

Ասեց.— Իմ տները շինեցի, պրծա։

Թաքավորի էդ էրկու կնիկը էկան Թաքավորի մոտը, էդ տղին տեհան։ էդ տղեն վե կացավ, գնաց։

Թաքավորը էդ կնանոցը ասեց.— Տեղը քցեք, ես հիվանդ եմ։

Ասեցին.— Խի՞, ի՛նչ էլավ քեզ։

Ասեց.— էդ տղեն իմ սրտի մեջը մտավ, էդ տղի սիրուցը ես մեռնում եմ, հալ չկա իմ վրեն, էդ տղի դարտը ինձ կոխեց։

Ասեցին.— Խի՛, ի՞նչ էլավ քեզ Թաքավոր ապրած։

Ասեց.— Իմ արին էդ տղի վրեն ընենց քռաց, որ գիտամ ինձանից ա, քաշկա էդ տղեն չէթա, գշեր-ցերեկ իմ հետը խոսա, իմ սիրտը կբացվի։

Թաքավորին պառկացրին, շորերը քցին վրին. Թաքավորը քնեց, վե կացան գնացին, իրանց միջին խորհուրդ արեցին. «Կասես, էս մեր քվոր տղեն ըլլի»։

Պառավին կանչեցին, էկավ։

Ասեցին.— Դինսը՛զ, իմանսզ պառա՛վ, գիտաս քու գլուխը ի՛նչ կհանենք։ Արի՛, դրուատն ասա՛, էն էրեխեքը տարար քցեցի՞ր ծովը, ի՞նչ արիր, բհամ են էկե. քիչ ա մնում Թաքավորն իմանա, որ իմացել ա, մեզ պրծնում չկա, զաթի ինչ իլլաճ ունես, տե՛ս։

Ասեց.— Իմ վրա խի՞ եք բարկանում, էն էրեխեքը դրել եմ ղուբու մեջը, մուշանպել եմ, քցել եմ ծովը, էսա տասնըհինգ, տասնվեց տարի ժամանակ ա անց կացե. հըմի կէթամ, է՛ն տեղը կդրկեմ, որ էլ գալը չըլլի։

Հանեցին, ամենքը մի-մին բուռ ոսկի տվեցին։ Ասեցին.— Վե՛ գնա, վախտով ըռատ արա՛։

Պառավը վե կացավ ու գնաց. գնաց, ըդրանց քուչի դուռը ծեծեց. ախչիկը գնաց, բաց արեց դուռը։

www.naregatsi.org

Ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն։

Ասեց.— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Գնա՛, էթանք ձեր տները ման գանք, տենանք ո՞նց տներ են շինե։

Ասեց.— Արի էթա՛նք, նանի ջան։

Տարավ պառավին ամեն տեղը, օթախները, մառանը, գոմերը, ցիրատի ման ածեց։

Ասեց.— Բալա՛, ամեն բանը լավ ա, մինակ ես, ափսոս։

— Բա ի՞նչ անեմ, նանի՛։

Ասեց.— Ախպորդ ասա՛, Հազարաբիլբուլը բերի, ըստի երգի, դու անկաջ անես։

Պառավը թողեց գնաց. ախչիկը նստեց, նոթերը կիտեց։

Ախպերը էկավ, տեհավ քվոր նոթերը կիտած ա։

Ասեց.— Ախչի՛, խի ես նոթերդ կիտե, փառք աստծուն, թամաշա եմ անում՝ սկի պակասութուն չկա։

Ասեց.— Խի՛ չիկա։

Ասեց.— Ի՞նչն ա պակաս։

Ասեց.— Մի Հազարաբիլբուլ ըլի, երգի, ես անկաջ անեմ։

Ասեց.— Ա՛յ քիր, ես ոչ Հազարաբիլբուլի ձեն եմ լսե, ոչ տեղը գիտամ։

Ասեց.— Որտիան՝ ըլի՝ պտի բերես։

Ասեց.— Էթամ Սև ձիու մոտ, տենամ։

Գնաց, գոմի դուռը բաց արեց, մտավ գոմը. ձին խրխնջաց։— Հա՛,— ասեց,— թաքավորի տղա, ի՞նչ կա։

Ասեց.— Հազարաբիլբուլը բերենք։

Ասեց.— Ա՛յ քու սարվացնողի շլինքը կոտրվի. Ղովտը, որ ինձ տվեց քեզ, ասեց ինձ. «Էս տղի հետ կմեռնես, էս տղի հետ կապրես։ Հըմի քու հետ պտի մեռնեմ, քու հետ պտի ապրեմ. գնա՛, օխտը փութ գարի բե՛ր, ածա՛ իմ աղաքը՝ ես մի լավ ուտեմ։— Օխտը փութ գարին ածեց աղաքը։

Ասեց.— Մի լավ թիմարա ինձ։

Մի լավ թիմարեց։

Ասեց.— Թամքը վրես դիր, ղոլանները ղայիմ կապա, Լրկու հատ աքլորաճուտ առ, ուտդ դի՛ր զանկուն ու նի՛լ վրես։— Ոտը դրեց զանկուն ու նիլավ։

Ասեց.— Թաքավորի տղա՛, ընենց ջուխտ զանկու տուր փորիս,

www.naregatsi.org

որ իմ մոր ծծած կաթը գա իմ բերանը։ Ջուխտ զանկուն տվեց, մոր ծծած կաթը էկավ բերանը, հանեց ֆալաքի օխտը ղաթը. վե կալավ, տարավ, տարավ մի փոշտ, ձին բեզարեց։

Ասեց.— Տղա՛, վեր արի, ինձ ման ածա։

Ման ածեց. տեհավ էն դհիցը մի Սև դև էկավ, էրկու ջաղացաքար առել ա ձեռը, ծափ տալով գալիս ա։

Ձին ասեց.— Ա՛յ տղա, թեզ արա՛, ոտդ դիր զանկուն, նի՛լ, Սև դևն էկավ։

Սև դևը ասեց.— Աշե՛մ, աշե՛մ, քեզ որ ատամիս տակը ճաշ անեմ, դնեմ ատամիս տակը, ըսկի չես էրևա։

Ձին ասեց.— Ա՛յ տղա, զանկուն տո՛ւր, հավալամիշ ըլնեմ, թե չէ ըդրա ձեռիցը չես պրծնի։

Զանկուն տվեց, հանեց ֆալաքի մի ղաթը։ Դևը ջաղացաքարը շպռտեց քամակիցը։ Գյուլլի պես գնաց, սաղրուն դպավ։ Տարավ, մի բաղչի ղրաղ վե դրեց։

Ասեց.— Ըտի ղլիճ օթի կա, քաղա՛, դի իմ սաղրու վրեն, որ սաղանա։ Ալբեալը քաղեց, ծամեց, դրեց յարի վրեն, սաղացավ։

Ասեց.— Դե՛, կմտնես էդ բաղչի մեջ. մարմար հավուզ կա, Հազարաբիլբուլը էդ հավուզի վրա կախ տված ա, Հազարաբիլբուլի ղաֆասը վե կալես. մի հատ կանանչ վարդենի ճիպոտ կա տնկված, էն էլ կհանես, կբերես. ո՛ր ձեն տան, ասեն. «Հազարաբիլբուլը տարա՞ն», ետ չի թամաշա անես, որ ետ թամաշա անես, քար կկըտրես։ Էրկու աքլորաճուտն բանցը քցա, թե կանչեցին՝ խեր ա, կպրծնենք ըստիան, թե չի կանչեցին՝ չենք պրծնի։— Էրկուան էլ բանցը քցեց, էրկուան էլ կանչեցին։

Ասեց.— Գնա՛, իմ ասածը կատարա ու արի, էլ մի վախենա։

Գնաց, ղաֆասը վե կալավ, վարդի ճիպոտն էլ հանեց, ձեն տվին. «Հազարաբիլբուլ տարա՞ն, տարա՞ն»։

Ետ թամաշա չարեց. էկավ, հասավ ձիուն, ձին ասեց.— Դե՛, ոտդ դիր զանկուն ու նի՛լ։— Նիլավ։

Զանկուն տվեց, հանեց ֆալաքի օխտը ղաթը. բերեց, իրանց դռանը վեր դրեց։ Ասեց.—Դե՛, տար, ճիպոտը բաղչի մեջտեղ տնկա։

Տարավ տնկեց. Հազարաբիլբուլի բաղչի մեջ ինչ կար՝ ըդի էլավ։ Բիլբուլը հավուզի վրիցը կախ տվեց. ըդի երգեց. ո՛վ որ լսում էր, հայպաթ էր կտրում ըդրա քաղցը ձենին։ Էդ ախշիկը գշեր-ցերեկ թամաշա էր անում էդ բիլբուլին։ Տղեն դուռ էկավ, գնաց

www.naregatsi.org

ավ անելու. թաքավորն էլ դուա ա էկե ավ անելու. տղեն տվեց մի ջեյրանի ճուտի՝ ճուտը գնաց, թաքավորի աղաքը վեր ընկավ. տղեն գնաց, թաքավորի աղաքիցը վե կալավ. թաքավորը ըսկի չի խոսաց։

Ասեց.— Նազի՛ր, վեզի՛ր, էլ ետ դառեք, էլ ավ անիլը չուզի։ Ետ դառան, էկան։

Թաքավորն ասեց.— Իմ տեղաշորը քցա՛, ես մեռա։

Կնանիքը ասին.— Խի՛, ի՞նչ էլավ։

Ասեց.— Էն տղեն մի շաբաթ էր չէր էրեվում. էսօր էկավ, ավը իմ աղաքիցը վե կալավ, գնաց, հետս մի բերան էլ չխոսաց։

Կնանիքը պառկացրին, դպա պառավին գնացին։

Ասեցին.— Պառա՛վ, էդ ո՛րտի ղրկեցիր, էլի էկել ա։

Ասեց.— Հըմի կէթամ, էն տեղը կղրկեմ, որ չի գա։ Մի-մի բուռ ոսկի տվեցին։

— Գնա,— ասեցին,— մի՛ կաղնի էլ։

Պառավը գնաց, ըդոնց դուռը ծեծեց, ախչիկը էկավ, դուռը բացեց։

Պառավը ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն։

Ասեց.— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Հազարաբիլբուլը բերե՞լ ա։

Ասեց.— Բերել ա։— Վե կացան, գնացին տեհան։— Ա՛յ հա՛յ,— ասեց,— ով էթում էր՝ չիր գալի, էս ո՞նց բերեց։— Գիտաս ի՞նչ կա, բալա ջա՛ն։

— Ի՞նչ կա, նանի ջա՛ն։

Ասեց.— Որ էթա, Դուլդուլ մատիանը բերի՝ օխտը քուռակ ունի, օխտը քուռակի յալին օխտը մազ կա, օխտը մազը օխտը մուղամ ձեն ա հանում։

Պառավը գնաց, իրիկունը ախպերն էլ էկավ տունը.

— Խի՞ ես նոթերդ կիտե,— ասեց քվորը։

— Գնա՛, Դուլդուլ մատիանը բեր, օխտը քուռակ ունի, ամեն քուռակի յալին օխտը մազ կա, օխտը մազը օխտը մուղամ ձեն ա հանում։

Տղեն գնաց ձիու մոտ։

Ձին ասեց.— Հը՛, ի՞նչ կա, թաքավորի տղա՛։

Ասեց.— Պըտի էթանք՝ Դուլդուլ մատիանը բերենք։

Ասեց.— Քու սարվացնողի վիզ կոտրի, էն իմ մոքոր ախչիկն ա. մորից էլավ, անըմը դրեցին Դուլդուլ, հըմի մեծացել ա, քանի

www.naregatsi.org

տարի ա ես հեռացել եմ։ Դե՛,— ասեց,— գնա՛, օխտը հատ քեչա առ, օխտը գոմշի կաշի առ, օխտը փութ էլ ձութ ու ծամոն առ, հալա, կպցրա իմ տկլոզ ջանին, մի քեչա քցա վրես։—Մի քեչան քցեց վրեն, մի ղոլանով կապեց՝ օխտը քեչեն էլ օխտը ղաթ կպցրեց, ղոլանները քաշեց. թամքը դրեց վրին, օխտը փութ գարին ածեց աղաբը. ձին կերավ, ոտը դրեց զանկուն, նիլա՜վ։ Մի ջուխտ զանկու տվեց. հանեց ֆալաքի օխտը ղաթը. գնաց, մի ծովի ղրաղը վեր էկավ. տեհավ մի ամարաթներ կա՜, որ օխտը ատեժ ա։

Ասեց.— Ա՛յ տղա, ծովի էն էրեսը պըտի էթանք. Կարմիր դևը կգա, մենք չենք պրծնի, թեզ արա՛։ Մեկ էլ տեհան Կարմիր դևը էկավ, մի գերան ա դրել ուսը, իրեք վերստ ա դրա երկարությունը, գալիս ա։

Ասեց.— Ա՛յ տղա, ոտդ դիր զանկուն, նի՛լ։— Նիլավ։

Կարմիր դևը ձեն տվեց.— Կացե՛ք, ղոնախ էլեք, նո՛ր գնացեք։ Տղեն ականջ չարեց, զանկու տվեց։ Զանկու տալու բաշտան վե կալավ տղին, որ վե կալավ, գերանը ջրինտի պես քցեց ըդրա քամակը, չի հասավ, գնաց ծովի մեջտեղը ընկավ։ Տարավ, տղին ծովի էն էրեսը վեր դրեց.

— Քու թատարիքը տե՛ս, ես կմտնեմ ծովի տակը. փրփուրը թե կարմրեց՝ կփախնես, էլ քե պրծնում չի կա, թե սիպտակեց՝ ուրախացի։ Ձին գլուխ-կոնծի արեց, գնաց ջրի տակը, մի սահաթ ըդենց ծովի տակը մնաց։ Թամաշա արեց, տեհավ փրփուրը կարմրեց՝ տղեն թողեց, փախավ. ըտեղան մի կես սահաթի ճանփա գնաց, նաֆասը կտրավ։

Ասեց.— Ես ո՞ւր եմ փախնում, իմ արինը Սև ձիու արընից ավե՞լ ա. ընդրան սպանեցին՝ ինձ էլ սպանեն։ Ետ դառավ, էկավ էլի. տեհավ, փրփուրը սիպտակում ա, շատ ուրախացավ։ Տեհավ որ Դուլդուլ մատիանի յալից բռնեց, քաշեց դուս։

Ասեց.— Ա՛յ տղա, նոխտեն քցա ըսդրա գլուխը։ Նոխտեն գցեց, կապեց։

Տեհավ օխտը քուռակն էլ ծովու միջից դուս էկան, հաղ արեցին։

Ասեց.— Ա՛յ տղա, հը՛, ի՞նչ տեհար։

Ասեց.— Տեհա փրփուրը կարմրեց։

Ասեց.— Տենում ե՞ս գլխիս, ճակատիս տվեցին։

Ասեց.— Բա ո՞ւր ա քու օխտը քեչեն։

www.naregatsi.org

— Տվեցին պոկեցին. էդ թամքը դիր վրես, նի՛լ. նոխտեն ղայիմ բռնա, ինձ ետ քշա։

Քշեց ծովի էրեսովը, օխտը քուռակն էլ քամակիցն էկան. բերեց, իրանց դռանը կաղնացրեց. դուռը ծեծեց՝ քիրը դուռը բաց արեց։

Սև ձին ասեց.— Մատիանը բրախ տո՛ւ, էլ փախնողը չի։

Բրախ տվեց, քուռակներն էլ հաղ արեցին, ըդրանց օխտը մազերիցը՝ օխտը մուղամ ձեն էր դուս գալի։

Տղեն վե կացավ, գնաց բազար։ Թաքավորը փանճարից թամաշա արեց, տեհավ՝ էն տղեն ա։

— Հե՛յ վա՛խ, ֆալաք,— ասեց,— ես թաքավոր ըլլեմ, էս թավուր տղա չունենամ, էս էլ չի կաղնըմ ինձ հետնա խոսա։

Թաքավորը իրա էրկու կնկանն էլ կանչեց, ասեց.— Մի ղայֆա բերե՛ք, ես խմեմ, պառկեմ. էն տղեն էս օր տեհա, իմ դարտը թազացավ։ Կնանիքը վռազ, վռազ ղայֆան տվեցին. թաքավորը խմեց, պառկեց։

Կնանիքը գնացին պառավի կուշտը։

Ասեցին.— Պառա՛վ, բոլ չի էս օղիյեն բերես մեր գլուխը։

Ասեց.— Խի՛, ի՞նչ ա էլե։

Ասեցին.— Էն տղեն էկել ա։

Ասեց.— Էթա՛մ, էն տեղը ղրկեմ, որ էլ իլլաճ չըլլի գալու։

Ամենքը մի բուռ ոսկի տվին։ Պառավը գնաց, դուռը ծեծեց։ Ախչիկը դուռը բացեց։

— Հա՞, բարև բալա ջան։

— Աստծու բարի՛ն, նանի ջա՛ն։

Ասեց.— Դուլդուլ մատիանը բերե՞ց։

Ասեց.— Բերել ա։

Ասեց.— Էթա՛նք տեսնանք։— Տեհավ քուռակները էնպես են ջդիր տալի, մի բոպա մի տեղ չեն կաղնըմ։

Ասեց.— Բալա ջա՛ն, տեսնըմ ես քու նանը. ինչ լավ նան ա, ղրկեցի Հազարաբիլբուլը բերեց, ղրկեցի Դուլդուլ մատիանը բերեց։ Հըմի Հազարաբիլբուլը որ երգում ա, գիտամ, չես հասկանում, Դուլդուլ մատիանի քուռակների մուղամ ձեները որ հանում են, էդ էլ չես հասկանում. բա որ էթա Գյուլ փարին բերի, որ քե պես մե ախչիկ ա, ինչ որ ասի՝ դու կհասկանաս. կըլլի քեզ հարս, իրան կնիկ։

www.naregatsi.org

Պառավը գնաց։ Իրիկունը ախպերը էկավ տուն, տեհավ քվոր նոթերը կիտած ա։

Ասեց.— Ա՛յ քիր, հրմի ի՞նչ ա պակաս։

Ասեց.— Ո՛չ Հազարաբիլբուլի ձենն եմ հասկանում, ոչ էլ Դուդուլ մատիանի քուռակների մուղամ ձենները։ Գնա Գյուլ փարին բե՛ր, որ ինձ հարս ըլի, քեզ էլ կնիկ, ինչ որ ասի, ես հասկանամ։

Տղեն գնաց Սև ձիու մոտը։

Զին ասեց.— Հը՛, ի՞նչ կա։

Ասեց.— Էթա՛նք, Գյուլ փարին բերենք։

Ասեց.— Քու սարվացնողի շլինքը կոտրվի. դե, գնա՛, օխտը փութ գարի բե՛ր։

Գարին կերավ, ասեց.— Մի լավ շահթիմար տուր ինձ, թամքը դիր վրես, մի ջուխտ ղանկու տուր, իմ մոր ծծած կաթ դա իմ բերանը։

Էդպես արեց, ձին հանեց ֆալաքի օխտը ղաթը, տարավ մի բաղչի դուռ վեր դրեց, մտավ նեքսև։

Գնաց, ետ արած դռները բաց արեց, բաց արած դռները ետ արեց, տեհավ Գյուլ փարին քյարդահ ա անում։

Ասեց.— Գլխիդ ղուրբա՛ն, արևիդ ղուրբա՛ն, քու էշխիցդ եմ էկե։ Իրեք անգամ ասեց, էն չխոսաց. վրա չորսին ասեց.— Մոնց որ էկել ես՝ ընենց գնա, չըմ ղմըշըմ քեզ։

Ասեց.— Հնար չի կա ղմըշես, չի ղըմըշես, քեզ պըտի տանեմ։

Ասեց.— Որ իմ էշխիցս ես էկե, շարի ծնկներդ քար դառնաս։— Շարի ծնկները էլավ քար։

Ասեց.— Ես քու սերի խաթեր էկել եմ։

Ասեց.— Դու շարի ծնկներդ էլեր ես քար, հալա խոսում ես. շարի պորտդ էլ ըլես քար։— Շարի պորտը էլավ քար։

Էլի ընկավ աղաչանք, ասեց.— Պըտի գաս, էթա՛նք։

Ասեց.— Շարի շլինքդ ըլես քար։

Զին էլ էլավ շարի շլինքն քար, ինքն էլ։

Ասեց.— Ա՛յ տղա, ուրիշներին մեկ անգամ ասելուն քար էի շինում, վեր քցում, քեզ չեմ ղմշում. քու ոսկե քաքուլը որ փռվեց էդ քարի վրա, իմ ջիգյարը մղկտում ա, քեզ որ լավացնեմ՝ կէթա՞ս, թե էլի իմ յախեն պըտի բռնես։

Ասեց.— Պըտի բռնեմ քու յախեն, կուզես լավացրա, կուզես շինա քար, վերջանամ։

www.naregatsi.org

Ասեց.— Դե՛, քարի միջից դուա արի ու արի։

Դուա էկավ ու հասավ Գյուլ փարուն. խոնարհեց, պաշպշեց՝ էլ ընդրան, էն ընդրան։

Ձին էլ ընտի ուրախացավ, ոտնաքանդ արեց։

Ախչիկն ասեց.— Ա՛յ տղա, ես իրավունք եմ տալի քեզ, փունջ մանուշակն առ, ո՛ր քարին տաս՝ կսաղանան։

Առավ, ո՛րին տվեց՝ սաղացավ, որին տվեց՝ սաղացավ. էլավ տաս հազար մարդ ձիավոր, խառնվան բիրատի իրար։ Գյուլ փարին իրավունք տվեց.

— Դե՛ ամեն մարդ իրան ձին նիլնի ու էթա իրա տունը։ Քոմ-մա գնացին, մնաց էդ Գյուլ փարին ու էդ տղեն։ Գյուլ փարուն վե կալավ, գնաց ձիու մոտը. նիլավ ձին, ախչիկը քաշեց թարքը։

Ձին ասեց.— Ա՛յ տղա, մի լավ զանկու տո՛ւր ընձի, իմ մոր ծծած կաթը գա իմ բերանը։— Հանեց ֆալաքի օխտը զաթը, ծովի էն ղրաղը վե դրեց։ Նստեցին, հաց կերան, պրծան. ձին բերեցին, որ նիլնեին, մեկ էլ տեհան Բոզ դևը մի ծառ ա դրե ուսին, ինչդար ղուրտ ու ղուշ, ջանավար կա, կախ արե ծառի վրեն, դրել ա ուսը. մի պռոշը երկինքն ա սրբում, մի պռոշը՝ գետինը. էկավ, ըդոնց տեհավ։

Ասեց.— Էս ղտար ջանավարի մեջ մեկը իսանի մսի պես քաղցր չըլլի՞, աստված ըսոր ջուխտն ա հասցրե։

Ձին ասեց.— Տղա՛, թեզ արա՛, նի՛լ, դևն էկավ, թուի իմ քա-մակը։ Թռավ ձիու քամակը, ախչկա թևիցը բռնեց, քաշեց թարքը։ Դևը էն դիհեն ձեն տվեց.

— Կաղնե՛ք, ձեզ բան եմ ասըմ։

Ձին ասեց.— Իմ կողքերին մի ջուխտ զանկու տո՛ւր։

Որ տվեց, ձին վե կալավ ըդրանց։ Դևը տեհավ, ծառը տվել գետնովն ու ձիու քամակիցը վազեց. հասավ, ձեռը քցեց, որ ձիու ոտը բռներ՝ ձին մի ջուխտ քացի տվեց ճակատին, դևը տասնէրկու կունդկի արեց ու վեր ընկավ։ Ձին տարավ իրան դուան աղաքը վե դրեց։ Դուռը ծեծեց, քիրը բաց արեց, փաթթվեց ախչկան. էլ իրար պաշպշի՞լը աստված աղատի։

Էկան, բաղչեն ման էկան, Գյուլ փարին ասեց.

— Ա՛յ տղա, գնա՛, ուստա բեր, մարթապեք շինի։

3—2573

www.naregatsi.org

Գնաց, ուստեն բերեց, ոսկին տվեցին, իրա ձեռի մուզդը տվին։

Ասեցին.— Տաս հազար ոսկե մարթապա շինա։— Շինել տվին, ՝ՐԾան։ Գյուլ փարին մի դաստա ծաղիկ կապեց, տվեց տղին։

Ասեց.— Էն գոմշի կաշու միջի կնիկը որ կա՝ տա՛ր տուր էն կնկա ձեռը։

Ծաղիկը վե կալավ, տարավ, տվեց կնկա ձեռը. կնիկն առավ, թամաշա արեց, տղին էլ բան չի կարաց ասի, հենց ասեց.— Ես մեռա՛, մեռա՛։

Տղեն էկավ թաքավորի պալատի տակով տուն. թաքավորը տեհավ.

— Նազի՛ր, վեզի՛ր,— ասեց,— էս էրկու շաբաթ էդ տղեն իմ աչքովը չէր ընկե, էս սհաթը կբերեք, ընձի հետ խոսա։

Գնացին ասին.— Թաքավորը քե կանչում ա։

Գյուլ փարին ասեց.— Էգուց թաքավորը էս վախտը մեզ ղոնախ ա, տղեն չի կարա գա։— Էկան, թաքավորին ըդենց պատասխան տվեցին։

Թաքավորը շատ ուրախացավ։ Թաքավորի էրկու կնիկը թաքավորին քուն դրեցին, ափալ-թափալ գնացին իրանց օթախը, պառավին խաբար ղրկեցին։

Ասեցին.— Դինսը՛զ, իմանսը՛զ, էդ որտե՞ղ ես ղրկե, էկավ։— Ասեցին.— Դե՛, գնա էս սհաթը ղրկիլ տո՛ւր, որ էթա։

Ասեց.— Իրեք տեղ ղրկեցի՝ էկավ. հըմի ընենց տեղ պըտի ղրկեմ, էլ հնար չի կա գալու։

Պառավը գնաց, դուռը ծեծեց, ախչիկը դուս էկավ։

Ասեց.— Բա՛րև, բալա ջա՛ն , մո՞նց ա, Գյուլ փարին բերել ա՞։

Ասեց.— Նանի ջա՛ն, բերել ա, բա ի՞նչ ա արե։

Գյուլ փարին ասեց.— Նանի՛, արի՛, ընձի հետ խոսա։

Ասեց.— Քեզ բերել տվեցի, մի տեղ էլ պըտի ղրկեմ։

Ասեց.— Ըսդրանց գլուխը ինչ բալբալեք էկել ա, քեզանով էկել ա, պառա՛վ։

Ասեց.— Խի՞ ընձանով էկել ա, ընձանով լավություն ա հասե։

Ասեց.— Որ թողամ, շատ կխոսաս դու. ըլլե՛ս մի ցոռտ ցախավել, ընկնես ըստեղ։— Էլավ մի ցոռտ ցախավել։

---

1 Հախք (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Աթչի՛,— ասեց,— տար քցա՛ գոմը, ձիու տակը։— Տարավ-քցեց գոմը։ Տղեն նեքսև մտավ։

Գյուլ փարին ասեց.— Արի՛, քեզ դարտ ու բալից աղատեցի, գնա բազարը՝ տասը հատ տավար ա՛ռ, էրկու խալվար բրինձ, կես խալվար եղ. բե՛, քու հոր ու մոր ժամ-պատարագ արա։— Գնաց էդպես արեց։ Տավարները մորթել տվեց, կերակուրները էփել տվեց, ղրկեց, մարդիկը թոփ արեց. տղեն էլ թաքավորին կանչեց։ Թաքավորը էն սհաթը էկավ, էլ մահալ չի թողաց։ Թաքավորի կնանիքը մարթ ղրկեցին պառավին, տնհան պառավ էրեկվանից չի կա. ըդոնց սիրտը ճաքում էր. իլլաճ չկա ձեռին։ Գնացին, նստան։ Հացը քաշիլ տվեցին, կերան. իրանց աղաքի ոսկե մարթապեքն էլ, տղեն հրամայեց, վե կալան, քոմմա գնացին։ Թաքավորը մնաց, շատ ուրախացավ, երկար խոսացին։ Թաքավորը տղի ու ախչկա բերնին մայիլ կտրեց, ասեց.— Ինչ ուզում եք, ձեր լեզուն ինչ պտրտի՝ պրտի տամ։

Գյուլ փարին ասեց.— Քեզանից զատ չենք խնդրում, մի բան ենք ուզում։

Ասեց.— Մի անգամ ասել եմ, ուզա՛։

Ասեց.— Մենք էն դարվազի կապած կնիկն ենք ուզում, տաս մեզի։

Ասեց.— Դուք բան ուզեք, էդ ի՞նչ էր։

Ասեց.— Մենք էն ենք ուզում։

Ասեց.— Դե՛, ձեզ ըլլի։

Թաքավորը պալատը գնաց, կնանոնցը ասեց.— Ընձնից զատ չուզեցին, էն կնիկը ուզեցին։

Կնանիքը շատ տրտմեցին։ Գյուլ փարին ու ախչիկը գնացին, էդ դարվազի կնկանը դրեցին ուսերին, տարան համամը. տասն օր դրեցին ջրի մեջ, անճախ ըդրա կաշին կակղեց. մի լավ լեղացրին, բերեցին տուն. մի ձեռք էնպես շոր կտրեցին, ըսկի էդ քաղաքում չի կար, հագցրին ըդրան։

Փարին ասեց.— Մեկ էլ ժամ արա քու հորն ու մորը։

Տղեն մեկ էլ էդպես պատրաստեց. կանչեց, էկան՝ ինչդար մարթ կար։

Փարին ասեց.— Գնա՛, թաքավորին էլ կանչա։

Թաքավորը կնանոնցը ասեց.— Դե՛, վերե՛ք, էթա՛նք։

Կնանիքը ասեցին.— Մենք գանք ի՞նչ անենք, թաքավո՛ր։

www.naregatsi.org

Թաքավորը բարկացավ.— Դե՛, թեզ արեք,— ասեց։

Վե կացան գնացին, մտան ներքև։ Էդ ախչիկն ու Փարին էկան, թաքավորի ձեռը բռնեցին, տարան։

Թաքավորը ասեց.— Ա՜յ հա՜յ, ես թաքավոր ըլլեմ, էս թավուր ախչկերք, էս թավուր տղա չունենամ։

Եմակը քաշեցին. կերան, պրծան։

Տղեն ասեց.— Ամեն մարթ իրան առջևի ոսկե մարթապեն վեր կալի։

Վե կալան, գնացին։ Թաքավորը, իրա կնանիքը մնացին։

Գյուլ փարին ասեց.— Ախչի՛, գնա՛, էն ցախավելը գոմիցը վե կալ ու բեր։— Գնաց, վե կալավ, բերեց։

Ասեց.— Ախչի՛, դիր թաքավորի աղաքը։

Թաքավորը նեղացավ իրա միջին, ասեց.— Ձեր պատիվ տալը ասեմ, թե էս վերջի բանը ասեմ։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, մի՛ նեղանա, ինչ որ բան կա, էդ ցախավելը կասի հըմի։

Փարին ասեց.— Ցախավե՛լ, էլի՛ պառավ։— Էլավ պառավ, նըստեց ըտեղ։

Թաքավորը ասեց.— Ցա՜, էն մեր տան պառավն ա։

Ասեց.— Դե՛, պառավ, ի՛նչ տեհել ես՝ պատմա։

Պառավը ինչ որ էլել էր, ամենը թաքավորին պատմեց։

Գյուլ փարին ասեց.— Տենը՞մ ես ոսկե քաքուլավոր տղեն ու ոսկե մազավոր ախչիկ, էս կաշու միջի կնիկը ըդրանց ի՞նչն ա։

Ասեց.— Ըդրանց մերն ա։

— Թաքավորը ըդրանց ի՞նչն ա։

Ասեց.— Հերն ա։

Ասեց.— Պառա՛վ, դու խի՞ իր էդպես հանըմ ըդրանց գլուխը։

Ասեց.— Ինչ որ անըմ ին, էդ էրկու կնանիքն ին անըմ։

Թաքավորը վե կացավ, ոտը գետնով տվեց։

Ասեց.— Պառավ, ըդոնք որ անըմ ին, դու խի՞ արեցիր։

Պառավին տարան, քցեցին ծովը։ Էրկու գիժ ղաթիր բերել տվեց, էդ էրկու կնկան՝ ամենքը էրկու ղաթիրի պոչը կապեց։

Թաքավորն իրա կնկան առավ թագատան։ Փարուն տղի վրա պսակեց։ Ինքը թաքավորությունից վեր էկավ, տղին դրեց իրա տեղը։

www.naregatsi.org

2. ՕՁ-ՄԱՑԻԼ

Մեկ հալիվոր մարդ կար մեկ քաղաքում, մի հատ էլ պառավ կնիկ ուներ. էդ հալիվորին իսկի իլլաճ չուներ, մի քոլածածկ էլ տուն ուներ։ Էդ հալիվորի փեշակն էն էր՝ օրը մի շլակ ցախ կբեբեր, կծախեր, կտար իրան հացի, ըդով ապրուստ կանեին։ Մեկ օր էլ պարանը վե կալավ, գնաց հանդն, էլի ցախը շինեց, շլակը կապեց, ուզեցավ շլակի, թամաշա արեց, տեհավ՝ մի յավշանի քոլի տակից մի օրտակ թռավ, ասեց.

— Էթամ տենամ ինչ կա միջին։

Գնաց տեհավ՝ իրեք հատ օրտակի ձու կա. իրեք հատ ձուն էլ վե կալավ, շլակեց ցախն[1] ու էկավ։ Բերեց բաղարը, ծախեց ցախը, իրա տանը համար հաց առավ, բերեց տուն. կնկան ասեց.

— Պառա՛վ, աստված մեզ տվեց։

Ասեց.— Ի՞նչ ես բերել, որ աստված մեզ տվել ա։

Ասեց.— Իրեք հատ օրտակի ձու եմ գթե, սոված եմ. մեկը ձվածեղ արա՝ ուտենք։

---

1 Այս բառն ավելացված է մեր կողմից՝ միտքը հստակ դարձնելու համար (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Զվածեղ արեց, կերան։

Առավոտը վե կացավ, էլի գնաց ցախի։

Բերեց ցախը, էլի ծախեց. հաց առավ, բերեց տուն. ասեց.

— Կնի՛կ, էն մի ձուն էլ ձվածեղ արա, ուտենք։

Ասեց.— Ուտելով ի՞նչ կհասկանանք, տանենք հարևանի հավի տակ դնենք, ճուտ կըլլի, կմեծանա, մեզի հըմար ձու կածի, մըշտական կուտենք։

Հալիվորը զոռեց պառավին, ասեց.— Գնա բե՛ր, մինը կուտենք, մինը թող մնա. դու գիտաս՝ էն ի՛նչ անըմ ես, արա՛։

Գնաց պառավը էն մինն էլ բերեց. էփեցին, կերան։

Առավոտը հալիվորը վե կացավ, գնաց ցախի էլի. ցախը բերեց, բաղարումը ծախեց, հաց առավ, էկավ տուն. պառավը գնաց թաքուն, որ ձուն պահի, հենց տեհավ մի օձ ձվիցը դուս ա էկե, կուտապ ա էկե։ Պառավը որ տեհավ, շատ վախեցավ ու փախավ. ճվալով էկավ հալիվորի մոտը։

Հալիվորը ասեց.— Պառա՛վ, ի՞նչ ես ճըվճըվում։

Ասեց.— Աստված քու տունը քանդի, էն ձվիցը մի հատ օձ ա դուս էկե։

Ասեց.— Պառա՛վ, ի՛նչ սուտ ես ասըմ. ձվի՞ցն էլ օձ դուս կգա, գնա՛, էթանք, տենանք։

Պառավն ասեց.— Փետ վե կա՛լ, էթանք, տանք, սպանենք։

Հալիվորն ասեց.— Փետը ո՞ւր ա։

Պառավ ընկավ փետի ման գալու։

Մեկ էլ էն տեհան օձը էկավ, տան մեջը կաղնեց, ասեց.— Հալիվո՛ր-պառա՛վ, ի՞նչ մտքի եք, ի՞նչ եք անըմ։

Ասեցին.— Բանի ման չենք գալի։

Ասեց.— Բա փետ-մետի էիք ման գալի, որ գայիք ընձի սպանեիք, դու չէ, սաղ ախշարքի մարդիքը, որ թափեն իմ վրա, չեն կարա հալա. ամենքին մի դըհով կքցեմ, կէթան։ Հըմի դու իմ պապն ես, էն էլ իմ նանն ա. ես էլ ձեր տղեն. ինձ լսեցիք՝ պակասություն չեք քաշի. չլսեցիք՝ էրկըսիդ էլ կսպանեմ։

Հալիվորն ասեց.— Որդի՛, ինչ որ ասես, կլսենք։

— Որ կլսես՝ կէթաս, թաքավորի պուճուր ախչիկը կուզես ինձ։

Հալիվորը վե կացավ, փետն առավ ու գնաց։

Գնաց, պալատի դռան աղաքը կաղնեց, խնամաքար ուներ, էն քարի վրեն նստեց։

www.naregatsi.org

Վազիրի մեկը դուս էկավ դարվազի աղաքը, տեհավ՝ հալիվորը քարի վրեն նստած ա, ասեց.— Հալիվո՛ր, խի ես նստե ըդի, ի՞նչ գանգատ ունես։

Ասեց.— Գանգատ չունեմ, էկել եմ Թաքավորի ախչիկն ուզեմ իմ տղին։

Վազիրը մտավ ներքսև, գնաց Թաքավորի մոտը, ասեց.

— Աչքդ լի՛ս, Թաքավոր ապրած կենա, մի հալիվոր մարդ էկել ա, քու ախչիկը ուզում ա իրա տղին։

Թաքավորն ասեց.— Կանչեք գա՛, տեսնանք ի՛նչ Թավուր մարդ ա։

Վազիրն ասեց.— Կանչելու մարդ չի. էն հալիվորն ա, որը մի շլակ ցախ ա բերում, մի պառավ էլ կնիկ ունի, անճախ ապրու�ա անում. ձմեռն էլ ընդրա հըմար ողորմություն են Թուի անում, յոլա ա էթում, ընկնում ա գարունք. էդ Թավուր մարդը մո՞նց կանչենք քու մոտը։

Թաքավորն ասեց.— Ա՛յ հա՛յ, էդ Թավուր մարդ ա գալի իմ ախչիկն ուզում։

Թաքավորն ասեց.— Վազի՛ր։

Ասեց.— Հրամայե՛։

— Ջալլատին կվեկալես, կէթաս հալիվորի կշտին կկաղնես, ջալլատին կհրամայես՝ հալիվորին մեջ տեղիցը էրկու անի, էն էրկու կտորն էլ ամենքը էրկու կտոր անի, որ ըլլի չորս կտոր. կածես մեշոքի մեջը, կտաս մեկ մարդի շլակ. տանեն քաղաքիցը ղրաղ քցեն, շներն ուտեն, քաղաքը իմանա, որ էդ Թավուր մարդ իմ դուռը չգա։

Վազիրը վե կալավ ջալլատին, տարավ, մոնց որ Թաքավորը հրամայել էր, էնպես էլ կատարեց. ածեց մի մեշոքի մեջը, ասեց.

— Տարե՛ք, քաղաքիցը ղրաղ ածեք, Թող շներն ուտեն։

Ընդոնք շլակեցին, գնացին։

Վազիրը մտավ Թաքավորի մոտը։

Թաքավորն ասեց.— Ի՞նչ արիր։

Ասեց.— Քո հրամանը կատարեցի։

Իմացավ օձը, ասեց.— Նանի՛։

Ասեց.— Ի՞նչ ա, բալա։

Ասեց.— Պապին էն օրն են քցե, որ աստված շա՞նց չտա. հըմի կգան, մեր դռնով կտանեն, գնա՛, աղաչա, Թող բերեն տուն։

www.naregatsi.org

Պառավը ոտին, գլխին տվեց ու գնաց, դուռը կաղնեց։

Տեհավ մեշոքով շլակներին, հրես, բերում են։

Ասեց.— Բալա ջա՛ն, էդ ի՞նչ ա։

Ասեցին.— Էն հալիվորն ա, թաքավորը սպանել ա, տանում ենք, դեն քցենք։

Ասեց.— Թաքավորի զուլումը մեր վրեն հասել ա, բալա ջա՛ն, բերեք մեր դուռը ածեք, գնացեք։

Ասեցին.— Քաղաքի ղրաղը շատ հեռու ա, հազը ըստի մոտ ա. հենց ածենք ըստի ու թողանք, էթանք։

Տարան, քցեցին տուն ու փախան, գնացին։

Պառավը նստեց, լաց էլավ, ասեց.— Իմ տունը քանդվեց, էս ինչ օյին էկավ իմ գլուխը,— իրա ոտին, գլխին տվեց։

Օձն էկավ,— Հը՛, նանի՛, խի՞ ես լաց ըլնում։

Ասեց.— Քու տունը չքանդվի՞, արի՛, տե՛ս, էս ի՞նչ ա էլե։

Ասեց.— Զորս կտոր են արե, ի՞նչ են արե. աստված էլ բեթարիցն ազատի։ Սաղ ա, սա՛ղ, գնա՛, դու ըստե մի՛ կաղնի. ականջ մի անի, ջանը սաղ ըլնի, գնա՛ դուռ։

Պառավը գնաց, տեղը քցեց ու էկավ։

Էկավ տեհավ, որ հալիվորը սաղ ա. քնել ա, ֆըսֆըսում ա, ծիծաղաց։

Վե կալան, տարան տեղը դրեցին։

Հալիվորը մի լավ քնեց. առավոտը վե կացավ, տեղը նստեց։

Օձը էկավ, կշտին կաղնեց. ասեց.— Պապի՛, էրեկ ղրկեցի թաքավորի մոտը, ի՞նչ խաբար բերեցիր ինձ հրմար։

— Գնացի, խնամաքարի վրեն նստեցի, վազիրը դուռ էկավ, ասեց. «Հալիվոր խի՞ ես նստե, ի՞նչ գանգատ ունես»։ Ասեցի. «Գանգատ չունեմ. թաքավորի ախչիկը կուզեմ իմ տղին»։ Վազիրը մտավ նեքսեն ու մի ջալլատի հետ դուռ էկավ. ջալլատին հրամայեց, ասեց. «Տո՛ւր»։ Ջալլատի տալն իմացա. ո՞ր տվեց, էլ չեմ դիտում ինչ ա էլե, մեկ էլ տեհա, ըստե քնած եմ, գալս չեմ իմացե։

Ասեց։— Դե՛, վե, գնա՛, չվախենաս. ըսօր ինձ մի խաբար բեր։

Հալիվորը վե կացավ ու գնաց, խնամաքարի վրեն նստեց. վազիրը դուռ էկավ, տեհավ՝ էրեկվա հալիվորը նստած ա. գնաց նեքսև, ասեց.

— Էրեկվա հալիվորը էկել ա էլի։

www.naregatsi.org

Թաքավորը ոտը տվեց գետնով, ասեց.— Ջլլի՜ իմ հրամանը չե՞ս կատարե։

Ուրիշ վազիրի կանչեց, ասեց.— Գնա՛ դուռը, մի տաս մարդի կանչա, թող գան ըստե։

Գնաց, կանչեց, էկան. կաղնեցին թաքավորի աղաքը։

Ասեց.— Վազի՛ր, էս տաս մարդին խոսացընում եմ, որ իմ էրեկվա հրամանը չես կատարե, ընդրա օրը քեզ կքցեմ։

Էն տասը մարդին հարցրեց.— Էրեկ որ դուս էկավ վազիրը զարվազումն ի՞նչ բան բռնեց։

— Դուս էկավ ջալլատը հետը, մի հալիվոր կար, չորս կտոր արեց, ածեց մեշոքը, տարան, դեն քցեցին։

Ասեց.— Աֆերըմ վազիր, պրծար. նորից հրամայում եմ, գնացեք, չորս կտորը քիչ էր, հըմի ըռշտի պես կոտորեք։

Վազիրները դուս էկան, ըռշտի պես կոտորեցին։

Ածեցին մի մեշոքի մեջ, տվեցին էրկու տղի շլակ, ասեցին.

— Տարե՛ք, ածեք ձորը, թող ջուրը տանի։

Օձն իմացավ, ասեց.— Նանի՛, պապին էն օրն են քցե, որ աստված շանց շտա՞, յաման հալտայա. հըմի կբերեն մեր դռնով պըտի տանեն, գնա աղաչա, բերեն տուն։

Վե կացավ, պառավը ոտին գլխին տվեց, դռանը լաց էլավ։ Տեհավ էրկու տղա մեշոքով բերում են, ասեց.— Բալա՛, ձեր ոտին, գլխին ղուրբան, էդ իմ մարդն ա, թաքավորի զուլումը հասել ա, ըդենց կոտորել ա, ձեր էրեսին մեռնեմ, բերեք ածեք տուն ու գնացեք։

Ասեց.— Պառա՛վ, քու տունը ո՞րն ա։

Ասեց.— Բաց դուռն ա։

Տարան, քցեցին հայաթն ու փախան, գնացին։

Պառավը նստեց, լաց էլավ վրին։

Օձը դուս էկավ, ասեց.— Նանի՛, մի լաց ըլլիր. գնա քուչի դուռը ղայիմ շինա, գնա տեղը քցա։

Գնաց, շինեց ու գնաց տեղը քցեց։

Էդ՝ օձը բերեց, մարմինը դեղեց, լիզուն քսելու բաշտան էլավ մորե մեկ, նստավ էդ հալիվորը։

Պառավը տանից դուս էկավ, տեհավ՝ հալիվորը նստած ա, փաթըթվեց հալիվորի շլինքը, հալիվորի էրեսները պաչեց։

Օձն ասեց.— Նանե՛, պաչելու վախտը չի, տա՛ր տեղը, բան պըտի հարցնեմ պապին։

www.naregatsi.org

Պառավը թևը բռնեց, կաղնացրեց. տարավ, տեղի մեջը նըստացրեց։

Օձն ասեց.— Պապի՛, քեզ տեղ ղրկեցի, ի՞նչ խաբար բերիր։

Ասեց.— Որդի՛, էն հետ[1] խոսացրին էրկու բերան, էս հետ ըսկի բան չասեցի։

Ասեց.— Դե՛, վեր, գնա՛, թաքավորի ախչիկն ուզա ինձ համար։

— Որդի՛,— ասեց պառավ,— ախր էրկու անգամ սպանեցին, բալքի սպանում են։

Ասեց.— Մերը մեռնի՞ Օձ-Մայիլին, հարուր անգամ էլ սպանեն, ես կսաղացնեմ։

Հալիվորը վեր կացավ ու գնաց։ Գնաց, քարի վրեն նստեց։ Թաքավորը իրան վազիր նազիրով դուս էկավ, տեհավ մի հալիվոր մարդ քարի վրեն նստած ա, ասեց.— Էդ ի՞նչ հալիվոր ա, մի հարցրեք, տեհեք։

Վազիր նազիրը տեհան՝ էն հալիվորն ա, շատ վախեցան թաքավորիցը, պատասխան չկարացին տան թաքավորին։

Ասեց թաքավորը.— Վազի՛ր, նազի՛ր, բան ասեցի. դուք սուս կացաք։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, էս էն հալիվորն ա, մեկել օրը չորս կտոր արեցինք, էրեկ էլ ըռշտի պես կոտորեցինք, էսօր էլ սաղ էկել ա, նստել ըստեղ. մենք վախեցանք, որ ըստրա պատիճը մեզ տաս, ընդուր չենք խոսացնում հալիվորին։

Ասեց.— Հալիվորին վե կալեք, տարեք պալատը, ըսի մի բան կա։

Թաքավորը ետ դառավ, իրա թախտին նստեց, հալիվորին կանչեց, աղաքին կաղնացրեց։ Նազիր, վազիրին կանչեց՝ հալիվորի չորս բոլորը կտրեցին.

Ասեց.— Հալիվո՛ր, դու խի՞ ես էկել։

Ասեց.— Էկել եմ, քու ախչիկն ուզեմ իմ տղին։

— Էս քանի անգամ ա դու էկել ես ըստեղ։

— Ըս էլ իրեք անգամ, ասեց։

— Ի՞նչ պատասխան տվին էրկու անգամը քեզ։

— Առաջի անգամը դուա էկան, ասեցին. «Խի՞ ես էկեր», ասե-

---

1 Հայերդում է եռն բառը, որը բանահավաքի անհարկի հավելումն է. հանել ենք (Մ. Կ.)։

www.naregatsi.org

ցի. «էկել եմ, թաքավորի ախչիկն ուզեմ իմ տղին». հենց թրի շրբխ-կոցը լսեցի գլխիս մեջ տեղիցը. ընդուց դեն էլ չիմացա, մեկ էլ տեհա տանը պառկած եմ։ Տղես ասեց. «Ի՞նչ պատասխան բերեցիր», ասեցի. «Պատասխան չտվին», էրեկ էլ ղրկեց, ըսկի չխոսացրին, հենց գլխիս տվեցին, մեկ էլ տեհա տանը պառկած եմ։ Էս օր էլ ղրկեց, ասեց. «Գնա՛, թաքավորի ախչիկն ուզե»։ Ըս օր էկել եմ, էրես-էրեսի քու ախչիկն ուզում եմ իմ տղին։ Ինչ ասելու ես, ասա՛։

Թաքավորն ասեց.— Նազի՛ր, վազի՛ր, ըսդրա խոսքով դուք պրծնում եք. էս հալիվորին բան անիլ էլ իլլաճ չկա, ընենց բանի դեմ անենք, որ չկարենա բերի։

— Թաքավոր ապրած կենա. էդ դու գիտաս։

Ասեց.— Պապի՛, քու տղեն ինչ փեշակի ա։

Ասեց.— Իմ տղեն փեշակ չունի. մի հատ օձ ա ու տանը կուտապ ա էկե, նստե։

Ասեց.— Իսան էլ չի, հա՞, քու տղեն։

Ասեց.— Չէ՛, մի հատ օձ ա։

Ասեց.— Որ օձ ա, ես խոստացա իմ աղջիկը տամ. գնա՛, ընենց տներ շինե, իմ պալատները տենըմ ես, իմ պալատներից բարձր ըլլի, ընդրա հովը գա, իմ պալատներին ծածկի, որ իմ ախչիկը տամ քու տղին։

Հալիվորն էկավ դալա տուն. մտավ տուն, օձն էկավ աղաքը, ասեց.

— Հը՛, պապի՛, ինչ պատասխան բերիր։

— Որդի՛, ասեց. «Գնա՛, ընենց տներ շինե, որ հովը գա իմ տներին ծածկի»։

— Պապի՛,— ասեց,— էն օրտակի ձուն, որ բերեցիր, էն ծակը գիտա՞ս։

Ասեց.— Գիտա՛մ։

Ասեց.— Կէթաս, կասես. «Պստիկ խանո՛ւմ, պստիկ աղեն ասըմ ա, մեր պստի քոշք ու սարեն ղրկի գա. իրան տասնէրկու նոքարն էլ հետը, թախումն էլ միջին ըլլի»։

Գնաց, ձեն տվեց ըդենց.— Պստիկ խանում, պստիկ աղեն ասըմ ա՝ պստիկ քոշք ու սարեն ղրկի գա, միջի թախումն էլ հետը, տասնէրկու նոքարն էլ հետը։

Ասեց.— Հալիվո՛ր, դու գնա, մենք ղրկեցինք։

www.naregatsi.org

Հալիվորն էկավ, հասավ տուն. տեհավ՝ տները օխտը դաթ իրար վրա ա։ Նոքարները էկան, հալիվորի հին շորերը հանեցին, թազա շորեր հագցրին՝ հազար մանեթ ածողություն ուներ. մի քուրք էլ քցեցին վրին, հինգ հարուր մանեթ ածողություն ուներ, սամուրի քուրք. մի լավ գավազան էլ տվին ձեռ, ակնունքով շինած էր ըդրա գլուխը, հազար մանեթ ածողություն ուներ։

Օձն էկավ աղաքը, ասեց.— Պապի՛, գնա, արխային թաքավորի ախչիկը ուզա, վախտով հարսանիք աննք։

Հալիվորը վե կացավ ու գնաց մտավ թաքավորի պալատը։

Նազիրն էկավ աղաքը, գլուխ տվեց ու կաղնեց։

Հալիվորն հրամայեց.— Կաղնելու վախտ չի՛, ի՞նչ ես անում, գնա՛, իմացըրա թաքավորին։

Ընենց վազեց վազիրն, էլ ի՞նչ ասեմ։

Թաքավորն ասեց.— Հալիվորին կանչեք, նեքսև գա։

Էկավ նեքսև, կաղնեց. թաքավորը տեհավ ըդրա թաշախուատը, զարմացավ։

— Հը՛, հալիվո՛ր,— ասեց,— իմ խոսքը կատարե՞լ ես, որ էկել ես։

Ասեց.— Դե՛, բալկոնդ կաղնի ու թամաշա արա։

Թաքավորը դուս էկավ, կաղնեց բալկոնումը, տեհավ՝ իրա տները հինգ դաթ ա, ըդրանը՝ օխտը դաթ, իրա տները թրծած քյարփինճ ա, ըդրա տները մի քյարփինճը ոսկի ա, մի քյարփինճը արծաթ. արևը տվել ա ըդրա տներին, ըդրա տների լուսը տվել ա քաղաքին։

Ասեց.— Հալիվո՛ր, ըսդուց դեն «Հալիվոր» չեմ ասի, «Ինամի» պըտի ասեմ, քու տների վրա զարմացա, էդ ի՞նչ հնար էր. մի բան էլ եմ ուզում քեզանից։

Հալիվորն ասեց.— Ինչ ուզես՝ կտամ։

Ասեց.— Քեզանից ուզում եմ օխտը դաթար դավարեռ ալմաստ, զմրուխտ, աղրուխտ, սելյան, բրուլյանդ բարցած ըլլի. սարվանը մի թիզ ըլլի, մուրուքը օխտը թիզ ըլլի. առավոտը իմ դռանը չոքած ըլնի։

Հալիվորը էկավ իրա տունը։ Գալու բաշտան Օձը գնաց աղաքը.

— Հը՛,— ասեց,— Պապի՛, ի՞նչ պատասխան տվեց։

Ասեց.— Օխտը դաթար դավարեռ ակնունք ա ուզում. սարվանը մի թիզ ըլլի, մուրուքը՝ օխտը թիզ։

www.naregatsi.org

Ասեց.— Դե՛, գնա էն ծակի կուշտը կաղնի, ձեն տուր. «Պրստիկ խանում, պստիկ աղեն ասըմ ա՝ օխտը ղաթար դավաբեռ ակնունք ղրկա, ամեն տեսակիցն էլ ըլլի. սարվանը մի թիզ ըլլի, մուրուքը՝ օխտը թիզ, թաքավորին ղալան եմ ղրկում»։

Գնաց հալիվորը, ձեն տվեց էդպես։

Ասեցին.— Գնա՛, մենք ղրկեցինք։

Հալիվորը ետ դառավ, էկավ տուն. տեհավ՝ օխտը ղաթար դավեն իրանց դռանը շոքած ա։

Էկավ, տեհավ շոքած ա օխտը ղաթար դավեն, սարվանը մի թիզ ա, մուրուքը՝ օխտը թիզ, փաթաթել ա մեջը, ձեռները քշտել ա, դավի նոխտեն բռնել ա։

Հալիվորն ընկավ աղաք. տարան, թաքավորի դռանը շոքացըրին։ Հալիվորը գնաց թաքավորի մոտը, ասեց.— Թաքավոր ապրած կենա, քու ուզածը բերել եմ։

Թաքավորը մի եքա մաղազա դարտըկեց, տարավ, շուռ տվեց իրա մաղազի մեջը, մի բուռը վե կալավ, իրա սարաֆներին շանց տվեց, ասեց.

— Հատն ի՞նչ կաժենա։

Ասեցին.— Թանկագին բան ա, հատը հազար մանեթ կաժենա։

— Խնամի,— ասեց հալիվորին,— իմ ուզածը բերեցիր, մեկ բան էլ եմ ուզում, իմ դռնից քու դուռը, քու դռնից ժամի դուռը, ժամի դռնից էլի քու դուռը չինարի ծառ ըլլի, որ չորս մարդ իրար բռնեն, հալա ձեռները չհասնի իրար, հաստությունը ընենց ըլլի։

Հալիվորին ճանապարհ քցեց, էկավ դպա տուն։

Թաքավորն ասեց.— Անկարելի ա ծառերը բերիլը, ըդով իմ ախչիկը կազատեմ ըդուց։

Հալիվորն էր, հասավ տուն. Օձ-Մայիլն էկավ աղաքը, ասեց.

— Հը՛, պապի, ի՞նչ ասեց թաքավորը։

— Թաքավորն է՞ն բանին դեմ արեց, չենք կարա։

Ասեց.— Ի՞նչ ասեց։

Ասեց.— Չինարի ծառ ա ուզում մեր դռնից իրա դուռը, իրա դռնից ժամի դուռը, ժամի դռնից էլի մեր դուռը։

Ասեց.— Էդ զոռ բան չի, գնա դպա էն ծակը, ձեն տուր. «Պրստիկ խանում, պստիկ աղեն ասըմ ա, չինարի ծառերն ղրկի գա. ծառի վրի ղղերն էլ հետը, որ ճըլվըլանա»։

Ձեն տվեց։— Ղրկեցինք՝ էկավ, դու գնա՛։

www.naregatsi.org

Հալիվորը էկավ, տեհավ. է՛լ-է՛լ-է՛լ ծառեր ա դուս էկե, ֆալաքի օխտը ղաթը հասել ա։

Էկավ տուն, Օձ-Մայիլն ասեց.— Հը՛ պապի, գնա՛, թաքավորին տես, ինչ ա ասում։

Գնաց թաքավորի պալատը։ Վազիրը դռանը կաղնած էր, ասեց.

— Վազի՛ր, գնա թաքավորին իմացրա, որ խնամին էկել ա։

Թաքավորն ասեց.— Կանչե՛ք, գա նեքսև։

Էկան հալիվորին կանչեցին, գնաց նեքսև։

Թաքավորն ասեց.— Հա՞, իմ ասածը կատարել ե՞ս, որ ասի։

Ասեց.— Դուս արի, թամաշա արա։

Դուս էկավ, թամաշա արեց, տեհավ՝ դուզ ա։

Ասեց.— Էս ի՞նչ ճըլվըլոց ա գալի։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, մի բան էլ ես եմ ավելացրե, ղշերն էլ հետն եմ բերե։

Ասեց.— Դե՛, գնա, իմ ասածն՝ ասած ա. գնա, մի ձեռք շոր բեր, որ էն կտորիցը իմ երկրումը չըլլի, կար չըլլի միջին. իմ աղջիկը հագնի, էթա պսակ. օխտը ձեռք էլ դափ ու զուռնաչի բեր, ինչ ղայդա ասենք ածա, ածեն, իրանք չէրևան։ Օձ-Մայիլին էլ հետը բեր։

Հալիվորը ետ դառավ իրանց տունը։ Էկավ, մոնց որ թաքավորն էր ասել, էկավ, ընենց ասեց։

— Գնա էն ծակի վրա ձեն տուր, ասա. «Պստիկ խանո՛ւմ, պստիկ աղեն ասում ա, էն շորերը ղրկե, որ ո՛չ ձեռ տված ըլլի, ո՛չ կար ըլլի միջին. կտորից էս երկրում չըլլի»։

Հանեցին մի պնտուկ տվին, ասեցին.— Ա՛ռ, էս պնտըկի միջին ա շորերը, վե կալ տար։

— Օխտը ձեռք էլ դափ ու զուռնա ղրկի գա, ինչ ղայդա ասենք, ածեն, իրանք չէրևան։

Ասեց.— Ղրկեցինք։

Ասեց.— Դուք էլ համեցեք հարսանիք։

Ասեց.— Մեր տեղը հեռու ա, չենք կարա գա. դուք ընտի քեֆ արեք, մենք էլ ըստի քեֆ կանենք։

Հալիվորը ետ դառավ, էկավ տուն. տեհավ օխտը ձեռք դափ ու զուռնեն զարկում են. կուկռոցն ընկել ա քաղաքի մեջ։

www.naregatsi.org

Գնաց, մտավ հալիվորը տուն. տեհավ՝ Օձ-Մայիլը պոչի վրա կաղնել ա, ասեց.— Պապի՛, հարևաններին թոփ արա, էթանք։— Թոփ արեց, ընկան ճանապարհ։ Օձը ընկավ աղաք։

Գնացին թաքավորի պալատը։

Թաքավորը տեհավ, էրկու հատ վազիր ղրկեց, թևերիցը բանցրացրին, տարան թաքավորի աղաքը։

Ասեց.— Խնամի՛, զուտնաչին իմ ասածն ա, շորերն էլ բեր, տենամ իմ ասա՞ծն ա։

Պնտուկը վե կալավ, դրեց թաքավորի աղաքը. թաքավորը պնտուկը ջարդեց. մի ձեռք շոր դուս էկավ միջիցը, իրա երկրումը էն կտորը չկար, կար էլ չկար միջին։ Ղրկեց, իրա էրկու ախչիկը մարդի տված ուներ, կանչեց, իրա կնիկն էլ կանչեց, իրա պուճուր ախչիկն էլ կանչեց, որ տվել ա Օձին։

Էկան ընտի կաղնան։

Թաքավորը ասեց.— Էս շորերը տեսեք՝ որ կտորիցը իմ երկրումը չկա, կար էլ չկա միջին, լավ թամաշա արեք, հագցրեք, որ էթա պսակ։

Թաքավորի կնիկն ու էրկու ախչիկն վե կալան, իրանց տվին գետնովը, ասին.— Դու թաքավոր ըլլես, մալի խափվես, քու քաղաքում բա տղա չկա՞ր, որ մի տղի տայիր, տվեցիր Օձի. մի գշեր կտա, կքաշվի մի պատի ճղակ։

Թաքավորն ասեց.— Ես իմ խոսքիցը դուս չէկա, իմանանք էն մի ախչիկն էլ չկա։

Թաքավորի կնիկն ու էրկու ախչիկն էլ լաց են ըլնում, շորերը հագցնում։ Թաքավորը ոտը տվեց գետնովը, ասեց.

— Էս բոպեին հագցրե՛ք։

Հագցրին, բերին ըտի կաղնացրին։

Էդ երկրի մեջ ըդենց տեսակի ախչիկ չկար։

Օձին հրամայեցին, ասեցին.— Արի՛։

Օձը վեր կացավ, պոչի վրա կաղնեց, օխտը անդամ թաքավորին գլուխ վեր բերեց. գլուխը պտրտեց, ինչդար մարդ կար, քոմքից շնորհակալ էլավ. գնաց, թաքավորի ախչկա մինթանու փեշիցը բերնով բռնեց։

Վե կալան, տարան, պսակեցին. տարան հալիվորի տունը։

Ջարի լիս կերան, խմեցին, քոմմա գնացին։

Մնաց Օձը, էդ ախչիկը, հալիվորը, էդ պառավը։

www.naregatsi.org

Օձն ասեց.— Պապի՛, նանե՛, գնացեք, քնեք։

Ընդոնք վե կացան գնացին։

Թաքավորի ախչկան ասեց.— Վե՛, դուռը շինի։

Թաքավորի ախչիկը դուռը շինեց, էկավ Օձի կշտին նստեց։

Ասեց.— Թաքավորի ախչի՛կ, ինձանից չվախենաս դու. ոտիդ բիթը բեր, պոչիս ծերին հուպ տուր։

Ոտի բիթը տարավ, պոչի ծերին հուպ տվեց։

Ճվաց ու մի տղա դուս էկավ խրխու միջիցը. ինչդար ախչիկն էր սիրուն, տասը էնդար տղեն էր սիրուն։

Էկավ, թաքավորի ախչկա ձեռը բռնեց, ասեց.

— Թաքավորի ախչի՛կ, իմ սրոը մարդի չասես, ինձ քառասուն օր ժամանակ ունեմ, ըսենց իսանի պես կէթանք թաքավորի մոտը քառասուն օրեն ետը, համա որ ասեցիր, էլ քու ձեռը չեմ ընկնի։

Ասեց.— Չե՛մ ասի։

Ըտե փաթըթվան իրար. մի լավ քեֆ արեցին։ Պառկան քնան, բիրտան զարթնեցին, տեհան՝ լիսը փանճարից ընկել ա օթախի մեջը։

Օձը էլի խրխեն հագավ, էլավ օձ, կուտապ էկավ պուճախին։

Թաքավորը կնկան կանչեց, ախչկերքին կանչեց, ասեց.

— Գնացեք, տեսեք, էն ախչկա հալը ոնց ա, մեր սրոը մենք իմանանք։

Թաքավորի կնիկն, էրկու ախչիկն էկան դրպա հալիվորի տունը. տեհան՝ պառավը դռները սրբում ա.— Բա՛րև, խնամի։

Ասեց պառավը.— Աստըծու բարի՛ն։

Ասեցին.— Ո՞վ կա վիրև։

Ասեց.— Հալիվորն ա, մարդ չկա։

Գնացին վիրև, տեհան՝ հալիվորն մի օթախի մեջ նստած ա։

Ասեցին.— Խնամի՛, փեսեն ու մեր ախչիկը որտեղ են։

Ասեց.— Էն օթախում են, իրիկվորե մտել են ըտե, էլ ձեն ու ձուն չկա։

Թաքավորի կնիկն ասեց.— Ֆողը ըդրա բերողի գլխին ըլլի. խան ա, որ ձեն ու ձուն ըլլի։

Դուռը ծեծեցին, ախչիկը բաց արեց։

Տեհան ախչիկը ի՞նչ ուրախ-ուրախ բաց արեց, ծիծաղը էրեսից թափում էր։

— Հը՛,— ասեց,— ախչի՛կ, քեֆդ ո՞նց ա։

www.naregatsi.org

Ասեց.— Փա՜ռք աստծու, շատ լավ ա։

Ասեց.— Օձդ ո՞նց ա։

Ասեց.— Խեղճ հայվանը կուչ ա էկե, ի՛նչ պըտի անի։

Ասեց.— Էս գշեր մեր քունը չի տարե, քու դարտն ենք քաշըմ։

Ասեց.— Իմ դարտը էլ չեք քաշի. արխային կկենաք։

Բերեց, ըդոնց մի լավ պատիվ արեց. ընենց եմակներ քաշեց, որ Թաքավորին էդ եմակներից չուներ։

Կերան, խմեցին, վե կացան։

Վե կացան էրկու քիրը, մերը, ախչկան խոսացրին, ասեցին.— Ախչի՛, էդ օձիցը ի՞նչ ես հասկանում։ Թաքավորը մի անգամ տվեց ու իրա խոսքիցը դուս չէկավ. մի քար վեր կալ ու, հենց տո՛ւ գրլխին, սատկացրա, քու ջանը ըդուց ազատվի։

Ախչիկը ասեց.— Որ էդ խոսքը ինձ ասեցիք, ըստերանքը էլ չգաք, էն ինձ համար շատ լավ ա։

Վե կացան, իրեքն էլ գնացին Թաքավորի մոտը։

Թաքավորը հարցրեց.— Էն ախչիկը մո՞նց ա։

— Ախչիկը շատ լավ էր, ուրախ էր սիրտը. մի բան էլ ասեցինք, որ օձին սպանի, մեր վրեն շատ նեղացավ, մենք էլ թողացինք, էկանք։

Մի տասն օր ախչկա մոտը չգնացին, տասն օրեն ետը Թաքավորին մի ուրախություն էլավ, ձիավորներ թոփ արեց, որ իրա դռան աղաքը մեյդան էր, հաղ անեին։

Հազար ձիավոր թոփ արեց, կնկան ասեց.— Գնացե՛ք, էն ախչկան էլ բերեք. թող գա, թամաշա անի, սիրտը բացվի։

Թաքավորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն իմացավ, ասեց.— Թաքավորի ախչիկ, հրմի մերդ կգա, քեզ կտանի։ Թաքավորը աթոռը դրել ա դռանը, նստել ա, հազար ձիավոր՝ հինգ հարուրը էս դին ա կաղնած, հինգ հարուրն էլ՝ էն դիհը, ջրինտ են հաղում. ես էլ,— ասեց-— Բոզ ձին նիլնեմ կգամ, սիպտակ շորերը կհագնեմ, սիպտակ թոփուզը կառնեմ ձեռս, որին տամ՝ շուռ կտամ, քու քուրերը, քու մերը ուրիշ բաներ կխոսան քու վրեն, սկի պատասխան չես տա, իմ սրտն էլ չես ասի. որ ասեցիր, էլ հնար չկա, քու ձեռը չեմ ընկնի։

Խոսքը պրծավ, Թաքավորի կնիկը մտավ նեքսև, ասեց.— Ախչի՛, վե՛ր, էթանք. էսօր դու էլ թամաշա արա, ուրախության օր ա։

4—2573

www.naregatsi.org

Ասեց.— Մո՞նց գամ, Օձ-Մայիլի կշտին մարդ չկա ախբը։

Թաքավորի կնիկն ասեց.— Ֆողե՛մ ըդրա գլուխը, ըդուց ի՞նչ ես հասկանում, չկա-չկա, ինչ անենք։

Օձն ասեց.— Նանի՛, ես էլ գամ, թամաշա անեմ։

Ասեց.— Հա՛, գաս ընկնես ձիանոց ոտի տակ, սատկես։

Ասեց.— Դե՛, դու գնացեք, ես կմնամ տանը։

Ասեց.— Ախչի՛, թեզ արի, չմնաս ձեր տանը, ես մինակ չեմ կարա մնա։

Վե կացան ու գնացին. գնացին, տեհան՝ ձիավորը ինչպե՞ս ա հաղում, որ թամամ ա, թաքավորը նստել ա։

Գնաց, թաքավորի ձեռը բռնեց, պաչեց ախչիկը. թաքավորը ճակատը պաչեց, ասեց.

— Ախչի՛, դարտ մի անի, ըդուց կազատեմ քեզ։

Կաղնեցին թամաշա, տեհան մի Բոզ ձիավոր էկավ, սիպտակ շորերը հագին, սիպտակ թոփուզը ձեռին. ձին որ քշում ա, ձիու ոտների տակիցը կրակը թափում ա։ Էդ հազար ձիավորին էնպես արեց, որ դումանը հանեց. ո՛րին տվեց՝ շուռ տվեց, ո՛րին տվեց՝ շուռ տվեց։

Քշեց, էրկու քենակալների քամակը ընկավ, ամեքին մի դըրպ տվեց, ձիուցը վե քցեց։

Ըդոնց կնանիքը ասեցին.— Վա, թևերդ կոտրվի, մո՞նց տվեց, վե քցեց։

Օձ-Մայիլի կնիկն ասեց.— Խի՞ կոտրվի, էն էլ հալպաթ մի մարդ ա։

Քիրերը ասեցին.— Ա՜ ֆողը քու բերողի գլխին ըլլի. հալա մերը իսան ա, կէթանք, հետը կխոսանք. քունը բա մի Օձ ա, գշերը կըկծի, կըքաշվի մի պատի ճղակ։

— Ֆողը ձեր գլխին ըլլի, իմ դարտը մի քաշեք սկի։

Ձիավորը ցվրվան, գնացին. էդ Բոզ ձիավորը էկավ, թոփուզը տվեց գետինն ու կաղնեց թաքավորի աղաքը։

Թաքավորը հանեց, մի նշան տվեց ըդրան։

Ասեց.— Անունդ ի՞նչ ա, ասա՛։

Ասեց.— Վերջի օրը իմ անունը կասեմ, թաքավո՛ր, մնաս բարին։

Մեկ էլ տեհան ձիու թոզն էրևաց, էլ ինքը չէրևաց։

Թաքավորը գնաց տուն, ախչկերքն էլ հետը։

www.naregatsi.org

Թաքավորը էդ ախչկան ասեց.— Կա՛ց ըստի, մի՛ էթա։

Ասեց.— Չե՛մ մնա, կէթամ։

Ասեց.— Ախչի՛, Օձից ինչ ես հասկանում, էթում ես։

— Որ տվել ես, ի՞նչ ասեմ, մի բուռ ֆող ա, ինձ զապուլ ա։

Վե կացավ ու գնաց. գնաց, տեհավ Օձը կուչ ա էկե։

Ասեց.— Ախչի՛, դռները շինա, պոչիս ծերին հուպ տուր։ Պոչի ծերին հուպ տվեց։

Օձ-Մայիլը խրխիցը դուս էկավ. փաթըթվան իրար, պաչպըչեցին, ասեց.

— Թաքավորի ախչի՛կ, ընտի մի բան խոսացիք, լավ էր, բերանդ պինդ ա, քիչ ա մնըմ քառասուն օրը թամամի, որ վե կալեմ քեզ, ըսենց տղամարդի զայդա թաքավորի աղաքը տանեմ քեզ։

Պառկան, քնան։ Մի տաս օր էլ անց կացավ. էլի թաքավորի ուրախությունի օրն էր. ձիավորները թոփ արեց, ասեց.

— Գնացե՛ք, էն ախչիկն էլ բերեք, թող թամաշա անի։

Թաքավորի կնիկը գնաց բերելու։

Օձ-Մայիլն ասեց.— Ախչի՛, թաքավորի ախչի՛կ, հըմի մերդ կգա, քե կտանի թամաշի. ես իմ Կարմիր ձին կնիլնեմ, կարմիր շորեր կհագնեմ. կարմիր թոփուզը ձեռս կառնեմ, կգամ. կմտնեմ մեյդանի մեջը, ամենին էլ թոփուզով պըտի տամ. ինչ որ կխոսան, իմ սըրը չես ասի։

Թաքավորի կնիկը մտավ դռնիցը, ասեց.— Ախչի՛, վե՛ր, էթանք։

Ասեց.— Նանի՛, որ տանում ես, թեզ թող գա. ոտ չունեմ, ձեռ չունեմ, որ հաց բերեմ, ուտեմ։

— Ֆողե՞մ գլուխդ, քու ուտելու դարտն ենք. չի էլ սատկում, ըռատ ըլի։

Վե կացան ու էկան ախչիկն ու մերը, էկան թաքավորի կշտին նստեցին։

Տեհան Կարմիր ձիավորն էկավ, մտավ մեյդան. էնպես արեց էդ հազար ձիավորին, որ քոմմըքին էլ տվեց թոփուզով։

Ախչկերքն էլ ասեցին՝ «Իմ մարդը ըլի», էն ասեց՝ «Իմ մարդը ըլի». ասեցին.— Մերը իսան ա, հալա հետը խոսում ենք. սրանը բա մի Օձ ա, որ սկի հետը չկարա խոսա։

Ասեց.— Դուք ձեր դարտը քաշեք, ինձ հետ ի՛նչ գործ ունեք։

Զին քաշեց, էկավ թաքավորի աղաքը կաղնեց։

www.naregatsi.org

Թաքավորը հանեց, մի նշան էլ տվեց։

Նշանն առավ ու ձիու գլուխը թողաց, էլ ինքը չէրևաց. ձիու թողն էրևաց։

Վե կացան, ցվրվեցին։

Ախչկան ուզում են տուն տանեն, չգնաց, ինչդար զոռեցին։

Գնաց, տեհավ Օձը նստած ա, ասեց.— Հա՛, թաքավորի ախչիկ, միտքդ փոխել էիր, որ իմ սրոը ասեիր։

Ասեց.— Չե՛մ ասի։

Մի քանի օր էլ անց կացավ. մի ուրախության օր էլ էկավ, ձիավորները թոփ արեց, ասեց.

— Ըսօր վերջի օրն ա, մի լավ քեֆ անենք։

Կնկան ասեց.— Գնա՛, էն ախչկան էլ բեր։

Թաքավորի կնիկը գնաց։

Օձ-Մայիլն ասեց.— Ախչի՛, թաքավորի ախչի՛կ, հրմի մերդ կգա, քեզ կտանի ընտե թամաշա, ես Սև ձին կնիլնեմ, սև շորերը կհագնեմ, սև թոփուզը կառնեմ ձեռս. կգամ էն մեյդանը, լավ կհաղամ. քոմբքի բերանը բաց մնա. ինչ որ քե կասեն, իմ սրոը չասես, իրեք օր ա մնացել որ քառասուն օրը թամամի. քառասուն օրը որ թամամավ, տղամարդի ղայդա կտանեմ թաքավորի մոտը, նո՛ր ընդուց դեն մենք կուտենք, կխոսենք, քեֆ կանենք։ Մե՛կ էլ ասըմ եմ, իմ սրոը չասե՞ս, որ ասեցիր էրկաթե տրխըներ կարես, հագնես, պողպատե գավազան առնես ձեռդ, էն ղդար ման կդաս, պողպատե գավազանի բռնելու տեղը կմնա, տրխընների էլ ղրաղ-ները կմնա՝ տակը կէթա, անճախ որ գթնես ինձ։

Տեհան թաքավորի կնիկը մտավ նեքսև։

Ասեց.— Ախչի՛, վե էթանք, ըսօր լավ ուրախության օր ա։

Օձ-Մայիլն ասեց.— Նանի՛, ինձ էլ տանես, գամ, թամաշա անեմ։

Ասեց.— Օրինա՞կ ես, ես քե տանեմ, կընկնիս ձիանոց ոտի տակ կսատկես։

Ասեց.— Դե՛, վե կալ տար, չեմ գա։

Ախչկան վե կալավ, տարավ։ Գնացին, թաքավորի կշտին կաղնեցին թամաշա։

Տեհան մի Սև ձիավոր էն դհիցը դուս էկավ, թաքավորի առա-ջին կաղնեց, գլուխ տվեց, ասեց.— Թաքավորն ապրած կենա, կէթամ, ըսօր վերջի օրն ա ձիավորի. հազար ձիավորը մի յան

www.naregatsi.org

կաղնացրա, ես մի յան կաղնեմ. քու հաղար ձիավորի հետ հաղ անեմ ես, ես իմ ձին քշեմ ընդոնց մեջը, որն ըլլի պրտի տամ. ընդոնք էլ իրավունք ունեն, որ ինձ տան։

Ասեց.— Իրավունք ունես, գնա՛։

Ասեց.— Թաքավոր ապրած, լավ թամաշա արա, տե՛ս, իրեք օրեն ետը, ես ու իմ նշանածն էլ քեզ ղոնաղ ենք։

Թաքավորն ասեց.— Որ ինձ ղոնաղ ըլլես. ես էլ ի՞նչ պարգև կտամ, գնա՛։

Ընկավ էդ ձիավորների մեջը, խախալատակեց[1], մեկին էլա չթողաց, ամենքին մի թոփուզ տվեց, տալու բաշտան վեր էր քցում։ Սաղ ինչդար թամաշավոր կար, էն մեկին ին թամաշա անում. իրար միջին խոսում ին ախչկերքը, կնանիքը։ Էն ասում էր. «Իմ մարդը ըլլի՞», էն ասում էր. «Իմ մարդը ըլլի՞»։

Թաքավորի էրկու ախչկերքը ասին.— Մերը հալա մարդ ա, խոսում ենք, բա մեր քվորը Օձ ա։

Ախչիկը ուզեցավ ասել էդ իմ մարդն ա, էլի հուպ տվեց իրան, չասեց։

Թաքավորի մի ախչիկն ասեց.— Էն օրվան Բոզ ձիավորը իմ մարդն ըլլեր, էնօրվա Կարմիր ձիավորն էլ էս քվորս մարդը ըլլեր, ըսօրվա Սև ձիավորն էլ սրա մարդը ըլլեր։

Էն մեկ ախչիկն ասեց.— Ախչի՛, ըտենց խի՞ ես ասում, մեր քվոր սիրտը պղտորի. իրիկունը կէթանք, հալա մեր մարդկանց հետ կխոսանք, ըստրան հըպա մի Օձ ա, ո՞ւմ հետ պրտի խոսա։

Էդ ախչկա սիրտը պատռեց, ասեց.— Ֆողը ձեր գլխին ըլլի, ֆո՞ղը, էնդար ասեցիք, ես չեմ խոսում, Բոզ ձիավորն էլ ա մեկ, Կարմիր ձիավորն էլ ա մեկ, էդ Սև ձիավորն, որ հաղում ա, էդ էլ ա մեկ. ընդար ասում եք «Օձ, Օձ». էդ էն Օձ-Մայիլն ա, հա՛, ձեր ջանը դուս գա, ֆողեմ ձեր գլուխը, իմ սիրտը պատռեցիք։

Օձ-Մայիլը ձին քշեց. էկավ Թաքավորի աղաքը կաղնեց, ասեց.— Թաքավո՛ր, խոստացա իրեք օրեն ետը գայի քեզ ղոնաղ, էլ չես տեսնի ինձ, գնացի։ Պատճառը քու ախչկանից կիմանաս։

Ձին քշեց, գնաց Թաքավորի ախչկան ասեց.— Էլ ինձ չես տեսնի, էսօր գնացի։

Մեկ էլ տեհան՝ ձիու թոզն էրևաց, էլ ինքը չէրևաց։

---

1 Մաղեց (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Թաքավորի ախչիկը գլխին ու ոտին տվեց, լաց էլավ։
Զիավորները, թամաշավորները բիրատի ցվրրվան, գնացին։
Թաքավորը ախչկերքի հետ, իրա կնկա հետ գնացին։
Ասեց.— Ախչի՛, արի, տենամ ի՞նչ ես անում։
Օձ-Մայիլն ինչ որ ախչկան պատմել էր, ընենց էլ ախչիկը թաքավորին պատմեց, վերջի խոսքը ասեց. «Իրեք օր ա մնացե, քառասուն օրը թամմի, որ թամմեց կտանեմ թաքավորի մոտը...», ասեց. «Իմ սրուը մի ասի», ախչկերքը հետս ընկան, ասեցի սրուը։
Թաքավորը ասեց.— Ա՛յ քու շլինքը կոտրվի, բերանդ մի սահաթ էլ խփեիր, էլի։— Ասեց.— Դե՛, հաց պատրաստեք, ուտենք։
Էկավ, տեհավ հալիվորն ու պառավը նստած են։
Ասեց.— Պապի՛, Օձ-Մայիլը գնաց, չտեսա՞ր։
Ասեց.— Էկավ, ինձ ձեն տվեց, ասեց. «Պապի՛, մնաս բարի, ես էթում եմ»,— ասեց ու գնաց։
Էդ ախչիկը թազատան իրա ոտին-գլխին տվեց ու լաց էլավ։
Առավոտը թեզ վեր կացավ, գնաց դարբին Ուստա Մարքարի մոտը, ասեց.— Ուստա Մարքար, ինձ համար մի ջուխտ էրկաթե տրեխ շինա, մի պողպատե գավազան շինա, ինչ որ հախն ա, կտամ։
Ալպեալը փուքսը փչեց ու շինեց։
Հագավ տրխքները, գավազանը առավ ձեռը, գնաց մի ձեռք էլ դարվիշի շոր առավ, հագավ. գնաց թաքավորի պալատը, գլուխ տվեց, թաքավորի աղաքին կաղնեց։
Թաքավորն ասեց.— Ա՛յ-հա՛յ, էդ ինչ գեյիմ ես մտե։
Ասեց.— Օձ-Մայիլն ինչ որ ասել ա, ընենց եմ արե։
Թաքավորը, իրա կնիկը, էրկու ախչիկը, ինչ իլլաճ արեցին, չկարացին գլուխ հանի։
Գնաց, թաքավորի ձեռը պաչեց, մոր ձեռն էլ պաչեց, քվորտանց հետն էլ ձեռ բռնեց, ասեց.
— Դե՛, մնաք բարի, ես գնացի։
Թաքավորն ասեց.— Աստված քու հետ, գնա՛։
Ընկավ ճանապարհ էդ ախչիկը, գնաց։ Աշխարհը ման էկավ, չգտավ, ինչ տեղ հարցրեց, սալդ տվող չէլավ։
Գնաց, մի աղբրի վրեն նստեց, մի լավ ջուր խմեց, պառկավ աղբրի ղրաղը քամակի վրա, էրեսը թեքեց աստված՝ վիրև, ա-

www.naregatsi.org

սեց.— Աստվա՛ծ, իմ ֆոգին յա առ, յա մի տեղ շանց տուր, ես աշխարքը ման գալով մեռա, ըստիան տեղ չեմ կարա էթա։

Մեկ էլ տեհավ, իրեք հատ ախչիկ կժերը ուսներին էկան, ջուրը լցրեցին աղբրիցը. ջուր ուզեց, ո՛րից ուզեց՝ չտվին, ասեցին. «Ֆոդե՛մ գլուխդ, մեր մոքոր տղեն ջուր ա ուզում, էրվում ա. դու ջուր ես ուզում»։

Էդ էրկու ախչիկը վռազ-վռազ լցրեցին, գնացին։ Հետո էն պուճուր ախչկանից ուզեց։ Ախչիկը կուժը լցրեց, տվեց. էն դարվիշը առավ, խմեց։ Ասեց.— Ախչի՛, ես ջուր ուզեցի էն էրկու ախչկանից, իսկ իմ վրեն բարկացան։

Ասեց.— Թաքավորի ախչկա շլինքը կոտրվի, մեր մոքոր տղեն՝ Օձ-Մայիլը գնացել էր, ախչիկը առել էր. պայման էր դրել, քառասուն օր ըդրան ժամանակ ուներ, որ սրոը չասեր. քառասուն օրը չթամմած ասել ա, հըմի խռովել ա, էկել, ընկել ա ըստեղ, գշեր-ցերեկ ասում ա. «Էրվա թաքավորի ախչկա սերից»։ Հըմի մերս կշտին կաղնել ա, գշեր-ցերեկ ջուր ենք ածում վրեն, որ հովանա, որ մեր մեկին առնի։

Դարվիշը ալպեալը իմացավ որ իրա մարդն ա.— Ախչի՛,— ասեց,— ջուրը մեկ էլ տուր խմեմ ու գնա։

Առավ, խմեց, մատանին գցեց կժի մեջը։

Ախչիկը ջուրը լցրեց ու տարավ, տարավ ածեց վրին։

Ախչկա մերը ախչկա վրին բարկացավ, ասեց.— Լի՛ըբ, անըզգա՛մ, խի՞ ետացար էդքան։

Ասեց.— Մի դարվիշ կար, հետը խոսացի, ետացա։

Ջուրը ախչիկը որ ածեց վրին, ասեց.— Հովացա, դինջացա։

Մատանիքը ընկավ աղաքը, վե կալավ, դրեց մատը։

Օձ-Մայիլն ասեց.— Բերեք, իմ շորերը հագնեմ ու նստեմ. բո՛լ ա։

Շորերը հագավ, նստեց։

Մոքիրը ախչկերքին ասեց.— Գնացե՛ք, էն դարվիշին վե կալեք, բերեք։ Գնացին, բերեցին։

Մոքիրն որ տեհավ դարվիշին, ասեց.— Լի՛ըբ, անըզգամ, դարվիշի շոր հագել ես որ չճանաչենք. էս ինչ օրն ես քցե իմ քվոր տղին, էս իրեք տարի ա գշեր-ցերեկ ջուր ենք ածում վրին, հալա չի հովանում, քե պես անըզգամի խաթեր. հըմի քեզ կտոր-կտոր կանեմ, որ ամեն կտորդ մի չոլ քցեմ, որ քեզ տեհավ, նոր հովացավ։

www.naregatsi.org

Օձ-Մայիլն ասեց.— Մոքի՛ր, ձեռ մի տար, ես ըդրան ճանապարհ կքցեմ. դորն էկել ա, դենը էթա։

Ասեց.— Հալա դու ափսոս ես գալի, որ քե էդ օրը քցեց, քու կաշին կպոկեմ, քու կաշին։ Ճանապարհ ես քցում, որ դու էթաս հետը, հասնես. ես պըտի փչացնեմ, որ ըտուց ձեռ վե կալես։

Ասեց.— Դու գիտաս, մոքիր, էլ չեմ կարա բան ասի։

Մոքիրն ասեց.— Ես ի՛նչ կանեմ՝ կանեմ, չխոսաս էլ։

Ասեց.— Ախչի՛, մենք էթում ենք բանջարի. էդ խնոցին արտըսնքով կլըցընես։

Ըդոնք վե կացան, գնացին բանջարի։

Էդ ախչիկը նստեց խնոցու մոտը։

Օձ-Մայիլն ասեց.— Հը՛, խի՞ նստար ըդի։

Ասեց.— Թանպա արեց, որ արտըսնքով լցնեմ։

Ասեց.— Կարա՞ս լցընի։

Ասեց.— Չէ՛։

Ասեց.— Մի քանի կուժ ջուր լցըրա։— Բերեց ջուրը լցրեց լիքը։— Էրկու իրեք բուռ աղ քցա մեջը։ Աղը քցեց։

Ասեց.— Արի՛, կշտիս նստի, խոսանք։

Էկավ կշտին, նստեցին, խոսացին։

Ասեց.— Դու իմ սըռը խի ասեցիր, որ ես էկա, ընկա ըստի, դու էլ չոլեչոլ ընկար։

Ասեց.— Բա մո՞նց պըտի անես։

Ասեց.— Ի՛նչ հնար անեմ՝ էն գիտա։

Հենց դռնիցը մոքիրը մտավ նեքսև. ասեց.— Լի՛ըր, անզգա՛մ, խնոցին լցըրել ես, որ նստել ես խոսըմ ես։

Ասեց.— Լցըրել եմ։

Գնաց, խնոցին տեհավ լիքն ա, ձեռով ջուրը տարավ բերանը. տեհավ աղի ա, ասեց.— Ա՛յ քու սարվացընողի շլինքը կոտրվի, ինչ անենք՝ կսարվացնի քեզ։ Էլ սրան իլլաճ չկա, ղրկեմ քվորս տունը, ընտի կվերջանա, չկարա էլ գա։

Ասեց.— Ախչի՛, կէթաս էն սարի քամակը, կասես. «Մոքի՛ր, մոքիրն առափատեն ուզում ա, որ հաց թխենք». կվեկալես, կգաս։ Դե՛, մենք էթըմ ենք ցախ բերենք։

Ըդոնք գնացին ցախ բերելու։

Օձ-Մայիլն ասեց.— Ախչի՛, կէթաս, աղաքդ մի ջուր կգա, շատ մուտտար ջուր ա. կվերկալես, մի բուռ կխմես, կասես. «Օխա՛յ,

www.naregatsi.org

ի՞նչ անմահական ջուր աս։ Ջուրը ճանփա կտա, անց կկենաս։ Կէթաս կտենաս փուշ ու տատաշ ըռաստ էկավ, մի հատ կվեկալես, ֆոտ կքաշես, կասես. «էս ի՞նչ անմահական ծաղիկ աս». էդ էլ ճանփա կտա, կանցնես կէթաս։ Կէթաս, կտենաս մի գել խոտն աղաքին ա, մի ղոչ մի դմակ աղաքին ա. խոտը կվեկալես, կքցես ղոչի աղաքը, դմակը կքցես գիլի աղաքը։ Կէթաս, կտենաս մի դուռ հետ արած ա՝ բաց կանես, կէթաս, կտենաս մի դուռ էլ բաց ա՝ ետ կանես։ Ընտե էլ մի դուռ կա, կմտնես նեքսև, առափատեն դռան գլխին կախ տված ա. կասես. «Մոքի՛ր, մոքիրն առափատեն ուզում աս», կվեկալես, կփախնես. մոքիրը ձեն տա, չես կաղնի։

Ախչիկը վեր կենա, կէթա, Օձ-Մայիլի ասածի պես կանի. դուռը կմտնի, կասի. «Մոքի՛ր, առափատեն մոքիրն ուզում աս»։

Կասի.— Մոքիրը քե ղուրբան, արի՛, նստի ըստե, առափատեն տամ։

Դռան գլխիցը կըվեկալե ախչիկն, կփախնի։ Էդ մոքիրն կընկնի քամակը, կասի.— Ա՛յ ետ արած դուռ, բռնա ըդրան։

Ասեց.— Ցավա՜շ, մի քիչ բաց ըլլեմ, դինջանամ, նոր կընկնեմ քամակը, բռնեցի՝ բռնեցի, չբռնեցի՝ իրա բախտը։

Ասեց.— Բաց դուռ, դո՛ւ բռնա։

Ասեց.— Ցավա՜շ, մի քիչ ետ ըլլեմ, դինջանամ. բռնեցի՝ բըռնեցի, չբռնեցի՝ իրա բախտը։

Ասեց.— Ղո՛չ, դո՛ւ բռնա։

Ասեց.— Սուված եմ. յավաշ, մի քիչ խոտ ուտեմ, կշտանամ, կընկնեմ քամակը, բռնեցի՝ բռնեցի, չբռնեցի՝ իրա բախտը։

Ասեց.— Գե՛լ, դո՛ւ բռնա։

Ասեց.— Ցավաշ, մի քիչ դմակ ուտեմ, կշտանամ. նոր ընկնեմ քամակը, բռնեցի՝ բռնեցի, չբռնեցի՝ իրա բախտը։

Ասեց.— Փուշ ու տատաշ, դո՛ւ բռնա։

Ասեց.— Ցավաշ, մի քիչ անմահական ծաղիկ ըլլեմ, բռնվավ՝ բռնվավ, չբռնվավ՝ իրա բախտը։

Ասեց.— Փիս-մուռտար ջուր, դո՛ւ բռնա։

Ասեց.— Ցավաշ, մի քիչ ըլլեմ անմահական ջուր, բռնվավ՝ բռնվավ, չբռնվավ՝ իրա բախտը։

Պառավը էկավ, ջրի ղրաղը կաղնեց.— Գնա՛,— ասեց,— իմ ձեռիցը չէիր պրծնի դուս համա քու սարվացնողի շլինքը կոտրվի, թե չէ, քեզ մի լավ խորոված կանեի, կուտեի։ Մոքիրը ետ դառավ։

www.naregatsi.org

Առափատեն ախչիկը բերեց Օձ-Մայիլի մոտը։

Օձ-Մայիլն ասեց.— Մո՞նց էր։

Ասեց.— Քու ասածները որ չանեի, չէի կարա դա։

Ասեց.— Առափատեն դիր տաշտի մոտը, արի խոսանք։

Մոքիրը մտավ նեքսև, ասեց.— Ախչի՛, բերե՞լ ես։

Ասեց.— Բերել եմ։

Ասեց.— Ի՞նչ իլլաճ անենք, կսարվացնի։

Բոռաց, իրեք ախչիկն էլ էկան, մտան նեքսև։

— Ախչկե՛րք,— ասեց իրա ախչկերքին,— իմ քվոր տղին էն օրը. քցեց, հալա ըդուց չի հովանում, էթանք մեշեն, ամենքս մի սել ցախ շլակենք դանք, փուռ կապենք, վառենք. էս ախչկա ոտ ու ձեռը կապենք, քցենք կրակի մեջը, որ քյուլն էլ չէրևա, որ իրա աչքովը տենա, նոր հովանա։— Պարաններերը վե կալան, գնացին մեշեն։

Օձ-Մայիլն ասեց.— Ախչի՛, ցախն որ բերեն, դու ի՞նչ պըտի անես։

Ասեց.— Չեմ գիտում, ի՛նչ պըտի անեմ։

Ասեց.— Իլլաճ չկա, մենք պըտի փախնենք, որ պրծնենք։

Սիպտակ ձիու պոչի մազը տվեց կրակին, ձին էկավ. Սիպտակ շորերը հագավ, թոփուզն առավ ձեռն ու ասեց.— Ախչի՛, մի կտոր աղ վե կալ.— մի բութուկկա ջուր վե կալան, մի սանտը վե կալան։ Ախչկան քաշեց թարքը, ձիու գլուխը թողաց. թոզն էրևաց, էլ ինքը չէրևաց։ Մոքիրը ցախը շլակներին մտավ նեքսև, տեհավ՝ նա բաս վար, նա նամամ[1]։

Պուճուր ախչկան կանչեց, ասեց.— Ախչի, կընկնես քամակը, կբռնես, որտի գթնես, կրերես իմ մոտը. ես ըդրա միսը քելփեթինով կպոկեմ։

Ախչիկն ընկավ քամակը։

Օձ-Մայիլն ասեց.— Թաքավորի ախչի՛կ, ետ թամաշա արա, տե՛ս հո մարդ չի՞ գալի։

Ետ թամաշա արեց, ասեց.— Մի մարդ ա գալի, որ քամու պես ա գալի։

Ասեց.— Սանտրը քցա։

Սանտրը քցեց՝ էլավ մի եքա մեշա։

---

1 Ոչ թասը կա, ոչ բաղնիքը (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Էկավ, մեշի մեջ մտավ, ըդրա ջանը ճղճղեց։

Ասեց.— Թաքավորի ախչի՛կ, ետ թամաշա արա, տե՛ս, ի՞նչ ա։

Ասեց.— Մեշիցը դուս էկավ։

Ասեց.— Աղաքարը քցա՛։

Աղաքարը քցեց, էլավ մի եքա աղի սար, ըդրա յարալու ջանը ճըռմռաց։

Ասեց.— Ախչի՛, մի ետ թամաշա արա, տե՛ս ի՞նչ էլավ։

Ասեց.— Աղաքարիցն էլ դուս էկավ։

Ասեց.— Ջուրը քցա։

Էլավ մի ահագին ծով։

Ասեց.— Ետ թամաշա արա, տե՛ս, ի՞նչ էլավ։

Ասեց.— Ծովիցը, հրեն, դուս էկավ։

Ասեց.— Էլ իլլաճ չըլլի, վեր արի։

Վեր էկան, ինքը էլավ մի հալիվոր մարդ, ձին շինեց սև հավող, կնիկը շինեց սիպտակ հավող, ինքն էլ կշտին նստեց։

Էկավ, ասեց.— Հալիվո՛ր, մի Բոզ ձիավոր, մի ախչիկ թարքին, տեսա՞ր։

Ասեց.— Սև հավողի գրվանքեն էլ իրեք կապեկ, սիպտակն էլ։

Ասեց.— Ես բան եմ ասըմ, դու ի՛նչ ես ասըմ։

Ասեց.— Էդ ա, պակաս չենք տա։

Ախչիկը թքեց ու ետ դառավ, էկավ տուն։

Ըդոնք նիլան, փախան։

Մերն ասեց.— Ախչի՛, ի՞նչ արեցիր։

Ասեց.— Մարդ չպատահեց, մի հալիվոր պատահեց, հավող էր ծախում, ասեցի. «Հալիվո՛ր, մի ըսենց մարդ տեհար, թե չտեհար», ասեց. «Սև հավողն էլ իրեք կապեկ,...», ես էլ ետ դառա էկա։

Մերն ասեց.— Ցա սևը պըտի առնեիր, յա սիպտակը. ըդրա սերը բոզմիշ կըլլեր, կգար, ձեր մեկին կառներ։

Միջնեկ ախչիկն ասեց.— Կէթամ, յա սևը կառնեմ, յա սիպտակը։

Ընկավ քամակը։

Ասեց Օձ-Մայիլը.— Թաքավորի ախչի՛կ, թամաշա արա, տե՛ս, մարդ-մուրթ հո չի՞ գալի։

Թամաշա արեց, ասեց.— Մեկը դումանի պես գալիս ա։

Վե կալավ, աղաք սանդրը քցեց՝ տեհավ դուս էկավ, աղը քցեց՝ տեհավ աղիցն էլ դուս էկավ, ջուրը քցեց՝ ջրիցն էլ դուս

www.naregatsi.org

էկավ, ձիուց վեր էկան, ինքը էլավ բոստանչի, կնիկը շինեց դուբմա, ձին շինեց եմիշ։

Աղջիկը էկավ, հասավ, ասեց.— Բոստանչի ախպե՛ր, մի ըսենց Բոզ ձիավոր, մի աղջիկ էլ թարքին տեհար։

Ասեց.— Դուբմեն էլ մի շահի, եմիշն էլ, որից ուզում ես, ա՛ռ։

Ասեց.— Ես բան եմ հարցնում, դո՞ւ ինչ ես ասում։

Ասեց.— Գինը էդ ա, պակաս չեմ տա։

Թքեց ու ետ դառավ։

Օձ-Մայիլը վե կացավ, ձիուն սաղացրեց, կնկան էլ սաղացրեց։ Բոզ ձին բեզարեց, բրախ տվեց. Կարմիր ձիու մազը կրակին տվեց։ Կարմիր ձին էկավ, կարմիր շորերը հաքավ, նիլավ ձիու վրեն, քաշեց թարքն ու փախավ։

Էկավ ախչիկը, տուն հասավ, մերը հարցրեց.— Ի՞նչ էլավ, չկարացիր բռնեիր։

Ասեց.— Մի բոստանչի պատահեց, ասեցի. «Բոստանչի՛, մի ըսենց ձիավոր, ախչիկ թարքին տեհա՞ր», ասեց. «Դուբմեն էլ, եմիշն էլ մի շահի»։

Ասեց.— Ա՛յ քու վիզը կոտրվի, յա դուբմեն առնեիր, յա եմիշը, ընդոր սերը բոզմիշ կրլլեր, կըգար, ձեր մեկին կառներ։

Մենծն ասեց.— Ես կէթամ, յա եմիշը կառնեմ, յա դուբմեն։

— Ախչի՛,— ասեց,— էլ Բոզ ձիավոր չես հարցնի, Կարմիր ձին ա նիլե։

Ախչիկը ընկավ քամակը։

Ասեց.— Թաքավորի ախչի՛կ, ետ թամաշա արա, տե՛ս։

Ասեց.— Մեկը գալիս ա, դումանի պես։

Ասեց.— Սանտրը քցա՛։— Քցեց՝ էլավ մեշա, տեհավ՝ մեշից դուս էկավ, աղը քցեց՝ էլավ աղի սար, աղիցն էլ դուս էկավ, ջուրը քցեց՝ էլավ եքա ծով, ծովիցն էլ դուս էկավ։

Ալպեալ ձիուցը վեր էկավ, ինքն էլավ համամշի, ձին շինեց սառը ջուր, կնիկը շինեց տաք ջուր։

Էկավ, ասեց.— Համամշի, մի ըսենց Կարմիր ձիավոր անց կացավ, մի ախչիկ թարքին, տեհա՞ր, թե չտեհար։

Ասեց.— Տաք ջուրն էլ էրկու շահի լեղանալը, սառն էլ, որտի լեղանում ես, լեղացի։

Ասեց.— Ես ի՛նչ եմ ասում, դու ի՞նչ ես ասում։

Ասեց.— Լ՛դենց ա, էրկու շահուց պակաս չենք առնի։

www.naregatsi.org

Թքեց ու էլ եդ ետ դառավ։

Զին սաղացրեց, կնիկն էլ սաղացրեց։

Սև ձիու պոչի մազը կրակեց։ Սև ձին էկավ. սև շորերը հագավ, ախչկան քաշեց թարքն ու փախավ։

Ախչիկը գնաց, հասավ տուն։

Մերն ասեց.— Ախչի՛, ի՞նչ արեցիր։

— Գնացի, տեհա մի համամչի, ասեցի. «Համամչի՛, մի ըսենց կարմիր ձիավոր, մի ախչիկ թարքին տեհա՞ր», համամչին ասեց. «Տաք ջուրն էլ էրկու շահի, սառն էլ, որտի լեղանըմ ես՝ լեղացիր»։

Ասեց.— Ծողերը գլխի՛դ, յա սառը ջրին լեղանայիր, յա տաք. ըդրա սերը բոզմիշ կըլլեր, կգար, ձեր մեկին կառներ, մեր տան տեղի վրա կնստեր, հըմի Սև ձին ա նիլել, որ մի ամսվա ճանապարհը մի օրն ա էթում, իմ ձեռիցը չկարա պրծընի, ինչ հնար անի, ես գիտամ, դե՛, մնացեք տանը, ես գնացի։

Օձ-Մայիլն ասեց.— Մի թամաշա արա ետ։

Ասեց.— Մեկը գալիս ա, ընենց ա գալի, որ քամուցը ճանփի քարերը դես ու դեն ա փախնըմ։

Ասեց.— Ինչ հնարք անենք՝ մոքիրը գիտա. ըսդրրան մնաց աղաչանք անիլը։

Ձիուցը վեր էկավ. ձին շինեց վարդի փուշ, իրա ղրաղները բոլորիկ տնկեց. ախչկան շինեց մի հատ բարալիկ ճիպոտ, տնկեց մեջ տեղը, ինքն էլավ օձ, ընենց փաթըթվեց ճիպոտին, որ մի ասղի ծերի ղըտար բաց չի մնա, լիզուն հանեց ու ընկավ աղաչանք։

Մոքիրն կրակի պես էկավ, հասավ, ասեց.— Հը՛, Օձ-Մայի՛լ, քու էհթիպարն էդ է՞ր, էն ղտար որ քու վրա չարշարվեցինք, դու թողեցիր էկար, մի ասղի ծերի ղտար շանց տուր, տե՛ս, միսը պոկո՛ւմ եմ։

Ասեց.— Մոքի՛ր, թե ինձ սիրում ես, ետ դառ, գնա՛։

Ասեց.— Ինչ անեմ, ո՛րտի տամ՝ քեզ կդպչի, ըդրան չի դիպչում, իմ ջանն ա, մո՞նց տամ իմ ջանին։

Ասեց.— Վերե՛ք, գնացե՛ք, աստված ձեզ հետ։

Օձ-Մայիլն ասեց.— Մոքի՛ր, գնա՛, հեռացիր մենք կէթանք։

Ասեց.— Հեռվանամ, ուր պըտի պրծնեք իմ ձեռիցը, քու գլուխը վկա՝ ձեզ բան չեմ անի, ձեզ պըտի օրհնեմ, էթաք։

Նոր սաղացան, մոքիրն էկավ Օձ-Մայիլի էրեսն էլ պաչեց, ախչկա էրեսն էլ, ետ դառավ։

www.naregatsi.org

Իրանք ձին նիլան, գնացին, իրանց ծակի դեմը կաղնեցին։

Օձ-Մայիլը ձեն տվեց.— Պստիկ խանը՛մ, դարվազեն բաց գանք նեքսև։— Դարվազեն բաց արեց, մտան նեքսև։

Ձին քաշեցին, տեհան, ըհը՛, էն ձիան էլ ըդի կապած ա։

Պստիկ խանըմ Օձ-Մայիլին պաչեց, եմակները սարքեց։

Նստան ուտել խմելու հետ, ասեց.— Պստիկ խանո՛ւմ, էս ի՞նչ թոփերու կռկռոց ա գալի։

Ասեց.— Թաքավորի ախչիկը ըստի նստած ա, ասեմ՝ լաց կըլլի. Ասլան Թաքավորն Արզման[1] Թաքավորի հետ կռիվ բաց արեց, բիրատի քաղաքները առավ. փեսեք յարալու վեր են ընկե. աստված ա մնացել՝ յա մեռնեն, յա ապրեն. հըմի էլ քաղաքի շորս բոլորը կտրել ա, իրեք օր ա թոփ ա քցըմ, քիչ ա մնըմ էս քաղաքն էլ առնի, որ առավ, Թաքավորությունը կոչնչանա։

Պստիկ խանումը ու Օձ-Մայիլը նիլան ձիանք, գնացին մտան էն ղոշունի մեջ, ընենց ջարդեցին, որ խաբար տանող էլ չէլավ, իրանց երկրից հանեցին. տարան, Արզման Թաքավորի քաղաքը մտան. Թաքավորին բռնեցին, թուրը դրեցին շլնքին. խոսք տվեց՝ տարին քառասուն միլիոն փող տա։ Օձ-Մայիլը գնաց Ասլան Թաքավորի պալատը։ Տեհան Թաքավորը, քիթ բերնի վրա լաց ա ըլըմ։

— Աչքդ լի՛ս,— ասեց։

Ասլան Թաքավոր վե կացավ, տղի ճակատը պաչեց, Օձը գնաց, փեշերը լզեց, էլավ մորե մեկ։ Հարսանիքը դրեց...

---

[1] Հավանաբար այստեղ վրիպում կա. Արզման և Ասլան անունների տեղերը շփոթված է. պետք է հակառակը լինի (Մ. Կ.)։

www.naregatsi.org

3. ՕՁԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՆԿԱՆԻՑ ՇԱՏ ԷԼԱՎ

Մի կնիկ շատ չար էր, ընդրա մարդը ինչ անըմ էր, վրեն չէր կարըմ. ընդրա ձեռիցը դատ էր անըմ։

Մեկ օր ջվալ վեր կալավ, կնկան ասեց.

— Էթանք թիթեն թուփ անելու։ (Որ տանի, շոլումը կորցնի)[1]։

Գնաց, շոլումը մի հատ ֆոր կար։

Կնկան ասեց.— Արի՛, կախ տամ, ջուր հանա, խմենք։

Կախ տվեց ֆորն ու մի հատ քար վեր կալավ, քցեց բերնին. գնաց պտըտվեց, մի հատ օձ բռնեց, բերեց, քցեց էդ ֆորը, որ էդ օձը կնկան տա սպանի։

Գնաց, մի հատ էլ դել բերեց, քցեց ֆորը։

Գնաց մի էլ առջ բռնեց, բերեց, քցեց ֆորը։

Կնիկը ասեց.— Ղրանք քցըմ ես, ինչ. դու ո՞ւր պտի պրծնես իմ ձեռիցը. յավաշ, ըսդիան դուռ գամ, քու հախիցը կգամ։

Ասեց.— Էդ ջանավարները քեզ սաղ չեն թողնի, որ դուռ գաս։

Մարդը թողեց, էկավ տուն. մի շաբաթ մնաց, ասեց. «Հալա էթամ, տեսնամ ի՞նչ էլավ»։

Գնաց, քարը շուռ տվեց, ջանավարները ձեն տվեցին.

---

[1] Փակագծի բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

— Աստուծո սիրուն, ա՛յ մարդ, դատ-պեղատ ըսդրա ձեռիցը մեզ ազատա, էս անզգամ կնկա ձեռիցը, քու լավությունի տակիցը դուա կգանք։

Պարանը քցեց, մին-մին հանեց, բրախ տվեց։

Կնիկն էլ ասեց.— Ընձ էլ հանա, թե չէ չես պրծնի իմ ձեռիցը։

Ասեց.— Խելոքացել ե՞ս, որ հանեմ։

Ասեց.— Էդ քու բանը չի, ինձ հանա՛, ասըմ եմ։

Պարանը քցեց, կնկան էլ հանեց։

Կնիկը դուա էլավ. ֆորի ղրաղը մի լավ հեղդեց իրա մարդին, ասեց.

— Ցողեմ գլուխդ, հըմի իմ տունը-տեղը ի՛նչ էլավ։

Վե կացան, գնացին տունը։

Իրիկունը գելը դուռը ծեծեց։

Գնաց դուռը բացեց, տեհավ գելն ա. հինգ հատ ոխշար բերեց, ասեց.

— Դե՛, դու որ էն լավությունը արիր ընձի, բրախ տվիր, բերեցի քեզ էս ոխշարները։

Կնիկն ասեց.— Ոխշարը որդիա՞ն ա։

Ասեց.— Էն քու կշտիդ գելը բերեց։

Ասեց կնիկը.— Կարա՞ չբերի, էն իմ զարպն էր, բերեց։

Էն էքսի օրն էլ դուռը ծեծեցին. առջն էկավ, մի դավաբեռ ճոթ բերեց։

— Էդ ո՞վ բերեց,— հարցրեց կնիկը։

Ասեց.— Առջը բերեց։

Կնիկն ասեց.— Է՞յ գիտի զարպ, առջն էլ բերեց իմ ջարդիցը. ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— գելն ու առջը որ ընձանից վախում են, դու որտի կմնաս։

— Կնի՛կ,— ասեց մարդը,— դարտ մի անի, դավեն ու ոխշարը արեցինք ղավուրմա, ճոթն էլ քեզ բոլ ա, ի՛նչ կուզես արա՛։

Մեկ էլ տեհան, դալալը ձեն ա տալի քուչեքը.— Մի հատ բեռ թաքավորի դավով կորել ա. ո՛վ որ գթավ, բերեց, պարդն կտանք, որ չբերեցին, ո՛ւմ տանը գթանք էն մարդը կորստական ա։

Կնիկը լսեց, էկավ տուն, ասեց.

— Էդ դավեն թաքավորական ա։

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, սուա կաց. աստուծո խաթր, էդ բանը վերջանա, էթա։

www.naregatsi.org

Կնիկը ասեց.— Խի՞ սուա պտի կենամ, կէթամ, կասեմ. թաքավորն ընձի պարդև պտի՛ տա, քեղանից էլ կպրծնեմ, անջախ տեղն էկավ։

Մարդը ինչդար մուննաթ արեց, չլսեց, վեր կացավ, գնաց. գնաց թաքավորին ասեց.

— Քու դավեն իմ մարդն ա բերե, դավեն մորթե, ղավուրմա ենք արե, ճորթն էլ կտրատեր ենք, բիրատի յորղան, դոշակ մինթանա, բան ենք արե, իմ մարդը չէր թողնում, ես զորով փախե էկել եմ. ասեցի. «Թաքավորական մալ ա, տար տուր», ականջ չարեց։

Թաքավորը էրկու մարդ ճանփեց. կնիկը տարավ, նշանց տվեց։

Էդ մարդին տարան քցեցին դութսախխանեն։

Թաքավորը վճռեց, առավոտը էդ մարդը հեղդեն։

Էդ օձը իմացավ, էկավ մտավ պալատը։ Մի վեց ամսական թոռ ուներ թաքավորին, փաթըթվավ էն էրեխու շլնքին ու պառկավ։ Հարսը բիրտան տեհավ օձը էրեխու շլնքին, ճվաց ու փախավ։

Մարդն ասեց.— Էդ խի՞ ճվացիր։

Ասեց.— Օձը փաթըթվել ա էրեխու շլինքը։

Թաքավորի տղեն ասեց.— Ձեռ չտաք, թաքավորին իմացնենք։

Գնացին թաքավորին իմացրին։ Թաքավորը վե կացավ, էկավ. թամաշա արեց, որ օձը փաթըթվել ա էրեխու վիզը, գլուխը դրել ա էրեխու բերնի վրեն։ Թաքավորը ասեց.

— Ըդրան իլաճ չըլլի, մի հնարով թե հետ ըլլի։

Ըստի, ընտի որ ասեցին, էդ դութսախխանի մարդը ասեց. «Ըհը, էն իմ օձն ա, իմ հավարին էկել ա»։

Ասեց.— Գնացեք թաքավորին ասեք, ընձի աղատի, էն օձը հետ տանեմ, որ էրեխեն սկի չիմանա։

Թաքավորն էդ մարդը կանչեց. գնաց, թաքավորի աղաքը կաղնեց, գլուխ տվեց։

Թաքավորը ասեց.— Կարա՞ս օձը հետ անես. քեզ կրախշիմ ինչ որ մեղք ես արե։

Ասեց.— Ինձ որ բախշեցիր, իմ օձին էլ ձեռ չտաք, չսպանեք։

Ասեց.— Գնա՛, հետ արա, իրավունք ունես։

Գնաց մոտը. փեշը բռնեց, ասեց.— Օձ ջան, արի՛, քու էհթիպարը իմ կնկանից շատ էր։

5—2573

www.naregatsi.org

Օձը հետ էլավ, կիտվավ ըտրա գոգը։

Փեշը կոլոնեց ու գնաց Թաքավորի մոտը, ասեց.— Թաքավո՛ր ապրած, հըրես, հետ արեցի. օձն էլ գոգս ա։

Թաքավորն ասեց.— Ինչ արեցիր, որ հետ արեցիր։

Ասեց.— Բան չարեցի, ասեցի. «Օձ ջան, քու էհթիպարը իմ կնկանից շատ էլավ», հետ էլավ օձը։

Ասեց.— Էդ առարկեն ինձ պտի ասես։

Ասեց.— Յավաշ, օձը տանեմ, շոլը բրախ տամ, գամ, ասեմ։

Տարավ, օձը բրախ տվեց, էկավ, Թաքավորի կշտին նստեց, ասեց, ինչ որ էլել էր։

— Հըմի, ասեց, ինչ որ բալբալեք քաշըմ եմ, էդ կնկանից ա, բերեց դարաղաճի տակ, ընձի պտի հեղդեր, էդ օձն ընձի ազատեց, ընդուր ասեցի. «Քու էհթիպարը իմ կնկանից շատ ա»։

Թաքավորը ասեց.— Էն կնկան բերեք, հեղդեք, էս մարդին մի լավ կնիկ ուզեք։

Էդ կնիկ հեղդեցին, էս մարդն էլ ազատվավ մոտիցը։

Էդ բալբալեքը էկավ, կնկան գլխին կաղնեց։

www.naregatsi.org

4. ԱԲՐԱՀԱՄ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

Կար ժամանակով մի քաղաքում մի սովտաքյար մարդ, էդ մարդն աշխարքում ինչդար քաղաք կար՝ կէթար սովտաքարություն անելու։ Ամեն քաղաքների մեջ ճանաչներ ուներ։

Էդ մարդին ուներ մեկ տղա. տղեն ասեց.

— Էս ղտար որ էթում ես առուտուրի, հմի էլ ինձ ղրկա, ես էթամ։

Ասեց.— Դու ջահել ես, չես կարա էթա, քու էթալու ժամանակ որ ըլնի, ես կղրկեմ։

Ասեց.— Անկարելի ա, պտի էթամ։

Ասեց.— Որ պտի էթաս, որտեղ իմ անունը տաս, քեզ կընդունեն։

Էդ մարդը տղի հըմար քառասուն ղաթիր առավ, քառասուն բեռն էլ բռնեց, վեց հատ նոքար տվեց, բեռները բարձեց ու ղրկեց դըպա Ստամբուլ։

Գնացին հասան ծովի ղրաղը. քառասուն բեռն էլ, ղաթիրներն էլ դրեցին գյամու մեջ, իրանք էլ նստան իրանց բեռների մոտը։

Էրկու օր ծովի մեջ ճանապար գնացին. էրկու օրեն ետը ֆըրթունեն վեր կացավ. իրեք օր տակ ու վերև արեց ծովը, գյամին տարավ տվեց մի քարի, հազար կտոր արեց։

www.naregatsi.org

Ապրանքը, ղաթիրները, մարդիկը բիրետի լցվան ծովը, հեղդըվան։

Ընդրա նոքարների մեկը մի տախտակի վրա մնաց. լափինը տալով բերեց էս դին հանեց։

Վեր կացավ, էկավ տուն։

Աղեն ասեց.— Խի՞ էկար։

Ասեց.— Աղա՛, էլ ինչ ասեմ, ֆողն էկավ մեր գլխին։

Ասեց.— Որդի՛, ասա տեսնանք ի՞նչ ա էլե։

— Աղա՛, ըսդիան վեր կացանք, գնացինք ծովի ղրաղը, նըստանք գյամին, գնացինք էրկու օր ծովին մեջը. էրկու օրեն ետո ֆրթունեն վեր կացավ, իրեք օր ծովը տակ ու վիրև արեց, տվեց քարափին. հազար կտոր արեց, քու ղաթիրներն էլ հեղդվան, տղեդ էլ հեղդվավ, մեր նոքարներն էլ հեղդվան, մեր հետ շատերն էլ կային՝ ընդոնք էլ հեղդվան. ես մնացի մի տախտակի վրա, ծովի լափին տվեց, հանեց էս էրեսը. ես էլ վեր կացա էկա, քե խաբար բերեցի։ Էդ բանը որ էլավ, սաղ քաղաքի մարդիկը լսեցին, մահալի մարդիկներն էլ լսեցին. էդ մարդը երևելի մարդ էր, քոմմա էկան ըդրան գլուխ սաղություն, իրեք ամիս ըդրա էթող-գալողը չկտրվավ։

Խաբարը տանք ըդրա տղիցը. ըդրա տղեն էլ տախտակի վրա մնացել ա. լափինը տվեց, տարավ հանեց Սպահան. դուս էկավ շորը, գնաց Սպահանում քաղաքի մեջը։ Ջահել տղա, սոված մնացել ա ծովի էրեսը, որը սովածությունը, որը ահը։ Ասեց. «Ի՞նչ անեմ, փող չկա ձեռիս»։

Գնաց մի փռնչու դուքանի առաջ կանգնեց. տեսավ էդ փռնչին հաց ա ծախում. առավոտվանից մինչև ճաշ կաղնեց, էդ փռնչին հաց ծախելուց պրծավ։

Ասեց.— Այ տղա՛, խի ես կաղնե ըդի, ո՛չ հաց ես ուզում, ո՛չ բան ես ուզում։

Ասեց.— Ես սոված եմ, փող էլ չունեմ հաց առնելու։

Ասեց.— Ըստե նոքարություն կանե՞ս։

Ասեց.— Խի՛ չեմ անի, հաց տվեք՝ կանեմ։

Փռնչին իրա նոքարներին ձեն տվեց՝ էկան, ասեց.

— Էս տղին տարեք, հաց տվեք թո ուտի, մեկ բանի կդնեք։

Տարան հաց տվեցին, կերավ։

Ասեցին.— Հաց կերավ, պրծավ։

Ասեց.— Մի բանի դրեք, թո աշխատի։

www.naregatsi.org

Ասեցին.— Խմոր ա՝ չի կարա անի, ջուր ա՝ չի կարա բերի, ցախ ա՝ չի կարա ջարդի, քյուլ ա՝ չի կարա թափի։

Էկան, ասեցին.— Աղա՛, ինչ բանի դրեցինք էս տղին, չի կարում անի։

Ասեց.— Կանչեք, գա ըստեւ։— Էկավ։

Ասեց.— Իսկի դու նոքարություն չե՞ս արել։

Ասեց.— Չէ՛, ես զատ չեմ արե, մեծ սովտաքյարի տղա եմ. մեր դռանը կար տաս-քսան նոքար. ես աղավարի ման կգայի։— Իրա գլխի էկածը էդ մարդին պատմեց։

Ասեց.— Ըստեւ մի սովտաքյար կա, եփոր էթա քեզ հետը կըտանի։

Վե կալավ իրիկունը էդ մարդին, տարավ ըդրա տունը։ Դուռը ծեծեց, նոքարների մեկը դուռ էկավ։

Ասեց.— Աղեն տա՞նն ա։

Ասեց.— Տանն ա։

Ասեց.— Ֆլան փոնչին պըտի գա, քեզ տեսնի։

Ասեց.— Թո գա՛։

Փոնչին տղին վե կալավ, գնաց նեքսև, բարև տվեց կաղնեց, ասեց.

— Աղա՛, էս տղեն ղարիբ տղա ա, էկել ա մեր փուռը ոչինչ բան չի կարում անի։

Սովտաքյարը հարցրեց.— Դու ի՞նչ տղա ես, որդիա՞ն ես։

Ասեց.— Աղա՛, ես Էրեվանցի եմ։

— Ո՛ր Էրեվանցի ես, ո՞ւմ տղեն ես։

— Աբրահամ սովտաքյարի տղեն եմ ես։

— Որ դու Աբրահամ սովտաքյարի տղեն ես, Աբրահամ սովտաքյարն իմ ախպերն ա, ի՞նչ պատճառով ես էկե ըստերանք ընկե։

Ասեց.— Աղա՛, ես իմ հորիցը խնդրվեցի, ինձի ղրկեց առուտուրի. առաջ չէր ուզում ղրկել, ես զոռեցի իրան, անպատճառ,— ասեցի,— պըտի ղրկես. էլ իմ խաթրին չի դիպավ. գնաց քառասուն ղաթիր առավ, բեռները բարձեց ապրանք, վեց հատ նոքար տվեց ինձ, ասեց. «Տարեք Ստամբոլ, ծախե՛ք»։ Տարանք ծովի ղրաղը, լցրեցինք գյամու մեջը ղաթիրներն էլ, ապրանքն էլ. ես էլ նստեցի. վեց հատ նոքարն էլ իմ կշտին։ Էրկու օր ծովու մեջը ճանապար գնացինք. էրկու օրեն ետը ֆրթունեն վե կացավ, ծովը տակ ու վիրև արեց, տարավ տվեց մեկ քարի, հազար կտոր արեց. ապ-

www.naregatsi.org

բանքն էլ, ղաթիրներն էլ, նոքարներն էլ, մեր հետ շատերն էլ կային, բիրատի ծովը լցվան, հեղդվան։ Ես մնացի մի հատ տախտակի վրա. ծովը լափին տվեց, բերեց, էս էրեսը հանեց. աղա ջա՛ն, ես էտ պատճառով ընկել եմ էստեղ։

Ասեց.— Աբրահամ սովտաքյարն որ իմ ախպերն ա, դու էլ իմ ախպոր տղեն ես, ըստի իմ տղի հետ ման կգաս, որ օրը քու սիրտը կուզի, էն օրը քեզ կտանեմ քու երկիրը։

Էրկու ամիս տղի հետ ման էկավ, բիրտան մտածեց. «էս քանի ամիս ա էկել եմ ըստեղ, ոչ թուղթ տանող էլավ, ոչ խաբար տանող, չի իմանում, թե սաղ ենք, թե մեռած, էս իրիկուն աղին պըտի խնդրվիմ, որ ղրկա իմ երկիրը»։

Իրիկունն էկավ, նոթերը կիտեց ու կաղնեց։

Աղեն ասեց.— Ա՛ տղա, խի՞ ես նոթերդ կիտե. քեզ հո՞ բան ասող չի էլե։

Ասեց.— Չէ՛, ընձի ո՛վ բան պըտի ասի, փա՛ռք աստծու, հացդ բոլ, եմակդ բոլ, ուտում-խմում ենք, ման ենք գալի, ես մտածում եմ ըստե մնալը ընձի օգուտ չի, իմ հորն ու մորը աչքը ճանապարի ա, իմ էթալն են թամաշա անում. ես քեզանից շնորհակալ եմ, ինձ ճանապար քցա՛, էթամ։

Իրա տղին կանչեց, ասեց.— Օհանե՛ս, արի ըստե։

Էկավ կաղնեց։

Ասեց.— Առավոտը կէթաս բազարը, վաթսուն հատ ղաթիր կառնես։

Առավոտը վեր կացավ տղեն, գնաց բազարը, վաթսուն հատ ղաթիր առավ։ Վաթսուն ղաթիրի բեռ շինեց, ապրանք բարձեց տաս հատ նոքար տվեց, ասեց.

— Տանես ինձանից շատ. բարև կանես Աբրահամ սովտաքյարին, կասես. «էս ապրանքը քե փեշքեշ արեց Մինաս սովտաքյարը»։

Տղեն ընկավ ճանապարն ու գնաց։

Մինաս սովտաքյարը էդ միջոցը հիվանդացավ, ընկավ մեռավ. տղեն մնաց մինակ։ Գնաց դուքանումը նստեց առուտուր անելու։ Էրկու ջհուտ միտք արեցին, ասեցին. «Մինաս սովտաքյարը հազր մեռել ա, մենք ըսդրա տղի գլուխը օյին հանենք, ըդրա հերը մեր գլուխը շատ ա օյին հանե»։ Գնացին ըդրա դուքանի աղաքը կաղնեցին, հանեցին մի հատ հարբրանոց, ասեցին.— Էս խուրտա, մեզ ոսկի փող տուր։

www.naregatsi.org

Ասեց.— Ըստե հարիր մանեթի ոսկի չկա։

Ասեցին.— Մենք ըստե կաղնենք, դու գնա, տանիցը բեր։

Վե կացավ, գնաց դպա տուն, որ փողը բերի։ Էդ ջհուտը մտավ, դուքանի դախլումը նստեց։ Էն մեկել ջհուտը տաս դուքանտարի աջ կողմիցը կանչեց, տասն էլ ձախ կողմիցը կանչեց։ Էկան քսան հոգի ըտե կաղնեցին, ասեցին.

— Ի՞նչ ես ասում։

Հանեց ամենքին հարուր մանեթ փող տվեց, ասեց.

— Ո՛ր Մինաս սովտաքյարի տղեն՝ Օհանեսը գա, ասեք դուքանը ջհրտինն ա։

Ըդոնք ամենը գնացին իրանց դուքաններրը նստան։ Օհանեսը էկավ, ոսկիքը բերեց տանիցը, տվեց ջհրտներին, ասեց.

— Առեք ձեր հարուր մանեթի ոսկին։

Ոսկին առան, ըդըրան դուս արին դուքանիցը։ Դուքանի աժոդությունը կըլլեր էրկու հարուր հազար մանեթի ապրանք։

Էդ Օհանես ասեց.— Դու դուս էկեք, էդ իմ դուքանն ա։

Վե կացավ ջհուտը ըդրան ծեծեց, ասեց.

— Իմ դուքանը իմ ձեռիցը խլո՞ւմ ես։

Էդ Օհանեսը գնաց դանգատ։

Ասեց.— Մի ջհուտ իմ դուքանս խլում ա։

Դատավորը մարդ ղրկեց, ասեց.— Գնացե՛ք, էն ջհուտին կանչեք գա։

Գնացին, ջհուտին բերեցին։

Դատավորը հարցրեց.— Ի՞նչ պատճառով ես ըսդրա դուքանը խլում։

Ասեց.— Ես զորով չեմ խլում, իմ դուքանն ա։

— Մո՞նց իմանանք, որ քու դուքանն ա,— ասեց դատավորը։

Ասեց.— Տաս մարդ ձախ կողմից կանչա, տասը մարդ աջ կողմից, մոնց որ ասեն, մենք ղապուլ ենք։

Օհանեսին էլ ասեցին.— Դուն էլ ղապո՞ւլ ես։

Ասեց.— Ես էլ եմ ղապուլ։

Յասավուլը գնաց ու կանչեց։ Էկան կաղնեցին դատավորի աղաքը։

Դատավորը ասեց.— Գիտա՞ք, ձեզ ընչի համար եմ կանչել։

Ասին՝ չենք գիտում։

— Ես ըդրա համար եմ կանչե, որ դուզ խոսաք. էս դուքանը ջհրտինն ա՞, թե՞ էս հայինն ա։

www.naregatsi.org

Ասեցին.— Հայինը չի՛, ջհրտինն ա։

Դատավորը մոտացավ մե էրկու չափալախ տվեց բերնին, ասեց.

— Կորի՛, դուքանը ջհրտինն ա։

Օհանես ցնդեց, ընկավ չոլերը։ Էդ ջհուտը էկավ դուքանումը նստավ։

Ջհուտները էկան, մասլահաթ արեցին, ասին իրարու.

— Դուքանը առանք, էթանք կնիկն էլ, տունն էլ առնենք։ Էկան, դուռը ծեծեցին, կնիկը դուռ էկավ։

Կնկանը ասեցին.— Էս օր բան լսե՞լ ես։

Ասեց.— Չէ՛, ի՞նչ բան կա։

— Օհանեսը խումար հաղ արեց, դուքանը տարվեց. հմի էլ հաղ ա անում, տներն էլ տարվել ա, մնացել ես դու, քեզ էլ տարվի, ո՞ւմ ձեռը պտի ընկնես։

Կնիկը ասեց.— Բա ի՞նչ անենք ըդրա համար։

Ասեց.— Արի՛, էս ընկորս առ, թո տանը գա նստի, Օհանեսը որ կգա, ասա. «Քու կնիկը չեմ. ըսդրա կնիկն եմ»։

Կնիկը ջհուտին առավ ու մտավ ներսև։

Ջհուտը ընկորն ասեց.— Դու քու մուրազին հասար, ես էլ իմ. ահա, ես էթում եմ։ Վե կացավ, գնաց։

Օհանեսը էկավ, մտավ տուն, տեսավ մի ջհուտ իրա կնկա կշտին նստած ա։

Ասեց.— Քոփողլի ջհուտ, էկել եք մեկդ իմ դուքանը առել եք, մեկդ էլ իմ տունը առնեք,— հասավ ու տվեց ըդրան։

Ջհուտն էլ վեր կացավ, ըդրան տվեց։

Իրար յախա բռնեցին, դրպա դատավորի մոտը գնացին։

Ջհուտը ասեց.— Էրեկ ասում էր դուքանը իմն ա, էս օր էլ ասում ա տունը իմն ա։

Դատավորն ասեց.— Ո՞ւմից իմանանք տունը քունն ա, թե ընդրանն ա։

Օհանեսը ասեց.— Իմ կնկանից իմացի։

Ջհուտին ասեց.— Դուն էլ ղապո՞ւլ ես։

Ասեց.— Ղապուլ եմ։

Ղրկեցին, կնկան կանչեցին.

Կնիկն էկավ, կաղնեց դատավորի աղաքը. դատավորը հարցրեց.— Էս հայն ա քո՞ւ մարդը, թե ջհուտն ա։

www.naregatsi.org

Ասեց.— Էդ հայի էրեսը ըսկի չեմ տեսե, իմ մարդը ջհուտն ա։

Դատավորը էրկու շափալաղը էդ հայի բերնին տվեց, ասեց.— Մեկ էլ էդպես բան քու բերնից լսեմ, չեմ թողա քաղաքի մեջ ման գաս։

Իրա տանիցը դուս արեց։ Օհանեսի իլլաճը կտրվավ. գնաց էլավ համամի քյուլհանչի։

Խաբարը տանք Աբրահամ սովտաքյարի տղիցը։

Էկավ, հասավ իրանց քաղաքի ղրաղը, քաղաքիցը մի մարդ տեսավ, հետը բարովեց, ասեց էն մարդը.— Քու սալըղն ուրիշ էկավ, հըմի փառք աստծու ողջ-առողջ ես։

Էդ մարդը էկավ դպա Աբրահամ սովտաքյարին աչքալուսեք.

— Աչքդ լի՛ս, տղեդ էկել ա, հրեն՝ քաղաքի ղրաղը վեր ա դրե։

Վեր կացան մարդ ու կնիկ գնացին աղաքը։

Գնացին հասան տղին, փաթըթվան, սֆտա լաց էլան, հետո ուրախացան, վե կալան բերին տուն։

Սաղ քաղաքը լսեց, որ էկել ա տղեն։

Էկան ամենն էլ աչքալիսեքավոր. գեղերն էլ էկան, մահալն էլ էկավ. իրեք ամիս աչքալիսեքավորը անճախ կտրվավ։

Նո՛ր տղին կանչեց աչաքը, նոքարին էլ կանչեց, ասեց.

— Պատմե՛ք, տեսամ ի՞նչ ա էլե։

Տղեն ասեց.— Նոքարը ինչ որ պատմել ա՝ դրուստ ա։

Հերն ասեց.— Նոքարինը լսել եմ, քունը պատմե հալա։

Ասեց.— Գյամու կտորը տարավ Սպահան հանեց. դուս էկա, գնացի մի փռնչու մոտ, ձեռս փող չկար, որ հաց առնեի, ուտեի. փռնչին ինձ հարցրեց. «Խի ես կաղնե», ասեցի. «Փող չկա հաց առնեմ, ուտեմ, սոված եմ». հաց տվեց, կերա. իմ գլխի էկածը ըդրան պատմեցի, վեր կացավ ինձ տարավ Մինաս սովտաքյարի մոտը. ըստեղ էլ իմ գլխին էկածը պատմեցի, ասեցի. «Ես Աբրահամ սովտաքյարի տղեն եմ», ճանաչեց. գնաց վաթսուն ղաթիր առավ, բեռներն էլ ապրանք բարձեց, տաս նոքար տվեց, ինձ ճանապար քցեց։

Աբրահամ սովտաքյարն ասեց.— Շատ շնորհակալ եմ ըդուց, փոխարենը ետ պըտի տանք։

Տղին ասեց.— Գնա՛, ութսուն հատ ղաթիր առ։

Գնաց ութսուն հատ առավ, ութսունն էլ ապրանք բարձեց. մի տաս նոքար վեր կալավ, իրա տղի հետ ընկան ճանապար, գնացին. դուս էկան Սպահան, հարցրեցին, ասեցին.— Մինաս սովտաքյարի տունը ո՞րն ա։

www.naregatsi.org

Ասեցին.— Մինաս սովտաքյարը մեռել ա. տղեն դուքանը ծախել ա մի մեծ ջհրտի, տներն ու կնիկն էլ ծախել ա մի ջհրտի, ինքն էլ էլել ա համամի քյուլհանչի։

Աբրահամ սովտաքյարն ասեց.— Հե՜յ վա՜խ, ֆալաք. ըդրա գլուխն ի՞նչ բան ա էկե։

Իրա տղին հարցրեց, ասեց.— Կճանաչե՞ս դու Օհանեսին։

Ասեց.— Կճանաչեմ։

Ասեց.— Էթանք համամը։

Գնացին, տեսան՝ համամիցը դուս էկավ քյուլը շլակին։

Տղին ասեց.— Գնա՛, քթոցը վե քցե։

Գնաց մեջքիցը վեր քցեց։

Օհանես ասեց.— Հո՛ գիժ չե՞ս, քթոցը վեր ես քցում։

Աբրահամ սովտաքյարը կանչեց, ասեց.— Արի՛, արի՛։ Էկավ։

Ասեց.— Դո՞ւ ես Մինաս սովտաքյարի տղեն։

Ասեց.— Հա՛, ես եմ։

Ասեց.— Էդ ինչ ա էլե քու գլուխը։

Իրա գլխի էկածը պատմեց։

Վեր կալավ, տարավ համամը. ըդրան մի լավ լեղացրեց, մի ձեռք թամուզ շոր կտրել տվեց ու հագցրեց։ Գնաց թագավորիցը մի տեղ առավ, տակը շինեց մաղազա, վերևը շինեց դուքաններ, դուքանների վերևը շինեց տներ, ապրանքը բերեց ու լցրեց, ասեց.

— Որդի՛, էս քու մաղազեն, էս քու դուքանները, ըս էլ քու տները. քեզ պըտի պսակեմ, նոր էթամ։

Ասեց.— Անկարելի ա, էն կնկանը մարիֆաթը տեսա, չեմ պսակվի։

Ասեց.— Մո՞նց չես պսակվի, մարդը առանց կնիկ չըլի. էն հարամ կաթ էր ծծե, որ էնենց բան արեց, ես քեզ հալալ կաթնակեր աղջիկ կուզեմ, որ քեզ ամենայն փորձանքից ազատի։

Օհանեսն ասեց.— Ես իմ քաղաքից աղջիկ չեմ ուզի։

Ասեց.— Ես կէթամ Շեխ արապի էլի մոտը, էնի իմ ախպերն ա, ընդուց մի հալալ կաթնակեր աղջիկ կուզեմ։

Վե կալավ տղին ու գնաց Շեխ արապի էլի մեջը. գնաց Շեխ արապին գտավ, բարև տվեց ու կաղնեց։

Շեխ արապն ասեց.— Հա՜, էս քանի տարի ա չես էրևում, ընչի՞ համար ես էկե։

www.naregatsi.org

Ասեց.— Էկել եմ քու էլիցը մի հալալ կաթնակեր ախչիկ ուզեմ իմ ախպոր տղին։

Ասեց.— Ինձ վաթսուն հազար էլ ունեմ. բա մի հալալ կաթնակեր չըլլի՞, որ տամ. հալա իրեք ախչիկներ մեր տանը կա. կանչենք իրեքի մորն էլ։

Մենծ ախպոր կնկան կանչեց Շեխ արապը, ասեց.— Հարսի՛, քու ախչիկը հասել ա, էդ ախչիկը հալա՞լ կաթ ա ծծե, թե հարամ ա ծծե։

Ասեց.— Շեխ արա՛պ, քու գլուխը վկա, էդ ախչիկն որ փորս ընկավ, գնացի տեսա թաղա հաց են թխում. միտքս փոխվեց. մե հաց վեր կալա կերա, հարամ կաթ ա ծծե։

Ասեց.— Դե՛, կորի աչքիցս հեռացի դու։

Մեկել ախպոր կնկանը կանչեց, ասեց.— Արի՛, հարսի՛, քու ախչիկ հասել ա, մարդի պըտի տամ. հալա՞լ կաթ ա ծծե, թե հարամ։

Ասեց.— Շեխ արա՛պ, քու գլուխը վկա, որ ընկավ էդ ախչիկը փորս, էկա, մի բաղի կողքով անց էի կենում, աչքս ընկավ հավուղին, միտքս փոխվեց, էրկու ճիթ քաղեցի կերա։

Ասեց.— Կորի՛, էդ էլ հարամ կաթ ա ծծե։

Կանչեց իրա կնկան.— Կնի՛կ,— ասեց,— քու ախչիկ հասել ա, պըտի տամ մարդի, հալա՞լ կաթ ա ծծե, չէ հարամ։

Ասեց.— Շեխ արա՛պ, մոնց որ ընկել ա փորս, ընենց էլ կաթ ա ծծե։

Ասեց.— Աբրահամ սովտաքյար, աչքդ լիս, իմ ախչիկ հալալ կաթ ա ծծե, տվի քու ախպոր տղին։

Բերեցին, նշան դրին, պսակեցին։ Շեխ արապը իրա մալը կես արեց, դրեց ախչկա հետ բաժինք։ Մի հատ այլուխ ուներ Շեխ արապին, որ աշխարքի հետ չէր փոխի, էդ այլուխն էլ տվեց ախչկան. էդ այլուխի մարիֆաթը էն էր, որ մարդը քցեր գլխին խումար հազար՝ կտաներ, դատավորի մոտ էթար՝ կտաներ, գողի մոտ էթար՝ չէին կարա մոտ գա։

Աբրահամ սովտաքյարը վեր կալավ, գնացին Օհանեսի տները։

Ասեց.— Օհանես ջա՛ն, քու հերը էն լավությունը արեց իմ տղին, ես էլ էս լավությունը արի քեզ. մնա՛ս բարի, ես էթում եմ։

Էկավ հասավ իրանց երկիրը։

Օհանեսը քնած էր կնկա ծոցին գշերը, էրազի միջին բիրտան վեր կացավ, ասեց.— Հե՛յ վա՛խ, ֆալաք։

www.naregatsi.org

Կնիկն ասեց.— Էդ ինչ ա՞խ քաշեցիր։

Ասեց.— Էրազիս տեսա, որ հերս սաղ էր, բեռները բերեց, թափեց դուքանի աղաքը. ապրանքը քաշըմի դուքանների մեջը. բիրտան վեր թռա, տեսա զատ չկա. ըդրա համար ախ քաշեցի,— ասեց կնկան,— ինձ թող, մի անգամ էթամ առուտուրի։

Ասեց.— Ո՞ւր էթաս, ամեն բան էլ ունենք, էթաս ի՞նչ անես։

Ասեց.— Շեխ արապի գլուխն որ կսիրես, պըտի թողաս։

Գնաց, իցցուն հատ դաթիր առավ, բեռները բարձեց, կնիկը այլուխը ջիբիցը հանեց, մարդին ասեց.— Էս Շեխ արապի այլուխն ա. կկապես գլուխդ, ամենայն փորձանքից ազատ կպահի. սաղ սալամաթ կէթաս ու կը դաս։

Կապեց գլուխն ու բեռները քշեց, գնաց Հնդստան դուռ էկավ, գնաց մի դուքան բռնեց, ապրանքը ածեց դուքանի մեջը, նստեց դուքանի աղաքը։ Մի ջհուտ էկավ, կշտին կաղնեց, ասեց.— Էս սովտաքյարը նոր ա էկե, խամ ա։

Բարև տվեց, ասեց.— Որդո՞ւց ես։

Ասեց.— Սպահանցի եմ։

Ասեց.— Ի՞նչ ես բերե։

Ասեց.— Ապրանք ա։

Ասեց.— Հըմի մութն ա, առավոտը կառնեմ, գիտամ բեզարած կըլլես, մի-մի ղայֆա բերեմ, խմե՛նք։

Մի-մի ղայֆա բերել տվեց, խմեցին։

Ջհուտն ասեց.— Գինի էլ խմո՞ւմ ես։

Ասեց.— Կխմեմ։

Կերան ու խմեցին. բերեցին, նարտի էլ հաղ արեցին. սկսեցին փողով, ինչդար հաղ արեցին ջհրտին տարավ, ջհուտն ասեց.— Աշխարքում ընձի մարդ չէր տարե, էդ մո՞նց ա տանըմ, ըդրան մե հիլլա կա։

Թամաշա արեց ըդրա ոտ ու գլխին, էրեսին, տեհավ գլխին մի այլուխ կապած ա, ջհուտն ասեց.— Ըդրա շնորքն էս այլըխի միջին ա։— Ասեց,— Խո դու կնիկ չես այլըխ կապես, այլըխը դի՛ր ցերդ, հաղ անենք։

Այլըխը պոկեց, դրեց ջեբը, սկսեցին հաղալը։

Ինչդար ապրանք ուներ, բիրատի տարավ ջհուտը. բիրատի քաշեց իրան մաղազեն։ Ըդրա ձեռին հացի փող էլ չմնաց։ Ջհուտն ասեց.— Էթամ տենամ, հըմի մեռել ա կծկըծու։

www.naregatsi.org

Էկավ, տեհավ, ման ա գալի, հաղ ա ասըմ, ջհուտն ասեց.— Էնտա՞ր ապրանքը տարա, հըմի հաղ ես ասըմ բա՞։

Այլըխը հանեց, ասեց.— Ըստրա տերը սաղ ըլի։

Ջհուտը գնաց փաշի մոտ գանգատ, ասեց.

— Փաշեն սա՛ղ ըլի, Սպահանու մի սովտաքյար էր էկե. գնացի տեսա, ըդրա հետ նարտի հաղ արեցի, ապրանքը բիրատի տարա. հըմի այլըխը ջեբից հանեց, ասեց. «Ըսդըրա տերը սաղ ըլի», կանչա, տե՛ս, այլըխը ոմն ա։

Փաշեն մարդ ղրկեց, էդ մարդին կանչեց. էկավ, փաշի մոտ կաղնեց։

Փաշեն ասեց.— Քու ջիրին այլըխ կա, հանա՛ տեսնամ։

Այլուխը հանեց։ Փաշեն ձեռիցն առավ։

Ասեց.— Էս այլըխատերը քու ի՞նչն ա։

Ասեց.— Իմ կնիկն ա։

Ասեց.— Արի՛, մի թուխտ գրա, որ քու կնիկը վեր կենա գա։

Թուխտը գրեց. «Կնի՛կ, իմ առուտուրը շատ լավ ա. առանց կնիկ չեմ կարում մնա. էդ էրկու մարդի հետ վեր կաց ու արի»։

Տվին էրկու մարդի, ղրկեցին Սպահան։ Էդ տղին քցեցին դութ-սախխանեն։

Ըդոնք հասան Սպահան, ըդրա տունը գթան, թուխթը տվին կնկան, կնիկը կարդաց, հրամայեց.— Էս էրկու մարդին բռնեք։— Էրկու մարդին էլ բռնեցին։

Իրիկունը էրկու մարդին կանչեց, աղաքը կաղնացրեց խոսացրեց, ասեց.— Արի՛, դրուատը ասեք, իմ մարդը ի՞նչ բանի ա էնտեղ։

Մեկն ասեց.— Լավ առուտուր ա անըմ։

Վեր կացավ մի էրկու շափալախ քաշեց, ասեց.

— Շան որդի՛, դու սուտ խոսացիր։

Էն մեկին կանչեց, ասեց.—Դու մո՞նց ես տեսե, շիտակն ասա՛։

Էն մեկ պատմեց.— Քու մարդ խումար հաղ արեց, ապրանքը բիրատի տարվեց. փաշեն կանչեց. մի այլուխ էր մնացե, առավ ձեռիցը, ասեց. «Էս այլըխատերը քու ի՞նչն ա»։ Ասեց. «Իմ կնիկն ա»։ Փաշեն քցեց դութսախ։ Թուխտ էլ տվեց։

Էդ ախչիկը իրա նոքարներին կանչեց. ասեց.

— Էս մեկին ինչ որ դուղը խոսաց, իմ կերակուրից կտաք, էս մեկին էլ օրը մի դան հաց կտաք։

www.naregatsi.org

Ախչիկը էլավ ձին նիլավ, գնաց Շեխ արապի տունը, ասեց.— Փեսեդ հաղ ա արե, ապրանքը բիրատի տարվել ա, այլուխը ձեռիցը խլել, փաշեն էլ ընձի ուզըմ ա։ Հըմի ինձ տուր քառասուն ախչիկ։

Քառասուն ախչիկ էլի միջիցը կանչեց, քառասուն ձեռք տղամարդի շոր կարել տվեց, քառասուն ձեռք ասպապ բերեց, քառասուն ձի բերեց։ Շորերը հագցրեց, ասպապները կապեցին, նիլան ձիանը, ասեց.

— Ախչկե՛րք, ինչ հրամայեմ՝ ընենց կանեք։

Ձիանը քշեցին դըպա Հնդստան։ Որ քաղաքին մոտենում են՝ խաբար են ղրկում.— Թաքավորի տղեն գալիս ա։

Հասան Հնդստան. էրկու ձիավոր ղրկեց փաշին, ասին.— Պատրաստությունդ տե՛ս, թաքավորի տղեն էկավ։

Փաշեն պատրաստությունը տեհավ. թաքավորի տղի աղաքը էկավ, գլուխ տվեց ու կաղնեց։

Ասեց.— Հնդստանում փաշեն դո՞ւ ես։

Ասեց.— Ես եմ։

Ասեց.— Ես քու քաղաքը տեհա, շատ անկարգ էր։

Փաշեն տարավ իրա տունը, վեր բերեց, ըդոնց հաց քաշիլ տվեց, էկավ գլուխ տվեց օխտը անգամ, վրա ութին կաղնեց։

Ասեց.— Փաշա՛, քու ռոճիկը քիչ ա։

Ասեց.— Թաքավորությունը ողջ կենա, խի՛ ա քիչ։

— Որ քիչ չէ,— ասեց,— դու թաքավորական մալը խի՞ ես բերում, քու քաղաքում պահում։

Ասեց.— Թաքավորական ապրանք իսկի չեմ պահել ես։

Ասեց.— Վեր կենանք, ման գանք։

Վեր կացան, փաշին քցեց աղաքը, քառասուն ձիավոր քամակը, ասեց.— Փաշա՛, որը մեծ մաղազա ա, ընձի ընտի տար։

Մե էրկու մաղազա ման ածեց, զատ չդտավ. գնաց մտավ էդ ջհուտի մաղազեն։

Տեհավ, ճանաչեց ապրանքը, ասեց.

— Քաշե՛ք դուս։

Ջհուտի ապրանքն էլ հետը քաշեցին դուս։

— Փաշա՛,— ասեց,— ըսդրա գողն էլ գտի։

— Գողը բռնել եմ,— ասեց։

Գնացին բերեցին, կաղնեցրին. ասեց.

— Քոփողլի՛, Մինաս Սովտաքյարի ապրանքը կերար՝ չկըշ-

www.naregatsi.org

տացար. Թաքավորական մալն էլ բերիր ըստի։— Ասեց.— Փաշա, ըսդուց մի այլուխ էլ ես առ, տո՛ւր։

— Հըրե՛ս,— ասեց ու տվեց։

Ջհրտի ու տղի ապրանքը բարձին, էղավ հինգ հարուր բեռ. հինգ հարուր բեռ էլ փաշից առավ, էլավ հազար բեռ, բարձեց, ընկավ ճանապար, տղին էլ առավ հետը. փաշին ասեց.

— Թուխտ կղրկեմ, ընենց ժաժ կգաս։

Էկավ Սպահան դուս էկավ. ապրանքը քաշեց մաղազան։ Էդ Օհանեսն ասեց.

— Իմ կնիկ խսկի դուս չի գալի։

Էդ Թաքավորի տղեն Օհանեսին կանչեց վիրև, ասեց.— Ըստե նստի՛։

Թաքավորի տղեն մտավ էն մեկել օթախը, Թաքավորությունի շորերը հանեց, կնկա շորերը հաքավ, գլուխը շինեց, դուս էկավ Օհանեսի կուշտը։ Տեսավ, ահա, իրա կնիկն ա ասեց.

— Բա էսքամ ապրանք քաշին նեքսև, դու խի՞ չերևացիր։

Ասեց.— Մի ամիս ճանապար ենք գալի, դու ինձ չի ճանաչեցիր։

Մարդն ասեց.— Հալալ ըլի քու կերած կաթը։

Ասեց.— Էն էրկու տղին կանչեք՝ գա՛ն, որ Թուխտ են բերե։

Ինքն էլ փաշին գրեց. «Դու Թուխտ իր գրել, որ ըդրա կնիկը գար, կնիկը էկավ, իր ապրանքը հանեց, ջհրտի ապրանքը հանեց, հինգ հարուր բեռ ապրանք էլ քեզանից առավ, դու ոչինչ չիմացար. իմացի որ էդ Թավուր կնիկ էլ կա»։

Ըդոնք էլ հասան իրանց մուրազին։

www.naregatsi.org

5. ՍԸՄԱՎՈՆ ԹԱԳԱՎՈՐ ՈՒ ԳՅՈՒԼ

Կըլի-չըլի մի տղա. կէթա մի իշխանավոր մարդի կըլի նոքար։ Էդ մարդը կասի.— Ոխշարը պտի տանես արածացնես, շուրի աշուն կտամ քառասուն մանեթ։ Էդ մարդը վեր կացավ[1], տարավ հանդը արածացնելու, ճաշերին կբերեր բեր՝ ոխշարը կթելու։

Ոխշարատիրոջը մեկ ախչիկ ուներ, էդ չոպանին հաց կբերեր։ Էդ ախչիկը էն ղտար գնաց, էկավ, որ իրար վրա սիրվեցին։ Ախչիկա հերը իմացավ, որ սիրվել ա ախչիկը իրանց չոպանի վրա։ Հերը ուզեց չոպանին դուս անի, ամառվա կեսն էր, ուրիշ չոպան ձեռ չընկավ, մնաց էլի։ Էդ չոպանն իմացավ, որ իրան պրտի դուս անի, գնաց մի հատ բլուլ առավ, սկսեց ածիլը իրա դարդի համար։ Ախչկա հերը ախչկան չթողեց, որ չոպանին հաց տանի։ Գշերը ոխշարի տեղումը որ չոպանը բլուլ կածեր, էդ ախչիկը կնիլեր կտուրը, անկաջ կաներ. ինչ դայտա ածեր, էդ դայտեքը ախչիկը բիրատի սարվել էր, իմանըմ էր. էնդտար կկաղներ, չարի բլբլի ձենը կկտրեր, նո՛ր ախչիկը կգար, տանը կքներ։ Էդ ախչկա սովորութուն էդ էր ամեն օր։

---

[1] Այս բառը ավելացված է մեր կողմից. հավանաբար տպագրական վրիպում է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Մեկ օր էլ կաղնել էր կտրանը, գիլան ընկեր ին ոխշարի մեջը. ճղում ին տաս-տասներհինգ գել։ Զոպանի իլաճը կտրավ. ինչ արավ, չկարաց հանի. բլուլը առավ ձեռը, ածեց. բլուլի միջին ասեց.

— Ախչի՛, քու բաղդն եմ ընկե, հորդ իմացրա, գան, հավարի հասնին, չէ՛ մի հատ չեն թողա պրծնի։

Ախչիկը վեր էկավ կտրրիցը, հորը իմացրեց, ասեց.

— Ափի՛, վե՛ր կաց. ոխշարի մեջը գիլան են ընկե, որ չհասնեք, բիրատի կճղեն։

Հերը վեր կացավ, ասեց.

— Ախչի՛, դու ո՞ր տեղեն իմացար կես գիշերին։

Ասեց.— Ես բրլբլով իմացա։

— Դու ո՞րտեղ իր կաղնած, որ իմացար։

— Կտրանը կաղնած ի, ափի։

— Ախչի՛,— ասեց,— էթըմ եմ, թե որ սուտ ա էլի, ե՛ս գիդամ, դո՛։

Ասեց.— Ափի՛, գնա՛, սուտ չի, թեզ արա որ ոխշարին հասնես։

Մի քանի տղեք վե կալավ ու գնաց։ Գնաց հասավ ոխշարին, տեհավ՝ գիլանը ընկել են ոխշարի մեջը դես են քշըմ, դեն են քշըմ։

Մտան ոխշարի մեջը, հալա-հալա արեցին, գիլանը միջից հանեցին։ Ոխշարին թամաշա արեցին, տեհան՝ իսկի վնաս չի էլե, մի հատը ճղել են։

Աղեն հարցրեց.— Էդ ինչ վախտ գիլանը ընկան ոխշարի մեջը։

Ասեց.— Իրիկվորե ընկան մեջը, ինչ ղտար շարշարվեցի, չկարացի հանեի միջիցը, նոր բլուլը ածեցի, դու հավարին հասաք. որ ես բլուլը չածեի, քու ախչիկը չլսեր, չէր իմացվեր, չէիր հասնի էս հավարին։ Էդ ախչիկը պըտի տաս ընձի։

Ասեց.— Մի տղա, մի ախչիկ ա, կտամ։

Ախչկա հերը էկավ տուն։

Ախչիկը ասեց.— Ո՞նց էր, ափի։

Ասեց.— Զորանա՛ս, ախչի, դրուատ էր։

Էդ մարդը գնաց տուն, կնկանը պատմեց մոնց ա էլե։

Ասեց.— Զոպանը մեր ախչիկն ուզեց, խափեցի, ասեցի «կըտամ». շարի աշուն բալքի լավ պահի։

Զոպանը մի քանի օր ետնա էկավ տուն՝ իրա համար հաց տանելու. իրա աղեն խոսացրեց, ասեց.

— Ոխշարը մո՞նց ա, լա՞վ ա։

6—2573

www.naregatsi.org

Ասեց.— Շատ լավ ա, ափի՛,— ասեց,— քու ասածը մո՞նց էլավ։

Ասեց.— Ժամանակ ունի, հիմի ժամանակը չի, գնա։

Մի քանի օր ետը գողերն էկան ոխշարը տարան. չոպանի ոտքաձեռը կապեցին, չոպանը աղաչեց, ասեց.

— Ոտներս կապած մնա, ձեռներս ետ արեք։

Գողերը ետ արեցին, մի գետ կար, անցկացրեցին ջրի էն էրեսը, ընտե գողերը նստեցին, մի հատ ոխշար մորթեցին՝ խորոված անեն, որ ուտեն։

Չոպանը բլուկն ածեց, ախչկան բլբլի միջին ասեց.

— Ոխշարը տարան. թեզ հասաք՝ կբերեք, թե չհասաք՝ կրտանեն։

Ախչիկը կտրից վեր էկավ, հորը ձեն տվեց.

— Ափի՛, վեր կաց, ոխշարը բիրատի տարան գողերը։

Վեր կացավ, մի քանի տղա վեր կալավ, գնաց. հավարին հասավ. գնաց, չոպանի կշտին կաղնեց, չոպանին ասեց.

— Ոխշարը դբվորը տարան։

Չոպանը ասեց.— Հրե՛դ գետան էն դիհն ա, մի հատ էլ մորթել են, խորոված են անըմ։

Ասեց.— Գնացե՛ք, բերե՛ք։

Թամաշա արեց, տեհավ՝ գողերը շատ են, ասեց.

— Ա՛յ տղա, էս գողերը շատ են, չենք կարա ընդոնց ձեռիցը բերի։

Ասեց.— Դու քու խոստացածը տուր, ես առանց դավու բերեմ ոխշարը։

Ասեց.— Ա՛յ տղա, մի անգամ տվել եմ, էլի՛։

Ասեց.— Ոտներս հետ արեք, կապած ա։

Չոպանը իրա աղի ձիու թարքը նիլավ, բլուկն առավ ձեռը, ածեց. որ բլուկն ածեց, սեյիզին աղաչեց. սեյիզը նստած էր, վեր կացավ ոխշարի միջիցը կաղնեց։ Բլբլով չոպան աղաչեց. «Քու բաղդն եմ ընկե, սեյիզ,— ասեց,— որ դու գաս, ես իմ մուրազին կհասնեմ»։

Սեյիզը իրան վե կալավ ու քցեց ջուրը, անցկացավ էս էրեսը։ Ոխշարը բիրատի ընդրա քամակիցն էկավ։

Չոպանը ասեց.— Ձին քշա՛, փախնենք. ոխշարը մեր քամակից կգա։

www.naregatsi.org

Գողերը էլան, ինչ իլաճ արին չկարացին ոխշարի աղաքը կըտրեն, բիրատի գնացին։ Մնաց մորթած ոխշարը, մեկ էլ շոլախ։

Վեր կալան ոխշարը բերեցին տուն։

Զոպանը էլի ասեց.— Ա՛խի՛, քու խոսքը կատարա։

Ասեց.— Կկատարեմ, մի բան կա, էնի կատարեցիր՝ նո՛ր կտամ։

Ասեց.— Ի՞նչ ա քու բանը, որ կատարեմ։

Ասեց.— Իմ ոխշարին, հինգ օր աղ կտամ, ջուր չեմ տա, կթողեմ ջրի վրա. թե դու բլըլով ես դարձրիր, ջուր չխմեցին՝ իմ ախչիկը կտամ, որ խմեցին՝ չեմ տա։

Ասեց.— Տո՛ւր։

Հինգ օր իրարու վրա աղ տվեց, հինգ օրը թամամավ։

Ոխշարը հանեց ու բլուլը առավ ձեռը, սեյիզին աղաչեց, ասեց. «Սեյիզ ջա՛ն, որ դու ջուր չխմես, ես իմ մուրազին կհասնիմ, քու բաղդն եմ ընկեմ»։

Սեյիզը գնաց, հասավ ջրի վրա ու ես դառավ, ոխշարն էլ քամակիցը ես դառան. ջուր չխմեցին։

Զոպանը ասեց.— Դու քու խոսքիդ տե՞ր ես, ես իմ խոսքը կատարեցի, դու էլ կատարա։

Ասեց.— Ես շոպանի ախչիկ տվողը չեմ, իրիկուն քու հախը կառնես ու կէթաս, դու իմ տան մնողը չես։

Զոպանը բլուլը առավ ձեռը, սկսեց իրա դարտերը ածիլը։

— Ախչի՛,— ասեց բլուլի միջից,— արի՛, քու էրեսը տենամ ու էթըմ եմ։

Ախչիկը հորիցը թաքուն գնաց շոպանի մոտը։

Տղեն ասեց.— Իրեք անքամ քու հեր ընձի խափեց, հըմի ես էթում եմ ինձ քցեմ ջուրը, ընկնեմ հեղդվեմ, յա քարափից քցեմ մեռնեմ։

Ախչիկն ասեց.— Դվորն էթաս, ես քու հետն եմ. ջուրն ընկնես՝ քու հետ կընկնեմ, քարափից ընկնես՝ քու հետ կընկնեմ։

Ասեց.— Ախչի՛, որ ընենց ա, գնա՛ քու պատրաստությունը տես, էս գշերը կէթանք։

Ախչիկը հորիցը թաքուն գնաց, էրկու հատ ձի պատրաստեց։

Ախչկա հերը տղին կանչեց, ասեց.— Խի՞ չես գալի. քու հախն առնես էթաս։

Տղեն ասեց.— Ընձի հախ չունեմ, չե՛մ ուզում։

www.naregatsi.org

Ասեց.— Դե՛, գնա՛, քու հերն անիծած, որ էգուց էրևացիր, ես քու գլուխը կկտրեմ։ Էկե՞լ ա դավի անելու, ախչիկ ա ուզում։

Տղեն վեր կացավ, գնաց շոլումը պառկավ ու բլուլը ածեց, ասեց բլուլի միջից. «Ախչի՛, մութն ընկավ, վեր կաց ու արի»։

Ախչիկը որ բլբլի ձենը լսեց, ձիանը առավ ու գնաց, գնաց տղի մոտը։ Ամենքը մի ձի նիլան՝ ասեցին. «Դե՛, քշա՛»։

Քշեցին, գնացին, շատ ու քիչ աստված գիտա, գնացին մի սարի գլուխ նիլան։

Ճանփեն կորավ, ընտե ասեցին.

— Վե գանք ըստի, էս գշեր ըստի մնանք, լիսը բացվի, նոր ճանփեն գտնենք ու էթանք։

Ըտե նստան, հաց կերան, պառկան քնան։

Լիսը բացվեց։ Թամաշա արին, տեհան մի հատ վիշապ գլուխը դրել ա պոչի վրա, շորս բոլորը կտրել ա։ Վեր կացավ, թուրը քաշեց որ վիշապին տա, վիշապը ասեց.— Ի՞նչ ես անում, ա՛յ տղա։

Ասեց.— Քե պըտի սպանեմ, ճանապար ըլի էթանք։

Ասեց.— Թուրը դիր տեղը, թե չէ քեզ ու քու նշանածին մի բերան կանեմ։

Ասեց.— Խնթրում եմ, ճանապար տաս, անց կենանք։

— Անկարելի ա,— ասեց վիշապը,— տեղ չեք կարա էթա, չարի իմ ասածը չկատարեք։

Ասեց.— Քու ասածն ի՞նչ ա, որ կատարեմ։

Ասեց.— Իմ ասածն էն ա, որ էթաս Սըմավոն թաքավորի քաղաքը, իմանաս, Գյուլը, որ Սըմավոն թաքավորի կնիկն էր, Սըմավոն թաքավորին ի՞նչ արեց, էդ խաբարը կբերես։

Ասեց.— Դե՛, ճանապար տու, էթանք։

Ասեց.— Ա՛յ տղա, դու գնա, ես քու նշանածին ընենց կըպահեմ, վարդի պես։

Ասեց.— Չըլի, ես կտանեմ, ուրիշ տեղ պահ կտամ ու կէթամ։

Ասեց.— Աճալն էկել ա։

Ասեց.— Որ ըդենց ա, կէթա՛մ, նշանածիս պահա։

Նշանածը մնաց վիշապի կուշտը, տղեն ճանապար ընկավ։

Ընկավ, շատ ու քիչ աստված գիտա, գնաց մե քաղաքի ըռաստ էկավ. էդ քաղաքի մեջը ծառավութունը շատ զոռեց ըդրան. ո՛ր տանիցը ջուր ուզեց, ասին. «Ջուր չկա»։

Գնաց, մտավ պառվի տուն, ասեց.

www.naregatsi.org

— Պառա՛վ, աստուծո սիրուն ըլի, ինձ ջուր տո՛ւ, ես ծառավ մեռա։

Պառավն ասեց.— Ջուր չկա, ես որտեղա՞ն տամ, ա՛յ որդի։

Ասեց.— Պառա՛վ, մի իլաճ արա, թե չէ քեզ կսպանեմ։

Պառավի շարեն կտրվավ. գնաց մի բոնձի մեջ շռեց, բերեց տվեց ըղրան։ Առավ, խմեց ու բոնձը դրեց ընտի։

Ասեց.— Պառա՛վ, ձեր ջուրը համ տաք էր, համ շոռ էր։

Ասեց.— Որդի՛, քեզանից պահեմ, աստծուց ինչ պահեմ, էս քաղաքին մի հատ աղբյուր կա, մի հատ վիշապ ա փեյտա էլե մեջը. ՝րը մի տղա, մի ախչիկ տանում ենք, ուտում ա, ջուրը թողում ա դա. Թաքավորի աչկա նորաթն ա, հինգ օր ա չի տանում, օրեցօր հետ ա քցում, ընդուր ջուր չկա, ես էլ շռեցի, բերի տվի քեզ։

Ասեց.— Պառա՛վ, ես քնահարամ եմ, քնում եմ, Թաքավորի ախչիկը էփոր տանեն՝ ինձ իմացրա։

Պառավ ասեց.— Շատ լավ կըլի։

Պառավը ման էր գալում քուչում՝ տեհավ դափով-զուռնով տանում ին Թաքավորի ախչկան, էկավ իմացրեց տղին։

Տղեն վե կացավ, ասեց.— Ի՞նչ ա, նանի՛։

Ասեց.— Թաքավորի ախչկան տարան, վեր կա՛ց։

Վեր կացավ, ընկավ Թաքավորի ախչկա քամակն ու գնաց։

Տարան, ծառ կար, ծառի կշտին դրեցին ու քոմա եռ դառան։

Մի բլութ փլավ կար Թաքավորի ախչկա հետ, մի բլութ խորոված, էն որ ուտեր, վիշապը բոլ ջուր Թողար։

Քոմա եռ դառան, էկան. էդ ախչիկը, էդ տղեն մնաց։

Ախչիկն ասեց.— Ա՛յ տղա, դու խի՞ մնացիր։

Ասեց.— Վիշապը որ քեզ ուտի, դու Թաքավորի ախչիկ ես, ինձ էլ Թո՛ղ ուտի։

Ասեց.— Ափսոս ես, գնա՛, դու մուրազ կունենաս։

Ասեց.— Անկարելի ա, չե՛մ էթա։ Բա՛ էս խորոված գառը, փլավը ո՞ւմ համար բերել եք։

Ասեց.— Վիշապի համար բերել ենք, որ շատ ջուր Թողա։

Ասեց.— Փլավը կուտեմ, գառն էլ՝ էքուց ճանապար եմ էթում, հետս կտանեմ,— ասեց.— ախչի՛, քնում եմ, վիշապը որ դուս գա, ինձ իմացրա։

Հենց վիշապը դուս էլավ, ախչկա լեզուն կպավ, լաց էղավ. արտասունքը Թափեց էդ տղի էրեսին. տղեն զարթնեց, ասեց.

www.naregatsi.org

— Ախչի՛, ի՞նչ ես լաց ըլում,— էլ չկարաց լիզվով ասիլը՝ ձեռը մեկնեց դպա վիշապը։ Տղեն վեր կացավ ու կաղնեց։

Վիշապը էկավ, ասեց.— Է՛յ թաքավոր. էս իրեք, չորս օր ա չես բերե հիմի ջուխտն ես բերե, բոլ ջուր թողեմ, ըսդոնց էլ պըտի ուտեմ, ջուր էլ չթողեմ։ Էս շաբաթ պըտի էս քաղաքը անցնեմ, էք ու որձ չթողեմ։

Տղեն ասեց.— Դե՛, մոտ արի, տեսնամ էդ ի՛նչ խոսքեր ես խոսըմ։

— Գալիս եմ,— ասեց,— քեզ ու ախչկան կուլ տամ, ընկնեմ քաղաքը։

Տղեն թուրը քաշեց ու հասավ դպա վիշապին։

Ճաշվանից կռվեցին չարի արևմտոց, ասեց.

— Ախչի՛, ես բեզարեցի, դու փախի, հիմի վիշապը մեզի կըհաղթի։

Վիշապը հասավ, տղին բռնեց, քաշեց դպա փորը։

Տղի թուրը ղայիմ ձեռքն բռնած էր, վիշապի բերանը ճղեց, քանի կուլ տվեց՝ ճղեց. գնաց պոչից դուս էկավ։ Վիշապը սատկեց։

Տղեն էկավ, ախչկա մոտը կաղնեց. ախչիկ ձեռ տվեց վիշապի արնին, տվեց էդ տղի մեջքին։ Ախպրիցը մի թամուզ դորակ ջուր լցրին, ու էդ տղեն ու ախչիկը ետ դարձան դրպա քաղաք։

Քաղաքացիքը թոփ են էլե, ասըմ են.

— Թաքավորը իրա ախչկան թեզ չղրկեց, որ վիշապը թեզ ջուր թողար, գար. ելեք էթանք թաքավորի մոտ տեսնանք՝ էս ջուրը ախր խի՛ չի գալիս։

Գնացին թաքավորի մոտ, ասեցին։

Թաքավորն ասեց.— Խի՞ եք վռազե, կգա՛։

Թաքավորին ասեցին.— Մեր էրեխանց նոպաթին թեզ ղրկո՞ւմ ես, քու ախչկա նոպաթին չորս օր ետ քցեցիր։

Մեկ էլ էն տեհան ախչիկը դռնից մտավ ներքև։

Նոր ժողովուրդը ձեն տվեց.—Հրե՞ս, էկա՛վ, ընդուր ջուր չէկավ։

Թաքավորն ասեց.— Ո՛ր էկավ՝ իմ խոսքը գետնովն ա տալի, իրավունք եմ տալի ձեզ, իմ ախչիկն կտոր-կտոր արե՛ք։

Ախչիկն ասեց.— Էրկու սահաթ սապր արեք. ջուրը էկավ՝ էկավ, ես հո ձեր ձեռքից փախչողը չեմ։

Էրկու սհաթեն ետը տեհան ջուրը էկավ. սկսեցին քաղաքաքանները կժերը լցնիլը, տեհան ջուրը պղտոր, արնաջուր ա գալի։

www.naregatsi.org

Ախչիկը ասեց.— Սապր արեք պարզի, էս ջուրը չի կտրվի։
Լիսը բացվեց, առավոտը ախչկան ասին.
— Ա՛յ ախչիկ, է՞ս ինչ բան ա էլե, ըսենց ջուրը էկավ։
Ասեց.— Մի տղա էկավ, վիշապին սպանեց։
Թաքավորը ասեց.— Ո՞րն ա վիշապին սպանել, իմ ախչիկը պտի տամ էն տղին, ո՞րն ա՝ թո՛ գա։
Ջառչին ընկավ, ջառ բռնաց։
Սաղ քաղաքի տղեքը թոփ էլան, էկան Թաքավորի մոտը, ասեց.
— Ախչի՛, ըսդոնց ո՞ր տղեն ա։
Ասեց.— Մին-մին բեր, իմ առաջովս անց կացրա. նշան ունեմ, ես գիտամ ո՛րն ա։
Էկան, բիրատի անց կացան, էլ տղա չմնաց քաղաքում։
— Ախչի՛,— ասեց,— բա ո՞րն ա, էդ հրեշտակ էր. մեզի ազատեց։
Ջառչուն ասեցին.— էլ տղա չկա՞, բիրատի կանչե՞լ ես։
— Էլ տղա չկա՛,— ասեց,— մի ղարիբ տղա կա պառավի տանը։
Թաքավորը հրամայեց.— Գնացե՛ք, ընդրան էլ կանչեք։
Գնացին ընդրան էլ կանչեցին, էկավ ախչկա մոտը։
Ախչիկը էրեսին մտիկ արեց, քամակին՝ տեհավ նշանը քամակին ա։
Ասեց.— Թաքավո՛ր ապրած կենա, է՛ս տղեն ա։
Ասեց.— Իմ ասածն ասած ա՝ իմ ախչիկ տվի քեզ, անքմը իմ ըլի, թաքավորությունը դու արա։
Ասեց.— Թաքավո՛ր ապրած, ես ախչիկ առնող չեմ, ինձ նշանած ունեմ, անկարելի բան ա, ես իմ նշանածի պատճառովն իմ ընկել չոլեչոլ, ես պտի էթամ Գյուլ Սըմավոն Թաքավորի քաղաքը, Գյուլը ի՞նչ արեց Սըմավոն Թաքավորին. Սըմավոն Թաքավորը ի՞նչ արեց Գյուլին, էթըմ եմ էդ իմանամ, որ էթամ, իմ նշանածին հասնեմ։
Թաքավորի ախչիկը էդտեղ տրտմեց, ասեց.— Ինձ պտի առնի, էդ էլ նշանած ունի, էլ չի առնի։
Թաքավորին խնդրեց, ասեց.— Յա՛ ճանապարհ նշանց տվեք, յա՛ մարդ դրեք, էթամ հետը։
Թաքավորը ասեց.— Մարդ չի գիտա էդ քաղաքի տեղը. ըստե մի հալիվոր մարդ կա. կանչենք գա, տենանք ինչ ա ասըմ։

www.naregatsi.org

Հալիվորին կանչեցին, իրեք հարուր տարեկան էր, Թաքավորը հարցրեց.

— Պապի՛,— ասեց,— Սըմավոն Թաքավորի քաղաքը որտե՞ղ ա, մի սալըղ տուր։

Ասեց.— Մեշի միջին մի Քաչալ Քերքերտան ղուշ կա. ըդրա ոտներ երկաթից ա, Թռնելու վախտը տալիս ա իրար, կրակ ա Թափըմ, ես գնացել եմ մեշեն ավ-ղուշ անելու, ընդրա հետ շատ խոսացել եմ, էն էլ իմ յաշին ա, Սըմավոն Թաքավորի նաղըլ էն ղշիցն եմ լսե։

Թաքավորը հրամայեց.— Գնացե՛ք, էն ղշին կանչեք գա՛։

Գնացին, կանչեցին. ղուշն էկավ Թաքավորի մոտը, Թաքավորը ասեց.— Սըմավոն Թաքավորի քաղաքը տեսած կըլլե՞ս։

Ասեց.— Տեսել ե՛մ։

Ասեց.— Կարա՞ս էս տղին տանես։

Ասեց.— Հարուր իցցուն տարեկան վախտս եմ գնացե, հըմի իրեք հարուր տարեկան եմ, ղուտումս կոտրել ա։ Տասնէրկու անգամ նստել, ճուտ եմ հանե, ճուտի տեր չեմ էլե, իմ ճտերը հըմի քորփա են, պտի Թռցնեմ, Թե որ էս ճտերիցն էլ զրկվա, ընձի պտի սպանեմ։

Տղեն վեր կացավ, գնաց ղրպա մեշեն, ասեց.

— Էթամ, տենամ ղշի բունը ո՛րտեղ ա։

Գնաց, էրկու իրեք օր ման էկավ, բունը գթավ, գնաց հեռու պառկավ, Թամաշա արեց։

Քունը տարել էր, չէր տարե՝ տեհավ ղշի ճտերը ճվճվացին, բիրտեն զարթնեց. տեհավ վիշապ փաթթվել ա ծառին, էթըմ ա ղշի բունը. հասավ, որ ճտի մեկին կուլ տա՝ Թուրը քցեց վիշապի մեջտեղիցը կտրեց, Թրով կոտորեց, լցեց ցած։

Էրկու կտոր լցեց ճտերի աղաքը, ճտերը սկսեցին ուտիլը։

Ինքը ծառի տակիցը քիչ հեռու պառկավ, քնավ։

Ղուշն էկավ, տեհավ ծառի տակին մի մարդ պառկած ա, ղո՞ւ արավ, էկավ դպա տղեն, որ վեր կալե ֆալաքի օխտը ղաթը, տա գետնով, հազար Թիքա անի, ասեց.— Էս ա իմ ճտերն ուտողը, զիրպա-զիրպա անեմ ըստուր։

Ճտերն ասեցին.— Մեզ պրծացնողը էդ ա, Թամաշա արա էնտեղ։

Թամաշա արեց, տեհավ մի վիշապ սպանել ա։

www.naregatsi.org

Վեր էկավ, տղի գլխի վերև կաղնեց, հով արեց, ասեց.

— Ինչ ուզի էս տղեն՝ պտի կատարեմ, իմ ճտերն ազատեց։

Տղեն զարթնեց, տեհավ ղուշը գլխավերևը կագնած ա, տղին ասեց.

— Մի՛ վախենա, ասա՛, ինչ ուզես՝ ես կըկատարեմ։

Ասեց.— Սըմավոն թաքավորի քաղաքը պտի տանես ընձի։

Ասեց.— Գնա՛, թաքավորին ասա, բուդ կապի ընձի քառասուն օր, ջանս վրա դա։

Տղեն վեր կացավ, գնաց թաքավորի մոտը։

— Ա՛յ տղա,— ասեց թաքավորը,— էս քանի օր ա, ո՞րտեղ իր։

Ասեց.— Թաքավոր ապրած, գնացի մեշեն, ղշի բունը գթա, պառկել քնել ի, ճտերի ձենը դուս էկավ՝ զարթնա, տեհա վիշապը ճտերն ուտում էր, վիշապին սպանեցի։ Ղուշն խոստացավ, որ ինձ տանի։

Թաքավորն ասեց.— Ղշին կանչեք գա՛։

Գնացին Քաչալ Քերքերտանին կանչեցին, էկավ։

Թաքավորն ասեց.— Խոստանը՞մ ես, որ տանես ու բերես։

Ասեց.— Խոստանում եմ։

Ասեց.— Ե՞փ կտանես։

Ասեց.— Քառասուն օրեն ետ կտանեմ, ճտերն էլ կթռնեն։

Ասեց.— Օրական ինչդար կուտես։

Ասեց.— Օրական տասը ոխշար, տասը լիտր էլ գինի, քառասուն օր պտի տաս։ Կապեցին տաս ոխշար, տաս լիտր էլ գինի՝ քառասուն օր կերավ. քառասուն օր թամմեց, տեհավ ճտերն հալա չեն թռնում, տաս օր էլ մնաց։

Տղին ասեց.— Գնա՛, քառասուն լիտր գինի, քառասուն էլ ոխշարի դմակ հաղրա, որ էթանք։

Հաղրեց, Քաչալ Քերքերտանը էկավ, իրան փորձեց։

Վեր կացավ, ոտերը տվեց իրար, ֆալաքի օխտը դաթը նիլավ, էկավ մի հինգ օր էլ բանտ էլավ։

Գնաց, ճտերին թոցրեց, ասեց.— Դուք ձեր գլուխը պահեք, ես էթում եմ, յա՛ գամ, յա՛ չգամ. էդ էր իմ մուրազը, ճտերս թոցնեի, էլ ըստուց դեն դարտ չունեմ։

Ղուշն էկավ, թաքավորի պալատի առջևը վեր էկավ։

Քառասուն լիտր գինին, քառասուն դմակը բերեցին դրեցին ըդրա թևերի վրա, տղեն էլ նստեց թևերի վրա, սաղ քաղաքը թոփ էլավ, էկավ թամաշա։

www.naregatsi.org

Ղուշն ասեց.— Մնա՛ք բարին. ոտները տվեց գետին, կրակ թափեց ոտներիցը, ելավ Ֆալաքի օխտը ղաթը։

Ասեց.— Ա՛յ տղա, աշխարքը ինչ ղտար ա էրևում։

Ասեց.— Մի կալի ղտար ա։

Էլի բանձրացավ վերև, ասեց.— Աշխար ինչղար ա էրևում։

Ասեց.— Մի մժիկ ա, թրռնըմ դես, թռնըմ դեն։

Ասեց.— Տղա՛, ժամանակն ա, վեր պտի գանք Սըմավոն թաքավորի քաղաքի վրա, ղո՞ւ կանեմ՝ դմակը, ղի՞ կանեմ՝ գինին քցի։

Ըղենց ղո՞ւ-ղի՞ արեց. դմակի մեկը վեր ընկավ գետին, իրան բուտը կտրեց, դրեց ղշի բերանը. ղուշը իմացավ՝ լեզվի տակին պահեց։ Էկավ, քաղաքի ղրաղը իջան։

Ասեց.— Վեր կաց, գնա՛, տղա՛։

Տղեն թոփալ-թոփալ գնաց։

Ասեց.— Արի՛, արի՛։

Լիզվի տակից հանեց, դրեց վրեն, լիզավ՝ լիզելու բաշտան սաղացավ։

Ասեց.— Ա՛յ տղա, էս իրան պալատն ա, էս էլ քաղաքն ա, էս էլ իրան բաղչան ա, էն էլ դարվազեն ա՝ որ էրևում ա. իմ բընբուլը կտամ քեզ, հենց որ նեղ տեղը կընկնես, շախմախի կտա՛ս՝ ես քու կշտին հազիր եմ։

Տղեն կէթա։ Կէթա, կմտնի բաղչեն, ման կգա։

Թաքավորը փանճարից թամաշ կանի, կտեսնա՝ մի տղա բաղչումը ման ա գալի, վազիրին կասի.— Կանչեք գա՛, տեսնանք ի՞նչ տղա ա, մեր երկրի տղա չի։

Կէթան կանչեն, կգա։

Կգա, թաքավորին գլուխ կտա օխտը անգամ, վրա ութին ձեռք կբռնի կկաղնի։

Կասի.— Որտե՞ց ես։

Կասի.— Էրևանա։

Կասի.— Ա՛յ քու տունը չքանդվի, էրկու տարին մարդ չի՛ կանա հասնի էստե, դու ո՞նց ես էկե։

Կասի.— Էկել եմ Սըմավոն թաքավորի խաբարը տանեմ, Գյուլը Սըմավոն թաքավորին ի՞նչ արեց, Սըմավոն թաքավորը Գյուլին ի՞նչ արեց։

www.naregatsi.org

Թաքավորը ասեց.— Արի գնա՛, էդ նաղլը ես չեմ ասի քեզ, որ հասեմ, գլուխդ կկտրեմ։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, ասա ու կտրա։

Ասեց.— Առանց ասել գլուխդ կկտրեմ, գնա՛։

Ասեց.— Ասա ու կտրա, թաքիլան լսեմ։

Ասեց.— Ջանլա՛տ։

Էրկու ջանլատ թրերը ձեռներին, էկան, կայնան։

Ասեց.— Ես Սինամ թաքավորն եմ, Գյուլին էն ղտար կսիրեի, որ հացը ուտելու վախտը չէի թողար գետնին նստեր, գոքիս կնըստեր, հաց կուտեր. որտի որ ոտը կդներ, գիտայի իմ աչքի մեջն ա գնըմ. ինչ որ ասեր՝ կլսեի։ Մեկ օր դուա էկա, գնացի ման գալու տավարի, ձիանոց մեջ. մի ջուխտ քյահել ձի ունեի, որ հազար մանեթ էի տվել բերել, էդ ձիանը ես ու Գյուլը կնիլնեինք. մարդ իրավունք չուներ նիլնելու։ Թամաշա արեցի՝ էդ ձիան մեկել ձիանոց վրա առըխ են մնացե, մեյթար-բաշուն կանչեցի, ասեցի. «Շո՛ւն շա՛ն որդի, էս ձիան խի՞ են առըխ, ըստրանց ի՞նչ ա պակաս. մի քանի օրեն ետը կդամ, որ առըխ էլան, քու գլուխը կկըտրեմ»։ Մեյթարը ասեց. «Ես չեմ կարա քեզ ասի. կգաս, մի-մի գշեր ըստե կմնաս, քու աչքով կտեսնաս»։ Ասեցի. «Գշերն կգամ»։ Դարձա, գնացի պալատը. Գյուլին ասեցի. «Հաց բե՛ր, ուտեմ»։ Հաց բերեց։ Պառկա քնա. Գյուլն էլ գնաց իրա օթախն քնավ... ես վեր կացա, գնացի մեյթարխանեն։ Մեյթարի շորերն հագա ու պառկա, մեկ էլ տեհա դուռը ծեծեցին։ Վեր կացա, բաց արեցի, ասեցի. «Ո՞վ եք»։ Գյուլը պլետ չքաշե՞ց մի թափ[1], ասեց. «Քո՛ռ շանորդի, չես ճանաչըմ, ձիանը դուս քաշա»։ Մտա նեքսև, ասեցի. «Որ ձիանը»։ Էրկու պլետ էլ քաշեց, ասեց. «Ո՞ր ձիանը, էն ձիանը որ թաքավորի հետ նիլնում ենք»։ Թամքը մի յան, դյամը մի յան, չարի գթա, մի տասը պլետ էլ էկան, տվեցին։ Քաշեցի ձիանը դուս. իրանք նիլան. մեկը զանքաշս նիլավ, մեկը Գյուլը նիլավ, ինձ ասեցին. «Ընկի՛ աղաք»։ Ընկա աղաք։ Համի ճամփեն չեմ գիտում, գալիս պլետըմ են։ Ընկա աղաք բոբիկ, ոտս է՛ս քարին, է՛ն քարին, սաղ յարալու էլավ։ Գնացի, հասա ձորի մեջ մի Արաբի կուշտ. Արաբը զաղի դռան էթըմ ա, գալի։ Արարն ասեց. «Լի՛ըբ, անզգա՛մ, էս գշեր ետացել ես. քու ոռին հազար վարոց տամ»։ Զանքաշս ա-

---

[1] Բնագրում տպագրված է՝ բոփ, կարծում ենք վրիպակ է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

սեց. «Գլխիդ արևիդ ղուրպա՛ն, Գյուլս հազար վարոցի չի դիմանա»։ Զանքաշս ասեց. «Ավելի քենճը[1] վեր կալ, ոռին տուր, քու օրթումը տեղը կգա»։ Բաց արեց ու ոռին տվեց։ Որ տվեց, ես իմացա իմ աչքի մեջտեղին տվեց։ Գյուլը ասեց Արաբին. «Էս մեյթարը խամ էր, շուտ չթամքեց»։ Էդտեղ պառկան, իմ աչքի առաջ քեֆ արեցին։ Զանքաշս էլ էդ տեղ ուտել խմելու հետ քեֆ էր անում։ Մեյթա՛ր, ձիան քաշա, գա՛,— ասացին։ Ձիանը քաշեցի, Արաբը թամաշա արեց էրեսիս, ասեց. «Գյո՛ւլ, կասես ըսդրա աչքեր Սըմավոն թաքավորի աչքերն ըլնի»։ Ասեց. «Արաբ ջա՛ն. ես քնացրեցի էկա»։ Նիլան, քշեցին, ես ընկա առաջ, էկա դուռը. ըսդոնք ձիանը բրախ տվեցին, գնացին. ժամն էլ տվեց։ Էկա մեյթարին վեր կացրի։ Մեյթար ասեց. «Տեսա՞ր»։ Ասի. «Տեսա՛»։ Էկա պալատը. տեհա Գյուլը ժամ ա գնացե։ Իմ թաքավորական շորերը հագա ու նստա թախտը, հրամայեցի, նազիրին, վազիրին ֆյան ձորի մեջ մե զաղա կա, մեկ Արաբ կա. բռնեք ու բերեք։ Գնացին, բռնեցին ու բերին։ Արաբին զնճլով կապեցի։ Խաբարը գնացել ա Գյուլին, թե թաքավորը մի Արաբ ա բռնե կապել. զանքաշս Գյուլին ասել էր. «Ցողը գլխիդ, էս գշերվան մեյթարը Սըմավոն թաքավորն էր, մենք հմի էթանք ի՞նչ ջուղապ տանք. ամեն բանը որ իրա աչքով տեսել ա»։ Գյուլն ասեց. «Արխային կա՛ց. ես կէթամ, տես ընդրա գլուխն ինչ կհանեմ»։ Էկավ, Գյուլը մտավ նեքսև, թամաշա արեց՝ Արաբին կապել եմ, ասեց. «Էս ի՞նչ Արաբ ես բերել»։ Ասի. «Էս գշերվան Արաբն ա, հմի էրկսիդ էլ կապեմ, քցեմ ծովը»։ Մի հատ ճիպոտ կար ձեռը, ասեց. «Սըմավոն թաքավոր, ըլնե՛ս մի հատ անտեր էշ»։ Էլա մի անտեր էշ, ընկա քյուլլուկները։ Արաբին շինեց թաքավոր, դրեց իմ տեղ։ Հմի էլել եմ անտեր էշ. հոտաղ, մշակ, նիլնում, շարշարում են։ Մեջքիս յարեն բացվեց։ Քյուլլուկի վրայից տեհա՝ զանքաշս, Արաբը, Գյուլը էթըմ ին համամ։ Գյուլն ասեց. «Նանի՛, էս էշը ճանաչը՞մ ես»։ Ասեց. «Չէ՛, չեմ ճանաչըմ»։ Ասեց. «Էդ Սըմավոն թաքավորն ա»։ Զանքաշս ասեց. «Գյուլ էն ղտար նիլել են, մեջքը էլել ա յարա, մեղք ա, շինա՛ մի ուրիշ բանա»։ Էկավ վարոցը տվեց ընձի, ասեց. «Սըմավոն թաքավոր, ըլլե՛ս մի անտեր թազի, քաղաքումը ինչդար շուն կա, թափի քու վրա, հեղդի քեզ»։ Էլա մի անտեր թազի, քաղաքումը ինչդար շուն կար թափան

---

1 Մաշված ավել (Ս. Բ.)։

www.naregatsi.org

վրես, հեղղեցին, տարան կոխեցին մեշեն, անճախ փախա, պրծա. շները դառան էկան դպա քաղաքը։ Որ մութն ընկավ, մեշիցը դուս էկա, ասեցի. «Ուրիշ ջանավար կգա, ընձի կհեղդի»։ Էկա, մտա քաղաքը. հմի շներից վախում եմ, պատերի տակից յավաշ-յավաշ գալիս եմ դրպա քաղաքը։ Էկա իմ բաղչի խրոնակովը մտա բաղչեն, գնացի, աշխանի դռանը նստա։ Լիսը բացվեց, թամաշա արեցի՝ Արաբը, Գյուլը, զանքաշս լվացվեցին, նստան, դայֆա խմեցին. յավաշ-յավաշ մոտացա, նստեցի, թամաշա արեցի։ Գյուլն ասեց. «Նանի՛, թաղին ճանաչո՞ւմ ես»։ Ասեց. «Չեմ ճանաչում, ո՞ւմ թաղին ա»։ Ասեց. «Ախր Սըմավոն թաքավորն ա, շինեցինք թաղի»։ Ասեց. «Մեղք ա, ուրիշ բան շինա, շները կըհեղդեն»։ Ասեց. «Սըմավոն թաքավոր, ըլի՛ս մի կատու, ման գաս»։ Համա մի դրրպ տվեց, էլա կատու։

Էլա կատու շատ ուրախացա, ասեցի. «Էլ Գյուլի աղաքը չեմ էթա, էստերանք զատ-մատ կուտեմ»։ Գյուլը որտե ման դար, էլ աղաքը չէի էթա, որ ուրիշ բան չշիներ։ Մեկ օր զարավաշներիցս մեկն էկավ, ինձ[1] մաժմժեց ասավ. «Սըմավոն թաքավոր, իմ աչքերը դո՛ւս դա, յարա՛պ էլի կըլլես թաքավոր, թե չէ»։ Որ ըդենց ասեց, ես նըվնըվացի, ընդրա ձեռները լիզեցի։ Ասեց. «Սըմավոն թաքավոր ըտե կա՛ց, Գյուլը ժամ ա գնացե, էթամ տենամ, փետն ընտե ա՝ բերեմ»։ Էդի գնաց, տեհավ փետը դոշակի տակին ա, բերեց տվեց ընձի, ասեց. «Սըմավոն թաքավոր, ըլնե՛ս էն թաքավորը»։ Էլա էն թաքավորը։ Փետն առա ձեռս, գնացի մտա պալատը, տեհա՝ Արաբը թախտըմը նստած ա, տվեցի, ասեցի. «Արա՛բ, ըլլե՛ս մի սև քոթուկ, մուխը տարին տասնէրկու ամիս քու վրիցը չպակսի, մխա՛ս»։ Զանքաշս էկավ, մտավ նեքսև, ասեցի. «Ըլլե՛ս մի սև աթոռ, վրիդ նստեմ, դիվան կտրեմ»։ Էլավ մի սև աթոռ։ Խաբարն գնաց Գյուլին, Գյուլն ասեց. «Ես էթամ, ֆանդով փետը կառնեմ»։ Գյուլը մտավ նեքսև, էլ չթողեցի մոտ դար, հետս խոսար. փետով տվեցի ասեցի. «Ըլնե՛ս մի չոր չինարի ծառ»։

Ասեց Սըմավոն թաքավորը.— Ա՛յ տղա, լավ ականջ արի՞ր, Գյուլն էդ օյինը հանեց իմ գլուխը, ես էլ էս օյինը հանեցի։— Ասեց.— Դե՛, էն քոթուկը էն Արաբն ա, էս աթոռը՝ զանքաշս ա,

---

[1] Բնագրում տպագրված է զիս, որը հավանաբար բանահավաքի փոփոխումն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

շոր չինարի ծառն էլ Գյուլն ա, հրմի էթըմ, փաթըթվում եմ էս ծառին, ա՜խ ու վա՜խ եմ անըմ, փետը ձեռս չի ընկնըմ, որ սաղացնեմ։

Ասեց.— Լսեցի՞ր, տղա՛, իմացա՞ր։

Ասեց.— Հա՛։

Ասեց.—Ջանլա՛տ։

«Ջանլա՛տ» ձեն տալու բաշտան տղեն թաքավորի ոտներն ընկավ, ասեց.

— Ինձ կես ժամ ժամանակ տաս, աղոթք անեմ։

Գնաց բախչեն կանգնավ աղոթի. ղուշի բնբուլը հանեց, չախմախի տվեց. ղուշն էկավ վեր կալավ, հանեց ֆալաքի օխտը ղաթը. թաքավորը ջուխտ ձեռով տվեց գլխուն, ասեց.

— Իմ սըռը ընկավ աշխարքը, էլ ապրելն ընձի հարամ ա, վեր կացավ, իրան քցեց ծովը։

Ղուշը էդ տղին բերեց, թաքավորի մոտը վեր դրեց. թաքավորին ասեց.

— Էս քու տված տղեն ա, Սըմավոն թաքավորի քաղաքը տարա ու բերեցի։

Թաքավորը ղշին բուդ կապեց՝ ամեն օր իրա վախտին կգար, իրան կուտը կուտեր ու կէթար։

Էդ տղին ճանապարհ քցեց, գնաց, հասավ վիշապին. թամաշա արեց, տեհավ որ իրա նշանածին շատ լավ պահել ա, էնպես՝ ինչպես վարդ։

Սըմավոն թաքավորը ոնց որ պատմեց էդ տղին, տղեն էլ պատմեց վիշապին։

Վիշապն ասեց.— Ես էլ թաքավոր եմ էլե, կնկա ղազապի եմ էկե, իմ տակը ոսկի ա, քանդեք ու տարեք։

Տղեն ու ախչիկը քանդեցին, խուրճինները լցրեցին, քցեցին ձիանոց վրա, նիլան, էկան ախչկա հոր տանը վեր էկան։

Ախչկա հերն էկավ տեհավ՝ ախչիկն ու տղեն էկել են տուն, նոր տղին ասեց.

— Էդ որտի՞ իք գնացե, էնդար ման էկանք՝ ո՛չ քթանք, ո՛չ էլ սալըղ տվող էլավ։

Էն սհաթը հարսանիք կանգնեցրեց։

Օխտը ցերեկ, օխտը գշեր հարսանիք արեց։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

www.naregatsi.org

6. ՀՈՒԼԻԴԱ ԽԱՆՈՒՄ

Ժամանակով մի թաքավոր ա ըլնում. էդ թաքավորին մի տղա, մի ախչիկ ա ունենում. վազիրի ախչկա աչքը էդ թաքավորի տղի վրա ա ըլնում։ Թաքավորի տղեն էս ախչկան չի ուզում։

Թաքավորը կանչում ա վազիրին.— Իմ տղի հետ գնա, երկիրներ ման արի, իմ տղեն ո՛ր ախչիկը կհավանի, էն ուզի իմ տղին։

Վազիրը կընկնի մտածուբյան մեջ, կասի. «Յավա՛շ, էնպես ախչիկ ուզեմ, թաքավորը ըդրա լեզուն չհասկանա, իմ ախչիկը չուզի՛, էթա ուրիշ երկրներից բերի՞»։

Վազիրը տղի հետ ընկնում ա ճանփա, գալիս են։

Շատ քիչ աստված գիտա, մի գեղի հասնում են. ման են գալի, տեսնում են մի ախչիկ դռնից դուս էլավ։

Վազիրը տղին ասում ա.— Թաքավորի տղա՛, ես դրան շա՞տ հավանեցի։

— Որ դու հավանեցիր, ես կառնեմ,— ասում ա։

Մտնում են ուղղակի էդ տունը, բարև են տալիս, նստում են ու ասում.

— Մենք էկել ենք ձեր ախչիկը ուզենք թաքավորի տղին։

— Ուզում եք՝ մե ախչիկ ա, թաքավորին ղուրբան ա։

www.naregatsi.org

Վազիրն պելկյահն ու նշանը դնում է. վեր են կենում, գալիս Թաքավորի մոտը։

Թաքավորը սինոդապետներով ուղարկում ա, գնում են հարս բերելու։ Բերում են, մի առ ժամանակ մնում ա։

Էդ հարսն էնպես ա վարվում, որ Թաքավորին գլուխ չի տալիս։

— Ա՛յ հա՜յ,— ասում ա Թաքավոր,— իմ ծեր ժամանակիս, ես էի, մի տղա. պսակեցի, որ ուրախանայինք, հալալ կաթնակեր չընկավ մեր ձեռքը։

Գալիս ա, ժամանակով էդ Թաքավորը հիվանդանում ա, կնկանը ասում ա.

— Ա՛յ կնիկ, քե վասիաթ ունեմ անելու. ամանաթ-ամանաթ իմ Հուլիդա խանումն ու տղեն քեզ։

Թաքավոր հարսի կսկրծուն մեռնում ա։

Որ Թաքավոր մեռնում ա, Թաքուհու օրը սև ա ըլլում հարսի ձեռիցը, սա էլ ա հիվանդանում։

Որ հիվանդանում ա, կանչում ա իր տղին.

— Ա՛յ որդի, ամանաթ-ամանաթ քեզ իմ Հուլիդա խանումը վասիաթ անում եմ քեզ. առավոտուն մտնես Հուլիդա խանումի օթախը «բարի լիս» ասես, իրիկուն՝ «բարի իրիկուն» ասես, ամանաթ-ամանաթ։

Թաքուհին էլ ա մեռնում։ Էդ ախչիկը դուռ չի գալիս սենյակից։

Տղեն ա, առավոտուն մտնելուն.— «Բարի լի՛ս քեզ, Հուլիդա խանում քուրիկ», իրիկուն մտնելուն՝ «Բարի իրիկո՛ւն, Հուլիդա քուրիկ» ասում։

Հուլիդա խանումն էլ ասում ա.— Բարի էկար, աղբեր ջան,— ասում ու փաթըթվում հ՚իրար։

Հարսն էն յանից տենում, նոթերը կիտում ա. «Ես կինն ըլլեմ, ընձի էնպես չսիրի, իրա քվորը սիրի. յավա՜շ, ես դրանց գլուխը մեկ օղիյա խաղամ»։

Թաքավորի տղեն գալիս ա, հացը ուտում, էլի էթում ա դիվանը։

Կնիկը վեր ա կենում՝ տան մեջ ինչքան շոր կա, հավաքում ա, կրակը տալիս ա էրում. գնում, տխուր նստում ա։

Իրիկունը մարդը գալի, մտնում ա քվոր սենյակը։— Բարի իրիկուն Հուլիդա քուրիկ ջան։

www.naregatsi.org

— Աստծու բարի՛ն, աղբեր ջան։

— Էդ ինչ մուխ ա, Հուլիդա խանում, մեր տունը։

— Չեմ գիտում, աղբեր ջան, ես տանից դուս չեմ ըլլում։

Աղբերն ա, մտնում ա իրա սենյակը, տեսնում ա կնիկը նիաթները քաշե նստել ա։

— Ա՛յ կնիկ, ընչի՞ ես ըդենց տխրե։

Ասում ա.— Բաս իրիկուն գաս քվորդ «բարի իրիկուն» ասես, առավոտ «բարի լիս» ասես. էդ էր քու սիրած քիրդ, շորերը վառեց։

— Ջայնամ թե վառեց, շորերը ղուրբան ըլլին իմ քվոր. կնի՛կ, դու խի՞ ես տրտում, է՛ն ասա։

Կնիկը մտքի մեջ ասեց. «էս էլ չէլավ, մի ուրիշ բան անեմ»։

Տեղերը քըցեցին, քնեցին. գշերը վե կացավ կնիկը, իրա էրեխին մորթեց, թաքուն դանակը տարավ դրեց Հուլիդա խանըմի ջեպը։ Տղեն էր, լիսը բացվեց, վե կացավ, լվացվեց, գնաց Հուլիդա խանըմի մոտ, բարև տվեց, բարև առեց. փաթըթվան իրար շլնքով։

Կնիկն որ էս տեհավ, սիրտը ճաքեց, սկսեց լալ, իրա գըլխին, իրա ոտներին տալ։

Ծառեքը լսեցին, էկան թափեցին նեքսև։

Թաքուհին հարա՛յ քցեց.— Ա՛յ հա՛յ, թաքավորի տղին կանչեք գա։

Տղեն էկավ, տեհավ՝ կնիկը լաց-շիվար.— Դու էլ ըլնես, քու քիրն էլ ըլլի։

— Ի՞նչ ա պատահե, կնի՛կ։

— Էլ ինչ պըտի պատահի, էրեկ շորերը կրակեց՝ ձեն չտվեցիր, էսօր էլ էրեխես ա մորթե։

— Խի՛ իմ քվոր սիրտը քա՞ր ա՝ գա իմ էրեխին մորթե։

— Ըդենց էս անըմ, որ չես հավատում. արնոտ դանակը ում ջեպից դուս էկավ՝ նա ա իմ էրեխին մորթե։

Վե կացավ, կնկա հետ գնաց, մտավ քվոր օթախը։

— Բարև քե՛զ, Հուլիդա խանումս։

— Աստըծու բարին, աղբեր ջա՛ն։

— Իմ էրեխին խի՞ ես մորթե դու, Հուլիդա։

— Աղբեր ջան, ի՞նչ էրեխա։

— Բա էս ինչ ա ասում. «էրեխին մորթել ա»։

7—2573

www.naregatsi.org

— Աղբեր ջա՛ն, աստված ունեմ, խաբար չունեմ, սուտ ա։

— Հա՜, սուտ ա՞, բե՛ ջեպերդ տենամ։

Ջեպերից արնոտ դանակը հանում են։

Դանակը վեր ա ունում աղբերը, գնում, նստում դիվան. սինոդապետներին կանչում ա. կանչում են ախչկան էլ. թե.— Իմ քիրը իմ էրեխին մորթել ա, պետք ա քյալլա անել։

Քիրը տենում ա իլաճ չի ըլլում.— Աղբեր ջա՛ն, մի բոդնոց նուշ բեր ըստե, դիր սեղանի վրեն։

Մի բոդնոց նուշ բերում, դնում են սեղանի վրեն, ասում ա. — Աղբեր ջա՛ն, նուշը սեղանին կանանչի, աստված ունեմ, խաբար չունեմ։

Իրեք անգամ ասում ա.— Աղբեր ջա՛ն, նուշը սեղանին կանանչի...

Որ իրեք անգամ ասում ա, նուշը սեղանին կանանչում ա։

Կնիկը ասում ա.— Չէ՛, սեհրբազ ա, իմ էրեխի արինը կուզեմ ես։

Թաքավորը բերեց քվոր էրկու ձեռքը արմընկներից կտրեց. տվեցին համբալի շալակ, ասեցին.

— Տար ֆլան մեշեն քցա՛, էթա, ջին-ջանավար ուտի։

Տղեն էր, իրա քվոր էդ էրկու կռները փաթըթեց բանբակի մեջ, տարավ իրա ղութին պահեց։

Էդ համբալն էլ տարավ ախչկան մեշի մեջ թողեց։

Էդ ախչիկն էլ, լաց ըլլելով, մղկտալով ընկավ էդ մեշի մեջը, գնալով գնաց։

Շատ քիչ աստված գիտա՝ դուս էկավ մի ուրիշ տերությյան մեջ. գնաց մի ջաղացպանի փուշտի պատահեց։

Ասեց.— Մերկ-ուրյան եմ, մոնց մարդոց մոտ էթամ։

Մտավ ջաղացի ջրտունը։

Գշերվա մի վախտը փորսող-փորսող դուս էկավ. էդտեղ մի բոստան կար, մտավ էդ բոստանը, սկսեց կրծել ձմերուկ թե եմիշ, սուված էր։

Առավոտ բոստանչին վեր ա կենում, մտնում տենում ա եմիշները կրծած. «Ա՛յ հա՜յ,— ասում ա,— էս ի՞նչ ա պատահե իմ բոստանի մեջ, կրծում ա»։

Մի գշեր, էրկու գշեր բուսուն ա պահում, չի կարում բռնի. գնում ա, թաքավորի տղին ասում.

www.naregatsi.org

— Թաքավորի տղա՛, քու բոստանի մեջ ջանավար ա փեյ-
տա էկե, էս էրկու, իրեք գշեր ա, ղարավուլ եմ կաղնում, չեմ
կարում բռնի։

Թաքավորի տղեն էրկու ղարավուլով գալիս ա. գշերվա մի
վախտը տենում ա խշխշոց ընկավ բոստանի մեջ, թվանքը դնեմ
արավ դրան. էդ ախչիկը ձեն ա տալի թե.

— Իսան ե՛մ, վիրև աստված, ներքև դու, ինձ մի տվեք՝
ախչիկ եմ մերկ-ուրյան, մի ձեռք շոր մի կնկա հետ ուղար-
կեք, դա՛։

Մի ձեռք շոր ուղարկում են էդ ախչկա մոտ։

Գալիս, տենում ա մի ախչիկ, ի՞նչ ախչիկ՝ շուտես, չխմես,
ըդրա մահ ջամալին թամաշա անես, էրկու թեր չկա։

Շորերը հագցընում ա, Թաքավորի տղեն գալիս ա մոտը։

Ախչկան տենալուն պես խելքը գլխիցը էթում ա. ասում ա.

— Ինս ես, ջինս ես։

Ասում ա.— Իսան եմ, այսինչ քաղաքի միջիցն եմ։

— Թևերդ ի՞նչ ա էլե, ո՞վ ա կտրե։

— Խորթ մերս կտրեց. տվեց դուս արեց։

Թաքավորի տղեն ա, տենում ա սֆաթը, ասում ա.

— Ախչի՛, աստված քե ղսմաթ ա ղրկե, քու հունարը, շնորհ-
քը ի՞նչ ա, որ ես քեզ առնեմ։

— Թաքավորի տղա, թեեր չունեմ որ իմ շնորհքը ցույց տամ,
ես աստծու հրամանքով տարին լրանալուն, ոսկե քաքուլ, ոսկե
ճկուտ ախչիկ ու տղա կրերեմ։

Վե ունում դուզ բերում ա պալատը։— Մայրի՛կ,— ասում
ա,— էս ախչիկ ես պրտի առնեմ, իմ ճակատիս գրած ա։

— Ա՛յ որդի, մեզ կնախատեն, առանց ձեռներ ա, կասեն.
«Թաքավորի տղեն գնաց, սախաթ ախչիկ առավ»։

— Ա՛յ մեր, խոսալն ավելորդ ա, ինչ ուզում են՝ թող ասեն.
ղսմաթն էկել ա, պրտի առնեմ։

Օխտը գշեր, օխտը ցերեկ հարսանիք արին, պրծան։

Մի ժուկ ժամանակ մնաց, ուրիշ Թաքավոր էկավ դրա վրա
կռիվ. տղեն էլ իրան պատրաստություն տեհավ, որ պրտի գնա
կռիվ։ Գնաց մոր մոտ.

— Մայրիկ ջա՛ն, ես էթում եմ կռիվ. ամանաթ-ամանաթ քե

www.naregatsi.org

իմ Հուլիդա խանումը մինչև իմ հետ գալը. ազատվելուց էլ ինձ մի նամակ գրես, աչքալիսեք կըղրկես։

Թաքավորի տղեն գնաց կռիվ։

Մերը Հուլիդա խանումին էնքան էր սիրում, էս աչքիցը էն աչքը չէր փոխում։

Էկավ, ժամանակը լրացավ, ազատվեց, էրկու տղա բերեց՝ ոսկեքաքուլ, ոսկե ճկուտ։

Ըտե թաքուհին ուրախացավ, նամակ գրեց. «Աչքդ լի՛ս, թաքավորի ախչիկն ազատվեց, էրկու տղա բերեց ոսկի ճկուտ, ոսկի քաքուլ. քեզ էլ մեռնեմ քու էրեխեքին էլ»։

Նամակը առնում գալիս ա, գալիս ա Հուլիդա խանումի հոր պատի տակով անց ա կենում. հարսը տենում, կանչում ա.— Ի՞նչ մարդ ես։

— Ֆլան թաքավորի մարդն եմ, խանումս ազատվել ա, գնում եմ աղիս աչքալիսեք տամ։

— Խանումդ ո՞վ ա։

— Իմ խանումը ձեռներ չունի։

Ըստե հարսը մատը կծում ա.— Կըլնի-չըլի Հուլիդան կըլնի։

Կանչըմ ա նեքսև, ըդրան լավ պատիվ ա տալի, գինովացնըմ ա։ Վեր ա կենըմ, փափախի ծալից նամակը հանում ա, բաց ա անըմ, կարդում ա, որ Հուլիդան ա. «Միսդ ուտեմ, ոսկորդ թողեմ, դու հալա սաղ ես»։

Նամակը բռնում փոխում ա, գրում. «Ոչ դու ըլլեիր, ոչ քու բերած ախչիկը, թևերը, կռնեերը ֆոտել ա. ֆոտը ընկե պալատի մեջը. ազատվել, բերել ա էրկու շան թուլա, գետինը մտնեք դրանից լավ ա»։ Փակեթը դնում ա տեղը։

Մարդը առավոտը վեր ա կենըմ, նստըմ ձին, էթըմ։

Շատ ու քիչ աստված գիտա, հասնըմ ա թաքավորին. տանըմ ա, նամակը տալիս թաքավորին։ Թաքավորը բաց ա անըմ, կարդըմ, գրըմ ա. «Մայրիկ ջա՛ն, ամանաթ-ամանաթ իմ Հուլիդա խանըմ քեզ. շան թուլա ա բերե, ինչ ա բերե՝ ինձ զաբուլ ա, թո մնա, ես գամ, տենամ»։

Նամակը տալիս ա, մարդը առնըմ, բերըմ ա. գալիս ա էլ էն տանը ղոնախ ա ըլլում, քնում ա։

Հարսը վեր ա կենըմ, նամակը առնըմ, կարդում ա. նամակ

www.naregatsi.org

փոխում, գրում ա. «Ոսկե քաքուլ ա, ոսկե ճկուտ ա. իրիկուն նամակը կհասնի, իրիկուն վերջացրեք. առավոտուն կհասնի առավոտուն վերջացրեք, ես Թիֆլիսից թավատ եմ բերում»։

Նամակը գնում ա տեղը, մարդը առնում ա ու գալի, բերում տալիս թաքավորի մորը։ Թաքավորի մերը կարդում, տեսնում ա. «Ոսկեքաքուլ, ոսկե ճկուտ ինչ կըլլի, կըլլի, նամակս իրիկուն հասնի՝ իրիկուն կորցրեք, առավոտ հասնի՝ առավոտ»։

Ըդտե մերը գլխին, շոքերին տալիս ա, ասըմ.— Մո՞նց անեմ, ես իմ նախշուն ձագերը մոնց կորցնեմ։

Հուլիդա խանումը իմանում ա, կանչում ա մորը.— Մայրիկ ջա՛ն, չըլլի իմ մարդին բան ա էլե, լաց ես ըլլըմ։

Բան չի խոսում, հանըմ ա, նամակը տալի Հուլիդա խանումին։ Բաց ա անըմ, կարդում. տեսնում ա գրածը։

— Մի լաց ըլլիր, մայրիկ ջան, ինչ որ իմ ճակատին գրվել ա, պըտի անեք։

— Բալա ջա՛ն,— ասըմ ա,— իմ ձեռները մո՞նց կէթա, որ ես ձեզ կորցնեմ։

Կբերի, էրեխանց մեկը մի խուրճինի, մեկը մի խուրճինի։ Թայ կդնի, կասի.

— Գնա՛, ես չեմ կարա ձեզ կորցնի։

Էդ ախչիկը վե կացավ, լաց ըլլելով, մղկտալով գնաց. ընկավ շոլ, յապան, գնաց։ Շատ քիչ աստված գիտա, գնաց մի հատ առվի պատահավ, թևեր չուներ որ քշտվեր մտներ, անց կենար. տվեց էնպես շորերով ջրի մեջ։

Ջուրը վարար էր. հանկարծ խուրճինը ընկավ ջուրը։

Էրեխեքը ինչ հնար արեց, չըկարեցավ բռնել. դուս էկավ առվից, լաց էլավ։— Աստվա՛ծ,— ասեց,— դու ամեն անճարներին հասնես, նրանց սատաղից էլ ինձ, էս ինչ ա իմ չարշարանքը։

Աստծո հրամանքով էրկու հատ ծիտ էկան.— Հուլիդա խանում մի լար, քու էրեխեքը բանդ են էլե ընտե, գնա վե կա՛լ։

Ծտերը ընկան աղաքը գնացին, տեհան, որ էրեխեքը բանդ են էլե, ի՞նչ, մի ցցի։ Մտավ, բերանով էդ խուրճինը քաշեց, հանեց դուս։

Ծտերն ասին.— Է՛ն մեշի մեջ մի ձեռք տներ կա, մարդ չկա մեջին, գնացեք ընտե, ձեզ համար աղոթեք։

Էրեխեքն առավ, շորերն պատառոտած, ճղճղած, թուչված,

www.naregatsi.org

աստված կանչելով գնաց. գնաց, տեհավ մի ձեռք տներ, մտան, մի առ ժամանակ ընտե մնացին։

Էրեխեքը թրփոշացան, լեզուները բացվեց։

Էդ կնիկն էր. իրիկուն առավոտ շոք կտար գետին, աստված կկանչեր.

— Աստվա՛ծ, էս ինչ ա իմ նեղությունը, գոնե իմ ձեռները լավ ըլլեր, իմ էրեխանց, իմ շորերը կկարկատեի։

Մեկ օր, էրկու օր, աստված դրա աղոթքը լսեց, ձեռքերը էկան. վե կացավ, ուրախ-ուրախ իրա շորերը կարեց, էրեխանց շորերը կարեց։

Ընդոնք թո ըստե մնան, խաբարը տանք Հուլիդա խանումի մարդից։

Մարդն էկավ կռվի տեղից. մտավ տուն.

— Մայրի՛կ,— ասեց, իմ Հուլիդա խանում ո՞ւր ա։

Ասեց.— Ա՛յ որդի, հալա դու ես խոսում՝ «ո՞ւր ա». չէ նամակում գրել էիր. «Իրիկունը կհասնի՝ իրիկունը կորցրա, առավոտը հասնի՝ առավոտը կորցրա, ես թավատ եմ բերրմ»։

— Մայրի՛կ, ինչ սպանել, ինչ բան, դու գրել էիր, թե շան թուլա ա բերած, ձեռքերը ֆոտել ա... ես էլ գրեցի. «Ինչ էլ ըլի դապուլ ա»։

— Ա՛յ որդի, էրկու հատ ոսկի քաքուլ, ոսկի ճկուտ տղա էր, էլ իմ ձեռքը չգնաց կորցնեի, իմ տանից դուս արի։

— Մայրի՛կ, ո՞ր յանով դուս արիր։

— Այսինչ յանով։

Վե կացավ, թվանքը առավ ձեռը, ընկավ ճանփա։

Թող գնա ճանփով, մենք խաբարը տանք Հուլիդա խանումի աղբորից։

Էդ հարսը ընենց ա արե, թաքավորությունն էլ ա վերջացրե մինչև անգամ։

Աղբերն էլ իրա կնկա ձեռից դարտավարամ էլե, ընկե շոլեր. «Էթա՛մ, իմ Հուլիդա խանում գթնեմ»։

Գալիս են, փեսա ու աղբեր[1] առնում են հ՚իրար։

Հուլիդա խանումի աղբերն ասում ա.— Ի՞նչ մարդ ես։

— Ես էլ չեմ գիտում ո՞ւր եմ գնում։

— Որ ըդենց ա,— ասում ա — արի՛, իրար հետ ընկեր ըլլենք

1 Բնագրում տպագրված է՝ աներ, կարծում ենք՝ վրիպակ է (Ս. Ղ.)։

www.naregatsi.org

Գնում, պատահում են էդ մեշի մեջ, որտե Հուլիդա խանումն ա։

Հուլիդա խանում տենում ա, մեկն իրա մարդն ա, մեկն իրա աղրերն ա. տեհավ որ էկան, նստեն չինարի ծառի տակ։ Էդ էրեխեքն էլ մեծացել են, թրփոշացել են. վազեցին, էկան առաջ, մեկին՝ «քեռի», մեկին՝ «հայրիկ» ասին։

Դրանք էդ էրեխեքանց վրա շատ ուրախացան, էնպես որ օրաները ճղրաց վրները։

Էրեխեք ասին.— Քեռի՛, հայրի՛կ, էթանք մեզ ղոնախ։

Վերցրեցին, տարան առանձին օթախ։

Հուլիդա խանում պատրաստություն տեհավ, էրեխեքանց ձեռքով կերակուր ուղարկեց, կերան, պառկան քնելու։

Հուլիդա խանում բերեց, մի դուժին արծաթե գդալ տվեց էրեխանց, ասեց.

— Ո՞րին որ քեռի եք ասում, նրա խուրճինի մեջ կդնեք։

Տարան, քցեցին աղրոր խուրճինի մեջ։

Լիսը բացվեց, վեր կացան, տեհան՝ ի՞նչ. Հուլիդա խանում բալկոնում ման ա գալի։ Մարդը ասեց.

— Կասես իմ կնոջը նմանում ա, բայց ձեռքեր ունի։

Աղրերն էլ ա՞խ քաշեց։

Ասեց էն մարդը.— Ինչո՞ւ ա՞խ քաշեցիր։

Ասեց.— Կարծես իմ քիրն ըլլի, բայց իմ քիրը թևեր չուներ։

Շնորհակալություն հայտնեցին, վեր էլան գնալու։

Մի խելի տեղ գնացին, ըղրանց կանչեց։

Դրանք էկան, գլուխ տվին Հուլիդա խանումին ու կաղնեցին։

Հուլիդա խանում ասեց.

— Ես ձեզ լավություն արեցի, ղոնախ արեցի, դու իմ էրծաթ գդալները գողացար։

Ասեցին.— Խանո՛ւմ, մենք խաբար չունենք. աստվա՞ծ, երկի՞նք, գետի՞նք, մենք խաբար չունենք։

Ասեց.— Պետք ա ձեր ջեպերը, ձեր խուրճինները ման գամ։

Ման էկավ, աղրոր խուրճինի մեջ գթավ, ասեց.

— Բա՛ ասում եք՝ չենք գողացե, էս որտիան դուս էկավ։

Ասեց.— Աստված վկա՛, որ ես խաբարություն չունեմ։

Ասեց.— Որ խաբարություն չունես, այսինչ թաքավորին մի հարս կար՝ էրեխեն մորթել էր, դանակը դրել էր Հուլիդայի ջեպը.

www.naregatsi.org

Հուլիդան նուշ բերել տվեց, աստծո հրամանքով նուշը կանանչեց, ասեց. «Աղբեր, աստված ունեմ, խաբար չունեմ»։ Աղբերը ո՞նց չհավատաց, ձեռները կտրեց, սուրկուն արեց տանից մի լաշառ կնկա պատճառով։— Ասեց.— Ես քու քիրը՝ Հուլիդա խանումն եմ, էս էլ իմ մարդն ա։

Նոր էնտեղ փաթըթվան իրար, ուրախացե՛ք, որ ուրախացան։

Աղբերն ասեց.— Ա՛յ քիր, քու ձեռներն մինչև հիմա ես պահել եմ։

Ասեց.— Աղբեր ջա՛ն, իմ ձեռները աստված հասցրեց ընձի։

Հանեց նամակը, քցեց աղբոր աղաքը, ասեց.— Էս էլ քու կնկա ձեռագիրն ա, որ իմ մարդի նամակը փոխել էր, ըսենց գրել ա։

Վե կացան, ուրախ-ուրախ գնացին մարդի տունը։

Աղբերն ասեց.— Հուլիդա խանում ջա՛ն, ես պըտի էթամ, կնկանս մանր-մանր կոտորեմ։

Քիրն ասեց.— Աղբեր ջա՛ն, մի՛ գնա, թող նրա պատիժը աստված տա։

Էդտեղ մնացին քեֆ արին։

Աստվածանից իրեք խնձոր իջավ։

www.naregatsi.org

7. ՀՈՐ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ

Կար ժամանակով մի քաղքում մի դուքանտար, երևելի մարդ։ Էդ մարդին մի հատ տղա ուներ, էդ տղին կանչեց, ասեց.

— Տղա՛, արի՛, իմ մահը մոտ ա, արի քեզ խրատ տամ, ա՛յ որդի,— ասեց,— հոր խրատ բռնողը մաղրուն չի մնա։ Առաջին խրատս էն ա, որ ժամը տան՝ ինչ բան ունենաս կթողես կէթաս քու ժամը. մեկ էլ՝ ինչ տեղ ըլում ա, ըլի, որտեղ մթնի՝ էնտեղ կմնաս։ Վերջն էլ՝ ինչ ջուր կտեսնաս, առանց վալատի անց չես կենա։

Մի ժամանակ մնաց, հերը մեռավ։ Տղեն էկավ, իրա դուքանը նստեց, մտիկ արեց տեհավ, որ իրա ընկեր կողքի դուքանչիքը պատրաստություն են տենում, որ էթան Թիֆլիզ։ Գնաց, տղեքին հարցրեց.

— Էդ ո՞ւր եք գնում։

Ասեցին.— Էթում ենք Թիֆլիզ ապրանք բերելու։

Ասեց.— Ընձի էլ կտանե՞ք, ձեզ հետ դամ։

Ասեցին.— Խի՞ չենք տանի, քու փողովը կգաս, մեր վրա ծանրություն չի, պատրաստվի, որ առավոտը գշերով դուս ենք գալի։

www.naregatsi.org

Դուս էկան ընկան ճանապարհ. գնացին, գնացին, հասան Թիֆլիզ։ Առուտուրն արեցին, իրանց բեռները բեռնեցին, ընկան ճանապարհ։ Իրիկվա զանկերը քաշեցին, էդ տղեն իրա ընկերտանցը ասեց.

— Տղե՛ք, կաղնեք, բան եմ ասում։

Ասեցին.— Ի՞նչ ես ասում։

Ասեց.— Իրիկվա զանկերը քաշեցին, էթանք ժամ ու ժամուց դուս գա՛նք, բեռները քշենք էթանք։

Ընկերտանքը ասեցին.— Հո գիժ չե՛ս, շարի էթանք ժամ, գանք, մեկ փոշտ ճանապարհ կէթանք։

Էդ տղեն ասեց.— Իմ հոր խրատը չեմ կորցնի։

Ընկերտանքը բեռները քշեցին, գնացին. էդ իրա բեռները կաղնացրեց, գնաց ժամ, ժամիցը դուս էկավ, իրա բեռները նոր քշեց, էկավ էրկու օր, անճախ հասավ իրանց գետան ղրաղը։ Տեհավ՝ իրան ընկերտանքը կեսը ըսդին ա, կեսը ընդին ա, հարցրեց.

Ասեցին.— Հողը էկավ մեր գլխին, ընկորտանցից ո՛րը ջուր տարավ, որը հեղդվեցավ, որի բեռները տարավ։

— Էնենց մարդ չկար ձեզի անց կացներ։

Ասեցին.—Ո՞վ ա տվե ընենց մարդ, որ անցկացնե։

Իրա նոքարներին ասեց.— Բեռները վեր ածեք, ժաժ չգաք, շարի ես էթամ գեղ ու գամ։

Գնաց գեղը, հարցրեց.— Էս ջրին լավ վալատ կըլլեք, ո՞վ ա լավ լեղվոր, ինձ ասեք։

Ասեցին.— Ըստի մի տղա կա, լավ լեղվոր ա։

Ասեց.— Էն տղին կանչեք գա իմ մոտը։

Գնացին կանչեցին՝ էկավ, ասեց.

— Ախպե՛ր, ի՞նչ ես ասում։

Ասեց.— Էս ջրին մենք վալատ չենք, ի՞նչ ես ուզում որ էս ջուրը մեզ անցկացնես։

Ասեց.— Տեսնում ես, շատ մարդեր վնասվել ա, քսան մանեթ փող կառնեմ, կանցկացնեմ։

— Դե՛, արի՛,— ասեց,— քսան մանեթ կտամ, անցկացրա։

Էկան, գետան ղրաղը կաղնեցին։

Ասեց.— Շորերդ հանա՛, մտիր գետան միջը՝ գնա՛, արի՛, որ ճանփեն իմանանք, դենը անց կենանք։

www.naregatsi.org

Մտավ մեջը շորս անգամ գնաց էս ղրաղը, էն ղրաղը, ասեց,— Դե՛, բեռները քշեք, ճանապարհը գթա։

Բեռները քշեցին սալամաթ անց կացան էս էրեսը։

Տեհան մի մեծ բազիրկյան ըդի վեր ա էկե։ Էդ բազիրկյան բաշին էդ տղին կանչեց. գնաց ասեց.— Աղա՛, ի՞նչ պըտի ասես։

Ասեց.— Ըստե հազար մարդ վեր են էկե, մեկը քու խելքը չուներ։ Դու ո՞ըդուց ես։

Ասեց.— Ես էրեվանցի եմ, Վաղարշապատից։

Ասեց.— Ա՛յ որդի, ես էլ Գյանջեցի եմ, տենը՞մ ես իմ ապրանքը, քսան հազար մանեթի կըլլի. որդի՞, քո՛ւ ապրանքը քանի հազար մանեթի կըլլի։

Ասեց.— Իմը էրկու հազար մանեթի ա։

Ասեց.— Դու իմ աչքին դիր էկար, կուզե՞ս որ իմ քսան հազար մանեթի ապրանքը քու էրկու հազար մանեթի ապրանքի հետ դնեմ, ընկեր անեմ քեզ։ Ես իմ մայեն վեր կալեմ, դու քու մայեն, ինչ որ դատենք, հալալ կիսենք։

— Աղա՛, որ ըդենց անես, ես շատ շնորհակալ կըլլեմ քեզանից։

Լեղվորին ասեցին.— Արի՛, մեր բեռները անցկացրա էն դիհը։

Ասեց.— Աղա՛, քսան մանեթ բարըշել եմ՝ անցկացնեմ էն դիհը։ Հըմի էն գնով չեմ անցկացնի, տենըմ ես, որ արին ա բերըմ ջուրը։

Ասեց.— Որդի՛, անցկացրա, մի զատ էլ ավել կտանք։

Բռնեց, ամենն էլ սալամաթ անցկացրեց էն էրեսը։

— Քսան մանեթ բարիշել են,— ասեց,— ա՛ռ քե եռեսուն մանեթ։

Ասեց.— Շատ շնորհակալ եմ, բարի ճանապարհ ձեզ։

Գնացին, դուս էկան Գյանջվա քաղաքի ղրաղը։ Էնտեղ մի քար կար, անունը Նալլեթ տաշի[1] էր, բեռները էն քարի մոտ վեր քցեցին։

Բազիրկյան բաշին մի հատ թուխտ գրեց, ասեց.

— Կտանես իմ տունը, թուխտը կտաս իմ կնկան, իմ կնիկը կկարդա, դուքանի բանալիները կտա քեզ, կգաս դուքանը բաց կանես, մեջը կսրբես, նստես ընտե, շարի ես կգամ։

---

[1] Անիծյալ քար (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Թուխտը վե կալավ ու գնաց, հարցրեց բազիրկյան բաշու տունը, գթավ, թուխտը տվեց բազրկյան բաշու կնկանը, կնիկը կարդաց, ասեց.

— Ո՛րտե վեր ա էկե։

Ասեց.— Քաղաքի ղրաղը։

Էն սրհաթին էն կնկա աչք ընկավ էդ տղին։ Բանալիքները տվեց տղին ու ձեռները բռնեց հուփ տվեց, ասեց.

— Ա՛յ տղա, դու տղամարդ չե՞ս։

Ասեց.— Ի՞նչ տղամարդ։

Ասեց.— Ես ինչ որ ասեմ, դու ինձ լսես՝ ես քեզ լավ կպահեմ։ Քու աղեն էթում ա՝ էրկու տարով, իրեք տարով չի գալի, ես քեզ իմ ծոցի մեջը կպահեմ։

— Չէ՛, խանում, թող տո՛ւ էթամ, հըմի աղեն կգա։

Ասեց.— Ա՛յ տղա, ի՞նչ վռազ էթում ես, ինչ որ ասեցի, դու բան չհասկացար։

Ասեց.— Քու ասուքունները ամեն ես հասկացա, էդ բանի տերը չեմ։

— Ո՛ր տերը չես, կորի՛, գնա՛։

Էդ տղեն էկավ, դուքանները հարցրեց՝ գթավ, դռները բաց արեց, ավելը վե կալավ, թամուզ սրբեց, ջուր բերեց, ջրջրանեց։

Տեհավ աղեն էկավ, ասեց.— Զորանա՛ս, լավ ես արե։

Ապրանքը քաշեցին նեքսև, պրծան։

Ասեց.— Ա՛յ տղա, դու առուտուր արա, ես էթամ, մի տուն դիպչեմ։

Գնաց տուն։ Կնկա հետ ձեռ բռնեց, բարևեց ու նստավ։

Կերան, խմեցին, քեֆ արին։

Էդ տղեն սկսեց առուտուրը. սաղ քաղաքը ըդրա վրա թեքվավ, մի երեք ամիս մնաց։

Բազրկյանի կնիկը ասեց.— Էն ինչ տղա ա՝ դուքանը ղըրել ես։

Ասեց.— Էրևանցի ա, ընկեր եմ արել իմ հետ։

Ասեց.— Խի՞ չես ղրկում տուն, տունը ճանաչի, էթա, դա։

Գնաց դուքանը, տղին ասեց.— Գնա՛, տանը հաց կեր էս օր։

Տղեն էկավ տուն, տեհավ խանումը մի լավ պատրաստություն ա տեհե։

— Դե,— ասեց,— բարև ես էկե, հա՛զար բարև, ըտեղ նստի։

www.naregatsi.org

Նստացրեց ու հացը քցեց, կերակուլ քաշեց, գինի դրեց. կերան ու խմեցին, քեֆները լավացավ։

Կնիկն ասեց.— Ա՛յ տղա, ես քե հետ պըտի նստեմ ու կաղնեմ. իմը դու ես, ես քոնն եմ։

Տղեն ասեց.— Անկարելի՛ ա, չի ըլի՝ քե պես հազարն ըլի, ինձ պետքը չէ։

Ասեց.— Իմ ձեռից չես պրծնի, ո՞ւր պըտի էթաս ըսօր դու։

Ասեց.— Մի կտոր հաց տվեցիր, պըտի հարամե՛ս իմ վրա։

Ասեց.— Որ ըդենց ա, ափսոս ա հացը ուտես, դե վեր կալ գնա՛։ Դե յալլա՞։

Տղեն վե կացավ, գնաց դուքանը։

Բաղրկյանը հարցրեց.— Ա՛յ որդի, հաց կերա՞ր։

Ասեց.— Շատ շնորհակալ եմ, օջաղդ հաստա՛տ ըլի։

— Դե՛,— ասեց,— նստի դուքանը, ես էլ էթամ հաց ուտեմ։

Բաղրկյան էկավ տուն, ասեց.— Ա՛յ կնիկ, հաց բեր։

Կնիկը հաց բերեց, քցեց աղաքը. տեհավ կնկա նոթերը կիտած ա, ասեց.— Ա՛յ կնիկ, քեզ ի՞նչ ա էլե՝ նոթերդ կիտել ես։

Ասեց.— Չի կիտեմ՝ բա ի՛նչ անեմ, դուն էլ գնացել մարդ ես գտե, քեզ ընկեր ես արե։

Ասեց.— Ի՞նչ կա, էդ լավ մարդ ա։

Ասեց.— Ո՛նց լավ ա, գալու օրը ձեռներս բռնեց ու ճմռեց, ըս օր էլ էկավ, հաց դրեցի որ ուտեր, յախես բռներ ա հախ ու նհախ էս բանը պըտի ըլի, որ մեկ էլ էկել ա տունը, ի՛նչ օյին ասես, իմ գլուխը կհանի։

Բաղրկյանը ասեց.— Որ ըդենց ա, էթամ դուա հանեմ, էթա։

— Դուա հանես, իմ անըմը կըտա։

Ասեց.— Բա ի՞նչ անենք։

— Քեզ փոի դուքան ունես, փոնչուն թամպահ արա. «Գշերն ո՛ր էն տղին ղրկեմ, ի՞նչ վախտ որ էկավ, քցեք փուռը, թո վառի, վերջանա»։

Բաղրկյան բաշին գնաց փոնչուն, ասեց.— Փոնչի՛։

Ասեց.— Համմե, աղա՛։

Ասեց.— Գշերվա կիսին ո՛վ կուգա, կասի. «Բանը պատրաստ ա, ո՛ր աղեն ասել ա ձեզ»։ Հենց կբռնեք, քցեք փուռը, ո՛վ կըլի՝ կըլի։

www.naregatsi.org

Գնաց դուքանըմը նստեց, ասեց.— Ա՛յ տղա, կէթաս փուռը, կասես. «Աղեն ասըմ ա, էն բանը պատրաստ ա»։

Ասեց.— Շատ բարի՛, կէթա՛մ։

Աղեն գնաց տուն, կնիկն ասեց.— Թամպահ արի՞ր։

Ասեց.— Թամպահ արի։

Լսի դեմը վեր կացավ, ասեց.— Ետացել եմ, էթամ։

Գնաց, հասավ փռի դուռը, դուռը շինած էր. մի քար վեր կալավ, որ դուռը ծեծի, հենց ժամի զանկը քաշեցին. ուսուլով քարը վեր դրեց դռան աղաքը, ասեց. «Էթամ ժամը՝ դամ ու ասեմ»։— Հորը խրատը պահում ա։ Գնաց ժամ։

Բազրկյանի կնիկն էլ էթում էր ժամ. էկավ, փռի դռնովը անցկացավ ասեց.— «Փռնչուն հարցնեմ, տենամ կատարել ա իրիկվա խոսքը»։ Էկավ, մտավ փուռը, փռնչուն ասեց.— Իրիկվա ասած խոսքը կատարե՞լ եք։

Փռնչին ասեց.— Մոտ արի՛, տենամ ի՞նչ ես ասըմ։

Մոտ գնաց, էլ չխոսացրեց. բռնեցին, կոխեցին փուռը։

Տղեն ժամիցը դուս էկավ, էկավ փռնչու մոտը, ասեց.— Աղի խոսքը կատարել ե՞ք։

Ասեց.— Գնա՛, արխային կաց, կատարեցի՛նք։

Տղեն ետ դառավ, էկավ դուքանը բաց արեց, նստավ։

Աղեն վեր կացավ, էկավ դուքանը։ Էկավ, տեհավ տղեն դուքանըմը նստած ա, ասեց.— Ա՛յ տղա, ախր ես քե բան թամպահ արի. գնացի՞ր փռնչու մոտը։

Ասեց.— Գնացի, ասեցի փռնչուն. «Աղի՛, թամպահ արած բանը կատարե՞լ եք». Փռնչին ասեց. «Կատարել ենք»։

Էն աղեն վեր կացավ, իրա մեղքն ասեց. «Բա՛ լիրբը տղիցը թեզ ա գնացել»։ Վեր կացավ, դպա տուն գնաց։ Տեհավ կնիկը տանը չի, գնաց դպա փուռը, փռնչուն ասեց.— Իմ ասածը կատարեցի՞ք։

Ասեց.— Կատարեցի՛նք։

Ասեց.— Ո՞վ էր, որ կատարեցիք։

Ասեց.— Քու կնիկդ էր։

Դառավ ետ, գնաց դրպա դուքանը։ Գնաց դուքանը, տղին ասեց.— Արի ըստեղ, արի դրուստն ասա, էրեկ որ գնացիր տուն, ինչ պատիվ առար։

Ասեց.—Պատվիցը շնորհակալ եմ, ամեն տեսակ բան էլ կար։

www.naregatsi.org

Ասեց.— Էդոնք թո մնա, կնկանս ի՞նչ ասեցիր։

Ասեց.— Աղա՛, ես բան չասեցի, ինչ որ ասեց, քու կնիկն ասեց։

Ասեց.— Ի՞նչ էր ասում։

— Ասեց. «Աղեդ կէթա՝ ամսով, էրկու ամսով չի գա, ես քունն եմ, դու իմն ես». ես անկաշ չարեցի, թողացի, վեր կացա. իմ վրա բարկացավ, ես էլ էկա դուքան։

Ասեց.— Որդի՛, որ ըդենց ա, իրա եղովը տապակվեց. արի հաշիվ անենք, քու հաշիվն ա՛ռ, աստված քու հետ, բարի ճանապարհ ըլլես, ես էլ դուքանները պըտի ծախեմ, էթամ ուրիշ երկիր։ Էդ տղեն իրա փայն առավ ու ընկավ ճանապար. էկավ, մի քաղաքի ղրաղ դուռ էկավ։ Արևը մտավ, ասեց.

— Բեռները վեր ածե՛ք։

Ասեց.— Աղա՛, խի վեր ածենք. քաղաքը մոտ ա, էթանք քաղաքը։

Ասեց.— Անկարելի ա, իմ հերը խրատ ա տվե. «Ո՛րտե արևը մտնի, ընտե պըտի մնաս»։ Բեռները վեր ածեցին, կշտին պառկան, ինքը գշերը բեռների բոլորը պտըտում էր։ Տեհավ մի մարդ ֆանարը ձեռին գալիս էր. էկավ, իրա կողքով անցկացավ, դպա գերեզմանները գնաց. տեհավ շըլակին մի զատ կա, քամակից յավա՛շ-յավա՛շ գնաց. հեռու կաղնավ, ըդրան թամաշա արեց։ Շլակի բանը վեր դրեց. մի քար շուռ տվեց, տեղը փորեց, էդ բանը դրեց տեղը։ Ֆողը վրա տվեց ու թողեց գնաց։

Ասեց.— Էս ապրանք ա՛, բերեցին, ըստե պահեցին, գնացին, էթամ՝ հանեմ։

Ֆողը ետ տվեց ու հանեց, տեհավ մի հատ աղջիկ ա, հոգին տրըփում ա, խանչալը իրեք, չորս տեղ տվել են։ Վեր կալավ, բերեց իրա բեռների մոտը. «Ո՛ր մեռնի, կտանեմ ֆորեմ».— Ասեց։ Բերեց շոր փռեց տակն, պառկացրեց, մի շոր էլ քաշեց էրեսին։

Լիսը բացվեց, վե կացան թատարիք տենան, որ բեռները բարձեն. թամաշա արին մի հինգ հարուր ձիավոր, դահա շատ, քաղաքից դուռ էկան, քաղաքի ղրաղին տաս-տաս, քսան-քսան էլան, ցվըրվան դըպա հանդը, մի հինգ ձիավոր դուզ էկան քարվանի մոտը կաղնեցին, հարցրին.— Էս գշեր ըստե՞ղ իք։

Ասեցին.— Հա՛, ըստեղ ինք։

www.naregatsi.org

Ասեցին.— Թաքավորի աղջկան սպանել են, վե կալել տարե, բան ու ման չե՞ք տեհե ըստեղրանք։

Ասեցին.— Իրիկվորե ըստեղ ենք, բան չենք տեհե։

Էդ ձիավորները թողեցին գնացին։

Էդ տղեն ասեց.— Ինչ անեմ, թե էկան իմ կշտին գթան ըստրան, լեզու չունի, որ ասի, թե ինձ սպանող էս չի. ինձ կտանեն, կորցնեն։ Էսօր էլ կմնամ ըստի, թե մեռավ՝ կթաղեմ տեղը։

Էն գշերը մնաց, տեհավ, չէ՛, չի մեռնում. էն առավոտն էլ էն քաղաքը չմտավ, վեր կացավ, գնաց ուրիշ քաղաք, մի դուքան բռնեց, ապրանքը ածեց մեջը, էդ ախչկան տարավ պառկացրեց, ասեց.— Գողերը վրա են տվե, մեր հընկորը խանչալով յարալու են արե, ո՞վ կա սաղացնող։

Ասեցին.— Ըստե մի լավ հեքիմ կա։— Գնաց, հեքիմին գըթավ, բերեց դուքանը, հեքիմին ասեց.

— Խոստովանք պըտի պահես, էս ախչիկ ա։— Հեքիմը բաց արեց յարեքը, տեհավ։

Ասեց.— Ի՞նչ ուզես՝ կտամ, պըտի սաղացնես։

Հեքիմը սաղացրեց, ախչիկը բիրտեն աչքը բացեց, տեհավ, ահա, իրան կշտին հեքիմը ու մի տղա կա, ասեց.

— Ա՛յ տղա, դու ի՞նչ տղա ես։

Ասեց.— Ես բազրկյան եմ, էկա ձեր քաղաքի ղրաղը, դու պատահեցիր։

Ասեց.— Ես թաքավորի ախչիկն եմ. թաքավորը մի հատ վեզիր ուներ, դրան մի տղա ուներ, սարաֆութուն կաներ, կգար մեր ամարաթները, կգար իմ օթախը, իմ հետ կխոսար շարի կես գիշեր, կես գիշերին կէթար, ինձ խոսք կգցեր։ Մեկ օր էլ շատ ինձ զոռեց, ես ըդրա վրա բարկացա, ասեցի. «Առավոտը թաքավորին կասեմ, որ քո գլուխը կտրի», էդ խոսքին խանչալը հանեց ու ինձ տվեց, էլ չեմ իմացե, ի՞նչ ա էլե։

Ասեց.— Քեզ թաղեց, հանեցի բերեցի ըստե, սաղացրի։

Ախչիկը ասեց.— Բեռները բարձա, էթանք մեր քաղաք։

Բեռները բարձեցին, ընկան ճանապար, էկան իրանց քաղաքը։

Տարան ապրանքը վեր ածեցին իրանց դուքանի աղաքը, էկան էդ տղի տունը վեր էկան։

www.naregatsi.org

Ախչիան տասնէրկու հատ անգին քար ուներ, ալ մահուտի վրա կարած. հանեց, տղին շանց տվեց, ասեց.

— Էս քարերը տենում ես, դու գինը չես գիտա, ես գիտամ, հատը հազար մանեթ ա՛ժի։ Մի հատը վե՛ կալ տար, էն դուքանների կշտին մի հատ սարաֆ կա, ընդրա վրա ծախա, որ ասի. «Գինն ի՞նչ ա», ասա. «Հինգ հարուր մանեթ ա», էն կհարցնի. «էլ ունե՞ս», ասա. «Շատ ունեմ կշտիս, որ կուզես,— ասա,— արի՛ նշանց տամ»։ Վե՛ կալես, կբերես։

Իրիկունը սարաֆին վե՛ կալավ, բերեց տուն։

— Ախչի՛,— ասեց,— տղին բերել եմ, քարերը շանց տու, տենանք։

Բերեց, քարերը շանց տվեց, ասեց.— Մեկն որ ծախել ես, տասն մի հատ էլ կա։ Նստեք, հաց ուտենք, ետքը փողերը տուր, վեր կալ ու գնա։

Սարաֆը մտածեց, որ վեց հազար մանեթ ըսօր դատում ա, ուրախացավ. ասեց.

— Հաց չեմ ուտում, առեք փողերը՝ տվեք, ես էթում եմ մութն ա։

Ախչիկն էկավ, ասեց.— Հաց ա, կեր ու գնա։

Սարաֆը ասեց իրա միջին.— Կասես էն թաքավորի ախչիկը պըտի ըլի, որ սպանեցի, խոսալը, ժաժ գալը, ընդրա պես ա. մի քիչ նստեմ, խոսամ, վե՛ կենամ էթամ։

Էդ ախչիկը հաց քցեց, բերեց գինի դրեց. խմեցին, քեֆները մի քիչ լավացավ՝ էդ ախչիկը գնաց մի խանչալ հանեց, էկավ սարաֆի քամակին կաղնեց, մի խանչալ տվեց քամակիցը, սըրտիցը ծերը դուս էկավ։ Սարաֆը ընկավ ու մեռավ։

Տղեն ախչկան ասեց.— Խի՞ տվիր ըդրան։

Ասեց.— Իմ սպանողը էս էր, ես էլ իմ ինատը հանեցի, տղա՛,— ասեց,— ինձ որտիան հանեցիր, ըստրան էլ տանենք, ընտի թաղենք։ Մի փալասի մեջ կոլոլեցին ու վե՛ կալան, տարան, թաղեցին էնտեղ, որ ախչկան հանել էր։ Ետ դառան, էկան տուն։

Առավոտ լիսացավ, տղին ղրկեց մի ձեռք տղամարդի շոր բերի։

Գնաց վե՛ կալավ, բերեց։

Ախչիկը ասեց.— Ի՞նչ առարկա կա բազարումը։

Ասեց.— Վեզիրի տղա սարաֆին ման են գալի։

8—2573

www.naregatsi.org

Ասեց.— Գնա էրկու հատ ձի էլ բեր, նիլենք, էթանք, որ չըգան, նշանից գտնեն, մեզ կորցնեն։

Հեծան ու գնացին։

Ախչիկն ասեց.— Ա՛յ տղա, գի՞տաս, ուր պըտի էթանք։ էթանք Ստամբոլ, ընտե մի ժամանակ մնանք, էս առարկեն վերջանա, ետ դառնանք գանք։

Գնացին մի շոլ, յապանի տեղ վեր էկան, խուրճիններիցը հաց հանեցին, նստեցին, կերան։

Էդ ախչիկը նստավ ալ մահուտը լվաց, ասեց.— Ա՛յ տղա, ուշդ վրա պահա, ես էլ մի քիչ քնեմ։

Քնեց. տղեն թամաշա էր անըմ։

Տեհավ մի հատ ագռավ էկավ, էդ ալ մահըտի կշտին վեր էկավ, իմացավ միս էր, ի՛նչ էր, վե կալավ էդ ալ մահուտը, թռավ։ Տղեն տեհավ, որ տարավ մի դարի գլխին վեր դրեց. ձին նիլավ, ընկավ քամակը։ Գնաց, հասավ. էլի վե կալավ, թռավ, տարավ դահա հեռու. մեկ էլ գնաց, էլի ագռավ վե կալավ թռավ։ Մութն էլ ընկավ, կորցրեց ագռավին՝ ետ դառավ, ասեց։— էթամ ախչկան հասնեմ։

Էդ ախչիկը զարթնեց, տեհավ, ահա՛, կշտին մարդ չկա։

Ասեց.— Է՛յ բեհիթիպար տղա՛, էն նեղ տեղից ընձի ազատեց, իրա ամակին ափսոս չէկավ, էն քանի անգին քարի խաթեր վեր կալավ, ցնաց։

Էդ ախչիկը ձին նիլավ դպա Ստամբոլ։ Գնաց ծովի ղրաղը գյամին նստեց, գնաց Ստամբոլա մեջը։ Գնաց, թեթև ղայֆի դուքան դրեց, ասեց.— Բալքի էդ տղեն էրևա, ետ դառնանք դրպա մեր քաղաքը։

Տղեն էկավ, տեհավ ախչիկը չկա. ընկավ քաղաքները ման գալով, հարցնելով՝ չգթավ, ձին էլ ծախեց, կերավ, ասեց. «Փող չմնաց, Ստամբոլ էթամ»։

Մի մարդ ասեց.— Նոքար կըլլե՞ս։

Ասեց.— Կըլլեմ։

Ամիսը բարիշեցին տասը մանեթ։

Ամիսը թամամեց, ասեց.— Իմ տասը մանեթը տուր, ես էթամ։

Ասեց.— Դո՞ր ես էթում. մի ամիս էլ կաց, նո՛ր գնա։

www.naregatsi.org

— Անկարելի ա,— ասեց,— պրտի էթամ։

Ասեց.— Որ ըդենց ա, կացինը-սղոցը վե կալ, մի ծառ կա, կտրենք, նոր գնա։

Տղեն վե կալավ, գնաց ծառի տակը նստեց։

Տեհավ աղեն նստացավ, սկսեց կտրիլը։

Ծառը կտրվավ, վեր ընկավ։ Էդ ծառի գլխին մի ագռավի բուն կար. տեհավ ալ մահրտի վրա շարած անգին քարերը ըդրա միջին էր. ուրախացավ, վե կալավ դրեց ջեպը, ասեց.

— Ես ըսդրան ի ման գալի, գթա, հույս ունեմ ախչիկն էլ կգթնեմ։

Մեկ էլ տեհավ աղեն էլ էկավ, տեհավ ծառը կտրած։

Ասեց.— Զորանա՛ս, վեր առ քու փողն, բարի ճանապար։

Փողն առավ, ընկավ ճանապար, գնաց. գնաց, ծովի ղրաղը հասավ, նստավ գյամին, դուա էկավ Ստամբոլ. ման էկավ, գնաց մի ղայֆաճու դուքանում գթավ ախչկանը, ախչիկը ասեց.

— Բեհիթիպար, մենծ բան էր որ անգին քարերը վե կալար գնացիր, ինձ թողեցիր էնտեղ։

Տղեն նստավ, ինչ որ էլել էր, պատմեց, ջիպիցը անգին քարերը հանեց, տվեց ախչկան։

Ախչիկը ասեց.— Մի ժամանակ ըստե մնանք, նոր կէթանք մեր երկիրը։

Թաքավորը վեզիրին կանչեց.— Վեզի՛ր,— ասեց,— արի ըստե։ Վեզի՛ր, իմ ախչիկը կորավ՝ իսկի սալըղ տվող չէլավ, քու տղեն էլ կորավ՝ սալըղ տվող չէլավ. մենք չիմացանք, մեր դուշմանը ով էր։

Վեզիրն ասեց.— Մեղ չեն ասի, քուչեքում կասեն. դարվիշի գեյիմ մտնենք, էթանք ման գանք, հարցնենք։

Թաքավորն ու վեզիրը վեր կացան, մտան դարվիշի գեյիմ, ման էկան։ Գնացին աշխարքը ման էկան, որտե հարցրին՝ սալըղ տվող չէլավ։ Գնացին, դուա էկան Ստամբոլ. էդ ախչկա ղայֆի առաջովը անց էին կենում. ախչիկը տեհավ, ճանաչեց. ասեց. «Էս թաքավորն ա՝ իմ հերն ա, էս էլ վազիրն ա՝ սարաֆի հերն ա»։ Ձեն տվեց.

— Դարվիշ բարա, ո՞ւր եք էթում։

Ասեցին.— Էթալու տեղ չունենք, ման ենք գալի։

www.naregatsi.org

Ասեց.— Համեցեք ըստե՝ ղայֆա էլ կա, շայ էլ կա, նարկիլա էլ կա, ինչ որ ուզեք, կա։

Մտան նեքսև, տարավ ըդոնց տեղ տվեց, ըդոնց պատվեց։ Դարվիշն ասեց.— Կերակուլ էլ կարա՞ս պատրաստի։

Ասեց.— Էս սահաթը կպատրաստեմ։

Կերակուրը պատրաստեց ու քաշեց ըդոնց աղաքը։ Մութն էլ ընկավ։ Դուռը շինեցին, էկան չորսով նստան ու հաց կերան։

— Դարվիշ բաբա՛,— ասեց,— արխային կերեք ու ըստե քնեք։

Կերան ու պրծան, ախչիկն ասեց.— Դարվիշ բաբա՛, երկար գշեր ա, դու աշխարք ման եք էկե, մի բան ասեք, անկաչ անենք։

Ասեց.— Մենք բեզարած ենք, դուք ասեք։

Ասեց.— Ես մի թեթև բան գիտամ, ասե՛մ։

Սկսեց գլխիցը. մոնց որ էլել էր, ընենց պատմեց. ասեց.

— Դու թաքավոր ես, էս էլ քու վազիրն ա, ես էլ քու ախչիկն եմ, էս էլ ինձ պրծացնող տղեն ա։

Քնեցին. առավոտը վեր կացան, ընկան ճանապարհ, էկա՞ն, իրանց քաղաքը դուս էկան։

Էն վազիրին դուս արեց, ասեց.— Դու իմ դուշմանն ես զաթի, էն ախչիկն ու տղեն ինչդար իրար հետ ման են էկե, իրար հետ քվոր, ախպոր պես են էլե։

Թաքավորը ջխտին էլ կանչեց աղաքը, կաղնացրեց, ասեց.

— Որդի՛, իմ կորածը ո՛ր ես քթա, ըդրա պատճառը դու ես էլե, իմ ձեռով էս ախչիկն էլ տալիս եմ քեզ։

Նշան դրեց, օխտն օր հարսանիք արեց։

www.naregatsi.org

8. ՆՈԽՈՒՏԻ ՔԱՋԱԼ

Մի պառավ կնիկ կար, մի թոռ ուներ, էլ զատ չուներ. էդ թոռն էլ Քաչալ էր։ Էդ Քաչալին տարավ նոքար տվեց՝ չէլավ, թողաց փախավ. հորթարած տվեց՝ թողաց փախավ. ի՛նչ բանի տվեց՝ թողաց փախավ։

Պառավը ասեց.— Գրողը տանի քե՛զ, ի՛նչ բանի տալիս ենք՝ փախնում ես, մեր ճարը մո՞նց պըտի ըլլի։ Քեզ պըտի տանեմ մի հարուր մանեթի ծախեմ՝ բերեմ ուտեմ, չարի մեռնեմ. էլ իլաճ չկա։

Քաչալի թևիցը բռնեց տարավ բազար։

Ասեց.— Ծախում եմ էս մուսուպաթ Քաչալին. ինչ բանի տալիս եմ փախնում ա։

Ով էկավ, էրեսին մտիկ արեց, ասեց.— Էդ պահելու բան չի։

Սարումը քառասուն գող կար. գողերի մեկն էկել էր հաց առնելու. հացն առավ փռիցը, դրեց ղոլթուղը, էկավ որ պըտի էթար գպա սարը, էդ պառավի կշտին կաղնեց, ասեց.

— Պառա՛վ, ինչ Քաչալ ա՝ պահել ես։

Ասեց.— Էս իմ թոռն ա. գրողի տարածն ի՛նչ բանի տվեցի՝ չմտավ. հըմի բերել եմ, որ ծախեմ։

www.naregatsi.org

— Ի՞նչ ա գինը,— ասեց,— ես առնեմ, տանեմ, մեր ձիանը պահա։

Ասեց.— Հարուր մանեթ ա ըստրա գինը։

Հարուր մանեթ տվեց ու առավ։

Պառավն ասեց.— Գրո՛ղ տանի քեզ, դե գնա, ես քու էրեսիցը պրծա։

Էդ գողը Նոխուտի Քաչալին առավ, քցեց ձիու աղաքը, ասեց. — Դե՛, վազի, էթանք սարը դպա։— Տարավ սարը, իրանց գաղեն։

Հարամիբաշին դուս էկավ գաղիցը, ասեց.

— Խի՞ ետացար, մենք սոված մեռանք, հը՞։

— Հարուր մանեթ տվեցի մի պառավի, էս տղեն առա։

Հարամիբաշին տղին թամաշա արեց, ասեց.

— Ա՜յ հա՜յ, էս ի՞նչ մուսուպաթ Քաչալ ա, կորցրա. ափսոս քու հարուր մանեթը, ըստուց անպատճառ մեզ խաթա կգա, վեր կալ տար կորցրա՛։

Ասեց.— Մենք քառասուն ձիավոր ենք, սաղ երկիրը մեզանից վախում են, էս ի՞նչ ա, որ ըստուց խաթա գա. մի չափալախ տամ, կմեռնի, բերել եմ, որ մեր ձիանոցը եմ տա, ջրի, փեյինը թափի։

Ասեց.— Դու գիտաս։

— Դե՛,— ասեց,— թամաշա արեք, բազրկյան գալի՞ս ա։

Թամաշա արին, ասեցին.— Արևելքի կողմիցը մի շատ ծանտր բազրկյան ա գալի։

— Որ ծանտր ա, դե՛,— ասեց,— բիրադինով նիլեք ձիանը։

Ասեցին.— Քաչա՛լ, ըստի կաց, չանք մենք էթանք, գանք։

Ընդոնք գնացին ձորի միջով, որ պտրտեն, գան ընկնեն ճանփեն, աղաքները կտրեն։ Քաչալն քարերի վրով նիլավ, թամաշա արեց բազրկյաններին, ասեց.— Տենամ, ինչդար բազրկյան կան։

Գնաց ու մտավ բազրկյանի մեջ, ասեց.— Ձեր բազրկյանբաշին որն ա։

Ընդիան մեկն էկավ.— Հը՞, Քաչալ, ի՞նչ ես ասում։

Ասեց.— Հըմի քառասուն ձիավոր ձեզ վրա կտան. բեռները ըստի վեր ածեք, ժաժ մի դաք. մի թուր, մի ղալխան տվեք ինձ, մի ուրիշ աբա էլ տվեք, հաքնեմ, որ ինձ չճանաչեն։

www.naregatsi.org

Աբեն տվին, մի թուր ու զալխան էլ տվին, կապեց վրին, զալխանն էլ առավ ձեռը, ասեց.

— Էկել եմ ձեզ քոմակ. ընձի հարուր մանեթ փող տվեք, որ ձեզ ընդոնց ձեռիցն ազատեմ։

Բազրկյանը հանեց հարուր մանեթ, ալպեալը համրեց, Քաչալը դրեց ծոցը։

Ասեց.— Էլ չվախենաք, ղայիմ կաղնեք։

Էդ քառասուն ձիավորը բազրկյանների վրա տվեց։ Քաչալը էկավ մեյդան կռիվ. որի ոտը կոտրեց, որի թևը կոտրեց, որի ձիունը տվեց։

Տասնէրկու սահաթ կռվեցին, մի զատ չկարացին տանել։

Հարամիրաշին ասեց.— Կասես էս մեր Նոխուտի Քաչալն ըլի. ըդրա սրֆաթին աւ

Հարամիքը ետ դառան դըպա իրանց գաղեն։

Քաչալն ասեց.— Բազրկյան[1] բաշի՛, էս քու թուրը, էս քու զալխանը, էս էլ քու աբեն, բառցեք ու գնացեք. ես էթում եմ։

Քաչալն սարիցը վեր էկավ, մտավ գաղեն։

Մեկ էլ տեհավ, հըրես հարամիք բիրատի իրարու ետև էկան։

Հարամիրաշին թուրը քաշեց, որ տա սպանի Քաչալին, ասեց.— Քյոփոդլի մուսուպաթ Քաչալ, քեզ պես բետ սրֆաթ մի քաչալ էլ ընտի կար, չկարացինք մի զատ բերել։

Մեկել հարամիք ասեցին.— Էս ի՞նչ ա, ձեռիցը ինչ կգա, որ բատրան սպանում ես։

Ասեց.— Բետ սրֆաթ ա. ըստրան էրեսը տեսնողի բանը չհաջողվի։

Ձիանոցիցը վեր էկան, թամքերը վե կալավ Քաչալը, թիմարեց, քրտինքները սրբեց, կապեց, դարման, գարի տվեց։

Հարամիրաշին ասեց.— Տղե՛ք, ո՞րը պըտի էթա մեզ համար հաց բերի։

Հարամու մեկը ասեց.— Բիրատի էլ յարալու ենք. էթանք բազարը կրոնվենք. Քաչալին ղրկենք, էթա հաց բերի։

Հարամիրաշին ասեց.— Քաչալ ջա՛ն, արի ըստե մի տենամ։

Քաչալը ղշի ղայտա վազեց, աղաքը կաղնեց, ասեց.

---

[1] Բնագրում եղել է՝ հարամի, հավանաբար տպագրական վրիպակ է. ուղղել ենք (Ծ. Կ.)։

www.naregatsi.org

— Աղա ջա՛ն, հրամաե։

Ասեց.— Ա՛ռ տասը մանեթ, էս սահաթը հաց կառնես ու կգաս։

Քաչալն մի մեշոք վե կալավ, թռավ, գնաց դրպա բազարը, տասը մանեթի հաց առավ։ Ասեց.— Մե էթամ իմ տատին տեսնամ, մե էրկու հաց էլ տամ, տատս ուտի։

Գնաց, մտավ տուն, ասեց.— Բա՛րև, տատի ջա՛ն։

— Վա՛յ բարով, Քաչալ ջան, դու բարո՛վ էկար։

Ասեց.— Տատի՛, հո՛ սոված չե՞ս։

Ասեց.— Չէ՛, հարուր մանեթից էրկու մանեթ եմ խարճե։

— Ա՛ռ, տատի, հարուր մանեթ էլ բերել եմ՝ էս էլ դիր ըդրա վրա։

Ասեց.— Գլխիդ ղուրբան Քաչալ ջա՛ն, բանդ խո զոռ չի՞. էդ որտիա՞ն բերեցիր։

Ասեց.— Դարտ մի աներ, շա՞տ կբերեմ, մերը մեռնի Քաչալին, ընդոնք ի՛նչ են, որ ինձ նեղություն տան։

Ասեց.— Դե՛, տատի, ետացա, մնա՛ս բարին։

Ասեց.— Տատին քե ղուրբան, գնա՛։

Էրկու էրեսն էլ պաչեց, ճանապարհ դրեց։

Քաղաքից դուս ընկավ. հենց արեը մտավ, մութն ընկավ, ճանփեն կորցրեց, գնաց դպա գերեզմանները։

Մտավ գերեզմանատունը տաս-տասնէրկու ղուպուր դրած էր, մտավ մեջը, ղուպուրի տակը պառկեց։

Գշերվա կեսը անց էր կացել, տեհավ մի մարդ մտավ ներս. մի մարդ, որ ջանավարի պես, ազրայիլի պես, ասպասը վրեն, ամեն բանը թաքմիլ։

Էկավ, մեռելները բաց արեց, թամաշա արեց, ասեց. «էս մեկին տեր ունենա, կըսաղանա»։

Բիրա՞տի ըդենց վարավուրդ արեց, դուս էկավ, որ էթա։

Քաչալն ասեց.— Էս էլ տղամարդկություն չի. էն գա, թամաշա անի, ես ըստի պառկած մնա՞մ։

Վազեց, ասեց.— Ո՞ւր ես էթում. դու Նոխուտի Քաչալի անուն չե՞ս լսե։

Հասավ բռնեց։

Իրար հեղդեցին, էնդար հեղդեցին, շարի լիսը բացվեց։ Ուղում ա փախչի, Քաչալը չի թողնում։

www.naregatsi.org

Անճախ փախավ, պրծավ, Քաշալ մաշիկը խլեց։ Մաշիկը գրեց ծոցն ու հացն էլ վեր կալավ, գնաց։ Գնաց, հասավ հարամիքանցը, մտավ զաղեն։

Հարամիրաշին ասեց.— Մուսուպաթ Քաշալ, մեզ սոված կոտորեցիր, էս խի՞ եատացար։

Ասեց.— Աղա՛, ձեր բասն ին անըմ բաղրկյանները, որ գային բռնեին ձեզ. տեսա բան չէլավ, էկա։

Ասեց.— Ըսենց թեզ էկար, դշերը որտի՞ իր բա։

Ասեց.— Մնացի գերեզմանատանը։

— Մուսուպաթ Քաշալ, հարուր ձիավոր սիրտ չի անի ընտե մտնի, դու մո՞նց մըտար։ Մի ձի նիլ, առ տաս մանեթ, գնա հաց առ, արի, ըստիան քոշենք էթանք. թեզ պըտի դաս, հա՞։

Քաշալն ձին նիլավ, դպա քաղաքը կրակի պես ա գալի։ Էկավ իրանց դռանը կաղնեց.— Տատի՛, տատի՛,— ձեն տվեց։

Դուս էկավ, ասեց.— Ի՞նչ ա, Քաշալ ջա՛ն։

Ասեց.— Տատի՛, տանը կաց, տեղ չէթաս. էս մաշիկը տանեմ, ծախեմ, փողը բերեմ դնեմ տունը, էթամ։

— Վա՜յ, քաշկա թայն էլ բերեիր, ջուխտ ըլլեր, կհագնեի։

Ասեց.— Տատի՛, էս կծախեմ, ջուխտ մաշիկ կառնեմ, կգամ։

Գնաց, փռիցը հաց առավ, քցեց ձիու վրա, ասեց.— Ցավա՛շ, մաշիկն էլ ծախեմ, նո՛ր էթամ։

Գնաց, մի ջհուտ սառաֆի մոտ կաղնեց։

Ասեց.— Էս մաշիկը չի՞ս առնի։

Ասեց.— Տենա՛մ։

Ասեց.— Ա՛ռ տես։

Ջհուտը թամաշա արեց, մտքումը ասեց. «Կաժենա տասը հազար մանեթ»։

— Քաշալ,— ասեց,— էս մաշիկը քեզ որդիա՞ն ա։

Ասեց.— Որդիան, որդիան՝ քեզ ինչ. առնո՛ւմ ես՝ փողը տո՛ւր, չես առնում՝ իմ մաշիկը տո՛ւ, էթամ։

Ասեց.— Իմ հոր խազինեն կտրել են. էս մաշիկը միջին էր, ես անջախ իմ նշանեն գթա։

Ասեց.— Սուտ ես ասում, իմ մաշիկը տո՛ւ,— ու հասավ, յախեն բռնեց։

Ջհուտն ու Քաշալը իրար տվին, քաշքըշելով իրար տարան թաքավորի մոտը գանգատ։

www.naregatsi.org

Ջհուան ասեց.— Թաքավո՛ր ապրած, իմ հոր խազինեն կըտրել ին, անջախ նշանեն գթա։

Քաչալն ասեց.— Դրա մաշիկը չի, սո՛ւտ ա ասում։

Թաքավորը մաշիկը առավ, լավ թամաշա արեց, ասեց.— Իմ խազինեն ըսդրա կես գինը չհանի։

Թաքավորն ասեց.— Ջհո՛ւտ, ըստրա թայը կա՞, թե հենց էս ա։

Ջհուան ասեց.— Թայ չունի, հենց էս մինն ա։

Ասեց.— Քաչա՛լ, դու ինչ ես ասըմ, թայ ունի՞, թե չունի։

Ասեց.— Ունի թայ, կէթամ թայն էլ կբերեմ։

Թաքավորն ասեց.— Թե թայը բերեցիր՝ ջհուան ա սուտ ասում, թե չբերեցիր՝ դու ես սուտ ասում։

Ասեց.— Բերե՛ք, պայման դրեք։

Ջհուան ասեց.— Ես իմ ապրանքը գրավ կդնեմ ըստի, ինչդար ունիմ։

Ասեց.— Քաչա՛լ, դու ի՞նչ ես դնում։

Ասեց.— Ընձի զատ չունեմ, քառասուն աղբեր ունեմ, բե՛, բռնա, թե մաշկի թայ բերեցի՝ ըդրա մալը ինձ, թե չբերեցի՝ իմ քառասուն աղբեր քեզ ղուրբան, հեղդա։

Ասեց.— Դե՛, գնա՛, կանչա գան։

Ասեց.— Իմ խոսքով չեն գա, հազար ձիավոր տուր ինձ, էթամ բերեմ։

Թաքավորը հազար ձիավոր հանեց, տվեց Քաչալին։ Քաչալն ընկավ աղաք. գնաց, մտավ ձորի մեջը։

Հարամիբաշին թամաշա արեց, ասեց.— Ջանը՞մ, էս Քաչալը խի՞ չէկավ,— տեհավ Քաչալը աղաքը գալիս ա, ձիավորներին էլ տուտ ու տակ չկա։

Հենց Հարամիբաշին նեքսև մտավ, ասեց.— Վերե՛ք, Քաչալը մեր տունը քանդեց, էնքան ղոշուն ա բերե մեր վրա. ելեք, ձիանը նիլեք, քու բերած Քաչալը քու գլուխն ուտի։

Ձիավորը էկան հասան, զաղի դուռը բռնեցին. մեկն էլ չկարացին զաղիցը դուա գային։

Ձիավորների մենծը ասեց.— Ձեզ ուրիշ բան չկա, թաքավորը կանչում ա։

Հարամիբաշին ասեց.— Էս էլավ քու արած բանը, Քաչա՛լ։

Քաչալը մաշիկը ծոցից հանեց, ասեց.— Աղա՛, խի՞ ես դարտ

www.naregatsi.org

անում. էս մաշիկի տեղ ձեզ գրավ եմ դնում, թե գնացի, ըդրա թայը գթա բերեցի՝ կպրծնեք, թե չգթա՝ ձեզ պըտի հեղդեն, էլ ի՞նչ կա. խի եք դարտ անում ըդրա համար։

Հարամիբաշին բռնողին ասեց.— Քու գլուխն ուտի քու բերածը, Քաշա՛լն էն տեղը քցեց՝ որ մեզ պրծնում չկա։

Քաշալն ասեց.— Աղա ջա՛ն, գնացեք, էթանք, ըսկի մի՛ մտածեք։

— Քաշա՛լ,— ասեց,— տեղը չի՛, պրծար, մեր ջանն էլ գնաց։

Քաշալն ընկավ աղաք, բերեց թաքավորի կշտին կաղնացրեց, ասեց.

— Թաքավո՛ր ապրած կենա, էս իմ աղբրտանքը։

Թաքավորն ասեց.— Վճիռն գիտաք ի՞նչ ա, թե Քաշալը մաշկի թայը բերեց՝ ջհուտի ապրանքը կառնեմ, կտամ ձեզ, թե որ չի բերեց՝ ձեր քառասունին էլ պըտի հեղդեմ։— Էդ քառասունի ոտներն բխով դրեցին, քցեցին դուքսախխանեն։

Քաշալն ընկավ ճանփա, գնաց դուզ գերեզմանատունը։ Գընաց, պառկավ ղուպուրների մեջը։

Տասն օր պառկավ, մարդ-մադաթ չէկավ։

Ցերեկը մեռելը բերում քցում ու էթում ին. էդ Քաշալին հարցնում ին։— Ա՛յ քու տունը չքանդվի մուսուպաթ Քաշալ, ի՞նչ ա, գշեր-ցերեկ բանդ ես էլե ըստե։

Քաշալի իլաճը կտրվավ, էկավ էլի քաղաքը։

Ասեց.— Էթամ ուրիշ քաղաք, մաշիկի թայը ըստե չէլավ։

Գնաց, ասեց.— Էն մաշկի տեղ գնացի, մաշիկ չկար ընտե. մնաք բարո՛վ, ես էթում եմ մաշիկը բերելու։

Հարամիբաշին ասեց.— Քաշալ ջա՛ն, էն քառասուն ձին էլ քեզ, քառասուն ձեռք ասպապն էլ քեզ, թաքիլան ըստիեն մեզ ազատա։

Ասեց.— Ի՞նչ եք դարտ անում, տաս օր ա անց կացե, եռեսուն օր հալա ժամանակ ունեք։

Քաշալը վեր կացավ ու գնաց ուրիշ քաղաք։

Ասեց.— Էթամ ըստիան գերեզմանները ման գամ։

Գնաց գերեզմանները. գշերը ման էկավ դես, ման էկավ գեն, էկավ, մի քարի տակ պառկավ։

Ցեհավ էն մաշկի տիրոջ պես մի մարդ էկավ ըստե, մի գե-

www.naregatsi.org

բեզմանաքար շուռ տվեց, ֆողը հետ տվեց, ղուպուրը հանեց. ղուպուրի բերանը բաց արեց, մի ճիպոտ կար ձեռին՝ մի ճիպոտ տվեց մեռելին. մեռելը սաղացավ, էն մեռելի հետ նստեցին, քեֆ արին։ Մի ճիպոտ էլ տվեց, էլի մեռավ։ Ֆողը տվեց վրեն, քարը քցեց վրեն, որ էթար։

Քաշալը վե կացավ։— Հա՛յ քու մերը մեռնի, Նոխուտի Քաշալի անուն չես լսե,— ասեց,— հասավ բռնեց. իրար քոլոլեցին, իրար ջարդեցին։ Հըմի մարդը ուզում ա փախնի, Քաշալը չի թողում ձեռաց։ Քաշալը ձեռ ա քցում ոտաց, տենում ա մաշիկ չկա ոտին։ Ձեռը քցեց, էն ճիպոտը բռնեց. էրկու իրեք սահաթ քաշեցին՝ էն դեն էր քաշում, էն՝ դենը։ Լիսը բացվեց. էդ մարդ ճիպոտը թողաց Քաշալի ձեռը, անճախ փախավ։

Լիսը բացվավ, էկավ քաղաքի մեջը, տեհավ բիրատի էդ քաղաքի մեծավորները թևերը սև են կապե։

Ասեց.— Էս խի՞ են սև կապե։

Ասեցին.— Էս թաքավորի տղեն իրեք օր ա մեռել ա։

Ասեց.— Ես թաքավորի տղին կսաղացնեմ, իմ ուզածը կտա՞։

Ասեցին.— Ինչ ուզես կտա։

Խաբար տարան թաքավորին, ասեցին.— Մի Քաշալ մարդ ա էկե, ասում ա. «Թաքավորի տղին կսաղացնեմ»։

Թաքավորն ասեց.— Հա՞ գիտի, ո՛րտի կըլի, գթեք, բերեք։

Քաշալին գթան, տարան։ Քաշալը գնաց, օխտը անգամ գլուխ տվեց, կաղնեց։

Ասեց.— Ա՛յ տղա, իրեք օր ա իմ տղեն մեռել ա, կարող ես սաղացնես։

Ասեց.— Հրամանքե, կարող եմ։

Ասեց.— Դե՛, գնա, սաղացրա՛, ինչ որ ուզում ես, պըտի տամ։

Վե կացան, Սինոդի անդամները թաքավորի հետ գնացին դպա գերեզմանները, Քաշալն էլ հետները։

Գնացին, գերեզմանի քարը շուռ տվեցին, ֆողը ետ տվին, ղուպուրը հանեցին. ղափաղը բաց արին, մի ճիպոտ տալու բաշտան, վե կացավ նստեց։

Վե կալան, ուրախություն արեցին, բերեցին պալատը։

Թաքավորն ասեց.— Դե՛, Քաշալ, ուզա, որ պըտի տամ՝ ինչ որ սիրտդ ուզում ա։

www.naregatsi.org

Մաշիկը հանեց, դրեց թաքավորի աղաքը.— Ըստրա թայն եմ ուզում,— ասեց։

Թաքավորը վե կալավ, մաշկին թամաշա արեց, ասեց.— Կաժենա իրեք միլիոն։

Ասեց.— Որդի՛, ըստրա թայը չունեմ։ Տարեք Քաշալի քաշով ոսկի տվեք։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, զատ չեմ ուզում, որ ըստրա թայը չկա, ես էթում եմ, ես մենակ մաշկի թային եմ ման գալի։

Ասեց.— Որդի՛, չկա։

Քաշալն ընկավ ճանապար, գնաց ուրիշ քաղաք։

Թամաշա արեց, էդ քաղաքի մանտրիցը շարի մեծը լաց ին ըլում, ասեց.— Խի՞ եք լաց ըլում։

Ասեցին.— Տենո՛ւմ ես էն գյամին, ծովու մեջ բանդ ա էլե, էն բիրատի ցորեն ու ալիր ա, պըտի դուս գա, որ մենք հաց ուտենք, բանդ ա էլե, մենք սոված կոտորվանք. ընդու համար ենք լաց ըլում։

Ասեց.— Ես որ էթամ, տենամ գյամու տակը ինչ կա, որ բեքեմ, ղրաղը հանեմ, իմ ուզածը կտա՞ք։

Ասեցին.— Ի՛նչ ուզես, կտանք։

Վե կացան, լոթկեն դրեցին, տարան գյամու մոտը կաղնեցին։

Մի խանչալ առավ, սկավ ջրի տակը, մերը մեռնի Քաշալի [1]. հենց սկավ ու գնաց գյամու տակը։

Թամաշա արեց, մի հատ վիշապ գյամու շորս բոլորը կտրել ա, գլուխը դրել ա պոչի վրա, գյամին ժաժ չի գալի։

Ձեռը քցեց, վիշապի պնչի վրա մի խզմա կա, խզման բռնեց, խանչալով դոշին տվեց, խզմեն պոկ էկավ, մնաց Քաշալի ձեռը, վիշապը փախավ. գյամին երմիշ էլավ։ Մի քիչ տեղ գնաց, Քաշալը դուս էկավ տակիցը, ասեց.

— Մերը մեռնի՞ ձեր, ո՞ւր եք քշում, Քաշալին թողնում ե՞ք, ձեր էյթիպարն է՞ս ա։

Ասեցին.— Վախում ենք էլի գյամին բանդ ըլի։

Ասեց.— Մի՛ վախենաք, կաղնեցրեք։

---

1 Այս արտահայտությունը բնագրում առնված է փակագծերի մեջ. հավանաբար ասացողի ընդմիջարկությունն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Կաղնացրին. Քաշալը թռավ, գյամու վրա նստեց։ Քշեցին, էկան դրաղը։

Սաղ քաղաքը թոփ էլավ, էկան Քաշալին ուրախացրին, վեր կալան, թոցրին, ասեցին.— Կեցցե՞ մեր Քաշալը։

Վե կալան, քանի մարդով տարան թաքավորի մոտը, ասեցին.— Թաքավորը սաղ ըլի, էս չըլեր քաղաքը բիրատի սովածկկոտրվեին, գնաց մտավ գյամու տակը, պոկեց, բերեց։

Թաքավորն ասեց.— Ա՛յ Քաշալ, ուզա, որ պըտի տամ։

Մաշիկը ծոցիցը հանեց, դրեց թաքավորի աղաքը, ասեց.

— Ըստրա թայն եմ ուզում։

Թաքավորը վե կալավ, թամաշա արեց, տեհավ՝ էրկու-իրեք միլիոն արժողություն ունի։

Ասեց.— Ըստրա թայը չունեմ, ինչդար ոսկի ուզում ես, փեշքեշ կտամ քեզ, առ տա՛ր։

Ասեց.— Որ չունես, էթամ։

Ասեց թաքավորը.— Թայը չունես, ինչ պտի անես մաշիկը. էդ էլ տուր ընձի, ինչդար փող ուզես, կտամ։

Ասեց.— Ինչ ես ասում, քառասուն աղբերս էս մաշկի խաթեր գրավ եմ դրե, անկարելի բան ա, թայը որ չդթնեմ, քառասուն աղբորս էլ կհեղդեն։

Վե կացավ, գնաց ձորի միջով. աղաքը ընկավ մի բարակ ճանփա, ու գնաց. գնաց, մութն ընկավ, ընկավ մի զաղի մեջ. գնաց պուճախում պառկավ։

Քիչ մնաց, տեհավ՝ մի առջ էկավ, պառկավ։

Քիչ մնաց, մի գել էլ էկավ. մի քիչ մնաց մի ասլան էլ էկավ։

Գելն առջին ասեց.— Ինչո՞վ եք պարապում։

Ասեց.— Ես պըտրտում եմ, որտե ձեռս զատ ա ընկնում, ուտում եմ. որ չի ընկնում՝ էթում եմ, քաղաքի ղրաղը մի տեղ կա, պառկում եմ. ջուրը տակով գոգռալով էթում ա, անկանչ եմ անում, էդ ա իմ բանը։

Ասեց.—Բա, գել, դու ինչո՞վ ես պարապում։

Ասեց.— Ես էլ էթում եմ, պտրտում եմ, թաքավորի սուրուի մեջ ճակատը դաշդա մի ոխշար կա, հ՚աչքս ընդրա վրա ա, ուզում եմ էն ոխշարը բռնեմ, ուտեմ։ Թաքավորի աղջիկը կմեռնի, հիվանդ ա, ժամ պատարագ կանի, ամեն բանը կբոլանա. համա էն ոխշարի գլուխը տան փուռը, էն ախչիկը ուտի՝ կըլլի մորե մեկ, կսաղանա։

www.naregatsi.org

Ասեցին.— Ասլա՛ն, բա դու ինչո՞վ ես պարապում։

Ասեց.— Ես էլ ման եմ գալի, մա՛ն. էթում եմ ծովի ղրաղը. վեր են գալի իրեք հատ ախչիկ են ըլլում. լեղանում են, հետո խրխեք հագնում են, թռնում են. իմ թամաշեն էլ էդ ա։

Լիսը բացվեց. ըդոնք վե կացան ու գնացին։ Քաչալը դուս էկավ ու գնաց։

Գնաց էդ քաղաքի ղրաղը, տեհավ, է՛, առջը գնացե, էդ քաղաքիցը դուս պառկել ա։ Գնաց, առջին մոտացավ, հալահու արեց, առջը փախավ։ Գնաց, առջի տեղը պառկեց, անկանջ արեց գետինը։ Տեհավ ջրի գրոգռոցը լավ գալիս ա։

Վե կացավ, էկավ էդ քաղաքի մեջը ման էկավ, տեհավ՝ էդ քաղաքը բիրատի ֆորի ջուր են խմում։

Ասեց.— Իմ ուզածը տաք, ես ձեզ համար ջուր կբերեմ։

Թոփ էլան քաղաքի մարդիկը, ասեցին,— Քաչա՛լ, որ ջուր բերես, բերանդ ինչ պտրտա, կտանք։

Ասեց.— Երկու հարուր բահավոր տվեք, էթանք վերև։

Երկու հարուր բահավոր վե կալավ ու գնաց։

Գնաց, էդ առջի պառկած տեղը քանդեց. ջուրը բացվեց, հինգ ջաղացեն ջուր վե կալավ, բերեց քաղաքը։

Էկան, թոփ էլան Քաչալի գլուխ, ասեցին.

— Դե՛ ուզա, ինչ որ տանք, քեզ արժան ա։

Մաշկի թայը հանեց, դրեց ըստրանց աղաքը, ասեց.

— Ջատ չեմ ուզում, ըստրա թայն եմ ուզում։

Վե կալան, թամաշա արին, մեկը սալղ չտվեց, ասեցին.

— Ըստրա թայը չենք կարա գթնի։

Գնաց, սարը անցկացավ էն դիհը, տեհավ մի սուրու ոխչար արածում ա. գնաց, ոխչարի չոպանի մոտը հասավ, ասեց.

— Էս ի՞նչ ոխչար ա։

Ասեց.— Թաքավորի ոխչարն ա։

Ասեց.— Թաքավորի կուշտ պըտի էթամ, ինչ բանի կըլլի հըմի։

Ասեց.— Տունն ա, մի ախչիկ ունի հիվանդ ա. ընդրա վրա պարապել ա. ինչդար հեքիմ են բերում, չեն կարա լավացնի։

Սուրուի մեջը ման էկան. Քաչալը ասեց.

— Ես էթում եմ թաքավորի մոտը, որ ոխչար էկան ուզելու, էս սիվտակ ոխչարը կտաս, կբերի։

www.naregatsi.org

Գնաց թաքավորի պալատի դռանը կաղնեց.

— Ես լավ հեքիմ եմ,— ասեց,— ինչդար դժար հիվանդ ըլլի, ես կլավացնեմ։

Խաբար տարան թաքավորին.— Ընենց մի լավ հեքիմ ա էկեր։

Թաքավորն ասեց.— Կանչեք գա նեքսև, տեսնանք։

Էկան կանչեցին, տարան։ Գլուխ տվեց, կաղնեց։

Ասեց.— Դու ի՞նչ մարդ ես։

Ասեց.— Լավ հեքիմ եմ։

Ասնց.— Իմ աղջիկը էս երկու տարի ա հիվանդ ա. որ լավացրիր ի՛նչ ուզես՝ կտամ։

Վեր կալավ, տարավ աղջկա մոտը։

Ասեց.— Ղրկեք շոպանի մոտը, մի հատ սիվտակ, ճակատը զաշղա ոխշար կա, վեր կալի բերի։

Ղրկեցին, գնաց էն ոխշարը բերեց։ Բերեց մորթեց, գլուխը քցեց փուռը. լավ էփեց, ճղճղեց, միսը մի տարելքի մեջ դրեց. վեր կալավ, գնաց թաքավորի մոտը, թաքավորն ասեց.

— Վեր կա՛լ, տա՛ր։

Տարավ դրեց աղջկա աղաքը, դեղը ցանեց վրան, զոռով քիչ-քիչ ուտացրեց, ոխշարի գլուխը սաղ կերավ. էլավ մորեմեկ, կաղնեցավ ընտեր։

Ըդտեղ ասեց թաքավորը.— Մալըն մալալա վեր, ղղըն քաշալա, ես էդ աղջիկը կտամ քեզ, դու կըլլես ինձ փեսա, իմ պալատի իրավունքը ամենը կհանձնեմ քեզ։

Ասեց.— Թաքավոր ապրած, շնորհակալ եմ։

Մաշիկը ծոցից հանեց ու ասեց.

— Ըստրա թայն եմ ուզում։

Թաքավորը թամաշա արեց, ասեց.

— Ըստրա թայը ոչ տեսել ենք, ոչ էլ կըլլի։

— Շնորհակալ եմ, իմ ուզածը մաշկի թայն ա, որ չկա՝ ի՞նչ անեմ։

Վեր կացավ, գնաց ծովի ղրաղը, տեհավ՝ ասլանը դարի գըլխին պառկել ա։ Ասլանը դրան տեհավ՝ քաշվեց, գնաց։

Գնաց, ասլանի տեղը նստեց. ծովի ղրաղն էր հենց։ Երկու սահաթ նստեց, թամաշա արեց. տեհավ, իրեք հատ աղունիկ էկան. խրխեքը հանեցին, իրեք հատ աղջիկ էլան, որ չուտե՞ս, չխմե՞ս թամաշա անես ըդրանց.

www.naregatsi.org

Քաշալն ասեց.— Մերը մեռնի Քաշալի, ըդրանք չբռնի, չի դինջանա։ Դարի գլխիցը վազեց, շարի հասավ, ըդոնք խրխեքը հագան ու թռան գնացին։

Քաշալն էկավ, ծովի ղրաղը կաղնեց, ասեց.

— Մերը մեռնի Քաշալի, ըսկի բան իմ ձեռիցս չպրծավ, համա բստոնք պրծան։ Տեհավ մե բարալիկ մուխ ա դուս գալի ծովու միջիցը. հենց էդ մուխն բռնեց, սըկվեց ջրի տակը։ Գնաց, տեհավ մի լավ օթախ ա, թամաշա արեց՝ հայլիքը շորս դին շարած, դիվանիքը դրած, տեհավ ստոլների վրա մի բլութ փլավ, մի աղունիկ էփած, դրած ա ըստեղ, տեհավ ընտեղ էլ իրեք ստոլ էր, իրեքի վրա էլ կար։

Գնաց մի ստոլի վրա կաղնեց, մի կտոր աղունիկից կտրեց կերավ, փլավն էլ հետը. գնաց էն մեկիցն էլ կերավ. գնաց էն մի ստոլիցն էլ կերավ։ Մի թաս էլ գինի խմեց։

Ման էկավ, տեհավ իրեք ջուխտ, մի թայ. հը՛, իրա մաշիկիցը։ Մինը վե կալավ, դրեց ծոցը. էն մեկելներուն ձեռ չտվեց։

Հըմի ման ա գալիս՝ գա. որտե էթում ա՝ շուր ա, շշկլեց, մնաց միջին. իլաճը կտրվավ, գնաց, մի պուճախ պառկեց։

Մեկ էլ էն տեհավ, իրեք հատ աղունիկ ֆռռալով էկան օթախի մեջտեղը վեր էկան. Խրխեքը հանեցին, իրեք հատ ախչիկ դառան. աշխարքումը ըդենց բան չկա։

Ամենքը մի հատ ստոլի վրա նստեցին, ասեցին.

— Վաղուց ա իրար չէինք տեհե. մի՛ ուտենք, քեֆ անենք։

Մեծ ախչիկն ասեց.— Ցավաշ, բան ապեմ. իմ ուտիլ-խմիլը հարամվեց. ես ֆել ի արե, էթում ի գերեզմանատունը մեռելներին թամաշա ի անում. մեկ օր էլ գնացի, թամաշա արի էլի. ուզեցա դուս գայի, էթայի, մուսուպաթ քաշալ պատահեց։ Էնդա՞ր իրար առանք, իրար հեղդեցինք, որ շար լիսը բացվեց. անճախ մաշիկս ըդրա ձեռը մնաց, ես փախա պրծա, ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավիցն էլ կուտեն, իմ աղունիկիցս էլ։

Էն մեկը ասեց.— Ա՛յ քիր, յավաշ, իմն էլ ասեմ. սեր արեցի, թաքավորի տղին մեռցրի, տարան թաղեցին. գշերը կէթայի վեկացնեի, սերի վարոցով կտայի, կսաղացնեի. շարի լիս հետը քեֆ կանեի, էլի կտայի՝ կմեռներ, կթողայի կէթայի։ Մի գշեր էլ վե կացրեցի թաքավորի տղին, քեֆ արեցինք. էլի մեռցրի, ուզում ի էթայի. մի մուսուպաթ քաշալ էկավ, ասեց. «Քու մերը մեռնի ո՞ւր ես էթում», հասավ ինձ, շարի լիս էնդա՞ր իրար հեղդեցինք, անճախ

9—2578

www.naregatsi.org

ձեռիցս ճիպոտը խլեց, թողացի փախա։ Ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավից էլ կուտեն, իմ աղունիկից էլ։

Էն մի քիրն էլ ասեց.— Ա՛ քիրեր, իմ վրա էլ ա հարամվե, յավաշ, իմն էլ ասեմ. սեր ի արե, մի հատ վիշապ ի դառե ես, թաքավորի քաղաքի գյամու շորս բոլորը կտրել ի, ծովու մեջտեղ բանդ արել։ Քաշալի մեկն էկավ, ձեռ քցեց, դնչիս խզմեն բռնեց, դոշիս տվեց. խզմես պոկ էկավ, մնաց ձեռին. ես անճախ փախա. ինձ հարամ ձեռ ա դիպե, հալբաթ իմ փլավիցն էլ կուտեն, իմ աղունիկիցն էլ։

Ասեցին.— Էդ անողը ըստի պատահի, իրան մուրազը կկատարենք։

Մի քիրն ասեց.— Հնար չկա, օձը իրա պորտովը, ղուշը իրա ղանատովը չի կարա գա ըստե, էն մո՞նց կարա գա։

Մի քիրն էլ ասեց.— Մարդ չի կարա դա, բա էս փլավից, աղունիկից ո՞վ ա կերե։

Ասեցին.— Ուտողը ղոշախ ա, թո գա, ըստե կաղնի։

Քաշալն դուս էկավ, ասեց.— Մերը մեռնի Քաշալի, Քաշալն ա կերե,— վե կացավ, կաղնեց։

Ասեցին։— Ուտիլը հավատացինք, մեր նշանները բեր տենանք։

Ասեց.— Նշաններդ ի՞նչ ա։

Ասեցին.— Մի հատ մաշիկ ա, մի հատ ճիպոտ ա, մի պնչի խզմա ա։

Քաշալը բերեց, իրեք հատն էլ դրեց մեջտեղ։

Ախչկերքը հավատացին. վե կալան ղրան, աղբրի մեջը լեղացրին. որ լեղացրին, գլխին մաղ էկավ, սիրունացավ, էլավ հրեղեն։

Ախչկերքը բերեցին մեջտեղ նստեցրեցին, ասեցին.

— Դու մերն ես, մենք քունն ենք։— Իրեք օր քեֆ արեցին։

— Ախչկե՛րք,— ասեց Քաշալը,— քառասուն աղբեր գրավ եմ դրե, քառասուն օր թամմել ա, պըտի հեղդեն. էդ մաշկի թայը պըտի տանեմ։

Նո՛ր ախչկերքը ըդրան ծովիցը հանեցին՝ խրխեքը հագան, Էլան աղունիկ, Քաշալին դրին թևերի վրա ու թռան։ Բերեցին, իրա տատի տանը վե դրին։

Ասեց.— Տատի՛, ի՞նչ կա, ի՞նչ ես լսում։

Ասեց.— Գալիս, ինձ ասում են. «Քու թոռը քառասուն դուքսախ ա բռնե, էս էրկու օրը պըտի հեղդենն»։

www.naregatsi.org

Վե կացավ, գնաց Թաքավորի մոտը. Թաքավորին օխտը անգամ գլուխ տվեց, վրա ութին կաղնեց։

— Հա՛, որդի, մաշիկը բերե՞լ ես։

Ասեց.— Հրաման քե, բերել եմ, մերը մեռնի՞ Քաչալի, էթա ու չբերի՞։

Թաքավորն ասեց.— Դե՛, հանա, տենամ։

Քաչալը դաստախունը մեջքիցը հետ արեց, ասեց.

— Թաքավորը սաղ ըլլի, մի ջուխտ քու կնկան փեշքաշ, մի ջուխտ էլ հարսիդ փեշքաշ, մի ջուխտ էլ քու ախչկան, էս էլ մաշիկը, էս էլ ըդրա թայը։ Թաքավորը թամաշա արեց, ասեց.

— Ամենքը իրեք միլիոն ածի, Քաչալը ինը միլիոն բախշեց Թաքավորին։

Մարդ ղրկեց, ջհտին կանչեցին։ Ջհուտն էկավ, կաղնեց։

Մաշկի մի թայը դրեց ստոլի տակը, մի թայը ստոլի վրա։

— Ջհո՛ւտ,— ասեց,— էս քու մաշիկն ա, թայը չբերի, վե կալ քու մաշիկը, գնա։

Ասեց.— Ախր պայման ենք արե, էն քառասուն մարդը պըտի հեղդվի։

Ասեց.— Որ մաշկի թայը բերե՞ր։

— Որ բերեր, համ ինձ պըտի հեղդեիր, համ իմ մալը պըտի տայիր ըդրան։

Ասեց.— Վճիռն ըտե՞նց ա։

Ասեց.— Ըտենց ա։

Թաքավորը մաշիկի թայը հանեց, դրեց մաշիկի կողքը։

Ջհուտը, որ տեհավ, ձենը կտրեց քիպ, էլ չկարաց խոսա։

Թաքավորը հրամայեց՝ ջհտին հեղդեցին, տուն տեղ հանձնեցին Քաչալին։ Գնացին էն քառասուն հարամուն հանեցին, բերեցին Թաքավորի մոտը կաղնացրին։ Քառասուն հարամուն էլ էդ պալատի մեջը պաշտոն տվեց, Քաչալին էլ կարգեց ամենի գլխավոր։

Քաչալին ասեց.— Արի՛, քե պսակեմ, իմ ախչիկն էլ ուզես՝ տամ։

Ասեց.— Ինձ ունեմ իրեք հատ նշանած։

Թաքավորը հրամայեց, իրեքն ըդրա վրա պսակեցին, ինքն էլ էլավ քավոր։ Պալատի ամեն իրավունքը տվեց Քաչալին։

Քաչալն մի ջուխտ մաշիկը տարավ, հագցրեց, բերեց։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր։

Ջհուտն էլ իր ղազապին. նըհախ մարդու տեղն էդ ա։

---

www.naregatsi.org

9. ԱՂՈՒՆԻԿ ԱՂՋԻԿ

Իրեք ախպեր կըլլեն, իրեքի պուճուրը կըլլի։ Էդ տղեն աշխատանքի-բանի չի էթա. ձիու վրա մեն կդա։ Ախպերտանքը կասեն.

— Խի՞ չես դալի մեր տան բաները անես, բեյթի մեն ես գալի։

Ասեց.— Ամենեին ձեր տան բանը ընձի պետք չէ, էլ տանը չեմ մնըմ, էսօր էթում եմ։

Գնաց էրկու ընկեր գթավ, ասեց.

— Տղե՛ք, էթանք աշխար մեն գանք, էլ դառնալ չկա մեզ։

Գնացին, իրեք հատ ձի առան. ամենքին մի հատ, նիլան ու գնացին։ Գնացին, ընկան չոլ-յապան տեղ, ճանփեն կորցըրին. տեհան մի ղորուխի խոտի մեջ մի իզ կէրևա, առան էդ իզը, գնացին։

Գնացին, տեհան մեկ հատ վիշապ ընկել ա, էթում ա. դու մի ասի էդ վիշապի իզն ա։ Գնացին, հասան վիշապին։

Վիշապն ետ դառավ, էդ իրեքին խրկեց, էդոնք փախան։

Վիշապը ըդոնց կոխեց մե զաղի մեջ. վիշապը մեծ էր, չկարաց նեքսև մտնել. դուռը դեմ արեց, բերանը բացեց, կաղնեց։

— Տղե՛ք,— ասեցին իրարու,— մեզի կուտի, էլ իլաճ չկա, թվանքը լցեք, տվեք բերնի մեջը։

Տղեքը լցին, դարդրկեցին։ Իրեք օր մնացին ըտեղ, շատ սովածացան, ասեցին.

www.naregatsi.org

— Վիշապ ոչ ժուր ա գալի, ոչ բան. դուս գանք, տենանք՝ սատկած ա, թե սաղ ա։

Դուս էկան, տեհան՝ սատկած ա. ձիանը նիլան, ընկան ճանփա։ Գնացին, մի ծովի ղրաղ դուս էկան. տեհան ծովի էրեսին գյամին գալիս ա։ Գյամչին էկավ, գյամին մոտացրեց, ասեցին.

— Մեզ էլ դիր գյամու մեջ։

— Դու ի՞նչ մարդիկ եք,— ասեց,— էս չոլիստան տեղ մնացել եք։

— Պատահել ա, ճանփեն կորցրինք, ընկանք ըստե։

— Ձեզ տեղ կըլլի, ամա ձեր ձիանց տեղ չըլլի։

Ըդոնք էլ ասեցին.— Ձիանը մեզ պետք չի։

Ձիանը բրախ տվեցին, նստան գյամին, ընկան ճանփա։ Ցըրթունեն վե կացավ, իրեք գշեր ծովը տակ ու վիրև արեց, գյամին տարավ տվեց մի քարի, հաղար կտոր արեց։ Էդ իրեք մարդը մնացին մի տախտակի վրա, ասին.

— Աստվա՛ծ, վիշապից պրծանք, ընկանք էս նեղ տեղ, տենանք, որտե լուս կընկնենք։

Ծովի լափին տարավ, մի ղրաղ դուս հանեց։

Բերեցին էդ տախտակը մի քարից կապեցին. իրանք դուս էկան չոլը, տեհան մեշա ա, սկսեցին մեշի մեջը ման գալը։

Տեհան ոչխարի բոռոց ա գալի, ասեցին.

— Տղե՛ք, էթանք էս ոչխարի իզին, մե շենլըք գտենք մեզ։

Հասան ոչխարին, տեհան չոպանը թեփեգյոզ ա, ոչխարի կըշտին կաղնել ա. հենց որ տեհավ, գերանը դագանակի պես դրել էր ուսին, խառնեց ոչխարին, քշեց, տարավ իրան զաղեն։ Զաղի առաջ մի ջաղացքի քար կար, պըտըտեց դեն, ոչխարը արեց նեքսև, մեզ էլ հետը։ Գնաց մի սելաչափ ցախ բերեց, չորս քար շինել էր թունդիր, ցախը վառեց էդտի, մի շանփուր ուներ, դրեց էդ կրակի մեջ, լավ տաքացավ, հանեց ու բերեց, տվեց ըդրա դոշը, հենց ճվաց ու մեռավ։ Տարավ, կախ տվեց թունդիր՝ էփեց. քարի վրա ճըղճըղեց ու կերավ։

Ասեցին.— Էգուց էլ մեզ կուտի, ինչ իլաճ անենք, սրա ձեռից պրծնինք։

Լիսը բացվեց, խառնեց ոչխարի հետ, տարեց մեշի մեջը. չար իրիկուն պըտըտեց, իրիկուն էլի բերեց, արեց ըտեղ. էլի ցախ վառեց, շանփուրը բերեց. էլի տվեց էն մեկ ընկորը դոշիցը, էլավ, տա-

www.naregatsi.org

բավ թունդիրը, էփեց, ճղճղեց ու կերավ։ Մնաց մինակ. մթոք արավ. «Վաղն էլ նոպաթն իմն ա»։ Էդ մտքին էր, տեսավ թեփեգյոզը քնեց. խռոց քցեց, քունը տարավ։ Տղեն վեր կացավ, էդ շանփուրը վեր կալավ, դրեց աչքի մեջ, հուփ տվեց՝ գնաց գետինը։ Վեր կացավ, ընկավ պատեպատ, էդ տղին ման ա գալի։ Ճարը կտրավ՝ շաղացքի քարը դենը քցեց, շեք արեց ծակի դեմը, ոչխարը մի մի շեքի տակով անցկացրեց։ Տղեն մտավ սեյիսի փորի տակ. սեյիսը յավաշ-յավաշ գնաց, շեքի տակով անց կացավ. էդ էլ հետը գնաց։

Տղեն դուռ էկավ դուռը, բռռաց, ասեց.

— Հո քու ձեռից պրծա։ Էդ ձենը որ լսեց, էդ թեփեգյոզն էլավ մի քարի գլուխ բռռաց, որ բռռաց, էնղտա՞ր թեփեգյոզ էկան, լըցվան ըտեղ։ Էդ տղեն փախավ։

Էդ թեփեգյոզներ ասեցին.— Խի՞ ես բռռում։

— Էդ փախնողը իմ աչքը հանեց,— ասեց։

Ըդոնք ընկան ըդրա քամակը։ Էդ փախավ, գնաց, էն տախտակը, որ կապել էր, վրան նիլավ, կապը ետ արեց, քշեց ծովի մեջը. ըդոնք էլ էկան, ղրաղը կանգնան, էլ չկարացին մտնել։ Էդ տղեն տախտակը քշեց, յավաշ-յավաշ գնաց ծովի մեջը. գնաց, մի ղրաղ դուռ էկավ շոլը. տեհավ մեշա ա, ամեն տեսակ պտուղն էլ կա, մարդ ու մատաղ չկա։ Էդտեղ մի աղբուր կար. իրեք աղունիկ էկան ըտեղ, խրխեք հանեցին, մին-մին ախչիկ էլան, լեղացան։

Տղեն մեկի խրխեն գողացավ, տարավ պահեց։ Էկավ, էդ ախչիկներուն մոտացավ. ըդոնք տեհան մարդ ա գալի, էն էրկուսը էկան ալպեալը խրխեքը հագան ու թռան. տղեն գնաց, էն մեկը բռնեց։

Էդ տղին աղաչեց, ասեց.— Տղա՛, ես քու թայը չեմ։— Ինչդար աղաչեց, չէլավ։

Էդ տղեն էդ ախչկան առավ, էլան մարդ ու կնիկ։

Ասեց.— Մարդ ու կնիկ ենք, իմ խրխեն տու հագնեմ։

Ասեց.— Վախում եմ, դու կփախնես։

Ժամանակ մի մնաց, մի տղա բերեց, ասեց.

— Հմի տո՛ւր, տղա եմ բերել, էլ չեմ փախնի։— Էլի չտվեց։

Մի տղա էլ բերեց, էղավ էրկու տղա.

— Դե՛,— ասեց,— իմ խրխեն տուր, էրկու տղա եմ բերե, չեմ փախնի։

Գնաց, խրխեն հանեց, բերեց, տվեց։

www.naregatsi.org

— Դե՛, ա՛ռ,— ասեց։

Հենց որ խրխեն հագավ, էրկու տղեն խրտրտեց, գնաց ծովի մեջտեղ կաղնեց, ասեց.

— Ա՛յ տղա, էս էրկու տղեն ընձի հալալ արա։

Ասեց.— Հալալ չեմ անի։

Իրեք անգամ ըդենց ասեց, էն էլ չարեց։

Էրկու տղեն առեց, սրկվեց ծովի տակը, էլ չէրևաց։

Էդ տղեն էլի մնաց ըդտեղ, ասեց.

— Մինակ ի՞նչ անեմ։

Գնաց, ընկավ ման գալու։ Գնաց, տեհավ մի մարդ, հրես, նստած ա, բարև տվեց, ասեց.

— Ի՞նչ մարդ ես, ըստե նստած ես։

— Մեր տուն ըստե ա, գեղն ըստի մոտ ա։ Դե՛, արի՛, ձեռիցս բռնա, էթանք մեր տուն։

Դու մի ասի, էդ մարդո Պալտր-ղայիշ էր, փաթաթվավ ըդրան. նիլավ շալակ, փետ առավ ...սռ, քշեց. տարավ իրանց տունը։

Գնաց տուն, ըդրա հերն ասեց.

— Էդ ի՞նչ բան ա։

Ընձի ճանփին պատահեց, նիլա էկա։

Նոպաթե նոպաթ ըդրան նիլան։ Ցախ են բերըմ, ջուր են բերըմ՝ էրկու ամիս ըդենց բանացընըմ ին։ Ըդոնց ձեռիցը իլաճ չէր գտնըմ պրծներ, շատ չարչարեցին։ Մեկը փշի կէթար, մեկը՝ ջրի։

Մեկ օր գնաց ծովի ղրաղը։ ըտիան մի մարդ էկավ, ասեց.

— Ըդոնց ձեռը դու խի՞ ես ընկե։

Ասեց.— Ճանփեն կորցըրեցի, էկա ընկա։

— Որ մտնես ծովը, ըդոնք քամակեդ չգան, կպրծնես։

Էդ տղեն ջրի միջով, ղրաղեն գնաց. ընոնք կանչեցին.— Արի՛, արի՛։

Էն ականջ չարեց. նիլող հետ դառավ, գնաց։

Տղեն մեկ քարի տակ տափ կացավ. տեհավ մի գյամի, գյամըշուն ձեն տվեց.

— Արի՛, ընձի էլ տար։

Գյամըշին վե կալավ, դրեց գյամու մեջը, տարավ հանեց քաղաքի մեջ։ Էդտեղ տղեն իրեք տարի մնաց, աշխատեցավ բավականի փող։

Էդ քաղաքիցը մի ախչիկ առավ։ Մի չորս տարի մնաց կշտին,

www.naregatsi.org

էդ ախչիկը մեռավ։ Բերեցին, տավար, ոչխար ինչ որ ուներ, մորթեցին։

Ասեց.— Ախպե՛ր, խի՞ եք մորթում, ընձի տուն ա պետք, ես էլի կնիկ պըտի առնեմ։

Ասեցին.— Խի՞, դու էս քաղաքի սովորութունիցը խաբար չես։

Ասեց.— Ի՞նչ կա, որ խաբար ըլլեմ։

Ասեց.— Մարդը մեռնի, կնիկը պըտի թաղենք, կնիկը մեռնի, մարդը պըտի թաղենք հետը. կնիկը ի՞նչ կանես, մալը ի՞նչ կանես։

Բերեցին մի ղուպուր կնկա համար շիններցին, մի ղուպուր տղի համար. տարան գերեզմանատուն։ Ըդոնց գերեզմանատունը շատ մեծ ղաղա էր, պարանով կախ տվին ծակովը։ Երկու մարդ էլ իրանցից կախ տվին, վեր էկան, տեղավորեցին. էն մարդկանց էլի քաշեցին վիրև։

Էդ տղեն ասեց.— Ես մեռած չեմ, դուա գամ, տենամ ինչ կա։

Դուա էկավ, ման էկավ, տեհավ որ ղուպուր ղուպուրի վրա լիքն ա, մե կնիկ էլ էնտեղ սաղ ա. գնաց, էդ կնկան հարցրեց.

— Դու ե՞փ ես էկե ըստե։

Ասեց.— Էս քաղաքի ատաթը կտրվի, էրեկ իմ էրիկ մեռավ, ընձի էլ բերին ըստե. պըտի ընդար մնամ ըստե սոված, ըստե մեռնեմ։

Ասեց.— Իմ կնիկն էլ ա մեռե, ընձի էլ բերեցին ըստե։ Ատված պըտի լուս անի, ըստիան պըտի պրծնենք, թե ըստե պըտի մեռնենք։

Կնիկն ասեց.— Ըստե գալող էլ չպրծնի։

Թամաշա արին, տեհան մի հատ Աղվես էկավ, ըստե ման ա գալի։ Տղեն ասեց.— Էս Աղվես տեղ կունենա, էկել ա. տենանք, ղըվորն ա էթում, մենք էլ էթանք։

Տղեն ընկավ քամակը, կնկան էլ ասեց.

— Դուն էլ արի՛։

Աղվես գնաց, ըդոնք գնացին. գնացին, մի ծակից դուա էկան ծովի ղրաղը։ Աղվեսը թռավ, գնաց. տղեն տեսավ գյամի ա գալի, գյամըշուն կանչեց։ Գյամըշին վե կալավ ըդոնց։

Էդ կնիկ շատ սիրուն էր, գյամըշու աչք ընկավ էդ կնկան. միտք արավ, որ տղին վե կալի, քցի ծով, կնիկն առնի։

Մեկ էլ տեհավ ծովից ձեն էկավ.

— Էդ ինչ ես անում, հե՞յ։

www.naregatsi.org

Գյամբշին որ ձենը լսեց, փախավ, տափավ։

Իրեք անգամ միտքը փոխեց, իրեք անգամ ծովի միջից ձեն տվին, էլ չկարացավ տաներ, հանեց չոլը։

Էդ տղեն, էդ կնիկը նստան ծովի ղրաղը։ Էն աղունիկ կնիկը էրկու էրեխեն առավ, էկավ ըտե, կանչեց ծովի միջից, ձեն տվեց.

— Ա՛յ մարդ, կնիկ ես առե, էդ կնիկը հալալ, էս էրեխեքը ընձի հալալ անը՞մ ես։

Ասեց.— Հալալ չե՛մ անի։

Ասեց.— Խի՞ չես անի, Պալտը-ղայիշից քե ազատեցի՝ էն ո՞վ էր, էն Աղվեսը քե ազատեց՝ էն ո՞վ էր, իրեք անգամ գյամբշին միտքը փոխեց, քե պըտի քցեր ծովը, էն ով էր ձեն տվեց. իրեք փորձանքից քե ազատեցի, էս էրկու էրեխեն ընձի հալալ չես անը՞մ։

Ասեց.— Հալա՛լ ա քեզ։

Ասեց.— Էթա՛ք բարին,— ու սրկվեց ջրի տակ։

Մարդ ու կնիկ վե կացան, էկան էդ քաղաք։ Մի հարուստ մարդ ըդրան պատահեց, ասեց.

— Դու ի՞նչ մարդ ես։

Ասեց.— Ղարիպ մարդ եմ, ես էլ չեմ գիտում, ես ու իմ կնիկ էկե, ընկել ենք ըստիան։

Ասեց.— Որտի՞ պըտի մնաս։

— Տեղ չունինք ըսկի, աղա՛,— ասեց։

Վե կալավ, տարավ իրա տունը, հաց կերան, պրծան։ Առավոտը հարցրեց.

— Նոքար կըլլիս։

Ասեց.— Չէ՛։

Ասեց.— Բռնեմ քե նոքար, թվանք քցել սարվի։

Ամիսը տասը մանեթ բարըշեց, ինքն էլ մուֆթա պահի։ Բարութ գյուլլա առավ, տվեց ըդրան, ասեց.

— Լավ նշան քցել սարվի։

Մեկ օր ասեց.— Արի՛, փորձեմ, խանչալը կըդնեմ, գյուլլով բերնին տուր։

Գյուլլեն տվեց, էլավ էրկու կտոր. կշռեց, մեկը քիչ ծանտր էր, ասեց.— Լավ չես սարվե։

Գնաց մի ամիս պտրտեց, էկավ։ Խանչալը տնկեց,— գյուլլով տվեց բերնին. բերեց, կշռեց՝ էրկուսն էլ դուղ-դուղա էկան։

Բերեց, մատնիք դրեց բռան մեջը, գյուլլով տվեց, մատնիքի ծակեն անցկացրեց։

www.naregatsi.org

Ասեց.— Աֆարը՛մ, տղա։— Գնաց, տղի ճակատը պաչեց։

Վե կալավ տղին, գնացին իրանց տունը. հաց կերան, գինի խմին, լավ քեֆ արին, մի դաստա փետ վե կալան, թվանքը վե կալան, ասեց.

— Տղա՛, վե կալ էթանք ծովի ղրաղը։

Ծովի ղրաղը փորեցին, էդ փետերը քցեցին, ծածկեցին։

Աղեն ասեց.— Մտի ըստե, չքնե՛ս. հենց գշերը մե ջանավար կգա ծովիցը, հենց պոզերը, մռութը դուս կգա ծովիցը՝ ալպեալը դու մի թողի դուս գա։

Գշերվա կիսին տեհավ՝ մի զատ դուս էկավ ծովիցը, կրակի պես պլպլըմ ա, գալիս ա դպա իրան, էկավ, մոտանըմ էր, մեկ կուլի մանկզիլ մնաց. տղեն նշանը բռնեց, տալու բաշտան ճակտին բըռնեց։ էդ ջանավարը շուռ եց պոչի վրեն ու շպրտեց ըդրան, որ դիպավ տղի էրեսին, էրես էլավ արնլվիկ, ուշքը գնաց, նվաղեց։

Աղեն թվանքի ձենը լսեց, կնկան ասեց.

— էթում եմ, կնի՛կ, ինչքան մարդ փչացավ, էդ էլ փչացած կըլի։

Գնաց, տեհավ ջանավարը վեր ա ընկե ծովի ղրաղը, գնաց քոլիկը՝ տեհավ տղեն սաղ էր, արնի մեջ կորել ա։

Ջուր բերեց, գլխին քսեց. տղեն օյանմիշ էլավ, աչքերը բացեց, տեհավ՝ աղեն գլխու վերևն ա։

Ասեց.— Տղա՛, մի վախենա, վե՛ր, էթանք։

Ջանավարը դրին մեշոքի մեջ. տղեն շլակեց, էկավ դպա տուն, բերեց, դրեց կըճըճի մեջ, բերանը խմորեց, դրեց թունդիրը, լավ էփեց, հանեց՝ եղը թուփ էլավ կարագի պես մի գունդ։

Ասեց.— Կնի՛կ, մի կտոր բանբակ բեր։

Բանբակ բերեց. կճուճը թամուզ սրբեց, մի պուճուր էլ էդ եղիցը դրեց մեջը, տրորեց ու տվեց տղին, ասեց.

— Դե, գնա, թե մարդ ես, էս էլ քե բոլ ա։

Էդ տղեն վե կալավ, դրեց ծոցը, ասեց.

— Ընձի ճանփու դիր։

Աղեն գնաց էրկու հատ ձի առավ, էրկու հարիր մանեթ փող տվեց, լավ շորեր տվեց.

— Դե՛,— ասեց, բարի ճանփա։

Ըդոնք ընկան ճանապար ու գնացին. գնացին չոլի մեջ մեկ աղբրի վրա իջան։ Հաց կերան, պառկան։ Տեհան մի տաս հատ ձիավոր գող էկան, վեր էկան, ասեցին.

www.naregatsi.org

— Էս մարդին սպանենք, ձիանը, կնիկը տանենք։

Էդ մարդը ընկավ աղաչանք.

— Խի՞ եք սպանում, ձին էլ տարեք, մալն էլ տարեք, ընձի, իմ կնկան ձեռ մի տաք։

Գողերի մեկի սիրտը խիղճ ընկավ.

— Խի սպանենք, մեր ձեռ ինչ կընկնի, որ սպանենք, կնիկը տանենք՝ ի՞նչ անենք։

Ձիանն էլ առան, փողերն էլ առան, էրկսով չըփլախ մնացին ըտեղ։ Ծոցի ջիպի բանբակը թափած էր ըտեղ, ասեց.— Կնի՛կ, կնի՛կ, էդ պոնծով[1] մե ջուր տուր, խմեմ։— Կնիկը պոնծը վեր կալավ, աղբրի մեջը լվաց։

Ասեց.— Էդ բանբակով էլ սրբի, թամուզ ըլլի։

Բանբակը վեր կալավ, սրբեց. տեհավ պոնծը էլավ ոսկի։

Ասեց.— Կնի՛կ, էս բանբակին հունար կա, բանբակը թուփ արա։

Բանբակը թուփ արին, վեր կացան ու գնացին։ Որտեղ որ սովաթանում են, մի խեցատի կտոր վեր են քաշում, բանբակով սրբում, ըլլում էր ոսկի, տալիս են հացի, ուտելով էթում են։

Էկան իրանց քաղաքը դուռ էլան, գնացին իրանց տունը։

Հերը, մերը էկան, թուփ էլան գլխին, ասեցին.

— Էդ ի՞նչ բան էր, ըդենց սիպտակեցիր։

Նստեց, իրա գլխին էկածը նաղլը արեց, ասեց.

— Էսդար դարտ տենողը չի՞ սիպտակի։

Ղոնախ էկավ տունը, տեսավ էն թուխ մարդը նստավ հացի, էն սիպտակ մարդին բանացընում էր, ասեց.

— Խի՞ եք ջահելներդ նստե, էդ սիպտակ մարդին բանացընում եք։

Ասեցին.— Էդի մեր պստիկն ա։

— Ո՞նց պստիկն ա, ես ձեր հացը չեմ ուտում, թո իրա պատմությունը անի։

— Դու քու հացը կեր,— ասեց,— իմ դարտը շատ ա։

— Դու քու դարտը չասես, ես ձեր հացը չեմ ուտի, ասեց։

Էդ մարդ սեղանի վրա սկսեց իրա գլխից անցած բաները, պատմեց մինչև իրեք օր։

Ղոնախը մինչև տակը չառավ, հաց չկերավ։

---

1 Կժի կոտրած կտոր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

10. ՂԱՀՐԱՄԱՆ-ԱՍԼԱՆ ԹԱՔԱՎՈՐՆԵՐ

Ղահրաման թաքավորին ավլատ-թավլատ չուներ. միտք արեց, իրա վազիր-նազիրին կանչեց։ Էկան թուփ էլան, ասեց.— Գիտա՞ք ընչի համար եմ կանչե ձեզ։ Ինձ զավակ չունեմ. ընձանից ետը, որ մեռնեմ, ո՞վ պըտի էս մալը ուտի, պըտի ընձանից ետը թաքավոր նստի, խորհուրդ արեք, բալքի մի տղա ըլի։

Ընտի վազիր-նազիր խորհուրդ արեցին։ Վազիրի մեկը վե կացավ, կանչեց ասեց.

— Թաքավո՛ր ապրած կենա, քու խազինի դուռը բաց կանես, քու ամբարն էլ բաց կանես՝ սովածին հաց կտաս, տկլորին շոր կտաս, չունեվորին փող կտաս։ Աստված կքաղցրանա, քեզ մի տղա կտա։

Ասեց.— Գնա՛, իրավունք տվի քեզ. մոնց որ գիտաս, ընենց արա։

Վազիրը խազինի դուռը բաց արեց, ցորենի ամբարն էլ. չունեցողին տվեց։

Ընդի մի դարվիշ էկավ նաճախը ձեռին, «Ցա՛-հո՛» արեց ու թաքավորի կշտին կաղնեց, ասեց.

— Հը՛, թաքավոր ապրած, էս ի՛նչ տուրք ու տալիք ա։

Ասեց.— Դարվիշ բաբա՛, ընձի տղա չկա, տալիս ենք, որ աստված քաղցրանա, մի տղա տա։

www.naregatsi.org

Ասեց.— Ըսենց հինգ խազինա փող, հինգ ամբար էլ ցորեն փչացնես, աստված քե տղա տվողը չի։

Ասեց.— Դարվիշ բաբա՛, աշխարքը ման գալող ես, ըստրա վերջը մոնց պըտի ըլի։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, վերջը քե ասեմ. մի հատ խնձոր ունեմ, կկիսեմ, կեսը դու կուտես, կեսը քու կնիկը. քեզ ջուխտ տղա կըլլի, որ խոստանաս տղեքի մեկը տաս՝ խնձորը կըտամ, թե չես տա՝ չեմ տա։

Ասեց.— Դարվիշ բաբա, որ ջուխտ ըլնի, մեկը քեզ փեշքաշ։

Ասեց.— Հավատա՞մ։

Ասեց.— Հավատա՛։

Ասեց.— Խոսքիցդ հետ չդառնաս։

Խնձորը կիսեց, կեսը տվեց՝ Թաքավորը կերավ, կեսը՝ Թաքավորի կնիկը։

Դարվիշը թողեց ու գնաց։

Ինը ամիսը թամըմավ, Թաքավորի կնիկը շոքը տվեց գետինը, մի ջուխտ տղա բերեց։

Նազիր, վազիրը բիրատի թուփ էլան, էկան, էկան աչքալիսեք։

Ասին.— Աչքդ լիս, Թաքավոր ապրած կենա։

Ասեց.— Դե՛, տղեքի անըմը դրեք։

Վազիրի մեկը ասեց.— Շատ դադ-բեդատ էր անըմ, անուն դնենք Դադ ու Բեդատ։

Տղեք մեծացան, գնացին վարժատունը կարդալու։

Էլան տասնըհինգ տարեկան. մեկ էլ տեհան դարվիշն էկավ, նաճախը տվեց գետինը ու ասեց.

— Հը՛, Թաքավոր ապրած, խոսքիդ տե՞րն ես։

Ասեց.— Քեզ ինչ եմ խոստացե, խոսքիս տեր ըլնեմ։

— Թաքավոր ապրած կենա, ինձ չե՞ս ճանաչում, էն խնձորն որ տվեցի. դու, քու կնիկդ կերաք, որ ջուխտ տղա ըլլեր մեկը տայիր ինձ։

— Հա՞, դու էն դարվիշն ես, որ խնձորը տվիր, տասնըհինգ տարի ա գնալդ, չեմ ճանաչում, օղորթ ա, խնձորը տվեցիր, զուր անց կացավ, էրեխա չէլավ։

Ասեց.— Իմ խնձորը հնար չէր՝ զուր անց կենար։

Ասեց.— Ինչ էլավ՝ էլավ, տարեք դարվիշ բաբայի քյաշկյուլը ոսկի լցրեք, թո տանի։

www.naregatsi.org

Ասեց.— Անկարելի ա, ես ոսկու դարտը չեմ։

Մեկ էլ էն տեհան, որ վարժատանից մի տղեն էկավ։

Դարվիշն ասեց.— Թաքավոր ապրած, էս իմ խնձորիցն ա։

Ասեց.— Դարվիշ բարա, էդ մի տղեն ըլնի, էդ էլ տամ քեզ։

Ասեց.— Թաքավոր ապրած, որ էս մեկն ըլնի, քեզ փեշքաշ ա։

Մեկ էլ էն տեհան՝ էն մի տղեն էլ էկավ։

Ասեց.— Թաքավոր ապրած, էս էլ իմ խնձորից ա։

Ասեց.— Դարվիշ բարբային տարեք խազինի դուռը, ինքն ու ձին ինչդար ոսկի կտանին, բառցեք։

Դարվիշն ասեց.— Անկարելի ա, հինգ ձիաբեռ էլ տաս, ինձ պետք չի, տղեքին մեկը պըտի տաս։

Տղեքին մեկը էկավ, մոտացավ թաքավորին, ասեց.

— Էս դարվիշի հետնա ի՞նչ եք խոսում, ի՞նչ կա։

Ասեց.— Որդի՛, դու գնա, դարվիշին բալքի մի հնարով հեռացնեն, ինչ բան տալիս ենք ըռազի չի ըլնում։

Ասեց.— Բա ի՞նչ ա ուզում։

Ասեց.— Մի վախտ ինձ տղա չկար. խազինի դուռը բաց արի, ցրվում ի, որ ինձ աստված մի տղա տար։ Հետո էս դարվիշն էկավ, ասեց. «Էս ինչ խազինա ես ցրվում»։ Դարվիշին ասի. «Դարվիշ բարբա՛, ցրվեմ, որ աստված ինձ մի տղա տա»։ Դարվիշը մի հատ խնձոր հանեց, կիսեց, ասեց. «Կեսը դու կեր, կեսը քու կնիկը, ջուխտ տղա կըլի, մեկը պըտի տաս ինձ». ես էլ խոստացել եմ, որ տամ։ Հըմի ձեզ չեմ ղըմշում, ինչդար ոսկի տալիս եմ, ըռազի չի ըլլում։

Տղեն ասեց.— Խոսքիցդ դուս մի գա, հենց ի՛նձ տուր, ես էթամ։

Թաքավորն ասեց.— Դարվիշ բարբա՛, աչքդ լիս ըլնի, տղեն գալիս ա, արի տա՛ր։

Նստեցին, կերան, խմեցին։

Տղեն վե կացավ հոր ձեռն էլ պաչեց, մոր ձեռն էլ։ Ընկավ դարվիշի հետ, գնաց։

Իրեք օր գշեր, ցերեկ դարվիշն ըտրան ճանապար տարավ, ընկան մի յապանի տեղ, սար-ձոր տարավ, մի սարի գլխին կաղնացրեց։

Ասեց.— Թաքավորի տղա՛, մի թամաշա արա էս ջրին։

Ասեց.— Թամաշա եմ անըմ։

Ասեց.— Մո՞նց ջուր ա, էս ջուրը։

www.naregatsi.org

Ասեց.— Երկնքիցը բռնած չարի գետինը ջուր ա, ճանապարը չկա։

Ասեց.— Ջրի էն դիհը տեսնում ես, լիս ա էրևում, էն էլ կրակ ա՝ երկնքիցը բռնած չարի գետինը։ Կրակի էն դիհը քառասուն արաբ կա, նաճախները ձեռներին՝ քսան էս դիհը կաղնած ա, քսան էն դիհը, ընդի մի զաղա կա։ Արաբների միջով կէթաս, կմտնես զաղին. զաղի մեջ մի հատ ստոլ կա, ստոլի վրա մի հատ քիսիկ կա, էն կվեկալես, բերես։ Ընդի մի խանում ախչիկ կա, որ ձեն կտա՝ չես կաղնի, դառնաս, կգաս։

Տղեն տվեց ջուրն ու գնաց։ Դարվիշն ասեց. «Իրեք հարուր տղա եմ ղրկե, որը ջուրն ա հեղդե, որը կրակն ա էրե, որին էլ արաբներն են տվե. հըմի էս գնաց՝ տեսնանք կարա բերի, թե էս էլ պըտի վերջանա»։

Դարվիշը էդ բանի վրա էր պարապում, որ քիսիկը ձեռք բերեր։

Տղեն տվեց ու ջուրը ճղեց, անց կացավ էն էրեսը. գնաց, կրակին մոտացավ, կրակն էլ տվեց, անց կացավ. գնաց քառասուն արաբի մեջ մտավ, ըդ էլ տվեց, անց կացավ։ Գնաց, մտավ զաղեն. տեհավ՝ մի հատ ստոլ կա, ստոլի վրա մի հատ քիսիկ կա, քիսիկը վե կալավ, դրեց ջեպը։ Էն դհիցը մի ախչիկ ձեն տվեց, ասեց.

— Թաքավորի տղա՛, կաղնի՛, քե մի բան ասեմ։

Տղեն անկաջ չարեց, ետ դառավ, արաբների միջովն էկավ, կրակի միջովն էկավ, ջրի միջիցը դուս էկավ։

Դարվիշը որ տեհավ, էնդար ուրախացավ, թևերը վե կալավ, հաղ արեց.

— Ապրիս թաքավորի տղա, քիսիկը տուր մե տեսնամ։ Ձեռը մեկնեց դպա թաքավորի տղին։ Թաքավորի տղեն ձեռը տարավ ջեպը, որ քիսիկը հանե տա դարվիշին, բիրտան սև ամպը էկավ դարվիշի գլխին ու տրաքեց. ո՛ր տրաքեց, էդ սարը ամպի տակին դողաց։ Տղեն թամաշա արեց, որ մղրըպը տվեց, մութն ընկավ, աչքերը էլ զատ չտեհավ. վախլութունից ուշքը գնաց, վեր ընկավ։ Մի սահաթ, էրկու սահաթ քաշեց, ուշքը էկավ վրեն. թամաշա արեց, տեհավ՝ արև, արքայութուն։ Վեր կացավ, կաղնեց, ասեց.

— Էս ի՞նչ բան էր, տեսնամ դարվիշն ո՞ւր գնաց։

Տղեն վեր կացավ, դարվիշին ման էկավ.— Ահա՛ն, դարվիշին քառասուն կտոր արե՝ ոտը մի յան ա, գլուխը մի յան ա, ձեռը մի յան ա, ցըրվել ա բիրատի։

www.naregatsi.org

Տղեն մի բարակ ճանփա ընկավ ու վազեց, էկավ մի մեծ ճանապարհ ընկավ. արևը մտավ, էկավ մի քաղաքի ըռաստ էկավ գնաց մի խարաբա տեղ մտավ։ Ձեռը տարավ ջեպը, ասեց. «էս ինչ բան էր, հալա հանեմ, տենամ»։

Հանեց, տեհավ՝ մի պուճուր ոսկե շամատան կա մեջը, միջին էլ մի հատ մում կա։ Ասեց. «լավ էլավ»։ Մումը կպցրեց։ Ո՞ր կպցրեց, տեհավ՝ քառասուն արաբը, քառասուն մեշոք ոսկին վե կալած էկան, ասեցին.

— Հա՛, թաքավորի տղա, էս քու փեշքաշը։ Արաբները ասեցին.— Թաքավորի տղա՛, մեզի իզին տու, էթանք։

Ասեց.— Գնացե՛ք։

Ասեցին.— Շամատանը վե կալ, տակին տուր, նո՛ր կէթանք մենք։

Շամատանը վե կալավ, իրեք անգամ տակին տվեց. արաբներք գնացին։ Մեկ էլ տեհավ քառասուն ախչիկ էկան։

Տավղին, քնարը, մուզուկանդը չարի լիս ածեցին, էդ տղին քեֆ շանց տվին։

Լիսը բացվեց, ախչկերքը ասեցին.— Իզին տո՛ւր, մենք էթանք։

Ասեց.— Գնացե՛ք։

Ասեց.— Չարի մումը չփչես, մենք չենք կարա էթա։

Մումը փչեց։ Շամատանը դրեց ջեպը։ Վե կացավ, գնաց քաղաքի մեջը, տեհավ՝ երևելի քաղաք էր։

Հարցրեց.— էս ի՞նչ քաղաք ա։

Ասեցին.— Ասլան թաքավորի քաղաքն ա։

Ասեց.— Ըստե դարտակ դուքան կըլի՞, քրեհով վե կալեմ։

Մի մարդ ասեց.— Ինձ դուքան ունեմ։

Գնացին, տեհան, ամիսը տասը մանեթ բարիշեցին քրեհ։

Քառասուն համալի կանչեց, վե կալավ տարավ. քառասուն մեշոք ոսկիք բերեց, կիտեց իրար վրա։ Մի հատ ղֆիլ առավ, դրեց դուքանի վրա։ Քաղաքի մեջ ընկավ մի մեծ պլան, գնաց թամաշա անելով։ Գնա՞ց, դուս էկավ մի մեծ դարվազա, ասեց.

— էս ի՞նչ դարվազա ա։

Ասեցին.— Ասլան թաքավորի բաղչի դարվազեն ա։

Ասեց.— Մտնեմ մեջը, ման դամ, հո չե՞ն խոսա։

— Բան ասող չըլի։

www.naregatsi.org

Մտավ, ման էկավ, տեհավ մի մարմար հավուզ կա ըտի, շատրվան էլ քցըմ ա։ Ոտները, ձեռները ու էրեսը լվաց ըտեհ։

Ասեց.— Էն դշեր էդ մումը կպցրի, հիմի կպցնեմ, տենամ մոնց ա։

Կպցրեց, տեհավ՝ քառասուն արաբը քառասուն մեշոք ոսկին բերին։

Ալբիալը շամատանի տակին տվեց։ Արաբները գնացին, քառասուն ախչիկները էկան։ Մումը փչեց, քառասուն ախչիկն էլ գնացին։ Պառկավ ու քնավ էդ հավուզին վրա։

Ասլան թաքավորի ախչիկը իրան փանջարից թամաշա էր անըմ ըդրան. իրա քառասուն ղարավաշին կանչեց իրա մոտը, ասեց.

— Ախչկե՛րք, տենը՞մ եք հավըզի վրեն ինչ ա։ Ես թամաշա արեցի մի տղա ոտ ու ձեռ լվաց, քառասուն արաբ էկան էդ քառասուն մեշոքը ըդի դրեցին, պառկած տղին գլուխ տվեցին, գնացին, հետո քառասուն ախչիկ էկան, ընդոնք էլ էդ տղին գլուխ տվեցին. վեր էկեք, էթանք տենանք, ի՛նչ ա։

Վեր էկան, ախչկերքը ասեցին.— Խանո՛ւմ, էն ապրանքը մեզ, էն տղեն քեզ։— Էկան, տղի գլխին կաղնեցին։

Ասեց.— Մեշոքները տեհեք, ի՞նչ ա։— Տեհան բիրատի ոսկի ա։

— Ախչկերք, բանը ոսկին չի, հնարն ա, վեր կացնենք, տենանք։

Պտըտվեցին դես, պտըտվեցին դեն, տղեն զարթնեց։

Ասեց.— Ցա՛, ընդրանք, հալա պտըտում են. ես մումը փչեցի, որ էթայիք։

Թաքավորի ախչիկն ասեց.— Մենք ընդոնք չենք։ Մենք ուրիշ ախչիկ ենք։ Ընդոնց հետ էնղտար քեֆ արիր, մի կես սահաթ էլ մեզ հետ քեֆ արա։

Էլան, հրամայեցին՝ գինի, հաց բերեցին, դրին տղի աղաքը, մէ էրկու թաս խմացրին, ասեցին.

— Քու հնարը ինչ էր, արաբները ոսկի բերեցին, հետո ախչկերք էկան։

Ձեռը տարավ ջեպը, ոսկի շամատանը հանեց, դրեց ընտե, ասեց.

— Էս մումը որ կպցնեմ՝ արաբները ոսկի կբերեն, շամատանի տակին որ տամ՝ արաբները կէթան, ախչկերքը կգան, մումն էլ փչեմ՝ ախչկերքը կէթան. հնարն էդ ա։

10—2573

www.naregatsi.org

Ասեց.— Շամատանը չե՞ս տա ինձ։

Ասեց.— Հնար չկա, չեմ տա։— Կոլոլեց, դրեց ջեպը։

Գինի խմացրին տղին Թաղատան։

Ախչիկ չորս մարդի կանչեց։— Ըստրան վե կալե՛ք, կոխեք փալասին մեջ։

Թաքավորի ախչիկը քիսիկը հանեց, դրեց իրա ջեպը։ Կոխեցին փալասի մեջ, ղայիմ կարեցին, վե կալան գնացին, հանդի տակին գյոլ կար, որ քցեին գյոլը։ Վե կալան, գնացին գյոլի կուշտը հասան։ Իրեք չորս մարդ ընդհից տեհան, ասեցին.

— Ապրանք ա, տանում են պահեն։ Էթանք խլենք ձեռներիցը։

Որ վազեցին ըդրանց, ընդոնք վե քցեցին ու փախան։

Էդ մարդիկ տեհան՝ փալասի միջին մի զատ ժաժ ա գալի։ Փալասը ճղեցին՝ տղեն միջից դուս էկավ։

Նստեց, ըդրանց պատմեց.— Ընձի տանում ին գյոլը քցեն. դուք պատահեցիք, ինձ ազատեցիք։ Արեք տանեմ ձեզ տաս-տաս ոսկի տամ։

Էդ մարդկանցը վե կալավ, էկավ, դուքանի դուռը բաց արեց, ամենքին տաս հատ ոսկի տվեց։

Ասեց.— Քիսիկը ձեռիցս գնաց. էս փողն էլ բոլ ա, մե հնար դթնեմ, էթամ իմ երկիրը։

Խաբարը տանք Թաքավորի ախչկանիցը։

Թաքավորի ախչիկը աղաքի ոսկիքը փայ արեց աղաքի մարդկանցը։ Էդ չորս մարդն էլ էկան, ասեցին.

— Քցեցինք գյոլը, էկանք։— Հանեց մեկ-մեկ բուռ ոսկի էլ տվեց։

Թաքավորի ախչիկը գնաց Թաքավորի մոտը, ասեց.

— Մի հնար գիտամ ես, էգուց կանչա, քու ոտ ու ձեռի մարդիկը բաղչեն։— Կանչեց բաղչեն, քեֆ արեցին։

Քիսիկի միջից շամատանը հանեց, մումը կպցրեց, դրեց ընտեղ։ Քառասուն արաբն էկան, նաճախները ձեռին, հասան էդ տեղի նստող մարդկանցը, տվեցին՝ որի ոտը կոտրեցին, որի գլուխը կոտրեցին, որի թևը կոտրեցին, մի դուման հանեցին ըդտե, որ որոտմունքը էլ ինչ ասեմ. մոնց էլավ, դիպան էդ շամատանին, մումը ընցավ. ընցնելու բաշտան արաբները բիրատի գնացին։

Թաքավորը իրա ախչկան կանչեց։

www.naregatsi.org

Ասեց.— Գլուխդ ուտի քու արած հնարը, էս է՞ր քու արած հնարը։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, ըսենց պըտի չըլլեր, էս քառասուն արաբն որ էկան, քառասուն մեշոք ոսկի պըտի բերեին, հետո քառասուն արաբը պըտի էթային, քառասուն ախչիկ պըտի գար, քառասուն ախչկա ձեռ մուզիկ, գարմոն ըլներ, պըտի ընդոնք ածեին, խաղ անեին՝ մենք թամաշա անեինք։

Թաքավորը ասեց.— էս հնարը տերը կանի, տերը գթեք ու բերեք։

Սաղ քաղաքը ման էկան, ինչդար տղա կա բերեցին ըտեղ։ Մեկը չկարաց տեր կաղնի։

Ասեցին.— Մի տղա կա, դուքանի դուռը նստել ա։

Գնացին, կանչեցին բերին։

Էկավ օխտը անգամ գլուխ տվեց, վրա ութին ձեռ բռնեց, կաղնեց թաքավորի աղաքը։

— Որդի՛,— ասեց,— էս քիսիկն ու շամատանը ո՞ւմն ա։

Ասեց.— Իմն ա՛։

Ասեց.— Դե կպցրա տենանք, հնարը ի՛նչ ա։

Կպցրեց, դրեց ըտեղ։ Տեհան քառասուն արաբն էկան, քառասուն մեշոք ոսկին բերին, իրեք անգամ շամատանի տակին տվեց՝ արաբները գնացին. քառասուն ախչիկն էկան ածելով, հաղ արեցին։ Մոմը փչեց՝ ախչկերքը գնացին։

Թաքավորն ասեց.— Ա՛յ, տերն էս էր։

Ասեց.— Ա՛յ տղա, դու ի՞նչ տղա ես։

Ասեց.— Ղահրաման թաքավորի տղեն եմ։

Ասեց.— Ես եմ, էս մեկ ախչիկը, պըտի տամ քեզ. քեզանից լավ տղա չեմ կարա գթնի։

Բերեց, էդ ախչիկը տվեց ըդրան, օխտը օր, օխտը գշեր հարսանիք արեց. հարսանիքից հետո տարավ մի օթախի մեջ, ասեց.

— էս ա ձեր տեղը, էստեղ քնեք։

Դռներն ղայիմ շինեցին, որ պառկեն, քնեն։

Մի ջանավար էկավ. փանջարի էրկաթները ջարթեց, մտավ ներս, էդ տղին ղուլ տվեց ու գնաց։

Առավոտը թաքավորը էկավ իրա ախչկա մոտը. դուռը բացեց, մտավ նեքսև, տեհավ՝ վախլութենից իրա ախչիկը մի պուճախ կպել ա, մնացել։

www.naregatsi.org

Ասեց.— Ախչի՛, խի՞ ես էդենց էլե։

Ասեց.— Դռները շինեցինք, որ պառկեինք, մի ջանավար էկավ, էրկաթները ջարթեց, էն տղին ղուլ տվեց, գնաց։

Թաքավորն իրա ախչիկը վե կալավ, գնաց, ասեց.

— Ո՛վ ա գիտում, էդ տղեն ինչ ֆելբազ մարդ էր, մեր գլխին ըռաստ էլավ։

Խաբարը տանք էդ տղիցը։

Ջանավարը վե կալավ, տարավ ընտե, որ էդ քիսիկը վեր էր կալե։

Էդ ջանավարը էլավ մի ախչիկ, էդ տղի կշտին նստեց, սիրուն ախչիկ, շա՞տ սիրուն։

Ասեց.— Ինձ թողացիր, գնացի՞ր թաքավորի ախչկան առար։ Ասեց,— Որ էկա՞ր, ջուրը անց կացար՝ չհեղդվար։ Էկար, կրակը անց կացար՝ չի էրվար։ Էկար, արաբն էլ անց կացար՝ քեզ չզարկին։ Որ քիսիկը վե կալար՝ ձեն տվեցի, չկաղնեցիր։ Որ գնացիր, հասար դարվիշին։ Դարվիշը որ ձեռը մեկնեց, քիսիկը առներ, էն ամալը որ տրաքեց, դարվիշին քառասուն կտոր արեց, էն ո՞վ էր. էն ե՛ս ի։ Քեզ չղմշեցի բան անիլ։ Հըմի ես քունն եմ, դու իմն ես, վե կաց, էթանք քու հոր քաղաքը, ըստե մնալը մեզ հարկավոր չի։

Վե կացան ախչիկն ու տղեն, էկան Ասլան թաքավորի քաղաքը. գնացին, մտան բաղչեն, մարմար հավըզին վրա նստեցին։

Թաքավորի ախչիկը թամաշա արեց, տեհավ՝ հավըզի վրա էն տղեն ու մի ախչիկ նստած են։

Ախչիկը վազե-վազ գնաց, թաքավորին ասեց.

— Թաքավոր ողջ կենա, էն տղեն մի ախչկա հետ հավըզի վրա նստած ա։

Թաքավորը տեղիցը վե կացավ կաղնեց, իրա կնկան, իրա ախչկան վե կալավ, էկավ հավըզի վրա, էկավ, բարև տվեց, կաղնեց։

Էդ տղին ասեց.— Քեզ ի՛նչ էլավ, ո՞ւր գնացիր։

Էդ ախչիկը վե կացավ, ամեն բանը թաքավորին պատմեց, ասեց.

— Թաքավո՛ր ապրած, էս տղեն որ իմն ա, քու ախչիկն էլ տանենք ըստրա աղբորը, էրկուան էլ մեկ են՝ մի խնձորից են։

Թաքավորը իրա ախչիկը տվեց ըդրանց, ասեց.

— Վե կալեք, տարե՛ք։

Թաքավորը իրա մալը կես արեց, դրեց ախչկա բաժին։

www.naregatsi.org

Ախչիկը վե կալան, բերին. էկան Ղահրաման Թաքավորի քաղաքը դուս էկան։ Քաղաքի ղրաղը տեհան մի հալիվոր մարդ ցախ ա թոփ անում։

— Բարև, պապի՛,— ասեց։

— Աստծո՛ւ բարին, որդի՛։

Ասեց.— Ղահրաման Թաքավորը սա՞ղ ա, ո՞ղջ ա։— Ասեց.— Արի՛, քե մի բուռ ոսկի տամ, գնա Թաքավորին աչքալիսեք տար, ասա. «Քու տղեն էկել ա քաղաքի ղրաղը»։

Հալիվորը մի բուռ ոսկին ածեց ջեպը, էնպես գնաց Թաքավորի մոտը, ղշի պես։

Ասեց.— Աչքդ լի՛ս, տղեդ էկել ա քաղաքի ղրաղը։

Մի բուռ ոսկի էլ Թաքավորը տվեց հալիվորին։

Թաքավորը բորիկ վաղեց քաղաքի ղրաղը։

Տղեն էլ, կնիկն էլ իմացան, ընդոնք էլ վազեցին։

Փաթթվեցին իրար շըլընքովը, իրար պաչեցին։

Տղեն ասեց.— Էս իմ նշանածն ա, էս էլ Ասլան Թաքավորի ախչիկն ա, որ բերել եմ աղբորս համար։

Էդ հալիվորի սիրտը չհամբերեց, էլի հետ դառավ, էկավ ըտե։

Թաքավորի տղեն շամատանը կպցրեց, տվեց հալիվորի ձեռը. քառասուն արաբն, քառասուն ախչիկը էկան, հալիվորին ասեցին.— Դուշ գնա դպա պալատը։

Քառասուն արաբը նաճախները առան ձեռքը, մեյդան բաց արեցին ու ախչկերքը երգելով՝ հոյնա՞ր-հոյնա՞ր գնացին։

Տարան ժամ, էրկու աղբորն էլ պսակեցին։

Օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեցին։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

www.naregatsi.org

11. ՍՈՒՖՐԵՆ

Կար-չկար մի թաքավոր. էդ թաքավորին իրեք տղա ուներ, ինչ որ խորհուրդ ուներ, պզտիկ տղի հետ կաներ, պզտիկ տղեն խելոք էր։

Մեկ օր խորհուրդ արեց, ասեց.— Ձեզ պըտի պսակեմ։

Պզտիկ տղեն ասեց.— Մեզ որ կպսակես, ման արի, որ իրեք ախչիկը մի տանից բերես։

— Որդի՛, իրեք ախչիկը մի տանից շատ կա, համա իմ հավանածը պըտի ըլի։

Տղեն ասեց.— Դու գիտաս, հալպաթ քու հավանածը պըտի ըլի։

Կանչեցին, վեզիրն էկավ, ասեց.— Թաքավորն ապրած կենա, ի՞նչ եք հրամայում։

Ասեց.— Ըսօր իմ պզտիկ տղի հետ խորհուրդ եմ արե, որ իմ տղեքին պսակեի, իմ պզտիկ տղեն ասեց. «Իրեք ախչիկը մի տանից ուզաս, հըմի իրեք ախչիկ մի տան շատ կա, վե՛ր էթանք ման գանք, ո՛րը հավանենք, էն ուզենք։

Վեզիրը ասեց.— Վե՛ր էթանք։

Էրկու հատ ձի նիլան, ընկան քաղաքները ման գալու. ի՛նչ-զտար ման էկան, ինչ տուն մտան, իրանց դիր չէկավ։

www.naregatsi.org

Ասեց.— Վեզի՛ր, շատ ման էկանք, արի՛ էթանք Ստամբոլ էլ պտրտենք ու թողանք էթանք։— Գնացին Ստամբո՞լ։ Ստամբոլա մեջն էլ շատ պտտեցին, էլի չգթան։

Ասեց.— Վեզի՛ր, էկել ենք Ստամբոլ, էթանք թաքավորին էլ տենանք, նոր թողանք ու էթանք։— Գնացին թաքավորի մոտը, ղոնախ էլան. թաքավորը բերեց, ըդոնց հաց քաշեց։ Իրեք հատ ախչիկ ըդոնց հաց ին բերըմ։ Հաց բերեցին, կերան։

Ստամբոլա թաքավորը էդ թաքավորին ասեց.— Ի՞նչ բանի համար եք էկել։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, ես իմ պզտիկ տղի հետ խորհուրդ արեցի, որ պսակեի, խորհուրդ տվեց՝ ո՛ր ախչիկ կուզես, մեկ տանից ուզա. հըմի էս ախչիկները, ո՛ր հաց են բերում, քու ի՞նչն են։

Ասեց.—Էս իրեքն էլ իմ ախչիկներն են։

Ասեց.— Ես իրեքին էլ հավանում եմ, չեմ կարա վատ ասի, էս իրեք ախչիկն էլ կտա՞ս իմ իրեք տղին։

Ասեց.— Իրեքն էլ քե փեշքաշ ա։

Թաքավորը ձեռը տարավ ջեպը, իրեք հատ մատանիք հանեց, դրեց սեղի վրա, ասեց.

— Իրեք ախչկան էլ կանչա գա՛։

Իրեքին էլ կանչեց, էկան։ Թաքավորը ամենքին մի մատանիք դրեց մատները, ասեց.

— Իրեքդ էլ էլաք ընձի հարս։

Թաղատան կեր ու խում արեցին, շնորհավորեցին դրանց նշանդրեքը։

Թաքավորը ասեց.— Ես էթում եմ, մի ամիս ժամանակ կտաս, ես իմ տղեքին վե կալեմ, կգամ։

Թաքավորը էկավ իրա երկիրը։ Իրեք տղեքը էկան աղաքը. պզտիկ տղեն ասեց.

— Թաքավո՛ր ապրած, որ շատ ետացար, ուզում էի գայի, ման գայի քեզ, լավ էր, էկար։

Թաքավորն ասեց.— Աչքներդ լի՛ս, իրեքիդ էլ նշան եմ դրե, Ստամբոլա թաքավորի ախչկերքը։

Գնացին, վեր էկան իրանց պալատը. թաքավորը իրիկունը իրան տղեքին կանչեց, ասեց.

www.naregatsi.org

— Մեկ ամիս ժամանակ եմ ուզե, որ մեր պատրաստությունը տեսնանք ու էթանք, ախչկերքը բերենք։

Իրեք ձեռք ախչկա շոր կտրեցին, ըդոնց ամեն բաները հետը, իրեք ձեռք էլ տղի շոր՝ իրան տղեքին։

Ասեց.— Վեզի՛ր, դե՛, ժամանակ է, էթանք, տղեքին տանենք, հինգ հարուր էլ ձիավոր վե կալենք, մեր հարսները բերենք։

Պզտիկն ասեց.— Բիրատինով էթանք՝ էս պալատը ո՞վ ա մուղաթ կենում։

Թաքավորն ասեց.— Մեկին կհանձնենք, կէթանք։

Ասեց.— Անկարելի ա, ես չեմ էթա, ես կմնամ, դուք գնացեք բերեք։

Թաքավորը ասեց.— Շատ լավ ասում ես, դո՛ւ կաց։

— Վեզի՛ր,— ասեց թաքավորը,— մենք էրկու տղին կտանենք, էնտե կպսակենք. հարսը կբերենք, ըստի կպսակենք։

Պզտիկ տղեն ասեց.— Որ Ստամբոլա դուս կգաք, առաջին մի Կարմիր կոնտ կա, տակին մի աղբուր կա, որ կհասնեք ընտի՝ վեր չգաք. ընտի փորձանք կպատահի ձեզ, դու գիտաս, որ ես շատ եմ ման էկե, ամեն տեղն էլ գիտամ։

Թաքավորը ասեց.— Շա՛տ լավ։

Առավոտը ընկան ճանապարհ. դափով, ղուռնով գնացին դպա Ստամբոլ, թաքավորի պալատը վեր էկան։

Կերան, խմեցին. բերեցին ախչկերքին կաղնացրին մեյդան, իրեքի շորերն էլ հագցրին։ Էրկու տղեն բերին, էրկու հարսի ձեռը բռնեցին, պուճուր ախչիկը ընենց կաղնած մնաց։

Ստամբոլա թաքավորը ասեց.— Որ երկու տղա ունեիր, իրեք ախչիկ խի էիր ուզում, քու ծուռնությունը բելլու արեց։

Ասեց.— Իմ գլուխը, քու գլուխը վկա, որ իրեք տղա ունեմ, էս մինն էլ պըտի տանեմ, ընտի պըտի պսակեմ. էն մնաց պալատը, ընտի հավատարիմ մարդ չունեինք։

Էդ էրկու տղին տարան, պսակեցին։ Էկան, քեֆ արեցին. առավոտը թաքավորը ճանապար քցեց։

Ստամբոլա թաքավորը ասեց.— Արի՛, մի-մին դայվա խմենք, նո՛ր կէթաս, կհասնես։ Մի քիչ խոսացին, ետացավ։

— Դե, ասեց,— մնաս բարի, ես էթամ, հասնեմ։

Ձեռ բռնեց ու ընկավ ճանապար։

Ընդոնք գնացին, Կարմիր կոնտի կշտին կաղնեցին։

www.naregatsi.org

Վեզիրն ասեց.— Թաքավորը ետացավ, շատերը վեր տվեք։

Շատերը վեր տվեցին, կերակուր էփեցին, թաքավորը էկավ հասավ, ասեց.

— Ըստիան բարձեք, ըստի խի՞ եք վեր էկե։

Վեզիրն ասեց.— Մութն ա, էս վախտ ո՞ւր էթանք, առավոտ կէթանք։

Ասեց.— Վեզի՛ր, լսեցի՞ր, պզտիկ տղես ի՞նչ ասեց. «Կոնտի վրա վտանգ կպատահի»։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, ի՛նչ ես վախենում, հինգ հարուր ձիավոր մեր կշտին ըլի, մենք վախենանք։

Ասեց.— Կացե՛ք, որ ըտենց ա։

Լիսը բացվեց, տեհան մե հատ վիշապ չորս բոլորները կտրել ա. վե կացան, ասեցին.

— Սպանե՛ք, անց կենանք։

Վիշապն ասեց.— Ի՞նչ մտքի եք, ուզում եք պոչս պտրտեմ, ձեր հինգ հարուրին էլ վերջացնեմ. թաքավորի պզտի տղին խնայեցի ձեզ։

Թաքավորը ասեց.— Ճանապար տո՛ւր, էթանք։

Ասեց.— Քու պզտիկ տղին տուր ինձ, ես բիրատի բրախ տամ, գնացեք։

Ասեց.— Կտա՛մ։

Ասեց.— Ճանապար կտամ, էթաք, որ նա ղրկես՝ գա, համա ընդրա նշանածը չեմ թողա տանեք։

Ճանապար տվեց, ամեն էլ անց կացան, պզտիկ տղի նշանածը մնաց կշտին։ Ընդոնք ընկան ճանապար, էկան։

Խաբար բերեցին պզտիկ տղին.— Աչքդ լի՛ս, թաքավորն էկավ։

Վեր կացավ, մի հարուր ձիավորով գնաց թաքավորի աղաքը։

Թաքավորը որ տղին տեհավ, լաց էլավ։

Տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած կենա, պըտի ուրախություն անես, խի՞ ես լաց ըլլում։

Ասեց.— Ընդրա համար եմ լաց ըլլում, քու պատվերը չպահեցինք. ես ըստոնց ճանապար քցեցի, թաքավորի հետ մի քիչ խորհուրդ արեցի, ետացա. էկա տեհա, քու ասած Կարմիր կոնտի վրա վեր են էկե, նեղացա, ասեցի. «Բարձեք, էթանք»։ Վեզիրն ասեց. «Գշերը մնանք ըստի, առավոտը էթանք»։ Ես էլ համոզվեցի, գշերը մնացինք։ Առավոտը տեհանք մի հատ վիշապ չորս բոլորներս կըտ-

www.naregatsi.org

բել ա։ Ուզեցանք վիշապին սպանեինք, որ անց կենաինք, վիշապն ասեց. «Ի՞նչ եք անում, ուզո՞ւմ եք պոչս պտրտեմ, ամենիդ էլ սպանեմ. ձեզ բաղշեցի թաքավորի պուճուր տղին»։ Ասեցի. «Ճանապար տուր, էթանք»։ Ասեց. «Ճանապար կտամ՝ ամա, քու պուճուր տղեն պըտի տաս ինձ». ես էլ խոստացա, տվի։ Ամենիս թողաց, էկանք, քու նշանածը չթողաց. էդ պատճառով լաց եմ ըլլում»

Ասեց.— Ըսկի լաց մի ըլլի, եփոր մեռա, լաց էլի, հըմի քեֆ արա։

Քեֆ անելով բերեցին տուն։ Երկու օր հարսանիք արեցին, պրծան։

Պուճուր տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած, էս քու պալատը, էս էլ քու հարսները, ես էթամ վիշապի հավարին։

Թաքավորը ասեց.— Մ՚էթա, էն վիշապը զարմանալի բան ա. արի մ՚էթա, ինչ էլավ, էլավ։

Ասեց.— Ես իմ էթալու դարտը չեմ, դու Ստամբոլի թաքավորի կշտին ամոթալի կմնաս։

Ընկավ ճանապար, գնաց հասավ վիշապին։

Վիշապն ասեց.— Բարի ես էկե, հազար բարին, իմ աչքին էկե, տեսնո՞ւմ ես, քու նշանածը ոնց եմ պահե. ինչ որ ասեմ, պըտի ընձ անկաջ անես, որ քու նշանածը տամ, տանես, որ չարեցիր՝ չեմ կարա տա, տանես։

Ասեց.— Ասա՛, քու ղուլլուխին կաղնած եմ։

Ասեց.— Դե՛, արի, գլխիս վրա նստի։

Էկավ, գլխի վրա նստեց։

Ասեց.— Անկաջներիցս բռնա, չվախենաս, քեզ պըտի բարձրացնեմ երկինքը։

Պտրտեց, պտրտեց ու ֆալաքի օխտը ղաթը հանեց։

Ասեց.— Թամաշա արա աջ կողմիդ վրա։

Ասեց.— Թամաշ եմ անում։

— Ի՞նչ ա էրևում։

— Քաղաք ա էրևում, ծառ ա էրևում։

Ասեց.— Էն Չինաստանի թաքավորի քաղաքն ա, օխտը ատեծ մի պալատ էրևո՞ւմ ա։

Ասեց.— Էրևում ա՛։

Ասեց.— Առաջին մի չինարի ծառ ա՞ էրևում։

Ասեց.— Էրևում ա։

www.naregatsi.org

Ասեց.— Վիրևում մի ախչիկ պտըտո՞ւմ ա, էրևո՞ւմ ա։

Ասեց.— Էրևում ա, կարմիր շորերը հագած պտըտում ա։

Պտըտեց, վեր բերեց գետինը։

Ասեց.— Դե՛, գնա՛, էն ախչիկը բեր ինձ համար՝ քու նշանածը տամ քեզ համար։ Մի հատ դաստախուն տվեց։— Էս դաստախունը կտամ քեզ, ինչ վախտ սովածանաս՝ դաստախունի մեջ կգթնես։

Վե կալավ դաստախունը, ընկավ ճանապար, շատ ու քիչ աստված գիտա, գնաց։ Էրկու հատ դև ըռաստ էկան. էկան, բռնեցին, ասեցին.

— Վաղուց ա իսանի միս չէինք կերե։

Ասեց.— Ես ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ վե կկալե՞ք։

Ասեցին.— Որ մեզ կշտացնես, քու մուրազն էլ կկատարենք։

Ասեց.— Ի՞նչ կուտեք։

Ասեցին.— Օխտը հատ գոմեշ անճախ մեզ կշտացնի։

Սուֆրեն փռեց, ասեց.— Սուֆրա՛, օխտը հատ գոմեշ ուզում եմ քու միջին։

Օխտը հատ գոմեշ միջին էլավ։

Նստեցին. կերան, ղըրղըրփոցն քցեցին, մի թիքա ոսկոր էլ չթողացին միջին, բիրատի կերան։

Ասեցին.— Ո՞րտեղ ես էթում։

— Չինաստան եմ էթում։

Տարան, իրանց սընոռը անց կացրին. մի հատ մազ քաշին, տվին իրան, ասեցին.

— Նեղ տեղ ընկնես, էդ կրակա՛։

Ընկավ ճանապար ու գնաց. տեսավ մի ղոշուն ա գալի, որ տուտ ու տակ չիկա։ Գնաց, մոտացավ, տեհավ՝ բիրատի ձիավոր մրչեմ են, մեյմունի հետ կռվել են, հետ են դարձե, գալիս են։

Էկան, էդ տղին բռնեցին. վե կալան, տարան իրանց թաքավորի մոտը։

Թաքավորը ասեց.— Տարե՛ք, կերեք, ինչ եմ անըմ։

Տղեն ասեց.— Թաքավորը սաղ ըլլի, ձեզ կշտացնեմ, ընձանե ձեռ կվեկալե՞ք։

Ասեց.— Որ կշտացնես, ձեռ կվեկալենք։

— Ձեր կերածը ի՞նչ ա։

— Մեր կերածը ցորեն ա, դարի ու կորեկ։

www.naregatsi.org

Ասեց.— Ինչտար կուտեք։

Ասեց.— Հարուր խալվար կուտենք։

Սուֆրեն փռեց, ասեց.— Հարուր խալվար ցորեն, գարի ու կորեկ ըլլի միջին։— Էլալ, ու կուշտ կերան։

Թաքավորը հանեց ու մի թել տվեց իրան, ասեց.

— Ինչտեղ նեղ կընկնես՝ կփաթթես մատդ, մենք քեզ կհասնենք։

Վե կալան, տարան ճանապար քցեցին։

Գնաց, տեհավ մի ղոշուն ա գալի, տուտ ու տակ չկա։

Մոտացավ, տեհավ՝ բիրատի մեյմուն են. ձիավոր մրչեմի հետ կռվել են ու ետ են դառե։ Էկան էդ տղին բռնեցին, վե կալան, տարան իրանց թաքավորի մոտը։

Թաքավորը ասեց.— Ձեզ փեշքեշ ա, տարե՛ք, ինչ անում եք, արեք։

— Որ ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ կվեկալե՞ք։

Ասեց.— Ձեռ կվեկալե՛նք։

Ասեց.— Ձեր կերածն ի՞նչ աւ

— Մեր կերածը բատամ ա, պոպոկ ա, պնդուկ։

— Ի՞նչդար կուտեք։

Ասեց.— Կուտենք վաթսուն խալվար։

Սուֆրեն փռեց, ասեց.

— Վաթսուն խալվար բատամ, պոպոկ ու պնդուկ ըլլի։

Էլան ու կերան։ Շնորհակալ էլան տղիցը։

Հանեց էրկու հատ մատանիք տվեց։ Մեկը էս մատին դրեց, մեկը էն ձեռի մատին։

Ասեց.— Էս թաթխես՝ ջուրը կպնդվի, վրովը կէթաս, էն թաթխես՝ ջուրը կէթա։

Տարան, ճանապար քցեցին։ Գնաց, հասավ Չինաստանու քաղաքը։

Մի ջուր էր էթում քաղաքի ղրաղովը. տեհավ կարմունջ չկա վրեն, որ անց կենար, միտք արեց. «մեյմունի թաքավորը ըսենց էր ասում, յավաշ մի թաթխեմ ջրի մեջ, տենամ»։

Թաթխեց, ջուրը սառեց։ Վրովը անց կացավ էն էրեսը։ Էն մի մատն էլ թաթխեց, ջուրը գնաց։

Գնաց քաղաքը ման էկավ, մի պառավի տուն վեր էկավ։

Սուֆրեն փռեց, պառավի հետ նստեցին, հաց կերան։

Ասեց.— Նանե՛, էս ո՞ր քաղաքն ա, ես չեմ հարցրե։

www.naregatsi.org

Ասեց.— Էս Զինաստանա թաքավորի քաղաքն ա։

Ասեց.— Թաքավորը մոնց ա, բարի թաքավո՞ր ա։

Ասեց.— Լա՛վ մարդ ա, մի հատ աղջիկ ունի. ով գալիս ա էդ աղջիկը ուզելու, ֆանտ ունի. ով որ ֆանտը չի գտնում, ուզողներոս գլուխը տալիս ա. էդ մեկը վատ ա անում։ Մի տղա էլ ուներ, էդ պատճառով կհակառակեր թաքավորին, թաքավորը չի լսեց, գլուխը առավ, գնաց, կորավ։

Ասեց.— Նանի՛, կարամ ընդրա ֆանտերը գթնի։

Ասեց.— Որդի՛, ընդուց ձեռ վե կալ, որ ինձ լսես՝ մի՛ էթա, ընդար մարդի գլուխը տվել ա։

Ասեց.— Նանե՛, ըստար ճանապար էկել եմ, տա-չտա էթամ, թե ֆանտերը գթա՝ աղջիկը կտանեմ, թե չի գթա՝ գլուխս թո կտրի։

Պառկան, ասեց.— Նանի՛, առավոտը ինձ թեզ վեր կացրա։

Առավոտը լիսացավ, պառավը տղին վեր կացրեց։

Տղեն լվացվեց, աստված կանչեց, գնաց թաքավորի դռան կաղնեց։

Դռնապանը հարցրեց.— Ի՞նչ խնդիր ունես։

Ասեց.— Ես թաքավորի իրան հետ գործ ունեմ։

Դնացին, թաքավորին իմացրին, ասեցին.— Մի տղա էկել ա, քու հետ գործ ունի։

Ասեց.— Կանչեք գա՛։

Էկավ թաքավորի պալատը, օխտը անգամ գլուխ տվեց, վրա ութին ձեռ բռնեց ու կաղնեց։

— Հը՛,— ասեց,— ի՞նչ ա ասուքունդ։

— Իմ ասուքուն էն ա, էկել եմ քու աղջիկ ուզեմ,— ասեց։

Ասեց.— Ա՛յ տղա, դու ափսոս տղա ես, մոնց էկել ես, ընենց գնա՛, քու արընքի տակն էլ չի մտնենք։

Ասեց.— Թաքավոր ապրած, հոքս մի քաշիր, ես ընդոնցից լավ չեմ, ես էկել եմ քու աղջկա համար։

Ասեց.— Ես ֆանտեր ունեմ, իմ ֆանտերը պըտի գթնես։

Ասեց.— Քու ֆանտերին պատրաստ եմ, կգթնեմ, կտանեմ։

Նազիր վազիրին կանչեց, բիրատի թուփ արեց, էդ չինարի ծառի տակ նստացրեց։ Լիքը ստաքանը ջուր լցրեց, տվեց տղին. բերեց չորս հատ ոսկի բոդնոց, դրեց ծառի չորս բոլորը, ասեց.

— Նազի՛ր, վեզի՛ր, թամաշա արեք. էս տղեն էս ստաքանը ձեռը նիլնե ծառը, վեր գա, որ ջուրը չթափի. ո՛ր թափեց՝ գլուխը կտրեմ։

www.naregatsi.org

Տղեն ծառին մոտացավ, մատանիքը թաթխեց ջրին մեջը ու նիլլավ։ Նիլա՜վ գլխին նստեց։

Թաքավորը ասեց.— Վեր արի՛, լավ նիլար։

Էկան թամաշա են անում բոդնոցների վրա, որ ջուրը թափի՝ իմանան։ Տղեն քրտընել էր, էրկու կաթիլ թափեց։

Թաքավորը ասեց.— Վեր արի՛, քու աճալն էկավ, թափեց ջուրը. ջալլա՛տ,— ասեց,— հազր կաղնի։

Վեր էկավ, ստաքանը տարավ, տվեց թաքավորին։

Ասեց.— Գլուխը տվեք սրա։

— Ո՛չ,— ասեց,— քրտինքս թափեց։

Ասեց.— Անկարելի ա, ջուրը թափեց։

Նաղիր վեզիրը մոտացան, ասին.— Գլուխը խի՞ ես տալի։— Մատը տվին բոդնոցի միջի ջրին,— ասեցին,— քրտինք ա։

Ասեցին.— Ա՛յ տղա, գնա՛, առավոտը արի, ըսօր պրծար։

Գնաց պառավի տունը. պառավը ասեց.— Ա՛յ իմ աչքերը քոռնա, արի՛, արի՛, նստի՛ր։

Խաբարը գնաց թաքավորի ախչկան.— Մի տղա, ստաքանը ձեռին, ծառը նիլավ, ջուրը չթափեց։

Առավոտը լիսացավ, էլի գնաց թաքավորի պալատը։

Խաբար տվին թաքավորին.— Տղեն էկել ա։

Թաքավորը հրամայեց.— Կկաղնացնեք չարի իրիկուն։

Տղեն կաղնեց։ Թաքավորը ասեց.— Էրկու պղինձ եռեսուն փթանոց լիքը եղ կլցնեք, կտանեք, կդնեք մի օթախի մեջ, կասեք. «էս գշեր չարի լիս պըտի ուտես. ո՛ր չուտես, թաքավորը քու գլուխ պըտի կտրի»։

Տղեն մի թիքա կերավ, սիրտը տրորեց, ասեց.— Է՜ թաքավորը իմ գլուխ պըտի կտրի։— Բիրտան միտը ընկավ դևերը, համա մաղը կրակեց. կրակելու բաշտան, մեկ էլ տեհավ դուռը ճռացրին, էրկու դև մտան ներքև.— Հը՛, թաքավորի տղա,— ասեցին,— ի՞նչ ա։

Ասեց.— Տեսնում եք պղնձները, ձեզ կանչեցի, որ ուտեք։

Ասեցին.— Էս քառասուն տարի ա եղի համ չենք տեհնի։— Մրոթները կախեցին մեջը, էրկու պղինձն էլ թամիզացրին, լիզեցին։

Ընդոնք գնացին, թաքավորի տղեն դինջ քնեց։

Առավոտը լիսացավ. թաքավորը վե կացավ, նաղիր վեզիրին կանչեց, ասեց.

— Էն մի բանիցը պրծացրիք, վաթսուն փութ եղը հազար ջան

www.naregatsi.org

չի կարա ուտի, էն մինակ կարա՞ ըս գշեր ուտի. բեր ու գլուխդ զարկեք։

Գնացին, վեր կացրին, բերին թաքավորի մոտը։

Ասեց.— Էրեկ պրծար, ըսօր ի՞նչ ես ասըմ։

Ասեց.— Ըսօր էլ կպրծնեմ, էգուց էլ։

Գնացին, տեհան՝ պղինձները թամուզ կերե, սրփե։

Ասեց.— Գնացեք ըստրա օթախը, պահած կըլի, գթեք ու բերեք։

Գնացին, ման էկան, զատ չգթան։

Էկան, ասեցին.— Զատ չկա։

Ասեց.— Գնա՛, դինջացի՛, իրիկունը արի։

Խաբարը գնաց թաքավորի ախչկան, էդ ախչիկը զարմացավ։

Գնաց պառավի մոտը, դինջացավ, իրիկունը վե կացավ, էկավ։ Խաբարը տարան թաքավորին.— Տղեն էկել ա։

Թաքավորը նազիր վեզիրին կանչեց. տղին բերեցին, մի դռան աղաք կաղնացրին։

Ասեց.— Տասը խալվար կորեկ չափեք, բերեք ըստե, տաս խալվար էլ ցորեն, տաս խալվար էլ գարի բերեք. խառնեք հ՞իրար, օթախի մեջտեղ կիտեք։

Թաքավորը հրամայեց.— Էս կորեկ, էս գարին, էս ցորեն իրարից պըտի ջոկես, որ առավոտ գամ, չափեմ. թե ջոկեցիր՝ ախչիկս տարար, թե չջոկեցիր՝ գլուխդ անպատճառ պըտի կտրվի։

Տղեն մի բուռ վե կալավ, որ ջոկի՝ կորեկի մի հատը քցեց մի պուճախը, մի հատ ցորեն մի պուճախը, ասեց. «Զարի լիս մի բուռ չեմ կարա ջոկի»։ Բիրտան մրշեմը միտը ընկավ. թելը հանեց, փաթթեց մատը, մեկ էլ տեհավ՝ դուռը ճռացրեց. մրշեմները թափան, էկան։

Ասեց.— Խնդրում եմ, էս գարին, էս ցորենը, էս կորեկը ջոկեք, չուտեք համա, ձեր բաժինը դռանը կտամ՝ կուտեք ու կէթաք։

Ըդրանց տուտը բացվեց, Մասիսու չարի Ալագյազ էկան, ջոկեցին ցորենը մի յան, գարին մի յան, կորեկը մի յան, մի հատ չթողացին։

Դուռ էկավ դուռը, սուֆրեն բացավ, ըդոնց բաժինն էլ տվեց, գնացին. Գլուխը դրեց ցորենի վրեն, արխային քնեց։

Լիսը բացվեց, թաքավորը վե կացավ. նազիր վեզիրին կանչեց էլի, ասեց.

— Դե՛, բերեք, տղի վիզը զարկեք։

www.naregatsi.org

Գնացին, տղին վե կալան, բերեցին։

— Վիզը զարկե՛ք,— հրամայեց։

Ասեց.— Խի՞ ես զարկում իմ վիզը, ես ջոկել եմ, մարդ ղրկա, թո էթա, տենա, գա՛։

Մարդ ղրկեց. գնաց, էկավ, ասեց.— Թաքավոր ապրած, ջոկած պրծած ա։

Ջափեցին, դուզ էլավ։

Ասեց.— Դե՛, գնա՛, առավոտը արի։

Թաբարը տարան Թաքավորի ախչկան. Թաքավորի ախչիկն ասեց.

— Հա՞ գիտի, էն տղեն որտե ա մնում։

Ասեցին.— Մի պառավի տան ա մնում։

Մի ղարավաշ ուներ, հանեց մի բուռ ոսկի տվեց, ասեց.— Բերնիցդ բան չհանես, կէթաս պառավի տունը. պառավին կասես, էդ տղին ախչկա շորեր հագցնի, իրիկուն բերի իմ մոտը։

Էդ ախչիկը վազեվազ գնաց պառավի տունը։ Պառավին ասեց.

— Թաքավորի ախչիկը ասում ա. «Թող էդ տղին ախչկա շորեր հագցնի, բերի իմ կուշտը»։

Իրիկունը ախչկա շորեր հագցրեց, վե կալավ տարավ։

Դռնապանը դուռը չէր բաց անում։

Ասեց.— Իմ ախչիկը տանում եմ Թաքավորի ախչկանից ուտում առնի։

Ասեց.— Խալխը ցերեկն են բերում, դու գշերն ես բերում։

Ասեց.— Հըմի պարապեցի, բերեցի։

— Դե՛,— ասեց,— տա՛ր։

Վե կալավ, տարավ։

Ասեց.— Խանը՛մ, իմ ախչկան ինչ կսարվացնես, սարվացրա, գշերը չի կարա ըստե մնա։

Թաքավորի ախչիկը հրամայեց.— Ամեն ղարավաշ էթա իրա օթախը, խամ ախչիկ ա, խոսացնեմ, տենամ, ինչ կա հալա։

Ասեց տղին.— Դու էդ ֆանտերն որ իմացար, էդուց էլ կարա՞ս իմանա։

Ասեց.— Չեմ գիտում, ինչ ֆանտ պըտի անի։

Ասեց.— Քառասուն ախչիկ պըտի բերի, քառասուն ձեռք սև շոր հագցնի, սև ձիանը նիլցընի, սև քողերը պըտի քցի գլխներին, ջերկով կաղնացնի, քեզ պըտի հարցնի. «Իմ ախչիկը որն ա»։ Ներ-

www.naregatsi.org

բի դհիցը կհամբրես տասնբինը, վրա քսանին ես եմ, չը շըշկըլես։

Կանչեց պառավին.— Պառա՛վ, արի, քու ախչիկը վեր կալ տար, էդուց իրիկուն էլ բեր։

Լիսը բացվեց, տղեն գնաց Թաքավորի մոտը։ Թաքավորը նազիր վեզիրին կանչեց, ասեց.

— Գնացեք, քառասուն ախչիկ բերեք, քառասուն սև ձիանը նիլցըրեք, սև շորերը հագցրեք, սև քողերը քցեք գլխներին։

Գնացին էնպես արեցին, ջերկուն կաղնացրին։ Տղին հրամայեց.

— Իմ ախչիկն ո՞րն ա, դթի՛։

Մտքի միջին համբրեց տասնբինը, դուզ գնաց վրա քսանի ձիու գյամը բռնեց, ասեց.

— Էս ա քու ախչիկը։

— Տղա՛,— ասեց,— գնա՛, առավոտը արի։

Տղեն գնաց պառավի տունը, ասեց.— Նանի՛, ախչկա շորերը բեր, հաքնեմ։— Հաքավ, գնաց Թաքավորի ախչկա մոտը։

Թաքավորի ախչիկը ասեց.— Տղա՛, էդուց էլ կարմիր ձիանը նիլնենք, կարմիր շորերը կհաքնենք, կարմիր քողները պըտի քցենք գլխներիս. ամենի վերջը ես կկաղնեմ. կգաս, իմ ձիու գյամը կբռնես։

Տղեն վեր կացավ, գնաց պառավի տունը։

Առավոտը վեր կացավ, գնաց Թաքավորի պալատը։

Թաքավորը իրա նազիր վեզիրի հետ դուս էկավ, հրամայեց.

— Գնացե՛ք, քառասուն ախչիկը բերեք, կարմիր ձիանը նիլցըրեք, բերեք ըստի ջերկա կաղնացրեք։ Էդպես արեցին։

Ասեց.— Ա՛յ տղա, իմ ախչիկը ո՞րն ա, դթի։

Տղեն գնաց, վերջի ձիավորի յախեն բռնեց, ասեց.

— Էս ա քու ախչիկը։

Ասեց.— Ըսօր էլ պրծար, գնա՛. գնա էդուց էլ արի։

Տղեն գնաց պառավի տունը, ախչկա շորերը հաքավ, գնաց Թաքավորի ախչկա մոտը։

Թաքավորի ախչիկը ասեց.— Էքուց էլ սիպտակ ձիանը կընիլնենք, սիպտակ շորերը կհաքնենք, սիպտակ քողերը կքցենք գլխներիս, ամենի գլուխը ես կկաղնեմ, կգաս ձիու գյամը կբռնես, քաշես, Թաքավորի աղաքը կկաղնացնես։

Տղեն վեր կացավ, գնաց պառավի տունը։ Լիսացավ, առավոտն էկավ Թաքավորի պալատը։

11—2573

www.naregatsi.org

Թաքավորը դուս էկավ, հրամայեց.—Գնացե՛ք, քառասուն ախչիկ բերեք, քառասուն ձեռք սիպտակ շոր հաքցրեք, սիպտակ ձիանը նիլցրեք, սիպտակ քողները քցեք գլխներին, բերեք ըստի, ջերկուն կաղնացրեք։

Էդպես արեցին։ Թաքավորը ասեց.— Իմ ախչիկը ո՞րն ա, գնա գթի, բե՛ր։

Գնաց, գլխի ձիավորի ձիու գյամը բռնեց. քաշեց, բերեց Թաքավորի մոտը, ասեց.

— Թաքավոր ապրած կենա, վեց օր ա, իմ ջանը քեզնե չխնայեցի, էս էլ քու ախչիկն ա, քու ախչկա ջանն էլ ինձանից չխնայես։

Թաքավորը հրամայեց ախչկերքին, ամենն էլ ձիանոցից վեր էկան։

Ասեց.— Քողերներդ էրեսներիցդ վեր կալեք, էդ տղին վեր կալեք, տարեք պալատը։

Թաքավորը գնաց պալատը տղի մոտը, հարցրեց.— Դու ի՞նչ տղա ես, իմ ֆանտերը մեկն էլ չիմացան, դու վեցն էլ իմացար։

Ասեց.— Ես էլ Թաքավորի տղա եմ, էկա քու ախչիկն ուզելու, աստված հաջողեց, վեցն էլ իմացար։

Ասեց.— Պսակեմ ու իմ մոտին կաց։

Ասեց.— Խնդրում եմ ինձ ճանապար քցեք, իմ պսակը իմ հայրը թող տենա։

Ասեց.— Դու գիտաս։

Առավոտը զորքը զորապետով, ամենը դրեց ախչկա հետ, ճանապար քցեց։

Տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած, բան պետք չէ, ամեն էլ քեզ փեշքեշ, էրկու ձի տու, նիլնենք, էթանք։

Թաքավորն ասեց.— Ա՛յ տղա, քեզ մի բան եմ ասում, քսանը հինգ տարեկան իմ տղեն կորել ա, ամեն բանը դու գիտում ես, դու կարող ես էդ տղին գթնիլը. ո՛ր գթար, բերեցիր, իմ թաքավորությունը կհանձնեմ քեզ, դե՛, բարի ճանապար ըլլի, գնացեք։

Վեր կացան էկան մեյմունի երկիրը։ Մեյմունները վեր կալան, տարան իրանց թաքավորի մոտը, թաքավորը ասեց.

— Բարի էկա՞ր, մեզ մի կշտացրա, քեզ ճանապար քցենք։

Ըստի սուֆրեն փռեց, հարուր խալվար պոպոկ ու բադամի մեջ ուղեց։

Էդի կերան, խմեցին, տղին քցեցին ճանապար։

www.naregatsi.org

Գնաց, ձիավոր մրջեմի երկիրը հասավ։

Ձիավոր մրջեմները էկան աղաքը, վե կալան տարան իրանց թաքավորի մոտը։ Թաքավորը ասեց.

— Բարի ես էկել, մեզ կշտացրա, քեզ բարի ճանապար քցենք։

Ըտի սուֆրեն փռեց, հարուր խալվար ցորեն ու գարի ուզեց։ Ըտի կերան, կշտացան, տարան իրանց սընոռից հանեցին, ընկան դևերի սընոռը։

Դևերը էկան աղաքը, ասեցին.

— Հա՜, թաքավորի տղա, մուրազիդ հասար։ Սոված ենք, մեզ կշտացրա, քեզ բարի ճանապար։

Սուֆրեն փռեց, ասեց.— Տասը գոմեշ ըլի միջին։

Տաս գոմեշ էլավ միջին, ըդոնք կերան, կշտացան։

Վե կալան, տարան իրանց սընոռը անցկացրին։

Գնաց, հասավ վիշապի մոտը։

Վիշապն ասեց.— Խի՞ եստացար էդքան։

Ասեց.— Անճախ որ բերեցի, քի՞չ շարշարանք էր։

Ասեց.— Էդ ախչիկը մնա իմ մոտը, դու գնա, քու նշանածը հրեն, ընդի ծաղիկ ա թոփ անըմ, բեր։

Տղեն գնաց դպա իրա նշանածը, վիշապը ասեց.

— Ախչի՛, մաղերդ փաթթա իմ շլնքովը։

Ախչիկը փաթթեց շլնքովը։

Վիշապը ճվաց ու էլավ մի քսանհինգ տարեկան տղա ու ընդի կաղնեց։

Էդ տղեն ու ախչիկը էկան ըդրա մոտը, թուրը քաշեց, որ ըդրան սպանի։ Էդ տղեն ասեց.

— Խի՞ ես տալի, էս իմ քիրն ա, բերեցիր իմ մոտը, շատերին ղրկել ի, որ իմ քվորը բերի, գնացել էր, չէր էկե, քեզ ղրկեցի՝ բերիր։ Էս իմ քիրն ա, բաղշեցի քեզ։

Տղեն էլ.— Իմ նշանածը բաղշեցի քեզ։

Նոր ձիանը նիլան, էրկու ախչիկ, էրկու տղա, դպա թաքավորի մոտը։

Խաբարը գնաց թաքավորին.— Աչքդ լի՛ս, տղեդ էկավ։

Թաքավորը վեր կացավ, զորք-զորապետով գնաց աղաքը տղին։

Ջինաստանի թաքավորի ախչկա վրեն իրա տղին պսակեց։ Օխտն օր, օխտն գիշեր հարսանիք արեց։

www.naregatsi.org

Թաքավորի տղեն ասեց.— Չինաստանի թաքավորի տղեն դթել եմ, վեր կալեմ, տանեմ իրան թաքավորի մոտը։

Էդ ախչիկն ու էրկու տղեն էլան, գնացին։

Գնացին, ճանփեն կորցրեցին, ընկան մի չոլ, յապան տեղ. քառասուն հարամու մեջ ընկան, հարամիբաշին ասեց.

— Տարե՛ք էդ էրկու տղին, սպանեք, շորները հանեք, բերե՛ք։

Թաքավորի տղեն ասեց.— Սպանեք ձեր ձեռը ի՛նչ կընկնի, ես էլ թաքավորի տղա եմ, էս էլ Չինաստանա թաքավորի տղեն ա, ես խոստանում եմ, չարի ձեր մահը ձեզ պահեմ, հըմի էլ ինչ որ սըրտներդ ուզում ա, ասե՛ք՝ ուտացնեմ։

Ասեց.— Մեր սիրտը շատ բան ա ուզում՝ խորոված, ոխշա՛ր, բա՛ն։— Սուֆրեն փռեց մեյդանը։

Ըդոնց ուզած բաները բիրատի սուֆրի մեջ գթնվավ։

Կերան, խմեցին։ Վե կացան ու գնացին, հասան Չինաստան։

Գնացին, թաքավորի պալատի դարվազի աղաքը վեր էկան։ Թաքավորին խաբար արին, դուռ էկավ.

— Աչքդ լի՛ս, որ տղեդ էկավ։

Տղին բերեց, պսակեց՝ օխտն օր, օխտը գշեր· իրա հոժար կամով թաքավորութունից վեր էկավ, իրա տղին դրեց թաքավոր։ Ըդրա քառասուն ձիավորին ամենքին մի նշան տվեց. ընկան ճանապար, էկան իրանց թաքավորի կուշտը։

Էդ քառասուն հարամի ձիավորին նշան տվեց, պահեց։

Թաքավորն էլ տղին ասեց.

— Անումը իմը ըլլի, թաքավորութունը դու արա։

Ընդոնք հասան իրանց մուրազին։

www.naregatsi.org

12. ԴԵՐՁԻԿԻ ԱԽՉԻԿ

Ժամանակով ըլլում ա մի հատ դերձիկ, դրան աչքի սև ու սիվ-տակ մի հատ ախչիկ ա ունենում։ Էդ դերձիկը իրա ախչիկը տանըմ ա մի հատ օղլուշաղի մոտ ձեռագործ սովորի։

Շատ ժամանակ էդ ախչիկ գնում ա կար անելու։

Էդ ուստի տան դեմ ու դեմին թաքավորի պալատ ա ըլլում։ Էդ թաքավորին մի հատ տղա ա ունենում. էդ տղեն օրը չարի իրի-կուն բալկոնումը բոլթա ա տալի, որ էդ ախչկա էրեսը տենա, կամ խոսա։

Ախչիկը իրա գլուխը կախ կարում ա, մտիկ չի անում թաքա-վորի տղին։

Թաքավորի տղեն ճարահատյալ ուղում ա խոսացնի, ասըմ ա վերևիցը.

— Դերձիկի ախչի՛կ, շա՛ն ախչիկ, թակալի կուրը քանի՞ ա։

Ախչիկը չի խոսում։

Թաքավորի տղեն իրեք անգամ էդ խոսքը ասըմ ա։

Ախչիկը իրա գլուխը քաշ արած, ասըմ ա.

— Թաքավորի տղա՛, շա՛ն տղա, էրկնքի աստղերն քանի՞ ա։

Ախչիկը գլուխը քաշ արած, վիրև չի թամաշա անում, ասըմ ա էդ խոսքը իրեք անգամ։

www.naregatsi.org

Մյուս օրը թաքավորի տղեն շատ ա մտածում, որ ախչկան խաղք անի, սրտի հայիֆը հանի։ Կանչում ա ախչկա ուստին, ասում.

— Մայրիկ ջա՛ն, ինչ ուզում ես կտամ՝ ինձ պըտի տանես քու աշակերտի մոտ, ես պըտի պաշեմ նրան։

Պառավ ասում ա.— Շատ լա՛վ, թաքավորի տղա, գըլխիդ արևվիդ ղուրբան։

Մյուս օրը պատրաստում ա մի հատ մեծ ղութիկ իրա տանը. թաքավորի տղին թաքուն կանչում ա, ասում.

— Բալա ջա՛ն, գլխիդ, արևիդ ղուրբան, արի՛, մտի սնտուկը։

Թաքավորի տղեն մտնում ա. վրեն շորերով ծածկում ա։

Պառավը ախչկան թանպա ա անում.

— Բալա ջա՛ն, տուն էթալուս ձեռագործը կըդնես մեծ ղութին։

Ախչիկը. «Լա՛վ», ասում ա, ձեռագործը դնում ա ղութին։

Դնելու ժամանակ թաքավորի տղեն հասնում ախչկան պաչում ա։

Ախչիկը սուս ու փուս, մեկի էլ բան չի ասում, գնում ա տուն։

Մեկ, էրկու օր չի գնում ուստի տունը, ղաստինա հիվանդ ա պառկում, ասում ա. «Ա՜, մոնց անեմ, իմ ինատը հանեմ»։

Հերն ու մերը տեսնում են շատ մտածում ա, ասում են.

— Բալա ջա՛ն, ի՞նչ ես մտածում, ի՞նչ ա սիրտդ ուզում՝ առնեմ, կարեմ։

Ախչիկն ասում ա.— Հայրիկ ջա՛ն, ինձ համար մի հատ ըռատոնտ կկարես, էնպես կկարես, որ մեննակ աչքերս էրևա միջին, թևերը թեպրներով կշինես հրեշտակի ձևով. էդ ըռատոնտի բոլորը պոժոժ կշարես, որ մի ասեղի տեղ բաց չըլլի։

Հերը կպատրաստի, կբերի, կասի.

— Ա՛յ որդի, մի հագի՛ էս զալըմը, ման արի, աչքս տեսնա։

Ախչիկը կհագնի, իրան մի կթափահարի՝ կտեսնա լավ հրեշտակի ձևի ա էլե, իրան ձեռնտու ա, կասի.

— Էթում եմ ուստիս տունը, էս գշեր չեմ գա։

Ախչիկը կէթա, իրա ուստին կասի.

— Հերս, մերս տեղ են գնացել, գշերս էստեղ պըտի մնամ։

Կասի.— Որդի՛, լա՛վ, մնում ես՝ մնա, ի՛նչ անեմ։

Կգա իրիկուն, հացից վերջանալեն հետո ախչիկը թաքուն կընիլնի թաքավորի տղի ծառայի մոտը, կասի.

— Ա՛յ տղա, էս գշեր թաքավորի տղեն ինձ ուզել ա, ես թա-

www.naregatsi.org

քուն պըտի էթամ մոտը. դուռը բաց, դու գնա՛, քնի, եթե ուրիշի ասես, առավոտուն թաքավորի տղեն քեզ քյալլա կանի։

Բոլորը քնելուց հետո ախչիկը իրա թազա ասպապը վե կալավ, տարավ, թաքավորի տղի հաշտրմը հագավ, մտավ թաքավորի տղի սենյակը. կաղնեց, իրան մի թափահարեց, ղընղընկոցը ընկավ պալատը։

Թաքավորի տղեն աչքերը բաց արեց, տեհավ՝ մի այլակերպ բան ա կաղնած, ասեց.

— Հը՞, ո՞վ ես, ի՞նչ ես ուզում։

Ասեց.— Ես Գաբրիել հրեշտակն եմ, եկել եմ քու ֆոգին առնեմ։

Ասեց.— Ես մինուճար եմ. խաղնա, դաֆինա տամ, իմ ֆոգին մի՛ առնի։

Ասեց.— Թե որ ըղենց ա, ես քեզ տաս օր ժամանակ կտամ, քու օթախից մի նշանաբան պըտի տանեմ։

Թաքավորի տղի ձեռները, ոտները դողում էր վախից, ասեց.

— Դու գիտաս, ինչ աչքդ կբռնի՝ վե կալ տա՛ր։

Վե կալավ ոսկե իբրուխ-լականը, ասեց.

— Պատրաստ կաց, տասն օրից հետո պըտի գամ, քու ֆոգիդ էլ տանեմ։

Տուն էկավ, էդ իբրուխ-լականը իրա շորերի հետ տարավ, պրեց ղութու մեջ։

Լիսը բացվեց. ախչիկը նստեց, իրա գործը արեց։

Թաքավորի տղեն շա՜տ ճմրտըկաց, չկարաց վեր կենա հրեշտակի զարպիցը։ Անճարացած վեր կացավ, գնաց բալկոնը, յավաշ-յավաշ, ասեց. «Մի բան որ ես պըտի մեռնեմ, յավաշ, էս ախչկան խոսացնեմ, խայտառակ անեմ»։

Ասեց.— Դերձըկի ախչի՛կ, շա՛ն ախչիկ, ղութու պաչը քանի՞ ա։

Էդ խոսքը իրեք անգամ ասեց։

Ախչիկը իրան գլուխը բանձրացրեց, ասեց.— Թաքավորի տղա՛, շա՛ն տղա, Գաբրիել-Մուքելը քանի՞ ա։ Թաքավորի՛ տղա, շա՛ն տղա, իբրուխ-լականը քանի՞ ա։ Թաքավորի՛ տղա, շա՛ն տղա, տասն օրվա մեռնելը քանի՞ ա։

Թաքավորի տղեն շատ մտածեց.— Կա՛-չկա,— ասեց,— էս ախչիկը աստղաբաշ ա, առաջ աստղերուց հարցուց, հըմի էլ իմացավ իմ մեռնելը։

www.naregatsi.org

Գնաց, նորից պառկեց, արեց.— Ա՜խ-վա՜խ, ա՜խ-վա՜խ, ես պըտի մեռնեմ։

Թաքավորի տղեն բիրտան պառկած տեղիցը մտածեց, ասեց. «Կա-չկա իմ մեռնիլը էս ախչիկը կիմանա, որ համ էրկնքի աստղերով խոսաց իմ հետ, համ Գաբրիել-Մուքելով. ես պըտի էդ ախչըկան առնեմ, ճար արեց՝ էդ ախչիկը կանի»։

Թաքավորի տղեն իրան ծառեն ղրկեց իրա հորը մոտը, ասեց.

— Ես մեռնում եմ, տերտեր բերեք ինձ։

Հերն ու մերը էկան.— Ա՛յ որդի, մեր թաքավորութունի միջին ի՞նչ ա պակաս, «ա՜խ-վա՜խ» ես քաշում. մարդ ղրկեմ, քաղաքեքաղաք, քեզ համար բժիշկ բերեմ։

Ասեց.— Կա՛-չկա՛, Դերձըկի ախչկան պըտի ուզեք։

Թաքավորը ասըմ ա.— Շատ լա՛վ, զորքով ըլնի կբերեմ, խաթրով ըլնի կբերեմ, դու թաքիլա լավացի։

Նազիր-վազիրը կանչում, ղրկում ա դերձըկի տունը՝ ախչկան ուզելու։ Ախչիկը տուն ա գալի, հերն հարցնում ա.

— Ա՛յ որդի, թաքավորի տղեն կառնե՞ս, էկել են քեզ ուզելու։

Ասըմ ա.— Որ դու տաք, ես էլ կուզեմ։

Բերըմ են էդ ախչկան, պսակըմ են թաքավորի տղի վրին։

Էդ ախչիկը իրա ըռատոնտը վեր ա առնում, ջհեզ ա տանըմ իրա համար։

Մի քանի օր մնում ա, էդ տղեն շատ «ա՜խ-վա՜խ» անըմ, ախչկա ծոցը չի մտնում։ Ախչիկն ասըմ ա.

— Ա՛յ տղա, որ ինձ հավան չէիր, իմ մեղքի տակ խի՞ մտար։

Թաքավորի տղեն ասըմ ա.— Ա՛յ Դերձըկի ախչիկ, ես պըտի մեռնեմ, ինչ մտնեմ, որ մնաց վեց օր իմ ժամանակը։

Ասեց.— Որ վեց օր մնաց, ես էթում եմ։

Հարսի շորերը հագնըմ ա, մնաս բարև անըմ, գնըմ ա հաշտը, ըռատոնտը հագնըմ ա։

Տղեն հիվանդ պառկած ա ըլլում, ասըմ ա.

— Կնիկս փախավ, գնաց, ես հըմի պըտի մեռնեմ։

Էդ մտքի միջին ախչիկը գալիս ա տուն, էդ ըռատոնտը վիրա ժղահարում ա, թափ ա տալի։

Տղեն մտիկ ա տալըմ.— Օհո՜, էն Գաբրիել հրեշտակը էկել ա ցերեկով։

www.naregatsi.org

Ասըմ ա.— Թաքավորի տղա՛, հըմի որ պսակվել ես, էս հետ Ֆոգիդ պըտի առնեմ։

Թաքավորի տղի լեզուն կապվում ա, ձեռը, ոտը թուլանում ա։

Կնիկը տենում ա, չէ, անճարացավ, պըտի հիվանդութունը հաստատի, բղում ա թաքավորի տղին, ասըմ.

— Ախմա՜խ, վա՛, վա՛, ես հրեշտակ չեմ, ես քու կնիկն եմ։

Ասըմ ա.— Թե որ իմ կնիկն ես, գնա՛ իբրուխ-լականը բե, տենանք։

Բաց ա անըմ կամոտի աչքը, իբրուխ-լականը դնում ա թաքավորի տղի աղաքը։

Ասըմ ա.— Թե որ ըդենց ա, շորերդ հանա, տենամ իմ կնիկըն ե՞ս։

Կնիկը շորերը հանեց։

Թաքավորի տղեն ասեց.— Ա՛յ կնիկ, որ ըդենց ա, դու հրաբունի ես. արի, ինձ դուզն ասա, հրեշտակների հետ հնգերութուն ունե՞ս։

Կնիկն էլ ասըմ ա.— Դու շատ կապրիս, էլ չես մեռնի, արխային կաց։

Ասըմ ա.— Ա՛յ կնիկ, բա էրկնքի աստղերն ի՞նչդար ա, որ հարցնըմ իր։

Ասըմ ա.— Բա կարի կութը քանի՞ ա. կարի կութը չհամրվի, էրկնքի աստղերն էլ չհամրվի։

Թաղատան վեր են կենըմ, օխտը օր, օխտը գշեր քեֆ-ուրախութուն։

Իրանք հասան իրանց մուրազին, դուք էլ ձերը։

www.naregatsi.org

13. ՏԱՆ ԴՈԼՎԱԹԸ

Մեկ մարդ կըլլի ժամանակով, շատ հարուստ կըլլի. ըդրա տղեքը՝ աղբրտանքը տան մեջը ղալմաղալ արին, իրար չլսեցին. քյասիպութունը հաղթեց, ցրվան, ամենը մի տեղ նոքար էլան։ Ընդրանց տան մեծն էլ գլուխն առավ ու գնաց, մի գեղի մեջ մտավ, էլավ ջաղացպան։ Ըդրա ջաղացները թարս բանեցին։

Ջաղացատերը էկավ, ասեց.— Իմ ջաղացները չարի հըմի շիտակ բանըմ ին, հըմի դու էկար, խարաբ արիր։— Դուս արեց ըդրան, նոր ջաղացները շտկվեցին։

Էս մարդը գնաց էլավ բաղվանչի. էկավ պտղի վախտը, բարը բիրատի թափավ։

Բաղի տերը էկավ, ասեց.— Դու ի՞նչ մարդ ես, ոտդ կոտրվեր, չգայիր, իմ տունն էլ, քու տունն էլ քանդեցիր։— Բռնեց, դուս արեց, հախ էլ չտվեց։

Աշուն էկավ. ո՛րտի մտնում էր, նոքար չէին բռնում, ասում ին. «Դու էն մարդն ես, ջաղացը գնացիր՝ խեր չտվիր, բաղը գնացիր՝ խեր չտվիր»։ Շատ պտըտեց, մի հալիվոր մարդ տեհավ. ընկավ ընդրա աղաքը, ասեց.

— Էս ձմեռ փոր հացի ինձ պահա, ձմեռ ա, չեմ կարում տեղ էթամ։

www.naregatsi.org

էն մարդը վեկալավ, տարավ իրա տունը, ասեց.

— Էս տավարը պահա չարի զատիկ, քե փող էլ կտամ, դու մեղք ես։

Իրեք ամիս ըդրա տավարը պահեց, մտավ մեծ պասը։ Ըդրան մի քաջ ուներ, ծնում էր, ասեց.

— Զքնե՛ս, էս դշեր քաջին մուղաթ կաց, ծնելու վախտը քաջը չհեղդվի։

Մուղաթ կացավ, բիրտան քունը տարել էր, զարթնեց, տեհավ՝ քաջը ծնել ա, մի հալիվոր մարդ կշտին կաղնել ա, ձագին ծրծացնում ա։

Ասեց.— Վա՜յ, քունս տարել ա, աղես էկել ա, ձագին ծրծացնում ա. հրմի ինձ հետ կկռվի։

— Գնաց, տեհավ իրա աղեն չի, ասեց.

— Պապի՛, դու ի՞նչ մարդ ես։

Ասեց.— Դու ինձ չես ճանաչի, ես որ չհասնեի՝ աղեն քեզ հետ կկռվեր, քեզ էլ դուս կաներ։ Ես իրանց տավարը, իրանց ամեն բանը ինչ նեղ տեղ ըլլի, կհասնեմ, ամենայն փորձանքից կազատեմ, ես էս տան դոլվաթն եմ։

Ասեց.— Պապի՛, վիրև աստված, ներքև դու, ես էլ եմ հարուստ մարդ էլև. հրմի քյասիպացել եմ, էս օրն եմ ընկև, որտե էթում եմ՝ իմ բանը չի հաջողում, իմ տունն էլ ա դոլվաթ էլև, հալպաթ խռովել ա, գնացել ա, հրմի դու տեղը գիտաս, ինձ տեղն ասա. ես էթամ, բերեմ։

Ասեց.— Քու դոլվաթը խռովել ա, գնացել ա Ալագյազու սարը. մտել ա, ձորի մեջը դաղա կա, դաղի մեջը պառկել ա. քրքի վրեն մի թիզ թոզ ա դրե. էթաս, էն թոզը թափ տաս. կընկնես աղաչանք, կասես. «Վե՛ր, էթա՛նք»։ Ինչդտար որ կրարկանա, կթքի, կմըրի քեզ, դու աղաչանք կընկնես. ինչ որ կտա քեզ, չես ասի. «Քիչ ա», կընկնես ճանապար, կդաս։ Հալիվոր ասեց, էլ չէրևաց։

Ինքը գնաց, պառկավ իրա տեղին. լիսը բացվեց, աղեն էկավ, մտավ գոմը, ասեց.

— Ա՛յ որդի, քաջը ծնե՞լ ա։

Ասեց.— Ծնել ա։

Գնաց, տեհավ, ասեց.— Զորանա՛ս։

Հանեց ջեպիցը մի մանեթ փող բախշեց։— Ասեց.—Աղա՛, ես պըտի էթամ, քեզանից շնորհակալ եմ։

www.naregatsi.org

— Որդի՛,— ասեց,— մի՛ էթա, կա՛ց, զատկից ետը գնա։

— Շնորհակալ եմ,— ասեց,— ինձ ճանապար քցա՛։

Հանեց հինգ մանեթ փող տվեց, հագցրեց, մի խուրճին էլ հաց տվեց, քցեց թևը, ասեց.

— Բարի ճանապար ըլլի, գնա՛։

Էդ մարդը վե կացավ, Ալագյազու սարը դեմ արեց աղաքը, գնաց։ Հասավ սարին, մտավ ձորի մեջը, ընկավ զաղեքը ման գալու՝ գնաց էս զաղեն, էն զաղեն։ Գնաց մեկ զաղա էլ տեհավ, հրե՛ս էն զաղի մեջ պառկած ա, մոտեցավ, արևն էլ մտավ։

Գնաց, տեհավ քրքի վրա մի թիզ ֆող ա դրե, ֆողը թափ տվեց. դոլվաթը զարթնեց, թամաշա արեց էրեսին, ասեց.

— Դե՛, կորի, լի՛ըբ, անճախ ձեր էրեսից փախել եմ, պրծե, էլ էկար, գթար։

Ասեց.— Պապի՛, վերև աստված, ներքև դու, պըտի գաս, էթանք։ Անկարելի ա, քեզ պըտի տանեմ։

Ասեց.— Շատ մի խոսա, մութն ա, պառկի, քնի, առավոտը վեր կաց, գնա՛։— Պառկեց, քնեց. լիսը բացվեց։ Էլ ընկավ աղաչանք.— Քեզ պըտի տանեմ,— ասեց։

Ասեց.— Էլ չեմ գա, ձեր զալմաղալից, ձեր ուշունցիցը անճախանճախ պրծել եմ. հըմի մոնց որ էկել ես, դրվորն էկել ես, էլի դենը գնա։

Ասեց.— Իլաճ չկա, քե պըտի տանեմ, սոված կոտորվանք մենք, մեղա կգանք, էլ չենք անի։

Ասեց.— Որ շատ աղաչըմ ես, ա՛ռ էս էրկու պոպոկն ու գնա, ես կգամ։

Հենց առավ ու էկավ։ Էկավ մի գեղի ղրաղը դուս էկավ։ Տեհավ՝ էրկու տղա իրար հետ կռվում են. գնաց, մոտացավ, ասեց.

— Ա՛յ որդի, խի՞ եք կռվում։

Ասեց.— Էս քարը ջրի միջիցն ենք գթե, կռվում ենք. ես ասում եմ՝ իմն ա, էն ասըմ ա՝ իմն ա։

Ասեց.— Բերե՛ք, տենամ էդ քարը։— Քարը տվին ըդրան։

Ասեց.— Ցավա՛ղ, մի պոպոկ քե տամ, մի պոպոկ ըդրան. հըմի լավ էլավ։— Էրեխեք ուրախացան։

Էդ քարը դրեց ջեպը, էկավ տունը. տեհավ տանը մթանը նստել են, ճրագլիս էլ չկա տանը. էդ քարը հանեց ջեպիցը, դրեց պատուհանը, ճրագի պես լիս տվեց տան մեջ։

www.naregatsi.org

Ասեց.— Էս ի՞նչ լավ ա, մեզ ճրագ ա հաղիր։

Հաց-մաց առավ, նստան, ուտում ին։

Աղբրատանցը՝ տղեքին սկսեց խրատ տալը, ասեց.

— Մի ժամանակ մտներդ կգա՞, որ մեր դոլվաթը հրմենից շատ էր, մենք որ սկսեցինք ղալմաղալ անիլը, իրար հուճաթութուն որ արեցինք, իրար չլսեցինք՝ ընկանք էս օրը. հրմի ձեզանից խընդրում եմ՝ մեր բերնից ուշունց, ղալմաղալ, բան դուս չգա, աստված էլ էն դոլվաթը մեզ կտա։

Ասեցին.— Մոնց որ ասես, կհնազանդենք քեզ։

Էդ քաղաքի ղրաղը էկավ մի բազրկյան վեր էկավ։ Էդ բազրկյանը գշերը տեհավ՝ ամենի ճրագը անցավ, էդ մեկի ճրագը չանցավ։ Լիսը բացվեց, ասեց. «Ես պըտի էթամ էս տունը, տենամ ի՞նչ թավուր տուն ա»։

Գնաց, տեհավ՝ չորս պատն ա, զատ չկա, մի քար պատուհանում վառվում ա, ասեց.

— Աղրե՛ր, էս քարը չե՞ք ծախի։

Ասեց.— Չէ՛, ծախենք ինչ անենք, մենք ճրագլիս չունենք։

Ասեց.— Էնդար փող կտամ, ճրագլիս էլ կառնեք, ամեն բան էլ կառնեք։

Ասեց.— Ինչ պըտի տաս, որ ծախեմ։

Ասեց.— Հազար մանեթ կտամ, որ ծախես։

Էդ մարդ իմացավ՝ բազրկյան ըղրա վրա ծիծաղում ա, ասեց.

— Իմ վրա ծիծաղում ես։— Բազրկյանը իմացավ որ քիչ ա տալիս, ընդրան ասում ա. «Իմ վրա ծիծաղո՞ւմ ես»։

Ասեց.— Երկու հազար մանեթ կտամ։

— Իմ վրա մի ծիծաղի։

Ասեց.— Խի՞ եմ ծիծաղում, երեք հազար մանեթ կտամ։ Վերջը շատ խոսալ չըմ գիտա, հինգ հազար մանեթ կտամ, տո՛ւր, ես էթում եմ։

Ասեց.— Տո՛ւր։

Հանեց հինգ հազար մանեթ տվեց, ասեց.

— Ա՛յ մարդ, դու ինձ շատ դիր էկար, լավ մարդ ես էրևում, մի բան ասեմ, ինձ կըլսե՞ս։

Ասեց.— Ասա՛, տենանք։

Ասեց.— Ես, դու աղբերանանք, պայման տանք, պայման առնենք. ես մեռա թեզ՝ իմ մալը քեզ, դու մեռար՝ քու մալը ինձ։

www.naregatsi.org

Բազրկյանը առավ քարն ու գնաց։

Էդ մարդ վե կացավ, հինգ հազար մանեթի ապրանք առավ՝ իրա սելը, տավարը, լցրեց տանը։

Բազրկյանն էլ վե կացավ, գնաց, պրտրտեց էրկու տարի, քարը ծախեց վացցուն հազար մանեթի։ Էկավ էդ քաղաքի ղրաղը վե էկավ, ասեց.

— Էթամ, էն մարդուն ասեմ. «Քու քարը վացցուն հազար մանեթի ծախեցի». որ էն մարդի սիրտը պատռի, մեռնի. էն փարեն էլ մնա ինձ։

Էկավ, մտավ տուն.— Հը՛, աղբեր, մո՞նց ես,— ասեց։

Ասեց.— Փա՜ռք աստրծու, ամեն բանս դղվեր ա։

— Բա քու էն տված քարը չասեցիր, ընչի՞ ես ծախեր։

Ասեց.— Ընչի՞ ես ծախե։

Ասեց.— Վացցուն հազար մանեթի։

Ասեց.— Ը՜, քու տունը չքանդվի, ես էն էրկու պոպոկի էի առե։

Բազրկյանը էրկու ձեռքով իրան գլխուն տվեց. «Վացցուն հազար մանեթի բանն էլ էրկու պոպոկի առնեն», ասեց, ու սիրտը ճաքվեց, մեռավ։

Էս մարդը, մոնց որ պայման են դրե, վեր կացավ, գնաց ընդրա ապրանքն էլ քաղաքի ղրաղիցը բերեց, լցրեց իրա տունը։

Առաջվա դոլվաթիցը տահա շատ էլավ։

www.naregatsi.org

14. ՕՁ-ՄԱՆՈՒԿ ԵՎ ԱՐԻՆ-ԱՐՄԱՆԵԼԻՆ

Կըլնի-չըլնի, էվել ժամանակով մե թաքավոր կըլնի. էդ թաքավորին ալվատ, թալվատ չըլնի։ Մե օր ընդրա կնիկը կպառկի, մե օձ կբերի։

Թաքավորի վեզիր, վեզիր, նաղիր կժողվին թաքավորի մոտ, աչքալուսեք կտան։ Է՛, թաքավորն ա. շատ կամաչե. ի՞նչ արած՝ աստուծո տված պտուղն ա։ Անուն կդնեն Մանուկ։

Օձ որ մորից կըլնի, կշուլուլվի առիքը։

Էդ օձն ա, կընցնի մե քանի օր-ժամանակ, իրա մոր կասի.— Առե՛, թաքավորին տուա, ընձի կնիկ ուզի։

Մորը կասի.— Ա՛յ որդի, դու օձ ես, քե ո՞վ ախչիկ կտա։

Օձը կասի.— Մարե՛, կկարգե՞ք՝ կարգեք, որ չեք կարգի՝ ձեր տուն ու տեղը տակնուվրա կանեմ։

Մորը կվախենա. կէթա թաքավորի մոտը, կասի.

— Թաքավոր ապրած կենա, քու տղեն ասըմ ա. «Ընձի կարդա»։

Թաքավորը շվարըմ մնըմ ա. չգիտե ի՛նչ անի, վախիցը վազիրի ախչիկ ուզում ա տղին։

Երփոր էն գշեր իրար մոտ պտի էթան, օձը անսաս՝ առիքիցը իջնըմ ա ու ախչկան դեղըմ։

www.naregatsi.org

Առավոտը, բարի լուսը բացվի վրներդ, Թաքավորի տան վրեն սև ա բացվում. էթում ա տղի օթաղը. տենում ա, թե ինչ ա իլե, ի՞նչ տենա՝ ախչիկը դեղած, ուռած ու մեռած ա։

Մարդիկ ա կանչում, ախչկան վերցնել ա տալում։

Տղեն էլի կպնում ա մորը յախեն. «Ընձի կարգեք»։

Մնացել են մարդ ու կնիկ շվարած։ Խեղճերը էս անգամ էլ նաչիրի ախչիկ ուզին։

Էլի առաջվա պես արեց օձ։

Օձ-Մանուկ վաքիլի ախչիկն էլ ուզեց. էնպես դ արեց։

Գլուխդ ի՛նչ ցավցընեմ, Թաքավորն էլ մնաց վիզը ծուռ, չէր գիտում ի՛նչ անի։ Էս դանը ո՞ր մեծավորի ախչիկն էր ուզում, չին տալում. ճարը կտրված քյասիպ-քյուսուպի ախչիկներն էր ուզում փոդով։ Մեկ օր, էրկու օր լուրը ձայնվեց բոլոր քաղաքը։

Խոսքը գնաց հասավ նախրճու կնկան, որ խորթ էր, ամեն օր խեղճ նախրճու գլուխը տանում էր, թե. «Քու ախչկան կորցրա»։

Էս խաբարը որ լսեց, մրոթները կախեց, հա մարդի վրեն մրթմրթաց. «Մենք քյասիպ ենք, հազր ախչիկդ տար տուր Թաքավորի տղին, փող առ, բեր, ուտենք, չանք ե՞փ քյասիպ ապրենք»։

Ընդար մարդի վրեն խոսաց, որ խեղճ մարդի ճարը կտրվավ։

— Է՞հ,— ասավ,— կնի՛կ, դու քու աստվածը, որ ասում ես, ախչկա գլուխը լվա, ձեռը-ոտը տե՛ս, տանենք տանք Թաքավորին, զաթի ման ա գալում ախչկա համար։

Կնիկ եփ մարդից խոսքն առավ, ուրախութենից սիրտը վարդ պատռվեց, տեղիցը թռավ, կայնավ, սկսեց ջուր տաքացնել։

Թող էդի ջուր տաքացնի, մենք գանք ախչկան։

Ախչիկը իրա հորը, մորը խոսքերը ըմեն լսել էր, սիրտը կոտրած՝ իլավ գնաց մոր գերեզմանի վրեն ընկավ, լաց իլավ։

Ընդա՞ր լացավ, քունը էկավ, քնավ։

Մերը գերեզմանի միջից ձեն տվեց ու ասեց.

— Ջո՞ռ-չո՞ռ, չան ե՞փ չթողաս ես հանգիստ ըլլեմ։ Քեզի ուզում ին տան Թաքավորի տղին. դու Թաքավորից օխտը գոմշի կաշի կուզես, լավ կփաթաթվես մեջը. էն գշերը եփոր Օձ-Մանուկ կգա քե զարկելու, էրկու-իրեք անգամ կզարկի, քյար չանի, հետո կասի. «Ախչի՛, շապկիցդ դուս արի»։ Դու էլ ընդրան կասես. «Դու քու շապկիցդ դուս արի, ես էլ իմ շապկիցը դուս գամ»։ Էն վախտը շապկիցը դուս կգա, կըլնեք մարդ ու կնիկ։

www.naregatsi.org

Ախչիկը քնի տեղից կզարթնի, կտենա օր էրազ ա. կգա խեղճ-խեղճ տունը, խորթ մերը ուրախ-ուրախ կկանչի ախչկան։

— Ախչի ջա՛ն, արի, գլոխդ լվանամ։

Ըսկի մե օր էսենց քաղցր չէր վարվե։

Ախչկա գլոխը կլվա, կտա մարդին. կտանեն, կտան թաքավորին։ Թաքավորը ախչկան խաս զարդարեց, շորեր հագցրեց.

— Տարեք,— ասավ,— իմ տղի օթախը։

Ախչիկը մոր խրատը իսկի չի մոռացե, թաքավորին կասի։

— Թաքավորն ապրած կենա, քեզնից կխնդրեմ օխտը գոմշի կաշի։

Թաքավորն ալպեալը բանը իմացավ, ասավ. «Կա-չկա էս ախչիկը մե բան գիտա»։ Ձեռաց ալպեալը հրամայեց վազիր-նազիրին, օխտը գոմշի կաշի ձեռաց բերին, տվին։ Ախչիկը առավ, գնաց տղի օթախը, փաթութվավ էդ կաշիքի մեջը։ Օձ-Մանուկը առքից իջավ, գարկեց, էլի էլավ, շուլուլվավ առիքը։ Մե խելի թամաշա արեց, տեհավ ախչիկը խըլվըլըմ ա. էլի իջավ, գարկեց [1], էլի տեհավ բան չիլավ։

Օձ-Մանուկի ճարը կտրվավ, բարկացավ, ասեց.

— Ախչի՛, կաշուցդ դուս արի։

— Դու քու կաշուցդ դուս արի, ես էլ իմ կաշուց դուս գամ,— ասավ։

Օձ-Մանուկ ասավ.— Վայ քու սորվըցնողի վիզ կոտռի, սեյրս [2] պաթալ արիր [3]։

Կաշուց դուս էկավ Օձ-Մանուկը. ախչիկ տեհավ։ Տեհավ, ինչ տեհավ՝ հո տղա չի՞. շուտես, չխմես ընդրա մահ-ճամալին թամաշա անես։

Ախչիկը չէ՛ որ տեհավ էդ տղին, քիչ էր մնըմ գլխի խելքը էթար. կաշու միջից թռավ ու տղին խտըտեց։

Կերան, խման, հանաք արին, խոսացին։

Օձ-Մանուկի ձեռ դպավ ախչկա բերնին, առաջի մե ատամն ընկավ. Օձ-Մանուկ էն ատամի տեղ անգին քար դրեց։ Էն վախտը ախչիկը ծիծաղըմ էր, շավաղքը տալըմ էր մարդի էրես։

---

1 Խայթեց (Ս. Բ.)։

2 Կախարդական հմայություն (Ս. Բ.)։

3 Նզծեցիր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Բարի լուսը բացվի ձեր վրեն, բացվավ թաքավորի վրեն։

Էլի թաքավորը մարդիկ ժողվեց, որ ախչիկը վերցնեն։

Թաքավորը առաջ-առաջ էկավ, մտավ տղի օթախը։ Ի՞նչ տեսա՝ տղեն ու ախչիկը փաթըթվել են իրարի, անուշ-անուշ քնել են. հո տղա չի՞. կասես էրկինքի հրեշտակ ըլնի, քիչ էր մնըմ թաքավորը ուրախութենից խելքը թոցներ։

Նո՛ր աշքալուսանք, նո՛ր քեֆ, նո՛ր հարսանիք, նո՛ր ուրախութուն։

Թաքավորը տղին պսակեց, օխտը գշեր, օխտը ցերեկ հարսնիք արեց։ Տեհավ՝ տղեն ինչքամ խորոտ ա, տասը էնքամ էլ խելքով ա, իրան տեղը թաքավոր դրեց։

Մե օր էս Օձ-Մանուկի կնիկը իրան ջառիյնքի հետ էթըմ ա ծովի ղրաղը. մեկ հատ կնիկ ա ըռաստ գալըմ ըդրանց. թաքուն ա գըցըմ, խափլութենով շորերը վրիցը հանըմ, ինքն ա հագնըմ, իրա շորերն էլ նրան հագցնըմ, թևից բռնըմ-շըպըռտըմ, ասըմ ա.

— Կորի՛, անպիտան, դու Օձ-Մանուկի խա՞րճն ես։

Խեղճ ախչիկը չկարըմ ձեն ու ծըպտուն հանի, շվարած մնըմ ա էդտեղ, ծովի ղրաղին։

Թո էդի ծովի ղրաղը կայնի, գանք էդ օսմանլու[1] կնկան. ջառիքին թոփ անըմ, իրկունը տուն ա գալըմ։

Մեկ օր, էրկու օր, էդ Օձ-Մանուկ տենըմ ա, որ էս իրա կնիկը չի, հենց էնպեսդ էլ սուս ա կենըմ։

Ըսդոնք էստե մնան, մենք գանք էդ ախչկա հավարին։

Էդ ախչիկ գեճտան գնճ[2] խելքը գլոխն ա թոփ անըմ, տենըմ ա ձեռիցը գնաց, էլ իլաճ չկա։ Էլավ, յավաշ-յավաշ[3] էկավ իրա մոր գերեզմանը, լաց էլավ։ Ընդար լաց իլավ, մինչև որ քունը տարավ։

Մերն էլի ձեն տվեց, ասավ.— Ջո՛ռ-ջո՛ռ. ի՛նչ ա, չես թողըմ հանգիստ ըլլեմ, քեզի մի կտոր հաց կամեցա, չպաշարար ուտել։ Գե, որ էդենց ա, կէլես, էդ բարակ ճանփեն կբռնես, ու հա կէթաս։

Ախչիկը զարթնավ, տեհավ որ էրազ ա։ Էն բարակ ճանփեն բռնեց ու հա գնաց։

---

1 Համարձակ (Մ. Բ.)։ Բացատրությունը փոխաբերական իմաստի մասին է՝ անզգամ (Մ. Կ.)։

2 Շատ ուշ (Մ. Բ.)։

3 Հուշիկ-հուշիկ (Մ. Բ.)։

www.naregatsi.org

Գնաց-գնաց, շատ ու քիչն աստված գիտա, մե ղայա[1] քարի բռաստ էկավ, հրմա ղայեն ճղվավ, ախչկան ներս առավ։ Ախչիկը տեհավ, որ ընտե մե հատ ջահել-թրընտաս տղա ա պառկած, ո՛չ բնած ա, ոչ մեռած. էն ա որ նաֆասը վրեն տրրփրմ ա։

Խեղճ ախչիկ, մե թրքա լաց ա ըլրմ, մե թրքա քունը տանրմ. բնրմ ա, զարթնրմ ա, մինչև իրիկուն արեը մտնրմ ա։

Էդ տղեն շնչավորվրմ ա, էլրմ տենրմ ա՝ իրան մոտը մե ախչիկ կա, հարցրնրմ ա.

— Ախչի՛, ինս ես, ջինս ես. ըստե ի՞նչ բան ունես. օձն ուր պորտով, ղուշն ուր թևով ըստե չէր կարա դա, դու ոնց էկար։

Խեղճ ախչիկն էլ իրա գլխին գալածը ըմեն պատմրմ ա։

— Է՛, լա՛վ, ախչի, կապրենք իրար հետ,— ասրմ ա։

Մե ամիս, էրկու ամիս, մե տարի, իրեք տարի իրարի հետ մնրմ են էդ քարի մեջը։

Տղեն ցերեկը մեռնրմ էր, գշերն էլ էթրմ բան ու ման բերրմ էր, ուտրմ, ապրրմ ին իրար հետ։

Էդ ախչիկը պառկավ, մե տղա բերեց։

Տղեն տեհավ, որ էլ չեն կարա իրանց գլոխը պահի, ասավ.

— Ախչի՛, էլի՛, գնա մեր գեղը, իմ հոր տունը հարցրա. խնդրի, ընտե քեզի տեղ տան, իմ հերն ու մերը շատ անողորմ ին, ու ընդրանց մեղքի համար աստված էս դաղիյեն իմ գլոխ բերեց։ Ինչքան խնդրես, քե տեղ չտան, հրմա որ ասես. «Ձեր Արին-Արմանելու գլոխը սիրեք», էն վախտը քե տեղ կտան։

Գշերով ախչկան քարի միջից դուս հանեց, բերեց գեղի մոտը. ինքը դարձավ-գնաց դեպի իրա քարը, ախչիկն էլ մնաց ըստե։

Խեղճ ախչիկ մե թքա լացավ, մե թքա հանգստացավ՝ ընչանք բարի լուսը բացվավ ձեր ամենիդ վրա ու ընդրա։

Էրեխեն խտրտեց, գեղ մտավ։ Արին-Արմանելու հոր տուն հարցրեց. գնաց գտավ, դարկյահի դուռը կայնավ։

Մեկ էլ տեհանք ի՞նչ՝ Արին-Արմանելու մերը քոշք ու սարից դուս էկավ։

Էդ խեղճ ախչիկը աղաչեց ու ասավ. «Դու ըլլես, քու աստվածը, դու ըլլես, քու հոգին. քու դոլվեթի սիրու սատաղեն՝ ընձի մե տեղ տուր, քու շենլիկի մեջը սթրվնմ»։ Քանի էդ ախչիկը ասավ, էնի օսմանլուի պես ոտները տփեց գետինը։

---

1 ժայռ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Դուս կորի,— ասավ,— անպիտա՛ն, լաշա՛ռ։

Ախչկա ճարը կտրվավ, ասավ.— «Դու ըլլես, Արին-Արմանելու գլուխը, ընձի մե տեղ տուր, սթըրվեմ»։

Չէ՞, որ Արին-Արմանելու անուն լսեց մերը, ճկերի գլոխը դժդժաց, ասավ.

— Վայ քու լեզուն լալընա, էդ ո՞վ է քեզի սովրցրե. հայտե,— ասավ,— տարեք ձիանոցի մե տեղ տվեք, գշերը մնա, առավոտը ըլի կորի, էթա՛։

Զաթի կես գշերը անցել էր, հոտաղ-մշկներ նոր ին քնե. մեկ էլ տեհավ դռներն շրխկ-շրխկալեն բացվավ, մե ձիավոր մտավ ներս, էն ախչկա հետ խոսաց, հարցրեց, ասավ.

— Ախչի՛, հալիկդ ա լավ, թե դամիկդ։

— Ոչ հալիկս ա լավ, ոչ դամիկս, ես փեյնի մեջն եմ նստած, քու տղեն էլ՝ շոր մսըրքի վրեն։

Իրեք անգամ էդ գշեր, էդ ձիավոր էկավ-գնաց, հարցրեց. իրեք անգամ էլ ախչիկ ասավ. «Ոչ հալիկս ա լավ, ոչ դամիկս, ես փեյնի մեջն եմ նստած, քու տղեն էլ՝ շոր մսըրքի վրեն»։

Հոտաղները ըմեն լսեցին։

Առավոտ էլան, իրանց աղին ու կնկանը պատմեցին։ Էդ մարդ ու կնիկ մնացին շվարած։ Էլ էդ ախչկան դուս չարին էդ օր։

Եփոր գշերն էկավ, էդ մարդ ու կնիկ էկան թաքուն տափ կայնան ձիանոց մեջ։

Մեկ էլ տեհան գշերվա մե վախտին դռները շրխկոտալեն բացվավ, էլի էն ձիավոր ներս մտավ, էլի հարցրեց, ասավ.

— Ախչի, հալիկդ ա լավ թե դամիկդ։

Ախչիկն ասավ.— Ոչ հալիկս ա լավ, ոչ դամիկս, ես փեյնի մեջ եմ նստած, քու տղեն էլ՝ շոր մըսրքի վրեն։

Էդ գշեր էրկու անգամ էկավ ու գնաց։

Էդ տանտեր ու իրա կնիկ ճանաչեցին, որ էդ ձիավոր իրանց Արին-Արմանելին ա։

Առավոտը բարի լուսը բացվավ, էդ մարդ ու կնիկ էկան էդ ախչկա մոտ, փաթըթվան էդ ախչկա վզով, լաց, շվան ու ասեցին.

— Հիմի քե զատ տեղ կտանենք, միայն թե եփոր կգա, հարցընես, թե բա ո՞նց անենք, որ դու գաս։

Էդ գշեր ախչկան տարան Արին-Արմանելու քնելու օթախը ու մարդ ու կնիկ էլի քշերը շքնան։

www.naregatsi.org

Քշերվա մե վախտին դոներն շխբոտալեն բացվան. Արին-Արմանելին էկավ, ախչկան մոտը կայնավ, հարցրեց.

— Ախչի՛,— ասավ,— հալիկդ ա լավ, թե դամիկդ։

Ասավ.— Համ հալիկս ա լավ, համ դամիկս, ես խուշթաքի յորղան դոշկի մեջ եմ պառկած, քու տղեն էլ շիրմայի օրորոցի մեջ ա դրած. բա՛,— ասավ ախչիկ,— մոնց անենք, դու գաս։

Արին-Արմանելին ասավ.

— Թող օխտը անծին էրինջ մորթեն, մի անծին էրինջ էլ արունի առաջ դնեն. էն արունը քշեց, տարավ էն էրնջին, ես էլ ճաշին կգամ։

Արին-Արմանելու հերն ու մեր էդ բաները հ՚ըմեն լսեցին, ուրախութենից քիչ էր մնըմ սըրտները պատռեր։

Առավոտը բարի լուսի հետ օխտը անծին էրինջ մորթեցին, մեկն էլ արունի տակը կայնեցրին, արունը քշեց, էդ անծին էրինջը առավ-գնաց։

Ճաշի հացին էր, մեկն էլ տեհանք Արին-Արմանելին էկավ։ Որ էկավ՝ քեֆ, ուրախութեն, նաղարա, զուռնա, ուտել, խմել, էլ չափ չկար։

Մե քանի վախտից հետո Արին-Արմանելին ասավ.

— Ա՛յ կնիկ, վեր նիլնենք ձիանքը, էթանք մեր սահմանի գլոխը, ընտե մե աղբուր կա, վրեն իջնենք. մե ախպեր տղա ունեմ, էն էլ պտի գա ընտե, մե լավ քեֆ անենք։

Նիլան ձիանքը, ընկան ճանփա, գնացին։

Գնացին, շատ ու քիչ աստված գիտա, մե շայիր-չիման տեղ իջան, ձիանքը չիդարին, իրանք էլ նստան։

Հալա չեն հանգստացե, էս յանից էլ Օձ-Մանուկ իրա կնիկը էկավ. իջան, սկսեցին ուրախութեն անել։

Համա ի՞նչ անես, էս մարդիկը իրանց կնանիքին ճանաչըմ են, իլաքի թե Օձ-Մանուկի կնիկը ծիծաղաց. ատամի շավաղքը տվեց էրեսները։ Էլ Օձ-Մանուկ չկարաց դիմանալ, ասավ.— Ախպե՛ր, էդ իմ կնիկն ա։

Արին-Արմանելին ասավ.— Ախպե՛ր, էս որ քու կնիկն ա, էդ էլ իմ կնիկն ա, քունը քեզի, իմը՝ ընձի։

Կերան, խման. էլավ ամեն մարդ իրա էրկիրը գնաց։

Աստվածանից իրանք խնձոր իջավ, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ էլ շատ խոսողին։

---

www.naregatsi.org

15. ԱԽՊԵՐ ԳԱՌՆԵՐ

Կըլնի-չըլնի մե մարդ կըլնի, մե կնիկ. էդ կնիկը տարին մե տղա կբերի, մինչև օխտը տղա կըլնի։

Էդ տղեքը կմնան, կտենան, որ քուր չունին։ Համա իրանց մեր ծանտը ոտ ա։

Ջեն համբերի մինչև մերը էրեխա բերի, կասեն.— Ա՛յ մեր, մենք էթըմ ենք Կարմիր Թեփի վրեն տուն շինենք, եփոր դուն էրախա կբերես, թե տղա կըլնի՝ չուքը դի կտուրը, որ մենք իլիմ-իլիմ կորինք [1], ո՛ր ախչիկ կբերես՝ ջայրեն դիր կտուրը, որ մենք գանք։

Կնկա վախտը լրանըմ ա, պառկըմ, մե ախչիկ ա բերըմ։ Ըդ կնիկն ա, տատմորն ասըմ ա.— Նանե՛, նանե՛, ջայրեն դի կտուրը, թո տղեքս ետ գան։

Համա էդ չար պառավը ջայրի տեղը չուքն ա դնըմ։

Տղեք եփոր հեռվուց տեհան, իլիմ-իլիմ կորան։

Գնացին-գնացին, շատ ու քիչ ասուված գիտա, մե գաղի [2] ըռաստ էկան։ Իրանց համար ըտեղ տեղ ու տուն դրին, ամեն օր

---

1 Աստ, անդ, երկրե-երկիր կորսվինք (Մ. Բ.)։

2 Այր (Մ. Բ.)։

www.naregatsi.org

էթում ին ավղուշ, իրիկունը դալում ին՝ էփում ին, թրխում ին, ուտում ին, պառկում ին, քնում ին։

Ամեն օր էդի ըդոնց արեստն էր։

Թո ըդոնք ըստն մնան, մենք էթանք ըդրա մոր ու քվոր հալը հարցնենք։

Մերը տեհավ, որ տղեքը չէկան, ալպահալը իմացավ, որ տատմեր ջատուպաղը ֆել ու ֆեննտ է էկե գլխին։

Մե տարի, էրկու տարի, տաս տարի էդենց ապրան։

Հըմա, էդ կնկա ախչիկը մե օր իրա թայտաշների հետ խաղում էր, թայտաշները նեղացան էդ ախչկանը վրա, ասեցին.

— Որ դու լավ ախչիկ ըլնիս, աստված քեզի մե ախպեր կտա։

Էդ խեղճ ախչիկ արցունք աչքերին, թթված, նիաթները կախտուն էկավ, մռութները կախեց ու նստավ։

Մերը հարցրեց.— Ախչի՛, ի՞նչ ա իլե քեզի, որ ըդենց սուրն առել ես, սեր մտե։

Ախչիկը լաց ըլլելով մեկ-մեկ ասեց իրան մորը։

Մերը մե ծանտր հոգոց քաշեց։

Ախչիկն ասեց.— Առե՛ ջան, ընչի՞ ես հոգոց քաշում։

Մերն ասեց.— Ա՛յ որդի, բա ես հոգոց չքաշեմ, ո՞վ քաշի, խալխը թե մե ախպեր ունին, դու օխտը ախպեր ունես, հըմա աստված ընձնից առավ. իմ օխտը տղեն ձեռիցս առավ, շար ջատուպաղ պառավի ֆել ու ֆեննտից թողել են ու գնացել, որդի՛, աստված գիտա ո՛րտեղ են։

Էդ ախչիկը եփոր մորից լսում ա էդ խոսքերը, կրակը լցվավ ըդրա սիրտը, օր չըլլեր որ լա՞ց ու շվան չդներ ախպրտանց համար։

Գլուխդ ի՛նչ ցավցընեմ, ընդա՞ր լացավ, մորը աղաչեց, պաղատեց ու խնդրեց, որ իրան թողնի, էթա իրա ախպրտանց մոտ։

Ախչիկը իրա մոր խրատով էրկու ջնպը աղանձ լցրեց ու ընկավ ճանփա՝ շոլ-շոլստան, պահրի յապան, դուշ ուշմազ, ֆերվան ֆյոշմազ[1], գնաց ու գնաց։ Շատ ու քիչ աստված գիտա, մոր ըսածի պես իլավ։

Նեղ ճանփեն բռնելով գնաց՝ աղանձն ուտելով. աղանձը բռատ իլավ, ախչիկը մե .զաղի դուռ կայնավ։

---

1 Անապատ երկիր, անծանոթ ծովեր, թռչունն անկարող թռչելու, քարավանն իջեան չուներ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Տեհավ մե մեծ քար են դեմ տվե դռան, ներս մտնելու ճար չկա։

Է՛ս յան ընկավ, է՛ն յան ընկավ, տեհավ լախում տված տեղ կա, սողալեն մտավ ներս. տեհավ ի՛նչ՝ աչքդ հազար բարին տենա, ինչ նազ ու նամեթ ասես, կա։ Էփեց, թխեց, իրան բաժինը կերավ, մտավ փեթակի մեջ, տափ կեցավ։

Ախպրտանքը իրիկունը տուն էկան, պատրաստ տեհան. ի՞նչ՝ էփած թխած, հըմա մարդ-մատաթ չկա։

Ախպրտանք շվարան. պել էն իլե, իրար էրես են իրիշկըմ։

Մեծ ախպերն ասավ.— Ախպրտա՛նք, ըստե մե մարդ կա, որ ըսենց պատրաստել ա. ճրագ վառեք, քունջ ու պուճախ ման գանք։

Ճրագ վառին, ընկան տան քունջ ու պուճախ. մուրիկ-մուրիկ[1] ման էկան, եփոր էկան հասան փեթակի մոտ, ծործը բացին, տեհան իսանաթի ոտ ա էրևըմ, ասին.— Ինս ես, ջինս ես, դո՛ւս արի։

Ախչիկը փեթկից դուս էկավ. տեհան ի՛նչ ախչիկ՝ մե հուրիմելեք, մե էրկնքի հրշտակ՝ չուտես, չխմես, էդ ախչկա քիթ ու բերնին թամաշա էնես։

Էդ ախպրտանքը ասին ախչկան.— Օձն իր պորտով, դուշն իր թևով չէր կարա ըս տեղրանք ման գա, դու մո՞նց էկար։

Էդ ախչիկ պատմեց ըմեն, ինչ որ ես ձեզի ասի։

Եփոր ախպրտանքը իմացան, որ իրանց քուրն ա, համ լացան, համ ուրխըցան, համ էլ քեֆ արին։

Էդպես ախպրտանք ըմեն օր էթըմ ին ավղուշ, քուրն էլ մնըմ էր տանը, էփըմ էր, թխըմ էր, ըմեն բան պատրաստըմ էր. իրիկունը ախպրտանցը հետ ուտում ին, խըմըմ ին, քնըմ ին։

Մե օր ախչիկը անթեղ չէր թողե. եփոր ախպրտանք գնացին, քուրն ուզեց, որ թունդիր վառե. տեհավ, որ կրակ չկա. է՛ս յանը քուրն զարկվավ, է՛ն յանը զարկվավ՝ կրակ չկա։

— Վա՞յ,— ասավ,— աշկերս քոռնա, իրիկունը ախպրտանքս տուն գան, պաղ թունդրա վրե՞ն նստին։

Դուս էկավ դուռը, է՛ս յանը նայեց, է՛ն յանը նայեց՝ տեհավ իրանից զատը մե կրակ ա էրևըմ։ Կրակի իզը բռնեց ու գնաց. մե ոտ ուներ, էրկու էլ ծախ առավ, գնա՞ց, մինչև հասավ էդ կրակին։ Տեհավ, որ մե պառավ նստե. մե շարեք պողպատ քցե բերան, ծամըմ ա, մե մեծ ղազանի մեջ էլ լցրած ա ամեն տեսակ գազաններ։ Պառավը քևկիրն առե ձեռ, խառնըմ ա։

---

1 Մանրակրկիտ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Ախշիկն ասավ.— Բարհաջողում քե, նանե՛ ջան։

— Բարո՛վ,— ասավ,— հազար բարով, որդի՛ ջան, օձն իր պորտով, դուշն իր թևով ըստեղ չէր իկե, դու մո՞նց էկար, հիմի իմ տղեն կգա, ինքը օխտը գլխանի դև ա, քու մեծ թիքեն ականջդ կթողի։

Ախշիկը ասավ.— Նանե՛ ջան, կրակի եմ իկե. իմ ախպրտանքը գնացել ին ավղուշ, իրիկունը տուն կգան, կրակ չկա։

Պառավն ասավ.— Դե՛, շուտ արա, քանի տղես չիկե։

Ախշիկը կրակը վերցրեց, ուզեց ետ դառնա, պառավը ասավ.— Ա՛յ որդի, առ մի կտոր միս, ուտելով գնա։

Ախշիկն ասավ.— Նանե՛ ջան, ես միս չեմ ուտում։

Պառավ ասավ.— Որ չես ուտում, որդի, մանտր-մանտր կտոր արա, քցելով գնա, մինչև հասնիս քու տեղը։

Ախշիկը պառվի խոսքը կատարեց, էկավ հասավ տուն։

Մինչև վառեց, թխեց, էփեց, պատրաստեց, հլա ծուխը չէր քաշ-ված, ախպրտանքը էկան, ասին.— Վա՜յ քուրիկ ջան. էդա ինչ ա պատահե քե, որ ըսօր էդքան ուշ ես վառե։

Քուրը պատմեց իրա գլխի էկածը։

Ախպրտանքը ասին.— Վա՜յ, քուրիկ, էդ ինչ օյին ես հանե մեր գլոխը. դևի տուն ես գնացե, էն դևն էլ մեզնից ձեռ չքաշի. հըմա մուղաթ կաց, որ ներս մտնելու տեղը չասես ընդրան, ո՛ր ներս մտավ, քե կառնի, մենք կմնանք առանց քուր։

Էլի առավոտն էլան, գնացին ավղուշ։

Ըսդրանք թո ըստե մնան, մենք գանք պառվին։

Դևը տուն էկավ, տեհավ իսանաթի ֆոտ ա գալըմ.

— Է՜յ, պառավ,— ասավ,— ըս ի՞նչ բան ա. ֆոտ եմ առնըմ։

Պառավն ասավ.— Քա՛, տնավեր, դու ես գնացե սար ու ձոր ման իկե, հազար բան տեհե, ըստե ով ա իկե, որ ընձնից ես հարցընըմ։

Ասավ.— Ըհի՛, չար պառավ, հիմի քե փառչա-փառչա կանեմ, ասա՛, թե ով ա իկե ըստե։

Է՛, ջան ազիզ էր, պառավը վախեցավ, ասավ.

— Էն մսի կտորների ճամփեն բռնե, գնա, եփոր մսի կտորնե-րը ըռատ իլան, ըստե էկողին կդտնես։

Դևը մսի կտորների ճամփեն բռնեց, էկավ հասավ մինչև զա-ղին։ Տեհավ, որ զաղի բերնին մի էնենց մեծ քար ա դրած, որ

www.naregatsi.org

օխտը լուծ գոմեշ լծես, չկարաս տեղիցը հիրար տա։ Շատ շարչարավ դևը՝ չկարցավ դուռը բանա, իլաճը կտրվավ, ասավ ախչիկան.— Սիրուն ախչի՛կ, ներս մտնելու տեղն ասա, գամ ըտե։

Ախչիկն ասավ.— Տեղ չեմ գիտա, որ ցույց տամ քե։

— Որ դուռը չես բանըմ,— ասավ,— ձեռդ պարզի, մերդ մատնիք տված ա, դնեմ քո մատ։

Խեղճ ախչիկը հավատաց, ձեռը ծակիցը դուս հանեց թե չէ, դևը ախչկան ճկութը առավ բերանը ու ծըծեց. ընդար ծըծեց, ընչանք ախչիկը ուշաթափ իլավ, ընկավ։

Իրկուն ախպրտանք էկան տուն, ինչ տեհան, աշկդ հազար բարին տենի, քուրը մեռելի պես ընկած ա։ Ջուր լցըրին վրեն. ղալմաղալ արին, քվոր ուշքը վրա բերին.— Էդ ի՞նչ ա պատահե քե, քուրիկ,— ասին։

Քուրն ասավ.— Հալն ու նաղըլ էսենց բան. դևը խափլութենով մատս առավ բերան, ընդար ծըծեց, որ ուշքս գնաց, էլ խաբար չիմ իլե, մինչև դուռ էկաք։

Ախպրտանքը եփոր լսին դևի անունը ո՛չ կերան, ո՛չ խմին, մինչև լուս օխտը ախպրով շեմի տակ քառասուն գյաղանոց հոր քանդին։ Եփոր արևը դուս իլավ, իմացան որ դևը պտի գա, քվորն ասին.

— Խալիշեն փռա, դու դուռը բաց, քե համար քյարկյահ արա։

Դևը, մեկել տեհացինք, մըռթմըռթալեն էկավ։

Եփոր տեհավ դուռը բաց ա, ախչիկն էլ քյարկյահ անըմ ա, քիչ էր մնըմ խելքն էթար, էլ աչքերի առաջը չիշկնց, հըմա ուզը շեմ քցելն ու փոսի մեջ գըրմփալըն մեկ իլավ։

Ախչիկն ասավ.— Ախպրտա՛նք, էկե՛ք, ջեյնհեմե վասիլ իլավ[1]։

Ախպրտանք էկան, ֆողով ծածկեցին, քվորն ասին.

— Քո՛ւր, ջուր չթափես ըտե։

Մե օր, էրկու օր, մե ամիս, հինգ ամիս, մե տարի, տաս տարի, շատ ու քիչ աստված գիտա, մեկ օր ախպրտանքը ավղուշից ետ դարձան, տեհան՝ մե պառավ ճանփի վրեն նստած ա, ասին.

— Ա՛յ պառավ, ի՛նս ես, ջի՛նս ես, էս վախտը ըստե ի՞նչ բան ունես։

Պառավն ասավ.— Որդի՛ք, հայ քրիստոնա եմ, ձեր արևի սա-

---

1 Սանդարամետ հասավ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

տաղեն ըլլի, ընձի տարեք, պահեք, մեր քոշը ընցավ, չկարցա հետ-ները գնայի։

Տղեքը խեղճըցան էդ պառավի վրեն, հետները տուն տարան, ուրախ-ուրախ իրանց քվոր պատմին։

— Քուրի՛կ,— ասին,— աշկդ լուս, էլ ըսդից դեն ոչ կվառես, ոչ կթխես, ոչ էլ ջաֆա կքաշես, հոգին ըլլի, ինչ կըլլի, կըլլի, պառավ կնիկ ա, թո աշխատի, դուն էլ քու քյարկյահն արա։

Քուրն ասավ.— Ախպրտա՛նք, արեք էս պառավին խրկեք, դրանից դիան կգա մեզի։

Ախպրտանքն ասին.— Ա՛յ քուր, պառավ կնիկ ա, էն ի՛նչ պտի անի։

Է՛, էլի ախպրտանքը գնըմ ին ավղուշ, գալըմ ին, հըմա պառավն ընդար հավատարիմ էր ծառայըմ, որ քուրն էլ, ախպրտանքն էլ զարմացել ին։

Հա, համա չմոռնանք, որ պառավն ամեն օր ջուր էր թափըմ էդ հորի վրեն։

Ախչիկն ասըմ էր.— Նանե՛, ախպրտանքս ասըմ ին. «Ջուր մի թափիս», դու հ՞ընչի՞ ես թափըմ։

Պառավն ասըմ էր.— Բա՛ն չկա, բալա ջան։

Մե ամիս, էրկու ամիս պառավն ջուր էր թափըմ էդ հորի վրեն, ամեն տեսակ կանանչի բուսավ։

Մե օր պառավ ախչկանից թագուն կանանչիցը քաղեց. կերակուրի մեջը քցեց։

Իրկունը ախպրտանք տուն էկան, նստեցին, որ հաց ուտեն, չէ՛, որ ամենքը մեկ-մեկ գդալ առան՝ օխտն էլ ալպեալը գառ դարձան։

Պառավն իլավ ու գնաց, ախչկան ասավ.— Իմ տղի արունքը հանեցի։

Ախչիկը շատ լաց իլավ։

Ինչ աներ խեղճ ախչիկը, տեհավ իլաճ չկա, գլխի լայլուխը շինեց ձեռի փետ, շվին դրեց բերնին։ Չէ՛, էն վախտ, որ շվին գնըմ էր բերնին ու ածըմ, իրան հետ քար ու թուփ մըղմըղվում էր։

Իրա գառ ախպրտանքը քցեց առաջ, թարգիվաթան իլավ, ընկավ ճանփա ու գնաց։

Գնաց-գնաց, շատ ու քիչ աստված գիտա, ըռաստ էկավ մե չայիր-չիման տեղ։ Էդ չայիրի մեջտեղը մե հատ չալ հավուզ կար, հավուզի գլխին էլ մե մեծ չինարի ծառ կար։ Ամեն օր ախչիկը

www.naregatsi.org

գառներին արածացընում էր. իրկուն էլ բերում ջրում էր, ծառի տակը նստցընում, ինքն էլ ըլլում էր ծառի գլխին նստում. առավոտն էլ շուտ քշում էր գառներ, ընդից հեռանում։

Մե օր, քշերը, ախչիկը շա՜տ մտածել էր, մինչև կես քշեր չէր քնե. էդ օր առավոտը չկարաց շուտ զարթներ։

Թաքավորի տղեն իրա ձինը բերեց ջրելու, տեհավ՝ ըտեղ օխտը գառ կա անտեր, անտիրական։

Շատ բարկացավ Թաքավորի տղեն.— Ո՛վ պտի ըլլի, որ էս բեվախտին իմ ղուրուխի մեջ ոչխար ա արե։

Բարկացած՝ ձինը քշեց ջրի վրա, տեհավ ձինը ջուր չի խմում. էնդար զանկուլամիշ արեց, ջրի վրա չգնաց։

Դու մի՛ ասա, ախչիկա պատկերը ընկե ջրի մեջ, ձինը հուրքմիշ ա ըլլում. Թաքավորի տղեն զարմացավ.— Ջանը՛մ,— ասավ,— էս ձինը ընչի ջրի վրա չէթում։

Ինքն էլ ջրի մեջը իշկեց. տեհավ, որ ջրի մեջը մե պատկեր կա, հո պատկեր չի, կասես հուրիմելեք ըլլի, որ շուտես, չիմես, ըդու մահ-ճամալին թամաշա էնես։

Թաքավորի տղեն է՛ս յան իշկաց, է՛ն յան իշկաց, տեհավ մարդ չկա, բայց որ շնայեց ծառի վրեն, աշկն ախչկան առավ՝ քիչ մնաց գլխի խելքը էթար։

— Ախչի,— ասավ,— ի՛նս ես, ջի՛նս ես, էս վախտ էստեղ ի՞նչ բան ունես, ծառիցը ցած իջի, որ քե տանեմ, Թաքուհի անեմ։

Ախչիկն ասավ.— Ջե՛մ իջնիր, Թաքավորի տղա։

— Ախչի՛,— ասավ,— իմ ընչին ես անուն դընում, իմ շենք ու շնորքին ես անուն դնում, իմ բոյ ու բուսաթին ես անուն դնում, թե իմ Թաքավորութենին։

Ախչիկն ասավ.— Ոչ մեկն էլ չեմ դնում,— ասավ,— միայն թե մե պահման կանեմ քու հետ, թե որ կընդունես՝ ես քունն եմ, դու իմն ես, թե որ չէ՝ ծառից քցեմ հավուզի մեջ, կխեղդվեմ։

Տղեն որ ախչկա էս խոսքը լսեց, քիչ էր մնում գլխի խելքը թոցըներ։

— Ախչի՛,— ասավ,— հոգիս էլ ուզես, կտամ, միայն թե իջի, ընձի առ։

Ախչիկն ասավ.— Իմ պահմանը էն ա, որ էս գառներին շատ լավ մուղաթ պտի կենաս, ինչդար որ ընձի սիրես, էրկու ընդար էլ ես գառներին պտի սիրես։

www.naregatsi.org

Ասավ.— Ախչի՜, թաքավորին չունի մա՛լ, չունի դովլա՛թ, հը-նա՛, կըլնես թաքուհի, հ՚ըմեն իրավունքն էլ քու ձեռը կըլնի, կուզես լավ պահի, կուզես վատ պահի։

Ախչիկն պատմեց, որ դառներ իրա ախպրտանքն ին։

Վերջապես ախչիկը ծառից ցած իջավ. տղեն խարար ղրկեց քաղաք, քաղաքը հ՚ըմեն էկան թաքավորի տղի առաջ. ձիավորներով, քեշեվաններով, առան, քաղաք տարան։

Թաքավորը հարսնիք բռնեց. օխտը օր, օխտը քշեր հարսնիք արավ. պսակվան։

Ըդրա դառներին ընենց էր պահըմ, որ կյուլը սոլմիշ չէր ըլ-լըմ[1], կասես թե մե պուտ ծաղիկ ըլլեր։

Թո ըսդոնք իրանց վայելչութենին ըլնին, մենք գանք էն պա-ռավի մոտ։

Եփոր պառավը իմացավ ախչկա բաղդը կտրել ա. վերցրեց իրա ախչիկն ու էկավ։ Էկավ թաքավորի տղի ճանփի վրեն, ախ-չըկա ձեռը բռնեց, կծկվավ, նստավ։

Թաքավորի տղեն էկավ դեն ընցնելու, տեհավ մե խեղճ պա-ռավ՝ իրա ախչկա հետ նստած ա։ Էկավ, ձին քշեց որ ընցներ, պա-ռավը իրան քցեց թաքավորի ձիու ոտի վրեն.

— Թաքավորի տղա՛,— ասավ,— անտեր պառավ եմ, ընձի տար քու տունը պահա. ես թաքուհուն լավ մուղաթ կըկենամ։

Թաքավորի տղեն ասավ.— խեղճ պառավ կնիկ ա, թո՛ գա, ուտի, խմի, ընձի համար աղոթք անի։

Թաքավորի տղեն վերցրեց պառվին, իրա ախչկան, տարավ տուն, ասավ.

— Թաքուհի՛, աչքդ լուս, քի համար մե ծառա եմ բերե, էս պառավ կնիկը խեղճ ա, թո ըստե մնա. քու գլոխն էլ լվա, ախչիկն էլ մե ծառայութեն կանի։

Թաքուհին ասավ.— Թաքավո՛ր, դու գիտա՛ս, էդ պառավին խրկես, էդ պառավիցը վնաս կգա։

— Ա՛յ կնիկ,— ասավ,— ի՞նչ կա, պառավը ի՞նչ կանի, փչեմ, կթռնի... կչորանա։

Թաքուհին ձեն չարեց. մնաց ըստե։

Էդ պառավն ընենց ծառայութեն էր անըմ, որ բոլորին էլ աշկը մտավ. թաքավորը, թաքուհին էս աշկըներեն էն աշկը չեն փոխըմ։

---

[1] Վարդը չէր թառամում (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Մեկ օր էս պառավը Թաքուհուն խափեց. տարավ ծովի ղրաղը, Թաքուհին էլ էրկու հոգով էր։

Պառավը ասավ.—Վա՜յ, աման, Թաքուհի, աչքերս քոռնա, արի, արի, շորերդ հանա, համ Թափ տամ, համ լողացի, հովցի, նոր էթանք։

Ախչիկը շորերը հանեց պրծավ. պառավը կոշտեց, քցեց ծովի մեջ։ Ախչկա ծովի մեջ ընկնելը, մեծ ձկան կուլ տալը մեկ իլավ։

Թո էդ ախչիկը մնա ձկան փորը. տենանք թե ջատուպազ պառավը ինչ արեց։ Թաքուհու շորերը հագցրեց իրա ախչկան. առավ, գնաց տուն, ախչկան սորվցրեց՝ սուտ հիվանդուԹեն տա։

Թաքավորը հարցրեց.— Թաքուհի՛, ինչ ա պատահե քեզի։

Ասավ.— Գնացի ծովի ափը, մրսել եմ, հիվանդ եմ։

Մեկ օր, էրկու օր, հինգ օր սպասում էր Թաքուհին սաղնա, քանի գնում, տքոցը շատացընում էր։

Թաքավորն ասավ.— Ի՞նչ ա սիրտդ ուզում, բերեմ։

Ասավ.— Ի՞նչ անեմ, բերանս չի բռնում, որ ասեմ։

— Ա՛յ կնիկ,— ասավ,— չես ղըմըշում. իմ կես Թաքավորությունն էլ կդնեմ քու ուղուրին։

Ասավ.— Գառներից մեկը մորթես, ուտեմ, առողջանամ։

Եփոր Թաքավորը լսեց գառների անունը զարմացավ, մազերը բիզ-բիզ իլավ գլխին։

— Ա՛յ կնիկ,— ասավ,— մինչև հիմի էդ գառներին քու աչքի լսից շա՛տ իր սիրում, ի՞նչ իլավ քեզի։

Ասավ.— Ի՞նչ անեմ, ջանն ազիզ ա ախպորից։

— Լա՛վ, ա՛յ կնիկ, որ ասում ես, մեկը մորթեմ։

Թաքավորը դուս իլավ, սկսեց մտածելը։

Թո Թաքավորը մտածի, գանք մենք գառների հալը հարցնենք։

Էն օրից որ իրանց քուրը ընկել էր ծովը, ամեն օր էթում ին, ծովի ղրաղը պռպռում ին, գալում ին, հիմա էս անգամը ասում հրամանքով լիզու իլան, սկսեցին խոսալ.

— Մարիամ, քուրի՛կ.

Թաքավորը դանակն ա սրե,

Ջուրը դրե.

Մեծ գառնիկ աղբոր պտի մորթե,

Սուտ հիվանդն ա ուզե։

— Ես ի՞նչ անեմ, Մանուկ ախպեր ջան,

www.naregatsi.org

Ջուրն ա ծածկե.
Զուկն ա կուլ տվե.
Թաքավորի էրեխեն խտիտս քնե։

Ըդրանք թո էրթան ծովի վրեն ու գան։

Ջատու պառավը ամնօր սովրցնըմ ա իրա աղչկան, որ շատ դայիմ տքա, որ շուտ մորթեն գառին։

Դանք, էդ քաղաքի ժամհարին գտնենք։

Ժամհարը մե օր էթըմ էր ծովի ղրաղով, տեհավ ծովի միջեն ձեն ա գալըմ, անկանշ արեց, տեհավ, որ ասըմ ա.

— Ժամհար, քու ժամը ձեննես.
Քու անահուն աստվածը սիրես.
Էթաս, թաքավորի տղին ասես.
Դանակը շարրի,
Ջուրը չդնի,
Իմ գառնիկ ախպոր վզին չդնի։

Մեկ օր, էրկու օր, իրեք օր. ժամհարը տեհավ, որ էդ ձենը ամնօր գալըմ ա. չարեն կորավ, գնաց թաքավորին ասավ.

— Թաքավոր ապրած կենա, ծովի միջիցը ձեն ա գալըմ, թե որ չես հավատըմ, արի էթանք, տե՛ս։

Թաքավորը գնաց ժամհարի հետ ծովի ղրաղը, կայնավ. տեհավ, որ ծովի միջից ձեն էկավ։

«— Ժամհար, քու ժամ կձեննես...»

Թաքավորի տղեն որ ակնջով լսեց, ջառ քցեց քաղաքը, որ ինչքան թոռչիք կան, դան թաքավորի կուշտը։

Ալպեալը թաքավորի հրամանը կատարվավ, քաղաքի մեջ ինչքան թոռչիք կային ժողնըվան, թաքավորի շորս բոլորը կորին, կայնան։

— Հա՛ն, թաքավորն ապրած կենա, ի՞նչ ես հրամայում։

Թաքավորն ասավ.— Թոռերը քցեք ծովը,— ինքն էլ կայնավ ծովի ղրաղը, աղոթք արավ։

Որ թոռը քաշեցին, մե մեծ ձուկ ծովից դուրս էկավ. ձկան փորը ճղեցին՝ աղչիկը, փոքրիկ էրեխեն խտիտը, պտուղ-պտուղ քըրտինքը վրեն տված։

Հագցրին, առին նաղարով, զուռնով, քեֆ անելով թաքավորի պալատը տարան։

www.naregatsi.org

Ախպրտանքը որ տեհան քուրը ծովից դուրս էկավ, ով որ ընտե կայնե, սիրտը կտոր-կտոր կըլներ, քյաֆրի ջիկյարի գլոխն էր մղկտըմ. բոլորեցին իրանց քվորը ախպրտանքը։

Ըդենց շորս բոլորը փաթած՝ քոշք ու սարեն մտան։

Պառավը ու իրա ախչիկը լսան, դողը ջանները առավ։

Թաքավորը առավոտը նստավ դիվան, թաքուհին էլ մոտը կայնավ։

Կանչին պառավին ու իրան ախչկան։

Թաքավորն ասավ.— Հիմի ըսդրանց դիվանը քե եմ տվե, թաքուհի, մո՞նց կուզես, էնենց արա։

Թաքուհին ասավ.— Ջատուպազ, ախպրտանցս արիր գառ, բոլ չի՞, ուզըմ ես ախպրտանցս մորթե՞ս էլ, ինչ թավուր պատժեմ քեզի, որ հոգիս դինջանա։

— Ամա՞ն, թագուհի՛,— ասավ,— ես արի, դու մի արա, էլի քու ախպրտանքը դարձնեմ իսան։

Չէ՛, որ թաքուհին էս խոսքերը լսեց, քիչ էր մնըմ ուրախութենից ուշքը էթար։

— Դե՛,— ասավ,— շուտ արա՛։

Պառավը ֆեխ արեց, տղեքը էլի դարձան իսան։

Թագուհին պառավին, իրա ախչկան ազատեց. քաղաքիցն էլ դուս արեց։

Համ լացան, համ ուրախացան։

Յոթ ախպերտանքը գնացին, իրանց հորն ու մորը շատ ծերացած գտան, մեռնելու մոտ. վերցրին բերին իրանց փեսա թաքավորի քաղաքը, ընտե ապրան։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր...

www.naregatsi.org

16. ՇԻՐԻՆ ՇԱՀ ԵՎ ԲԱՀՐ

Ավալ ժամանակին Սև սարը մեկ թաքավոր բնակվում էր, ըմեն գախ էն սարը ավ ու ղուշ[1] էթում էր։

Մեկ օր էլ էն սարիցը ձեն էլավ.

— Թաքավո՛ր, քու գլոխ պետք ա շա՞տ դարքեր[2] գան։

Թաքավորը ասաց.— Որ դարք իգա, ե՞ի կկատարվի։

— Էն օրը կկատարվի, եվ մսե աթոռը տակդ, էրկաթե ամանը առաջդ ըլի,— ասաց ձենը։

— Էն դարքն որ իմ գլոխ պետք ա գա, մկա՛ թող գա, քանի որ թևիս ղուվաթ, աչքիս էլ լուս կա,— ասաց թաքավորը։

Էն գախին թաքավորին քամու նման մի բան վերցրեց տարավ։

Է՛լ չիմցավ թաքավորը, թե ղո՞ր կէթա։

Օրերուց մեկը աչքը բացեց, տեսավ ինքն իրան մեկ օտար էրկիր ընկած ա, թաքավորական գեստը[3] իր վրեն ման կգա։

Իրան վրի գեստը խանեց, տարավ պախեց։

Թաքավորը գնաց էսդեն, էնդեն, ըսու, ընու զարկվավ, սկսեց

---

1 Որսորդություն (Ս. Բ.)։

2 Փորձություն, արկածք (Ս. Բ.)։

3 Զգեստ (Ս. Բ.)։

13—2573

www.naregatsi.org

նոքարութեն անել։ Մի լավ մարդի ըռաստ էկավ, էն մարդի աչք շատ բռնեց էդ տղին, շատ սիրեց, իրան որձեղեն տղա չուներ, մի աղջիկ ուներ. բերեց իրա աղջիկը տվեց էս տղին, արավ հոգական որդի։

Մենք դառնանք Սև սարը։

Սև սարի մարդիկը ժողնըվան, խորխուրդ արին, որ իրանց թաքավորը կորսվեր ա, չկա, պետք ա գտնեն, յա իրանց ղուշը թալեն։

Թաքավորին շատ ման էկան, չգտան։

Ղուշը թալեցին, թռավ, ման էկավ, ման էկավ, էկավ, իջավ թաքավորի թախտի վրեն։

Իրեք հաղ ղուշը թալեցին, իրեք գախին էլ գնաց թաքավորի թախտի վրեն իջավ։

Ժողնըվան թաքավորի վաքիլն ու նազիրը, թաքավորի լավ-լավ մարդիկը, իրանց-իրանց մասլահաթ[1] արին։

— Կըլլի որ մեր թաքավորը սաղ ա, գնացեր ա օտար երկիր. արեք իրեք ճամփու մեջ թալենք մեր ղուշը, տեսնանք, դո՞ր որ էթա, մենք էլ խետը էթանք։

Բերին ղուշը թալեցին, իրանք էլ ընկան էտեն ու գնացին։ Գնացին շա՜տ-քիչ, խասան դե էն քաղաքը, որ իրանց թաքավորը ընկած էր։

Թաքավորն որ գացեր էր, մեկ տարի թմեր էր. իրան կնիկն էլ ծանտր ոտ էր, ծնելու օրը մոտկցեր էր։

Թաքավորը, որ էդ օրը ղուշ թալած ին, գացեր ա անոր[2] արտին ջուր անելու։

Ղուշը էկեր, իջեր ա իրա անոր դռան վրեն։

Կնիկը խաց տարավ արտ՝ թաքավորի խամար։

— Ա՛յ կնիկ, ի՛նչ էլավ, ինչի՛ էսքան անգան բերեցիր խացը,— ասաց թաքավորը։

— Ա՛յ մարդ,— ասաց կնիկը,— մեր դուռ ու դուռ ձիավորներ բռներ են, մեզնից թաքավոր ուզըմ են։

Թաքավորը խետ գախուն իմացավ, որ իրան մարդիկ էկեր են Սև սարից, իրան գտեր են։

Թաքավորի ոտը գետնից կտրավ ուրախութենից. ասաց իրա

---

1 Խորհուրդ (Ս. Բ.)։

2 Անեռոջ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

կնկանը.— Կնիկ, շուտ գնա՛ տուն, մեր ձիան մսուրքին մե պուտուկ հորեր եմ. մկա ա՛ռ, արի, չըլլի բերանը բանաս, ընու մեջ օձ ու ջանավար կա։

Կնիկը վազավ տունը, առավ բերեց։

Թաքավորը ուրախութենից խաց ուտել մոռցեր էր, տեղը տիլ էր, նստելու տեղ չկար, կնիկը ասաց.— Ա՛յ մարդ, արի չոքերիս վրեն նստի։

Աման չէր տարեր, բահը դրեց մարդի առջին, զադը[1] լցրեց մեջը, գդալ չկեր, թիքով[2] կերավ։

Թաքավորի միտքը էկավ էն Սև սարի խոսքը, ասաց,— Գոհանա՜մ քեզնից, աստված, կատարվավ հ՚էսօր Սև սարի բլբուլի էն խոսքը, որ կասեր. «Երբ մսե աթոռը տակդ, էրկաթե ամանը առեջդ առ. ահա՛ կնկանս չոքերի վրեն նստած, բահին մեջ էլ խաց կուտեմ։

Կնկանը ասաց.— Դու վե՛ր կաց, գնա՛։

Կնիկը գնաց. ինքը մտավ առուն, թամուզ լեղացավ, իրան թաքավորական գեստը խանեց պուտուկից, խագավ, թագը գլուխը դրեց, ճանրա ընկավ դպա տուն։

Ղուշը պատի վրիցը թռավ, բանձրցավ էրկինք, էկավ թըխ թաքավորը։

Թաքավորի մարդիկ, որ ղշի խետ էկեր են, էկան թաքավորը գտան. ընկան ընդու առեջ, ուրախ-ուրախ էկան իրա անների տունը։

Էդտեղ ուրախութեն արին, դե լուսը բացվեցավ։

Էն մեկել օր ձիանքը քաշեցին, հեծցրին թաքավորին։

Թաքավորի կնիկը ծանտր ուտ էր, էդի թողեց։

— Կնի՛կ,— ասաց թաքավորը,— մացի էդտեղ, էս բազպանդը[3] տալըմ եմ քեզի, մեջը ակունք կա. քեզնից թե տղա էլա՜վ, անունը կդնես Բարակ շախ, որ ջոջըցավ, էս բազպանդը կկապես թևը, կդա Սև սարը, ընձի կգտնի։ Թե աղջիկ էլավ՝ էդ բազպանդը բավական է էրկըսիդ էլ։

Ժամանակը թմմավ, կնիկը պառկավ, տղա մի բերեց, անունը դրին Բարակ շախ։

Բարակ շախ վեց տարեկան էլավ մերը տվեց ուսումնարանը, իրա ուսումը լավ առավ։

---

1 Կերակուր (Ե. Բ.)։

2 Գատառով (Ե. Բ.)։

3 Կախարդական փաթեթ (Ե. Բ.)։

www.naregatsi.org

Մեկ օր Բարակ շախ գիրքը ղուճախին[1] գալըմ էր. տեսավ ճժեր ճան[2] են խաղում, շուռ-ու-ղուռ էրավ[3], տղեն ճանները վերցրեց։

Մեկ քյաչալ տղա կեր էդ ճան խաղողների մեջ. էն քյաչալ տղեն ասեց.

— Բիճ[4], բճի տղա՛, իմ ճանները ընչի՞ վերցրիր, թա՛լ գետին։

Բարակ շախ ճանները թալեց, լալելեն գնաց, մորը ասաց.

— Նանե՛, իմ խերը ո՞րն ա։

— Ընչի՞ խամար, ո՛րդի։

— Էսօր էն քյաչալ տղեն ընձի բիճ, բճի տղա ասաց, ես էլ միտք անըմ եմ, ես բի՞ճ եմ, որ ընձի բիճ ասըմ են։

— Չէ՛, որդի, դու Սև սարի թաքավորի տղեն ես, քու խեր թաքավոր ա։

— Նանե՛, որ էդենց ա, ես կէթամ, կխասնեմ իմ խոր։

Բարակ շախ էլավ, ձին քաշեց, խեծավ։

Մերը լացեց, ասաց.— Ո՛րդի, դու դո՞ր ես էթըմ։

— Պըտի էթամ Սև սարը, խասնեմ իմ խորը։

Մերը տեսավ, որ օղորթ տղեն էթըմ ա, բերեց բազպանդը, որ խերը տվեր էր, կապեց տղի աջ թևի վրեն. տղեն էլ մորը ձեռը պաչեց։

Մերն էլ ասաց.— Գնա՛, աստված քու բան հաջողա։

Բարակ շախ գնաց։ Օրերից մեկ օր գնաց, խասավ իր խորը։

Խերը կանչեց իրան էրեսը, խարցրեց.— Դու ո՞րտուց ես։

— Ես Սև սարա թաքավորի տղեն՝ Բարակ շախն եմ։

— Էրևըմ ա՛, դու իմ տղեն ես. որ դու իմ տղեն ես, ընձնից քու կուշտ նշան պըտի ըլի։

Բացեց թևը, նշանց տվեց խորը բազպանդը։

Խերը տեսնալուն պես իմցավ, որ իրա տղեն էր. սիրեց, ընդու խամար տասէրկու նոքար բռնեց, պախեց իրա մոտ։

Թաքավորը խալիվորցեր էր. օրերուց մեկը կանչեց Բարակ շախին,— ասաց.— Ո՛րդի, ես խալիվորցեր եմ, ըստուց դեն դու իմ տեղ թաքավոր էղի, Սև սարը լավ պախի, ըմեն գախ էն տեղ գնա՛ավ ու ղուշ։ Ես որ մեռա, Սև սարի գլոխ խորե ընձի։

---

1 Գրկին (Ս. Բ.)։

2 Վեգ (Ս. Բ.)։

3 Գետնեն ձեռով մեկ անգամեն սրբելով հավաքեց (Ս. Բ.)։

4 Գոռնկորդի (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Բարակ շախը հրմնոր էթում էր Սև սարը. էրկու, իրեք, տաս տարի էլավ, ըսկի՛ սարից չէր կտրեր, հա՛ էթում ու գալում էր։

Թաքավորը մե տարի թմավ, որ խիվանդ էր. որ խիվանդ էր՝ Բարակ շախ մե տարի Սև սար ավ ու ղուշ չգնաց, մնաց խոր կուշտ, իրա խեր կպախեր։

Թաքավոր որ մեռավ, Բարակ շախ էլի գնաց Սև սար, իրա նոքարներն էլ իրա խետ։

Դու մի՛ ասի, Բարակ շախ որ մե տարի Սև սարը չէր գացեր, Լեկթեմուր էկեր, տրապլտեր էր էդ սարը։

Բարակ շախ իրա նոքարների խետ շատ ման էկավ, մե ջեյրան ըռաստ էկավ, նոքարների խետ փաթեցին էդ ջեյրանին։

Բարակ շախ ասաց.— է՞, նոքարներ, էդ ջեյրան վի՛ր առաջից փախնի, էնի մինակ պըտի բռնի։

Ջեյրանն էր, էկավ Բարակ շախի առաջից փախավ։

Բարակ շախ ընկավ ջեյրանի էտև ու գնաց. հա՛ էստեղ, հա՛ էնտեղ բռնեմ, ասաց ու շատ խեռուն հասավ, զանեց։

Բարակ շախի տասվէրկու նոքարները մացին էնտեղ կայնուկ։

Լեկթեմուր իրա մարդերով ըռաստ էկավ Բարակ շախի նոքարներին, թուրը քաշեց, ընկավ մեջները, տասվէրկուսին էլ սըպանեց։

Բարակ շախ ջեյրանը բռնեց, դարձավ, էկավ նոքարների կուշտ. օ՞, ի՞նչ տեսնա՝ տասնվերկուսին էլ սըպանած ա։

Ջանդակները շրջեց է՛ս յանը, է՛ն յանը, տեսավ, որ մեկը տակը մացեր ա, ընդուց ձեն ա ըլում, դուս խանեց, խարցրեց.— Ձեզի ո՛րն ա էս խալին[1] էցգեր, էսենց սըպանե։

— Չեմ գիտա, իտա ձիան իզը, որ գութանի պես էկեր, գետինը վարեր ա, է՛դ ձիան տերը մեզի սըմալ[2] արաց,— ասաց ու էն էլ մեռավ։

Բարակ շախ շատ նեղացավ, բռնեց ձիան իզը՝ գնաց. գլխըվերավ Սև սարի կողն ի վեր, ըռաստ էկավ մի քոշք ու սարի, գնաց դուռը կայնավ. ձիուց իջավ, կապեց, մտավ ներս, տեսավ՝ որ Լեկթեմուր իրա գլոխ դրեր ա իրա կնկա չոքերի վրեն, քներ ա։

Թուրը քաշեց Բարակ շախ, ասաց. «էթամ, ընդու վիզը կտրեմ»։

Ասաց իրա-իրա. «էդի քնուկ ա, աստված դասուլ չանի. էլնի՛, էն գախ մարտի-մարտանա կզանեմ ընդուց»։

---

1 Վիճակին (Ս. Բ.)։

2 Այսպես (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Բարակ շախ ուզեց որ նստեր, Լեկթեմուրի աղջիկ ընդեն էր, տեսավ, որ տղեն նստում ա, հ'էլավ քեչեն բերեց, էգցեց, բարձն էլ դրեց, Բարակ շախ նստավ ու ննջաց, քնավ։

Լեկթեմուրի կնիկը Լեկթեմուրին իմցրեց։

Լեկթեմուր թուրը քաշեց, որ ըդու վիզը կտրա։

Աղջիկը էլավ-կայնավ, իրա խոր յախից բռնեց, զարպին թալեց, որ գնաց ընկավ պատի վրեն, պատն էլ քանդեց, ընկավ դուռ։

— Նամարտի՛ տղա՛, նամա՛րտ,— ասաց իրա աղջիկը,— էնի դռնից էկավ՝ քեզի քնուկ տեղ չզանե՛ց, դու ի՞մալ ես ընդուն զանում. յավաշ, էն է՛լ քու պես քնի, հ'ելնի, հ'ելե՛ք դուռը, դու ընդո՛ւ արունը խմա՛, էն էլ քու արունը թըղ խմա։

Բարակ շախ քնից հ'իմցավ. էլան դուռը, մտան մեյտան։

Ասաց Լեկթեմուր,— Բարա՛կ շախ, դու իմ վրեն ես էկեր, դու պառկի, ես քեզի իրեք կյուրզ զանեմ։

Պառկավ[1] Բարակ շախ։

Լեկթեմուր գնաց-էկավ, իրեք կյուրզ զանեց։

Աստըծու խրամանքով մեկն էլ ընդու չառավ։

Ասաց Բարակ շախ.— Նոպաթ քոն ա, Լե՛կթեմուր, արի՛, պառկի։

Պառկավ Լեկթեմուր։

Բարակ շախ ասաց.— Ես ընձի կյուրզ չունեմ, իրեք թուր կզանամ քեզի։

Է՛ս դեն, է՛ն դեն դարձավ, էկավ որ զաներ. Լեկթեմուրի կնիկ էկավ առեջ, ասաց.

— Էս մեկ թուրը պախշա՛ իմ խացին։

— Էս մեկ թուրը պախշեցի քու խացին,— ասաց Բարակ շախ։

Էլի Բարակ շախ դարձավ էկավ, որ մե թուր էլ զաներ։

Աղջիկը էկավ առեջ, ասաց.

— Բարա՛կ շախ, էդ մեկ թուրն էլ պախշա՛ ընձի, իմ խերն ա։

— Մնաց մե թուրը,— ասաց Բարակ շախ,— էս մեկ թուրը, աստըծո՛ւց մարդ իգա, հնար չկա, կզանեմ. ըսկի՛ իլաճ չկա, որ պըտի զանեմ։

Լեկթեմուրն էլ իմցավ, որ էդ մե թրին չդիմանա. մե՛կ էլ աղաչեց։

---

1 Երկու խաղացողներու մին երբ կկանգնի և մյուսը կխաղա իսմ կդարնե, ֆանգնողին պ ա ռ կ ա վ կասեն (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Որ շա՛տ աղաչեց, խնդրեց, Բարակ շախ ասաց.

— Ավալ հորդում կեր։

Հելավ, հորդում կերավ, ասաց.

— Խացը դինին, տեր կենդանին, ես քեզի պղտի աղբեր, գու էլ ընձի չոջ աղբեր. իմ աղջիկն էլ ես հոժար կամոք տվի քեզի։

Իրեք խետ հորդում կերավ։

Որ իրեք խետ հորդում կերավ՝ Լեկթեմուր իրա աղջիկը, քոշկ ու սարի բանլիսներն էլ տվեց Բարակ շախին. օթախներն էլ նշանց տվեց, էկավ մի օթախի էլ ըռաստ էկան, ասաց Բարակ շախ.— Ընդու բանլիսն էլ տո՛ւ։

— Աստված վկա ա՛, որ ըսու մեջ զա՛տ[1] չկա,— ասաց։

— Լեկթեմուր,— ասաց Բարակ շախ,— արունը քեզի կապեր ա, հա՛ սպանեցի քեզի, ըսու բանլի՛սն էլ տո՛ւ։

Վախեցավ Լեկթեմուր, խանեց, տվեց։

Մտան մեջը, տեսան, որ օղորդ զատ չկեր, հըմա մե դապաղա թղթի վրեն էրկու շքիլք[2] կեր, տեսնալուն պես Բարակ շախի խելքը գնաց, ընկավ։

Թուրը քաշեց Լեկթեմուր, որ վիզը կտրա։

Աղջիկը ասաց իրա խորը.— Տե մկա իմ մարդը չէր, չկանե՛ր սրպաներ, մկա իմ մարդն ա, դու կանա՞ս ըդու սրպանե. հա՛, վի՛զդ կքաշեմ։

— Աղջի՛, էդի որ հ՛իմցավ՝ էդ աղջիկները կուզա, ես ո՞ւստ տամ։

Բարակ շախը հ՛իմցավ, ասաց.— Լե՛կթեմուր, չեմ գի՛տըմ, էդ աղջիկները քեզնի՛ց կուզեմ, բերի՛ր՝ բերիր, չբերիր՝ վիզդ կզանեմ։

Հ՛որդում կերավ Լեկթեմուր, ասաց.— Բարակ շա՛խ, աստվա՛ծ վկա, էդ աղջիկները յոթ տարի ընձի ճրագկալ են շիքե. ընձի գլխի-վեր կապըմ ին սանը, ճրագ դնըմ ին ոտներիս վրեն, տակը կար անըմ ին։

Բարակ շախը ասաց.— Մի՛ վախենա, ես էլ քու խետը կըգամ։

Ձիանքը քաշեցին, խեծան, գնացին մեջի ափը։

Էդ մեջի ափը աղջիկները մեյտան ունեն, ընդոց մեյտանը ընտի էր։

---

1 Բան (Ս. Բ.)։

2 Գաթեր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Բարակ շախ ասաց.—Լե՛կթեմուր, ըդոնց սովորութեն ի՛մալ ա։

— Արև մտավ, պըտի կրակ անես, որ սապախտան[1] գան ընդոնք կռիվ։

Բարակ շախ ինք մեշի մեջ գնաց ուրիշ տեղ. Լեկթեմուր բոլ ցախ ժողվեց, կոլոնեց[2], կպցրեց[3]։

Աղջիկները էլան իրանց օթախի տանիքը. տեսան, որ մեյտան կրակ են արեր. ճանչցան, որ Լեկթեմուրի կրակն ա։

Առավոտուն էլան, գնացին Լեկթեմուրի տեղ, ալպեալ[4] վեր դրին. առան Լեկթեմուրին, տարան իրանց տունը, գլոխ դրին գետինը, ոտներ ելըվըցրին, փաթեցին սանը, ճրագ դրին կրընկների վրեն. ձեթ էկավ ըդու քթի ծերից կաթաց։

Բարակ շախը էկավ, մտավ մեյտան։

Ջոջ աղջիկը պզտըկին ասաց.— Էլի՛ր տանիսը, տե՛ս, մեր մեյտանը կռիվ անող չկա՞։

Էլավ տանիս, իշկեց, որ մե լավ կրակ անող էկեր, կրակ արե։

Գնաց ասաց.— Քո՛ւրիկ, ես է՛ս կրակ անողից շատ եմ վախենըմ։

— Հ՚ընչի՞ վախըմ ես, քուրի՛կ։

— Կուզե՛ս, դուն էլ էլի՛ տես։

Էրկսով էլ էլան, տեսան. էրկսով էլ վախեցան, ասեցին.— Էս կրակ անողից մեզի խաթա[5] կըգա։

Առավոտուն լուսը բացվավ. աղջիկները սովրեր ին, էրկսով էլ էլան գացին կռիվ, որ Բարակ շախին էլ Լեկթեմուրի պես վերցընեն, բերեն։

Շատ կռիվ էրեցին, էրկսով էլ չկարցան։

Բարակ շախ մեկ ձեռ թալեց մեկ աղջկա ծամերը բռնեց, մեկ ձեռն էլ թալեց, մեկելի ծամերը բռնեց, քաշեց։

Աղջիկները հ՚որդում կերան թե. «Ո՛վ որ մեզի հաղթա՝ ընդու պըտի առնենք. մկա դու հաղթեցիր, մենք էրկսով էլ քոնն ենք»։

Բարակ շախ ծամերը թողեց, գնացին աղջիկների տունը. տեսան, որ ձեթ էկեր Լեկթեմուրի քթից կկաթա։

---

1 Առավոտ (Ս. Բ.)։
2 Կիտեց (Ս. Բ.)։
3 Վառեց (Ս. Բ.)։
4 Անմիջապես (Ս. Բ.)։
5 Վատեգ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Ասաց Բարակ շախ.

— Լեկթեմո՛ւր, Լեկթեմո՛ւր,

Իմա՛լ եղեր իս ք...-թեմուր։

Թուրը քաշեց, ըդու շրտըներ կտրեց, պրծըցրեց, ասաց.

— Լեկթեմո՛ւր, գնա՛ քու էրեսը լվա։

Գնաց լվաց, էկավ-նստավ։

— Դ՚արի՛,— ասաց Բարակ շախ,— էս աղջիկները կիսա՛, մեկը քեզի, մեկն էլ ընձի։

Պզտիկը շատ սիրուն էր։

Լեկթեմուր ասաց իրան-իրան. «Թե էնի առնեմ՝ արի՛ տես, Բարակ շախ ընձի սրպանա. թե ասեմ՝ ջոջն ընձի, ջոջը պզտըկից գեշ աս,— ասաց.

— Բարա՛կ շախ, ես ջոջ եմ՝ ջոջը ընձի, պզտիկը քեզի։

Բարակ շախ ասաց.— Որ ըդմալ ա՝ արի՛, էս էրկու քուրը որ առանք՝ ընձի աղջիկ էլավ, քեզի տղա,— ե՛ս տամ քու տղին. քեզնից աղջիկ էլավ՝ ընձնից տղա,— դո՛ւ տաս իմ տղին։

Էդմալ բեշըքյարթմա[1] արեցին, վերցին-գացին։

Տարին թմավ, Լեկթեմուրին աղջիկ էլավ, անունը դրին Բահր[2]. Բարակ շախին տղա էլավ, անունը դրին Շիրին շախ[3]։

Լեկթեմուր Բահրի ղոնտախ[4] առավ, գնաց ծովի ափը, կայնավ, ասաց ծովին. «Բա՛հրը, տա՛ր իմ ղահրը[5].

Բարակ շախ ընձի հաղթեց՝ էսի մեկ դարտ.

Իմ աղջիկ առավ՝ էսի էրկու դարտ.

Աղջըկների սիրունը առավ՝ էսի իրեք դարտ.

Իմ աղջիկն էլ տվեց իրա տղին՝ էսի չորս դարտ.

Բահրը թալենք, թող ղահրը տանի»։

Բահրը թալեց, ղահրը տարավ Քաջանց երկիրը։

---

1 Դեռ չծնած, կամ երբ օրորոցի մեջ տղա և աղջիկ է, կխոսանան իրար «ա։ Բեշըքյարթմա կը նշանակե օրորոց դնել (Ս. Բ.)։

2 Մով (Ս. Բ.)։

3 Քաղցր թագավոր (Ս. Բ.)։

4 Խանձարուր (Ս. Բ.)։

5 Ցավ, հառաչանք (Ս. Բ.)։

www.naregatsi.org

***

Մնաց Շիրին շախ, որ օրբը զօր ջոջըցավ, էլավ տասնըվինգ տարեկան տղա։

Մե օր մերը ասաց.— Շիրի՛ն շախ ջա՛ն, դու հ՞ընչի՞ չես էթըմ Բահրը բերի։

— Նանե՛, ո՞ր տեղն ա,— ասաց Շիրին շախ։

— Տե՛ Քաջանց երկիրն ա։

Շիրին շախ էլավ, ղալխանը ձեռը առավ, թուրը մեջքը կախեց, խեծավ ձին ու գնաց։

Շատ ու քիչ աստված գիտա, գնաց ընկավ մե երկիր, տեսավ, որ էրկու դև կռվըմ են, մեկը Սիպտակ, էն մեկելը Սև։ Սևը որ զանըմ էր Սիպտըկին՝ Սիպտակը ըլլըմ էր մե մաղի բարա ու չէր կտրվըմ. Սիպտակը որ զանըմ էր Սևին՝ ըսկի՛ չէր էրևըմ վրեն։

Շիրին շախ ասաց.— Աստված վկա, ես էս Սևին մե թուր պըտի զանեմ, ինք ու ուր թալահ[1]։

Թռավ, Սև դևին մե թուր զանեց։

Դևն էլավ էրկու կտոր, մե՛կ բանձրցավ վերև, մե՛կ գնաց ցածր։

Սիպտակ դևը Շիրին շախի թևից բռնեց, թալեց էն դեն։

Դևի էն վերևի կտորը էկավ, զարկեց էն մեկել կտորին։

Շիրին շախ ասաց Սիպտակ դևին.

— Ես քեզի լավութեն արեցի, դո՛ւ իմ թևիցս բռնեցիր, թալեցի՛ր։

— Ղուրբան քեզի,— ասաց Սիպտակ դևը,— ես քեզի լավութեն եմ արեր, էն վերևի կտորը սեհրբազ էր, քեզի կզաներ, կսըպաներ։

— Դու ի՛նչ ես գինըմ, ես Շիրին շախն եմ։

— Ես գինը՛մ եմ, դու էթըմ ես Բահրի էտև. ես էլ Քաջանց թաքավորի գզիրն եմ, քու լավութեն չեմ կորցու. քու Բահրն էլ իմ քուրն ա, կտանեմ, իմ քուր կըտամ քեզի։

Սիպտակ դևը ընկավ առեջ, առավ Շիրին շախ, գնաց։

Քաջանց երկիրը ընկան իրիկնեց ո՛ր քաղաքը որ իջնըմ ին, Սիպտակ դևը աներևութք ըլլըմ էր, առավոտուն գալըմ, առնըմ, էթըմ էր Շիրին շախին։

---

1 Բախտ (Ծ. Բ.)։

www.naregatsi.org

Գացին-գացին, մեն շահարի[1] ըռաստ էկան։

Էդ շահարի մեջ մեն մարդ կեր, անունը Քաջ-Վարդան էր. էդի հ՚ըմա՛լ քաջ էր, որ մարդ չէր կանըմ հաղթի. վախենըմ ին իրանից՝ ըդու խամար արեր էին իրանց քաղքին նախարչի. ըդու հախն էլ՝ հ՚իրկնե հ՚իրկուն ո՛ր տավարը որ աչքը կտրեր՝ չորս ոտքը կկապեր, կցգեր փետի գլոխ, կդներ թևի վրեն, կբերեր, հ՚իրիկնե հ՚իրիկուն կուտեր։

Շիրին շախին զոնախ տվին էս Քաջ-Վարդանի տունը, որ ուտա ընդուս

Շիրին շախ տեսավ՝ Քաջ-Վարդանի կնիկ շա՛տ սիրուն ա։

Կնիկ ասաց ուրին-ուրին. «Հ՚իրկուն կըգա Քաջ-Վարդան, էս խողածնին կսպանիս։ Փաթըտեց խսիլ, դրեց դռան էտև։

Հ՚իրիկուն տեսավ, որ Քաջ-Վարդան մեկ շեկ կուտընի[2] չորս ոտք կապեր, թալեր ա մեն փետի գլոխ, դրեր թևի վրեն ու կոկռալով, կոտշներ պատեր ու դռներ սրբելով՝ էկավ. որ գոմշին տվեց գետին, փորը ճղվավ, պլոճիկներ թռավ, գնաց-ընկավ դռան էտև։

Քաջ-Վարդան զոռեց իրա կնկան, ասաց.

— Էլի՛, թունդիր վառի։

Բերեց շոշ ղազան դրեց թունդրա վրեն, ճխտեց շեկ կուտընի վիզը կոտրեց, ծալեց. շոք դրեց գոմշի փորի վրեն, ճղրտեց, դրեց ղազանի մեջ։

Ղազան սկսեց էփիլը։

Քաջ-Վարդան գախ քաշըմ մեկ ճուռը ուտըմ էր, գախ՝ թևը, գախ քաշըմ կոտշները խանըմ էր։

Մեն սեհրբազ պառավ կեր էդ քաղքին մեջ, ասաց.

— Էթամ, տենամ Քաջ-Վարդան Շիրին շախին էլ կերե՞ր ա՝ թե մնըմ ա։

Էկավ տեսավ, որ մնըմ ա, ասաց.

— Քա՛ջ-Վարդան, Շիրին շախը իդա դռան ետև խսըլի մեջ գրուկ ա։

Շիրին շախ խսըլից էլավ դուս, խասավ Քաջ-Վարդանին։

Քաջ-Վարդան տեսավ, որ էսի խողածին ա, ինքն էլ խասավ ընու։

---

1 Քաղաք (Ս. Բ.)։

2 Կռավոծ գոմեշ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Շիրին շախ Քաջ-Վարդանին վերցրեց, զանեց գետին, ձեռը էցգեց սունը, բանձրցեց ու Քաջ-Վարդանի քանքյուլը[1] դրեց սան տակը։ Շիրին շախ ասաց Քաջ-Վարդանի կնկան.

— Անոթի եմ, խաց բեր, ուտեմ։

Խացն առավ-էկավ, նստավ-կերավ։

Տեղ էցգեցին ու քնան։

Լուսը բացվավ, Շիրին շախ էլավ, ընկավ ճամբախ, գնաց։

Սիպտակ դևը էկավ Շիրին շախի առեջ, ասաց.

— Իմա՞լ պրծար-էկար Քաջ-Վարդանի ձեռիցը։

— Պրծա՛։

— Էսօր արի՛ էթանք քո Բահրի կուշտ,— ասաց դևը։

Առավ-գնաց իրանց տուն։

Սիպտակ դևի քրոջ անունն էլ Բահր էր։

Դևը ասաց.— Շիրի՛ն շախ, է՛դ Բահրն, է՛դ էլ դու։

Շիրին շախ իշկեց, որ էդ աղջիկ մեկ ապրոշին մեկն ա։

— Թե որ էսի՛ ա,— ասաց,— մե բան չէ՛։

Առավտուն էլավ, իր ձինը քաշեց, բերեց դուռը կապեց. էկավ որ թամքն էլ տաներ՝ էկավ-տեսավ, որ էդ ապրոշ աղջիկ ձինը գողացեր ա։

Գնաց, ձին գտավ-բերավ, տեսավ որ թամքը գողացեր ա։

Շիրին շախ տեսավ, որ չէլնի՝ ձին քաշեց ներս, թամքը գտավ, զարկեց ձիու վրա, ղոլանը ամրցրեց, էկավ շեմի վրեն կայնավ, ձին թամքով չընցնիր, ձեռ տվեց, շեմ ու շեմկալ վերցրեց, առավ, էլավ դուս։

Սիպտակ դևը էկավ առեջը, աղջիկը ասաց աղբոր.

— Իմ մոր ծծի կաթը քեզի խարամ ըլի, թե որ իրեք խետ իրան բերնովը, իր մեռնելը ուզել չտաս Շիրին շախին։

Ընկան ճանբախ, գնացին, մե ծովի ըռաստ էկան։

Գնացին ծովի ափը, գզիր բերեց իրան ձիան չորս ոտքն էլ դեղեց, Շիրին շախի ձիան իրեք ոտքը դեղեց։

Ձիանք տվին ծովի մեջն ու գացին։

Շիրին շախի ձիան մեկ ոտքը դեղուկ չէր, խըթվըմ էր ծովի մեջ ու թոփլըմ. տղեն էնդար ձիան վրեն տրորվավ, մե խետ իրան մեռնելը ուզեց։

---

1 Գիսակ, խոպոպ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Էլի ձին խրթվելով, թոփելելով՝ տրորեց իրան. դարձավ տեսավ՝ որ թուրը ընկեր ա վրիցը, մեկ խետ էլ էստեղ իրան մեռնելը ուզեց, ասաց.— Աստվա՛ծ, խոգիս առնեիր, թուրը չընկներ ծովի մեջ. ես է՛ս թրով Բահրը պըտի խանի Քաջանց տնեն։

Մե խետ էլ իրան մեռնելը ուզեց։

Ետ ծովիցը էլավ, ձին ընկավ, սատկավ, ասաց.

— Աստվա՛ծ, խոգիս առնեիր, ձիս չսատկեր. ես է՛ս ձիով պըտի Բահրը խանի Քաջանց տնից։

Կատարվավ Սիպտակ դևի թվոր ուզածը։

Շիրին շախ նստավ ձիան կողքի խետ լալըմ էր. տեսավ՝ որ էն ծակից էրկու մուկ էկան, ձիան ականջ կրծըմ ին, ինք փետ վերցրեց, ղարկեց։

Մեկ մուկը սատկավ։

Էն մեկել մուկը գնաց, ընդոցմե ընդեն ծաղիկ կեր, ջուր կեր. ծաղիկը քաղեց-բերեց, թաթխեց աղբրի ջրի մեջ, բերեց, տվեց մկան քթին։

Սատկած մուկը սաղցավ, էլավ, մտավ ծակը։

Էլավ, ինքն էլ էն ծաղկից քաղեց, բերեց, թաթխեց էն ջրին մեջ, տվեց ձիան քթին, ձին էլավ, սաղցավ։

Եդ դարձավ իշկեց, որ ձուկը թուրը բերանը առեր, բերեր ա ափը։

Թուրը ղանեց տեղը, մե խետ էլ տեսավ, որ Քաջանց գզիրը էն յանից էկավ, ասաց.— Խոդաթի՛ն, ըստուց դեն է՛լ ընձի բան չունեմ, Քաջանց երկիր ա, սեհրբազ աշխարք ա, դու գնա՛։

— Ըպա ես ի՞մալ անեմ։

— Քաջանց թաքավորին ուխտադրութեն ունեն, էդ Սիպտակ սարի վրեն մե ծառ կա, էն ծառից խրատ ա՛ռ։

Շիրին շախ էլավ, գնաց ծառի կուշտը։

Գլոխ տվեց ծառին, ասաց.

Ծառ կանաչես, ծառ կանաչես,
Ընձի մե բարի խրատ ասես.
Էթամ Բահրին խասնեմ,
Քաջանց տնից բերեմ։

www.naregatsi.org

Սառը ասաց.

Ա՛յ խողածին, ա՛յ խողածին,
Կէթաս, կայնիս Փրեբաթման կարմնջին.
Խամբարձման էրկուշաբթին
Կտեսնես քո Բահրին։

Շիրին շախ Խամբարձման գիշերը գնաց, պառկավ Փրեբաթման կարմունջի վրեն. Բահրը էկավ, քառտուն ղարավաշ Քաջանց աղջիկներիցը խետը։

Քաջանց աղջիկները էկան, տեսան որ, օ՜հ, Շիրին շախ ըստեղն ա. ընցնողը թմրուքեն թափեց վրեն, ընցնողը թմրուքեն թափեց վրեն. մնաց քնուկ։

Բահրն էկավ-տեսավ, օհո՜, քնուկ ա. կդավ, էրեսները պաչեց՝ չիմցավ, ականջին բոռաց՝ չիմցավ. տեսավ, որ օգուտ չունի՝ չիմնըմ ա, իրեք ճան էցգեց ջեպ, թողեց, գնաց։

Քաջանց աղջիկների խետ գնացին Սաղիկ լեռը, ծաղիկ քաղեցին. դարձան, տեսան, որ էլի քնուկ ա։

Շիրին շախ զարթեց՝ որ աղջիկները Սաղիկ սարից էկեր, ընցեր են. ձեռ տվեց ջեպ՝ որ իրեք ճան կա ջեպ. իմցավ, թե ի՛նչ բախս ա։

Իրեք խետ Քաջանց աղջիկների խետ ընցավ Բահրը Փրեբաթմանի կարմունջից, իրեք խետ էլ թմրուքեն թափեցին վրեն։

Բահրը ինչ արեց, չկարաց զարթնացնել, ճան թալեց ջեպ, ընցավ Խամբարձման գիշերը։

Էն Գ'ետի գախին ասաց.— Օհո՜, Բահրը ընձի ճըժու տեղ դրեր, ճան թալեր ա ջեպս. իմ բան ընցավ, էս իրեք տարի ա՝ չեմ կարըմ իմ Բահրը տենամ, էթամ թըխ իմ ծառը, տենամ՝ ինչ բարի խրատ կըտա ընձի։

Շիրին շախ վիզը օլրած՝ գնաց թըխ էն ծառը։

— Սառ կանաչես, ծառ կանաչես,
Ընձի մի բարի խրատ ասես.
Էթամ, իմ Բահրին խասնեմ,
Քաջանց տնից խանեմ, բերեմ։

— Խո՛ղածին,— ասաց ծառը,— գիր գինա՞ս։
— Ի՛մալ չգինամ, գինա՛մ,— ասաց Շիրին շախ։

www.naregatsi.org

— Էդ ծաղկներից ու խոտերից իմ կուշտ կան, քաղա՛, դաստա-դաստա կապա՛, իմ կուշտ բեր։

Շիրին շախ ման էկավ, ինչքան ծաղիկ ու խոտ կեր, քաղեց, կապեց. բերեց, կոլոնեց ծառի քոքը։

Ծառն ընդու ասաց.— Դե՛, քո ղալամ քո ձեռ առ, ես էս ծաղկների, խոտերի անունը ասեմ, դու էլ գրա՛, որ ըլլես հեքիմ, բալքի հեքիմութենով Բահրը Քաջանց տնից խանես։

Գրեց, իմացավ ծաղկները, խոտերը, վերցրեց։

Ծառը Շիրին շախի անունը փոխեց, Ոչինչ դրեց, ասաց.

— Ո՛չինչ, կէթաս Քաջանց Թաքավորի ու ընդու մարդիկների դուռը, էն տեղ սեհր ա. ի՛նչ տենաս, բարև պրտի տաս, ի՛նչ բանի ըռաստ իգաս՝ առանց բարև տալու չընցնես, որ ընցար, քու բան գեշ կէլնի. փետ, ցախ, ավել, շուն, լակաման, մարդ, ճիժ, կնիկ՝ բարև տու, ընցի՛, որ չվնասվես։

Շիրին շախ էլավ, գնաց Քաջանց քաղքին մեջ ի՛նչ խիվանդ մարդ իրան ուքթավ[1], սաղցրեց. քոռ, թուփալ, խուլ, յարալի, գոթեցուկ[2], հ՛ըմենն էլ սաղցրեց։

Քաջանց Թաքավորի տղա Սև-Դուլտուլը տասնըխինգ տարի ա գոթեցեր էր, իրա խոր ասաց.

— Հեքիմ ա էկեր, կանչա՛, թըղ ընձի սաղցընի։

Թաքավորը բերեց հեքիմ Ոչնչին, ասաց.

— Իմ տղեն կարա՞ս սաղցընես, ա՛յ խողածին, որ քու լիզուն ի՛նչ պրտրտա, էն էլ կըտամ։

— Թա՛քավոր ապրած, որ հըտմալ ա, ես կսաղցընեմ։

Քաջանց Թաքավոր Ոչինչ հեքիմին առավ, գնաց իրա տղի կուշտը։

Ոչինչն էր, դեղ տվեց, Սև-Դուլտուլը իրեք օրում սաղցըրեց, էլավ վեր։

Սև-Դուլտուլ ասաց.— Էս տասնըխինգ տարի ա հոլ չեմ խաղցի, հոլ տվեք, խաղամ։

Սև-Դուլտուլ գնաց տղեկների խետ հոլ կխաղեր։

Թաքավորը ասաց Ոչնչին.— Խո՛ղածին, դը՛ ուզա՛։

— Կըտաս ընձի Բոզ ձին-աթակին, Թուրն-կեծակին։

---

1 Գատահավ (Ս. Բ.)։

2 Ծյուրական ախտ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Թաքավորը ասաց.— Ա՜յ, քեզի էդ ո՛րն որ սովորեցրեց, բերանը չորներ. Սև-Դուլտուլ մեռներ, դու Բոզ ձին չուզեր, հըմա իլզար[1] եմ արե, դոնմանամ[2]։

Տվեց թուրն ու ձին։

Թաքավորը գնաց Սև-Դուլտուլի կուշտ՝ թամաշա անելու։

Ոչինչ խեծավ Բոզ ձին-աթակին, կապեց Թուր-կեծակին, առավ Բահրը իրան թարկ ու փախցրեց։

Հեքիմ Ոչինչ եփ նոր էկեր էր թաքավորի դուռը, աչքը առեր չէր շան լակամանին, բարև չըր տվեր։

Շան լակամանը տփվավ գետին, էլավ էրկինք, կանչեց, ասաց.

— Սև-Դո՜ւլտո՜ւլ, Բահրը տարան Քաջանց տնից։

— Ո՞րը տարավ։

— Ոչինչը տարավ։

— Է՜հ, ոչի՛նչ, հո՛ ոչինչ. հոլը դրե՛ք, ես զանեմ։

Շան լակաման էլի տփվավ գետին, բանձրցավ էրկինք ու ձեն տվեց.

— Սև-Դո՜ւլտո՜ւլ, Սև-Դո՜ւլտո՜ւլ, Բահրը տարան Քաջանց տնից։

— Ո՞րը տարավ։

— Ոչինչ։

— Ոչինչ, հո՛ ոչինչ, հոլը դրե՛ք, ես զանե՜մ։

Շան լակամանը էլի տփվավ գետին, բանձրցավ էրկինք, կանչեց.— Սև-Դուլտո՛ւլ, Սև-Դուլտո՛ւլ, Սև-Դուլտո՛ւլ, տարա՜ն, հա՜ տարա՜ն Բահրը Քաջանց տնից։

— Ո՞րը։

— Հեքիմ Ոչինչ։

Խետ գախուն, որ ասաց «Հեքիմ-Ոչինչ», Սև-Դուլտուլ հոլը թողեց, էկավ մտավ թավլեն, ձին քաշեց դուս, խեծավ, ընկավ Շիրին շախին... ալբեալ բռնեց իր խողի մեջը։

Քաջանց գզիր էկավ առեջ Շիրին շախին, ասաց.— Տո՛ւր աղջիկ խորը պախ, դարձի՛ քո դուշմնի վրեն։

— Չէ՛,— ասաց,— խարիր աղջիկ խեր կըտա մարդի։

— Քո՛ւր տուր աղբոր պախ, դարձի՛ քո դուշմնի վրեն։

---

1 Խոստմունք (Ս. Բ.)։

2 Հետ չեմ դառնար (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Չէ՛,— ասաց,— խարիր քուր՝ աղբեր կուտա մարդի։

— Սանամերը տուր քավորին պախ, դարձի՛ քո դուշմնի վրեն կռիվ։

Էն սհաթը ելեց, դարձավ Սև-Դուլտուլի վրեն, որ կռվին։

Էն դանեց ըսու, էս դանեց ընու, ընենց որ, սար ու ձոր ըդոնց առաջները դողում էր։

Սև-Դուլտուլ ասաց.— Շիրին ջան, ընչի՞ իրարու սրպանինք, էթանք աղջկա կուշտ, վի՛ր որ ուզում ա, էնի թըղ առնի։

Գնացին աղջկա կուշտ, խարցրին։

Աղջիկը ասաց.— Սև-Դո՛ւլտուլ, քեզի տենում եմ՝ աչքերս ա քոռնում, Շիրին շախին էլ որ տենում եմ՝ թևերս ա թուլնում։

Էս որ լսեցին, ասեցին.— Կռիվնիս, հո՛ կռիվ ա։

Էրկու սհաթ կռվան, իրանց թևերը թուլցավ. էլի էկան աղջկա կուշտ, էլի խարցրին, էլի աղջիկը ասաց.

— Սև-Դո՛ւլտուլ, քեզի տենում եմ՝ աչքերս ա քոռնում, Շիրին շախին տենում եմ՝ թևերս ա թուլնում։

Էլի դարձան իրարու վրին կռիվ։

Զուրի իրկուն դանեցին, զարկվան, իրար ջարդեցին, սաղ տեղ շմնաց իրանց վրեն։

Շիրին շախ ասաց.— Սև-Դո՛ւլտուլ, էլի էթանք աղջկա կուշտ։

Էլան գնացին աղջկա կուշտ, խարցրին։

Աղջիկը ասաց.— Աստծու իզնով ես Շիրին շախին բութեն եմ, ընդու կխասնեմ։

Սև-Դուլտուլ էլավ աղջկա ճակատը պաչեց, ասաց.

— Դու իմ ծնող քուրն իս ըսդուց դեն։

Էլան Շիրին շախին, Բահրին խեծըցրին ձիանքը, ընկան ճանրախ, տարան, խասցրին Սև սարը՝ իրան տունը։

Խարսանիք արեցին, Սև-Դուլտուլ էլավ խարսնաղբեր, Սիպտակ դեը էլավ քավոր, յոթը օր, յոթը գիշեր որ թմավ, քավորն ու խարսնաղբերը խեծան ձիանքը, դարձան Քաջանց երկիրը։

Էնոնք խասան իրանց մուրազին, դուք էլ խասնիք ձեր մուրազին։

www.naregatsi.org

17. ԼԱԼԱԶԱՐ

Մե թաքավոր կըլլի, ըդոր իրեք խատ աղջիկ կըլլի, էդ աղջիկներ ասին.— Մեր խեր ընչի՞ մեզի չտար մարդի. արեք, ամեքիս մե ձմերուկ բերենք, գրենք վրեն, օղորկենք թաքավորին։

Ձմերուկ որ գրին, պրծան, ամենք մեկ դանակ զանին ձմերուկների մեջ, օղորկին թաքավորի կուշտ։

Թաքավոր վաքիլ, վաղիրը խանչեց, էկան ուր կուշտ, ասին.

— Թաքավո՛ր ապրած, քո աղջիկներ խասած են, ձմերուկներ կտրենք, ը՛ր մեկ մարդացու է, էնի մարթի էթա։

Էն ջոջ աղջկա ձմերուկ կտրին, որ լախ էր, ասին.

— Հսու սաղ երի գիտիպ[1]։

Միջնեկ աղջկա ձմերուկ կտրին, տեսան որ խասուկ ա, ասին.

— Էսի մարդացու ա։

Էն պստրկին էլ կտրին, որ խակ ա։

Թաքավոր էն միջնեկ աղջկան ասաց.

— Արի՛, քեզի տամ մարդի։

— Թաքավո՛ր ապրած,— ասաց,— ընձի մե ձի տո՛ւ, էթամ աշխարքներ պտըտիմ, մե ձեռք էլ ասպասպ տո՛ւ, ո՛րտե որ լավ տղա գտա, գամ քեզի ասեմ, ընձի տո՛ւ ընդոր։

Խորից թամանտար էլավ, ընկավ ճամբախ։

---

1 Ոչ ոք ուզը գնացեր է (Ա. Բ.)։

www.naregatsi.org

Տղամարդի դբլլբղ խաղալ, ձինը քշեց, գնաց մեկ խելի ճամբա։ Տեսավ մեկ գել, մեկ էրախա առեր բերան՝ գալըմ ա. ձինը քշեց վրեն, գելը էրախան թալեց, փախավ։

Էդ աղջիկ գնաց, վերցրեց տղին ուր դիրկը։

Էդ տղեն ասաց.— Ղարի՛պ աղբեր ջան, ես թաքավորի տղեն եմ, կտանես իմ խորս՝ ես եմ, մեկ ումուտ[1]։ Ընձի տար թաքավորի կուշտ, քեզի մալ ու դոլվաթ կուտա՝ չառնի՞ս. ընոր մեկ Լալազաք անուն ձի կա, էնի՛ ուղա, ո՛րտե որ նեղութենի մեջ ընկնես, էնի քեզի կփրցրնե։ Որ կխնծնիս, հավալանմիշ կըլլի էրկնքի էրես, քեզի կուտա Սամուելա քամու բերան. ասա. «Ես կխաղամ քո փորի տակ»։ Որ կասա. «Չանեմ, կէթաս օխտը դաբաղա գետնի տակ», դու ասա. «Քամկիդ վրեն կըլլեմ»։ Էն գախ Լալազար կասա. «Դու իմ տերն ես, ես էլ քո ձին եմ»։

Թաքավորի աղջիկն էր, տղեն առավ-գնաց. էն տեղեն մեկ լըփրատին[2] մեկն էկավ.— Շա՛ն որդի,— ասաց,— թաքավորի տղեն գո՞ր ես տանըմ, մեր թաքավոր ցնդվավ։

Թաքավորի աղջիկ ասաց ուրին-ուրին. «Ա՛յ հա՛յ. ես աղջիկ եմ, էդի տղամարդ, իմ ձեռնից կառնի, կէթա»։

Թաքավորի աղջիկն էր, շարաց նամարտութենն, մեկ չափալեղ ղանեց, որ ղանեց՝ բերնիցը ջուրը թռավ։

Էդ տղեն էր, ետ դարձավ, թողեց-գնաց։

Աղջիկը մեկ խելի տեղ էլ գնաց, մեկ մարդ էլ էկավ ըռաստ, ասաց.

— Շա՛ն որդի, թաքավորի տղեն դո՞ր ես տանըմ։— էկավ, ի՛նչ ա՝ տղեն թաքավորի աղջկա ձեռնիցը առներ։

Թաքավորի աղջիկ մեկ փետ որ չղանեց՝ էդ մարդի վիզ լելվեցավ։

Թաքավորի աղջիկ էդ տղեն վերցրեց, տարավ, տվեց թաքավորին։

Թաքավորը ուրխըցավ, էլավ էդ տղի էրեսները պաչեց։

Մեկ ժուկ ու ժամանակ էդ թաքավորի աղջիկ մնաց էդ թաքավորի կուշտ. մեկ օր ասաց.

— Թաքավո՛ր, ընձի մուրախաս[3] տո՛ւ, ես էթամ։

---

1 Հույս (Ս. Բ.)։
2 Ճառատ (Ս. Բ.)։
3 Արձակում, հրաման (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Որդի՛, ի՞նչ ես ուզում, քեզի տամ, քո ամակի տկից թու ըլեմ։

— Թաքավո՛ր ապրած, ես շնորհակալ եմ քեզնից, ի՞նչ պըտի տաս։

— Չէ՛, ուզա՛։

— Էդքան ընձի շարշարըմ ես, քու Լալազար ձինը տո՛։

— Հա՛յ քո սորվեցնողի վիզը կոտրի, որդի՛, իմ ձինը մի՛ ուզեր, ի՞նչ ղտար մալ ու դոլվաթ կուզես՝ տամ։

Թաքավորի աղջիկն էր, խռովաց, էլավ քոշկ ու սարից դուս։ Էն տղեն ընկավ էտ աղջկա էտև, ասաց.

— Էնի իմ խերն ա, էնի ընձի գիլու բերնից ազատեր ա։

Թաքավոր գնաց ըդոնց դարձրեց-բերեց, խոտղին ասաց.

— Խոտա՛ղ, գնա՛ Լալազար ձինը թամքա՛, բե՛ր, թող խեծնի, ըսդոր տա Սամուելա քամու բերան, էթա ընի սար, ձոր, ըդոր ջանդակ շան ու գիլու փայ ըլլի։

Լալազար ձին էր, քաշին, դուա խանին։ Թաքավորի աղջիկն էր, խեծավ ըդոր։

Լալազար ձին էր, հավալանմիշ էլավ էրկնքի էրես, ասաց.

— Թաքավորի՛ աղջիկ, քեզի պըտի տամ Սամուելա քամու բերան։

— Կիջնեմ քո փորի տակ,— ասաց աղջիկ։

— Թաքավորի աղջի՛կ, կզանե՛մ կէթաս օխտը դաբաղա գետնի տակ։

— Կխաղամ քամկիդ վրեն։

Լալազար կակղացավ, ասաց.— Դու իմ տերն ես, ես քո ձինը, ո՛րտե մուրազ ունես, քշե՛ էթանք։

Թաքավորի աղջիկ թաքավորից թամանտար էլավ, քշեց գնաց. մե չայիր-չիման տեղ ըռաստ էկավ ըդոր. մե աղբուրի վրեն նըստավ, ասաց. «Մե թիքա խաց ուտեմ, դինջընամ քնեմ, ըլլեմ էթամ»։

Ղայդը զանեց Լալազարի ոտներն ու քնավ. յափունջին քաշեց վրեն։

Էն դեխեն իրեք ձիավոր էկան։

Լալազար խրխընջըմ ա, էնդար խրխընջաց՝ գետինը մե չոք քանդեց։ Էդ ձիավորներ բոռացին։

www.naregatsi.org

— Շա՛ն որդի, ընչի չե՞ս իմանըմ, քո ձին չթողնըմ ա՝ մենք մեր ճամբով էթանք։

Է՜, թաքավորի աղջիկն ա, իմցավ, մե ծմրկտաց, մզուկ քշեց, զայդը ձիու ոտներից առավ, խնծավ։

— Աղբրտա՛նք,— ասաց,— դու դո՞ր եք էթըմ։

— Ըստե մե թաքավորի աղջիկ կա, էթըմ ենք էնի առնենք. քառասուն գաղական լենութենն խոր ա փորե. ո՛րը ձինը թռցրեց խորը՝ էթա թաքավորի աղջիկը առնի։

— Աղբրտա՛նք, արի՛, ձեր մի ձին տվեք ինձի, իմ ձին տամ ձեզի։

Էն մեկը ասաց.— Շա՛ն որդի չըլի՛, մեր ձին քո ձիուց պակա՞ս ա, որ փոխենք։

Ընդոնք քշին, գնացին քառասուն գաղական խորի կուշտ կայնան։

Ջուղապ գնաց թաքավորին։

Թաքավոր վերցրեց ղոշուն, էկավ խորի առեջ կայնավ, ասաց.

— Ձեր ձիանք թռցրեք, տենանք։

Էն մեկը թռցրեց՝ ինք, ձին էլ ընկան մըջ խորին, ջարդվան։

Էն մեկն էլ էն օրինակին ընկավ. էն մեկելն էլ էն օրինակին ընկավ մըջ խորին։

Մնաց մինակ թաքավորի աղջիկ. ուզեց որ ետ դառներ, էթեր. թաքավոր ասաց.

— Շա՛ն որդի, դո՞ր ես էթըմ, քո ընկերտանք ընկան մըջ խորին, շան պես սատկան, մկա քեզի կրտամ սրպանել։

Աղջիկն էր, թաղատան էկավ խորի կուշտ, կայնավ։

Լալազար ձին էր, աստրծու խրամանքով լիզու էլավ, ասաց.

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի[1] դրռ հալա ո՞ւր ա դու ընձի նեղութենի մեջ էցդիս. դե՛, ըջի՛, մե լավ արարի-թիմար տո՛ւ ընձի, իմ ղոլներ լա՛վ կքաշես, իմ պոչ ղայիմ կկապես, կըլլես, էրկու գլոխ կակուղ կէթաս-կուգաս, մե ջուխտ զանկու կզանես իմ փորի մեջ, որ քառասուն գաղական թողիմ դե՛ս, քառասուն գաղական էլ խորից դեն թռնեմ։

Խաղցուց, զանկու տվեց, թռավ։

Էն տեղ Լալազարի ծծած կաթը պնչներից էկավ։

---

1 Ցորենի ոչիլ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Ուրախ-ուրախ տարան էդ աղջկան թաքավորի աղջկան քոշք ու սարեն։

Թաքավորի աղջիկ ուրխըցավ, թե իմ մարդը էկավ։

Տեսեր էր խորոտ, էրեցեր էր ընդոր դիմաց[1]։

Արև մտավ, բերեց ճրագը փչեց, տղին քաշեց ուր ղոլթուղ։

Տղեն թուլը քաշեց, դրեց օրթալախ։

— Էսօր խաթր անեմ աստըծուն,— ասաց աղջիկը։

Մնաց էն գիշեր, էլի տղեն թուրը դրեց օրթալախ։

Աղջիկն էր, էլավ դրռ հլա լուա չբացվեր էր, լըփլըփալեն գնաց թըխ ուր մեր, ասաց.

— Ո՛չ ինք ըլի, ո՛չ ուր անուն ըլի. էն էլ ա աղջիկ, ես էլ եմ աղջիկ։

Թաքավոր լսեց, ուր խոտղին օղորկեց փեսի ետև, բերեց։

Փեսեն էկավ, թամանտար էղավ, ասաց.— Հա՛, թաքավոր ապրած, ի՞նչ կա։

— Փեսա՛,— ասաց թաքավորը,— դե՛ էն սարի վրեն օխտը դե կա, օխտը տարվան խարճը չեն տված, գնա՛ բեր։

Տղեն դարձավ լալելին Լալազարի մոտ, հ՛ըմա՞լ օ աչքեր ուռեր ա։

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի,— ասաց Լալազար,— դո՛ւ որ էդ օրինակին էր, ընչի՞ ընձի բերիր, էցդիր էս կրակների մեջ. թաքավորի աղջիկ, մի՛ վախենար, գնա՛, կոտ մը շամիչ բեր, լի՛ց իմ առեջ, ես ուտեմ. կըլլես մե լավ թիմար կըտաս, թամքս կդնես վրես, ղոլներս լավ կզլես, կըլլես մի սամու կտոր կառնես քո ձեռ, կխեծնես, քշես. իմ դիզկին չես քաշե, որտե կէթամ, ես կէթամ։

Գնացին, էլան մե սարի կող, էնտե մե ջաղչի քար կեր, ասաց ձինը.

— Դե՛, ըշի՛, իմ պոչ օլըրա, էդ քարի ծկով ընցըցըրա, պոչիս ծերը խանգուրցա՝ սալին ընցըցըրա իմ պոչի ստրանք։

Խեծավ Լալազարը, էդ քարը ֆըռըֆռացնելով առավ, գնաց, գևերի դուռը կայնավ, բոռաց.

— Դևե՛ր, բերե՛ք օխտը տարվան խարճը։

Դևերն ասին.— Շուտուց իսանաթի միս չինք կերե, մեր ատամներ ճլվստըմ էր։

---

[1] Գառնառով (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Դևերի շոշ աղրերը դուս էլավ, տեսավ էդ տղեն մի քար ֆրֆրացնում ա. ղուտումը կոտրավ, խելքաթափ դնաց, ընկավ։

Էն մեկել դևերը ասին.— Քո ղուտումը... ընչի՞ վախեցար։

Միջնեկ աղրերը ասաց.— Դու կեցե՛ք, ե՛ս ըլեմ դուս, անհաթ մե խանաթ ա կպե մեղի։

Էլավ դուս, ընդու ղուտումը տահա շուտ կոտրավ, ասաց.

— Էս՝ ձիու ղուվաթն ա, ըպա էդ շա՛ն որդու ղուվաթն ի՛նդար ա։

— Դե՛, շո՛ւտ արեք, խարճը բերե՛ք, թը չէ՝ ձեղի կչարդեմ. շա՛նորդի փրշոտներ, դու էսա օխտը տարի ա ընչի՞ թաքավորի խարճը չեք տալում, ղոռպութեն անում եք։

Էն պստիկ դեն ասաց.— Կեցե՛ք, մե դուս ըլեմ, ընդու ճըղճըղեմ իրարուց։

Էլավ շեմը շենքեց, ղուտումը կոտրավ, ո՛չ կարցավ դես էթեր, ո՛չ կարցավ դեն էթեր. լիղունը կպավ։

Դևերը ասին.— Բերե՛ք, օխտը տարվան խարճը տանք, էդ շանորդին մկա մեղի կչարդա։

Բերին օխտը տարվան խարճը լցրին մե մաղե տոպրբկի մեջը, թալին ձիու թարկը։

Լալազար ասաց.— Թաքավորի՛ աղջիկ, դարձրե՛ ընձի, էթանք։

Բերեց, էդ քարը ուր տեղը դրեց։

Թաքավորը ուրին-ուրին ասաց. «Էս ի՛նչ ղոշաղ տղա էր, ֆարաղի մենք ըսու գլոխ կորցնում ինք»։

Թաքավորի աղջիկն էր, տեղը էցդեց, պառկավ։

Տղեն էր, էլի թուրը քաշեց, դրեց օրթալախ։

Աղջիկը ուրին միտք արեց. «Կըլլի որ դևերի խետ կռիվ ա ա-ռեր, խաթր անեմ»։

Մնաց էն գիշեր, էլի էնպեսդ արաց տղեն։

Դրռ հալա լուսը չբացվեր էր, թաքավորի աղջիկ էլի լքնավ թըխ ուր մերը, ասաց.

— Ո՛չ ինք ըլլի, ո՛չ ուր թաքավորութեն. էն էլ ա աղջիկ, ես էլ։

Թաքավոր ուր վաքիլ-վազիր խանչեց, բերեց, ասաց.

— Իմ լաշառ[1] աղջիկ իմ ապուռը տարավ. ասում ա. «էն էլ աղջիկ, ես էլ եմ աղջիկ», մենք ո՛րտեղ օղորկենք, որ կուրիսի։

---

1 Շատախոս (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Թաքավո՛ր,— ասին,— Սև ծովի, Սիպտակ ծովի արանք մե խրեղեն ձի կա, օղորկա, էնի բերա. էն խրեղեն Բոզ ձին որ իսանաթի տեսավ, փարալամիշ կանե։

Թաքավոր խոտղին օղորկեց ուր փեսի էտև։

— Որդի՛,— ասաց,— կէթաս Սև ծովի արանք, Սիպտակ ծովի արանք, մե խրեղեն ձի կա, կբերես։

Տղեն դարձավ թրխ Լալազար։ Տեսավ ձինը էնդա՛ր լացեր ա՛, ուր աչքեր ուռեր ա. ներս մտնալուն քիմի՝ ձինը ասաց.

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի, էն խրեղեն ձին իմ մերն ա, էնի բերել դժար ա. է՞, աստված օղորմած ա. գնա՛, օխտը ղիտր գինի առ, մե ղիտր կուպր առ, օխտը գոմշի կաշի առ, մե ղազան առ, բարձի ընձի ու խեծի։

Առավ, խեծավ, թշեց։ Ձին ասաց.— Իմ դիզկին չքաշե՛ս, չթեքե՛ս. ես որտե՛ կայնա, ընտե ըշի՛։

Քշեց-գնաց, ծովի ղրաղ կայնավ։

Լալազար ասաց.— Ղազնի տակ մե կրակ դի՛, կուպր խալա՛, բեր քսա կաշուն վրեն, օխտն էլ կպցրա իմ մեջքի վրեն. գնա էդ կղզու արանք, էնտե մե աղբուր կա, էդ աղբուր լավ կըկրճես, էն օխտը ղիտր գինին լից էն աղբուր. կեսօրվան ջրշոքին էնի դուս կըլլի, կուգա աղբուր, որ ջուր խըմա. խոտ կառնի, կֆըռա, ետ կքաշվի. էդ ջրշոքն էդ Բոզ ձիուն հաղթ կառնե. էն կխմա, աչքերը կկարմրի, կքեֆովնա, կասա. «Մե իսանաթ ըլլեր, իմ թամքն էլ էնտե ա, բերա դնա իմ վրեն, ղոլներ լավ ղայիմ քաշա, էրկու գլոխ ալակուղ էթա, գա, է՛լ ընձի բրախա իմ ծովի մեջ»։ Դու կլսես, կըխեծնիս։

Լալազար ձին էր, կուպր որ կպցրեց ջան, ասաց.

— Ես կէթամ զա՛տ[1] կայնեմ, դու գնա՛։

Տղեն գնաց մե տալտա տե կայնավ։ Ջրշոքին էկավ խրեղեն ձինը, գինին խմեց, քեֆովցավ, էնպես էլ ասաց։

Տղեն որ խեծավ, Բոզ ձին հավալանմիշ էլավ էրկնքու էրես։ Տղեն ասաց.

— Սե՛րն աստրծու, Բո՛զ ձի, ընձի մի՛ տու Սամուելա քամու բերան, քո Լալազարի տեղն ասեմ։

Որ ասաց, Բոզ ձին ասաց.— Դե՛, շուտ արա, ասա՛, թը չէ՞՝ կուտամ Սամուելա քամու առեջ, խոգիդ կհանեմ բերանդ։

---

[1] Հեռու (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Ընձի մ'ըսպանի, գո՛ էն ա Լալազար տղեդ։

Լալազար կասա Թաքավորի աղջկան.— Ղայիմ բռնա՛, չընկնիս վրնից, Թաքավորի՛ աղջիկ,— ասաց ու փախավ։

Բոզ ձին ընկավ էտև, լարեց. օխտը խետ բերան Թալեց Լալազարի կաշուն, Բոզ ձիու սելրը բոզմիշ էլավ։

Ըս խետ Լալազարը ասաց.— Մորս մ'էլլի, արի, ընձի խեծի։

Տղեն Բոզ ձին տարա՛վ, տվեց Թաքավորին։

Թաքավորը ասաց.— Էսի ի՞նչ զոչաղ ա, ըսդու սըպանել մեղք ա։

Էլի էն գիշեր Թաքավորի աղջիկ մտավ ուր տեղը. էս տղեն էլի Թուրը օրթալախ դրեց. էլի դրա հալա լուս չբացվեր էր, աղջիկ լըքնավ Թըխ ուր մեր, էլի մոր էնպեսդ ասաց։

Թաքավորը օրոն էրեց, դտավ մի խարիր տարեկան պառավ. խարցրեց.

— Պառա՛վ, հըմալ տեղ գիտե՞ս, որ ես իմ փեսին օղորկիմ, շդա։

— Թաքավո՛ր ապրած,— ասաց պառավը,— Չինըմաչինա քաղաքը, ընդոր քամակը մե Սև, մե Սիպտակ սար, ընդոր արանքը մե դև կա, ընդոր աղաքը մե շամդան կա. էն շամդընին կըլլի խարիր մարդ դացեր ա, էն դևը ամենքին էլ սըպաներ ա։

Թաքավոր օղորկեց, փեսին բերեց՝ օղրկե էն Սև, Սիպտակ սարի արանքը, որ դևի առջևից շամդան առնե, բերա։

Տղեն էր, դարձավ Թըխ ուր ձին, տեսավ Լալազարն էլի լալըմ ա, Լալազարի մե՛րն էլ, ասաց.

— Շա՛ն որդի, բուղդա-բիթի, դու էդ հունարի տերն էր, ընչի՞ բերիր մեզի... Աստված օղրմա՛ծ ա, էս խետ մերս էլ խետդ ա՛ռ, ես մինակ չկարնամ։

Ձամիչը կերան ձիանք, տղեն խեծավ-քշեց, չուրի Չինըմաչինա քաղաք ընցան, գնացին Սև, Սիպտակ սարի արանքը։

Լալազար ասաց.— Թաքավորի աղջի՛կ, մեզի Թո՛ղ ըդ դեն, էս տալտա տեղը՝ դևը մեզի չճանչնա, որ խրեղեն ձի ենք, որ իմանա՝ քեզի էստեղ կճըղճըղա, մեզի էլ կչարդա. յավաշ-յավաշ գնա՛ Թըխ գևը, դևի քամակը կը կայնիս. էնի իրեք խետ ա ննջըմ. Թե որ փա՛խցրիր, ասա. «Լալազա՛ր, իմ տակը ըլլես», ես քո տակը կըլլեմ, մի՛ վախնար։

Էդ աղջիկն գնաց, կայնավ դևի քամակը. դևը մե խետ ննջաց. Ձեռը Թալեց, չկարցավ փախցրցեր։

www.naregatsi.org

— Աստվա՛ծ,— կանչեց,— դու ընձի ազատես էս դեի ձեռնից։

Դևը մի խետ էլ ննջաց. էլի աղջիկ ձեռ թալեց, չկարցաք էլի աստված կանչեց։

Դևը մե՛կ էլ որ ննջաց, շամդանը փախցրեց, ասաց.

— Լալազա՛ր, դու իմ տակը ըլես։

Լալազար էկավ ըդոր տակը։ Քշեց, դնաց։

Դևը իրիշկեց, ասաց.

— Շա՛ն որդի, դրա հալա ես իմ քունը չեմ առեր, մե թիքա աչքս կպցնեմ, գնա՛, չուր ըստուց էրեըմ ես. մե՛ ամիս էթաս, մե՛ օրը ես կխասնեմ։

Էդի ուր քունը առավ, էլավ տեսավ, ի՛նչ որ կրակը զատ տեղը բժկըտըմ ա աստղի ղայտի, ասաց.

— Ա՛յ-հա՜յ, բոլ ճամբախ ին գացած։

Էդ դևն ուրին էդ տեղից թալեց. ընդոնք մտան ծովը, ինքն էլ ծովի ափով ընցավ, ասաց.

— Խո՛ղածին, կայնի՛ քեզի մե բան ասեմ. դու տարար իմ շամդան, էրկու-իրեք խարիր մարդ էկան, չկարցան տանեն՝ ջարդի՛, խո՛ղածին, դու որ տղա ես, աղջիկ դառնաս. թե որ աղջիկ ես՝ տղա դառնաս,— ասաց, դարձավ ետ։

Դևն որ անիծեց, էս թաքավորի աղջիկ տղա դարձավ։

Լալազարն էլ ղսրախ, Լալազարի մերն էլ որձ ձի դարձավ։

Էդ աղջիկը էլավ տղա, տարավ շամդանը տվեց թաքավորին։

— Ա՛յ-հա՜յ, ըլի, էսի իմ քաղաք կընցրցե, ըսդու վիզը կտրեմ։

Էս տղեն իրկուն գնաց ուր տեղ. թաքավորի աղջիկ լուսուն գնաց, ուր մոր ասաց.

— Ադե՛, էսպեսդ տղա աշխրքներ էլ ման գի, չի գտնի։

Մնաց մե ժուկ-ժամանակ։ Մե օր թաքավորի տղեն լալըմ ա.— Ընձի՛ էլ խեր-մեր կա,— ասըմ ա։

Գնաց թաքավորից իզին առավ, դարձավ ուր խոր տուն։

Եր մոտկըցավ ուր խոր բալախանեքին, խապար ճամրեց։

Թաքավոր էկավ, տեսավ ուր աղջիկ տղի ըռանկին ա. խարցըրեց, իմցավ, ի՛նչ որ աղջկա գլոխ արինք-դարինք էկեր էր։

Նոր խերը ուրխրցավ, իրեն տղա չկեր։

— Փա՜ռք տընեն քեզի, աստվա՛ծ,— ասաց։

Վեց, օխտը օր խարսնիս արաց. ընդոնք խասան ուրանց մուրազին...։

---

www.naregatsi.org

18. ՄԻԹԻԼ-ԽԱՎՔ

Ժամանակով մեն աղքատ կնիկ կըլլի, ընդոր ըսկի տղա չըլլի։

Լուսը կրացվի, կվերցնա ջվալը, կէթա սարի կողը թիթրեն ժողվելու. կտեսնա՝ մեն օձ էթըմ ա, ուր ճտերն էտեն։

— Աստվա՛ծ,— ասաց կնիկ,— դու ընձի մի տղա տիր, օձի ձաղ ըլլեր։

Էդ պառավն ա, թիթրեն ժողվեց, դարձավ, էկավ հ՞ուր տունը։

Գիշերը քնավ. լուսը բացվավ, խմոր շաղեց, խաց թխեց, տեհավ պատի կողից մեն օձ էլավ։

Պառավի խելքը գնաց։

Օձն էր, էկավ ջուր լցեց պառվի վրեն, պորտը բռնեց՝ պառավ ոյանմիշ էլավ։

Օձը ասաց.—Ադե՛, դու ընչի՞ ընձենից վախեցար. չէ՞ դու ասիր. «Աստվա՛ծ, ընձի տղա մը տի՛ր, էս օձից ըլլեր». մկա աստված քաղցրացավ, ես էկեր եմ, քեզ տղա եմ էլեր։

Ժամանակ մի մնաց. էն մեկ օր ասաց ուր մոր.

— Ադե՛, գնա՛ թաքավորի աղջիկ ընձի ուզա։

— Գու օձ ես,— ասաց մերը,— էնի թաքավորի աղջիկ ա. թաքավոր աղջիկ չտա քեզի։

— Ադե՛, դու գնա՛, ուզա, քո ի՛նչ բանն ա։

www.naregatsi.org

Մերն էր, էլավ-գնաց թաքավորի դուռ, խնամաքարի վրեն նստավ։

Մեյթարներ գնացին թաքավորին ասին.

— Պառավ էկե, նստե խնամաքարի վրեն, քու աղջիկ ուզում ա ուր օձին։

Թաքավորը էլավ-էկավ պառվի կուշտը, ասաց.

— Պառա՛վ, ի՞նչ կուզես։

— Էկեր եմ, քո աղջիկ կուզեմ իմ տղին։

— Պառա՛վ, ես ի՛նչ ասեմ, որ չկատարեցիր՝ քո քյալլեն կրթոցնեմ. կէթաս,— ասեց,— մե բաղ-բաղչա կէցգես, քո դռնից իմ դուռ, որ իմ աղջիկ եփ պսակ էթա, արև չառնի վրեն։

Պառավ էլավ-գնաց թրխ ուր տղին, ասաց.

— Տղա՛, ո՛չ դու ըլլեր, ո՛չ քու թաքավորի աղջիկ. ընձի ասում ա. «Գնա, քո դռնից իմ դուռ ըմա՛ լ բաղ-բաղչա կէցգես, ըսկի՛ իմ աղջկա վրեն արև չառնի, եփ էթա պսակ»։

— Ադե՛,— ասաց օձը,— ընչի՞ ես վախենում, գնա՛ էն սարի կողը, ասա՛. «Միթիլ-խավքը Միթիլ-խավին ա ասում, պզտի բաղչեն օղորկա գա»։

Լուսը բացվավ. մերը էլավ-գնաց սարի կողը, ասաց. «Միթիլ-խավքը Միթիլ-խավին ա ասում, պզտի բաղչեն օղորկա գա»։

Պառավը դարձավ էկավ. ըդոնք քնան. լուսը բացվավ։ Էլանտեհան, ըմա՞ լ բաղչա ա ընկեր, որ թաքավորի օխտը պորտը ըմա՛ բաղչա չէր տեհե։

Պառավն էր, էլավ, ուրախ-ուրախ էս խետ գնաց, նստավ խնամաքարի վրեն։

— Թաքավո՛ր ապրած,— ասաց,— քո խոսք կատարեր եմ, դե՛, աղջիկդ տո՛ւ իմ տղին։

— Պա՛ռավ,— ասաց թաքավորը,— մնաց մե խոսք, որ կատարիր՝ կատարիր, որ չկատարիր՝ վիզդ կթոցնեմ։ Պառա՛վ, կէթաս իմ տանից շուր քո դուռ մե խալիչա կփռես, իմ դռան առաջ էլ, քո դռան առաջ էլ երկու ծերը կոլոնուկ ըլլի, որ մարդ նստի վրեն, ոտք գետին չառնի։

Պառավ էլավ, փոշման-փոշման էկավ, ասաց.

— Որդի՛, ո՛չ դու, ո՛չ թաքավորի աղջիկ. թաքավոր ընձի ասաց. «Կէթաս քո տնից իմ դուռ մե խալիչա կփռես, քո դուռն էլ, իմ դուռն էլ կոլոնուկ ըլլի»։

www.naregatsi.org

— Ադե՛, գնա էլի էն սարը, ասա՛. «Միթիլ-խավքը Միթիլ-խավին ասում ա, պղտիկ խալիշեն օղորկա գա»։

Պառավը էլի գնաց սարի կողը, էլման ասաց. «Միթիլ-խավքը Միթիլ-խավին ասում ա, պղտի խալիշեն օղորկա»։

Դիշերը քնան. էլան- տեհան, որ մի խալիշա ա փռուկ. ըսկի՛ թաքավորի յո՛թ պորտն էլ չէ տեսեր։

Պառավ էլի գնաց, նստավ խնամաքարի վրեն, ասաց.

— Թաքավո՛ր ապրած, խոսքդ կատարեր եմ, ի՞նչ ես ասում։

— Պառա՛վ, կէթաս մե քոշք ու սարե կշինես, որ գիշեր-ցերեկ հովը վրնիցը չկտրվի. էս որ արիր, խոսքդ կկատարեմ։

Պառավը դարձավ, տղին ասաց.— Ո՛րդի, ո՛չ դու, ո՛չ թաքավորի աղջիկ. ընձի ասում ա. «Կէթաս մե քոշք ու սարե կշինես, որ գիշեր-ցերեկ հովը վրնիցը պակաս չըլլի»։

— Ադե՛, կէթաս էն սարի կողը, կասես. «Միթիլ-խավին ա ասում, թո՛ պղտի բալախանեն օղորկա, գա»։

Պառավ էլի գնաց սարի կողն, էլի ասաց, դարձավ։

Լուսուն տեսան, որ հ՚ըմալ բալախանեք ընկեր ա։

Պառավը ուրխըցավ, թումպան քաշելեն լքնավ թըխ թաքավոր, խնամաքարի վրեն նստավ, ասաց.

— Թաքա՛վոր, իրեք խոսքդ կատարի, ընչի՞ չես տալում աղջիկդ իմ տղին։

— Պառա՛վ, մնաց մե խոսք. էն խոսքն կատարիր՝ կատարիր, չկատարիր՝ վի՛ղդ կկտրեմ, կանեմ քե սոսըրաթ։ Կէթաս մե ձեռք շոր կբերես՝ ոչ մկրըտի կտրած, ոչ ասեղի կարած ըլլի։

Էդտե պառվի պռունկ ճղավ ախու. փոշման-փոշման դարձավ, էկավ թըխ տղեն, ասաց.

— Որդի՛, ո՛չ դու, ո՛չ թաքավորի աղջիկ ըլլեր, ընձի ասում ա. «Կէթաս մե ձեռք շոր կբերես, ոչ մկրըտի կտրած, ոչ ասեղի կարած ըլլի». ինք թաքավորը չանքի մկրըտով չկարե, չկարե, չխա՛գի, ես ո՞ւստ բերեմ, տամ թաքավորի աղջիկ խագի։

— Ադե՛,— ասաց տղեն,— գնա թըխ սարը, ասա. «Միթիլ-խավին ա ասում, թո՛ պղտիկ բոզչեն օղորկա գա»։

Պառավն էր, էլավ, գնաց թըխ սարը. ասաց, դարձավ։

Պառվի դուռում կոտրեր էր. լուսը բացվավ, էլան տեսան շոր չկա։ Դող առեր պառվի ջան. ավել առեց ավիլում էր, գնաց էս

www.naregatsi.org

քունճ, գնաց էն քունճ. էն քունճն որ ավիլեց, տեհավ իրեք գուզ[1] ավելի խետ դընկըրտալեն էկավ։

— Ադե՛, տո՛ւ դես, տենանք էդ գզերը։

Տվեց։

Տղեն մեկ գուզը ջարդեց, ուր մոր ասաց.— Ադե՛, ա՛ռ դու էս շորերը խագի։

Պառավը ուր խին շորերը զարկեց թունդրա ակը, գզի միջի շորերը խագավ։

Էն մեկել գզերը ջարդըմ են, տղեն ասըմ ա.— Էս էլ ա՛ռ, տար թաքավորի աղջկան։

Պառավն էր, սոլերն խագավ, խխեց, ճըլը՛թ-պըլը՛թ անելով՝ գնաց թըխ թաքավոր, նստավ խնամաքարի վրեն։

— Թաքավո՛ր ապրած, շորս խետ ասիր՝ խոսքդ կատարի,— ասաց պառավ, բողչեն խանեց, դրեց թաքավորի առեջ։

Թաքավորը բացեց՝ տեհավ, բերնից ջուրը գնաց, ասաց.— Ճոռ մոթըներ պառավը էս թավուր շորերը հ՞ո՞ւստ բերեց. ես թաքավոր ըլլեմ, չեմ կարըմ, յարապ աստված,— ասաց թաքավոր.— պառա՛վ, իմ աղջիկ տվի քո տղին, գնա՛ քո թատպիր տե՛ս։

Թատպիր տեհան, նաղարով, զուռնով, էն խորոտ բաղչի միջով, խալիչի վրեջով տարան պսակ։

Թաքավորը ուր բալախանից իշկեց աղջկա էտև.— «Հա՛յ-հա՛յ,— ասաց,— իմ աղջիկ պախի-պախի, տվի էդ օձինն»։

Օձը, էդ թաքավորի աղջիկ ընկան էդ խալիչի վրեջով էթըմ են. պառավ ուրխըցեր ա։

Պսակվան, մե ժուկ-ժամանակ մնաց պառավի տանը։ Էդ թաքավորի աղջիկ ասաց. «Աստվա՛ծ, դու ընձի ի՛մալ զամաթ արիր էդ օձինն»։

Մտնըմ ա թաքավորի աղջիկ ուր տեղին մեջ պառկըմ. էդ օձը կտոտվըմ, նստըմ ա վըր թաքավորի աղջկա տեղին։

Թաքավորն էր, ուր տղեն նշանեց, նաղարով, զուռնով էկավ, տեհավ որ օձը ուր շապիկ թողեր վրիցը, իսանաթի շոր ա խագեր։

Թաքավորի աղջիկը որ տղին տեհավ, ասաց.— Քո՛ տուն չակոլի, դո՛ւ որ իսանաթ էր, ընչի՞ ըսկի ընձի խետ չէր խոսար. ես մտնըմ ի մըջ իմ տեղին, դու կտոտվըմ իր։

---

1 Ընկույզ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Թաքավորի՛ աղջիկ, մենք որ կանք, հուրի ենք. քեզի թաքավոր տանում ա ուր տղի խարսնիս, ես իմ շորերը իրեք խետ կփոխեմ, իրեք ռանդ ձի կխեծնեմ. ես գինամ, կրլլեք թաքավորի բալախանեքի վրեն, կուգամ ընտե ջրինդ խաղալու, չասե՛ս քո քվորտանց՝ «էնի իմ մարդն ա»։

Նաղարեն զանին, ձիանքը խեծան, ջրինդ են խաղում։ Մեյտանը էդ օձին էր. Ղամար ձիու պոչը զանեց կրակին՝ թանկը դրուստ էկավ. էդի խեծավ, գնաց մեյտանի գլոխ կայնավ. ըսդոր զանեց ջրինդով էցգեց, ընդոր զանեց էցգեց, ընկավ թաքավորի տղի հետև. զանեց, թաքավորի տղեն ձիուց ընկավ։

Թաքավորի ջոջ աղջիկն էր, զանեց քվոր գլխին.—Քո ումուտը[1] մեռնի, առում ենք արի՛, էս տղին առ, դու գացիր օձին առար,— ասաց։

— Աստված ընձի օձին էր ղամաթ արեր,— ասաց։

Էդ տղեն էր, էս խետ Ղամար ձին թողեց. էն մեկել օր Բոզ ձին խեծավ, էլի էկավ մեյտան, ըսդոր, ընդոր զանեց, էցգեց ջրինդով. էլի զանեց, էցգեց թաքավորի տղին։

Էլի թաքավորի աղջիկ գոմբով զանեց ուր քվոր.— Մեր խոզ քո գլխին, էսմա՞լ տղե մի չառար, գացիր օձին առար։

— Աստված մե խետ ընձի օձին էր ղամաթ արեր, մե զոռի բան կե՞ր։

Էն մեկել օրը էս խետ Կարմիր ձիու պոչ զանեց կրակ, ձին թանկ ու դրուստ օձի կուշտ կայնավ։

Էդ օձն էր, ուր շապիկը թողեց, էլավ կայնավ վըր ձիուն, գնաց էլի մեյտան։ Էլի ըսդոր զանեց էցգեց, ընդոր զանեց էցգեց, ընկավ թաքավորի տղի էտև. էս քուչով, էն քուչով լարեց, տարավ բալախանի դուռ խասցրեց. մե փետ շպրտեց, առավ թաքավորի վրզքոքին։

Էլի թաքավորի ջոջ աղջիկ ուր քվոր գոմբով զանեց։

— Ջա՛նըմ,— ասաց պզտի քուրը,— ընչի՞ եք գոմբըմ, քոռնըմ եք. էն իրեք ձի խեծնող մարդն էլ իմ մարդն էր։

Աղջիկ որ ասաց՝ «իմ մարդն էր», մարդը էլավ մե էղնըվեկ, էկավ ըդոր մայրամեն[2] վերցրեց, գնաց թըխ պառավ, ասաց.

---

1 Հույս (Ս. Բ.)։
2 Թաշկինակ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Ադե՛, թաքավորի աղջիկ կուգա քո կուշտ, կասես՝ էրկթե գավազան շքա, մե ջուխթ էրկթե շարոխ խագնի, հ՚ընկնի աշխարքներ պտոտի, քանի՞ էն շարոխը չկտրտի, գավազանը չմաշի. որ մաշավ, ընձի գտնի։

Էդ աղջիկ էկավ պառվի կուշտ, պառավ ասաց.—Որդի՛, էդ ի՛նչ խոզ էր տվիր գլխիդ, ասաց. «էրկթե շարոխ խագնի, էրկթե գավազան... որ մաշավ, ընձի կգտնես». որդի՛, գնա՛ դարբնի կուշտ, շքել տո՛ւ ու գնա՛։

Աղջիկը շքել տվեց. պառավին ասաց.— Խալա՛լ արա, ես պտի էթամ, իմ մարդ գտնեմ։

Էդ աղջիկն էր, ընկավ շոլ-շոլստան[1], բահրի-յապան[2], ման էկավ, գնաց մե խալիվորի ըռաստ էկավ։

— Բարի իրիկուն քե, պապե՛ ջան,— ասաց։

— Թաքավորի՛ աղջիկ, ղուշն ուր թևով, օձն ուր պորտով ըստեղրանք չէր գտնըվըմ, դու ի՞մալ գտնվար։

— Պապե՛ ջան, քո սերն ա բերել։

— Թաքավորի՛ աղջիկ, դու սիրով կենաս, դո՞ր էթըմ ես։

— Պապե՛ ջան, իմ մարդն էլավ էղվընեկ, թռավ. իմ մայրամեն վերցրեց, գնաց. էթըմ եմ մարդի էտևի խետ։

— Թաքավորի՛ աղջիկ, քո մարդ գնացե Ջինումաշին. սարը մե դև ա փեյտա էլել. էկա որ ես էլ էթե Ջինումաշին, չկարցա դևի ախուն էթե. ձախ ծիծը թալե աջ թևի վրեն, աջ ծիծը թալե ձախ թևի վրեն, ամեն տեղն էրկու թիզ կախ ա ընկեր. մե լիտր էլ գյուլլա արեր ուրին ծամոն. լուսը կբացվի էնի խմոր կշաղա։ Ըդոր օխտը տղա կա, կէթան ավ ու ղուշ։ Որ գնացիր ընդոր ծիծը առար բերանդ, էնի կբախշա ուր կաթին, թե որ չառար բերանդ՝ կթալա քեզի էն գյուլլի խետ կծամա, ըսկի՝ չգինա՛ թե իսանաթ ես, թե չես։

Աղջիկը տեհավ, որ շարխըները ծակվեր ա, գավազանն էլ չափեց՝ մե թիզ մաշեր ա. լուս բացվելուն՝ վախվխելով գնաց, ըդոր ծիծը առավ բերանը։

Դևը դարձավ որ մե իսանաթ ա. ասաց.— Քո սորվեցնողի վիզը կոտրի. շուտուց իսանաթի միս չէի կերեր, ատմներս ճլվստըմ ին։ Խո՛ղածին,— ասաց,— ես քե ի՛նչ թավուր պախեմ, ընձի օխտը տղա ունեմ, կուգան քեզի կտոր-կտոր կանեն։

---

1 Մեծ անապատներ (Ս. Բ.)։

2 Օտար ծովեր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Դևը թաքավորի աղջկան տարավ էրի մեջը, ղբրշ ու ղալը թափեց վրեն, պախեց։

Իրիկուն դիվանք էկան, ասին.— Ա՛տե, ահա՛, իսանաթի խոտ ա գալըմ։

— Որդի՛, դո՛ւ ևք չոլից գալըմ, դո՞ւ ևք ընձի ասըմ։

Էն ջոջ տղեն ասաց.— Չէ՛, ա՛տե, իսանաթի խոտ ա գալըմ։

Էդ խինդ ախպերն էլ պախին ջոջ ախպոր քամակ, ասին,— Ադե՛, իսանաթի խոտ ա գալըմ։

— Խո՛ղս ձեր գլխին, ես ձեզի խամար խաց ու խմոր եմ անըմ, մխի մեջը քոռնըմ եմ...— Էդի խոռվալ տղեկներից։

Էդ պզտիկ տղեն ասաց.— Մեռել... փըսլընքոտներ, մենք մե իսանաթ չկերանք։

Դարձրին ուրանց մորը, բերին ուրանց կուշտ։

Մերն էր, գնաց կծկվավ էրի քունճ. լուսը բացվավ ընդոնց վրեն, ընդոնք էլան, գնացին ավ ու ղուշ։

Դևը գնաց թաքավորի աղջկան բերեց, ասաց.— Թաքավորի աղջի՛կ, մեր արանքը մի սինոռ կա, էն սինոռից դենը կրակ ա. թե որ մեր արանքեն կրակի արանքը թալեցիր քեզի, իմ տղեկներ չեն կարա քեզի խասներ, ուտեր։

Աղջիկը էլավ, յավաշ-յավաշ գնաց. քի՛չ էր մացեր, որ խասներ կրակե էրկիր, դևերը տեսան։

Էդ աղջիկ իրիշկեց տեսավ, որ դևերը լքնան թըխ ուրին, որ ուտեն՝ աղջիկ ուրին թալեց կրակե էրկիր։

Դևերը ասին.— Հա՜յ քո սորվեցնողի վիզը կոտրի։

Էդ աղջիկն էր, էլավ յավաշ-յավաշ գնաց մե չոպանի ըռաստ էկավ, ասաց.

— Բարաքեն քե, չո՛պան։

— Բարով էկար, աստրծու բարին, թաքավորի՛ աղջիկ։

Աղջիկն ասաց.— Չոպա՛ն, էս թավուր, էս թավուր կերպարանքին մե մարդ քո կուշտ էկե՞ր ա։

— Թաքավորի՛ աղջիկ,— ասաց չոպան,— էսօր քո մարդի սըրեն ա, որ ինձի խաց բերա։

Չոպան թաքավորի աղջկան փաթըտեց կուլապի մեջ, դրեց ընտե։

Ըդոր մարդն էր, կեսօրին խաց առավ-էկավ։

Չոպանը խացը կերավ, վերցրեց. մարդը առավ ետ դառնալու, ասաց.

15—2573

www.naregatsi.org

— Աղա՛, տե՛ս, էս վի՞ր օխշարն ա՝ որդներ ա։

Աղեն էր, ետ դարձավ, էկավ ասաց.

— Ո՞ւր ա, չոպան, էն օխշարը։

— Աղա՛,— ասաց,— ի՞նչ կուտաս, թաքավորի աղջկա տեղ ասեմ։

Թաքավորի աղջիկն էր, կուլապը թալեց, վազեց, փաթըտվավ ուր մարդի վիզ։

Մարդը ասաց.— Թաքավորի՛ աղջիկ, ես քեզի ի՛նչ թավուր տանեմ, էդ իմ լիրը մոր ձեռնից քե պրծըցնեմ. որ քեզի տեսավ, իրարուց կճղճղա։

Տղեն էդ աղջկան վերուց, տարավ ուրանց տուն, փաթեց մըջ խալին, դրեց դռան էտև։

Էդ գիշերն էլ էդ տեղ խարսնիս էր. էդ տղեն ինք ու ուր մեր էլան, գնացին ըտեղ խարսնիս։

Ընտե ինչ ղտար գինի խմըմ ին ուր ընկերտանք, ամենք խմըմ ին թաքավորի աղջկա կենաց։

Էնտե մոր ծամերը գըրժկնավ[1], էկավ, տղին ասաց.

— Տղա՛, էլի՛ էթանք տուն, քեզի բան եմ ասըմ։

— Ասա՛, ադե՛։

— Որդի՛, էն ի՞նչ թաս էր, խմըմ իր թաքավորի աղջկա կենաց։

— Ադե՛, քեզնից պախեմ, աստըծուց ի՛նչ պախեմ, թաքավորի աղջիկ էկե, խասն ընձի։

— Որդի՛, հլա թող դա, տեսնամ ի՛նչ թավուր աղջիկ ա։

Տղեն էր, գնաց դռան էտևից բերեց։

Մերն օրթե տեհավ աղջկան, ուզըմ էր իրարուց ճղճղա. թաքավորի աղջկան ասաց.

— Էդ ի՛նչ քոուլըղութեն ես տվե իմ տղին, դու էկար, խասար իմ տղին։

Մերն ա, մե ջոջ ղաղան դրեց տան օրթալախ, ասաց.

— Թաքավորի՛ աղջիկ, ես էթըմ եմ խարսնիս, որ ֆասլ թմավ, էկա-տեհա, որ էս ղաղան արցունք չե՛ս լցե, վիզդ կթոցնեմ։

Պառավ վերցրեց տղին, որ էթա։

— Ադե՛,— ասաց տղեն, դու գնա՛, իմ ղալոն մնաց տունը, դառնամ, առնեմ։

---

1 Բիզ-բիզ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Տղեն էկավ տուն, թաքավորի աղջկան ասաց.

— Խինդ կուժ ջուր ի սրախն ա, կբերես, կլցես մըջ ղազնին. էնա տան վերևն էլ աղն ա, կբերես, կթալես մըջ ջրին, ո՛չ շատ շոռ ըլի, ո՛չ շատ անլի, արցնքի ղայդի ըլի։

Ըս խետ էլավ, գնաց խարսնիս. ֆասլը թմամ՝ մերը վերցրեց տղին, էկավ տուն, գնաց ղազնի վրեն, ասաց.

— Թա՜, աղջի՛, էս մե պատիճով պրծար։

Լուսը բացվավ. բերեց օխտը բարտան[1], տվեց բդոր ձեռը, ասաց.

— Տանիս սարի կողը, ըմեն բբուկ[2] կլցես։

Էդ աղջիկն էր, բարտանքներ առավ, գնաց սարի կողը։ Մարդը գողտուկ գնաց, ճչաց՝ ինչ ղտար ղշեղեն կեր, էկան էդ տեղ, ասաց. «Ձեր թեպուրներ կթախթըպեք, կէթաք»։

Ըդոնք թախթըպին, գնացին։

Թաքավորի աղջիկը էդ օխտը մեշոքն էլ ճխտեց։

Պառավն էր, էլավ, գնաց էդ սարի կողն, տեսավ որ օխտը մեշոքն էլ ճխտեր ա. վերցրեց, առավ էկավ տուն։

Լուսը բացվավ. էդ տղեն սեր արաց, որ սեր արաց, էլան մե ղուշ, ջխտով թռան։

— Թաքավորի՛ աղջիկ,— ասաց տղեն,— դարձի էտև, տե՛ս գեն, դումանի պեսդ թե որ գալըմ ա՝ իմ քուրը կըլլի։

— Վալա, մե դումանի պեսդ գալըմ ա, քիչ ա մնըմ մեղի խասնի։

Տղեն կնկան արաց աղբուր, ինք էղավ մե ճանճ։

Էդ դումանն էր, էկավ աղբուրի վրնից անցավ, ետ դարձավ։

Էլի սեր արաց, էլան մե ղուշ թռան։

— Աղջի՛,— ասաց տղեն,— դարձի՛, իրիշկա, իմ պզտի քուր ըմենից լիրբ ա։

— Ինչ որ դումանի պեսդ գալըմ ա, քիչ ա մնում մեղի խասնի։

Կնկան արաց բոստան, ինքն էլավ բոստանճի։

Էն դումանն էկավ, ասաց.— Աղբե՛ր, էս տեղով մարդ ընցա՞վ։

— Մե մարդ, մե կնիկ խելի վաղթ ընցան։

---

1 Մեշոք (Ս. Բ.)։

2 Փետուր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Էդ դումանը մե խելի տեղ գնաց, դարձավ. մերը խարցրեց դումանին.

— Որդի՛, զատ տեսա՞ր ըսկի ճանբախ։

— Վալա մե բոստնճի տեսա։

— Դու չկարցա՞ր բոստան քոքախան աներ, բոստնճին սըպաներ, էնի իմ տղեն ու թաքավորի աղջիկն են։

Մերը հերսոտավ, բերանը փսլնքոտավ. էս խետ ինք էլավ ընկավ տղի էտևը։

Տղեն ասաց.— Թաքավորի՛ աղջիկ, էս խետ մեր մերը կըգա սարը, ծով ուր ձենը կլցա։

— Խա, վալա, էկավ, մե սև, մռտալ, անպիտան չեշիթ աս։

Տղեն կնկան արուց վարդ, ինքն էլ եղավ մե օձ, կտոտվավ էդ վարդի բոլոր։

Մերն էկավ, նաճաղն առավ ուր ձեռ, ըդոնց վրեն կայնավ, ասաց.

— Թե զանեմ օձին, վայ թե վարդը կոտրի, թե զանեմ վարդին, վայ թե առնե օձի գլոխը թռնի. առեջ որ էս գի, մեկդ որ էլաք աղբուր, մեկդ ճանճ, աղբուրը լիքը խոզ կլցի, ճանճի թևերն էլ կքաշի. էն վաղթ որ մեկդ էլաք բոստան, մեկդ բոստնճի, կբռնի բոստնի թաղերը կքաշի, կթալի դեն, բոստընճու վիզն էլ կթռցնի։ Որդի՛,— ասաց մերը,— էլի՛, գնա՛, ո՛րտե մուրաղդ ա, գնա՛, կատարա։

Մերը ետ դարձավ, էկավ թըխ ուր տուն։

Տղեն էլի սեր արաց, էլան մե ղուշ թռան, էկան պառվի տուն, ուր իջնեն. տղեն սեր արաց, էղան մե իսանաթի չեշիթ. գնացին Հորթարածի կուշտ, ասին.

— Ա՛ռ քե մե ճանկ օսկի։

Հորթարածն էր, վաղե-վաղ էկավ թըխ պառավ.

— Պառա՛վ, աչքդ ի լուսի, քո տղեն, խարսն էկան. մուշտուլուխ տու։

— Խո՛ղս գլխիդ,— ասաց պառավ,— իմ տղեն է՞լ էղնի ընձի տղա ու խարս։

— Թե որ չես խավտնըմ՝ էլի՛, իմ խետ էթանք։

Գնացին, խասան ուր տղին։

Տղեն, խարսը գալըմ ին. պառավը ուրախ-ուրախ գնաց թըխ թաքավոր, մուշտուլուխ կտանա, կասա.

www.naregatsi.org

— Թա՛քավոր, աչքդ ի լուսի, քո աղջիկն էլ, իմ տղեն էլ էկան։

— Ջեյնմի դե՛ն, գնճրոռ՛տ պառավ, իմ աղջկան խաբիր, տարար, կորցրիր, կըլլեմ՝ վիզդ կզանեմ, ջանդակդ կթալեմ շները ուտեն, իմ առջևը կայնե՞ր ես։

Տղեն ու խարսը էկան. թաքավորը, վաքիլ-վազիր ուրխըցան։

Տղեն ու խարս բերեց թաքավոր ուր քոշք-սարի մեջ, օխտը օր, օխտը գիշեր թազատան ուրխըցան։

Ընդոնք խասան ուրանց մուրազին, ո՛ր տեղ նեղ մարդ կա՝ էն էլ խասնի ուր մուրազին։

www.naregatsi.org

19. ՓՈԿՈՏՆ

Առաջի ժամանակ մեկ թաքավոր կար. էդ թաքավոր ըսկի ավ-լատ չուներ. մեկ օր նստավ ուր թախտի վրեն, միտք արաց. «Տեր աստված,— ասաց,— դու էս թաքավորութեն ընձի տվեր ես, ավլատ չես տվեր, խնդիրք կանեմ քեզնից, իմ թաքավորութեն վերցնես, ընձի ավլատ տաս»։

Աստված ըդու ձեն լսեց. թաքավորութենը քիչ-քիչ պակսավ, ըդու մեկ ավլատ տվեց։

Տղեն չոչըցավ, թաքավորը բերեց, կարդեց։

Թաքավորը որ մեռավ, էս տղեն սկսեց բեռնախութեն [1], ընկերտիք ժողվեց, տարավ ուր մալ ընկերտոցը կերցրեց, խատցրեց, փճացրեց։

Մեկ օր՝ ընկերտանքը ժողվան, գացին ուտել խմելու. թաքավորի տղեն քամակներեն գնաց. ըդու տարան խետրները. նստան, կերան, խմեցին, էլան ցրվըվան։

Էն մեկել օրն էլ էլան գնացին, թաքավորի տղեն էլի քամակից գնաց. ընկերտոցը մեկը դարձավ թաքավորի տղին.

---

1 Հայրենական ավանդությանց անհավատարիմ գտնվիլ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Տո՛, զուռումսաղ. էրեկ սորվա՞ր, պատիհավա կերար, խմեցիր, փարա ունես՝ արի՛ մեր խետ ընկեր էղի, թե չունես՝ թորկ գնա՛,— ասաց։

Տղեն էր, սիրտը լցվավ, աչքերեն արտրսուք թափեց. էկավ ուր տունը, քիթ ու բերնի վրեն ընկավ։

Մերը տուն էկավ, տեսավ որ տղեն էդպեսդ ընկեր ա.

— Որդի՛,— ասաց,— հ՞ընչի՞ էդպեսդ ընկեր ես։

— Ա՜խ նանե, իմ դարտ շատ ա։

— Հ՞ընչի՞ խամա, որդի՛։

— Գնացի իմ ընկերտանքին խետ, ընձի խրկին։

— Որդի՛, էն օրը որ ես քեզի ասըմ ի էդմալ մի՛ անե, դու ընձի ականջ չարիր. քաշա՛, ջանդ դուս ըլլի։

Տղեն կծկծուն իրեք տարի խիվընդցավ։

Մեկ օր միտք արավ. «Տե՛ր աստված,— ասաց,— էս նեղութենից ընձի ազատա՛. ուխտ անեմ, գամ Երուսաղեմ, ուխտս կատարեմ»։

Մե քանի օր մնաց, էլավ յավաշ-յավաշ փեռը ձեռը առավ, ըստեղ, ընտեղ պըտրտըմ էր. տեսավ մե բազրկյան էկավ, քաղաքի ղրաղը դրավ. գնաց բազրկյանի մոտ, գլոխ տվեց, ձեռ քաշեց, կաղնավ։

— Որդի՛, ի՞նչ ես ասըմ,— ասաց բազրկյանը։

— Բան չեմ ասըմ,— խնդրըմ եմ,— ասաց,— քո հոգու սատաղեն՝ ընձի տանիս խետդ Երուսաղեմ։

— Որդի՛, լավ ես ասըմ,— ասաց բազրկյան։

Իրեք օր գնաց, միտք արաց բազրկյան. «Ես էսի բերեցի, որ ընձի օգուտ ըլլի. տահա ավելի իմ բեռը ծանտրցավ»։

Գիշերը քնան. բազրկյան էդ տղին թողեց ու ուր ղավլաղաթը[1] բարձավ, ընկավ ճանպախ, գնաց։

Տղեն հ՞իմցավ որ լուս ա, բազրկյան չկա. հ՞էլավ ըստեղ, ընտեղ պըտրտեց, մե բարակ ճանպախ ընկավ առաջ, գնաց։ Շատն ու քիչ աստված գինա, գնաց տեհավ մե սարի մեջ մե հովիվ, ուր օխշարը արածացընըմ ա, ասաց. «Անոթի եմ, էթամ էս հովիվի կուշտը, մե կտոր խաց ուտեմ»։

Խասավ, շոպնին բարև տվեց։

---

1 Ջորի, ջորեստան-բեռ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Բարո՛վ էկար... վըր իմ գլխին, վըր իմ աչքին, վըր իմ հ՚էրսին էկար. խացս խլըսեր ա, արի՛, խեծի էշը, էթանք տունը, քըզի լավ պատիվ կանեմ։

Էս հովիվը քելլե-գյոզ էր, տղին դրեց իշու վրեն. ոտները փորի տակ կապեց, օխշարը ժողվեց, տվեց առաջը։ տարավ ուր էրը. տղին տարավ վերևը. օտները դրեց զնճիլ, կապեց։

Էս քելլե-գյոզը էկավ ուր փուռը վառեց։

Էն տեղ էռսուն կապված մարդ կար, տղեն ընդոնց խարցրեց.

— Էս ի՞նչ բան ա։

— Քո տուն ակոլի, դո՞ւն էլ էկար էս տեղ. օրը մե մա՛րդ ուտում ա։

Փուռը վառեց, նիզեն[1] դրեց կրակը. կարմրավ, բերեց կոխեց մեկ մարդի սրտին մեջ, առավ գնաց, բռնեց փռի վրեն, էփեց կերավ. ընտեղ մե գուռ ջուր ուներ, խմեց, ու վըր քամկին քնավ։

Թաքավորի տղեն ուր ընկերտանքին ասաց.— Ըսդու մե ճար չե՞ք դտնըմ։

— Չէ՛,— ասեցին ընկերտանքը։

Տղեն ուր ձեռներու կապեր քանդել տվեց, ուր ընկերտանքին օտի զնճիլը կոտրեց, էկավ նիզեն փռի միջեն խանեց, քնուկ տեղ տարավ դրավ ըդու աչքի վրեն. որ ճխտեց, աչքը փլխավ, գնաց, մի թիզ մտավ մըջ օխշրի տարթին։

Օր փլխավ աչքը, պոռաց.— Թաքավորի տղա՛, էսի քո բաներըն ա։

Էլավ էս էրի մեջ ընկավ տղի հ՚ետևը լափլըփելեն, ըստեղ-ընտեղ լարեց, չկարցավ բռներ. էկավ ինատ արաց, ջաղջի քարը օխշըրի դռնից վերցրեց. մե օտը դրեց շեմի էն տեղ, մե օտը էս տեղ. օխշըրների անուն տվեց.— Սև օխշար, Սիպտակ օխշար, արի՛. Կարմիր օխշար, արի՛։

Օխշըրները մեկ-մեկ էկան էս քելլե-գյոզի շենքի տրկով ընցան, դուռ էկան։

Թաքավորի տղեն տեսավ, որ ըդու մե ների կա, ալպիալը ըդու փորը թափեց. ներուն օր կանչեց «Սիպտակ սեյիզ, արի՛», տղեն մտավ ներու փորը, էկավ ըդու շենքի տակեն ընցավ, կանչեց.

— Ա՛յ քո հերն անիծած, տեսա՞ր, քո ձեռքեն պրծա։

---

[1] Նիզակը (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Քելլե-գյոզն որ ըդու ձենը առավ, հերսոտ ընկավ ձենի էտև, ըդու էրի առջև մե զնար կար. տղեն գնաց էդ զնարի գլոխը, ձեն տվեց, ետ փախավ. քելլե-գյոզն ձենի վրեն գնաց որ բռներ, պատավ, էլավ հազար կտոր։

Գնաց իջավ վրեն, տեսավ ըդու յախին մե կոբալ փետ կա, հ'ըմեն անգին քարով նդղված. վերցրեց կոբալն, էկավ, մտավ էրն. գնաց կապած ընկերտանքի կուշտ.

— Աչքներդ լուսի, սըպանեցի,— ասաց։

Էլան ըդոնք թափան տղի ոտի վրեն, ուրխըցան։

Տղեն բերեց, ըդոց հարձկեց։

Գացին օխշարը ժողվեցին, ըդու էդ էրի մեջ բերած ապրանքը ըմեն դուս բերին. թաքավորի տղեն փայ էրավ. ուրին փայ չառավ։

— Աղբեր,— ասեցին,— էս հ'ըմեն քոն ա. դու ընչի՞ փայ չես առնըմ։

— Էդի ձեր արընի գինն ա, ձեզի ըլլի. էս մե կոբալը թե որ կուտաք ընձի, կըտանեմ։

— Խալալ ըլլի քեզի, դո՛ւ մեզի ազատեցիր։

Իրար խալալլաշմիշ էղան, հ'իրարուց բաժանվան, ասին թաքավորի տղին.

— Աստված քո խե՛տն ըլլի. գնա՛։

Տղեն ընկավ մե բարակ ճանրախ, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, խասավ մե մեշի[1] մեջ։ Կեսօր էր, նըստավ խաց կերավ, ուզեց որ քներ, ասաց. «Թե քնեմ, արի տե՛ս, ջանավարները գան, ընձի գետինը ուտեն»։ Հ'էլավ մե ջոջ ծառի վրեն, ուզեց որ քներ. տեսավ որ սարից մե վերու եզ իջավ. էկավ, էդտեղ մե ջրի հավուզ[2] կար, իջավ վրեն, բերնից մե ջավահիրաթ քար խանեց, դրեց գետին, ջուրը խմեց. էն քարը ղուլ տվեց գնաց։

Տղեն ասաց.— Ես մեռնեմ, չանք էս քարը էս եզան ձեռնեն չառնեմ, ըստուց չեմ էթա։

Հ'իջավ ծառից, իրեք խատ տլից խուփ շքեց, առավ էլավ ծառի գլոխ, նստավ։

Մնաց էն մեկել օրը, եզը էլի էկավ հավուզի վրեն. բերնից քարը խանեց, որ կզավ ջրի վրեն՝ ջուրը խմըմ էր, տղեն խփները մեկ-

---

[1] Անտառ (Ս. Բ.)։

[2] Գուռ (Ս. Բ.)։ Ջրավազան (Ս. Կ.)։

www.naregatsi.org

մեկ թալեց, էն անգին քարը ծածկեց։ Եղը դարձավ իրիշկեց, որ անգին քարը չկա. է՛ս տեղ, է՛ն տեղ իրիշկեց, տեսավ ծառի գլուխ մե մարդ կա. էնպեսդ լքնավ, էդ ծառին մե քելլե զարկեց, որ ծառը քոքախան արաց, վիզը մտավ փորը, ընկավ, սատկավ։

Տղեն իջավ, քարը վերցրեց. ընկավ մե բարակ ճանբախ գնաց. գնաց-գնաց մե դուզ տեղ, տեսավ մե թոզ, տուման ըլլում ա, ասաց. «Տե՛ր աստված, էս ի՞նչ ա, խաթեն[1] ընձնից չի՛ զատանըմ»։

Գնաց տեսավ մի դաստա մեյմուն[2] են կաղնած. մե դաստա էլ թազի[3] են կաղնած, կռիվ անըմ են։ Տղեն տեսավ որ թազիքը մեյմուններին զոռ են անըմ, ուր կոբալը քաշեց, գնաց մեյմունների քամակը կայնավ. թազիքներին ջարդեց, սրպանեց, փախցրեց. ամենքը մե շոլ էցգեց։

Մեյմունները էկան, ժողնըվան վըր տղին. փեշերից ձեռք էցգեցին, բռնեցին ու գնացին ուրանց ջոջ թաքավորի կուշտ, ուրանց լեզվով թաքավորին խասկցրին. «էս մարդը մեզի աղատեց էն զալըմների ձեռքեն»։

Թաքավորը ասաց.— Ի՞նչ տանք ըդու խալաթ, օսկի՞, թե անգին քար։

Մեյմունները լայեղ չտեսան. թաքավորը բերեց ուր աղջիկը տվեց էդ տղին։

Տղեն մի ժամանակ էդտեղ մնաց, միտք արաց. «Ըստե մնայը ընձի ձեռք չտա, դառնամ էթամ, տենամ իմ մերն, իմ կնիկ մեռա՞ն, թե ապրանը»։

Էլավ հետ դարձավ, ընկավ ճանբախ էկավ թրխ տունը։

Էկավ-էկավ խասավ մե մեշի. ընտեղ ծառի տակ տեսավ մե մարդ նստած ա։

— Բարի օր քե՛,— ասաց,— խորոխբերս։

— Բարո՛վ, հազար բարով, թաքավորի տղա։

Թաքավորի տղեն միտք արաց. «Կըլլի թե էսի իմ խոր ճանչնըմ ա, ընդու իմ անուն իմացավ»։

— Խաց ունե՞ս, անոթի եմ,— ասաց տղեն։

---

1 Փորձանք (Ս. Բ.)։

2 Կապիկ (Ս. Բ.)։

3 Բարակ (Ս. Բ.), որսորդական շան տեսակ (Ս. Կ.)։

www.naregatsi.org

— Խաց էլ ունեմ, փառք աստու, ջուր էլ, հ՚ըմա ոտ չունեմ, կունտ եմ. արի՛ ընձի շլկա էթանք, մեր տունը էս դարի տակն ա, քեզի խա՛ց էլ տամ, ջո՛ւր էլ տամ, պատիվ էլ անեմ։

Տղեն միամտավ, էկավ ըդուրը շլկեց։

Ըդուր հնարք, ֆենտ ուներ, մեջկպից ցածր ղայիշ էր, վերևը խանաթ էր, անունը Փոկոտն[1] (Պալտր-ղայիշ)։

Փաթթվավ տղին օտներից շանքի թևերը. էլավ նստավ վզի վրեն։

Մե ամիս տղին շատ շարշրեց, հա՛ քշեց ըստեղ, հա՛ քշեց ընտեղ, հա՛ ջուր բերեց, հա՛ փետ բերեց՝ չթողեց մե սահաթ դնճըներ։

Մե օր էս տղեն էս շարշրմունքի մեջ գնաց մե դդմի ըռաստ էկավ, մե խոր «ա՞խ» քաշեց։

— Շան որդի՛,— ասաց Պալտր-ղայիշ ուր վզի վրուց,— ընչի՞ ես «ա՞խ» քաշըմ, չէ՛ քո խոգին իմ ձեռն ա, դու պըտի պրծնե՞ս իմ ձեռից։

— Աղա՛,— ասաց տղեն,— գլխիդ ղուրբան, իմ խոր խորակն էս ա, միտքս ընկավ, իզին տա՞ս, էսի անեմ մե կերակուր, ուտենք։

— Դե՛, շո՛ւտ արա, տենանք ինչպեսդ կերակուր ա։

Տղեն դդմի գլոխը կտրեց, մեջը խորդեց, ծառներից խաղող բերեց, մեջը քամեց. դրեց արևը, գնաց։

Էն մեկ օր Պալտր-ղայիշին միտք ընկավ, ասաց տղին.

— Է՛, շանորդի, քելե՛, էթանք կերակուրը ուտենք։

Տղեն էկավ դդմի վրեն կայնավ. սկսեց որ ինք առաջ ուտեր էս զատից, Պալտր-ղայիշ տվեց տղին շափալեխի առաջ։

— Շանորդի, ըմալ էղնիս՝ դու ընձնից առա՞ջ ուտես։

— Ջանըմ, աղա, ա՛ռ կեր, ընձի մի՛ սրպանե. դու քու աստված, թե մնաց՝ ես էլ կուտեմ։

Պալտր-ղայիշ կերավ, խմեց, քեֆովցավ. ղայիշները թուլցավ, էկավ ոտներից ընկավ ցածր։

Տղեն ազատվավ. գնաց մե ջրի վրեն շորերը խանեց, լվաց. ըստրկեց, փռեց շորցավ. խագավ, էլավ էկավ որ Պալտր-ղայիշ քեֆը թողեր՝ նստեր ա։

— Բարի օր քեզի,— ասաց,— խորոխբեր։

---

[1] Փոկոտն անվանումը բանահավաքինն է, ասացողը անվանում է՝ Պալտրը-ղայիշ։

www.naregatsi.org

— Բարո՛վ, խաղար բարով էկար, թաքավորի տղա. իմ գըլխին, իմ հ՚էրեսին։

— Իմ օրս քու ձեռ ի՞նչպեսդ էր, ընձի ի՛նչպեսդ իր շարշրըմ, տրորըմ, բյալքի ես չի, մե անգետ մարդ էր ընկնըմ քո ձեռ, շանքի մեռնելուն պըտի շարշրրի՞ր, քեզի աստված չկա՞։

Թաքավորի տղեն շոմախը խանեց, ընդու գլխի օրթալախը շոմախը իջավ, գլոխը արաց խաղար փշուր. ջանը դժոխքի փայ արաց։

Հ՚ընկավ մեշի մեջ, որտե ընդոնցից տեսավ, ջարդեց, սըպանեց. ըդոնց քոքը[1] կտրեց։

Էլավ ընկավ ճանբախ, էկավ թըխ ուրանց երկիրը, խասավ ուր քաղաքի մեջը, գիշերվա կես էր, գնաց ուրանց դուռը, ձեն տվեց։

Կնիկը ձենը լսեց, ուր կեսրոջ ասաց.

— Էս քո տղեդ ա։

— Հա՛, լի՛ըբ, լըբի որդի, միտք ես տվե խըլղի ջհելներին, ասըմ ես «քո տղեդ ա», իմ տղեն էս տաս տարի ա կուրիսեր ա։

Տղեն մեկ էլ ձեն տվեց. կնիկ էկավ դուռը բացեց. տղեն մտավ ներս, մորը բարև տվեց. մերն էլ ճանչըցավ, որ ուր տղեն ա։

— Կնի՛կ,— ասաց տղեն,— էլի՛, մե ճրագ արա, հ՚իրար էրես մե տեսանք։

— Քանի դու գնացեր ես, մեզի ճրագ չի էլեր,— ասաց։

— Էլի՛, գնա դրկըցի տնեն մե ճրագ բե, իրար էրես տեսանք,— ասաց տղեն։

— Չէ՛, ես օրդում եմ կերեր, ըսկի դրկեցի տուն չեմ գնացեր, ըսկի էլ չպըտի էթամ, էթըմ ես, դո՛ւ գնա։

Տղեն էլավ քուչի միջով էթըմ էր, հասասները էկան, բռնին, տարան թաքավորի դուռասաղխանեն. գացին թաքավորին ասեցին.

— Քո խաղինի գողն բռներ ենք։

— Շա՛տ լավ եք արեր,— ասաց թաքավորը,— թըղ մնա. սապախտան ըդու դիվանը կանեմ։

Լուսացավ, թաքավորի մտից ընկավ. էդի մե ժամանակ մնաց դուռասաղխանեն։

Թաքավորին մե ցավ պատահավ, կանչեց ուր այամներին, ասաց.

---

1 Արմատ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Էկեք մե էնպեսդ մարդ գտեք, մեկ խոսք ասա՝ ես լամ, մեկ խոսք ասա՝ ես ծիծղամ, բյալքի իմ ցավին մե ազատութեն ըլի, թը չէ, ձեր հ'ըմբնի գլոխ կկտրեմ։

Այամներից մեկը ասաց.— Թաքավո՛ր, մեզի մհուլ տու իրեք օր, էթանք, շուռ գանք, կըլլի օր գտնենք։

Էդ բանտի վերակացուն էլ էր էդտեղ. մե էրկու օր էդ տղին խաց չէր տարեր, անոթի էր մնացեր տղեն։

Վերակացուն էլավ խաց տարավ։

— Դու աստված չունի՞ս,— ասաց տղեն,— բռնավո՛ր եմ, թաքավորի բռնավորն եմ, ընձի ընչի՞ խաց չես բերըմ։

— Թաքավորի տուն աստվա՛ծ ավերա, էնպե՛սդ շփոթութեն էցգեր ա մեր մեջն...

— Ընչի՞ խամար։

— Ընդու խամար՝ մե մարդ ա ուզըմ, ասըմ ա. «Ընձի մե մարդ գտեք, մե խոսա՝ ես լամ, մե խոսա՝ ես ծիծղամ»։

— Էդի ես իմ, գնա՛ Թաքավորին ասա՛, մե խոսք ասեմ՝ Թաքավորը լա, մե խոսք ասեմ՝ ծիծղա։

Բանտի վերակացուն գնաց Թաքավորի առեջ կայնավ։

— Է՛, ի՞նչ ա,— ասաց Թաքավորը։

— Էն մարդն որ դու ասըմ ես, բռնատուն բռնված ա։

— Գնա՛ խան. ա՛ռ արի։

Գնաց Թաքավորի տղին բռնատնից խանեց, առավ, էկավ Թաքավորի դիվանխանեն. ձեռ բռնեց, կայնավ։

— Դո՞ւ ես, որդի,— ասաց Թաքավորը։

— Ես եմ, Թաքավոր ապրած։

— Արի՛, նստի, խոսա տենա՛մ։

Տղեն սկսեց ուր գլխից անցած բաներ խոսալ[1]։

Ասաց.— Ես շատ հարուստ էի, ունեի անսպառելի ինչք, շատ լավ բարեկամներ, սրտակից ընկերներ, որոց հետ ձի կնստեի, զվարճալի վայրեր կգնայինք, կեր ու խում կանեինք, կուրախանայինք։

---

1 Այս տեղեն հեքիաթի պարունակությունը պիտի կրկնվեր զոր ավելորդ համարած էի գրի առնելու միջոցին, սակայն ըստ պահանջման մեծ գիտնական պ. Գր. Խալաթյանի լրացուցած եմ, բայց գրական բարբառով (Մ. Բ.)։

www.naregatsi.org

— Թաքավո՛ր ապրած, եթե դու լինեիր իմ տեղ, ի՞նչ պիտի անեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի. իսկ շարունակե, որ լամ։

— Իմ ամբողջ կարողությունը ծախսեցի-վատնեցի, իմ լավ ընկերներու սիրտը շահելու համար, այլևս ինձ մի փարա անգամ չմնաց. սակայն հույսս դրած լավ ընկերներուս վերա՝ շարունակեցի նոցա հետ ուրախության գնալ, բայց ընկերներս երես դարձուցին, դիս չարաչար ծեծեցին, հետ դարձուցին։

— Թաքավոր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի լայի. իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Տեսա, զգացի իմ անխոհեմ ընթացքը. միտք արի՝ Երուսաղեմ գնալ և աստուծմե շնորհ խնդրել։ Ճանապարհ ընկա, մե կարավանի պատահեցա։ Կարավանապետը բարի մարդ էր, դիս վստահացուց, որ ապահով տանի Երուսաղեմ և վերադարձնե։ Ճանապարհի կեսը կտրեցինք, ես ուրախ էի՝ որ փափագիս պիտի հասնեմ։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, իսկ ասա, որ տխրեմ։

— Դու մի՛ ասեր, ես քարավանապետին ծանր բեռ եղած եմ։ Մի առավոտ զարթեցա, տեսա որ քարավանապետ առանց ինձ իմաց տալու, թողած է դիս քնո մեջ ու գնացած։

Մնացի մենակ, անծանոթ անտառին մեջ. Ճանապարհս կորուսի. հաց չկա, գիշերը քնելու ապահով տեղ չկա։

— Թաքավոր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Իհարկե պիտի տխրեի, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Ես փրկության մի նշույլ կորոնեի. մութ և ահռելի անտառին խորը պատահեցա մի հովվի, որ գույնզգույն ծաղկանց և կանաչ մարգագետնո մեջ յուր հոտը կարածեցներ. փրկության հույսս լմցված տեսնելով՝ անբավ ուրախացա. ուրախանալով դիմեցի դեպի հովիվն։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, իսկ շարունակե, որ տխրեմ։

— Անոթութենե աչքերուս լույսը գացած՝ հասա հովվին, հաց խնդրեցի. իսկ նա ինձ ասաց. «Արի, նստի իշու վերան, գնանք տունս»։ Ես անխոհեմաբար նստա. դու մի՛ ասեր այս հովիվն քելլեգյոզ մարդակերներեն էր, իմ ոտներ իշու փորու տակեն կապեց, որ

www.naregatsi.org

ես խույս չտամ։ Զիս տարավ յուր քարայրը, դռան առաջ դրված մեծ ժայռը մի կողմ առավ, տարավ ներս, ուր երեսուն հոգի ևս կային, որոնցմե մին զարկեց շամփուրի, կրակի վերան խորովեց, կերավ. իսկ ես, որ ականատես էի այդ դժբախտ մարդու շարաշար վախճանին, գիտե՞ս, ի՛նչ եղա, մանավանդ կմտածեի, որ մի օր ես ինձ պիտի պատահի։

— Հարկավ պիտի սարսափեիր, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Ես ևս գիտե՞ս, ինչ արի, քելլե-գյոզին ուշադրություն դարձուցի, երբ նա ընկավ խոր քնո մեջ, սողալով գնացի ընկերներուս մոտ, ասացի. «Ապրել մեռնելու օր է, ձեր ատամներով կրծեք իմ կապերս»։ Քսանութ մարդու ատամներն կրծելով թափավ, իմ կապերս ևս կտրեցավ։ Սակայն այս-այն կողմ մնն եկա, դուրս գալու հնար չկար. մեծ ժայռն դեմ տված էր քարայրի դռան։ Գիտե՞ս, ինչ արի. գնացի այն շամփուրը առի, կրակի մեջ տաքացուցի, ուժով մղեցի քելլե-գյոզի աչքին. աչքը փլխավ. շամփուրն մխվեցավ գետին։ Քելլե-գյոզն վեր թռավ. «Թաքավորի՛ տղա, քու բաներն է՛»,— ասաց. լափլփելեն[1] այս-այն կողմ որոնեց զիս, իսկ ես առջևեն խույս կտայի միշտ։ Նա առավոտյան հոտը դուրս հանեց որ զիս գտնե, ես մտա նոխազի կաշիի մեջ, նրա շենքի[2] տակեն անցա։ Երբ դուրս ելա, ձայն տվի. «Շա՛նորդի, պրծա քեզնե»։ Իսկ նա ետևես վազեց, ժայռեն գլորեցավ, եղավ հազար կտոր։ Նա մի չոմախ ուներ ակունքով պատած, առի, գնացի այն մարդիկը արձակեցի, նորա ապրանքն ևս հանձնեցի նոցա. իսկ ես երբ զիս ազատված դտա, շատ ուրախացա։

— Թաքավո՛ր ապրած, դու լիներիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի, շարունակե, որ լամ։

— Ես անտառին մեջ ճանապարհս շարունակեցի, դարձյալ մոլորեցա, հաց չունեմ. գազանները չորս կողմս առին, արջեն կփախչիմ՝ գայլի ձեռք կընկնիմ, գայլեն կփախչիմ՝ առյուծի ձեռք. փախա, ելա ծառը. ծառեն չեմ կարող ցած իջնել, գիշերը քուն չունիմ, յոթ օր սոված, անքուն, գազաններու սարսափեն կուլայի։

— Թաքավո՛ր ապրած, դո՛ւ լիներիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

---

1 Խարխափելով (Ս. Բ.)։

2 Քայլի (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Հարկավ պիտի տխրեի, ասա, որ ուրախանամ։

— Գազանները հեռացան, որոց սարսափեն չէի կարող իջնել ցած. տեսա մի եղնիկ եկավ ծառի տակ. բերնեն մի անգին քար հանեց, ջուր խմեց, դարձյալ առավ բերանն, գնաց։ Մտածեցի դարձյալ կգա։ Իջա, տղմե երեք խուփ շինեցի, հետևյալ օր եղնիկն եկավ, քարը հանեց. խուփերն վերևեն մի մի վայր ձգեցի, անգին քարը ծածկվեցավ։ Եղնիկն երբ տեսավ անգին քարը չկա, կատաղեցավ, վեր նայեցավ, լքնավ. ծառին զարկեց, շրջեց, ինքն ևս սատակեցավ։ Առի անգին քարը, որ կարժեր միլիոն, ճանապարհս շարունակեցի։ Հեռվեն տեսա մարդիկ անտառին մեջ նստած՝ ուրախ-ուրախ կխաղան. «Այս լավ եղավ,— մտածեցի,— թե անգին քարը շահեցա, և թե կերթամ այն մարդերեն հաց կուզեմ»։

— Թաքավոր ապրած, իմ տեղ լինեիր, ի՞նչ կանեիր։

— Հարկավ կուրախանայի, շարունակե, որ տխրեմ։

— Գնացի այն նստած մարդերեն հաց ուզեցի։ «Որդի,— ասաց մին, հաց ունեմ, սակայն տունն է, ես ոտք չունեմ, զիս շալակե, տար, քեզ հաց տամ, ջուր ևս»։— Գնացի որ շալակեմ, դու մի՛ ասեր, այդ Փոկոտն էր, մեջքեն ներքև փոկ, փոկը փաթութեց իմ ոտներուն, մեջքին, ելավ ուսիս վերա նստավ, սկսավ զիս ապտակել. «Շանորդի՛,— կասեր,— այստեղ գնա՛, այնտեղ գնա՛»,— և այլն։ Ես եղա Փոկոտներու ձեռք գերի, երբեմն մին կնստեր վզիս, երբեմն մյուսը, երբեմն ջուր կբառնային վերաս, երբեմն ցախ կամ փուշ։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի լայի, իսկ շարունակե, որ ուրախանամ։

— Հնարքներ մտածեցի, մի օր գնացի դդմի մոտ, հառաչեցի. «Շանորդի՛,— ասաց,— ինչո՞ւ կհառաչես», ասացի. «Հորս կերակուրը այս դդումն էր. տեսա, միտս ընկավ»։— Փոկոտն ինձ մի ապտակ զարկեց. «Շանորդի՛,— ասաց.— պատրաստե՛, ուտեմ»։— Դդումը ծակեցի, մեջը խաղողի ջուր քամեցի, մնաց երկուերեք օր, Փոկոտն ինձ մի ապտակ զարկեց, ասաց. «Գնա՛, կերակուրը ուտենք»։ Գնացինք, ձեռք զարկի ուտեմ. մի ապտակ ևս զարկեց. ասաց. «Ես չկերած դու ի՞նչպես կհամարձակիս ուտելու»։ Դդումը կերավ, խաղողի ջուրը խմեց, թուլացավ. արձակվեցավ ընկավ. որ ընկավ, գոմբալով մի հարված տվի սպանեցի, պրծա։

— Թաքավո՛ր ապրած, դու լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

www.naregatsi.org

— Հարկավ կուրախանայի, շարունակե, որ տխրեմ։

— Անտառին մեջ պատահեցա կապիկներու և բարակներու պատերազմին, կապիկներուն կողմ բռնեցի, երկու-երեք օր պատերազմեցանք, բարակներ մեր վերա զորեցին, սպանեցին մեր զորքերն. իմ չորս կողմս ևս պաշարեցին. մնացի թե կատաղի բարակներու ձեռքը և թե արյան հեղեղի մեջ։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի տխրեի, շարունակե, որ ուրախանամ։

Ուժս հավաքեցի, հարված հարվածի վերա տվեցի. հաղթեցի, բարակներն երկրեն հանեցի։ Կապիկներն զիս տարին թաքավորին, որ վարձատրե։ Բերին զիս թաքավորի աղջկան հետ պսակեցին, հարսանյաց ամեն պատրաստություն տեսան, կերանք խմեցինք, ուրախացանք։

— Թաքավոր ապրած, դո՛ւ լինեիր, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի ուրախանայի. ասա, որ տրտմեմ։

Մի ժամանակ մնացի, դարձա, որ տուն գնամ. տեսնեմ կինս, մայրս ո՞ղջ են, ի՞նչ եղան։

Գիշերը հասա տուն, դուռը զարկեցի, ձայն տվեցի։ Կինս մորս ասաց. «Որդիդ եկած է»։ Նա ևս բարկանալով ասաց. «Ա՛յ անառակ, տե՛ս քո ո՛ր մի սիրահարն է»։ Կրկին զարկեցի, վերջապես բացին։

— Ճրագ վառեցեք, իրարու տեսնենք, մեր կարոտը առնենք,— ասացի։— «Ճրագ չկա»,— ասացին։ «Դրացիներեն բերեք»,— ասացի։ «Քանի որ դու գնացած ես, ես դրացու տուն, ուխտ արած եմ, ոտք չդնել, դո՛ւ գնա բերե»,— ասաց իմ կին։

Դուրս ելա որ ճրագ գտնեմ, գիշերապահներն զիս բռնեցին. «Դու թաքավորի գանձարանը կողոպտած ես»,— զիս բանտարկեցին։ Թաքավորի մտքեն էլավ. մնացի բանդին մեջ, կնոջս և մորս կարոտը քաշելով, որոնք ևս չէին գիտեր ի՛նչ եղա, ո՛ւր եմ։

— Թաքավո՛ր ապրած, դո՛ւ լինեիր իմ տեղ, ի՞նչ կանեիր։

— Հարկավ պիտի տխրեի. շարունակե, որ ուրախանամ։

— Թաքավոր ապրած,— ասաց,— կուզես ուրախացի՝ կուզես տխրե, զիս անմեղ տեղ բանտարկած ես։

Թաքավորը մտածեց, որ սույնպիսի անմեղներ պատժելու պատճառով իրեն այդ ցավը պատահած է. ո՛րչափ անմեղներ կա-

6—2573

www.naregatsi.org

յին, քննեց և արձակեց, այս տղին ևս թույլ տվեց, հազար հատ ևս ոսկի տվեց։

Տղան գնաց տուն, ծախեց քելլե-գյոզի չոմախը հազար միլիոնի, այն եզնիկի բերնի անգին քարը՝ հազար միլիոնի։

Նստավ խելքով կառավարվեցավ, այլևս երես չտվեց հացկատակ ընկերներուն։

www.naregatsi.org

20. ԲԱԲԸՌ[1]

Ժամանակով մի թաքավորի երեք տղա կար, փոքր տղի անուն Մելեք-շահ էր։ Սոցա կարգվելու ժամանակն հասավ, ըստ իրենց հնավանդ սովորության երեքն ևս մի-մի նետ կձգեն։ Մեծ տղի նետը կընկնի վազիրի դուռը, այն կառնե վազիրի աղջիկը, փոքրի նետն ևս նազիրի դուռը, այն ևս կառնե նազիրի աղջիկը. իսկ Մելեք-շահի նետը գնաց ընկավ մի ժայռի մոտ, մի գորտի առավ։

— Իմ բախտս այս է,— ասաց Մելեք-շահ, գորտը առավ բերավ։

Թաքավորի մեծ որդիքն հարսանիք արին. Մելեք-շահ գնաց նոցա հարսանիքին, ձեռները ծոցը դրած, խեղճ-խեղճ։

Հանդիսականները ծիծաղեցան Մելեք-շահի վերա. մայրն ևս ասաց.

— Քոռանա քո էրկու լուսն, գնացիր բան չգտար, գորտը բերիր քեզ կնիկ։

— Նանե՛,— ասաց,— աստված էն է կամեցեր։

---

1 Սույն հեքիաթի առաջին երկու էջերն կորսված լինելով, որ պարունակությունը գրական բարբառով կներկայացնեմ, ապա կշարունակվի ասողի բարբառով (Մ. Բ.)։

www.naregatsi.org

Գիշերը տուն դարձավ Մելեք-շահ, տեսավ մի սիրուն աղջիկ գորտենին հանելով դուրս եկավ, այնքան գեղեցիկ, որ արևուն կասեր, դու դուրս մի՛ գար, մի՛ ծագիր, ես պիտի ծագիմ։

Մելեք-շահ նորա լուսնյակ դեմքի գեղեցկության վրա զմայլեցավ. առավ յուր հետ, գնաց եղբայրներու հարսանյաց հանդեսին։

Թաքավորը երբ տեսավ, սքանչացավ. եղբայրներն ամոթահար եղան. հանդիսականք ուրախացան, ասացին.

— Սա Հուրի-մելեք է, երկնից իջած լույս մ'է։

Մելեք-շահ առավ Հուրի-մելեք, դարձավ տուն։

Թաքավորը լուր հղեց, որ հետևյալ օր Մելեք-շահի հարսանյաց հանդեսին գնալու է. այն չքնաղ հարսը կրկին տեսնելու փափագով։

Մեծ եղբայրները նախանձեցան, յուրաքանչյուրը հազար հինգ հարյուրական ձիավոր իրենց հետ առին, որ իրենց եղբայրն անպատրաստ գտնեն, ամաչեցնեն։

— Ա՛յ կին,— ասաց Մելեք-շահ,— մնացինք ամոթով, մենք ո՞րպես կառավարենք այս ահագին բազմություն։

— Մելեք-շահ ջան,— ասաց Հուրի-փերին, գնա՛ այն քարի մոտ, որ դիս գտար, այս գավազանով երեք անգամ քարին զարկ, ասա. «Ղասապի ճումերտ»[1]. որ երեք անգամ ասացիր, մի արաբ դուրը կբանա, դու ևս կասես. «Հուրի-փերին իր փոքր սեղանը կուզե»։

Մելեք-շահ պատվերի համեմատ կատարեց։ Դարձավ տեսավ աստուծո ստեղծած ամեն տեսակ համադամ կերակուրներ պատրաստ՝ սեղանների վերա զետեղված, ոսկի արծաթ ամաններու մեջ։

Կերան, խմեցին, կեսն ևս ավելացավ։

Հրաման առավ Մելեք-շահ, որ իրենց առաջի ամաններն ևս իրրև նվեր, առնեն տանեն։

Հետևյալ օր Մելեք-շահի մայրն Հուրի-փերին տարավ բաղանիք, որ լողացներ։

Մելեք-շահ Հուրի փերու գորտենին կձգե կրակ, կվառե, որպեսզի այլևս չմտնե գորտենույն մեջ։

Հուրի-փերին անմիջապես ցավ կզգա. թաքավորի կնոջ կասե.

— Քո տղան իմ տունը վառեց, ահա ես կերթամ Ջինումաչին

---

1 Առաստաձեռն մսագործ (Մ. Բ.)։

www.naregatsi.org

քաղաքը, թող ինձ չհետևի, կարող չէ գտնել. և մի ակնթարթի մեջ աղավնու մորթենի կզգենու, կթռչի, կերթա։

Թաքավորի կնիկը տուն կդառնա։

Մելեք-շահ կհարցնե.— Ո՞ւր է Հուրի-փերին։

— «Քո տղան իմ տունս վառեց»,— ասաց. աղավնու մորթ հագավ. «Կերթամ Չինաստան,— ասաց,— թող ետևես չգա Մելեք-շահ, զիս չէ կարող գտնել»։

— Մայրի՛կ,— ասաց,— ես պիտի գնամ, զայն գտնեմ։

— Որդի՛,— ասաց.— նա գնաց Չինաստան, ո՞վ գիտե ո՛ւր է Չինաստան, չես կարող գտնել, մի՛ գնար։

— Չէ՛, մայրի՛կ, պիտի գնամ, գտնեմ. կարոտս առնեմ։

— Որ կգնաս, որդի՛, ես ևս քու հետ կգամ։

— Մայրի՛կ, մի գար, իմ ճանապարհս շատ դժվար ու հեռու է։

— Չէ՛, որդի, չեմ կարող զքեզ թողուլ, գնաս կորսվիս. ես ևս քու հետ կտանջվիմ, քու կերակուրը կպատրաստեմ։

Մայրն ընկավ Մելեք-շահի հետ, գնացին։

Շատ և քիչ աստուծո միայն ծանոթ է, գնացին, տեսան որ իրենց առաջը մի անապատ բացվեցավ. այդ անապատին մեջ մի ծուխ կբարձրանար, շտկվեցան այդ ծուխը գնացին, տեսան որ մի բարձր քոշկ ու սարայ։ Մտան ներս, տեսան որ մարդ-բան չկա, ամեն կահ կարասիք, կրակ, սուրճ ու սրճաման պատրաստ կա։

Թաքավորի կնիկը սրճամանը հրեց կրակի մեջ, սուրճ եփեց ու սկսավ խմել[1]։

Նստան դինջացան[2]։

— Ադե՛,—ասեց Մելեք-շահ,—դու ըստեղ դինջացիր, ես էթամ ձինը ջրեմ։

Որ էնի գնաց ձինը ջրելու, էն սարայու տեր Բաբրոն ա, հուշիկ-հուշիկ էլավ տալտից, ուրը նշանց տվեց թաքավորի կնկան։

Թաքավորի կնիկը խարցրեց.— Դու ի՞նչ մարդ ես։

— Ես էս սարայու[3] տեր Բաբրոն եմ։

— Մե գա՞ս առջ, ես նեղացեր եմ, իմ ոտներս մաժես։

Բաբռ էկավ մաժեց։

---

1 Այս տեղեն կշարունակվի բարբառով (Ս. Բ.)։

2 Հանգստացան (Ս. Բ.)։

3 Պալատ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Ուրանց խոսքերը մեկ արեցին։

Բաբրո ինք խորոտ մարդ էր, Թաքավորի կնիկ վառվավ ըդու սերից։

— Բա՛բրո,—ասեց Թաքավորի կնիկ,—կարո՞ղ ես մե բան խանես ըստու գլուխը, որ մենք մնանք էս քոշք ու սարայի մեջ։

— Դու քեզի կթալես խիվընդութեն, գիշեր որ քնար, սուտ էրազ կտեսնաս, կասես. «Գիշերս էրազիս տեսա, Սև սարը խնձոր կա, որ էթաս էն խնձորից բերես, կուտեմ կսաղանամ»։

Բաբրո էլի գնաց ու զերզանպին տափավ։

Մելեք-շահ ուր ձին ջրեց, էկավ կապեց, գարին տվեց, զայֆե խմեցին, խաց կերան, պառկան քնան։

Լուսը բացվելուն Մելեք-շահ շուտ ուր տեղից էլավ, ձեն տվեց ուր մոր։

Էնի տեղիցը չէլավ։

— Ադե՛, ընչի՞ չես ըլում տեղիցդ։

— Մելեք-շահ, ես ինքս շատ խիվանդ եմ։

— Ապա ի՞նչ պըտի ըլի քու հալդ։

— Ես գիշերս էրազ տեսա։

— Խեր ըլի էրազդ. մե՛ ասա՛, ի՞նչ ա։

— Էստեղ մե Սև սար կա, խնձոր կա, դու բերես, ուտեմ, կսաղնամ։

Մելեք-շահ մնաց շիվար. «Պըտի էթամ, ինչ անեմ, մերս ա»,— միտք արեց։

Էլավ ուր աստվածը ապավինեց. ուր ձինը խեծավ, դպա էդ Սև սարը գնաց։ Էդ սարը մեշելրխ[1] էր, պտրտվըմ էր էդտեղ. երկու ասլան[2] ըռաստ էկան ըդու. էդ էլ Թաքավորի տղա, չճանչընըմ՝ ասլան են։

— Էսի վի՞ր հորթերն ա, մոզրոած ա, ըստեղրանքը պըտրտըմ են։— Ըդոնք լքնան դրպա Մելեք-շահը։

Մելեք-շահ քաշեց թուրը, զարկեց սրպանեց էդոնց. գնաց ծառից մե խուրջին խնձոր լցեց թարկը, էլավ որ գա, ասու հրամանով էրկու ասլանի ձագեր ընկան խըտ ըդու՝ էկան։

Թաքավորի կնիկ ու Բաբրո էլած ին սարայու գլոխ, թամաշա են անըմ։

---

1 Անտառային (Ս. Բ.)։

2 Առյուծ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Թաքավորի կնիկ ասեց.— Դե՜, ա՜, Մելեք-շահ գալիս ա։

Մկա ասլանները էնի ցրվեց իրարուց. էնտեղ ասլաններու վաթան[1] ա։ Մեկ էլ տեսան, որ գալիս ա։

Էլի Բաբրու իջավ գնաց տափ էկավ։

Մելեք-շահ ինքը էկավ իջավ։

Մերը էկավ ղստու[2] մտավ տեղի մեջ, պառկավ։

Մելեք-շահ խնձորները տվեց մորը, ասեց.

— Ի՞նչպեսդ ես, մայրի՛կ ջան։

— Մելեք-շա՛հ ջան, դու էկա՞ր սալամաթ։

— Հրամանք է, ադե, փառք ասու, էկա։

— Խնձոր բերեցի՞ր։

— Բերեցի, ահա՛,— ասեց, տվեց մորը։

Մերը կերավ, ասեց.— Փա՜ռք ասու, կլավանամ, առավոտուն կէթանք։

Էլի Մելեք-շահ ձինը տարավ ջրելու։

Կանչեց թաքավորի կնիկ.— Բաբը՛ռ, արի տենանք «Գացի, հորթիկ եմ սպանե» ասըմ ա, էրկուսն էլ խետը բերեր ա։

— Քո տուն ավիրի, էդի ասլան ա սըպանե. էրկուա էլ խետը բերեր ա, ըդո՛ւ շարա կըլլի՞։

— Ըպա ըդու ի՛նչ շարա կենիս, որ սըպանինք. մենք քեյֆ անենք, կյանք անենք խետ իրար. մե՛ իլաճ արա, ըդու գլոխ կորցընենք։

— Ըդու իլաճ էն ա, որ էն մեկել Սև սարը կա, էնի քառասուն հարամու վաթան ա. էնտեղ ո՛ըը որ էթա, սաղ չդառնա. կփչացնեն։ Կքնես, էրազին կտեսնես՝ էն Սև սարը տանձ կա. «Որ բերես, ես կսաղնամ, որ չբերես՝ ես կմեռնեմ»,— կասես։

Մելեք-շահ քնավ, առավոտա խետ շուտ տեղիցը վեր կացավ, կանչեց.

— Մե՛ր, մե՛ր, անգան ա, էլիր։

— Շատ խիվանդ եմ, ընձի հալ չունեմ. Մելեք-շա՛հ ջան, էրազ եմ տեսեր, էն մեկել Սև սարի տանձը որ չբերեցիր, ես կմեռնեմ։

— Ես ի՞նչ անեմ, ադե՛, ասըմ ի մի՛ գա, դու ինձանից ձեռ չքաշիր, քեզի թողեմ էս չոլերը էթամ, կաթդ կերեր եմ, վախենամ կաթդ ընձի պատիճե։

---

1 Հայրենիք (Ս. Բ.)։

2 Դիտամամբ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Մելիք-շահ ուր աստվածը ապավինեց, ուր ձինը խեծավ, դեմ արաց դրպա Սև սարը, քշեց։

Հարամիքին մե ղուրուխ ունեն, ըդտեղ մի աղբուր կար, գնաց էդ աղբուրի վրեն իջավ, ասեց. «Ես էլ դինջանամ, իմ ձինն էլ»։

Խաց կերավ, իրիշկեց որ սարը մոտ ա, ասեց. «Քնիմ դինջանամ, կէթամ կբերեմ»։

Ղայտը զարկեց ձիու ոտը, քնավ։

Հարամի պաշին դուրպին[1] դրեց վըր աչքին. իրիշկեց, տեսավ մե ձիավոր, իջեր ա ղուրուխի մեջ, կանչեց, ձեն տվեց ուր Հարամիքին։

— Էկե՛ք մե տեհեք, ես իրիշկըմ եմ, մեր ղուրուխի մեջ օձն ուր պորտով, հավքն իր թևով չէկեր էր, գացե՛ք, ընդու գլոխ ընձի, մալը ձեզի։

Էլան չորս ձիավոր խեծան, խա՞ռ էկան. էկան ըդու մոտենալու քիմին, քշեցին, վրա տվեցին, որ ըդու սըպանեն։

Մելեք-շահի ասլանները իմցան, պրծան դրպա էդոնք. ձեռ թալեցին, ձիավորներ ցած բերեցին, ճըղճըղեցին իրարուց։

Հարամի պաշին դուրպին դրեց, իրիշկեց, տեսավ որ տեղպըստեղ փչացրեցին, ասեց.

— Էլե՛ք, մե տաս ձիավոր էլ գնացեք։

Ասլանները էդոնց էլ սըպանին, ճըղճըղեցին։ Իսանի ջանտակը ջոկ են դնըմ, ձիան ջանդակը իրար վրա։

Հարամի պաշին էլի տուրպին դրեց, իրիշկեց։

— Էս ի՞նչ ա, էլի էս մարդիկ փչացան. էն մարդ պառկուկ ա։

Կանչեց, հավարը էցգեց ուր ձիավորներին. ամենքը խըտ իրարի խեծան, Հարամի պաշին էլ խետ դիմավորավ, էկավ դրպա Մելեք-շահ։

Մելեք-շահ քնած ա. ձին էլ էկեր, կայներ ա գլխին վերև, էնքան փեքոլ արեր ա, որ գետին մեկ չոք իջըցրեր ա, չիմանըմ։

Մելեք-շահ իմացավ, որ քիչ ա մացեր ձիավորը ուրը վերցե։

Էլավ ուր ձինը խեծավ, էդ տեղ կռիվ գցեցին. էն որ Մելեք-շահ, ուր ձին են սըպանըմ, էն որ ասլաններն են ճղճղըմ։

Էդոնց ջարդեցին. Հարամի պաշին, ուր նոքարը դարձան, փախան։

---

1 Դիտակ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Մելեք-շահ ընկավ ըդոնց էտև խրկեց[1], տարավ դրպա Սև սարը, էցգեց մեջ մեշին, կուրցրրեց։

Ետ դարձավ, ասեց. «Մե էթամ տենամ, մե վաթան, յաթաճախ տեղ կըլլի՞»։

Գնաց շուռ գալու ընդոնց օթախները, տեսավ ջոկ-ջոկ քառսուն հարամու տեղը։

Քառսունն էլ որ հարամութեն արեցին, տես թե ինչքան ապրանք են լցած։

Ընկավ օթախները շուռ էկավ, մե օթախի էլ ըռաստ էկավ. դուռ բացեց, տեսավ մե զենաքլու[2] կա, որ ձեն տվեց.

— Հա՛, Հարամի պաշի, դո՞ր ես գալըմ դրպա ընձի, մե ձեռս աղուն ա, մե ձեռս խանչալն[3] ա, գաս մոտկընաս, ընձի զարկեմ պըտի սըպանեմ։

Մելեք-շահ ասեց.— Քո՛ւրս, ես էն Հարամի պաշին չեմ. ըդոնց ամեն փչացրեցի. դու ինչ օղուլուշախ ես ըստեղ։

— Մսըրա փաշի աղջիկը՝ Տերվիշ փաշի նշանածն եմ. էս Հարամի պաշին ընձի տաս-տասնըվինգ տարի ա բերած էր էստեղ. ես չէի թողըմ ընձի մոտենա։

— Էնպես դ՝ դու իմ քուրն ես, իսկի հոգ մ՝աներ։

— Որ ես քու քուրն եմ, դու էլ իմ աղբերն ես։

Էլան քուր ու աղբեր իրար խետ։

— Քուրս, էս քու էութեն ի՞նչ ա։

— Ընձի զոռով էր բերեր, հըմի փառք ասու, էկար էդ քյաֆիրի ձեռիցը ազատեցիր։

— Եթե տանես Տերվիշ փաշին ընձի խասցընես, մեծ լավութեն կանես. Տերվիշ փաշան շատ պատիվ կուտա քեզի։

Մելեք-շահ ասեց.— Մերս կմեռնի, էկա որ տանձ տանեմ. քուրս, վեր կա՛ց, ջեհնեմ թե մեռնի, ես քեզի պըտի տանեմ Մըսըր։

— Հարամու պաշու մալը շատ ա. մե ղատր[4] մալ վերցնենք։

Էլան էրկսով ընկան էդ օթախները. բազիրկյանի լավ-լավ ապրանքներ կային, տարան։ Մելեք-շահ գնաց օթախներից էլ մի լավ ձի բերեց. պատրաստութենը տեհան։ Էտ մալից մե ղատր

---

1 Փախցուց (Ս. Բ.)։

2 Փափկակյաց կին (Ս. Բ.)։

3 Դաշույն (Ս. Բ.)։

4 Ջափ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

բարձան, շտկվան դրպա Մըսրը[1], գացին էլան Մըսրա քյավշան-տեհան էդոնց հորթարածները հորթ արծացընում են, կանչեց.

— Փանփուլ, արի՛ էստեղ, կէթաս մուշտուլուխ կտանես Տերվիշ փաշին՝ թե հ՚աչքդ լուա ըլի, Մելեք-շահ առավ ուր քուր Ֆեների-խանում, էկավ։

Էդ Փանփուլ՝ ինք մե քեչել տղա էր. գնաց ձեռ թալեց Տերվիշ փաշի ականջ։

— Տերվիշ փաշա,— ասեց,— իմ մուշտուլուխը տո՛ւ։

— Քե՛չել,— ասեց,— ի՞նչ մուշտուլուխ ա։

Մելեք-շահ ուր քուր Ֆեների-խանումը առավ էկավ։ Ֆեների-խանում ասեց. «Թող առնե մե խազար խատ ասկեր գա»։

Տերվիշ փաշեն մտածեց. «Ֆեների-խանում իմ նշանածն ա. էս Մելեք-շահ ասածը ո՞րը պըտի էլնի»։

Փանփուլ ասեց.— Ընձի Ֆեների-խանում պատվեր տվեց, թե Տերվիշ փաշեն իմ աղբոր առեջ գա։

Տերվիշ փաշեն ծանտր ղոշուն վեր կալավ, էկավ դրպա Մելեք-շահ, ուր քուր Ֆեների-խանում։

Ֆեների-խանում ասեց.— Տերվիշ փաշա, էս Մելեք-շահ ընձի ազատեց. ըստու ի՛նչ աղեկութեն անենք, որ ըստու աղեկութենի տկեն ըլլենք։

— Դե՛, Ֆեների-խանում, դո՛ւ գինաս, քու աղբոր ինչ կամք ես տեսնում։

— Էնի ոչ ձիու փափագ ա, ոչ փողի պետք ա, էնպեսդ լավութեն անենք, որ միշտ ասվի։

Մելեք-շահ էդոնցից խնդրվավ.— Ես էթամ տենամ, մերս ապրա՞վ, մեռա՞վ։

Տերվիշ փաշեն սանթանաթով ճամփու դրեց։

Ճամփու մեջ մե նշան ուզեց քվոր մուտեն Մելեք-շահ։

Մատնիքները փոխեցին։

Տերվիշ փաշան, Ֆեների-խանում դարձան, մասլահաթ տեսան, որ մե աղքատանոց շիքել տան, որ ընդու լավութենի տկից դուս ըլլեն։

— Ինչքան աղքատ ըլի,— ասեցին,— բերենք կերակրենք, որ

---

1 Եգիպտոս (Ս. Բ.)։

www.naregatsi.org

ընդոնք էլ աստված ապավինին, ըդու ջանսաղութեն տա, որ մեկ օր դա մեզի ղոնաղլրխ։

Մելեք-շահը դիմավորավ Բաբրոի վաթանը ու գնաց։

Մելեք-շահի մերն ու Բաբրոն էլ արխային են ընկած. էլած ա սարայու դլոխը սեյր են անում ուրանց համար. մեկ էլ տեսան մե դուման դուս էկավ։

Բաբրոին ասեց թաքավորի կնիկը.— Կարող ա Մելեք-շահն ըլլի էս էկողը։

— Էնպե՛ս տեղ չեմ օղորկե. մկա ընդու[1] օսկրտանք փչացեր ա։

Ընդու դեն սրհաթը էրկուս թըմավ, Մե՛լեք-շահ ինքն ուր ձիով դուս էկավ[2]. էլի Բաբրոը փախավ տափավ։

Մերը գնաց տղի առեջը, բարև տվեց.— Բարով որդի, խազար բարի. էսքան վախտ դու ո՞րտե իր, փառք աստու, սաղ սալամաթ էկա՞ր։

Մելեք-շահ իջավ օթախը. տանձը տվեց մորը, ասեց.— Մերս, թավդիրդ տե՛ս, որ էդուց դուս ըլլենք, էթանք։

Էս խետ Մելեք-շահ տարավ ուր ձինը ջրելու։

Մերը կանչեց.— Բաբը՛ռ, էլ ի՞նչ օյին խանենք ընդու գլոխ։

— Ո՛րտեղ ուղարկինք, սաղ սալամաթ էկավ, էլ էդոր իլաճ չկա, իրանից խարցու-տես, ըդու ինչքան ղուվաթ[3] կունենա։ «Կարելի ա էթանք ուրիշ տերութեն,— ասա,— մեզի դևեր ըռաստ գան, ես իմանամ քո ղուվաթ ինչքան ա. ի՛նչով պետք ա հաղթվես»։

Բաբրոն էլի տափավ։

Մելեք-շահ էկավ, մերը խարցրեց.— Որդի՛, ինչո՛վ կհաղթվես, իմանամ քո ղուվաթ, էլավ որ մեզի դևեր ըռաստ էկան։

— Մե դութնի ջանբարակ բե՛, իմ թևերս կապա։

Մերը կապեց, ասեց.— Մելեք-շահ ջան, քեզի ղուրպան ըլնեմ, դու կարո՞ղ ես կտրել։

Թևերը իրար տալու քիմին, ջամբարակ կտրվավ, օղերը ամեկը մե տեղ թափավ։

— Քե՛ ղուրպան,— ասեց մերը,— քեզի ինչ կաղթե։

— Դե՛,— ասեց,— մե՛րս, ինչ շատ բանի խետն ես հընկեր։

---

1 Մելիք-շահին (Ս. Բ.)։

2 Հայտնվեցավ (Ս. Բ.)։

3 Ուժ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Դե՛, ուզում եմ քո վրեն ծրծղամ. քեֆըս գա,— ասեց մերը։

— Ընձի հաղթողը իմ նետ ու անեղի թելն ա. բեր իմ էրկու բութը կապա։

Էրկու բութը կապեց։

— Մելեք-շահ, մե թափ տո՛ւ տենանք, կարո՞ղ ես կտրել,— ասեց մերը։

Ըդու թափ տված վախտին, միսը կտրեց, մնաց օսկորը։

— Մե՛րս, ասու սերն ըլնի,— ասաց,— միսը կտրեց, ընկավ օսկորը։

— Բաբը՞ռ,— խանչեց մերը,— արի՛ ըստեղ։

Բաբըռը էլավ, էկավ։

Մերը ասեց Բաբըռին.— Արի՛, ըսդու սըպանա։

— Մերս,— ասեց Մելեք-շահ,— ես ինչ վատութեն եմ արե քեզի, որ ընձի սըպանել ես տալըմ։

— Բա՛բը՞ռ, սըպանե,— ասեց մերը։

— Դո՞ւ քո աստված, սըպանել ես տալըմ սըպանել տու, աստված քո դիվան էնա։

— Բա՛բը՞ռ, արի Մելեք-շահին սըպանա։

— Ափսոս ա Մելեք-շահ, ընչի՛ սըպանենք, աչքերը խանենք, տանենք, մե քառասուն գազանոց խոր կա, քցենք ընդու մեջ։

Աչքերը խանեցին, տարան քցեցին խորը։

Էդ ձին, ասլանները գնացին խետը։

Մելեք-շահ մնաց խորի մեջ։

Ասլանների սովորութը՝ որ էթող-գալող ըլներ, կէթին առաջը, խաց կըլներ, կերակուր կըլներ, կառնին, կեսը իրանք կուտին, կեսը խորը կքցին։

Մելեք-շահ մե վախտ էդպեսդ ապրեց։

Մե վախտ Մըսրա փաշի բազրկյանը գացեր էր խրիտ անելու, ետ դարձավ, էկավ մե գեղ իջավ, ըդուն ասեցին.

— Ճամփի վրեն, որ դու էթըմ ես, էրկու ասլան ա փայտահ էլե։

Ասաց.— Ըպա ի՛նչպեսդ պըտի անցնենք։

— Ասլանները մարդի չեն դպչի, մարդի կշտի խացը կառնեն։

Բազրկյան պաշին նոքարներին հրամայեց, մե ոչխար առան,

www.naregatsi.org

բիրյան շքեցին, խացի խետ փեշանք ձիուն վրեն դրեցին, էկան ասլանների դեմը։

Ասլանները էկան, դաստախունով էդ բիրյանը քցեցին ընդոց առեջ։

Ասլանները վերցրեցին, գացին դպա խորը։

Մեծ մարդը ախր խելքով կըլլի։

Էդ բազրկյանը ըդոնց էտևից գնաց, տեսավ որ ասլանները բիրյանը կիսեցին, կեսը իրանք կերան, կեսը քցեցին խորը։

— Էթամ, իրիշկեմ, տենամ ի՞նչ կա էդ խորը։

Գնաց, ձեն տվեց, տեհավ մե իսանաթի ձեն էկավ, ասաց.

— Դու ի՞նչ մարդ ես ըստեղ։

— Քոռ մարդ եմ, ընձի թալած ա խորը, աստրծու խերին՝ ընձի խանա։

Կանչեց իրա նոքարներին, շիրիտները թալեցին խորը, խանեցին Մելեք-շահը։

Բազրկյան դրեց ուր ձիուն վրեն, տարավ Մըսըր, որ գնա էն աղքատանոցը։

— Բազրկյան, դո՞ր ես տանըմ ընձի,— ասեց Մելեք-շահ։

— Մըսըր Ֆեների-խանըմ կա, աղքատանոց շքեր ա, քըզի գլխի վրեն կընդունա։

— Ընչի՞ են շիքած։

— Ֆեների-խանըմ ուր աղբոր խաթրի խամար շքել տված ա. որ ընդու էնքան լավութեն արած ա, աղքատները, քոռերը, խիվանդները, կուտեն, կխմեն, աղոթ կանեն Մելեք-շահի խամար։

Էդ բազրկյանը տարավ տվեց Տերվիշ փաշին. տարան էդ քոռին աղքատանոց։

Էդ աղքատների սովորութքը՝ առավոտնե առավոտ ըլնըմ են, աստված են ապավինըմ, ասըմ են. «Կարելի՞ ա Մելեք-շահ մեկ էլ գա ուր քուր Ֆեների-խանըմին ղոնախ, աստվա՛ծ, ընդու ջանսաղութեն տաս»։

Մելեք-շահ միտք արաց. «Մելեք-շահ ասած՝ ես եմ. Ֆեների-խանըմն էլ իմ քուրն ա»։ Կանչեց ղայվաչուն, ասեց.

— Ղայվաչի, դու քու աստվածը, կէթաս Ֆեների-խանումին կասես, որ ինքը ըլլի ուր աղբոր Մելեք-շահի արև՝ ուր օսկե ֆրնճանով որ ղայվա ա խմըմ, մե թաս օղորկե գա, ես խմեմ։

www.naregatsi.org

Ղայֆաչին գնաց, Ֆեների-խանումին ասեց. Ֆեների խանում որ Մելեք-շահի անուն լսեց, ասեց.

— Դե՛, շուտ արեք, որ Մելեք-շահի անուն տվեր ա, իմ օսկեթասի մեջ լից, տա՛ր ընդուն։

Լցեց, տարավ Մելեք-շահին։

Մելեք-շահ ձեռնիցը առավ, մե-էրկու ղում խմեց, ըդու մատնիքը քցեց թասի մեջ, կանչեց ղայվաչուն, ասեց.

— Ղայվաչի՛, դու քո աստվածը կսիրես, ձեռդ կդնես էդ թասի վրեն, տանես տաս Ֆեների-խանումին, կասես. «Ինքը ըլլի ուր աղբոր արև, թող էս իմ կիսատ թասը խմա»։

Տարավ տվեց Ֆեների-խանումին, ասեց.— Ինչ արեցի, շարամուքուն չեղավ էն քոռի խետ. կասա. «Ինք էղնի ուր աղբոր արև, էս թասը թող խմի»։

Առավ խմեց, ասաց.— Որ աղու[1] ըլլի, որ իմ աղբոր անուն տվեց, պըտի խմեմ։

Խմած վախտին մե զրնկոց էլավ թասի միջեն, մատը պարզեց, խանեց, տեսավ մե մատնիք ա, սրբեց. տեսավ ուր մատնիքն ա, կարդաց ուր ֆամիլյան, ասեց.

— Ղայվաչի՛, կէթաք էն քոռ մարդուն էնպե՛սդ կբերեք, ըսկի ինչիմիշ չըլլի։

Գացին վերցրին, առան էկան։

Ֆեների-խանումը իրիշկեց, տեսավ ուր ախպեր Մելեք-շահն ա, փաթըթվան, լացին։

— Աղբե՛ր, էդ ի՞նչ օղիաթ էկեր ա քո գլոխ։

Ուրախացան իրար վրա. նստան քեֆ-ուրախութեն արեցին։

— Էս բանի սեպեպ իմ մերն էլավ. բեղիրկյան իմ ձին, ասլաններ բերե՞ր ա։

Ֆեների-խանում մարդ օղարկեց, առավ էկավ, տվեց պահ։

Տերվիշ փաշեն, Ֆեների-խանում նստան, միտք արեցին. «Ախր մենք ի՞նչպեսդ բան բռնինք, որ աստվածութեն օղորմանա իմ աղբեր Մելեք-շահին, բյալքի աչքի լուս տա»։

— Կնիկ, դո՛ւ գինաս, ինչ որ դու կամք ես տենում։

— Աշխարքս հիմի թանգութեն ա, անոթի են, մեր խազինի բերանը բացենք, ամպրների բերանը բացենք, ամեն ցրվենք դուս, օղորմութեն տանք, որ աստվածութեն ընդու օղորմանա։

---

1 Թույն (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Բերեցին ամպրների, խազինի դռները բացին, ցրվեցին, ասեցին.

— Աստված կապավինենք, որ ընդու աչքի լուս տա։

Մելեք-շահի՝ ուր սովորութեն էլ էն էր, ըդու դռան առեջ մե չինարի ծառ կար, աղբուր կար, էթըմ էր ընտե քնըմ։

Մեկ օր տեսան, որ մե ջուխտ հուրի էդ ծառի վրեն իջած ին. ըդոնք խրտ իրար խոսացին, էն մեկը, էն մեկին վերցրեց.

— Քո՛ւր, էս ո՞րն ա ըստե քնողը։

— Մելեք-շահն ա, Մեյմուն խանըմի նշանածը։

— Ընչի՞ խամար քներ ա։

— Ըդու աչքերը խանած ա, իլաճ չունի։

— Յարապ, կարե՞լի ա սաղանա, ըդու իլաճը ի՛նչ ա։

— Աստվածութեն օղորմացեր ա ըդու, դուա շատ օղորմութեն տված, աստված են ապավինած. մենք թռելու ետք՝ մեղնից թեպուր կընկնի, որ էնի իմաց ըլլի՝ էն թեպուրը վերցե, ուր աչքերը ջեպից խանա, մեջ էս աղբուրին թրջա, դնա տեղը. էն թեպուրը քաշե մեջ էն ջրին, ուր աչքեր քսա, կսաղնա։

Էդոնք թռան, թեպուրը վեր ընկավ։

Մելեք-շահ իմցավ.— Յարա՛պ, էս էրա՞զ էր, ի՛նչ էր։

Ձեռը պրտրտեց, տեսավ՝ էդ թեպուրը ընկավ ըդու ձեռ, ասեց.

— Փա՛ռք քե, աստված. աստվածութեն ընձի օղորմացեր ա։

Ձեռ տարավ ուր ջեպ, աչքերը խանեց, չորցեր էր. առավ մեջ ձեռին. հավրդին մեջ տրորեց, կակղցրեց, դրեց տեղը։ Թեպուրը քաշեց ջուրը, բերեց քաշեց ուր աչքերը։

Աստվածութեն օղորմացավ ըդու, սաղցավ, ազատավ։

Աստվածութեն նեղ մարդերին էնպեսդ օղորմանա։

Մուժդա տարան քվորը.— Աչքդ լուս ըլլի, աստվածութեն օղորմացավ, Մելեք-շահի աչքերը սաղցավ։

Քուրը ուրախ-ուրախ էկավ, փաթաթվավ աղբորը վիզը, շատ ուրխրցավ. փառք տվեց աստուն, գացին նստան իրար խետ։

— Իմ ասլանները, իմ ձին լավ պախե՞ր ես, քո՛ւր,— ասաց Մելեք-շահ։

— Հրամանքես, Մելեք-շահ, էնպեսդ պախեր եմ, որ ջուրը յալից լցես, սաղրից կուգա, կթափի։ Ասլաններն էլ էնպեսդ եմ պախեր, որ ուրենց պոչը կեռեր, էկեր առեր վրը ճակտին։

www.naregatsi.org

Ասեց.— Քո՛ւրս, ընձի դասաս[1] ունեմ, պըտի էթամ. իմ ձին, ասլանները օղորկա, գա՛։

Օղորկեց, առավ էկավ, շատ ընտիր պախեր էր, շատ հոժար էլավ քվորից։

Խեծավ, գնաց դրպա մերը։

Բաբրուն ու մերն էլ կերած՝ խմած, էլած ուրանց խամար քեֆ են անում. իրիշկեցին մե թոզ ու դուման ա գալում, զարդանդը ուրանց կոխեց, ասեցին.

— Յարապ, չըլլի՞ Մելեք-շահը ըլլի։

Սահաթը իրեքը չթմեր ա, Մելեք-շահ ուրին խասուց սարայը։ Բաբրուը փախավ, տափավ ուր զերդամպին. մերն իջավ առեջ։

— Վա՛յ Մելեք-շահ ջան, քու ճամբխըներին ղուրպան, քեզ ղուրպան, քեզի ի՞նչ էր պատախեր, որդի՛, դո՞ր էր գացեր։

Ձիուց իջավ, կանչեց.— Բաբը՞ռ, շանորդի՛, դուս արի։

Բաբրուռ դուս էլավ, ուրին թալեց Մելեք-շահի ոտի վրեն, պագեց, ասեց.

— Մի՛ սըպաներ, իմ մեղքի տակ մի՛ մտնի։

— Քեզի մեղք չկա, էլի՛ վեր։

— Մե՛րս, ես քեզի ի՞նչ վատութեն արեցի, որ դու էս օյին իմ գլխիս խանեցիր։

Լալկվավ մերը, չկարցավ պատասխան տեր։

Կանչեց ասլաններին. խասան, ամեքը ըդուն մեկ ճվից բռնեցին, քաշեցին, ճըղճղեցին, գզըզնեցին. ճեհնեմե վյասիլ արեցին[2]։

Մելեք-շահ Բաբրուին ազատ արեց. դարձավ էլի էկավ Մըսըր, ու քվոր ղոնախ էլավ։

Նըստան խըտ իրար ուրախցան։

— Քո՛ւրս, ես պըտի էթամ իմ նշանածի էտև։

— Քու նշանածը, Մելեք-շահ ջան, ո՛ր տեղն ա,— ասաց քուրը։

— Իմ նշանածը Ձինումաչինա թաքավորի աղջիկն ա, պըտի էթամ. իմ ասլանները, իմ ձինը կուտամ քեզի ամանաթ. ըստուց էտև ղըմլախ ա, ձի չի բանում։

Էլավ ուր աստված ապավինեց, ուր ճանբախ ընկավ, գնաց։

---

1 Մեկուն արած վատության փոխարեն վրեժ լուծել (Ս. Բ.)։

2 Դժոխք ուղարկեցին (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Շատ ու քիչ աստված գինա. գնաց մե ղըմլախ[1] տեղ՝ որ իրեք խոգի, աճրճ-մաճրճ[2], էդ տեղ դըրպ դրած իրար զանըմ են, ըդոնց թրեր էլ փետից ա, ըդոնց դամենչեքն[3] էլ փետից ա. իրար փրթած ին, ըմալ ին փրթած, որ արնի մեջ իրար շաղած ին։

Էդի ասեց.— Աղբրտանք, ընչի՞ խամար եք կռիվ անըմ։

Ըդոնք ըդու ասեցին.— Մեզի հայրենական մալ ունենք։

— Ձեր հայրենական մալը ի՞նչ ա։

— Մեկը մի խալիչա ա, մեկը մե քոլոզ, մեկը մե չպուխ ա։

— Ըդոնց շնորհք ի՞նչ ա։

— Ըսկի դու զազութեն արե՞ր ես, որ մեր մալը կիսես։

— Օխտը տարի իմ խոր զազութեն եմ արեր։

— Դե՛, լավ, դու մեր մալը փայ կանես։

— Դե՛, բերեք էդ իրեքն էլ տվեք ընձի, բաժնեմ։ Ըդոնց ի՞նչ խունար ունեն, որ դուք դավի եք անըմ։

— Խալիչին մե էնպեսդ հունար ունե, որ դնես, նստես վրեն, քոլոզը դնես գլոխդ, չիպուխը առնես ձեռքդ, որ զարկես, ասես. «Ընձի տար Զինումաչին», էն սահաթին կխասու։

— Շատ լավ, խալիչի հունարը է՛դ ա, քոլոզին ի՞նչ ա։

— Ինչ որ քոլոզը դնես քո գլոխը, մտնես ինչ շհարի մեջ, ըսկի իսան քեզի չտեսնա։

— Ձեր թրերը տվեք,— ասեց Մելեք-շահ։

Թրերը առավ, ասեց.— Ես ձեր շառը կկտրեմ, մեկ-մեկ թալեմ ձեր թրերը, դուք կէթաք թրերու էտևը. որը շուտ էկավ՝ խալիչեն կըտամ. որը ետ էկավ՝ քոլոզը. էն ետ գալողին էլ չիպուխը կըտամ։

Ասեցին.— Էսի շատ լավ ա,— զապուլ արեցին։

Էդի վերցրեց, էս յանը, էն յանը թալեց։ Մելեք-շահն էր, որ թալեց, գնաց իրեք ավուր ճանբախ հեռուն ընկավ։

Ըդոնք գնացին իրանց թրերի էտև. Մելեք-շահն խալիչեն գցեր իր տակը, քոլոզը դրեց գլոխը, չիպուխը առեց ձեռքը. զարկեց գնաց էլավ Զինումաչին։

Եր խասավ Զինումաչին, խալիչեն, քոլոզը ու չիպուխը կապեց, գնաց մե ղայվախանա. տեհավ ընտե պախս են անըմ, թե՝ էգուց պըտի Հուրի-մելեք-Մեյմուն խանըմին խեղդեն, յարապ, ի՞նչ մասի են խեղդըմ։

---

1 Ավազոտ (Ս. Բ.)։

2 Թզուկ (Ս. Բ.)։

3 Աարճանակ (Ս. Բ.)։

17—2573

www.naregatsi.org

էն մեկելը ասեց.— Գնացեր, խողածինը առեր ա. ի՞նչ անում են, ձեռ չքաշում. հրաման արեր ա թաքավորը ուր էլին, որ սապախտան բերեն, խեղդեն. սապախտան պըտի չառ կանչեն, որ ամեն դան թամաշա։

Սապախտան տեսան որ Հուրի-մելեք խանումին լալով, տրորվելով բերում են, ասեցին.

— Արի՛, խողածնից ձեռ քաշա, որ չխեղդեն։

Տղեն քոլոզը գլոխը դրած՝ հազը կանգնած էր։ Բերեցին կախեցին դարաղաճից, վեր քաշեցին, որ խեղդվի. քաշած վախտին Մելեք-շահ թուրը թալեց, շիրիդը կտրեց, վեր ընկավ էդի։

Էլի ասեցին.— Դու էն խողածնից ձեռ քաշա։

Ասեց.— Անկարելի բան ա, խեղդում եք, խեղդեք, ես նրանից ձեռք չեմ քաշում։

Էլի շիրիդ թալեցին վիզը, էլի թուրը թալեց, կտրեց։

Իշխան մարդիկ ասեցին.— Կարելի ա ըսդու աջալը չի էկե, մի՞ք խեղդի։

Վերցրին տարան խոր կուշտը, նստեց տարեկուսած։

Մերը կասե.— Արի՛, խողածնից ձեռ քաշա։

Ինչքան ասեց, իլաճ չէլավ. ասեց.— Ես խողածնից ձեռ չեմ քաշեր, որ չեմ։

Մելեք-շահ գնաց դայլեքը, ասեցին.— Ցարապ, իմալ տղա ա Մելեք-շահ, որ աղջիկը ընդուց ձեռ չի քաշում։

Էն մեկը ասեց.— Ցարա՛պ, Մելեք-շահ ըստե ըլի, լավ տղա ըլի, կըլի որ թաքավորի քուրը մե իլաճ անի ընդու։

Մելեք-շահ միտք արաց, գնաց դրպա թաքավորի քվոր. մտավ դարկահներից ներս. տեսավ խացկերույթք են անում։

Թաքավորի քուրը, ուր աղջիկը ու տղեն են նստած իրար խետ խոսում, էլի էդ Հուրի-մելեքի պախսն են անում. ասում ին.

— Հուրի-մելեք ձեռ չքաշում ա. յարապ, ըլի որ ըստե պատախի տղեն, որ դու տենաս, խավնես. ըլի որ մե իլաճ անես։

Ասեց.— Վատա ու շարդ ըլի ասսու առեջ, որ էդ տղեն ես տենամ, խավնեմ. էթամ թաքավորից ինթիմաս[1] անեմ, էն աղջիկը առնեմ, տամ էն տղին։

Մելեք-շահ ընտե կայներ ա, անկաջ անում ա, ասեց.

---

1 Խնդիրք (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Վալա՜, պըտի ըդու նշանց տամ ընձի։

Դեմ ու դեմ կայներ էր. քոլոզը թեքեց։ Աղջիկը ասեց.

— Ըստե մարդ ա էրևըմ։

— Որդի՛,— ասեց,— ո՛րն ա ըստե, դարկահները ամեն կապած են։

Տղեն ուրը նշանց տվեց, աղջիկը ասեց.— Ահա, ադե՛, ըստե մա՜րդ ա էրևըմ։

Տղեն ուրը ամենին նշանց տվեց, ասեց.— Հուրի-մելեքի նշանածը ես եմ։

— Որ դու ես,— ասեց թաքավորի քուրը,— դու ըստե մացի, ես էթամ թաքավորի կուշտը։

Գնաց թըխ թաքավոր, որտեղ նշանց տվեց, նստեց։

Թաքավորը ասեց.— Խերն ըլլի, ընչի՞ ես էկեր էսպես վախտը։

— Քեզի խետ բան ունեմ։

— Ի՞նչ բան ունես։

— Էկեր եմ քո կուշտ ինթիմաս։

— Ի՞նչ շատ բանի խետ ես ընկեր։

— Որ դու էն տղին տենաս, կըլլի որ Հուրի-մելեքին էն տղին տաս։

— Դե՛, քուրս, ես տենամ, խավանեմ, կուտամ։

Մարդ օղորկեց, տղեն առավ էկավ, տեհավ որ դոնից մտավ, շատ ընտիր դուր էկավ թաքավորին, էլավ կայնավ։

— Քուրս, ես իմ աղջիկ հալալութենով տվեցի էդ տղին։

Բերեցին օխտը օր, գիշեր ցերեկ խարսնիս արեցին։

Էս խետ մե վախտ մացին էս Քաջանց թաքավորի կուշտը, կերան-խմեցին։

Ժամանակ էկավ, ուր խոր քաղաք միտք ընկավ, լացավ մե օր։

Զոքանչը տեսավ լալըմ ա, ասեց.— Մելեք-շահ ջան, ընդի՞ խամար լալըմ ես, Հուրի-մելեքի նման նշանած ունես, ընձի պես զոքանչ ունես, Քաջանց թաքավորը աներդ ա, էլ ինչ խոդ ես անըմ։

— Ես ինքս էլ թաքավորի որդի եմ. իմ էլս, վաթանս, դավըմ-դարդաշ[1] միտքս ա ընկեր։

Զոքանչը թաքավորին ասեց.— Մելեք-շահ միտք ունե էթալու։

Թաքավորը ասեց.— Որդի՛, միտք ունես էթալու, քե իզին ա։

---

1 Ցեղ, ընկեր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Որ դու ընձի մուրախաս անես՝ կէթամ։

Պատրաստութենը տեսան, Հուրի-մելէք ասեց.— Մենք օր կանք, հուրի ենք, ըսկի շեհյարները չենք մտնի, ես կառնեմ իմ քառասուն ղարավաշ[1], կէթամ էն Սև քարը, դու էլ էտևանց արի։

Հուրի-մելէք վերցրեց շատ մալ ու դուվլաթ ուր խորից, էկավ, իջավ Սև քարը։

Մելէք-շահ ուր պատրաստութեն տեսավ. զոքանչի, աների խետ հալալլաշմիշ էղավ։

— Աղ ու խաց հալալ արեք,— ասեց,— ըսդուց ետև իրար չենք տեսնար։

Էլավ ուր աստված ապավինեց, քոլոզ դրեց գլոխը, խալիչին չպխով զարկեց, ասեց.

— Խալիչա՛, քեզնից ուզում եմ, ընձի վերցնես, Մըսրրա մեջ Տերվիշ փաշի, Ֆեների-խանումի կուշտը դնես։

Գնաց Մըսրրա մեջ իջավ. գնաց ուր քվոր կուշտը։

Քուրը շատ ուրխըցավ։

— Գալուստդ բարի, աղբեր ջա՛ն, խազար բարի, ի՞նչպեսդ արեցիր։

— Փառք աստըծու, նշանածս առա։

— Ընչի՞ չբերեցիր, որ մենք էլ մեր փափադն առնեինք։

— Ընդոնք որ կան՝ հուրի են, ըսկի շինութեն չեն մտնիր։

Քեֆ-ուրախութեն արեցին։

— Քո՛ւրս, իմ պատրաստութեն տես, շնորհակալ եմ։

Առավ ձինը, ասլանները. քուրը գաթա թխեց, մուրթուզա[2] շքեց, պաշար դրեց։

Առավ ուր ձին, ասլանները, գնաց։

Էս խետ էկավ էն Սև քարի առեջ կայնավ, ձեն տվեց.— Ղասապի ճումերտ։

Արապները էլի թավարզեքը թևին՝ դուս էլան քարից։

— Մելէք-շահ,— ասեցին,— աշխարքը ավիրե՞նք, թե շիքենք։

— Ո՛չ ավիրեք, ո՛չ շիքեք, Հուրի-մելէք ղարավաշների խետ էկե՞ր ա։

---

1 Աղախին (Մ. Բ.)։

2 Հալվա, խորիս (Մ. Բ.)։

www.naregatsi.org

— Փառք աստրծու, սաղ սալամաթ էկավ։

Կանչեց, դուա էկավ։

Պեղենմիշ էլեր ա խըտ ղարավաշներիս։

Միտք արեց ուր մեջ Մելեք-շահ։ Դարձավ էլի Սև քարը, ձեն տվեց արապներին, դուա էկան։

— Հա, Մելեք-շահ, աշխարքը ավիրե՞նք, թե շիքենք։

— Ո՛չ ավիրեք, ո՛չ շիքեք, իմ աղբրտանք իմ խոր սըպանած՝ քաղաք ղաֆթած են, ձեզնից շա՛տ ասկար ուզըմ եմ։

Շատ ասկար թափան դուա, էնպեսդ որ աստղերին հսապը կա, ասկարին չկա։

Ասկարը ուզըմ ա շահյարը փչացնա, քաղքի բոլորը փաթ-տեր ա։

Խելքով մարդ կար.— էլե՛ք, սիվտակ մորուա մարդիկ, էթանք տեսնանք, էս ի՛նչ բան ա բռնած։

Քանի ընտիր մարդիկ գացին Մելեք-շահին դեմ, գլոխ տվեցին.

— Թաքավո՛ր, էս ինչ ա, վի՞ր վրեն էթըմ ես, չենք գինըմ վիր վրեն ղազապի էկեր ես։

— Ես էկեր եմ, ձեր թաքավորը, վաքիլ, վազիրը փչացնեմ, դու ըսկի իհթիաթ մեք անե[1]։

Գնաց ասկարը քաշեց մեջ շահյարին. թաքավոր, վաքիլ, վա-զիր փչացրեց։

Ջառ էցդեց մեջ շահյարին, կանչեցին թե.— Ես թաքավորի տղեն՝ Մելեք-շահն եմ, ըսկի իհթիաթ մեք անե, ըստուց էտև ձեզի լավ կպախեմ, պախպանեմ, անֆոդ մացեք։

Բերեց թազա վաքիլ, վազիր դրեց, շատ ատալեթ թաքավորու-թեն՝ ուղիղ դատաստան արեց։

---

[1] Երկյուղ մի անեք (Ս. Բ.)։

www.naregatsi.org

21. ՀԵԼՈՒԶԱԿ ԹԱԳՈՒՀԻՆ

Արևելյան կողմ մե քաղաք կա, մե թաքավոր. էդ թաքավորը մե տղա ուներ։ էդ տղեն իրեք տարի կարդաց, ավարտեց։ Էնպես քաջ դուրս էկավ որ՝ ձեռ քցում էր հ՚ընկերներին։ Թևերը մնում էր իրան ձեռը, հ՚ընկերները ընկնում, մեռնում ին։

Էդ տղի զարպին՝ գանգատավոր էլավ քաղաքացին.— Ջենք կարա քաշի նրա ձեռը, որ էրեխից կտրեց մեղի։

Թաքավորը աքսորեց իրան էրեսից։ Տղեն էլավ, իրան մե ձի վերցրեց, մե ձեռք ասպապ՝ գնաց, ընկավ երկրե-երկիր, ղուշ ուշ-մազ՝ ֆերվան ֆյոշմազ[1], շատ ու քիչ աստված գիտա, գնաց մե քոշք ու սարի ըռաստ էկավ։ Տեսավ մե աղջիկ սարի ակուշկից կախ էր ընկեր։

— Խողածի՛ն,— ասաց,— օձն ուր պորտով, խավքն ուր թևով էս տեղրանք ման չէր գար, դու ի՞նչպես ես ման գալում։

— Քո սերն ընձի բերեց։

— Խողածի՛ն, գնա՛ ըստուց, մկա Բոզ դևը կգա, քո մեծ փերթն քո ականշ կթողի։

— Խնդրում եմ, էդ ախ ընձի մի՛ տուր, սիրելի՛, մե կտոր խաց տո՛ւր, ես ուտեմ, իմ ճանապարհով էթամ։

---

1 Ո՛չ թռչուն կթռչի, ո՛չ կարավան կրանի (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Աղջիկը խաց իջացրեց շրտով, կերավ, ասաց.— Աղջի՛, Բոզ դեը ո՞ր սարը գնացեր ա, որ ես չէթամ։

— Էդ առաջիդ սարն ա, որ տենում ես։

Տղեն էլավ, մախսուա էն սարով գնաց։ Գնաց, տեսավ Բոզ դեը մե գերան դրեր թևին, մե նախիր ճին ու ջանավար առեջը՝ գալում ա։

— Բա՛րև,— ասաց,— խողածին, էս օխտը տարի ա, իմ ատամ ցավում ա, խողածնի միսը իմ ատմին դեղ են ասե։

— Էդ ատմի ցավը հա՛ էդպեսդ պըտի մնա։

— Դու խողածին ես, էդպեսդ ամպախ-զամպախ մի՛ խոսա։

Ասեց, իր ձեռքի գերանով տղին մե զարկեց։ Աստված պախեց։ Տղեն քաշեց թուրը, խասավ ըդու, գլոխը կտրեց, հ՚ակնջները վերցրեց, քցեց խուրճինը, էկավ աղջկա կուշտը, ասեց.

— Աղջի՛, դուռը բաց, էս էլ դեի հ՚ակնջներ։

Աղջիկը ձեռաց էլավ, օթախները վարդաջրեց, անուշահոտն ընկավ օթախների մեջ, անուշ-անուշ կերակուլներ էփեց, կերան ու էլան քնան։

Աղջիկը ասեց.— Ես քեզի խամար սպասում էի։

— Դրուստ ես ասըմ, ես քեզի հ՚առաջի խետ «քուր» եմ ասեր։

— Օր դու «քուր» ես ասեր, ախիրաթտա[1] իմ աղբերն ես։

Քուր ու աղբոր պես քնան։

Առավոտուն լուսը բացվավ, տղեն ձինը դուս քաշեց, խնծալի

Քուրը ասեց.— Էդ ճամփով մի՛ գնար, Կարմիր դեի մեքյան ա։

— Պըտի էթամ, անկարելի ա։

Ղանչեց աստված, գնաց։

Դար դուպա, դյարպանտ բե դուպա, հ՚ընկավ ճամփախ, ղանչեց ուր աստվածը, մե քոշք ու սարի ըռաստ էկավ։ Տեսավ ակուշկից մե նազանի կախ ա հ՚ընկեր, բարև տվեց, աղջիկ բարևն առավ.

— Խազար բարի էկար, խողածի՛ն, մարդ ըս տեղրանք չէր կարող գար, ի՞նչպեսդ էկար։

— Աղջի՛, ի՞նչ կխարցնես, սուված իմ, մե թքյա խաց տո՛ւ, ուտիմ։ Աղջիկը իմցավ որ սուված ա, խաց տվեց։

---

1 Ծհամիրյան (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Աղջի՛, Կարմիր դևը ո՛ր սարն ա գացեր։

— Էդ Սև սարի մեշեն։

Բռնեց մեշեն, գնաց։ Տեհավ որ Կարմիր դևը գալում ա։

Տղին օր տեհավ, պոռաց.— Խողածի՛ն, չըլլի որ Բոզ դևը սպաներ ես, ըստե էրևում ես։

— Ճշմարիտ ես ասում, ընդու սպաներ եմ, քեզի էլ կուշտը դնեմ։

Դևի հերսն էլավ. ծամերը պիզապիզ էլավ գլխի վրեն, աչքերը մթնտաց, սիրտը փորի մեջ կտոր-կտոր էլավ. իսկն իմացավ, որ խողածինը իր աղբոր սպաներ ա։ Թռավ վեր, թևի վրիցը գերանը ձեռը առավ, խողածինին շրփրրտեց, գերանի խաստ գլոխը առավ գետինը, դընկըռդամա[1] վեց վերստ գնաց, զատն[2] ընկավ։

Խողածին Բոզի միջից հ՚աչքեր բացեց, որ ինք սաղ ա։

Քաշեց սուրը, խասավ դևին, գլոխը կտրեց, հ՚ականջներն էլ վերցրեց, գնաց աղջկա կուշտը, ասեց.

— Էս գիշերը ղոնախ եմ քեզի, աղջի՛, ահա էս էլ հ՚ականջներ։

Աղջիկը օթախը վարդաջրեց, տղին ներս առավ, ասեց.

— Ես շատ շուտով քու ճամփախ իշկում ի, խողածի՛ն։

— Հ՚առեջ ես քեզի չըսի՞ քի. «Քո՛ւր, ընձի խաց տո՛ւ»։

— Որ ընձի քիքիր ես ասում, ախիրաթտա իմ աղբերն ես։

Հ՚առտուն էլավ, ձինը քաշեց, ճանապարհ ընկավ։

— Էդ ճամփով մի էթա, կիտան-կելմեզ[3] ա,— ասեց աղջիկը։

— Աստվածս վկա՝ ես էս ճամփով պըտի էթամ։

Ղանչեց աստված, գնաց. շոլ շալիստան, պաճրիյապան[4]։

Էդ ճանապարհը դայրը[5] ղու չէր անում։ Գնաց մե քոշք ու սարի ըռաստ էկավ. տեսավ, որ մե աղջիկ կախ է հ՚ընկեր, իշկում ա։ Էս աղջիկը արևին ասում ա՝ դու դուրս մի հ՚էլնիր, ես կէլնիմ. աշխարքին պոլ իմ. որ ջուրը խմում ա, պողղից կըլտըր, կըլտըր էրևում ա։

— Բարև քե՛զ,— ասեց,— աղջի՛կ։

---

1 Փայտ մի երբ ձգես, երկու ծայրերն փոփոխակի գետնին զարնելով կերթա (Ս. Բ.)։

2 Հետուն (Ս. Բ.)։

3 Գնացող-ետ չեկող (Ս. Կ.)։

4 Մեծ անապատներ, օտար ծովեր (Ս. Բ.)։

5 Թուչունը (Ս. Բ.)։

www.naregatsi.org

— Ա՜յ խաղար բարին, իմ գլխին, իմ էրեսին էկար, դու թաքավորի որդի՛, էս Սև դևի մեքյան ա, ո՞վ կարներ ըստե գեր, որ դու էկեր իս։

— Սերդ ի ընձի ըստե բերեր ա։

— Սերով կենաս, խողածի՛ն։

— Սուված իմ, նազանի, մե թքյա խաց իջացրա, ուտեմ։ Խաց իջացրեց, տղեն կերավ ու ասեց.

— Սև դևն ո՞ր կողմն ա գացեր։

— Էդ Սև դևը ծովի ղրաղի սարը գնացեր ա ավղուշ։

Իսկը տղեն գնաց դեպի դևի դեխը։ Տեսավ Սև դևը էն յանից գալում ա. ճին ու ջանավար տվե հ՝առեջն, մե գերան էլ դրեր թևին, ժողվեր՝ բերում ա. հ՝աչքն առավ խողածնին, ղանչեց.

— Զըլլի՞ Բոզ դևին, Կարմիր դևին սպաներ իս։

— Դո՛ւ ասեցի՛ր. չե՛ս վախենում, քեզ էլ պըտի սպանեմ։

— Վա՛յ,— դև ասեց,— խո՞ղ էկեր՝ ընձի ծածկեր ա։

Սար ու ձոր դևի հ՝աչքին մթնան, ծամերը գլխի վրեն պիզ-պիզ էղավ. գալարն ընկավ դևի փոր, հ՝աչքները բրտեց։

— Խողածի՛ն,— ասեց դևը,— հ՝առաջս ընկիր, էսօր իրավունք չկա։

Առավ իր տունը գնաց, խացը կերան, դևը ասեց.

— «Խաց ու գինին, տեր կենդանին», քո տան պես արխային քնի, ես մուխաննաթ մարդ չեմ։

Քնավ։ Որ բարի լուսը բացվավ, խաց կերան, ղանչեց դևը.

— Խողածի՛ն, թատպիրդ տե՛ս, մեր կռիվը կռիվ ա։

Հ՝էլան, մտան մեյտան։ Տղեն քաշեց սուրը, Սև դևը վերցեց կյուրզը, խասան հ՝իրար. մինչի կեսօր կռիվ արին։ Էն ինչ դևն էր՝ տղի օսկրներ ջարդեց, էն ինչ տղեն էր՝ դևին թրով փըրբրդեց։

Դևը ձայնեց.— Խողածի՛ն, դարձի՛, բավական ա. էթանք խաց ուտելու։

Խողածնի թևից բռնեց, տարավ, ասեց.— Խողածի՛ն, ես էթում եմ քնելու[1]։

Դևը ուներ անմահութենի հ՝աղբուր, գնաց լողանալու։ Խողածնի յարեքը ցավ ա տալում, նըռնըռում ա։

---

1 Հաջորդում է փակագծում դրված «Խափեց խողածնին» արտահայտությունը, որը ասացողի բացատրությունն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Իսկը դևի կնիկը էկավ խողածնի կուշտը.— Անումդ ի՞նչ ա,— ասեց։

— Աբրահամ փաշա,— ասեց։

Ասեց.— Ափսոս տղա ես, դևը քե խափեց՝ գնաց լեղանալու։

— Հ՚իմանամ դու իմ ծնող քուրն ես, էն հ՚աղբուրը ցուց տո՛ւ, ես էլ էթամ լեղանամ։

— Ա՜յ, դուն էլ գիներ ընձի աղբեր չկա, պըտի ըլլիր ընձի աղբեր, որ դու էլար ընձի աղբեր, ես գինամ, դու։

Դևը սաղցավ, էկավ քնավ։

— Աբրահամ փաշա ջա՛ն. էլի գնա՛ էն աղբուրը, էն Կարմիր սարի տակն ա, լեղացի ու էն աղբուրը ծածկիր, ջուրը պախա, շատ շուտով արի՛։

Տղեն գնաց, էն աղբուրը՝ լեղացավ. սաղցավ, հ՚էլավ մորից մեկ։ Աղբուրը ծածկեց ու թողեց, էկավ ինքն էլ քնավ։

Դևն հ՚իմցավ.— Խողածի՛ն, հ՚էլիր, մեր կռիվը կռիվ ա։

Հ՚էլան, մտան մեյտան, մինչի վերջին կռվան։

— Բոլ ա, խողածին,— ասեց դևը,— ժամանակ չունենք կըռվելու։

Դարձան. տղեն մնաց, դևը գնաց՝ որ հ՚աղբուր չկա .«լալա fյոշուպ, յուրտի ղալուպ» [1]։

— Վա՜յ վա՜յ,— ասեց,— խողածին իմ աղբուրը գողացեր՝ տարեր ա։

Էկավ թեխ խողածի՛ն. ասեց.— Վերև աստված, ներքև քե եմ ապավիներ, իմ հ՚աղբուրը տո՛ւր, ես քեզի մեղա, դու ընձի ջոջ աղբեր, ես քեզի պզտիկ աղբեր, «խաց ու գինին, տեր կենդանին»։

Առավ դևին, գնացին հ՚աղբուրը բացին, լեղացան, սաղցան, էղան մորե մեկ։

Մե ժամանակ էդպես մնացին, օրերից մեկ օր տղեն դուրս հ՚էլավ։ Դևը ճամփու դրեց, ասեց տղին.

— Իմ ճակտից իրեք մազ քաշա. որտեղ որ նեղ կընկնիս, կրակի տո՛ւր, ես քու կուշտ հազր եմ։

Տղեն օրերից մեկը խասավ Սև ծովի ղրաղը. տեսավ քառասուն բազրկյան կայնած ին, խարցրեց.

— Քանի՞ ժամանակ եք ըստե։

---

1 Կակաչը անցավ, տեղը մնաց (Ս. Կ.)։

www.naregatsi.org

— Քառասուն օր։

— Հ՞ընչի քառասուն օր ըստե եք։

— Աստված մեզի հ՞աչքից ձգեր ա, քամի չգալում. կյամիք չբանում։

— Ձեզ տիրացո՛ւ, տերտե՛ր, մոլլա՛ չկա՞։

— Շա՞տ։

— Ամեն իրեն կողմով իրեն աստված ապավինի։

Ամեն մարդ էլավ իրանց աստվածը ապավինեցին։

Աստված էլ քաղցրացավ, քամիքը փչեց. կյամիք տարան Ստամպոլու քաղաքից դուս բերին. բաղրկյաններ ժողվան հ՞իրար վրա, ասին.

— Աստված սիրող էս մարդին մե ազ խարճլըղ տա։

Ամենը իր կողմով տվին, էղավ մի տոպրակ ոսկի։ Տղեն խարցըրեց բաղրկյան բաշուց։

— Դու ո՞րտեղ պըտի իջնիս։

— Թաթոս բեկի խանը։

Խանեց, ուր փեշադը նշանց տվեց, ասեց.— Երբ օր ես իմ փեշադը հ՞օղորկի՝ էս ոսկին ըղրկի՛ր, գա։

Հ՞ինքը ընդոնցից ջոկնվավ, գնաց քաղաք։

Էդտեղ մի ջհուտ հ՞առեջ էկավ.— Բարո՛վ,— ասեց,— թաքավորի տղա՛, իմ գլխին, իմ հ՞էրեսին ես էկեր. հրամեցի, իմ տունը ղոնախ ես։

— Ջհո՛ւտ, էդ ի՞նչ թոմարի ձիավոր ըդտեղ կայնած ին։

— Մեր քաղաքի մեջ մե անիրավ աղջիկ կա. մե ձիան գլոխը սեհր արեր[1], քցեր ա գետինը, ըդուր վրեն պարապում են։

— Քէլ՝թա՛նք, տենանք, ի՞նչ գլոխ ա։

Գնացին, տեհան որ մե ձիան գլոխ ա, մե տաս ձիավոր էլ ըդտեղ կայնած ին, խարցրեց.

— Աղբե՛րք, դու ի՞նչ մարդիկ իք։

— Մենք իշխանավոր մարդի տղա ենք։

— Դե գնացե՛ք. տենամ, ի՞նչ թավուր իք վերցնում։

Ձիանը քշեցին, մղրաղը զանին գլխի մեջը՝ չկարցան վերցցին։ Նոպադ էկավ տղին, գնաց, զանեց մղրախը գլխի մեջ, կայնավ զենկուքի մեջ, որ թափ տվեց՝ ձիանը մեջքը օրթալըխից կոտրվավ. ու փոր-փոշման դարձավ։

---

1 Կախարդեր (Ծ. Բ.)։

www.naregatsi.org

— Ջհուտ աղբե՛ր, ընձի մե ձի,— ասեց տղեն։

— Իմ հորեղբոր մե ձի կա, մե տոպրակ օսկու ա տալում։

Տղեն փեշադը տվեց, ասեց.— Տա՛ր Թաթոս բեկի խանը, տու բաղրկյան պաշուն, մե տոպրակ օսկի կա ա՛ռ, արի՛։

Գնաց, տոպրակ առեց, էկավ. տվեց իր հորեղբոր, ձին առավ, տվեց թաքավորի տղին։ Թաքավորի տղեն խեծավ, գնաց, գլխի վրեն կայնավ. զարկեց մզրախով, գլուխը վերցրեց, տարավ, զանեց թաքավորի սարային։

Ջհուտը գնաց, նստավ խնամաքարի վրեն, ասեց.— Իսկը մկա ես՝ իմ խարսը պըտի տանեմ։

Աղջկա խեր ասեց.— Մայիս ամսին իմ վրեն կռիվ գալող մարդիկ կան. թ՚որ էրթա, էնոնք էլ հետ տա, ես իմ աղջիկ կտամ ընդու։

Մնաց մայիս ամսին, տղեն էլավ քնուց՝ որ ճշմարիտ ա, ղոշուն էկեր ա, աստղին հաշիվ կա, ղոշունին չկա, զարմացավ, կրակ էլ ըլլեմ, չեմ կանար ըսդունցը էրեցնի։ Նստավ, միտ արավ, իր Սև դև աղբերը ընկավ միտքը, ջզդանից խանեց մազը, տվեց կրակ, տեսավ հայաքին մե ղոշատ[1] դևի թևի վրեն հ՚իր առեջ կայնուկ ա։

— Աղբե՛ր,— ասեց,— աշխարք ավիրեմ, թե շիքեմ։

— Էդ հալ ղոշուն իմ վրեն էկեր կռիվ։

Կզացավ, գետնիցը մե խորում խոտ վերցեց. օլրեց, արավ ջով[2], փաթթեց տղի գլուխը, ասեց.

— Էդ ջով թող գլուխդ, որ կռվի մեջ ճանաչեմ, քեզի չզանեմ։

Գերան գցում էր, վաթսուն շատր մե տափնում էր, մեր մանուկ ուրացավ, չգիցան էս ղազապ։

Դևը էկավ տղի մոտ, ասեց.— Իմ ճակտից մազ քաշա, դիր ճզդանդ, ես կէթամ, մկա քու քուրը վախեցավ, մինակ ա։

Մազը քաշեց, Սև դևը գնաց։ Տղեն էկավ, պատմեց ջհուտին թե՝ ես ղոշունը ջարդեցի։ Ջհուտը վերցուց իշխանավոր մարդիկաց ու աղջկա հերը, գացին կռվի տեղ՝ ջանդկներ տենան, օղորթ ա, թե սուտ։ Տեհան օղորթ ա։ Էկան, աղջիկը տվին տղին, դրին մե կառեթ. աղջկան էլ մե կառեթի մեջ, քաղքից դուրս էլան։

Հինգ հարիր ձիավոր էլ դրեց հետ, գացին։ Իրեք գիշեր, իրեք ցերեկ գացին։

---

1 Մեծ գերան (Ս. Բ.)։

2 Կեմ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Տղեն ասաց.— էթամ, տենամ էս գիշեր, թե իմ կնիկ քո՛ռ ա, քեչե՛լ ա։

Աղջկա կառեթ էդ ձիավորներու վերի գլոխ կայնուկ էր։ Գնաց նշանածին տենալու։ Տեսավ որ շատրրին մեջ քնած ա. իսկ շատրրի փեշադները քանդեց, մտավ ներս. շամտներ չորս կողմ վառվում են, իսկ գնաց նշանածի վրեն նստավ։

Սեհրպաղ էր, սեհր արեր էր։

Տղեն հ՚էրեսները պաչեց՝ չիմացավ, կրճմտեց՝ չիմացավ։ Տեսավ ծծերի վրեն կոճկած ա. կոճկները բացեց, ծծերը դուրս բերեց, տեսավ որ ոսկե ժընճըլով մե անգին քար քցած էդոր ծծերի մեջը. որ քարը էրևաց, լուսը տվեց շատրրի մեջը։

Տղեն տեսավ, որ էդ քարը ճրագի պես վառվում ա, հանեց, դրեց ուր ջեպը. կզավ կուշտ պաչեց ու գնաց ուր շատրրը։

Ճամփեն մտածեց՝ էս ինչ քար ա. որ բացեց սև ղառղառի պես մե ղուշ զարկեց ու էդ քարը ըդուր ձեռից առավ, խաբեց, շատրից դուրս բերեց, դարձավ վրեն։

— Տղա՛,— ասեց,— էս էլ զոռպութեն չէ, որ աղջիկը բերես։

Դարձավ, տղին շիքեց՝ ղաթր, հեծավ։

Աղջիկը հ՚իմացավ, որ իր անգին քար իր ծծերի մեջ չէ.— Վա՜յ վա՜յ,— ասեց,— տարավ տղեն։

Ջհուտ էլավ, թուղթ իշկեց՝ որ էրեր ա ղաթր, հեծեր՝ կէրթա։

Հ՚էլավ ընկավ էտեը, մինչի լուսը բացվավ խասավ Սև ծովի ղրաղը. տեսավ մե տղա, էկեր ղայեղով իրան համար ցախ ա ժողվում։

— Այ տղա՛, էդ ինչ ցախ ա ժողվում ես։

— Ընձի հարսանիքի ցախ ժողվում եմ։

— Ես քեզի համար եմ էկեր, թարկը տո՛ւր էդ ցախին։

Տղեն դարձավ իշկեց աղջկան, խելքը թռավ, թառ ու մառ էլավ։ Ցախը թալեց, աղջկան տարավ, ծովից հանեց դուրս։

— Գնա՛, մե շարսապ բեր, առնիմ իմ վրեն, էթանք ձեր տունը,— ասեց աղջիկը։

Տղեն էլավ, գնաց թըխ տունը, իսկ աղջիկը ղայեղը դարձրեց ծովի մեջ, գիշեր, ցերեկ գնաց, մե օտար քաղքից դուրս էլավ։

Առատուն՝ աղոթրանախառն տեսավ ծերացած խալիվոր ծովի հ՚ափուն նստեր՝ լվացվում ա։

— Բա՛րև քեզի,— ասեց։

www.naregatsi.org

— Հազար բարի՜, որդյակ աղնիվ։

— Հայրի՛կ, էրեխից ի՞նչ ունիս։

— Ունեմ յոթը աղջիկ։

— Հայրի՛կ, գաս ընձի էլ էնիս քեզի աղջիկ, ըլենք ութը։

— Որդյակ,— ասեց,— չեմ կարող պահել։

— Հայրի՛կ, հ՞ընչի՞. ինչ փեշով ես կառավարվում։

— Աղնիվ որդի՛, ես փինաչի եմ, օրական կառնիմ տասը հաց, յոթը հացը կտամ յոթ աղջկան, էրկուա էլ կառնինք մեզի մարդ ու կնիկ, էնտեղ կմնա մեկ։

— Հայրի՛կ, էն մե հացն էլ ընձի։

— Արի՛, ջուխտ մաշիկ հ՞ավելորդ փինա կանեմ, իմ հ՞էրսին գաս։

Աղջկան առավ ղայեղից ցած։

— Հայրի՛կ,— ասեց աղջիկը,— օրական մե ոսկի կտաս, մե մարդ կբռնիս, որ իմ ղայեղին մուղաթ կենա։

Աղջիկը գնաց տունը, տեսավ շատ աղքատութենի մեջ ին, իր գլխից մե լյայլուխ տվեց հալիվորուն, ասեց.

— Տա՛ր պազար, ըսդոր գինը չորս հարիր մանեթ ա։

Խալիվորը տարավ ծախեց, փարեն տվեց աղջկան։

— Էս հարիր մանեթը կտաս յորղան դոշկի. հարիր մանեթն էլ կտաս եմակի, հարիր մանեթն էլ կտաս շորի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի, ղնայուղի։

Տարավ հաջողակ հալիվորը ամեն էլ կատարեց։

Աղջիկը օրական շիքեց լյայլուխ, հալիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան։ Քաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ։

Էդ քաղաքին մեջ մե թաքավոր կար, էդ թաքավորին մե տղա ուներ, եռեսունը ինը աղջկա հետ նշանվեր էր, կպտրտեր՝ որ մեկ էլ առներ, որ քառասուն թմեր, որ իր քեպինը կտրեր. էկավ էդ լյայլուղից մեկը խալիվորի ձեռը տեսավ, ասեց.

— Խալիվո՛ր, էս ո՞վ ա արեր։

— Իմ աղջիկը։

— Քելե՛, էթանք, քո աղջիկը տենանք։

Գացին, տեսան. նշան տվեց աղջկան, նշան առավ։

Աղջիկը ասեց էն թաքավորի տղին.— Քու մեկել կընկտերի հետ առատուն պըտի սեր էնիմ ծովի դրաղը։

www.naregatsi.org

Դալալ քցեց քաղաքի մեջ, պոռացին քի անուն որձեղեն ըլնի, քաղքից դուրս չըլնի, որ ընդոր կընկտըներ ծովի ղրաղը սեյր անեն։

Իսկ էդ աղջիկ մյուս աղջիկներին բերեց, իր ղայեղի վրե կայնեցրեց. խափեց աղջիկներին, լցեց ղայեղը, առավ հ՚ընկավ ծովի էրեսը։

Էդ աղջիկը ասեց.— Մենք քառասուն հոգի՝ կանանք մե մարդի ումուտի՞ն մնանք։

— Չէ՛,— ասին մյուսները։

— Դու ընձի կլսաք, որ ամեքիդ մե-մե թաքավորի տամ։

— Հա՛,— ասին։

Առավ ու գնաց էդ ծովի հ՚էրեսով, գացին Ստամպոլա կողմիցը դուս հ՚էլան մե քարափից։

Քարափին քառասուն հարամի բնակվում էին. էկան աղջիկների առաջները կտրին։

Աղջիկը պոռաց.— Դու ո՞ւր ես գալում, ձեզի համար ենք գալում, դո՞ր ես թեթևանում։

Էդ թաքավորի աղջիկը, առավ էդ քառասուն աղջիկն էլ, դուրս հ՚էլավ։ Ամեքուն մեկը տվեց, ինքն էլ հարամուբաշուն առավ։ Ղըրկեցին Ստամպոլա օխտը տարվա թունդ գինի բերին, էլան սաղի[1]։ Ամենայն մե աղջիկ իրանց մարդին էլան սաղի, էնքան խմցրին, որ տեղպատեղ թմրեցրին։ Որ հարամիքը վեր հ՚ընկան, քաշին հարամիքի սրերն, հարամիքի վզերը կտրին, ընդոնց շորերը հագան, ասպապը կապին, ձիանքը հեծան ու էդ կետուկները կտրին, գալոդին մորթեցին, թալնեցին ու սպանեցին։

Էդ աղջիկների մեծի անունը դրին Քեսեքես սուլթան։

Ստամպոլա մեջ գողությեն շատ էր բանում, թաքավորը գրութեն էրավ Քեսեքես սուլթանին. «Իմ քաղաքի միջի գողն էլ որ կտրես, իմ աղջիկն էլ կտամ քեզի»։

Գիրը որ հասավ Քեսեքես սուլթանին, աղջիկներին թողեց ըդտեղ, հ՚ինքն հ՚էլավ, գնաց քաղաքին մեջ. տեսավ շատ դեվրեշներ կան։ Հ՚ինքն էլ գնաց դեվրեշխանե, մե ձեռք դեվրեշի շոր առավ, խագավ, մե քեշքուլ էլ առավ ձեռը. տեսավ դեվրեշներ քաղքից դուրս հ՚էլան. հ՚ինքն էլ խետներ դուրս էլավ. գնացին, լցվան մե զաղա։

---

1 Գինի տվող (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Դեվրեշների գլխավորը ձայնեց.— Որը որ մեր մեջ հ՚ավելորդ էկեր ա, էթա թաքավորի խազինեն կտրի, բերի։

Համպրեցին որ Քեսեքես սուլթան հ՚ավել ա։

Զորս մարդ տվին ընդոր, գնացին թաքավորի խազինեն կըտրելու։ Կտրին, բերին, լցին զաղեն։

Քեսեքես սուլթան մե շաբաթ մնաց. ըդոնց վեր ու դիրը, նըստել-կայնելը հ՚իմացավ. օրերի մեկ օր՝ գնաց, խասավ աղջիկներին ու վերցրեց, էկավ զաղի դուռը կտրեց, քաշին սրերը ու ներս մտան, ոչխարի նման բոլորը սուրի քաշեցին։

Հ՚առատուն լուսը բացվավ, ջառ քցին քաղաքը, ղանչին.— Աստված սիրող, վիր մալն օր գացեր ա, գա՛, իր մալը տանի։

Էկան, ամեն մարդ իր մալը ճանչցան ու տարան. թաքավորն էլ էկավ իր խազինեն տարավ։ Բերավ աղջիկն էլ Քեսեքես սուլթանի վրեն պսակեց։

Մե էրկու տարի անցավ, թաքավորը վախճանավ։ Բերին Քեսեքես սուլթանին արին թաքավոր, էն էլ ինչ որ որձեղեն կար, չթողնց ներս, աղջիկներին հ՚առեջ քաշեց, էրեց վազիր, վոքիլ, մեյտար, չպուխչի։

Աղջիկն ինչպես որ պսակվեր ա, թաքավորի աղջկա հ՚էրեսը չ՚էթում։ Մեկ օր թախտի վրա նստած էր, տեսավ Աբրահամ փաշեն, բոբիկ, թումպնթափ, ջհուտն խելքը գլխիցը առեր՝ ցնդուկ, ցնդուկ էթում, ղազ ա պահում։

Թաքավորը բոռաց.— Ամա՜ն, էդ ղազարածին բռնե՛ք։

Ձեռաց խասան, բռնեցին, բերին թաքավորի հ՚էրեսն։

Թաքավորը հարցրեց.— Ա՛յ տղա՛, դու ի՛նչ մարդ իս։

— Ջհուդի ղազարածն եմ։

— Այ տղա՛, գիշերը ջհուդի դռները բաց կթողես, որ հ՚առատուն իմանամ բաց չես թողեր, քեզի կդնեմ կրակի մեջ, կվառեմ։

Հարցուց.— Ջհուդն ըսկի քնո՞ւմ ա։

— Չէ՛, թաքավոր։

— Ընչի՞ չի քնում։

— Թաքավորի աղջիկից վախենում ա։

Թողեցին. տղեն գնաց ղազերը պահելու։

Հ՚իրկուն մեկ էլ բերեց, տղին խրատեց։

Տղեն գիշեր դռներ բաց թողեց։

Քեսեքես սուլթան տաս խոգի վերցեց, գնաց ջհուդի դուռը

www.naregatsi.org

բռնեց։ Իսկ ջհուդը բռնեց, բերեց Թաքավորի տիվանխանեն։ Ինքը գնաց Թաքավորական Թագը դրեց, նստավ Թախտի վրեն. ղանչեց ջհուդին, բերեց հ՚իրան էրեսը, ասեց.

— Ջհո՛ւդ, ո՞ւր ա իմ անգին քարը։

— Քեզ մեղա՛, քու աստրծուն մեղա՛, դրեր եմ իմ օթախների հիմը, շարեր եմ վրեն։

— Չեմ գիտում, իմ անգին քարը բե՛ր։

Էն սահաթը բերեց։

— Հա՛, ջհուդ, ուզում եմ քեզնից Աբրահամ փաշի խելքը։

Մե տաշտ ջուր բերին, դրեցին արանքները. ջհուդը գիր առավ ձեռ, դրեց. Աբրահամ փաշին էլ կայնեցրեց էնտեղ, ուզեց ջհուդից Աբրահամ փաշի խելքը։

Աբրահամ փաշի խելքը բերեց։ Որ բերեց իշկեց իր ղալբխին, լացավ, ու քիթ ու բերնի վրեն վեր ընկավ։

Թաքավորը ասեց.— Ինչո՞ւ կուլաս, այ տղա՛։

Նորեն կայնավ, իր գլխի գալածը Թաքավորին գանգատ արավ։

Թաքավորը ասեց.— Իդի սուտ ա։

— Չէ, Թաքավո՛ր, սուտ չէ։

Ջհուդին սկսեցին բրդել։

Աբրահամ փաշին համամլամիշ արին, բերին։ Էն հ՚առաջվա գեստերու պես նորոգեց։ Ղանչեց.— Էն աղջիկը որ դու կորցրեր ես, ըստեղ ըլլի կճանաչե՞ս։

— Այո՛, ըպա չե՞մ ճանչնար։

Թաքավորը գնաց իր աղջկա կիյիմը[1] հագավ, անգին քարը քցեց վիզը, էկավ դռնից։

Տեսնալու պես ճանաչեց, հասավ աղջկան։

Աղջիկը ասեց.— Մե կնիկ էլ ընձի կա, էն էլ կտամ քեզի։

Աբրահամ փաշեն էրկու կնիկ ունեցավ։

Հարամի աղջիկներին էլ վազիրի, վաճառականի տվեց, Թաքավորութեն էլ տվեց վեզիրին։

Իրան ծանտրը Թողեց, Թեթևը վերցրեց, ղանչեց աստված, քաղաքից դուրս հ՚էլավ, օրերից մեկը հասավ իր հոր երկիր, իրան հարսանիք արավ։

---

1 Ձեռ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

22. ՍԻՆԱՄ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Գյուն-Բաթմանի[1] Սինամ թաքավորը հայերի թաքավոր էր ու էն թավուր ղոշաղ, որ սաղ աշխարհում հատը չկար. սաղ աշխարհը նրա ոտի տակ դողում էր ու վախում նրանից։

Հենց էդ վախտը մի ուրիշ երկրում մի թաքավոր կար։ Էս թաքավորը մի տղա ուներ՝ անումը Հասո։ Էս Հասոն ինքը չորան էր ու շատ ղոշաղ։ Հասոյի հոր աչքերը քոռ էին, էլ աշխարհում հեքիմ չմնաց նա բերեց, համա ոչով չկարաց լավացնի։

Մի օր թաքավորը ասեց Հասոյին.

— Ոնց որ ըլնի, ա՛յ որդի, պտի էթաս սաղ աշխարհը պտտես ու աչքերիս դեղ բերես։ Էլ ի՛նչ թավուր որդի ես, որ ինձ մի լավություն էլ չպտի անես։

Ղորդ ա՝ Հասոն առաջ ինքն իրա մեջ վախեց, համա հոր խաթրը չէր կարող կոտրի. նրա խոսքը իրա համար սուրբ էր, գլուխը պտի մահի տար ու իրա հոր աչքերի համար դեղ ճարեր։

Հասոն վրեն քցած մի աբա, ձեռին բռնած մի դաղանակ՝ ճամփա ընկավ, որ էթա իրա հոր աչքերի համար դեղ բերի։ Ճամփին ռաստ էկավ մի ծեր մարդու։ Էն ծեր մարդը հարցրեց, թե նա ո՞ւր

---

1 Արևմուտք (Ծ. Բ.):

www.naregatsi.org

ա էթում։ Հասոն ասեց, որ էթում ա իրա քոռ հոր աչքերին դեղ բերելու։

Ծերը ասեց.— Ա՛յ որդի, էդ ճամփով ով որ գնացել ա, էլ հետ չի էկել. մեղք ես, դու էլ կէթաս ու չես հետ գա։

Համա Հասոն էնքան սիրում էր իրա հորը, որ նրան չլսեց ու իրա ճամփեն բռնեց գնաց։ Գնաց, գնաց ճամփին մի քրդի ռաստ էկավ՝ անումը Քյալու։ Սա քառասուն հազար մարդ ուներ իրա հետ ու մարդի չէր թողնում, որ անց կենա էս ճամփով։ Հասոն գնաց ու նրանց ասեց, որ ինքը դուրս կգա էն բոլորի հետ կռվի, համա նրանք թուր-թվանք չբանացնեն կռվելիս, քառասուն հազարն էլ դագանակներով թող դուս գան մենակ իրա վրա։

Նրանք էլ ռազի էլան ու մեր ղոչաղ Հասոն աբեն փաթթեց թեվին, դագանակը առավ ձեռը ու մեյդան դուս էկավ կռվի։ Հասոն ում որ դագանակով տալիս էր, տեղն ու տեղը մեռնում էր։ Քառասուն հազարին էլ մենակ ջարդեց ու թողեց։

Հասոն էս քրդից պրծավ ու գնաց իրա ճամփեն։ Գշերը վրա հասավ, չէր գիտում, թե որդի մնա. ամեն տեղ խարաբա ու քանդված տեղեր էին. չէր կարա էնթավուր տեղերը մնա, չունքի նրա հերը ասել էր, որ խարաբա տեղ իրա շադիրը չվեր տա, թե չէ վատ կըլնի։ Համա ի՞նչ աներ, մութն էր ու էլ ուրիշ տեղ չկար, որ վե դար։ Անճարացած էս տեղերը իրա շադիրը տվեց ու ինքն էլ չքնեց, որ տենա ինչ ա ըլնում։ Գշերվա մի վախտ տեհավ, որ մի պառավ կնիկ էկավ։ Ինքը դև էր ու իրա ծծերը էնքան երկեն ու մենձ էին, որ մինը մի ուսն էր գցել, մեկելը՝ մյուս. ատամները որ իրար չէր տալի, կրակ էր դուս գալի ու մարդի սիրտ ահ ու զարզանդ գցում։

Համա ղոչաղ Հասոն վրա պրծավ ու ասեց.

— Ինձ ճանաչում ե՞ս, ես Հասոն եմ, որ քառասուն հազար մարդուն դագանակովս կոտորեցի. դու էկել ես, ինձ ի՞նչ պտի անես։

Էս որ ասեց, ձեռը քցեց ու նրա մի ծիծը դուս քաշեց, դեն քցեց. հենց էնա ուզում էր, որ նրա մեկել ծիծն էլ քոքըհան անի, նա Հասոյի ոտները ընկավ ու աղաչանք անելով ասեց.

— Ասսու սիրու համար, ինձ բան մի՛ անի. ինձ մոտ մի սիրուն աղջիկ կա, Գուշան թաքավորի աղջիկն ա, նրան քեզ կտամ։

Հասոն էլ նրան ձեռ չտվեց, ոտ ու ձեռը կապեց ու գնացին էս

www.naregatsi.org

գևի տունը։ Էկան, էկան, ճամփին Հասոն տեհավ մի չորան, որ հեռու ոչխար էր արածացնում։ Էս չորանը էնպես բանցր էր ու ղոչաղ, որ մարդ սիրտ չէր անի նրան մոտենա, համա Հասոն իսկի չվախեց նրանից։ Ոտները կապած պառավին մի տեղ թողեց ու ինքը գնաց, որ իմանա, թե նա ի՞նչ մարդ ա, որ էնպես ղոչաղ ա էրևում։ Էս չորանը էն պառավի տղեն էր։ Հասոն գնաց ու նրան ասեց, որ իրա ոչխարներից կաթ կթի, ածի ամանը, որ ինքը ուտի ու հետո վե կենան կռվեն։ Հասոն կերավ պրծավ ու վե կացան, որ կռիվ պրծնեն։

Ղոչաղ Հասոն նրան վերցրեց ու գետնովը տվեց, էնպես որ նրա մի թևը կոտրվեց ու չունքի իրար խոսք էին տվել, որ ով ում վե քցի, նա նրան մորթի թրով, Հասոն թուրը քաշեց, որ մորթի. նա աղաչանք արեց, որ ների իրան ու չսպանի։ Հասոն նրան չսպանեց, համա նրա ոտ ու ձեռը կապեց ու տարավ էն պառավի մոտ։ Մեր ու որդի իրար ճանաչեցին։ Մի քիչ էլ առաջ գնացին, Հասոն տեհավ, որ մի բանցր բոյով ու մի ղոչաղ չորան դագանակը ուսին ղրած գառներ ա արածացնում։ Էս գառնարածն էլ էր էն գևի որդին, զարթնե էս գառնարածը մի ուրիշ տղա էլ ուներ, որ տավար էր արածացնում։ Հասոն նրանց էսպես կապած թողեց ու ինքը գնաց, որ տենա էն ղոչաղ մարդը ո՞վ ա։ Նա գնաց էն գառնարածի մոտ ու ասեց, որ գա իրա հետ կռվի։ Նա սրան տվեց դագանակով, սա՝ նրան. համա Հասոն չունքի դհա ղոչաղ էր, նրան սպանեց։ Էս որ տեհավ պառավը սիրտը մղկտաց ու իրա մի ծամը կտրեց, տարավ քցեց էն սպանված գառնարածի վրա, որ իրա ազիզ բալեն էր, ու ինքն էլ տեղն ու տեղը մեռավ կսկծից։ Սրանից եդ Հասոն գնաց էն գևի տունը։ Դրսից տեհավ, որ ակռշկումը մի սիրուն, հուրի-փարի աղջիկ նստել ա։ Նա դուռը բաց արեց ու գնաց նրա մոտ։

Էն սիրուն աղջիկը Հասոյի ոտները ընկավ ու ասեց.

— Ես Գուշան թաքավորի աղջիկն եմ. սրանք ինձ ղոռով իմ հոր մոտից փախցրին ու բերին ըստեղ, թե կարենաս սրանց ձեռից պրծացնի, մի մենձ լավություն արած կըլնես։

Հասոն ասեց, որ բոլորին էլ վաղուց սպանել ա, ու աղջիկը ուրախացած ասեց.

— Սրանից դենը ես քունը, դու իմը. քեզանից էլ լավ մարդ պտի առնե՞մ, քեզանից էլ ղոչաղ տղա կճարե՞մ։

Էս աղջիկը ասեց, որ ինքը լավ քոռ աչքեր կարա լավացնի. էս

www.naregatsi.org

բանի համար Հասոն շատ ուրախացավ ու ասեց նրան, որ իրա հոր աչքերը քոռ ա, ու ասեց, որ էթան լավացնեն։

Ղոչաղ Հասոն դևի տանը ինչ որ իրան հարկավոր բան կար վեր կալավ՝ թուր էր, թվանք ու էսպես ասպաբներ, Գուշան թաքավորի աղջկա հետ ճամփեն բռնեցին ու գնացին։ Գշերը վրա հասավ։ Մութը էնպես կոխեց գետինը, որ մարդ մարդի աչք հաներ, չէր իմանա, թե ով ա։ Նրանք մնացել էին մոլորված։ Թե էն տեղերում մնային ու իրանց շադիրը տային՝ վախենում էին, չունքի Հասոն հորից լսել էր, որ լավ չի խարաբա տեղ շադիր տալը, հենց ինքը իրա աչքովը տեհել էր, որ լավ չի։ Անճարացած Հասոն էդտեղ շադիր տվեց ու իրանք նստեցին, որ մի դուռում հաց դնեն բերոնները, չունքի սաղ օրը զադ չէին կերել։ Մեկել ի՞նչ տենան՝ մի մենձ վիշապ էկավ ու նրանց շադրովը փաթթվեց, գլուխը դրեց պոչի վրա ու կուչ էկած մնաց։

Հասոն թուրը հանեց, վրա գնաց որ սպանի, համա վիշապը՝ էն մենձ օձը ասեց.

— Ինձ զադ քյար չի անի, ո՛նչ թուր, ո՛նչ թվանք։ Թե ուզում ես, որ էրկսով էլ պրծնեք, գնա ինձ համար Սինամ թաքավորի հեքիաթը բեր, ես ձեզ կթողնեմ։ Էս աղջիկը թող ինձ մոտ մնա, նրան ես էնպես կպահեմ, որ մազին էլա վնաս չլնի։

Հասոն վեր կացավ ու ընկավ ճամփա։ Էն մենձ օձը Սինամ թաքավորի քիրն էր, օձի ձևով։ Գնաց, գնաց Հասոն, շատ ու քիչը աստոծ գիդա, մի ջաղացպանի ռաստ էկավ, նրան բարով տվեց, նա էլ բարովը առավ, տարավ իրանց տունը ու ասեց, որ էսօր նա իրա ղոնաղն ա։ Նրա առաջ կիրակուր, բան բերեց. համա նա մի թիքա էլ ա չղրեց բերանը ու ամեն վախտ ա՜խ ու վա՜խ էր քաշում ու մտածում։ Ջաղացպանը հարցրեց, թե ինչու ա էդքան ա՜խ քաշում։ Նա մին-մին ասեց, ինչ որ գլխովը անց էր կացե ու ավելացրեց, որ էթում ա Սինամ թաքավորի հեքիաթը բերելու։

Ջաղացպանը ասեց.— Ես օրումս Սինամ թաքավորի անումը չեմ լսել. ես եռեսուն հազար տարեկան եմ նրա վրա զադ չեմ լսել։ Մենք իրեք աղբեր ենք, ես նրանց պուճուրն եմ, գնա իմ միջնեկ աղբոր մոտ. ով գիտա, մարդ ա, կըլնի որ նրա տեղը նա իմանա, յա թե չէ նրա վրա զադ լսած ըլնի։

Առավոտը թեզ-թեզ Հասոն գնաց միջնեկ աղբոր մոտ. նա էլ պուճուր աղբոր նման հրավիրեց իրա տունը ու կիրակուր բերեց

www.naregatsi.org

նրա առաջը, որ ուտի, համա նա մի թիքա էլա չկարաց ուտի ու միշտ ա՜խ ու վա՜խ էր քաշում։ Էս միջնեկ աղբերն էլ հարցրեց, թե ինչու ա ա՜խ քաշում։

Հասոն ասեց, որ էթում ա Սինամ թաքավորի հեքիաթը բերելու, չի գիտում, թե որդի ա նա. մենակ լսել ա, որ նա հայերի թաքավոր ա։

Միջնեկ աղբերը ասեց.— Ես էս ա քառասուն հազար տարեկան մարդ եմ, նրան իսկի չեմ ճանաչում ու ականջով էլ ա չեմ լսել, որ Սինամ թաքավոր կա աշխարհում։ Գնա իմ մենձ աղբոր մոտ, կըլնի որ նա իմանա։

Մեկել օրը Հասոն գնաց նրանց մենձ աղբոր մոտ ղոնաղ։ Սիրով նրան ընդունեց բարի ջաղացպանը ու նրա առաջ կիրակուրներ բերեց, որ ուտի, համա էն դարդը, որ նրա սրտումն էր, կարա՜ր թիքա բերանը դնի։ Ամեն խոսք ասելուց ա՜խ ու վա՜խ էր քաշում։ Ջաղացպանը հարցրեց, թե նա ինչու ա ա՜խ քաշում։ Նա իրա գլխով անց կացածը մին-մին ասեց նրան ու ավելացրեց, թե՝ չի՞ գիտում նրա տեղը ու յա թե չէ նրա վրա զադ չի՞ լսել։

Մենձ աղբերը ասեց.— Ես էս ա վաթսուն հազար տարեկան մարդ եմ, նրան չեմ տեհել. համա միտս ա գալի, երբ որ պուճուր էրեխա էի մորս խտտումը, մի խըժժոցի ձեն էկավ։ Ես մորս հարցրի թե՝ էն ի՞նչ ձեն ա, նա ասեց, որ Սինամ թաքավորը էթում ա Քառասուն ծովի կղզին։ Նրա համար սրանից ավելի բան չեմ գիտում։

Հասոն տեհավ, որ էլ ճար չի ըլնում, վեր կացավ աստոծ կանչելով, նրա սուրբ անումը տալով ճամփա ընկավ ու գնաց. իսկի ինքը չէր իմանում, թե ո՞ւր ա էթում։ Գնաց մի չինարու տակ, չունքի բեզարել էր՝ նստեց, որ դնչանա ու էլի վե կենա իրա ճամփի տուտը բռնի, էթա։ Մեկել ի՞նչ տենա՝ մի վիշապ նի ա ըլնում էն չինարու ծառը, որ արծվի ճուտերին ուտի։ Հասոյի մեղքը էկավ, տվեց վիշապին սպանեց ու պրծացրեց արծվի ձագերին. ինքն էլ ծառի տակ պառկեց ու քնեց։ Արծվի ճուտերը, չունքի իրանց նա շատ լավություն էր արել, գնացին իրանց թևը նրա վրա բաց արին, որ արևը նրա վրա չընկնի ու անուշ քնի։ Նրանց մերը էկավ ու տեհավ, որ մի մարդ ծառի տակ քնել ա. էնենց իմացավ, թե էկել ա, որ գիան տա իրա ճուտերին, վրա թռավ, որ նրան թիքա-թիքա անի, համա ճուտերը առաջ ընկան ու մին-մին ասեցին, թե

www.naregatsi.org

իրանց ո՞նց պրծացրեց վիշապի ձեռից։ Նրանց մերը, որ իմացավ նրա մենձ լավությունը, ինքն էլ գնաց թևերը բաց արեց ու փռեց նրա վրա, որ արևը նրան վնաս չտա։ Հասոն որ վեր կացավ ու իրա մոտ տեհավ արծվին, լեղին շուր կտրեց ու թուքը ցամաքեց։

Համա արծիվը նրան ասեց.— Ուզի՛, ինչ որ կարամ՝ կտամ. դու ինձ մենձ լավություն արիր, իմ ճուտերը իսկի չէին մեծանում ու փայ ին ըլնում էդ վիշապին, որ սպանեցիր։ Ջունքի դու էդպես մենձ լավություն արիր ինձ, ես էլ իմ դհից ուզում եմ, որ քեզ լավություն անեմ։

Հասոն նրա խոսքերից սիրտ առած ասեց, որ ուզում ա էթա Սինամ թաքավորի հեքիաթը բերի։

Արծիվը ասեց.— Թահո՞ւ, ես դեռ հլա պուճուր ճուտ էի, իմ մերը մի օր ինձ իրա մեջքին դրեց ու բարձրացրեց վերևը, էնքան որ առաջին անգամ սաղ աշխարքը մի կալի չափ էր երևում. մի քիչ էլ բարձրացրեց ու հարցրեց թե՝ աշխարքը ի՞նչքան ա երևում, ես ասեցի՝ մի մաղի չափ։ Մերս ասեց, որ էդ մաղի մեջ մի ձվի չափ բան ա երևում, էն Սինամ թաքավորի ամարաթն ա։ Սրանից հետո իմ մերը էլի ներքև բերեց։— Արծիվը էլի ավելացրեց.— Ես քեզ Սինամ թաքավորի մոտ կտանեի, համա ծերացել եմ, թևերումս էնքան ուժ չկա, որ քեզ էնքան հեռու տեղ հասցնեմ։ Համա, թե որ ուզում ես քեզ կարենամ տանեմ Սինամ թաքավորի մոտ, մի սաղ տարի ինձ լավ պահի ու կիրակրի, որ էլի ջահելանամ, ուժս վրես գա ու կարենամ քեզ տանեմ հասցնեմ Սինամ թաքավորի մոտ։

Հասոն արծվին մի սաղ տարի կիրակրեց, պահեց. էնպես նա ջահելացավ ու ուժովացավ, հենց իմանաս թե նոր ա աշխարք էկել։

Արծիվը ասեց Հասոյին.— Վեր կունես քառասուն լիտր դմակ ու քառասուն լիտր գինի. երբ որ «ղո՞ւ» կանեմ՝ գինին գցի, «ղի՞» կանեմ՝ դմակը։ Դու իմ մեջքի վրա նստած մտիկ կանես աշխարքին, երբ որ աշխարքը առաջ մի կալ կերևա, հետո մի մաղ ու նրա մեջը մի ձվի նման բան, դու ինձ դպա էն ձուն շուռ տուր, որ դենը էթամ։ Սինամ թաքավորի ամարաթը հենց էն ա։

Ինչ որ հարկավոր էր՝ Հասոն վե կալավ ու նստեց արծվի թևերի վրա։ Արծիվը թռա՞վ, թռա՞վ, էնքան բարձրացավ, որ աշխարքը մի՞մաղի չափ երևաց ու նրա մեջը մի ձու։ Հասոն նրան դպա դենը ծռեց, ու վեր էկավ արծիվը Քառասուն ծովի կղզին։

www.naregatsi.org

Վեր դրեց իրա մեջքի վրայից Հասոյին ու ասեց.— Դու գնա Սինամ թաքավորի մոտ. նա կզարմանա ու կհարցնի քեզ, թե ո՞նց էկար էստեղ. դու ասա որ քնեցի ու մեկել տեհա, որ էստեղ եմ։ Մի քանի օր նրա մոտ լավ նոքարություն արա, երբ որ նա քեզ կսիրի, դու իրան ասա, որ իրա հեքիաթը քեզ ասի։ Նա զորդ ա՝ կասի, համա քեզ հետ էնպես խոսք կկապի, որ հեքիաթը ասելուց հետո քու գլուխը կտրի. դու ասա, որ նա թողնի դաս դուրսը, ասսուն աղոթք անելու ու հետո էթաս, սաքի թե գլուխդ կտրի նա. դու մհանով դուս կգաս ու էլի վրես կնստես, կբարձրացնեմ կտանեմ քեզ. նա էլ մեզ չի հասնի։

Հասոն արծվի խոսքերը լավ լսելով վե կացավ ու գնաց Սինամ թաքավորի ամարաթը մտավ։

Նա առաջ շատ զարմացավ ու ասեց.— Դու ո՞նց էկար էստեղ։

Նա պատասխան տվեց, որ մի օր քնեցի ու մեկել տեհա, որ էստեղ եմ։ Սինամ թաքավորը ուրախացավ, որ աստված իրա մոտ հողածին ա ղրկե։

Մի քանի օր նրա մոտ լավ ծառայելուց հետո մի օր Սինամ թաքավորին ասեց.

— Թաքավորն ապրած կենա, ինչ կըլնի, որ դու քու հեքիաթը ինձ ասես, սրտով ուզում եմ, որ իմանամ քու հեքիաթը։

Սինամ թաքավորը ասեց.— Ես իմ հեքիաթը ոչովին չեմ ասել, ու յա ում էլ ասել եմ, նրա գլուխը կտրել են. թե որ ուզում ես քու գլուխն էլ կտրեմ, իմ հեքիաթը կասեմ։

Հասոն ասեց.— Իմ արինը քեզ հալալ ըլնի, ինչ ուզում ես արա, թաքիլան քու հեքիաթը ինձ ասա։

Սինամ թաքավորը ա՜խ ու վա՜խ քաշելով իրա հեքիաթի տուտը բռնեց. «Ես հայերի թաքավորն էի. սաղ աշխարքը ոտիս տակը դողում էր։ Մի կնիկ ունեի՝ Գյուլ անմավոր։ Ես իրեք ձի ունեի՝ մինը կեծակից էր ծնվե, մեկելը քամուց, իսկ մեկելը կրակից։ Քանի էթում էին՝ իմ էս ձիանները լղարում էին. ես էնպես էի իմանում, թե ձիապաններն են մեղավոր, էսպես քսանիննը ձիապանի գլուխ կտրեցի։ Վերջը դուս էկա բազար, որ մի ձիապան բռնեմ։ Մի քոսա ռաստ էկավ ինձ. նրան հարցրի, թե կարա լավ ձիապանություն անի. նա ասեց, որ շատ լավ ձիապանություն կանի։ Էս քոսա մարդին բերի ու իմ ձիանների համար ձիապան դրի։ Համա էլի տեհա, որ քանի էթում՝ ձիաններս էլի լղարում են.

www.naregatsi.org

բերի որ քոսի գլուխը կտրեմ. նա ասեց. «Իմ գլուխը մի կտրի. արի դու քո շորերը տուր ես հագնեմ ու դու իմը հագի, գնա գոմը էս գիշեր քնի, տե՛ս, թե ինչեր ա ըլնում»։ Թաքավորը ձիապանի շորերը հագավ ու գնաց գոմը գշերը էնտեղ քնեց։ Աքլորականչին մեկ էլ տեհավ, որ իրա կնիկը ու զոքանչը էկան գոմը ու ձիապանին ասեցին, որ՝ թե՛զ, ձիանները թամքի։ Թաքավորը ձիանները էն սհաթին թամքեց. նրանք նստեցին, իրան քամուց էլած ձին տվին ու նա էլ նստեց։ Երբ որ քամի էր ըլնում, թաքավորի ձին վազում էր, երբ որ չէ՝ չէր էթում, ու նրանք ծեծում էին, որ հետ ա ընկնում։ Էկան, էկան ու մի մաղարի մոտ կանգնեցին։ Գյուլն ու զոքանչը մտան ներս։ Էնդեղ մի արաբ կար, նրա մոտ նստեցին ու սկսեցին խոսել իրար հետ։ Գյուլուց ու էն արաբից մի էրեխա էր էլել։ Քիչ խոսեցին իրար հետ, կերան, խմեցին ու էլի ձիանները նստեցին՝ դուզ տուն։ Թաքավորի ձին, չունքի քամի չկար, հետ էր մնում. նրանք ծեծելով առաջ էին գնում։ Սինամ թաքավորը էլի էկավ ու իրա շորերը հագավ, նստեց իրա տեղը ու քոսին բերեց ձիապանի տեղը։ Գյուլը իմացել էր, որ Սինամ թաքավորն ա էլե, որ իրանց հետ էկել ա մինչև մաղարեն ու ամեն բան տեհել ա։ Նա գնաց արաբի մոտ մի դագանակ կար՝ բերեց ու նրանով տվեց Սինամ թաքավորի մեջքին՝ էլավ գել, օխտը տարի նա գելություն արեց։ Էթում էր գելերի մոտ, չունքի նրանից մարդի հոտ էր գալի՝ ծեծում դուս էին հանում, էթում էր քաղաք՝ շները գզում էին։ Հետո, երբ որ օխտը տարին անց կացավ, Գյուլը էլի էն դագանակով խփեց ու դարձավ էշ։ Օխտը տարի էլ էշություն արեց։ Ով ուզում էր անփող տանում բանացնում էր սաղ օրը, տեր չկար, տիրական չկար։ Օխտը տարի էլ անց կացավ թե չէ, Գյուլը դագանակով խփեց ու դարձրեց լագլագ։ Էլի օխտը տարի էլ լագլագություն արեց. էս նրա համար ավելի հեշտ էր։ Օխտը տարի էլ անց կացավ, Գյուլը խփեց ու էլավ շուն։ Մի օր նա գնաց ղասաբխանի վրա, որ իրա համար միս ձեռք բերի ու կշտանա։ Տեհավ, որ մսի վրա իրա բեզրգյանը էկել ա ու միս ա առնում։ Երբ որ բեզրդյանը միս առավ ու գնում էր տուն, շունը նրա հետևից գնաց մինչև նրա տունը։ Բեզրգյանը չճանաչեց Սինամ թաքավորին, համա նրա աղջիկը ճանաչեց, որ Սինամն ա։ Բեզրգյանը իրա աղջկանը ղրկեց Սինամ թաքավորի տունը ու ասեց. «Գնա՛, տես թե տանը մարդ չկա, տախտի վրա մի փեսա կըլնի, վեր առ ու բերա»։ Աղջիկը գնաց տեհավ, որ տանը մարդ

www.naregatsi.org

չկա ու տախտի վրա մի փետ կա։ Վե կալալ բերեց ու շանը տվին՝ էլավ առաջվա Սինամ թաքավորը։ Իրար փաթթվեցին, ու Սինամը գնաց տեհավ, որ իրեքով էլ տանն են։ Փետով տվեց արաբին գվժի փուշ շինեց, զոքանչին շինեց ագռավ, Գյուլին էլ տվեց ու խնձոր շինեց, քցեց ջիբը։

Սինամ թաքավորը էս ասեց ու շանց տվեց Հասոյին տսելով.— Հրես էս խնձորը Գյուլն ա, էն փուշը արաբը, էն ագռավը զոքանչը։ Երբ որ նրանց էս փետով էլի տամ՝ կսաղանան։ Սրանից եդ ես ասում խնդրեցի, որ ինձ տանի Քառասուն ծովի կղզին, որ մարդու, իսանորդու չտենամ ու ոնց որ տենում ես ըստեղ եմ։

Սինամ թաքավորը իրա հեքիաթը պլծավ թե չէ, Հասոյին ասեց, որ պտի գլուխը կտրի, համա Հասոն խնդրեց, որ գնա դուս ու ասում աղոթք անի, հետո գա, իրա արինը նրան հալալ ա։ Հասոն դուս էկավ, արծվի մեջքին նստեց ու արծիվը նրան բարձրացրեց։ Սինամ թաքավորը տեհավ, որ Հասոն ետացավ՝ դուս էկավ տենա ի՞նչ էլավ։

Տեհավ, որ Հասոն բարձրանում ա, հետևից ձեն տվեց։ Նա հետ թամաշ արեց թե չէ՝ Սինամ թաքավորը իրան քցեց ծովը ու խեղդվեց։

Հասոն գնաց վիշապին Սինամ թաքավորի հեքիաթը ասեց, նա իրա կաշին պատռեց ու դուս էկավ մի սիրուն աղջիկ։ Հասոն ու Գուշան թաքավորի աղջիկը գնացին, Հասոն իրա հոր աչքերը նրա ձեռով լավացրեց ու ինքը պսակվեց նրա վրա. օխտը օր օխտը գշեր հարսանիք էլավ, կերան, խմեցին ու քեֆ արին։

www.naregatsi.org

23. ՔՅՈՒՉՅՈՒՔ-ՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի թաքավոր ի՛նչ կնիկ առավ, վատ ու անառակ դուա էկավ։ Էսպես նա իրար վրա քսան կնիկ առավ ու քսանն էլ, չունքի վատ դուա էկան՝ հրամայեց նրանց գլուխը կտրել ու միտքը դրեց, որ էնպես աղջիկ բերի իր համար կնիկ, որ հում կաթ չի ծծել։

Իրա նոքարներին մի տոպրակ ոսկի տվեց ու ղրկեց, որ էթան թաքավորությունը ման գան, ու ինչ թաքավորի կնիկ աղջիկ կբերի՝ էդ փողը տան ու աղջիկը վերցնեն իրա համար կնիկ բերեն։ Նա կմեծացնի ու հետո նրա վրա կպսակվի։ Նոքարները գնացին մի թաքավորի մոտ. էն թաքավորի կնիկը մի աղջիկ էր բերի։ էն տոպրակով փողը տվին թաքավորին, պուճուր էրեխին դրին ղութկի մեջ ու բերին թաքավորի մոտ։ Թաքավորը էս պուճուր աղջկանը քցեց մի օթախ ու ամեն դհից ղայիմացրեց, որ արևը չընկնի նրա օթախը։ Մի պառավ կնիկ ամեն օր գալիս նրա համար հաց էր բերում։ Թաքավորը սաստել էր նոքարներին, որ նրան կիրակուր տանելիս էնպես արեք, որ մսի մեջ ոսկոր չըլնի, չունքի նա էրեխա ա, չի հասկանում, կտա շուշեքանց՝ կկոտրի ու արևի լիսը նրա օթախը կընկնի։

Մի օր էլ պառավը նրա համար մսի կիրակուր տարավ։ էն էրեխի թավայի մեջը մնացել էր ոսկոր. երբ կիրակուրը կերավ, էն ոսկորը շպռտեց ու շուշեքը կոտրտեց, արևը նրա տունը ընկավ։

www.naregatsi.org

Նա որ էնքան տարի արև չէր տեհել, շատ վախեցավ ու ամեն վախտ ծիծաղում էր։ Պառավը էկավ տեհավ, որ շուշեքը կոտրած ա, զարմացավ։

Էրեխեն պառավին գանգատվեց, թե.— Էս ի՞նչ զադ ա, ինձ նեղացնում ա։

Նա ըսկսեց մին-մին պատմել, թե դուրսը աշխարհ կա, մեռնել կա, ապրել կա, տրտմություն կա, ուրախություն կա։

Աղջիկը մարդ ղրկեց թաքավորի մոտ ու ասեց.— Ես պտի գամ աշխարհ տեսնամ։

Թաքավորը հրաման տվեց, որ գնա իր բաղումը ման գա։ Աղջիկը գնաց թաքավորի բաղը ման գալու. տեհավ՝ որ մի սառը աղբյուր կա, նրա ջրից խմեց. դու մի ասի, էդ ջուրը Անմահության ջուր ա ըլնում։

Մնաց իննը ամիս, նա պառկեց ու մի տղա բերեց։ Նրա անունը դրեց Քյուչյուք-Մուրադ։ Համա, չունքի նա իրա համար ջոկ օթախ ուներ, թաքավորը չիմացավ, որ նա տղա ա բերել։ Թաքավորը ուզում էր պսակվի, համա աղջիկը ասում էր, թե դեռ հլա պուճուր եմ, օխտը տարի էլ կա։ Քյուչյուք-Մուրադը մենձացավ ու իրա համար էթում էր քուչումը հոլ հաղում խալխի էրեխանց հետ։ Ուրիշի էրեխեքը նրան ծեծում էին ու իրանց մոտից դուս անում ասելով. «Կորի գնա՛, դու հեր չունես, եթիմ ես»։ Համա խեղճ էրեխեն չէր գիտում հոր անումը, ի՞նչ ասեր։

Մի օր էլ լաց ըլնելով ասեց.— Ազի՛, իմ հոր անումը ի՞նչ ա, խալխի էրեխեքը ինձ ծեծում են ու ասում, որ եթիմ եմ։

Մերը ասեց.— Որդի՛, դու հեր չունես, դու Անմահության ջրից ես ետ ընկե. էդ խոսքը էլ չասես, թե չէ թաքավորի ականջը կընկնի, փիս կըլնի։

Ղոչաղ Քյուչյուք-Մուրադը էս որ լսեց, գշերվա մի վախտ թաքավորի դոմից էրկու քյահլան ձի դուս քաշեց. մինը ինքը նստեց, մեկելը իրա մերը ու դուզ փախան։

Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիդա, էկան մի դևի տուն հասան, որ մի մենձ ջաղացաքար դեմ էր տվել դռանը ու ինքը ներսն էր։ Քյուչյուք-Մուրադը էն քարը մի ձեռով վերցրեց ու հինգ վերստ դեն քցեց։ Դևը էս որ տեհավ, զարմացավ ու ինքն իրան ասեց. «Ես անջախ էն քարը տեղից ժաժ էի տալի, նա ո՞նց էնքան հեռու քցեց. բաս բանս բոշ ա»։

www.naregatsi.org

Մեր ու տղա նստեցին հաց ուտելու։ Դևը դռան ճղլակից մտիկ էր անում Քյուչյուք-Մուրադին ու վախում, ետ քաշվում։ Քյուչյուք-Մուրադը դևին կանչեց, որ գա հաց ուտի։ Երբ որ հաց կերան պըրծան, դևն ու նա սկսեցին կռվել։ Դևը գյուրզը քցում էր՝ նա բռնում, նա քցում էր՝ սա բռնում։ Մեկ էլ գյուրզը էնպես շպրտեց դևի վրա, որ հաղար թիքա էլավ նա։ Քյուչյուք-Մուրադը նրան թրով ղիմա-ղիմա արեց ու ածեց սև տոպրակի մեջ ու թաղեց։ Մորը նա ասեց, որ էն թաղած տեղը չէթա, իրա գլուխը լվանա, էն սհաթը էլիետ կսաղանա դևը։

Համա նրա մերը անջիգյար մեր էր. նա ամեն օր իրա գլուխը նրա վրա էր լվանում, ու չունքի Քյուչյուք-Մուրադը ամեն օր էթում էր ավղուշ, չէր կարում տենա մորը դևի գերեզմանի վրա գլուխ լվանալիս։ Անջիգյար մերը էնքան գլուխը լվանում ա դևի թաղած տեղի վրա, որ դևը լավանում աւ։ Քյուչյուք-Մուրադի մերը էս դևին սիրում ա ու ջխտով միտք են անում, թե ոնց նրան մի դհով կորցնեն, որ դևը պսակվի էս կնկա վրա։

Դևը սրան խրատում ա ասելով.— Քեզ համար տրտում-տխուր նստի տանը. երբ նա կգա ու կհարցնի, թե ինչո՞ւ ես տրտում, դու ասա, որ ֆլան արծվի կաթն եմ ուզում։ Էնտեղ որ էթա, էլ ետ չի գա, չունքի ճամփին մի Հըլընկ ասված ջանավար կա, նրա ձեռից մարդ չի պրծնի. ով որ նրա ձենը լսում ա, էն սհաթին խլանում աւ։

Էդպես էլ անջիգյար մերը արեց ու իրա տղին ղրկեց արծվի կաթի։

Քյուչյուք-Մուրադը գնաց, գնաց, ճամփին մի պառավ մարդ ռաստ էկավ։

— Բարո՛վ, բաբի ջա՛ն,— ասեց մեր բարի ճամբորդը։

— Բարո՛վ, ասսու բարին, որդի՛,— ասեց ծերը։— Աստած բարի ճամփա տա, էդ ո՞ւր ես էթում։

Նա պատասխան տվեց, որ էթում ա արծվի կաթ բերելու։

Ծերը զարմացավ ու ասեց.— Որդի՛, արի ինձ ականջ դիր ու մի էթա. հաղարավոր մարդիք գնացել էնտեղ ու ետ չեն էկել, դու էլ կէթաս՝ կփոշմանես, մեղք ես, արի եդ դառ, որդի՛։

Համա Քյուչյուք-Մուրադը ասեց.— Որ մեռնեմ էլ՝ պտի էթամ։

Ծերը ասեց.— Լա՛վ, թե որ պտի էթաս, մուղայիթ կաց, արծիվը չինարի ծառի վրա թառ ա էլե, ու նրա ոտը քարխեց աւ։ Էնտեղի հողը սաղ ավազ ա, կքանդես ավազը ու թաք կացած նրա

www.naregatsi.org

քարխեց էլած ոտը նետով կտաս, դու չես էրևա, թե չէ քեզ կգզգզի։ Արծիվը ցավից ձեն կտա ու կասի. «Ա՜յ թե իմանամ էս ինչ մարդ էր, որ ինձ նետով խփեց, ձվիր-ձվիր կանեմ նրան»։ Համա երբ որ ոտի ժահրը կդուս գա ու կպրծնի, դու էն վախտը էլ չվախես։ Արծիվը, չունքի իրա քարխեցից պրծավ ու ոտը դնջացավ, կասի. «Ցարա՜ր իմանամ էս ով էր, որ ինձ էս թավուր լավություն արեց ու ինձ էս ցավից պրծացրեց»։ Էն վախտը դու քու թաք կացած տեղից դուս կգաս ու կասես. «Ես էի»։ Նա կասի քեզ. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ տամ քու լավության համար»։ Էն վախտը կասես նրան, որ. «Կաթդ՝ քու ձագերիցդ մնի տակի մեջ ածած ու մի ձագի վրա դրած»։ Նա էլ չի խնայի ու կտա քեզ իրա կաթից։

Նա էլ գնաց ու ոնց որ ծերը ասել էր նրան՝ արեց, ու կաթը արծիվը տվեց նրան։

Քյուչյուք-Մուրադը արծվին ասեց.— Քու ճտերից էրկուսը տու, որ մնին մորթեմ ու տիկ շինեմ, կաթը ածեմ նրա մեջը, մեկելի մեջքի վրա դնեմ, որ տանի։

Արծիվը ասեց.— Ես եմ, էս էրկու ճուտը, դու քո աստվածը, տար մնին հեռու ինձանից մորթի, տիկը հանի ու կաթը ածա մեջը. համա էնքան հեռու տեղ տար մորթի, որ նրա ձենը ականջս չընկնի։

Քյուչյուք-Մուրադը արծվի մի ճտից տիկ հանեց, արծվի կաթը ածեց նրա մեջը, դրեց մեկել ձագի վրա ու հետ դառավ։ Ճամփին էն պառավը ուզեց նրանից մի ստաքան կաթը ու խմեց՝ էլավ մի ջահել տղա։ Կաթը տարավ տվեց մորը. մերը խմեց ու էլավ մի տասնհինգ տարեկան սիրուն աղջիկ։

Համա մերը տրտում էր, որ իրա տղեն էլի ետ ա էկել. ասեց.— Ա՜յ որդի, էս յաղու էր, որ տվիր խմեցի։

Դևը սովորցրեց նրան, որ Քյուչյուք-Մուրադին ղրկի ասլանի կաթի. կըլնի որ էլ ետ չգա, չունքի էնտեղ էնթավուր օձեր-կան, որ սաղ-սաղ նրան կուլ կտան։ Քյուչյուք-Մուրադը առավոտը վեր կացավ ու «Ցա՜ տեր աստված» կանչելով ճամփա ընկավ, որ ասլանի կաթը բերի։ Էլի էն պառավ մարդը ճամփին նստել էր։ Նա հարցրեց, թե ո՞նց էթա ասլանի կաթը բերի։

Պառավը ասեց.— Ասլանը Սև սար ասած սարի վրա ա ըլնում. էն սարի վրա էնթավուր մենձ-մենձ օձեր կան, որ կուտեն քեզ. վրեդ կուպր քսի ու գնա, նրանք հոտ կքաշեն ու ետ կէթան։ Էնտեղ մի հավուզ կա, որի մեջ ջուր ա ածած. գնա էն ջուրը կրճի, տեղը

www.naregatsi.org

գինի ու արաղ ածա. ասլանը կգա կխմի, կհարբի ու թոլեթոլ կընի, էն սհաթին դու թաք կացած տեղից դուս արի ու գնա նրա գլուխը կտրի, կաթը կթի։ Նա էրկու ճուտ էլ ունի, չես թողնի նրանց էնտեղ. վե կկալնես ու կբերես նրանց, քեզ պետք կգան։

Քյուչյուք-Մուրադը գնաց էնպես էլ արեց՝ մորթեց ասլանին, նրա կաթը կթեց ու նրա էրկու ճուտերը քցած հետևը էկավ հասավ տուն, կաթը տվեց մորը։

Նա խմեց ու էլի ասեց.— Ա՜յ որդի, էս յաղու էր, որ ինձ տվիր։

Դևը շատ մտածեց, թե ո՞նց նրան կորցնի ու էն կնկանը ասեց.

— Էս անգամ ղրկի Օխտը ծովի կղզի, որտեղ իմ դև աղբրտինքն են. նրանք մի բաղչա ունեն, մեջը ամեն տարի իրեք ձմերուկ ա ըլնում, թող էթա բերի։

Անջիգյար մերը առավոտը իրա տղին ղրկեց էնտեղ, ու նա, չունքի իրա մորը շատ էր սիրում, վե կացավ ու գնաց։ Էլի ճամփին ծերը նստել էր. նրանից նա հարցրեց, թե ո՞նց էթա Օխտը կղզին ու ձմերուկ բերի մոր համար։

Նա ասեց.— Կէթաս Օխտը կղզին. էնտեղ դևեր են կենում. դու նրանց բաղչեն կմտնես ու մի ձմերուկ կկտրես. կեսը ձիուդ առաջ կդնես, կեսը դու կուտես. մի ձմերուկ էլ կկտրես, մի կեսը ասլանի մի ձագի առաջ կդնես, մեկել կեսը՝ մեկելի. ու դու էլ քեզ համար գինջ կքնես։

Քյուչյուք-Մուրադը ձին նստեց ու էն էրկու քոթոթները աղաք արեց դպա Օխտը ծովի կղզին։ Էկավ հասավ ու ձին դուզ քշեց դեվերի բոստանը։ Ձիուց վեր էկավ ու մի ձմերուկ կիսեց, կեսը ինքը կերավ ու կեսը իրա ձիուն տվեց. մինն էլ կիսեց, մի կեսը մի քոթոթի առաջ դրեց, մեկել կեսը՝ մեկելի ու ինքը յափնջին վրան քցեց ու քնեց։ Քոթոթներից մինն էլ քնեց, համա մեկելը զարթուն էր։ Մի դև, հենց որ տեհավ իրանց բոստանում մարդ քնած, էն սհաթը դուս էկավ, որ նրան թիքա-թիքա անի. համա էն զարթուն քոթոթը հենց որ տեհավ, վրա վազեց ու ձվիր-ձվիր արեց. ետևից նրա աղբրտինքը էկան, համա բոլորին էլ գզգզեց ու թիքա-թիքա արեց։

Քյուչյուք-Մուրադը զարթնեց ու շատ ուրախացավ, երբ իմացավ, որ դևերին սպանել են իրա քոթոթները։ Մտավ էն դևերի տները ման էկավ. տեհավ մի շատ սիրուն հուրի-փարի աղջիկ։

Էն սիրուն աղջիկը ընկավ Քյուչյուք Մուրադի ոտները ու ասեց.

www.naregatsi.org

— Ես ֆլան թաքավորի աղջիկն եմ, ինձ էս դևերը փախցրին ու բերին ըստեղ. սրանից դենը ես քոնն եմ, դու իմը, քեզանից էլ ղոչաղ մարդ կարամ ճարի՞։

Նա էդ աղջկանը, որի անումը Մրջան խանում էր, վերցրեց ու իրա էրկու քոթոթների հետ վեր կացավ գնաց։ Մի ձմերուկ քցել էր իրա խուրջնի թայը։ Գնացին, գնացին մի ճամփի վրա, Քյուչյուք-Մուրադը ասեց Մրջան խանումին.

— Ես էթում եմ մորս մոտը, դու գնա քո հոր մոտ, ես կգամ քեզ կգտնեմ ու կպսակվեմ քեզ հետ։

Էս ասեց ու իրանց մատանիները փոխեցին. նա իրա հոր մոտ գնաց, Քյուչյուք-Մուրադն էլ ձմերուկը տարավ տվեց մորը։ Մերը էլի տրտմեց, որ իրա որդին հետ էկավ, ասեց.

— Ա՜յ տղա, էս դեղ չէր, որ ինձ տվիր, յաղու էր։

Դևն ու անջիգյար մերը շատ չալիշ էկան, որ նրան մի դհով ռադ անեն իրանցից, յա ոտով գլխով կորցնեն, համա չէլավ։

Մի օր Քյուչյուք-Մուրադի մերը հարցրեց նրան.— Քեզ ի՞նչը կհաղթի։

Նա ասեց.— Գութանի ժնջլները։

Բերեց նրա թևերը գութանի ժնջլներով կապեց, համա ղոչաղ Քյուչյուք-Մուրադը էնպես թափ տվեց, որ տասը հազար կտոր արեց ու դեն քցեց։

Մերը էլի հարցերեց.— Քեզ ի՞նչը կարա ղոռի։

Նա ասեց.— Կանեփե ճոպանը։

Բերեց նա կանեփե ճոպանը ու նրա թևերը կապեց, համա էլի նա կտրտեց։

Վերջը անջիգյար մերը էլի հարցրեց.—Ի՞նչը քեզ կարա հաղթի։

Նա ասեց.— Անդի լարը, որ իմ ջուխտ բիթը դնեն իրար վրա ու կապեն, էլ չեմ կարա կտրի։

Ղորթ որ նրա բթերը իրար վրա դրեց ու կապեց։ Քյուչյուք-Մուրադը թափ տվեց համա չկարաց կտրի. անդի լարը անց կացավ մսի միջով մինչև ոսկորը։

Կնիկը դևին ասեց.— Թուրը բեր սրա գլուխը կտրի։

Նա ասեց.— Ո՞նց կրլնի, որ դրա գլուխը կտրեմ, քո ազիզ բալեն ա, յադ չի։

Նրա աչքերը հանեցին ու տարան մի հեռու տեղ մի հոր քցեցին։

Քյուչյուք-Մուրադին հորի մեջ էն էրկու քոթոթներն էին պա-

www.naregatsi.org

հում. էթում էին տներից հաց գողանում ու բերում քցում են հորը։ Նա էլ ուտում էր ու չէր մեռնում։ Էդ ասլանի ճուտերը շատ ղոչաղ էին. էնպես որ մի անգամ մի բեղրդյան իրա փողերը հավաքում էր, էն ասլանի ճուտերը գնացին մի տոպրակ փող փախցրին ու բերին քցեցին էն հորի մեջ։ Քյուչյուք-Մուրադը շատ զարմացավ, թե էս փողը ո՞վ քցեց։ Բեղրդյանը նրանց հետևից ընկավ ու տեհավ, որ բերին մի հոր քցեցին։ Բեղրդյանը փարխաջ քաշ արեց ու Քյուչյուք-Մուրադը նստեց նրա մեջը, դուս էկավ լիս աշխարհը։ Իրա գլխով անցկացածը Քյուչյուք-Մուրադը մին-մին ասեց։ Էն բեղրդյանը ուխտ արեց, որ ինչ ունեմ չունեմ, պտի խարջնամ ու քու աչքերը լավացնեմ։ Քյուչյուք-Մուրադը էն էրկու ասլանի ճտերին էս բեղրդյանին տվեց փեշքաշ։ Բեղրդյանը շատ դես-դեն ընկավ, չկարաց լավացնի նրա աչքերը։

Հիմա տեսնանք Մրջան խանումը, որ գնաց իրա հոր մոտ, ի՞նչ արեց։ Նա իմացավ, որ Քյուչյուք-Մուրադի աչքերը հանել են, քոռերի համար խեյրաթխանա բաց արեց ու ինչքան քոռեր կային՝ իրա տունն էր հավաքում, իրա փողով կիրակրում ու լավացնում, որ էս բանը Քյուչյուք-Մուրադը լսի ու գա էնտեղ։ Բեղրդյանը շատ դեսդեն ընկավ, տեհավ որ չի կարում լավացնիլ տա՝ տարավ ու Մրջան խանումի խեյրաթխանի մեջ բաց թողեց, որ նրանք լավացնեն։ Ինքն էլ շատ աղքատացած, չունքի ինչ որ ուներ-չուներ նրա աչքերը լավացնելու վրա էր մղսե, առավ էրկու քոթոթները ու գնաց։

Մի օր Քյուչյուք-Մուրադը մի ստաքանի մեջ գինի ածել տվեց ու իրա մատին էլած մատանիքը, որ Մրջանինն էր, քցեց գինու մեջ, իրեսը շորով ծածկեց, տվեց նոքարներին ու ղրկեց Մրջան խանումի մոտ ու ասեց.— Ասեք նրան, որ էս ստաքանը, յաղու էլ որ ըլնի. Քյուչյուք-Մուրադի խաթրու համար պտի խմես. ասեք նրան, որ քոռերից մեկը էս ա խնդրում քեզանից։

Ստաքանը կալնած տվին Մրջան խանումին ու ասեցին.

— Քոռերից մեկը աղաչանք ա անում, որ էս Քյուչյուք-Մուրադի խաթրու համար խմես։

Նա ասեց.— Չունքի նա Քյուչյուք-Մուրադի անումը տվեց. յաղու էլ որ ըլնի, չեմ վախի,— ու խմեց։

Հանկարծ երբ որ խմեց պրծավ, մատանին ընկավ գոգը. հենց որ տեհավ ճանաչեց ու էն սհաթին ուշքը գնաց։ Էն ծառան. որ տարավ գինին տվեց Մրջան խանումին, հենց իմացավ յաղու

19—2573

www.naregatsi.org

էր, որ նա տվել էր նրան ու նա ուշաթափվեց։ Գնաց ու սկսեց ծեծել Քյուչյուք-Մուրադին, մինչև որ Մրջան խանմին ետ բերեցին ու եկավ նա ազատեց Քյուչյուք-Մուրադին։

Մրջան խանումը շատ փող ուզեց հորից ու գնաց Քյուչյուք-Մուրադի հետ աշխարհ ման գալու, որ նրա աչքերը լավացնի։ Էկան սրանք ու մի աղբրի մոտ նստեցին։ Մրջան խանումը տեհավ, որ մի գորտ մեջքի վրա շուռ էկավ. գնաց ու նրան էլի փորի վրա շուռ տվեց։

Գորտը ասեց.— Ջունքի ինձ լավություն արեցիր, ես ուզում եմ քեզ էլ իմ դհից լավություն անեմ. էդ աղբրի ջուրը քոռ աչք ա լավացնում, դրանով կարաս քոռերին լավացնի։

Մրջան խանումը ուրախացած ասաց.— Ինձ մոտ մի մարդ կա, որի աչքերը քոռ են, ո՞նց պտի անեմ, որ լավանան։

Գորտը ասեց.— Առվի ցեխից աչք շինի ու դիր աչքի տեղը, էդ Անմահության ջուրը քսի, ասսու հրամանով կլավանա։ Ղորդ որ էդպես էլ արեց, ու Քյուչյուք-Մուրադի աչքերը լավացան։

Քյուչյուք-Մուրադը Մրջան խանումին ասեց.— Դու գնա քու հոր մոտ. ես մուրազ ունեմ կատարելու, պտի էդ ամ կատարեմ ու գամ հետո պսակվեմ։

Քյուչյուք-Մուրադը գնաց իրա մոր մոտ, տեհավ, որ դևի հետ պսակվել ա ու էնքան էրեխեք ունի, որ թունդրի շորս բոլորը նըստոտել են, մինը լաց ա ըլնում, մեկելը հաց ա ուզում, էրեխեքը դիփ բրդոտ էին։ Բոլորին էլ թրի ա քաշում, սպանում ու ինքը հետ գալիս, որ էթա Մրջան խանումի մոտ։ Ճամփին նա տեսնում ա մի աղքատ մարդ՝ էրկու ասլանի ճուտ հետը գալիս ա։ Հարցնում ա, թե նա ով ա։ Նա ասում ա, որ ինքը մի հարուստ բեզրգյան էր, ինչքան հարստություն ուներ մղա՛ց, որ Քյուչյուք-Մուրադին լավացնի, համա չկարաց, ու ինքը է պես աղքատացավ։ Ասլանի ճուտերը ճանաչեցին նրան ու նրա տները ընկան, լիզում էին ուրախությունից։

Հետո Քյուչյուք-Մուրադը ասեց.— Արի՛ էթանք, դու ինչքան ինձ վրա փող ես մղսե, հաց ր էնքան տամ քեզ,— ու տանում ա թաքավորի մոտ, ինչքան փող ա ուզում՝ տալիս ա ու էլի բեզրգյանը առաջվա նման հարստանում ա։

Քյուչյուք-Մուրադը ըստեղ Մրջան խանումի հետ պսակվում ա, օխտը օր, օխտը գիշեր հարսանիք ա ըլնում, ուտում, քեֆ են անում։

www.naregatsi.org

23. ԴՈՒՆԻԱ ԳՅՈՋԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով Հնդույաման քաղաքում կենում էր մի փետ կըտրող աղքատ մարդ։ Էս աղքատ մարդը ամեն օր էթում էր մեշեն, փետ էր կտրում, բերում ծախում ու էսպեսով իրա օղլուշաղը պահում էր։ Մի օր էլ գնացել էր մեշեն. տեհավ մի ղուշ թռավ ու տակը մնաց մի ձու։ Էս փետ կտրողը գնաց էն ձուն վեր կալավ ու բերեց քաղաքը ծախելու։

Մի Ջհուդ ռաստ էկավ ու ասեց.— Էդ ձվին ի՞նչ տամ։

— Ի՞նչ կտաս,— ասեց նա։

Ջհուդը ասեց.— Քսան մանեթ կտամ։

Փետ կտրողը ասեց.— Լա՜վ, լա՜վ, էլ ի՞նչ ես ինձ վրա ծիծաղում, դրուատն ասա, ի՞նչ կտաս։

— Հարիր մանեթ կտամ,— ասեց Ջհուդը։

— Ա՛յ ջանըմ-գյոզրմ, ինձանից վազն արի, հերիք ա ինձ վրա ծիծաղես, գին ես տալի՝ դրուատ գին տուր,— ասեց ձու ծախողը։

— Լա՛վ, դե էրկու հարիր մանեթ կտամ,— ասեց ձու առնողը։

— Թե որ կտաս, դե՛ հանի, տո՛ւր,— ասեց ձու ծախողը։

Ջհուդը հանեց էրկու հարիր մանեթ ու տվեց նրան։ Փետ կըտրողը ուրախ-ուրախ գնաց տուն ու նրանից դեն ամեն օր էթում էր

www.naregatsi.org

էն հավի տակից ձուն հանում, բերում ծախում էն Ջհդի վրա։ Էսպես էս աղքատ փեսա կտրողը շատ հարստացավ։ Մի օր էլ գնաց էն հավին բռնեց, բերեց տուն ու իրանց համար բոլ-բոլ ձու էր ածում, իրանք էլ ծախում, հարստանում էին։

Մի օր մարդը ասեց կնկանը.— Ա՛յ կնիկ, արի էթանք էրուսաղեմ, մղդսի դառնանք ու ետ գանք, շունքի էրկսով էլ հրես ծեռացել ենք։

Կնիկը ասեց.— Ա՛յ մարդ, էրկսով էլ էթանք էրուսաղեմ, մեր տունը ո՞վ մնա. դու գնա, արի, հետո ես կէթամ։

Մարդ ու կնիկ ունեին էրկու պուճուր տղա։ Մարդը մեկել օրը վե կացավ ու գնաց էրուսաղեմ։ Կնիկը մնաց տանը, սաքի թե մուղայիթ կենալու։ Էս կնիկը տենալով որ էն Ջհուդը, որ իրանցից ձու էր առնում, շատ հարուստ ա, նրա մոտ մարդ ղրկեց, որ գա իրա հետ պսակվի։ Ջհուդն էլ ասեց, որ հավի մսից շորվա էփի ու թագարեք տենա, ինքը իրիկունը կգա։ Նա էլ հենց իմացավ, թե ասում ա՝ հասարակ հավի մսից շորվա էփի, մի քանի հավ մորթեց ու շորվա էփեց։ Իրիկունը մարդ ղրկեց նրա մոտ, որ գա։ Ջհուդը վե կացավ ու էկավ նրա մոտ։

Համա երբ տեհավ, որ հասարակ հավի մսից ա իրա համար շորվա էփել, ասեց.

— Ես խո քու աղքատը չեմ, որ էսպես հավի մսից ես ինձ համար շորվա էփել. ես ուզում էի, որ էն հավի մսից էփես շորվա, որի ձուն համեշա ինձ վրա ծախում էիք. էդ տեսակ հավ, խո ես էլ ունեմ։

Էսօր էսպես անշնորհակալ վե կացավ, գնաց։ Մեկել օրը էն կնիկը էն հավը մորթեց ու շորվա շինեց նրա մսից։

Նրա էրկու էրեխեքը գնացին տեհան, որ իրանց մերը շորվա ա էփել, իրար մեջ ասեցին. «Արի, մենք առաջուց մեր փայը ածենք, ուտենք, ով գիտա ետո մեր մերը մեզ չտա էլ»։ Նրանք էդպես էլ արին, մի աման ածեցին, ու նրանց բախտից նրանց ամանն ընկավ հավի ջիգյարն ու գլուխը։ Ջիգյարը պուճուր աղբերը կերավ, գլուխը՝ մենձը։

Մարդ ղրկեց էս կնիկը Ջհդի ետևից։ Ջհուդը էկավ։ Համա հաց ուտելու ժամանակ նա ուզեց հանի ջիգյարն ու գլուխը. պղինձը շատ ման էկան, զատ չգտան։ Շատ դես ու դեն ընկան, սրան-նրան հարցրին, համա ոչ մինն էլ իրա վրա չառավ։

www.naregatsi.org

Նրա էրկու պուճուր էրեխեքը, շունքի անմեղ էին ու զադ չէին հասկանում, գնացին ու իրանց մորն ասեցին, որ իրանք են կերել հավի գլուխն ու չիգյարը։ Ջհուդն ասեց, որ եթե չիգյարն ու գլուխը չդտնեն նա չի պսակվի։ Անչիգյար մերը իրա նոքարին հրամայեց, որ էս էրկու էրեխանցը տանի քաղաքից դուրս, նրանց սպանի ու նրանց փորից հանի գլուխն ու չիգյարը, բերի տա իրան։

Էս էրկու անմեղ, հրեշտակի նման էրեխանցը վեր կալավ ու շխտի ձեռքը բռնած ճամփա ընկավ։ Ճամփին բարի նոքարն ասեց էրկու էրեխանցը.

— Ձեր մերն ասել ա, որ ես ձեզ մորթեմ ու ձեր փորից հանեմ չիգյարն ու գլուխը, որ նա տա Ջհուդին. համա ես իմ ձեռները անմեղ արնի մեջ չեմ շաղղի, չհանդամը թե Ջհուդը չիգյար չի ուտի, գնացե՛ք դուք ձեր մուրազին հասեք, աստված ձեզ բարի ճանապարհ տա։

Էս էրկու աղբրտինքը էկան, էկան, ճամփին մի ծեր մարդ պատահեցին։

— Բա՛րև, բարի՛,— ասեցին էրեխեքը։

— Բա՛րև, աստծու բարին, ա՛յ որդիք,— ասեց ծեր մարդը։

— Էս ճամփեքանց մեջ ո՞րն ա լավը, որ բռնենք, էթանք,— հարցրին էրեխեքը։

Մեր մարդը պատասխանեց.— Որդի՛ք, էրկու ճանապարհ կա։ Էս մինը տանում ա դպա Ջինումաչինա քաղաքը, էս մեկն էլ տանում ա դպա Դունիա գյոզալի հոր թաքավորությունը։

Մենձ աղբերը Ջինումաչինա քաղաքի ճամփեն բռնեց ու գնաց. համա պուճուր աղբերը գնաց դպա Դունիա գյոզալը։ Էսպես էրկու աղբրտինք իրարից բաժանվեցին։

Պուճուր տղեն գնաց հասավ Դունիա գյոզալի հոր թաքավորությունը։ Ընտեղ նա գնաց մի ոսկերչի մոտ աշկերտ մտավ։ Էս ոսկերիչը տենում էր, որ երբ էս տղեն առավոտը զարթնում ա, գլխատակին միշտ հինգ հարիր մանեթ ա ընում։ Էսպես ոսկերիչը ամեն օր նրա գլխի տակից հինգ հարիր մանեթ էր հանում։ Ոսկերիչը սրանով շատ հարստացավ։ Համա խեղճ էրեխեն չէր հասկանում, թե ինչից ա, որ քանի գնում իրա ուստեն հարստանում ա։

Էս էրեխեն մի քանի տարի ոսկերիչի մոտ մնաց, և նա մի քանի օթախ լիքը փող հավաքեց նրանից։ Մի անգամ էլ ոսկերիչը էս էրեխին տվեց իրա շորերը, որ տանի տուն՝ կնկան տա լվանա-

www.naregatsi.org

լու։ Համա ուստի կնիկը բարկացավ էրեխի վրա ու շորերը ետ դարձրեց։ Էրեխեն էլ էկավ ուստին պատմեց բոլորը, ինչ որ ուստակինը նրան արել էր։

Ոսկերիչը քաղցրությամբ ասեց.— Արի էթանք տուն, տենամ ինչո՞ւ չի թողում տուն։

Ուստեն մտավ տուն ու էրեխին դռանը թողեց։ Ոսկերիչը բարկանալով ասեց կնկանը.

— Ա՛յ կնիկ, էդ ինձ վնաս ես տալի, ես նրան շաբթենը մի մանեթ եմ տալի, նրանից ես օրը հինգ հարիր մանեթ եմ առնում. քանի կարաս նրա հետ լավ վարվի, որ մեր մոտից չէթա, հեռանա, թե չէ բաններս բուրդ ա. մաղուզ հարստանում ենք յավաշ-յավաշ։

Էս բոլորը էրեխեն դրսից ականջ դրեց, ու երբ ուստեն դուս էկավ տանից, էրեխեն ասեց, որ էլ չի ուզում իրա մոտ մնա, թեկուզ որ շաբթենը հազար մանեթ տա։ Ոսկերիչը շատ աղաչանք արեց, որ չէթա, համա էրեխեն էլ չլսեց ու նրա մոտից գնաց։ Իրա համար, հենց էն քաղաքում մի տուն քրեհեց ու ամեն օր զարթնում, տենում էր, որ գլխատակին մի հինգ հարիր մանեթ կա։ Էսպես նա մի լիքը օթախ լցրեց փողով։

Դունիա գյոզալը էս քաղաքի թաքավորի աղջիկն էր. էնքա՞ն սիրուն, էնքա՞ն նաշխուն, որ հատը չէր ըլնի աշխարքում։ Ամենահարուստ մարդիկը՝ էն էլ տարեենը մի անգամ, էթում էին նրա ճկութը տեսնալու ու հազար մանեթ էին տալի։ Էս տղեն որ իմացավ, թե Դունիա գյոզալի մի ճկութը տեսնալու համար հազար մանեթ են տալի, ինքն էլ գնաց, հազար մանեթ տվեց ու տեհավ նրա ճկութը։ Սրանից հետո ամեն օր գալիս էր տեսնում նրա ճկութը ու հազար մանեթ տալի ամեն անգամին։

Դունիա գյոզալը ինքն իրան մտածեց. «Էս տղի մեջ հունար կա, որ ամեն օր գալիս ա ինձ տեսնալու ու հազար մանեթ ա տալի։ Ուրիշ հարուստ մարդիկ տարեենը մի անգամ են գալի, համա սա էր պուճուր տեղովը ամեն օր ա գալի»։

Մի օր էս տղին իրա մոտ կանչեց ու իրա հետ հացի հրավիրեց։ Հացի վախտը հրամայեց իրա նոքարներին, որ գինին արաղի հետ խառնեն ու դնեն էս տղի առաջ, որ խմի։ Երբ որ լավ հարբեց տղեն, իրա նոքարներին ասեց, որ մինը նրա ձեռներից, մինը նրա ոտներից բռնեն ու ժաժ տան։ Էնքան ժաժ տվին, որ հավի ջիգյարը նրա փորից վեր ընկավ բերնովը ու Դունիա գյոզալը կուլ տվեց։

www.naregatsi.org

Հետո իրա նոքարներին հրամայեց, որ վե կալնեն էն տղին դուս գցեն։ Առավոտը տղեն վեր կացավ տեհավ, որ քուչումը ընկած ա։

Ըստեղից տղեն վեր ա կենում ու գնում։ Գալիս ա մի իգու դռան առաջ կանգնում։ Էս իգու կատեպանը, որ մի պառավ մարդ էր, հարցրեց.

— Ա՛յ որդի, ո՞ւր ես էթում։

— Ըսկի, ոչ մի տեղ,— ասեց նա,— ինձ քեզ մոտ չի՞ր վեր կալնի. անհեր, անմեր, եթիմ տղա եմ։

Ներ կատեպանը նրան ուրախությունով ընդունեց, ասելով.

— Սրանից դենը միշտ ինձ մոտ, էս իգում կմնաս. ծառերի բոլոր մրգերը կարաս ուտի, համա էս էրկու խնձորենի ծառերից չուտես։ Զունքի որ ուտես էս մենձ-մենձ խնձորներից, երկենք-երկեն պողեր դուս կգան գլխիդ. հենց որ էս պուճուր խնձորները ուտես՝ էլի պողերը վեր կթափեն. մուղայիթ կաց, որ բերանդ չդնես։

Տղեն ուրախացավ ու մտքումը ասեց. «Ես հիմա Դունիա գյոզալին շանց կտամ»։ Մենձ-մենձ խնձորներից մի թաբախ վեր կալավ ու ընկավ քուչա-քուչա.

— Ա՛յ լավ խնձոր, ա՛յ լավ խնձոր, գնա՞ց, չմնա՞ց։

Դունիա գյոզալը ասեց.— Մի խնձոր վեր գցի տենամ, թե լավն ա կառնեմ։

Նա գլուխը ակուշկից դուս էր հանել։ Տղեն մի խնձոր գցեց ու ինքը լուլ ու կուլ փախավ, որ չէրևա, թե նրան խնձոր ով տվեց։ Նա հենց որ խնձորը կերավ, էրկու դհից էլ էնպես մենձ-մենձ պողեր դուս էկան, որ էլ գլուխը չկարաց ներս տանի ու էսպես մնաց։

Տղեն քուչա-քուչա ման էր գալի ու բղավում.

— Ով ուզում ա՝ էթա Դունիա գյոզալի էրեսը տենա անփող։ Առաջ հազար մանեթ իք տալի՝ նրա մի ճկուքը տենում, հիմա անփող գնացեք նրա սաղ էրեսը տեհեք։

Էլ բազարավոր, էլ մարդ չմնաց, էկան հավաքվեցին տենալու։ Համա ոչ մինն էլ ա չկարաց նրան լավացնի։ Թաքավորը մնացել էր շվարած մնացած։

Էն տղեն վեր կալավ մանր խնձորները, գնաց թաքավորի մոտ ու ասեց.

— Ես կարող եմ նրա պողերը կտրտել։

Աղջիկն էլ ասեց.— Թե որ լավացնես ինձ, ես քոնը, դու իմը։

www.naregatsi.org

էն մանդր խնձորները տվեց աղջկանը, որ ուտի, ու էն սհաթին պոզերը վեր թափեցին։ Էն գշերը տղեն աղջկա մոտ մնաց։ Համա գիշերվա մի վախտ իրա նոքարներին հրամայեց, որ տանեն բուշեն գցեն։ Առավոտը տղեն զարթնեց, տեհավ որ քուշումն ա ընկած։ Տեղից վեր կացավ ու գնաց։ Քուշումը ռաստ էկավ իրեք մարդկերանց, որոնք իրար հետ կռիվ էին անում։ Էն իրեքն էլ մի ազբեր էին։

Հարցրեց սրանց.— Ա՛յ աղբեր, ինչի՞ եք կռվում։

Նրանցից մեկը պատասխանեց.— Մենք իրեքս էլ ախբերտինք ենք, ունենք մի Գդակ, մի Դագանակ, մի էլ Սուփրա, մեր կռիվը հենց սրանց համար ա։

— Դրանց մեջ ի՞նչ հունար կա,— հարցրեց տղեն։

Նրանցից մեկը պատասխանեց.— Էս Գդակը ով որ ծածկի՝ նրան էլ չեն տեսնա, էս Փեսը ում որ խփես ու ինչ ուզենաս՝ կըլնի, էս Սուփրեն էլ ուր որ ուզենաս կտանի ու ինչ տեսակ կերակուր ուզենաս, մեջը կգտնվի։

Էս տեսնելով տղեն մտածում ա, որ սրանով կարա Դունիա գյոզալի հախիցը գա։ Ասում ա.— Տենամ դրանք ի՞նչ գադ են։— Էս ասում ա ու Գդակը դնում գլխին. մնում ա Դագանակն ու Սուփրեն ձեռին, ու նրանք տղին էլ չեն կարում տեսնա։

Աղբերտինքը իրար մեջ ասեցին.— Հա՛, էդ մինը նա շատ լավ արեց. չունքի մենք զուր տեղը պտի իրար հետ կռվեինք, լավ էլավ՝ նա տարավ, ո՛չ ինձ էլավ, ո՛չ քեզ, ո՛չ էլ նրան, լավ հալալ դառասատան կտրեց։

Տղեն Գդակը դրեց գլուխը ու գնաց Դունիա գյոզալի մոտ։ Նա հաց էր ուտում։ Տղեն նստեց նրա մոտ ու մի դհից էլ նա էր ուտում։ Աղջիկը տեսնում էր, որ դեռ ինքը մի գթալ չվերցրած, նա իրեք գթալ կուլ էր տալի. ինքն իրան մտածեց. «Էլի էն տղեն, ոնց որ էրևում ա, էկել աչ։ Տղեն Գդակը գլխից վեր կալավ ու էրևաց Դունիա գյոզալին։

Դունիա գյոզալը շատ աղաչեց, պաղատեց, որ էս անգամ էլ ասատու սիրու խաթեր իրան բան չանի, համա նրան չլսեց, Սուփրեն գցեց նրա տակը ու ասեց.— Էս սհաթը մեզ տար Օխտը ծովի կղզին։

Մի սհաթից ետը նրանք Օխտը ծովի կղզու վրա էին։ Տղեն ամեն օր էթում էր ավղուշ, մինչև իրիկուն տուն չէր գալի ու նոր

www.naregatsi.org

մթնելիս տուն էր գալիս։ Մի օր, ոնց որ էլավ, Սուփրեն տղի մտիցը ընկել էր ու մնացել էր տանը։

Դունիա գյոզալը վրան նստեց ու ասեց.— Ա՛յ Սուփրա, քեզ տենամ, ինձ տար իմ հոր մոտ, որտեղից որ բերեցիր։— Մի սհաթից ետ նա իրա հոր տանը նստած էր։ Թաքավորը շատ ուրախացավ, որ իրա կորած աղջիկը գտնվեց ու մեծ հացկերույթ էր սարքել, որ ուտեն-խմեն, քեֆ անեն։

Տղեն իրիկունը էկավ, տեհավ ո՛չ աղջիկ կա, ո՛չ էլ Սուփրա։ Ընտրանքից մի քանի ծառեր կտրեց, իրար հետ կապեց, նստեց վրեն ու ջրի վրով գնաց Դունիա գյոզալի մոտ։ Գդակը դրեց գլխին ու գնաց նրա մոտ։ Դունիա գյոզալը էլի իմացավ, որ տղեն էկել ա, համա էլ չէր կարա պրծնի նրա ձեռից։ Տղեն Գդակը գլխից վեր կալավ ու Դաղանակով խփեց նրան՝ էշ դառավ. նստեց վրեն ու քշեց բաղարի միջով դպա Ջինումաշինա քաղաքը։

Հիմի գանք սրա աղբորը։ Սրա մենձ աղբերը գնաց Ջինումաշինա քաղաքը. նրա բախտից էն վախտը Դավլաթ ղուշը թռցնում էին, որ ում գլխին որ կանգնի՝ պտի նրան թաքավոր շինեն։ Դավլաթ ղուշը քոռղաղընա գնաց դուզ էս տղի գլխին կանգնեց։ Մարդիկ նրա գլխին տվին ու ղուշը վեր կալան, որ թազա թռցնեն։ Էն տղին էլ տարան խալխի մեջ մի պուճախ կոխեցին, որ Դավլաթ ղուշը չկանգնի նրա գլխին։ Դավլաթ ղշին մին էլ թռցրին, համա նա էլի գնաց ու դուզ նրա գլխին վեր էկավ։ Էս տենալով էլ բան չասեցին ու նրան թաքավոր շինեցին։

Էս վախտը սրա մենձ աղբերը Ջինումաշինա քաղաքի թաքավորն էր, որ պուճուր աղբերը էշի վրա նստած գալիս էր դպա նա։ Տղեն էշի վրա նստած էկավ հասավ Ջինումաշինա քաղաքը։ Ըստեղ նրան պատահեցին փետ կտրողներ, ու նա իրա էշը նրանց քրեհով տվեց ու ասեց, որ խսկի եմ չտան ուտելու, անհաց, անջուր բանացնեն ու հետո իրա մոտ բերեն։ Փետ կտրողները տարան սոված, ծարավ բանացրին, բանացրին, էնպես որ նխտից ընկավ, էլ ոտներում թաղաթ չկար, որ էթար ու ցխի մեջ վեր ընկավ։ Փետ ծախողները ճիպոտ էր, որ հասցնում էին, համա չէր կարում էշը ցեխից դուս գա, չունքի մի քանի օր սաղ անհաց, անջուր էր։

Մարդիկը մի դհից նրանց ղնամիշ էին անում.— Տո՛, անաստվածներ տեսնում եք ոտներում էլ թաղաթ չկա, որ էթա, զուր ընչի՞ եք ծեծում, մեղքը չի՞։

www.naregatsi.org

Նրանք էլ ասեցին, որ էշի տերը էնպես ա ասել, որ զադ չտան ուտի ու էդպես սոված իրա մոտ բերին։ Բեռը վերցրին վրից ու տարան տվին տիրոջը։

Հետո թաքավորին իրա գլխով բոլոր անցկացածը պատմեց տղան։ Դագանակով խփեց էշին՝ էլավ առաջվա Դունիա գյոզալը։

Էսպես էրկու աղբրտինք սար, քոլ, աշխարք չափչփելուց հետո էլի իրար տեհան ու իրանց փափազը առան, ու չունքի մի հալալ մոր ծիծ էին կերել, էլ իրարից չբաժանվեցին։

www.naregatsi.org

25. ՈՒՍՏԱ ՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Քանանու երկրում[1] կենում էր մի թաքավոր Ազիզ էֆենդի անունով։ Էս թաքավորը իրեք տղա ուներ։ Ամենից պստկի անունը Մուրադ էր ու ամենից ղոչաղը նա էր։ Մի անգամ թաքավորը իրա իրեք տղերքանցը ղրկեց մոտիկ գեղերը՝ բանի։ Ճամփին սրանց վրա գողեր թափեցին։ Վախլուքյունից էրկու աղբրտինքը փախան, մնաց Մուրադը՝ պուճուր աղբերը։ Մուրադը էդ գողերի հետ կռիվ արեց ու հաղթեց, մի քանիսին սպանեց, մի քանիսին էլ ձիու ոտը կապեց ու բերեց իրա վախլուկ աղբրտոնց մոտ։

— Ամո՞թ չի ձեզ,— ասեց Մուրադը,— բալքի ինձ գողերը սպանում էին, ինչու ինձ մենակ թողիք, փախաք. աղբերությունը էդպես ա, հա՞։— Մուրադի աղբրտինքը կարմրեցան ու վախեցան, չլինի թե էթա Մուրադը թաքավորին ասի. մտածեցին, որ մի դհով նրան կորցնեն, որ չէթա ասի իրանց հորը։

Նրանք Մուրադին ասեցին.— Ըստեղ մի խոր հոր կա, մեջը լիքը ոսկի, էրծաթ. էթանք կախ ըլնենք, հանենք։

---

1 Քանանու երկիրը Քանանացոց երկիրն է, ու ավանդություն կա այս երկրի մասին, իբրև թե այս երկրի գայլերը միս չեն ուտում, այլ ցորեն, որովհետև Հակորը անիծել է նրանց ու ասել, որ «Դուք եք կերել իմ Հովսեփ որդուն։ Սրանից ղենը դուք ցորեն կուտեք» (Մ. Բ.)։

www.naregatsi.org

Մուրադը, որ սրտոտ ու զոչաղ տղա էր, ասեց.— Որդի՞ ա, էթանք ես կախ կըլնեմ, կհանեմ։— Աղբերտինքը նրան տարան մի խոր հոր շանց տվին։ Պարանով Մուրադին կախ արին հորը ու դեռ հլա չէր հասել, թոկը կտրեցին, ու Մուրադը ընկավ ջրով լիքը հորը։ Համա նրա բախտից ջուրը էնքան խոր չէր, որ նա խեղդվեր։

Մի բեզրգյան էկավ իրա համար ջուր հանելու էս հորից ու փարխաշը կախ արեց թե չէ, Մուրադը նստեց նրա մեջ. բեզրդյանը ճկրելով անջախ կարաց նրան դուս քաշի։ Բեզրգյանը առաջին անգամ որ տեհավ Մուրադին, վախեց։ Համա Մուրադը նրան սիրտ տալով ասեց.

— Մի վախենա, ես հողածին եմ, իմ աղբերտինքը վատություն արին, ինձ գցեցին էս հորը, որ մեռնեմ, համա աստված ինձ խղճաց ու քու ձեռքով պրծացրեց ինձ։ Մուրադը շնորհակալ էլավ իրան ազատող բեզրգյանից ու իրա ճամփով գնաց։

Մուրադը տեսնալով, որ էլ իրա աղբորտանց մոտ էթալը իղուր ա, չունքի նրանք ամեն վախտ ուզում են գիան տա, ասեց որ. «Լավ կըլնի, որ գլուխս վե կալնեմ մի դհով էթամ, իմ աղբորտանց էրեսը չտեսնամ»։ Մուրադը գնաց ու մի թաքավորի մոտ ձիապան էլավ։ Մուրադի աղբրտինքը իմացան, որ Մուրադը իրանց քցած հորից դուս ա էկել ու ուրիշ թաքավորի մոտ ձիապան ա, միտք արեցին, որ նրան էնտեղ էլ մի գիան տան, չունքի իրանց արած բանը կարար իրանց հոր ականջը ընկնի։

Նրանք մի պառավ կնիկ գտան, որը խոսք տվեց, որ կէթա նրան մի բանով կկորցնի։ Նրանք էլ էն պառավ կնկանը փող տվին։ Պառավը գնաց էն թաքավորի մոտ ու ասեց.

— Թաքավորն ապրած կենա, քեզ ամեն բան թամամ ա, մնում ա, որ ֆլան թաքավորի աղջկա մոտից բերել տաս նրա Բյուլբյուլը, որ էնթավուր խոսում ա՝ մարդի խելք ա էթում։

Թաքավորը ասեց.— Ախար լավ ես ասում, ո՞վ կարա նրա մոտից փախցնի Բյուլբյուլը, հեշտ բան չի։

Պառավը ասեց.— Էն քու ձիապան Մուրադը կարա բերի, էլ ոչով, նրան ղրկի։

Մուրադին թաքավորը կանչեց ու ասեց, որ՝ ոնց որ ըլնի, պտի էթաս բերես ֆլան թաքավորի աղջկա Բյուլբյուլը, թե չէ գլուխդ կկտրեմ։ Խեղճ Մուրադը ինչ կարար ասի, թաքավորի հրամանն ա,

www.naregatsi.org

պտի իրա գլուխը մահին տար ու ոնց որ ըլներ պտի թաքավորի աղջկա Բյուլբյուլը թոցներ ու բերեր։

Ղոչաղ Մուրադը վե կացավ ու «Ցա՜ տեր աստված» կանչելով ճամփա ընկավ։ Ճամփին ռաստ էկավ մի դև, որ նստել կրակ էր արել ու տավարների գլխները շամփրի վրա շարել, խորովում էր։

Մուրադը դևին բարով տվեց ու կրակի մոտ նստեց։

— Բարո՛վ, աստծու բարին,— պատասխանեց դևը,— դու ո՞նց սիրտ արիր ու էկար ըստեղ. օձն իրա պորտով, ղուշն իրա թևով չի կարացել դա ըստեղ, դու ո՞նց էկար։ Լա՛վ, արի խորոված ուտենք, հետո կուվենք։

Դևն ու Մուրադը նստեցին հաց կերան, պրծան, վե կացան կուվելու։

Մուրադը իրա գյուրզը քցեց՝ դևը բռնեց, դևը քցեց՝ Մուրադը բռնեց։ Ախար էրկուսն էլ ղոչաղ են, ո՞նց պտի իրար հաղթեն։ Տասը օր էսպես իրար հետ կուվեցին ու նրանցից ոչ մինը չկարաց հաղթի մեկելին։

Մուրադը դևին ասեց.— էսպես կռիվ անելով բան չի ըլնի, արի կոխ պրծնենք, ով ում գետնովը տա՝ նա նրան մորթի, չունքի մեր ձիանները անգարի են մնացել, սաղ տաս օր զատ չեն կերել, մեղք են, մենք էլ ենք մեղք։

Մուրադն ու դևը կոխ պրծան. ղոչաղ Մուրադը վե կալավ դևին ու գետնին չկացրեց. թուրը քաշեց որ մորթի, դևը ասեց.

— Ինձ դեռ հլա մի մորթի. չունքի դու էթում ես, որ թաքավորի աղջկա Բյուլբյուլը փախցնես, ես ասեմ, թե ո՞նց պտի բերես Բլբլին։ Մենք նրա համար ենք, որ մարդի չթողնենք, որ ըստեղով անց կենա։ Սրանից որ մի պուճուր հեռանաս, մի ղոչաղ մարդի կտենաս, որ ծառի տակ նստել ա։ Հաղարավոր մարդիկ են գնացել նրա մոտ, բոլորին էլ նա մորթել ա ու նրանց ջամպակներից բերդ շինե, նրա մեջ ա ապրում։ Թե որ նրա ձեռից էլ պրծնես, շատ մեծ բան՝ ա։ Հետո կէթաս թաքավորի աղջկա մոտ։ Նա քնած կըլնի ու նրա կողքերքին չորս մում ա վառվում։ Թաքավորի պալատի առաջ կանգնած են մի ոչխար ու մի գել։ Գելի առաջ խոտ ա դրած, համա ոչխարի առաջ՝ դմակ։ Կէթաս ոչխարի առաջից դմակը վե կկալնես ու կդնես գելի առաջ, իսկ գելի առաջից խոտը կառնես ոչխարի առաջ կդնես։ Հետո պալատը էրկու դուռ ունի, մինը բաց ա, մեկելը՝ շինած. շինած դուռը բաց կանես, բացը՝ կշինես։ Պալատի

www.naregatsi.org

դռներից զանգուլակներ են կախ արած, որ Բյուլբյուլը վերցնես, զանգուլակները ձեն կտան ու թաքավորի աղջիկը քնած տեղից վեր կկենա ու հետո նրա ձեռից չես պրծնի, չունքի նա շատ ղոչաղ ու իգիթ աղջիկ ա։ Հետդ բամբակ կտանես ու զանգուլակների մեջ կլցնես, որ ձեն չհանեն։ Հետո կէթաս ու Բլբլի ղաֆազը, աղջկա աչ դհում կախ ա արած, կը վեկալնես ու մի լավ էլ նրա էրեսը կպաշես՝ էն սհաթը իրեսին խալ դուս կգա, ու դու կփախչես։ Հետևիցդ սար կը ձեն տա՝ «տարա՜ն», քոլ կը ձեն տա՝ «տարա՜ն», քար կը ձեն տա՝ «տարա՜ն», համա դու իսկի եդ մտիկ չտաս ու փախի գնա, որ պրծնես։

Դևը հենց որ իրա խոսքը վերջացրեց, ղոչաղ Մուրադը թուրը քաշեց ու դևի գլուխը կտրեց։ Դևին հաղթելուց հետո նա գնաց, գնաց էն ղոչաղ մարդուն ասաստ էկավ, որ ծառի տակ նստած էր։ Մուրադը նրան մտիկ տվեց ու ասեց.

— Էկել եմ, որ քեզ հետ կռիվ անեմ ու էթամ թաքավորի աղջկա Բյուլբյուլը բերեմ, փախցնեմ։

Ղոչաղ մարդը ասեց.— Լա՛վ, արի կռիվ աննենք, ով ում հաղթի՝ նա նրան մորթի, հրես թուրը ըստեղ ցցած ա։— Մուրադը իրա գյուրզը քցեց՝ նա բռնեց, նա քցեց՝ Մուրադը բռնեց։ Էսպես մի տասը տասնհինգ օր կռիվ արին, համա նրանցից ոչ մինը չկարաց հաղթի մեկելին, չունքի էրկուսով էլ ղոչաղ էին։

Հետո Մուրադը ասեց.— Արի կոխ պրծնենք, ով ում գետնով տա, նա նրան մորթի։— Էդ մարդն էլ լսեց նրա խոսքին ու սկըսեցին իրար հետ կոխ պրծնել։ Իրար դես ու դեն քաշքշեցին ու ղոչաղ Մուրադը վեր կալավ ղոչաղ տղին գետնովը տվեց։ Մուրադը նրա մի ոտը կապեց մի ծառից, մեկելը՝ մյուս, որ մի-մի ձեռով էր էն մենձ ծառերը կռացրել, ու բաց թողեց, ղոչաղ մարդը կես էլավ։

Դևին ու ղոչաղ մարդուն սպանելուց հետո նա գնաց հասավ թաքավորի պալատը։ Դռան առաջ կանգնած ոչխարի առաջից դմակը վեր կալավ ու դրեց գելի առաջը. գելի առաջից էլ խոտը վեր կալավ՝ դրեց ոչխարի առաջը։ Էն դուռը, որ շինած էր՝ բաց արեց, իսկ բաց արածը՝ շինեց։ Գնաց զանգակները բամբակով լցրեց ու ներս մտավ թաքավորի աղջկա օթախը, Բլբլի ղաֆազը, որ կախ էր արած նրա գլխի վերևը, վեր կալավ ու նրա էրեսը պաշեց՝ խալ ընկավ էրեսին։ Մուրադը Բլբլի ղաֆազը փախցրեց. քար ձեն տվեց

www.naregatsi.org

նեսիցը՝ «տարա՞նա», քոլ ձեն տվեց՝ «տարա՞նա», համա նա փախավ գնաց։ Աղջիկը վեր կացավ ու էկավ ասեց զանգակներին. «Ինչո՞ւ ձեն չհանեցիք»։ Նրանք ասեցին. «Էսքան տարի ես ձեն էի հանում, ոչ ով ինձ բամբակով չլցրեց, որ քիչ դընջանամ, համա նա բամբակով լցրեց, ինչի՞ ես ձեն հանեմ»։ Դռանը ասեց. «Ինչո՞ւ չկողպվեցիր»։ Նա ասեց. «Էսքան ժամանակ ես կողպված էի, ոչ ով ինձ չբաց արեց, համա նա էկավ ինձ բաց արեց ես ինչո՞ւ նրան բռնեի»։ Ոչխարին ասեց. «Ինչո՞ւ նրան չբռնեցիր»։ Նա պատասխան տվեց. «Էսքան ժամանակ առաջս դրած էր դմակ, ես մնացել էի սոված, նա էկավ առաջիցս դմակը վեր կալավ ու խոտ դրեց, ինչո՞ւ նրան ես բռնեի»։ Գելին ասեց. «Ինչո՞ւ նրան չբռնեցիր»։ Նա ասեց. «Էսքան ժամանակ առաջս խոտ էր դրած ու ես մնացել էի սոված. նա էկավ խոտը առաջիցս վեր կալավ ու դմակ դրեց. ես ինչո՞ւ նրան բռնեի, որ ինձ մենձ լավություն արեց»։

Թաքավորի աղջիկը ձին նստեց, ասպաբավորվեց ու գնաց տղի նեսիցը։ Էկավ տեհավ, որ էն ղոշաղ մարդը էրկու կես ա էլե ու վեր ընկել։ Հետո գնաց տեհավ, որ գելը սպանած ղիմա-ղիմա ա արած։

Մուրադը էն Բյուլբյուլը տարել էր տվել թաքավորին։ Թաքավորի աղջիկը գնաց հասավ էն թաքավորի երկիրը, որի մոտ էր իրա Բյուլբյուլը, ու մարդ ղրկեց, որ պատրաստ կենա՝ պտի գա կռվի նրա հետ։

Թաքավորը էրկու տղա ուներ. նրանցից մինը, որ ուզում էր իրա ղոշաղությունը շանց տա, ասեց.

— Ես փախցրի քո Բյուլբյուլը։

Աղջիկը հարցրեց.— Ո՞նց փախցրիր։

Նա ասեց.— Էկա ու ղոռով գլխի վերևդ քաշ արած ղաֆազը փախցրի։

Աղջիկը տեհավ, որ սուտ ա ասում, մի թաթալոշեց, որ գլուխը հինգ սաժեն հեռու վեր ընկավ։ Հետո նրա մեկել աղբերը էլի սրա նման սուտ պարծեցավ. աղջիկը տեհավ, որ սուտ ա ասում՝ սրան էլ թաթալոշեց ու գլուխը դեն քցեց։

Էս աղջիկը շատ ղոշաղ էր. մի անգամ, երբ սրա մարդը իրա հետ խոսում էր, աղջիկը թևից քաշեց ու մարդի թևը կտրվեց։ Սրանից ետ նա ախտ էր արել, որ ոչ մեկի հետ չպսակվի, մինչև որ իրա նման ղոշաղ մարդ պատահի ու հետո նրա հետ պսակվի։ Հետո աղջիկը տեհավ, որ իրա Բյուլբյուլը չեն տալի, սկսեց կռիվը

www.naregatsi.org

Թաքավորի հետ։ Ղոշուն ղոշնի վրա ղրկում էր Թաքավորը, համա մենակ աղջիկը փոթում, կոտորում էր. նրան զադ չէր դիմանում։

Վերջը Թաքավորը Մուրադին ղոշուն ղրկեց։ Նա կռիվ չարեց, ու երբ աղջիկը հարցրեց, թե՝ դու ո՞նց փախցրիր Բլբլին, նա մինմին ասեց։ Թաքավորի աղջիկը տեհավ, որ ղորթ ա ասում, ձիուց վեր էկավ ու նրա ճակատը պաչեց ու ասեց.

— Սրանից ետ ես քունը, դու իմը, ես էլ զաթի քեզ պես ղոշաղ մարդ էի ուզում ու քթա։

Էս պառավը տեհավ, որ չիլնում, ուրիշ բան մտածեց։ Էկավ Թաքավորին ասեց.

— Թաքավորն ապրած կենա, քեզ հիմա զատ չի պակաս. համա պալատդ լավ չի շինած։ Լավ կըլներ, որ մարմարից շիներիր ու պալատիդ առաջը բաղ ու բաղչա ըլնի։

Թաքավորն ասեց.— Ո՞վ կարա իմ պալատի առաջը բաղ ու բաղչա քցի, որ ես մանգամ, արևը, լիսը վրիս չընկնի իսկի։

Պառավը ասեց.— Մուրադը կարա, որ քու ձիապանն ա։

Թաքավորը Մուրադին կանչեց ու ասեց, որ իրա պալատի առաջը պտի բաղ ու բաղչա քցի, ոնց որ ըլնի. որ չկարենա, նրա գլուխը կտրել կտա։ Մուրադը տրտում-տխուր գնաց ու իրա կրնկանը էս բանը ասեց։ Նա էլ սրան ումուդով արեց, ասելով. «Բաղ ու բաղչա քցելը ինձ վրա ըլնի»։ Մեկել օրը աղջիկը իրա մատանիքը օլորեց, էրկու մարդ էկան նրա առաջ կանգնեցին ու ասեցին. «Քանդենք, թե շիներնք»։ Աղջիկը ասեց. «Շիներ՛ք», ու մի սհաթումը նրանք Թաքավորի պալատի առաջը բաղ ու բաղչա քցեցին։

Պառավը սրանով էլ հերիք չկացավ ու Թաքավորին ասեց.

— Լավ կըլներ, որ քու պալատը մարմարի քարից ըլներ շիշինած։

Թաքավորն ասեց.— Ո՞վ կարա ինձ համար էսքան մարմար բերի, որ հերիք գա իմ պալատը շիներու համար։

Պառավը ասեց.— Մենակ քու ձիապան Մուրադը կարա բերի էնքան մարմար։

Թաքավորը էլի Մուրադին կանչեց ու ասեց, որ իրա համար էնքան մարմար պտի բերի, որ իրա պալատը շիներու համար հերիք գա։ Նա գնաց ու գոմումը նստեց մի պառավ ձիու առաջ ու լաց էլավ։ Էն ձին հարցրեց, թե ինչո՞ւ ա լաց ըլնում։

www.naregatsi.org

Նա ասեց.— Թաքավորն ասել ա, որ իրա համար էնքան մարմար բերեմ, որ հերիք դա պալատի համար։

Զին ասեց.— Իսկի դու դարդ մի անի. ես ուատա Մուրադի ձին եմ ու ամեն համփա գիտեմ։ Էդուց մենք կէթանք մի տեղ, որտեղ մարմար շատ կա։ Դու մի կտոր մարմար կվերցնես ու ինձ կքշես։ Համա ետ թամաշ չանես, վայն էկել ա քեզ տարել, ես էլ դու էլ քար կըլեննք։ Քար, քոլ, սար, ձոր ետևիցդ ձեն կտան. «տարա՞ն, տարա՞ն» դու չլսես։

Առավոտը որ լիսը բացվեց թե չէ, Մուրադը էս պառավ ձին նստեց ու քշեց դպա էն տեղը։ Մուրադը մի մարմարի կտոր վեր կալավ ու փախավ։ Ետևից էնքան ձեն տվին. «տարա՞ն», համա Մուրադը իսկի չլսեց ու էկավ Թաքավորի մոտ։ Մեկ էլ ինչ տեսնեն՝ դրռ, դրռ էկան ու լցվեցին մարմարի քարերը Թաքավորի պալատը։

Պառավը սրանով էլ հերիք չէլավ. Թաքավորին ասեց.

— Լավ կըլներ, որ քու պալատը ծածկելու համար ֆլան մեշումը չամի ծառեր կան, բերել տաս։ Էն ծառերը շատ դայիմ են ու հաստ։

Թաքավորը հարցրեց.— Ով կարա ինձ հըմար էնքան հեռու մեշից չամի գերաններ բերի։

Պառավը էլի Մուրադին շանց տվեց։ Թաքավորը Մուրադին էլի կանչեց ու ասեց.

— Ոնց որ ըլնի, պտի էթաս ինձ հըմար ֆլան մեշիցը չամի գերաններ բերես։

Մուրադը էլի տրտում-տխուր գնաց իրա պառավ ձիու մոտ նստեց ու լաց էլավ ու ձիուն պատմեց Թաքավորի ուզածը։

Զին ասեց.— Դու դարդ մի անի։ Էդուց ինձ վրա կնստես, ես քեզ կտանեմ էն մեշեն։ Մի ծառի ճուղք կկտրես ու կփախչես, համա էլի ետ չմտիկ անես։ Ետևիցդ ձեն կտան՝ «տարա՞ն», դու ականջ չդնես։

Առավոտը, հենց որ լիսը բացվեց, Մուրադը նստեց ձին ու քշեց դպա էն մեշեն։ Մի ճուղք կտրեց ու փախավ։ Ետևիցը ձեն տվին՝ «տարա՞ն», համա նա իսկի մտիկ չարավ ու քշեց հասավ Թաքավորի մոտ։ Մեկ էլ տեսնես՝ ինչքան ծառ կար մեշում, քոքը-հան էլան ու էկան թափվեցին Թաքավորի պալատը։

Պառավը սրանով էլ հերիք չկացավ ու Թաքավորին ասեց.

20—2573

www.naregatsi.org

— Թաքավորն ապրած կենա, էս ա ամեն բան հազիր ա, մնում ա, որ շինող բերել տաս։ Էս պալատը ոչ ով չի կարա շինի, բացի Ուստա Մուրադից, համա նա էս օխտը տարի ա՝ մեռել ա։ Նա շատ լավ բաննահ էր. մենակ նա կարա շինի։ Պառավը էս բանն էլ Մուրադի վրա քցեց։

Թաքավորը էլի կանչեց Մուրադին ու ասեց, որ էթա, ոնց որ ըլնի, Ուստա Մուրադին բերի. թե չէ գլուխը կտրել կտա։ Մուրադը էլի գնաց պառավ ձիու մոտ ու թաքավորի ուզածը ասեց.

Ձին ասեց.— Նա էս օխտը տարի ա՝ մեռած ա. ես գիտեմ նրա տեղը, կէթանք։

Մեկել օրը Մուրադը ձին նստեց ու քշեց դպա Ուստա Մուրադը։ Նա մի մաղարի մեջ էր թաղված։

Մուրադը մտավ մաղարեն ու ձեն տվեց.— Ուստա Մուրա՛դ, Ուստա Մուրա՛դ, դուս արի՛, բան եմ ասելու։

Մուրադը մաղարի միջից ձեն տվեց.— Էդ ո՞վ ա, ես էս օխտը տարի ա մեռել եմ. ինձ հիմա եք հարցնում։

Հետո ձին իրա կողմից աղաչանք արեց.— Ուստա Մուրա՛դ, էս մինն էլ իմ խաթրու։ Քանի տարի ինձ վրա նստել ես, ամեն տեղ ման ես էկել. էս մի իմ խնդիրքս կատարի ու դուս արի ըդտեղից։ Ուստա Մուրադը որ իրա ձիու ձենը լսեց, էն սհաթին դուս էկավ մաղարից ու Մուրադը մին-մին ասեց թաքավորի ուզածը։

Ուստա Մուրադը ասեց.— Ջաքուջս ու մալես[1] քափչի ըստեղ չի, Ֆլան Մարդագելի մոտ, պատին քաշ ա արած։ Մուրա՛դ, դու գնա բեր։ Երբոր կմտնես. նա կգա ու քեզ կբարևի ու կասի. «Նստի, ես էթամ քեզ համար կերակուր բերեմ», համա չլսես. նա էթում ա մեկել օթախը, ատամները սրի քեզ ուտելու համար։ Դու էլ նրան մտիկ չանես, պատի վրեն խուրջին ա քաշ արած, վեր կկալնես ու կբերես։ Համա Մարդագելը էլի հետևիցդ կընկնի ու կհասնի։ Հետդ կտանես իրեք բան՝ սապոն, սանդր ու ջուր։ Առաջին անգամ սապոնը կքցես՝ նրա ոտները սոթ կտա, չի կարա հասնի, թե որ տենաս էլի չի օգնում, սանդրը քցի՝ մի մենձ մեշա կըլնի. համա տենաս որ ծառերը կոտրտելով հետևիցդ գալիս ա, որ հասնի, ջուրը քցի՝ ու էն սհաթը մի մենձ ծով կբացվի առաջը ու նա էլ չի կարա դա, կխեղդվի։

---

1 Հաջորդ բառը ձեռագրում անընթեռնելի է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Ինչ որ Ուստա Մուրադը ասեց, Մուրադը էնպես էլ արեց ու գնաց Մարդագելի մոտից շաքուշը ու քափշին փախցրեց ու բերեց տվեց Ուստա Մուրադին ու էկան, որ Թաքավորի պալատը շինեն։ Ուստա Մուրադը իրա համար նստած էր ու շաքշին ասում էր՝ քարը կոտրի, մալին ասում էր՝ ցեխ ածա, ու ինքը քարերը դարսում էր։ Էնքան որ սաղ պալատը շինեց պրծավ մի շաբաթեն վրա։

Քաֆթառ պառավը էլ չկարաց բան գտնի, որ կարենա նրան կորցնի ու մնաց սեէրես Մուրադի աղբրտոնց մոտ։

Սրանից հետո Թաքավորին ասեց.— Թաքավորն ապրած կենա, ինչքան ծառայություն արի քեզ, հերիք ա։ Ես էթում եմ, մեր երկիրը. քեզանից ես զադ չեմ ուզում, ո՛չ մալ, ո՛չ դոլվաթ, ինձ մենակ էն պառավ ձին տուր, հերիք ա։

Թաքավորը շատ զոռեց, որ լավ քյահլան ձիաներ վեր կալնի, համա նա չուզեց։ Վե կալավ իրա կնկանը, նստեցին իրանց ձիաները ու տանե դուս։ Մուրադը իրա պառավ ձին էր նստել, իսկ կնիկը ուրիշ մի ձի։

Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիտա, ռաստ էկավ մի բեզրգյան։ Էս բեզրգյանը շատ սատանա մարդ էր. ում հետ մարջ էր էկել, տարել էր։ Մուրադին ասեց.— Արի տափ կենանք, ով ում գտնի՝ նա տարել ա։ Թե որ ես գտնեմ քու մալ ու դոլվաթը, կնիկը, ձին ու ինչ որ ունես ինձ տաս, թե դու տանես՝ ես քեզ կտամ իմ ունեցած-չունեցածը, մալ ու դոլվաթը, իմ կնիկն ու ձիաները։

Մուրադը ասեց.— Լա՛վ, տափ կացիր, ես քեզ կբթնեմ։

Բեզրգյանը մտավ մկան բունը։ Ձին Մուրադին ասեց, որ մկան բնումն ա։

Մուրադը ասեց.— Մկան բնումն ես, դուս արի՛։

Բեզրգյանը դուս էկավ ու մեկ էլ տափ կացավ։ Ձին ասեց, որ հրեն քոլի տակին ա։

Մուրադը ասեց.— Քոլի տակին ես, դուս արի՛։

Բեզրգյանը դուս էկավ։ Մնաց մի անգամ։ Էս անգամ բեզրգյանը պուճուրացավ ու ոչխարի կոտորի տակ մտավ։ Ձին ասեց, որ ոչխարի կոտորի տակին ա։

Մուրադը ասեց.— Ոչխարի կոտորի տակին ես, դուս արի՛։

Բեզրգյանը տարվեց։ Հիմի դորը էկավ Մուրադին։ Ձին նրան գարու հատիկ շինեց ու դրեց ատամի տակը։ Բեզրգյանը դես ընկավ, դեն ընկավ՝ չգտավ։

www.naregatsi.org

— Որտե՞ղ ես, դուս արի՛, տարար աղբեր, չկարացի գտնեմ։

Մուրադը ձիու ատամի տակից դուս էկավ։ Մուրադը մեկ էլ թաք կացավ։ Էս անգամ ձին նրան աչքի արտանունքի մազ շինեց ու կպցրեց աչքի կոպին։ Շատ դես ու դեն ընկավ բեզրդյանը՝ չըգտավ։

— Էս անգամ էլ տարար, դուս արի՛,— ասեց բեզրդյանը։

Մնաց մի անգամ, էս էլ որ չգտնի, Մուրադը տարել ա բեզրդյանին։ Ձին Մուրադին մեխ շինեց, դրեց նալի վրա։ Շատ դես, դեն ընկավ, չգտավ բեզրդյանը։

— Աղբեր, տարար, ինչ որ ունեմ-չունեմ քեզ ըլնի, իմ կնիկը, իմ մալ ու դոլվաթը, իմ ձիաները։

Համա Մուրադը նրա մալ ու դոլվաթը ետ ա տալի ու իրա համար վեր ա կալնում մի Ոսկե աքլոր։

Սրանից հետո գալիս են, գալի ու մի թաքավորի նրկրում վեր գալի։ Էս թաքավորի աղջիկը մարդկերանց իրեք բան էր ասում, ով որ ասեր՝ նրա վրա կպսակվեր, ով որ չէ՝ նրա գլուխը կտրում էր։ Էսպես հազարի գլուխը կտրել էր, ով չէր կարացե նրա ասածը իմանա։ Մուրադը գնաց ասեց, որ «Ես կիմանամ»։ Թաքավորը մենձ դիվան սարքեց, որ պտի լսեին, ինչ որ ասում էր Մուրադը ու տենային՝ դրուստ ա ասում, թե սուտ։ Էս աղջիկը պատին քաշ էր արել իրեք բան՝ ղալխան, թուր, փարչ։

Աղջիկը հարցրեց.— Էս ղալխանը ո՞ւմ կհասնի՝ սրա փետ շինողին, թե նրա վրա մեխեր տվողին։

Ձին նրան ասեց, որ «Ասա փետ շինողին»։

Մուրադը ասեց.— Հալբաթքի փետ շինողին, չունքի նա դհա շատ ա չարչարվե։

Դիվանի նստողները ասեցին.— Էվալլա՛, քթար, էդ ա։

Հետո ասեց աղջիկը.— Էս թուրը ո՞ւմ կհասնի՝ սրա մադան հանողին, թե շինողին։ Ձին ասեց. «Ասա, մադան հանողին»։ Մուրադը ասեց.— Հալբաթ մադան հանողին, որ շատ ա չարչարվե։

— Էվալլա՛, էս էլ քթար,— ասեցին դիվանի մարդիկը։

Մնաց մինը, որ էն էլ քթներ, բանը պրծած էր։

Աղջիկը ասեց.— Էս փարչը ո՞ւմ կհասնի՝ նրան, ով որ հողը քերել ա ու շինել, թե նրան, ով որ էս փարչը առել ա։

www.naregatsi.org

Զին Մուրադին ասեց, որ. «Հող բերողին ու շինողին կհասնի»։

Մուրադը ասեց.— Հալբաթ որ հող բերողին ու շինողին կհասնի, նրանք դհա ավելի են շարշարվել։

— Էվալլա՛,— ասեցին դիվանի մարդիկը,— իրենքն էլ տարավ։

Աղջիկը ասեց.— Սրանից դենը ես քունը, դու իմը։

Համա ձին ասեց, որ՝ էն աղջկա փորում օձ կա, էն օձը քեզ պտի դիան տա։ Դու դնա քեզ համար ընկեր գտի ու բեր՝ ինչ որ ունես-չունես իրար մեջ փայ արնք, երբ որ կգա էդ աղջիկը դու ասա. «Աղբե՛ր, արի հալալ փայ աննենք» ու Թուրդ քաշի, որ տաս, կես աննես։ Նա կվախենա ու բերանից օձը դուս կքցի։

Մուրադը բանից էլ անում ա. էթում ա մնի յախից բռնում.

— Աղբե՛ր,— ասում ա,— արի ընկեր ըլնենք, ինչ որ ունեմ իրար մեջ փայ աննենք։

Նա էլ ինչու չէր ուզի, ասեց,— Լա՛վ, աննենք։ Ինչ որ ունեին՝ փայ արին։ Էկավ աղջիկը։

Մուրադը ասեց.— Աղբեր, ես հալալություն եմ սիրում, արի հալալ փայ աննենք։ Ու Թուրը քաշեց, որ կես անի, օձը բերանից դուս թռավ։ Մուրադը օձին սպանեց, աղջիկը ու իրա փայը տվեց ընկերը։

Հետո իրա կնկա հետ էթում ա իրանց երկիրը, իրա մորը ինչ որ գլխով անց ա կացել, մին-մին ասում ա։ Թաքավորը իրա թախտից վեր ա գալի ու իրա որդուն ա նստացնում։ Իսկ մեկել էրկու աղբրտանց տանից դուս ա անում։

www.naregatsi.org

26. ԵՆԳԻՉԱՐՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով Շամա քաղքում մի թաքավոր կար։ Էս թաքավորը ուներ մի տղա ու մի աղջիկ։ Սրա տղեն մի օր, չունքի դեռ հլա պուճուր էր, գնաց քուչեն ու իրա համար հոլ էր հաղում։ Նա տեհավ, որ մի պառավ կնիկ կուժը ուսին անց էր կենում քուչովը, հոլը քցեց ու նրա կուժը կոտրեց։

Պառավը նրան ուշունց տվեց, ասելով.— Ենգիչարու դարդով մեռնես։

Էրեխեն չհասկացավ, թե էն կնիկը դրանով ի՞նչ էր ուզում ասի։ Քանի գնում, էս թաքավորի էրեխեն հալից ընկնում էր։ Թաքավորը էլ աշխարհում հեքիմ չմնաց՝ բերեց, համա ոչով չկարաց նրա տղին լավացնի։

Հետո էկավ մի պառավ ու ասեց.— Ես կարամ լավացնի։

Էս պառավը էն կնիկն էր, որ մի վախտ քուչով անց էր կենում, ու թաքավորի տղեն հոլով նրա կուժը կոտրեց։

Էս պառավ կնիկը ասեց թաքավորի տղին.— Կէթաս, քաղաքից դուս մի ծառ կա, նրա տակին մի բուն ա շինած. ընի մեջ իրեք ձու կա։ Մին-մին ձվաները կկոտրես ու ինչ որ կուզի՝ կտաս, չունքի նրանց մեջ փարիք կան. ջուր կուզի՝ տո՛ւր, հաց կուզի՝ տո՛ւր, թե չէ էն սհաթին կփախչի ձեռիցդ։

www.naregatsi.org

Մեկել օրը Թաքավորի տղեն ձի նստեց ու գնաց։ Ճամփի վրա նա տեհավ նստել ա մի պառավ մարդ։ Էս պառավ մարդին նա իրա գլխով անցկացածը պատմեց։

Նա ասեց.— Ով գնացել ա փարիների մոտ, էլ ետ չի եկել, դու գիտես, գնա։ Ելան ծովում փարիները լողանում են, բոլորն էլ աղջիկ են։ Նրանք իրանց շորերը ծովի ղրաղին հանել են. կէթաս մեկի շորերը կփախցնես։ Ետևիցդ որ սար կբղավի՝ «տարա՞ն», ձոր կբղավի՝ «տարա՞ն», քար կբղավի՝ «տարա՞ն», համա դու իսկի ետ թամաշ չանես։ Մարդ ա, թե որ փարին հետևիցդ հասնի ու քեզ ասի. «Աբի էթանք ընտեղ հավուզ կա, ես քեզ վրա ջուր կածեմ՝ լողացի, դու ինձ վրա ածա՝ լողանամ», տես հա՞, չլսես նրան։

Տղեն գնաց հասավ փարիների մոտ. նրանք ծովում լողանում էին ու իրանց շորերը ղրաղին հանել էին։ Ջանըմսան տղեն, գնաց ու մի փարու շորերը վի կալավ, փախավ։ Նրա հետևից սար ձեն էր տալի՝ «տարա՞ն», ձոր ձեն էր տալի՝ «տարա՞ն», քար ձեն էր տալի՝ «տարա՞ն»։ Համա տղեն ձին էն թավուր էր քշում, որ գյուլլա ետևից չէր հասնի։

Փարին սրա ետևից ընկավ ու անջախ հասավ նրան ու ասեց.

— Էթանք ընտեղ մի հավուզ կա, ես քեզ վրա ջուր կածեմ՝ լողացի, հետո դու ինձ վրա կածես՝ ես կլողանամ։

Տղեն պառավ մարդի ասածը մտիցը քցել էր, լսեց նրա խոսքին։ Փարին տարավ նրան մի հավուզ, վրեն ջուր ածեց ու տղեն տեղն ու տեղը քար էլավ, մնաց։

Թաքավորը շատ կացավ, որ իրա տղեն գա, ըսօր, էգուց՝ չէկավ։ Թաքավորի աղջիկը, չունքի իրա աղբորը շատ էր սիրում, հալալ քվոր ջիգյար ուներ, ձի նստեց, յարաղ-ասպաբը կապեց ու քշեց դպա իրա աղբոր մոտ։ Համա չէր գիտում, թե ուր ա նա։ Թաքավորի աղջիկը գնաց, գնաց, ճամփին պատահեց էլի էն պառավ մարդուն, որին որ իրա աղբերը պատահել էր։

— Բարո՛վ, բարի ջա՛ն, էս ճամփով չե՞ս տեհել անցկենալիս մի տասնութ տարեկան ջահել տղամարդի. նա իմ աղբերն ա, էս քանի վախտ ա՝ գնացել ա, չի էկել։ Մնացել ենք տնով-տեղով շվարած, թե տեհե՞լ ես, ասա, բարի ջան, թեղ, վռազ եմ, ես պտի էթամ սաղ աշխարք ման գամ. յա աղբորս, իմ հալալ, աչքի լիս աղբորս կգտնեմ, յա թե չէ գլուխս նրան ղուրբան կտամ։

— Որդի,— խոսքի տուտը բռնեց ծեր մարդը,— որ ճամփի

www.naregatsi.org

Վրա նստած էի, ես տեհա, որ էկավ ու ըստեղից անց կացավ։ Ես նրան խրատեցի, որ չէբա, համա նա ինձ չլսեց ու գնաց. էն ճամփով հազարավոր մարդիկ են գնացել ու ետ չեն էկել, նա էլ չի ետ գա։ Համա, թե որ դու ավիղ քիր ես, քու աղբորը սիրում ես, կէթաս Ֆլան ծովը, էնտեղ փարիներ են լողանում, շորերը ջրի ղրաղին հանած, դրած են. նրանցից մեկի շորը վեր կկալնես ու կփախչես. ետևիցդ սար ձեն կտա՝ «տարա՜ն», քոլ ձեն կտա՝ «տարա՜ն», համա դու ըսկի չլսես։ Թե, որդի, փարին գա հասնի ետևիցդ՝ նրան դու չդմշես, ձիուդ ոտների տակը քցի, էնքան տուր ու ասա՝ «էս սհաթը աղբորս տուր, թե չէ էնքան կտամ, որ տեղն ու տեղը կշորանաս»։ Հետո նրան քաշ տալով կտանես մոտիկ հավուզ կա, ընտեղ հազարավոր մարդիկ քար են էլե, նրանց մեջն ա ու քու ագիզ աղբերը. կասես, որ նրանց վրեն ջուր ածի, էն սհաթը կսաղանա քու աղբերն էլ, նրանք էլ, որ քար էլած, կացած են ընտեղ։ Տես հա՜, ինչ որ ասեցի՝ մտիցդ չքցես. թե չէ բանդ բուրդ ա. դու էլ քար կըլնես ու չես կարա քու աղբորը լսվացնի։

Ջանըմսան, քյահլան ձին նի էլած, ասպարավորված ղոշաղ աղջիկը գնաց։ Հասավ էն ջրին, որդի փարիները լողանում էին ու շորերը ծովի ղրաղին հանած դրել էին։ Նրանցից մինի շորերը փախցրեց ու քշեց ձին։ Սար ձեն էր տալի՝ «տարա՜ն», քոլ ձեն էր տալի՝ «տարա՜ն», քար ձեն էր տալի՝ «տարա՜ն», համա ղոշաղ աղջիկը առանց ետ մտիկ անելու քշում էր ձին։ Փարին էկավ հասավ աղջկանը։ Թաքավորի աղջիկը նրան քցեց ոտների տակը ու քաշեց դամշին, տուր թե կտաս, մին, էրկու, մին, էրկու։ Էնքան տվեց, որ նղավեց։

Երբ որ խելքի էկավ, աղջիկը ասեց.— Էլի կծեծեմ, թե որ իմ աղբորը չտաս։

Նոր աղջիկը գնաց նրա հետ հավզի մոտ։ Իրա աղբոր վրա ջուր ածել տվեց ու սաղացավ։ Էլի ինչքան մարդիկ որ կային քարացած, բոլորի վրա ջուր ածել տվեց ու բոլորն էլ սաղացան։ Քիր ու աղբեր իրար փաթաթվեցին ու լաց էլան։ Հետո Թաքավորի աղջիկը տարավ շորերը տվեց, որ հագնի ու փարուն վերցնելով քիր ու աղբեր էկան տուն։ Ճամփին տղի միտն ընկավ պառավ կնկա ասածը, թե մի ծառ կա, տակը Ենգիչարին[1] ա։

---

[1] Ենգիչարին փարիների գլխավորն էր (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Տղեն գնաց Ենգիշարու մոտ ու իրա քվորը ղրկեց մոտիկ գեղերը, որ հաց ու ջուր ճարի, չունքի կուզի։ Տղեն գնաց բունը քանդեց ու ձվանները վե կալավ։ Մինը կոտրեց ձվաներից, ջուր ուզեց՝ չկար, հաց ուզեց՝ չկար ու գնաց կորավ։ Հետո մեկելը կոտրեց, հաց ուզեց՝ չկար, ջուր ուզեց՝ չկար ու նա էլ գնաց կորավ։ Էն սհաթին նրա քիրը բերեց գեղերից հաց ու ջուր, ու էն վերջի ձուն կոտրեց, հաց ուզեց նա՝ տվեցին, ջուր ուզեց՝ տվեցին։ Էն ձվից դուս էկավ մի սիրուն, աննման փարի աղջիկ, մազերը էրկեն, աչքերը նաշխուն, լուսաթաթախ։ Էկան, էկան ճամփին մի մենձ աղբուր պատահեց, որ կըլկըլալեն էթում էր։ Էս աղբրի մոտ մի չինարի ծառ կար։ Ենգիշարուն, չունքի չէր կարա փախչի, էս չինարու ծառի վրա դրին ու իրանք փարուն, որ մի ջուր տենար թե չէ, էն սհաթին մեջը կմաներ ու կփախչեր, էլ նրան բռնել չէր ըլնի, վե կալան ու տարան Շամա քաղաքը, որ էս չինարու ծառի մոտից շատ հեռու չէր։

Էս վախտը բոշաները էկան էս աղբրից ջուր խմելու։ Էն Ենգիշարու շվաքը որ չէր ընկնում ջրի մեջ, սաղ ջուրը լիս էր տալի։

Բոշեքը իրար հետ կռիվ էին անում. մինը ասում էր. «էս իմ շվաքն ա, որ էսպես լիս ա տալի», մեկելը թե. «իմն ա»։ Կռիվ ղալմաղալը սարբվել էր։

Ենգիշարին ծառի վրից ձեն տվեց.— Բոշաներ, էդ շվաքը ոչ քունն ա, ոչ էլ մեկելինը, իմ շվաքն ա էդ, ղուր տեղը կռիվ միք անի։

Բոշաներից մինը նի էլավ ծառը ու Ենգիշարուն բռթեց քցեց ջուրը ու ինքը նստեց նրա տեղը։ Ենգիշարին որ ջուրն ընկավ, ջրի վրա մի ռնհան դուս էկավ։

Թաքավորի տղեն դափով, ղուռնով, ղոշունով Շամա քաղաքից էկավ, որ Ենգիշարուն տանի։ Էկավ, ինչ տեսա՝ ծառի վրա մի սևաթարոց աղջիկ։

Տղեն զարմանալով հարցրեց.— Պռոշներդ էդ ինչ հաստ են։

Ենգիշարին պատասխան տվեց.— Թաքավորի ոչխարները ըստեղից անց էր կենում, էնքան տը՞ռ, տը՞ռ արեցի, որ պռոշներս հաստացան։

— Բա թևերդ ինչի ա սև։

— Էնքան ծառերին եմ քսել, որ սևացել ու կոշտացել են,— պատասխան տվեց բոշեն։

www.naregatsi.org

— Բա ոտներդ ինչի ա կտրտած, տրաքտրաքած,— հարցրեց էլի Թաքավորի տղեն։

Բոշեն էլի ուզեց իրան արդարացնել.— Էնքան ոտներս տվի ծառովը, որ տրաքտրաքվեցին։

Խեղճ Թաքավորի տղեն չէր իմանում, որ բոշեն էնքան տներ ա չափչփել բոբիկ ոտով, որ տրաքտրաքվել ա, արինը շրռշրռալեն Թափում էր։

— Բաս էն էրկեն մազերդ ո՞ւր ա,— հարցրեց Թաքավորի տղեն։

— Էնքան արևի տակ նստել եմ, որ Թափել են գլխիս վրիցը,— ասեց բոշեն։

Հարխանա՜, հարնայխանա՜, վե կալան բոշին ու տարան քաղաքը։ Գնալիս տղեն էն ռեհանը վե կալավ ու ծոցը դրեց։ Էս որ տեհավ բոշեն, ասեց Թաքավորի տղին.

— Թե որ էդ ռեհանը չես դեն քցի, էս սհաթը ջուրը կընկնեմ։

Թաքավորի տղին լսեց նրան ու դեն քցեց ռեհանը, էլավ մի սիրուն, նաշխուն ձիու քուռակ։ Թաքավորի տղեն էս սիրուն քուռակին իրա հետ բերեց տուն։ Մի քանի վախտ անցկացավ բոշեն էրկուֆոքիս դառավ։ Հարցրին, Թե ի՞նչ ա ուզում, նա ասեց.

— Սիրտս ուզում ա էն քուռակի մսից։

Թաքավորի տղեն հրամայեց քուռակին մորթել։ Հենց որ մորթեցին, արինը գետին Թափեց, մի մենձ չինարի ծառ դուս էկավ, որ սաղ քաղաքին հով էր անում ու շվաք, էնքան մենձ էր։

Բոշեն ասեց, որ էն չինարին կտրեն ու, չունքի մի քանի օրից ետ էրեխա բերեց, իրա էրեխի համար օրորոց շինեն։ Թաքավորի տղեն չէր կարա չլսի նրան։ Հրամայեց, որ կտրեն ու շինեցին նրա էրեխի համար օրորոց։ Համա էս օրորոցը գշերը էրեխին հուսի էր տալի ու ցերեկը բաց Թողնում, էնպես որ սաղ գշերը էրեխեն իրա լացով մարդու դանդ էր անում։ Բոշեն հրամայեց, որ օրորոցը էրեն ու քամուն տան։ Էնպես էլ արին. էրեցին ու քամուն տվին։ Էրածից մի Թոզ գնաց մի պառավ կնկա տան առաջ Թեշու ծիծեռ էլավ ու ընկավ։ Էս պառավը Շամա Թաքավորի մոտ բուրդ էր գզում ու սրանով իրա մի չոր գլուխը պահում։ Էս պառավը տանից դուս դալիս էս ծիծեռը տեհավ ու ուրախացավ. վե կալավ ծիծեռը ու տարավ իրա տան փանջարում վե քցեց ու ինքը գնաց Թաքավորի մոտ, որ բուրդ գզի։

www.naregatsi.org

Պառավը տանը շան մաղ ուներ, որից նա խալիչա էր գործում։ Իրիկունը տուն էկավ տեհավ, որ շան մաղը արրեշում ա դառել։ Նա շատ ուրախացավ, համա չէր գիտում, թե որտեղից ա էս արրեշումը։ Մի օր էլ էկավ տեհավ խալիչի կեսը ինքն իրան գործվել ա։ Շատ մտածեց, համա չքթավ, թե ով ա գործում։ Մի օր ղարաուլ քաշեց ու տեհավ, որ ծիծեռի միջից մի սիրուն աղջիկ դուս էկավ ու սկսեց խալիչեն գործել։ Նա վրա հասավ ու բռնեց։ Հետո նա իրա գլխով անցկացածը բոլորը պատմեց։ Մի օր էս աղջիկն էլ իրա էրեսը շոր փաթթեց ու գնաց թաքավորի մոտ բուրդ գզելու։ Պառավը թաքավորի տղին խնդրեց, որ մի սհաթ գա իրա աղջկա մոտ, նա բան ունի ասելու ու նա իրա գլխով անցկացածը պատմեց ու էրեսի վրից շորը դեն քցեց։ Թաքավորի տղեն էն սհաթը ճանաչեց նրան. բռշին կապեց ղաթրի պոչից ու ասեց.

— Տա՛ր, քար տո՛ւր, քոլ տո՛ւր ու մազերը մենակ ետ բեր։

Իսկ ինքը պսակվեց նրա վրա ու օխտը գշեր հարսանիք էլավ. գկերան, խմեցին, քեֆ արին։

www.naregatsi.org

27. ՋԱՆՊՈԼԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չըլնի մի թաքավոր։ Էս թաքավորն ուներ քսան ու ինն տղա։ Երբ մենձացան քսան ու ինն տղերքը, թաքավորը իրա մարդկերանցը հավաքեց ու ասեց, որ ուզում ա իրա որդկերանցը նշան դնի։ Համա նրա մարդիկը ասեցին.— Ամեն մինին մի-մի պարկ[1] ոսկի տուր, թող էթան աշխարք ման գան, իրանց համար աղջիկ սիրեն ու գան՝ նրանց պսակի։— Թաքավորը լսեց իրա մարդկերանց ասածին ու իրա որդկերանց ամեն մինին մի-մի պարկ ոսկի տվեց, որ էթան աշխարք ման գան։ Սրանք մի քեռի ունեին, անումը՝ Բժի. սա էլ շատ ղոչաղ մարդ էր։ Սա էլ քսան ու ինն տղերքանց հետ գնաց աշխարք ման գալու։ Թաքավորը իրա որդկերանցը ճամփու գցելիս խրատեց, որ իրանց օրում ճամփին քանդված, խարաբա տեղ վեր չգան, լավ չիլնի թե չէ։

Գնացին, գնացին, շատն ու քիչը աստած գիտա։ Հասան մի խարաբա ջաղաց, վեր էկան էստեղ ու իրանց չադիրները վեր տվին։ Ամենապուճուր աղբոր անումը Դահրմիրզա էր։ Էս պուճուր աղբերը շատ սրտով տղա էր ու խելոք։ Սա նրանց խոսքին չլսեց ու ասեց.

— Չէ՞ որ մեր հերը ասել ա, որ խարաբա տեղ չվեր գանք։

---

[1] Գրաման ձեռագրում՝ պար է, կարծում ենք վրիպակ է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Մեկել աղբերտինքը նրան ամաչացրին ասելով.— Ա՛յ դու վախկուկ, ի՞նչ կա ըստեղ, որ վախենում ես. դու ուր ուզում ես՝ գնա՛, մենք ըստեղ շաղիր կտանք ու էս գշեր կանց կացնենք։

Համա Դահրմիրզան խելոք մարդ էր, ամեն բան լավ էր հասկանում։ Նա իրա համար մի քիչ հեռու շաղիր տվեց ու նստեց։ Նրա աղբերտինքը հաց կերան կուշտ ու կուռ ու քնեցին խորմփալով։ Դահրմիրզան սաղ գշեր չքնեց։

Ըստեղ մի դև կար. ինքը կնիկ էր, քառասուն տղա ուներ, եռեսուն աղջիկ։ Գշերվա մի վախտ էկավ մի կնիկ, ծծերը ուսերը գցած, բերնից կրակ էր դուս գալի. ներս մտավ Դահրմիրզի աղբերտանց շաղիրները ու ամեն մեկի ականջը մեռլի հուլունք գցեց։ Հետո էկավ Դահրմիրզի մոտ ու նրա ականջն էլ գցեց մեռլի հուլունք, համա նա քնած չէր, ու էն սհաթը հուլունքը ականջիցը վեր գցեց ու նստեց։

Էն կնիկը գնաց տուն ու իրա քառասուն տղերքանցը ասեց.— Գնացե՛ք, ձեզ համար ոչխարներ եմ հազիր արել։

Նրա տղերքը էս լսելով շատ ուրախացան ու գնացին ոչխարների մոտ։ Համա վաղուց Դահրմիրզան նրանց դռան ետևը տափ էր կացել ու թուրը հանել, հազրել։ Մեկ էլ տեհավ, որ դևի տղերքը մին-մինի ետևից դուս են գալի. նրանց գլուխը թոցրեց թրով։ Էսպես մեկ-մեկու հետևից էկան ու բոլորին էլ նա սպանեց։ Դեը շատ կացավ, տեհավ որ իրա տղերքը չէկան. ինքը դուս գնաց տեսնալու, թե ինչ ա պատահել։

Հենց որ ոտը շեմքից դուս դրեց, Դահրմիրզան ձեռը գցեց ու նրա ջուխտ ծծերից բռնեց.

— Ճանաչո՞ւմ ես, թե ես ով եմ, քավթառ անղդա՛մ. ես Դահրմիրզան եմ հա՛, լավ ճանաչիր։

Կնիկը Դահրմիրզի ոտները ընկավ ու ասեց.— Ինձ ների, վնաս մի տա ես եռեսուն աղջիկ ունեմ, բոլորն էլ ձեզ կտամ կնիկ, թաքիլա ինձ ներես։

Դահրմիրզան ասեց.— Հաց-գինին, տեր-կենդանին, ես քեզ ներում եմ։

Հետո պառավ կնկա հետ ներս մտան տուն։ Կնիկը աղջկերանցը շանց տվեց, համա քսանուինն էր, մինը չկար։

Դահրմիրզան հարցրեց.— Բա մինը ո՞ւր ա։

www.naregatsi.org

Նա խաբեց, թե չկա։ Հետո նա մաղերի մեջ ման էկավ, գտավ մի բալանիք. մի օթախ կար, դուռը բաց արեց ու տեհավ մի շատ սիրուն, երկնքի լուսին աղջիկ։ Նրա մի կողքով գնում էր ոսկու աղբուր, մեկել կողքով՝ էրծաթե աղբուր, ու էն սիրուն աղջիկը նրստած փող էր կտրում։

— Էս աղջկերանցը պահի քեզ մոտ, հետ դառնալիս կտանենք. համա էն սիրուն աղջկանը լավ մուղայիթ կաց,— ասեց Դահրմիրզան։

Հետո էլի նա գնաց իրա չադիրը, իրա աղբերտանց մոտ։ Առավոտը լիսացավ, աղբերտինքը վե կացան ու ճամփա ընկան։ Խեղճ Դահրմիրզին ամաչացնում էին, ասելով.

— Ինչո՞ւ մեզ վնաս չէլավ, դու անջախ վախում էիր։

Դահրմիրզան համա բան չէր ասում, թե ինչ ա պատահե։

Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիտա։ Էկան Ջանպոլադի քոշք ու սարի վրա վեր էկան։ Տեսան կանանչ-կանանչ իգիք են ու լավ-լավ տներ շինած էս սարի վրա։ Մեջը մարդ չկահաց, կիրակուր, ամեն զադ պատրաստ էր ըստեղ։ Էս տունը Ջանպոլադինն էր, որ շատ ղոչաղ մարդ էր։ Սրա վրա ո՛չ թուր, ո՛չ թվանք էր բանում, աշխարքում չկար մարդ, որ հաղթեր սրան, չունքի ջանը պոլադից էր, սրան հաղթել կըլնի՞։ Էսօր Ջանպոլադը տանը չէր. նրանք սուփրա-սեղանի վրա նստեցին ու կերան։

Դահրմիրզան ասեց.— Ջանը՛մ, գյոզը՛մ, ախար էդ ի՞նչ եք անում, ուրիշի հաց ո՞նց եք ուտում, էն էլ Ջանպոլադինը։

Համա նրա աղբերտինքը ամաչացրին նրան, ասելով.— Գնա՛ դու վախլուկ, ամեն բանից դու պտի վախենաս։ Էն էլ չըլնի, որ ասում էիր, թե էն խարաբա ջաղացի մոտ չադրները մի վեր տաք։ Տեհա՞ր, որ բան չէլավ մեզ. էլի ուզում ես մեզ խաբի։ Դու ուզում ես՝ գնա՛, մենք կնստենք ու կուտենք։

Դեռ աղբերտինքը նոր էին սկսել ուտել, որ Ջանպոլադը էկավ, վրա հասավ։ Դահրմիրզան թուրը հանեց, վրա վազեց ու խփեց Ջանպոլադին, իսկի քյար չարեց նրան։ Հետո Դահրմիրզան ասեց.

— Ինձ եսիր վեր կալ, իմ աղբրտանց թող էթան, նրանց զիան չտաս, ինձ ինչ ուզում ես՝ արա։

Ջանպոլադը թողեց նրա աղբրտանցը ու Դահրմիրզին եսիր վե կալավ։

Դահրմիրզան իրա աղբերտանցն ասեց.— Էն խարաբա ջաղացի

www.naregatsi.org

մոտ որ վեր էկանք, գնացեք ընտեղ մի կնիկ կա, իմ անումով նրան ասեք, որ էն եռեսուն աղջիկը տա ու տարեք ձեզ կնիկ։

Նրա աղջիկներքը էնպես էլ արին, գնացին ամեն մինը իրա համար կնիկ վերցրեց էն աղջիկներից։ Աղջիկներանց ամեն մինը մի գհով գնաց։

Բժին գնաց Զինումաշինա քաղաքը ու ընտեղ թաքավորի մոտ ձիապան էլավ։

Զանպոլադը ասեց Դահրմիրզին.— Ես քեզ բաց կթողնեմ, թե որ էթաս ֆլան քաղաքը, էնտեղի թաքավորը մի շատ սիրուն աղջիկ ունի, բերես ինձ համար։ Նրան ասում են Մրջան խանում. աշխարքիս էրեսին մի հատ ա՝ իրա սիրունությունով։ Կէթաս, առաջդ մի մենձ ծով կգա. էդ ծովի ղրաղում քարերի մեջ մի Սև քար կըգտնես, էն քարի տակը մի գյամ կա, էն գյամը կհանես ու ջրի մեջ թափ կտաս, մի բոզ ձի դուս կգա, դու կնստես ու ջրով կանց կենաս, կէթաս էն թաքավորի աղջկա մոտ։

Դահրմիրզան չէր կարա չէթա, չունքի էն սհաթին նրա եսիրն էր։ Վեր կացավ ու ասուած կանչելով ճամփա ընկավ։ Ոնց որ Զանպոլադը ասել էր, նրա առաջ մի մենձ ջուր էրևաց, որ պտի անց կենար։ Էս ջրի ղրաղի քարերի մեջ ման էկավ ու թթավ էն Սև քարը, որ Զանպոլադը ասել էր։ Քարը վեր կալավ, տեհավ մի գյամ. գյամը տարավ ջրի մեջ շարժեց ու մի բոզ, քյահլան ձի դուս էկավ։ Դահրմիրզան անխոս նստեց նրա վրա ու ջրի վրով քշեց։ Մի սհաթից հետո Դահրմիրզան ծովի էն ղրաղումն էր։ Հենց որ ցամաք դուս էկավ, տեհավ, որ շանգալ գցողները մի մենձ ձուկ են կալե. խեղճ ձուկը թպրտում էր, որ փախչի, համա ինչ կարար անի, չունքի շանգալը բերնին էր խրած։ Դահրմիրզան գնաց ձկան բերնից շանգալը հանեց ու բաց թողեց ջուրը։

Ձուկը շատ ուրախացավ ու ասեց Դահրմիրզին.— Ձունքի ինձ լավություն արիր, իմ պոչը կտրի, ես քեզ նեղ օրին պետք կգամ։

Դահրմիրզան ձկան պոչը կտրեց ու դրեց ջերը։ Ձիու բերնից գյամը հանեց ու դրեց էլի մի սև քարի տակ, ձիուն թողեց իրա քեֆին, հետո էլի իրա ճամփեն շարունակեց[1]։

---

1 Այստեղ ասացողը որոշ դեպքեր մոռացել է և անմիջապես անցել է Դահրմիրզի հանդիպմանը՝ թագավորի աղջկա հետ։ Քիչ անց վերհիշելով մոռացածը վերադառնալ է նախորդ դեպքերին, այն է՝ մրջյունների և աղունիկի փրկությանը։

www.naregatsi.org

Գնաց, գնաց, տեհավ, որ մի մենձ ջրի վրա անթիվ մրջիմներ են անց կենում ու բոլորին էլ ջուրը տանում էր։ Հարցրեց, թե ո՞ւր են էթում։ Նրանք ասեցին, որ ղոշուն են էթում։ Դահրմիրզան թուրը հանեց, ջրի վրա դրեց ու մրջիմները անց կացան ցամաք ու ցամաքով էին էթում։ Էսպես իրեք օր նստեց ու թամաշա արեց սրանց։ Վերջը էկավ մի մենձ, բրդոտ մրջիմ. սա նրանց թաքավորն էր, երբ ուզեց թրի վրով անց կենա, ոտը կտրվեց ու վեր ընկավ։ Դահրմիրզան ինջմիշ էլավ, որ նրանց թաքավորին վնաս տվեց։

Համա նրանց թաքավորը ասեց.— Ես շատ շնորհակալ եմ, որ իմ ղոշնին սաղ-սալամաթ ցամաք անց կացրիր, չունքի ջուրը վարար ա ու ղոշնիս քշում տանում ա. չունքի ինձ լավություն արիր, էս իմ կտրված ոտը վեր առ ու ջնբդ դիր, երբ նեղ օր կընկնես, իմ թաթը վառի, ես էն սհաթին կգամ իմ ղոշնով։

Նա էլ նրանից շնորհակալություն արեց ու գնաց։ Նոր մի քիչ հեռացել էր, տեհավ մի սիրուն աղունիկ. թվանքով տվել են՝ յարալու արել, վեր էր ընկել։ Դահրմիրզան գնաց վեր կալավ նրան, ջանի սեչմեքը հանեց, կուտ տվեց ու լավացրեց։ Էնպես որ կարող էր շատ լավ թռչի։ Աղունիկը նրան ասեց.

— Չունքի ինձ լավություն արիր, արի իմ բմբլներից մինը. պոկի, ես քեզ նեղ օրը պետք կգամ։

Անջախ-անջախ էկավ հասավ թաքավորի աղջկա մոտ։ Գնաց թաքավորի մոտ ու իրա ուզածը ասեց։

Թաքավորի աղջիկը ծիծաղեց.— Քեզպեսնե՞րն են էկել ու դարդակ իրանց ջանը կորցրե. քանի հազար մարդիկ էկել են ու փոշմանե։ Համա էս էլ կա. ես իրեք բան կասեմ քեզ, թե կարացիր հանի, հո՝ դու իմը, ես քունը, թե չէ՝ գլուխդ կտրել կտամ։

Մինը էս էր։ Գշերը որ վրա հասավ, թաքավորի աղջիկը հրամայեց, որ չորս բեռը կորեկ, չորս բեռը կտվահատ իրար հետ խառնեն. նրան ասեց, որ՝ գշերը առանց ճրագի, մի օթախում իրարից պտի հնդրես էնպես, որ մի հատ խառնված չըլնի իրար հետ, թե չէ վայը էկել ա, քեզ տարել։

Դահրմիրզան չորս պատի մեջ ընկած, մութը, խավար, ո՞նց

Բանահավաքը այդ առթիվ գրել է. «Գուցե ներես, սիրելի ընթերցող, վերևը սխալվեցի, դեռ հլա չէր հասել թաքավորի աղջկա մոտ...» և այլն։ Մենք ուղղել ենք՝ բաց թողածը տեղադրելով համապատասխան տեղում (Մ. Կ.)։

www.naregatsi.org

ջոկեր էնքան հալ կտվահատն ու կորեկը։ Նստեց, մտածեց, մտածեց, չիբուխ քաշեց ու էն մրջմի թաթը միտն ընկավ, հանեց ու կրակ տվեց։ Մեկ էլ ինչ տենա՝ դուռը բացվեց ու մրջիմների սուրուները ներս մտան. էլ ոչ տուտ կար, ոչ էլ համբարք։ Էն սհաթը սաղ կորեկը կտվահատից ջոկեցին ու ջոկ-ջոկ կիտեցին. էնպես որ մի հատ խառը չկար։

Առավոտը թաքավորի մարդիկը էկան տեհան, որ լավ ըստկել ա ու խաբար տվին Մրջան խանումին։ Նա չհավատաց ու գնաց, որ իրա աչքով տենա։ Գնաց տեհավ ու շատ զարմացավ։ Հետո հրամայեց, որ իրա մարդկերանցից մինի գլուխը կտրեն, տանեն նրա մոտ ու ասեն, որ պտի սաղացնի։ Դե արի, մեռած մարդին ո՞նց լավացներ, հո՞ աստված չէր։ Շատ միտք արեց, չիբուխ քաշեց ու աղունիկի բմբուլը մի ղաֆիլ միտը ընկավ։ Բմբուլը կրակ տվեց ու աղունիկը ներս էկավ, ասեց.

— Ի՞նչ ես ուզում։

Դահրմիրզան մին-մին ասեց, թե բանը ընչումն ա։ Աղունիկը էն սհաթին գնաց ու անմահական ջուր ու անմահական խնձոր բերեց։ Գլուխը իրա տեղը դրին, անմահական ջուրը քսեցին՝ էն սհաթին կպավ, հետո անմահական խնձորը տվին, կերավ՝ էն սհաթին վեր կացավ, նստեց տեղը, նրանց հետ խոսում էր։ Հետո Դահրմիրզան շնորհակալ էլավ աղունրկից, նա էլ մնաս բարև արեց ու թռավ գնաց։

Առավոտը թաքավորի մարդիկը էկան տեհան, որ էն մարդին սաղացրել ա. գնացին իմաց արին թաքավորի աղջկանը։ Թաքավորի աղջիկը չհավատաց գնաց, որ իրա աչքով տենա։ Գնաց տեհավ, որ ղորթ սաղցրել ա։

Մրջան խանումը տեհավ, որ բանը բոշ ա, ինչ ասում ա՝ անում ա։ Մնացել ա մինը։ Էն օրը թաքավորի աղջիկը գնաց ծովի վրա ման գալու դյամով ու իրա ոսկի մատանիքը ծովը գցեց։ Էկավ տուն ու ասեց Դահրմիրզին, որ իրա մատանիքը ծովն ա ընկել, պտի գնա հանի։ Տրտում-տխուր գնաց Դահրմիրզան ծովի ղրաղը ու ման էր գալի։ Մեկել միտը ընկավ ձկան պոչը. ջերից հանեց, էրեց ու էն սհաթին ձուկը էկավ, հարցրեց, թե ի՞նչ էր ուզում։ Նա ասեց, որ թաքավորի աղջկա մատանիքը ընկել ա ծովը, պտի էթաս, բերես։ Էս ձուկը ձկների թաքավորի տղեն էր. գնաց իրա հորը ասեց ու նա էլ շավ արեց ամեն տեղ՝ ով որ գտել ա էս թավուր

21 - 2573

www.naregatsi.org

մատնիք, բերի, նրան թաքավորը փող կտա։ Սովում ինչքան ձկներ կային, էկան. համա մի ձուկ, որ դունչը ավազի մեջ ցից էր արել ու բերնին էր ոսկե մատանիքը, չէկավ։ Էն սհաթը գնացին գլխին տվին, բերնից հանեցին ու բերին թաքավորին։ Թաքավորն էլ իրա որդուն, նա էլ բերեց տվեց Դահրմիրզին։ Դահրմիրզեն նրանից շնորհակալ էլավ, գնաց թաքավորի աղջկա մոտ ու տվեց մատանիքը նրան։ Մրջան խանումը էլ ինչ կարար անի, անխոս պտի Դահրմիրզի հետ վե կենար, գար։ Փառքով, պատվով թաքավորը նրանց ճամփա գցեց։

Էկան նրանք հասան ծովի ղրաղը։ Դահրմիրզան սև քարի տակից հանեց գյամը ու ջրի մեջ թափ տվեց. էկան էն սհաթը էրկու ձի. էրկսով էլ նստեցին ու քշեցին ջրի վրով։

Աղջիկը ճամփին ասեց.— Էս ո՞ւր ենք էթում, էս ճամփեքը Ջանպոլադի ճամփեքն են։

Համա Դահրմիրզան խաբեց, ասելով.— Չէ՛, էս նրա ճամփեքը չի։

Մրջան խանումն ասեց.— Ղորթն ասա, թե չէ ծովը կընկնեմ։ Ես չեմ էթա Ջանպոլադի նման մարդու մոտ։

Հետո Դահրմիրզան ասեց, որ հալ ու հալալ էսպես էլավ.— Համա ո՞նց ըլնի՝ ես նրա մոտից քեզ կփախցնեմ։

Էկան ջխտով էլ ցամաք դուս էկան։ Դահրմիրզան ձիանոնց գյամերը բերններից հանեց ու դրեց սև քարի տակը ու նրանց ըրախ տվեց։

Ջանպոլադի բերդը հասան։ Երբ իմացավ, որ Դահրմիրզան Մրջան խանումին բերում ա, նրա առաջ դուս էկավ ու ուրախ սրրտով էրկսին էլ ընդունեց։ Հետո Դահրմիրզան ու Ջանպոլադը ոնց որ հալալ աղբրտինք իրարից բաժանվեցին։ Դահրմիրզան մի բոլ փող առավ Ջանպոլադից ու մի ձի բարձած Ջանպոլադի տանից հեռացավ։ Երբ մի պուճուր հեռացավ, ձին էսպես փողով բարձած բաց թողեց ու ինքը էլի ետ էկավ։ Երբ Ջանպոլադը իրա տանից հեռանում էր, Դահրմիրզան գալիս էր ու Մրջան խանումի հետ միշտ խոսում էր, որ մի վախտ կարենա նրան փախցնի։ Դահրմիրզան նրան սովորեցրեց, որ հարցնի Ջանպոլադից, թե նրա հոգին ո՞ւրտեղ ա։

Մի անգամ էլ Մրջան խանումը տրտում-տխուր նստել էր. Ջանպոլադը հարցրեց, թե ինչո՞ւ ա նա այդպես տրտում։ Նա ասեց,

www.naregatsi.org

որ՝ երբ դու գնում ես, ես մենակ եմ մնում. քու հոգին ո՞րտեղ ա, որ երբ դու գնաս դուրս, ես նրա հետ խոսեմ։

Ջանպոլադն ասեց.— Իմ հոգին ավլի մեջն ա։ Նա էլ բերեց ավլին շորեր հագցրեց ու դրեց առաջը, սաքի թե նրա հետ խոսի։

Ջանպոլադը նրա վրա ծիծաղեց, ասելով.— Ավլի մեջ հոգի կլինի՞։ Իմ հոգին Հավերվերա սարի գլխին ա. ընտեղ մի եզ կա, նրա փորին մի ղութիկ կա ու նրա մեջ իրեք ծիտ, թե նրանց մորթեն՝ ես կմեռնեմ։

Երբ Ջանպոլադը էլի տանից գնաց որսի, Մրջան խանումը Դահրմիրզին ասեց, թե նրա հոգին որտեղ ա։ Նա էլ գնաց էն եզին սպանեց, փորի ղութիկը բաց արեց ու իրեք ծտերի գլխները կտրեց ու էն սհաթին Ջանպոլադը մեռավ։

Դահրմիրզան էկավ Մրջան խանումի հետ ապրում էր։ Ջունքի Մրջան խանումը շատ սիրուն էր։ Նրա մազերը, երբ սանդրում էր գլուխը, վերցնում էին ու պահում։ Համա երբ որ պատահում էր նրա մազերից մի հատ ջուրն էր ընկնում ու դուս էր գալի ուրիշ թաքավորների երկիր, տեսնում էին, թե ինչքան սիրուն ա նրա մազը, ասում էին. «Ցարաբ սրա տերը ինչքան սիրուն պետք ա ըլնի», ու գալիս էին նրա վրա կռիվ։

Մի անգամ էլ, ոնց ա ըլնում, Մրջան խանումի մի մազը ընկնում ա ջուրը ու դուս ա գալի Ջինումաշինա քաղաքը։ Էս մազը տարան թաքավորի մոտ, նա տեսնելով շատ զարմացավ, ասելով.

— Ցարա՞ր սրա տերը ինչքա՞ն սիրուն ա։

Թաքավորը իրա մարդկերանցը ասեց.— Ով կարա ինձ համար էն աղջկան բերի, ես նրան շատ փող կտամ։

Մի քաֆթառ պառավ ասեց.— Ես կէթամ, կբերեմ։

Թաքավորը ռազի կացավ։ Էս պառավը իրա խնոցու բերանը շորով ղայիմ կապեց ու տարավ գցեց ծովը, ինքն էլ նստեց վրան ու քշեց, քշեց դպա Ջանպոլադի բերդը՝ Մրջան խանումին բերելու։ Էկավ տեղ հասավ։ Իրա խնոցին ջրից հանեց ու տարավ Ջանպոլադի բաղչումը պահեց։

Պառավը գնաց Մրջան խանումի մոտ ու ասեց.— Ես մի խեղճ կնիկ եմ, չիլնի՞, որ ինձ ձեր տուն վեր առնեք. ձեզ համար լվացք կանեմ, ջուր կբերեմ, թաքիլա ինձ մի կտոր հաց տաք։

Մրջան խանումի սիրտը ցավեց նրա վրա ու սիրով ընդունեց նրան իրանց տունը։ Մի օր էլ, երբ Դահրմիրզան գնացել էր ավ

www.naregatsi.org

անելու, էս քաֆթառը իրա խանումին տարավ բաղչեն ման ածելու։

Երբ հասան խնոցուն, նա խնոցու բերանը բաց արեց ու ասեց.

— Տե՛ս, թե ինչ թավուր բաներ կան սրա մեջը,— ու հենց որ Մրջան խանումը գլուխը ներս տարավ, որ մտիկ անի, քաֆթառ պառավը բռթեց նրան՝ խնոցու մեջ քցեց ու բերանը ղայիմ կապեց։ Հետո խնոցին տարավ գցեց ծովը, ինքն էլ վրեն նստեց ու քշեց դպա Զինումաշինա քաղաքը։ Էկավ հասավ, տարավ խնոցին թաքավորի մոտ, կոտրեց խնոցին ու մեկ էլ ինչ տեսնի՝ մի հուրի փարի, երկնքի լիս աղջիկ։ Թաքավորը ուրախությունից չէր գիտում ինչ անի։

Տենանք հիմա Դահրմիրզան ի՞նչ էլավ։ Նա երբ էկավ ավից ու չգտավ Մրջան խանումին տանը, խելքը գլխից թռավ։ Էն սհաթը ասպաբ, թուր, թվանք քաշ արեց ու գնաց աշխարք ման գալու, որ գտնի իր սիրելի Մրջան խանումին։ Էկավ հասավ ծովը։ Սև քարի տակից գյամը հանեց ու ջրի մեջ թափ տվեց, էն սհաթը բոզ ձին դուս էկավ, նա էլ նստեց ու քշեց։

Զին ասեց Դահրմիրզին, որ մի քաֆթառ կնիկ Մրջան խանումին խնոցու մեջ տանում էր, հիմա կես ճամփեն անցկացած կլինի։ Էկավ հասավ ցամաք. ձիու գյամը հանեց սև քարի տակը դրեց ու ինքը իր ճամփեն գնաց։ Հասավ Զինումաշինա քաղաքը ու գնաց էն թաքավորի վրա կռիվ։ Թաքավորը ինչքան ղոշուն ղրկեց, սաղ նա մենակ կոտորեց։ Վերջը թաքավորի ձիապանը՝ Բժին, որ Դահրմիրզի քեռին էր, թաքավորին աղաչեց, որ գնա կռիվ։ Կռվի վախտը էս երկու փահլևանը իրար ասեցին, որ կպչեն։ Երկուսն էլ մեյդան դուս էկան։ Սաղ խալխը նրանց շորս կողմը կաղնել էր։ Իրար հետ խոսք կապեցին, որ ով ում վեր գցի, նա նրան մորթի։ Երկուսն էլ կպան. սաղ օրը կպած մնացին ու մեկը մեկին չէր կարում վեր գցի։ Համա վերջը Բժին վեր կալավ ու Դահրմիրզին գետին դրեց, թուրը քաշեց, որ մորթի։

Դահրմիրզան ասեց.— Ինձ որ մորթես, ես մի քեռի ունեմ՝ անունը Բժի, նրա ձեռից ո՞նց պտի պրծնես։

Սա փաթաթվեց նրան ու էրկսով էլ լաց էլան։

Հետո ջխտով էլ գնացին թաքավորի վրա կռիվ, հաղթեցին նրան, Մրջան խանումին ետ առան, էկան իրանց երկիրը ու իրար հետ սիրով ապրում էին։

www.naregatsi.org

28. ՂՈՉԱՂ ՄԻՐՉԱՆ

Մի թաքավոր ուներ իրեք տղա, իրեք աղջիկ։

Մեռնելու վախտը տղերքանցը ասաց.— Ձեր քվորտանցը ով որ ուզի՝ տվե՛ք, կուզի գել ըլնի, կուզի արջ. մի խոսքով, ով որ գա՝ տվե՛ք, միք թողնի, որ տանը թթվեն, պառավեն։

Թաքավորը մեռավ ու իրա երկիրը իրա իրեք տղերանցը թողեց։

Անց կացավ մի քանի վախտ, մի օր մի Գել էկավ ու ուզում էր պսակվել էս թաքավորի աղջկերանցից մեկի վրա։ Համա մեծ ու միջնեկ աղբերտինքը չէին տալիս. պուճուր աղբերը ուզեց իրա հոր խոսքին լսի ու աղջկերանցից մինին նրա վրա պսակեց։ Գելը առավ իրա կնիկը ու հեռացավ իրա երկիրը։

Մեկել օրը Արջը էկավ։ Էլի մեծ ու միջնեկ աղբերտինքը չէին ուզում, համա պուճուր աղբերը նրանց լսեց ու իրա քվորտանցից մեկին տվեց նրան։ Սա էլ իրա կնիկը առավ ու գնաց իրա երկիրը։

Արջը հեռացավ թե չէ, մեկ էլ տեսնես Արծիվն էկավ ու աղբորտանցից կնիկ էր ուզում։ Մեծ ու միջնեկ աղբերները չուզեցին տալ, համա պուճուրը Արծվին դարտակ ետ չդարձրեց, չունքի իրանց հերը մեռնելիս էսպես էր ասել։

www.naregatsi.org

Թաքավորի տղերքանց պսակվելու վախտն էկավ։ Գյուրզը գցեցին. ում դռան մոտ ընկներ գյուրզը՝ նրա աղջիկն էր իրա ղըսմաթը։ Մեծ աղբոր գյուրզը ընկավ մի կտուր, միջնակինը՝ մեկելի, համա պուճուրի գյուրզը ընկավ մի տլի մեջ, որտեղ գորտերը կըռկըռոցով մարդի ականջ խլացնում էին։ Ի՞նչ աներ, էս էր նրա ղսմաթը, մի գորտ վե կալավ տարավ տուն։

Ամեն իրիկուն հենց որ տուն էր գալիս, տեսնում էր ամեն բան սարքին-կարքին դրած ա. տունը ջրջրհանած, ավլած, խալիչեքը գցած, կժերը լցրած, կերակուրը էփած, համա տանը ոչով չկար։

Մի օր սա դրսևը ղարավուլ քաշեց. տեսավ, որ գորտի միջից մի հուրի-փարի աղջիկ դուս էկավ, ջրջրհանեց, ավլեց, խալիչեքը գցեց, կերակուրը էփեց, ինքն էլ մի քանի թիքա կերավ ու ուզում էր, որ էլի նի մտնի իրա տեղը՝ էն դհից Միրզան[1] վրա հասավ ու լթողեց։ Խեղճ աղջիկը մնաց կարմրած։

Էն վախտը սկսեց աղջիկը խոսել Միրզու հետ.

— Մեր ցեղը էն տեսակ ա, որ չենք կարա արև տեսնա. Սև դևը մեզ կբռնի, կտանի։

Միրզան ասաց.— Բաս ես մեռե՞լ եմ, որ Սև դևը կարենա քեզ տանի. մի թուր ա՝ նրա ջանը, իսկի դու դարդ մի անի, քու մազին ոչով չի կարա ձեռ տա։

Մի անգամ հարսների հետ դռան շեմքի վրա զրից էին անում, Սև դևը վեր էկավ երկնքից ու մազերը ձեռին փաթաթելով տարավ։ Խեղճ Միրզի լեղին ջուր կտրեց, երբ էկավ տուն ու տեսավ, որ իրա կնիկը էլ չկա։

Միրզան իրան-իրան ասաց. «Ով ա տարել, ով չի տարել, Սև դևն ա տարել»։ Էն սհաթին վեր կացավ, թուր-թվանք կապեց, ձին նի էլավ ու «Յա՛ տեր աստոծ» կանչելով ճամփա ընկավ։ Շատն ու քիչը աստոծ գիդա, նա մի գեղ հասավ։ Էս գեղում կենում էր Գելը իրա կնկա հետ։ Միրզան էկավ Գելի տանը վեր էկավ։ Նա իրա քվորը ճանաչեց, իրար փաթթվեցին ու շատ լաց էլան։ Քիրը նրան մի տեղ թաք կացրեց, որ Գելը իրիկունը չգա, ուտի նրան։

Գելը էկավ տուն ու մռթմռթալով ասաց.— Ա՛յ կին, մարդմարդահոտ ա գալի։

---

1 Ձեռագրում փակագծի մեջ նշված է՝ տղի անունը էսպես էր, որը բանաստեղծի խոսքերն են (Մ. Կ.)։

www.naregatsi.org

Կնիկն ասեց.— Ա՛յ մարդ, մարդ-մարդահոտ քեզանից ա գալի, սարից-ձորից դու ես գալիս։

— Չէ՛, որ չէ՛, ստեղ մարդ կա։— Կնիկը խոստովանեց, թե իրա աղբերն ա։

— Թե մեծ կամ միջնեկ աղբերտինքդ են՝ մեծ թիքեն ականջը կթողնեմ, համա թե որ պուճուր աղբերն ա, իմ գլխի վրա էլ տեղ ունի, բարով ասում բարին ա էկել։

Կնիկը ասեց, որ պուճուրն ա։ Էն վախտը կնկա վրեն բարկացավ ու ասեց, թե.

— Գնա՛, կանչի։

Միրզան էկավ։ Գելը իրա կաշվից դուս էկավ ու դառավ մի սիրուն ջահել տղամարդ։ Իրար փաթթվեցին ու պաչպչեցին մեկմեկու։ Միրզան ու Գելը նստեցին իրար մոտ ու սկսեցին զրից անել։

Գելը ասեց.— Էրեկ ես տեհա Սև դևը մի սիրուն աղջկա մազերը ձեռներին փաթաթած վերև էր տանում. խելքս ու միտքս էն սիրուն աղջիկը տարավ։

Միրզան ասեց.— Ես էլ հենց նրա հավարին եմ էկել. նա իմ կնիկն էր։

Գելը ասեց.— Սև դևը ըլնում ա Սև սարի գլխին։ Էն սարի վրա մի եզ կա, եզի փորին մի աղվես կա, աղվեսի փորին մի ղութիկ կա, ղութիկի մեջ իրեք ծիտ կա։ Թե որ էդ ծտերին մորթես՝ Սև դևի հոգին էն ա։ Շոք վախտերքին էն եզը գնում ա, մի մեծ գյոլ կա, էնտեղ ջուր խմելու։ Դու էն գյոլը գինի ու արաղ ածա, եզը կխմի ծարավությունից ու դու նրան ճեշտությամբ կարաս սպանել։

Էդպես նա գնաց, արեց։ Եզին մորթեց, փորից աղվեսին հանեց, աղվեսի փորից հանեց ղութիկը, ղութիկի մեջ դտավ իրեք ծիտ։ Էն բոպեին մինի ճիտը քաշեց՝ Սև դևը ուշքից գնաց, մեկելի ճիտն էլ քաշեց՝ Սև դևը շշմած վեր ընկավ։ Էն մեկելն էլ ձեռին գնաց Սև դևի մոտ. նա շատ աղաչեց, որ էդ մեկի ճիտը չքաշի, համա նա չխնայեց ու քաշեց նրա ճիտը։ Էն բոպեին սատկեց դևը [1]։

Վերցրեց նա իրա կնկանը ու տուն էկավ ու երկար վախտ իրար հետ ուրախ ապրում էին։

---

[1] Ձեռագրում եղել է՝ եզը, հավանաբար բանահավաքի վրիպումն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

29. ՔՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չըլնի էրկու աղբեր. սրանք վեր են կենում ու գնում զարբություն՝ աշխատանք անելու։ Սրանց հերը ասել էր, որ ում մոտ նոքարություն կանեք, Քոսի մոտ նոքարություն չանեք։

Իրար մանգաղ փոխեցին, այսինքն, եթե նրանցից մեկն ու մեկի մանգաղը ժանգոտի՝ իմանա, որ իրա աղրերը մեռել աւ։ Իրարից հեռացան էրկու աղբրտինք, մինը ուրիշ ճամփով գնաց, մեկելը՝ ուրիշ։

Մի աղբերը գնաց, գնաց՝ մի երկիր հասավ։

Մեյդանի մեջ մի Քոսա ռաստ էկավ, հարցրեց.

— Աղբե՛ր, ինձ նոքար չե՞ս ըլնի։

Նա էլ փողին թամահություն անելով, ասեց, թե.

— Խի չեմ ըլնի, որ լավ հաց տաս։

Իրար հետ բարշեցին։

Քոսեն ասեց.— Ինչ ասեմ՝ պտի անես, թե որ չարեցիր՝ ես քու մեջքից մի զոլ կաշի հանեմ, թե որ ես քեզ վադեն չթամամած դուս անեմ՝ դու իմ մեջքից մի զոլ կաշի հանի։

Անցկացավ մի քանի վախտ. ամեն մարդ իրա հողը վարում էր, որ ցանի։ Քոսեն իրա նոքարին ասեց, որ գութանը վերցնի ու իրա շունը հետը էթա, որտեղ շունը նստի՝ էնտեղ նա վարի։ Նա էլ

www.naregatsi.org

գութանը օխտը լուծ եղն ու գոմեշ լծեց ու «Հոռոովե՞լ-լե՞» ձեն տալով գնաց։ Շունը սատանի նման գնաց ու մի մենձ լեռ քարի վրա նստեց։ Նա գութանը քցեց, ինչ արեց՝ չկարաց վարի ու սաղ ջարթբխուրթ արեց, թողեց։ Իրիկունը ետ էկավ ու աղին ասեց, թե չկարաց վարի։

Քոսեն ասեց.— Գնա գոմը էնպես սրբի, որ եղ դուս գա։

Նա գնաց էնքան սրբեց, որ կռներն էլ բեզարեց ու եղ չդուս էկավ։ Իրա աղին ասեց, որ եղ չի դուս գալի։

Քոսեն էլի ասեց.— Գնա եղների առաջը էնքան դարման ածա, որ գլխները անջախ էրևա։ Նա ինչքան դարման էր ածում, եղները գլխները բարձրացնում էին. մախլաս, էլի չկարաց անի ու գնաց Քոսին ասեց, թե.

— Չեմ կարում, աղա՛։

Քոսեն նրան ասեց.— Չունքի ինչ որ ասեցի՝ չկարացիր, արի՛, քու մեջքից մի զոլ կաշի պտի հանեմ։

Էս ասեց ու մեջքից Ճիպոտով մի զոլ կաշի հանեց. էն սհաթը նա մեռավ։

Հիմա սալդ տանք էն մեկել աղբորից։

Էն աղբերը մտիկ արեց, տեհավ, որ իրա մանգաղը ժանգոտել ա, ասեց. «Բալի որ իմ աղբորը մի փորձանք ա էլել» ու վեր կացավ, էկավ սալդով էն երկիրը, որ երկիրը որ գնաց սրա աղբերը ու Քոսի մոտ նոքար էլավ։

Մեյդանի վրա սրան մի Քոսա ռասատ էկավ. էս էլի մեր ծանոթ Քոսեն էր. նրան հարցրեց, թե՝ նոքար չես ըլնի, նա ասեց՝ խի չեմ ըլնի։ Նրան Քոսեն տարավ իրա տունը նոքար։ Քոսեն էլի նրա հետ բարշեց, որ ինչ ասի՝ պտի անի, թե որ չարեց՝ նրա մեջքից մի զոլ կաշի կհանի։

Վար ու ցանքի վախտը հենց որ էկավ Քոսեն իրա նոքարին ասեց.

— Գութանը լծի ու գնա հանդը, մեր ֆողը վարի. կըլնի որ մեր ֆողը չիմանաս, իմ շունը հետդ գա, որտեղ նստեց, էն ա՝ իմացիր։

Մեր Քոսի նոքարն ա, գութանը լծեց, շունն էլ ետևից քցեց, գնաց։ Շունը ոնց որ սովորցրած էր, գնաց ու մենձ քարի վրա նստեց. նրա ճարը կտրեց, քարով տվեց շանը սպանեց ու ինքը

www.naregatsi.org

փափուկ տեղ վարեց, իրիկունը տուն էկավ, իրա աղին ասեց, որ վարել, պրծել ա։

Քոսեն ասեց.— Էդ մինը որ լավ արիր, դե հիմա գնա մեր գոմը ընենց թամուզ սրբի, որ եղ դուս գա։

Նա ավելը վեր կալավ քիչ դես քստացրեց, քիչ դեն քստացրեց, գնաց Քոսի բղղներով եղը բերեց շուռ տվեց գոմը ու գնաց Քոսին ասեց, որ գոմը հրես թամուզ հազիր ա։

Գնաց, ինչ տեսնա՝ ղորթ որ սաղ գոմը եղ ա։ Էն սհաթը ֆահմեց, որ իրանց եղն ա։ Քոսեն իրիկունը ասեց.

— Գնա եզների առաջը էնքան դարման ածա, որ գլխները դարմանի տակ մնա խրված։

Նա էլ գնաց ինչքան եզ կա, քոմրքոնց գլխները կտրեց, կոխեց դարմանի մեջ ու գնաց իմաց տվեց իրա աղին, որ նրա հրամանը կատարել ա։ Էկավ Քոսեն, ինչ տեսնա՝ մազերը մսմարի նման գլխին բիզ-բիզ կանգնեց։ Քոսեն մտածեց, որ իրա նոքարը իրան հաղթեց, պտի մի դհով սրա ձեռից պրծնի։

Էն գշերը Քոսեն իրա կնկանը ասեց.— Ա՛յ կնիկ, գլխիդ ճար ունես՝ տե՛ս, առավոտը մեր նոքարը իմ մեջքից մի զոլ կաշի պտի հանի, թե՛զ, մի քանի հատ գաթա թխա, որ վեր կենանք ու փախչենք սրա ձեռից, թե չէ բաններս բուրդ ա։

Քոսի կնիկը էն գշեր գաթա թխեց, ածեց ղութիկը, որ էն-բաշտեն հազիր ըլնի, որ փախչեն։ Էս բանը Քոսի նոքարը իմանում ա. նրանցից թաքուն գնում ա մտնում գաթի ղութիկը ու գաթեքը վրեն ածում։ Էն բաշտեն Քոսեն գաթի ղութիկը շալակում ա ու իրա կնկա հետ փախչում ա։

Մարդ ու կնիկ գնացին ու մի գեղ հասան։ Ըստեղ շները վրա տվին. Քոսեն ասեց.

— Հա՛յ գիտի, մեր նոքարն ըստեղ ըլներ, սրանց շանց կտար։

Նա էն սհաթը ղութկից գլուխը հանեց ու ձեն տվեց.

— Ես ըստեղ եմ, ըստեղ Քոսա, դարդ մի անի։

Մարդ ու կնիկ մնացին զարմացած. համա նրանց ձեռներին ինչ կար։ Իրար հետ երեքով գնացին ու մի գետի ղրաղին վեր էկան. էն գշեր ընտեղ քնեցին։ Մարդ ու կնիկ իրար մոտ էին քնել, իրանց նոքարի համար տեղ իրանց ոտների մոտ էին քցել, չունքի Քոսեն մտածել էր, որ գիշերվա մի վախտ քացով տա, քցի ջուրը։ Նա էս բանը թեզ ֆահմեց։ Գշերը, երբ մարդ ու կնիկ քնել էին, ինքը գնաց

www.naregatsi.org

Քոսի մոտ քնեց ու նրա կնկանը բերեց դրեց նրա ոտների մոտ։ Քոսեն դշերվա մի վախտ վեր կացավ ու հենց իմացավ նոքարն ա՝ քացով տվեց ու քցեց դետը։

Առավոտը Քոսեն ուրախ-ուրախ տեղից վեր կացավ, տեհավ իրա կնիկը չկա ու իրանց նոքարը իրա մոտ քնած աւ Քոսեն նոր խելքի ընկավ նրա արած սատանությունը։ Նոր էլ ո՞ր տեղ։

Քոսեն ու իրա նոքարը իրար հետ ըստեղ բարշեցին, նա իրա հախը առավ ու գնաց իրա երկիրը։

www.naregatsi.org

30. ՇԸՆԵՐԿՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Էրկու մարդ իրար հետ ճամփա են էթում։ Գալիս են մի երկիր ու մեկի մոտ գոնաղ ըլնում։

Քնելու վախտը էս տան տերը նրանց ասում ա.

— Դուք օջորքը բարձրացնեք գշերը, չունքի մենք բոլորս էլ շուն ենք ըլնում ու ցերեկը էլի մարդ։

Էս երկիրը ՇընՇերկիրն էր։ Էս էրկու ճամբորդներից մինը չհավատաց նրա ասածին՝ նրանց մոտ քնեց. իսկ մեկելը հավատաց ու նի էլավ օջորքը ու էնտեղ դայիմացավ։

Գշերվա մի վախտ սաղ տանը ցիք շուն էլան ու էն մարդին զզգզեցին. իսկ մեկելը մնաց սաղ, չունքի օջորքը չկարացին բանձրանալ։

Էն ճամփորդը առավոտը վեր կացավ իրա ճամփեն բռնեց՝ գնաց։ Էկավ մի քաղաք, իրա համար մի աղջիկ առավ ու նրա հետ պսակվեց։ Մի օր տեհավ, որ մի մարդ մեռել ա, նրա կնկանն էլ հն հետը տանում թաղելու։ Նա զարմացավ ու հարցրեց, թե ինչ թավուր սովորութք կա նրանց մեջ։ Նրան ասեցին, որ թե ինքը մեռնի՝ իրա կնկանն էլ նրա հետ կթաղեն, թե որ կնիկը մեռնի՝ իրան սաղ-սաղ կտանեն նրա հետ թաղելու։

Մի քանի ամսից ետ, էս մարդի կնիկը մեռավ։ Իրան հետը

www.naregatsi.org

սաղ-սաղ տարան թաղելու։ Նրա համար մի ամսվա պաշար տվին, տարան մաղարա ու թաղեցին, մարդը նրա կողքին նստեց։

Էն մարդը մնաց մենակ. մին էլ աչքերը բաց արեց ու տեհավ, որ շատ մեռելներ կան՝ որի մարդն ա մեռել, որի էլ կնիկը. որը մեռած, որը սաղ նստել են։

Էն սաղերի մեջ մի սիրուն աղջիկ կար, որ իրա մեռած մարդու կողքին նստել էր։ Էս մարդը գնաց նրա հետ խոսեց ու մտածում էին, թե ո՞նց էստեղից դուս էթան։

Աղջիկը ասեց.— Հիմա մի իշի նման ջանավար կգա, որ մեռելներ ուտի. երբ որ նա կուզենա դուս գնա, մենք նրա ոտից կըբռնենք ու նա մեզ դուս կտանի։ Էս մի քանի օր ա, որ ես էկա իմ մեռած մարդի հետ էստեղ։

Նրանք մի քիչ կացան, էն իշի նման ջանավարը էկավ. նրանք նրա պոչից բռնեցին, ու նա ջխտին քաշեց իրա հետ ընկավ ծովը ու ծովի միջից հանեց մի քաղաք, որտեղ իսկի մարդիկ չկային. ամեն բան հազիր դրած էր. դուքանները, տները բաց, համա մեջը մարդ չկար։ Էն մարդը էս բանի վրա շատ զարմացավ։ Իրիկունը վրա հասավ, մթնեց. նրանք քնեցին. առավոտը էն մարդը վեր կացավ ու տեհավ, որ իրա կնիկը չկա։ Մի մենձ փեչ վառեց ու տաքացրեց էնքան, որ լավ կարմրեց ու ինքը մոտը նստեց։ Տեհավ մի փրչոտ ջանավար էկավ։ Տղեն վրա հասավ ու նրա վրա ձեթ ածեց ու կրակ տվեց։ Ջանավարը էրվեց թե չէ, տղեն վրա հասավ ու կտրտեց՝ քցեց էն թեժ փեչը ու ինքը գնաց քաղաքը ման գալու։ Նա նոր իմացավ, որ իրա կնկանը նա ա տարել։

Էն մարդը գնաց տեհավ, որ իսկի մարդ չկա. դուքանները բաց են, մեջը լիքը ապրանք, համա ջին-ջանավար էլ ա չկա։ Մի քիչ գնաց, տեհավ, որ մի փոսից ձեն ա գալի. մոտ կացավ, ասեց.

— Ո՞վ ես, ձեն տու, հողածի՞ն ես, ի՞նչ ես։

Էն տնքողը ասեց.— Ես մի պառավ եմ, էրկու իրեք տղա ունեի. մի փրչոտ ջանավար էկավ փռթեց նրանց ու կերավ. ես էլ էկա մտա հիմիկուց հողի տակ, որ նա ինձ էլ չուտի ու հողին արժանի ըլնեմ։ Էս քառասուն օր ա, որ էստեղ եմ. էն ջանավարը սաղ քաղաքի մարդկերանցը կերել ա։

Նա ասեց, որ ինքը էն ջանավարին սպանել ա։ Պառավը ուրախացած դուս էկավ ու նրան տարավ իրանց տները շանց տվեց։

Էն մարդը էն ծեր մարդին ասեց.— Սրանից դեն, ես քեզ որդի,

www.naregatsi.org

դու ինձ հեր, տար ինձ պսակի ուրիշ երկրում ու գանք էս քաղաքը էլի մարդկերանցով լցնենք։

Էն ծեր մարդը ասեց.— Էս ծովով չի ըլնի անց կենալ. մի իշի նման ջանավար կգա, դու նրա պոչից կախ իլ, գնա էն երկիրը, որ կնկանը ու մարդուն իրար հետ են թաղում, թեկուզ նրանցից մինը սաղ ըլնի, մտի էն մաղարեն ու մի աղջիկ բեր քեզ համար ու էստեղ ապրենք։

Նա ասեց ծեր բաբուն, որ ինքն էլ էն իշի նման ջանավարի տեռով ա էկել էստեղ։

Մի քիչ կացան էն ջանավարը էկավ ու երբ որ իմացավ, որ էն փրշոտ ջանավարին սպանել են, շատ ուրախացավ։ Էն տղեն նրա պոչից բռնեց ու գնաց էն մաղարից մի աղջիկ բերեց։ Իրան կնիկ շինեց։

Մի քանի վախտից հետո նա էրեխա ունեցավ ու քանի գնաց, դհա էվելցավ. իրար վրա պսակվելով շատացան ու լցվեցին սաղ քաղաքը։

Նա մարդիկ հավաքեց ու գնաց կռվի էն երկրի մարդկերանց վրա, որ մարդ ու կնկա իրար հետ են թաղում։ Նրանց ջարդեց ու նստ էկավ իրա քաղաքը։

Էն վախտը էն փրշոտ ջանավարի մորը էկավ իրա որդուն տեսնալու. տեհավ սպանել են, գնաց մարդիկ հավաքեց ու կռվեց նրա հետ։ Քիչ էր մնացել էն տղեն ջարդվում էր իրա մարդկերանցով, համա էն էշի նման ջանավարը իրա ընկերներով էկավ նրա դհից կռվեց ու ջարդեց էն ջանավարի մորը ու իրա մարդկերանց։ Նա չունքի շատ էր պառավել, մեռավ ու իրա մեռնելուց առաջ ասեց, որ իրա որդիքը իրանից հետո էթան Շընեկրի վրա կռիվ ու ջարդեն էնտեղի մարդկերանցը։ Նրա մեռնելուց հետո նրա որդիքը գնացին Շընեկրի վրա կռիվ. ջարդեցին ու հիմնահատակ արին նրանց երկիրը։

Էս քաղաքը նրանից դեն քանի գնաց դհա մենձացավ ու շատացան նրա միջի մարդիկը. էլ առաջվա նման անմարդ չէր։

www.naregatsi.org

31. ԱՎԶԻ ՂԱՍԸՄԻ ՀԵՔԻԱԹԸ

Ավշի Ղասըմը շատ լավ թվանք քցող էր. ինքը ավշի էր։ Մի անգամ նա գնաց ավի, տեհավ՝ մի սարի վրա ոչխար-տավարը լիքն ա ու մարդու նման սատանեքը կթում են։ Նրա աչքին մի աղջիկ ընկավ, որ շատ սիրուն ա ու մի ոչխար կթում էր։ Հեռվից թվանքով տվեց նրան։ Նա կիսամեռ վեր ընկավ։

Նա ասաց ավշի Ղասըմին.— Ես սատանաների թաքավորի աղջիկն եմ, իմ նշանածը որ իմանա՝ նրա ձեռից էլ չես պրծնի, յա նա քեզ կսպանի, յա թե չէ գու՝ նրան։

Ավշի Ղասըմը ասեց.— Ինձ Ավշի Ղասըմ են ասում, նա ինձ ափաշկարա չի կարա սպանի, համա թե թաքուն սպանի, աստած նրա դիվանը կանի։

Էն աղջիկը հենց որ աստծու անումը լսեց՝ տեղն ու տեղը հալվեց։ Նա էստեղից գնաց ու մի աղբրի մոտ նստեց, որ դինջանա։ Մեկ էլ տեհավ, որ մի սիրուն օձ մի ծակից դուս էկավ ու գնաց։ Նրա հետևից մի մազերավոր շատ սիրուն աղջիկ, մի ծիծը մի դինը, մեկելը՝ մի։ Մի քարի տակից դուս էկավ մի Սև ու անճոռնի օձ ու իրար փաթաթվեցին։ Ավշի Ղասըմը էլ չդիմացավ ու թվանքով տվեց Սև օձին, համա դիպավ Սիպտակի ծծերին ու քոքըհան արեց

www.naregatsi.org

ջուխտն էլ, իսկ սև օձի մենակ պոչն էր կտրել։ Երկուսն էլ իրանց բունը մտան։

Էն սիրուն օձը, որի ծծերը Ավշի Ղասըմը թոցրեց, օձերի թաքավորի կնիկն էր, որ էն Սև օձին էր թաքուն սիրել։ Իրիկունը թաքավորը տուն էկավ ու տեհավ, որ իրա կնիկը տեղով բարձով պառկել ա ու ծանդր տքում ա։ Նա իրա մարդին գանգատվեց, թե Ավշի Ղասըմը իրա ծծերը թվանքով կտրել ա։ Թաքավորը իրա օձերին ասեց, որ էթան նրան էլ, նրա օղլուշաղին էլ սպանեն։ Օձերը գնացին իրանց թաքավորի հրամանը կատարելու։

Ավշի Ղասըմը իրիկունը տուն էկավ ու իրա կնկանը ասում էր, թե ինչ ա պատահել։ Էն օձերը, որ թաքավորից ղրկված էին, որ նրան սպանեն, կտրանը ականջ էին դնում։ Երբ որ իմացան թե բանը ինչումն ա, գնացին Ավշի Ղասըմի տունը ու ասեցին, որ թաքավորը նրան կանչում ա։

— Թե որ քեզ թաքավորը կհարցնի, դրուատը ասա նրան, ոնց որ տեհել ես, մի վախի. երբ որ դու դրուատ դուս գաս, նա կասի. «Ուզի՝ տա՛մ»։ Դու ասա՝ զադ չեմ ուզում, մենակ քու լեզուն բերանումս պտիտ տուր։

Ավշի Ղասըմը գնաց էլի էն օձերի հետ էն օձի բնի մոտ կանգնեց, որտեղ նա տեհել էր, որ Սև ու Սիպտակ օձերը իրար փաթըթվել էին ու նա թվանքով տվել էր Սիպտակ օձին։

Հանկարծ մի մենձ դարդյահ բաց էլավ, նա ներս գնաց ու տեհավ թաքավորը նստել ա թախտին ու նրա կնիկը շատ ծանդր տնքում ա։ Թաքավորը նրան հարցրեց, ու նա էլ մին-մին ոնց տեհել էր ասեց նրան։ Թաքավորը ասեց, որ աշխարհումս ինչքան օձ կա, գան իրա մոտով անց կենան, որ Ավշի Ղասըմը էն Սև օձին գտնի։ Ինչքան օձեր էկան, նա ասեց՝ չէ։ Վերջը ասեցին, որ մի պառավի տղան է մնացել։ Գնացին տեհան, որ հիվանդ պառկել ա ու պոչը կտրած ա։ Նա ասեց, որ հենց նա ա։

Թաքավորը ասեց.— Ուզի՝ տա՛մ։

Նա ասեց.— Քու լեզուն բերանումս պտիտ տուր։

Թաքավորը պտիտ տվեց ու նա իմաստուն էլավ. ինչ ջանավար, ինչ քոլ խոսում էր՝ նա հասկանում էր։ Թաքավորը իրա կնկա գլխով պտիտ չէկավ, նրա գլուխն էլ կտրեց ու էն Սև օձինն էլ։

Ավշի Ղասըմը գնաց տուն։ Ինչ ջանավար խոսում էր՝ նա իմանում էր։

www.naregatsi.org

Մի անգամ էրկու շուն իրար հետ խոսում էին, ասում.

— Էս մարդի ձին էգուց կսատկի ու մենք կուտենք։

Նա իմացավ ու իրա ձին ծախեց, մեկել օրը սատկեց։ Էսպես նա իմանում էր, թե իրան վնաս պտի ըլնի ու առաջուց նրա առաջն էր կալնում։ Կնիկը նրա յախից բռնում էր միշտ, որ ասի, թե ինչիցն ա, որ նա ամեն բան իմանում ա։ Համա նա չէր ասում, շունքի ինքը կմեռներ։

Մի անգամ թխսի հավը իրա ճուտերով բակում ման էր գալի, Ավշի Ղասըմին տեսնալով իրա կնկա հետ կռվելիս, ասեց.

— Տեսո՞ւմ ես, ես իմ հավ տեղովս էսքան ճուտերին ինձ հնազանդեցնում եմ, համա դու մարդ տեղովդ չես կարում քո կնկանը խելոքացնի, որ քեզ ականջ դնի։

Ավշի Ղասըմը գնաց Աղվեսի մոտ ու ասեց, որ իրան իրա կնկանից ազատի։

Նա ասեց.— Ես բնիս չորս բոլորը ոսկի կփռեմ. դու նրան խաբի, թե մեջը լիքն ա ոսկով ու բեր կախ արա իմ բունը, էն վախտը մենք գիդանք։

Ավշի Ղասըմը էնպես էլ արեց. նրա գլուխը թլբսորելով, բերեց աղվեսի բունը կախ արեց, որ ոսկի հանի. համա աղվեսը իրա ճուտերով վրա պրծավ ու գզգզեց նրան։

Էսպես նա իրա ղանջը կնկանից պրծավ։

www.naregatsi.org

32. ԼՈՂՄԱ ՀԵՔԻՄ

Մի մարդ էթում ա մեշեն փետ կտրելու։ Հետը վեր ա կալնում մի կացին ու պարան։ Էթում մի ծառի մոտ նստում ա ու հաց ուտում։ Հետո վեր ա կենում տեսնում, որ էդ ծառը, որի տակ նա նստել էր, լավ ճղքեր ունի։ Մի ճիպոտացու կտրեց, իրա կացինը ու պարանը պահեց էդ ծառի քոքի տակ, ինքը գնաց Ստամբոլ, որ բանվոր բռնվի։

Մեյդանի մեջ ռաստ էկավ մի Քոսա ու ասեց նրան, թե չի՞ գա իրա մոտ բանելու։ Նա հարցրեց, թե ի՞նչ բան ունի անելու։ Քոսեն ասեց, որ գա իրա ոսկին ու փողերը խառնի թիով։ Էս մարդը էկավ Քոսի տունը։ Քոսեն տարավ նրան մի օթախ քցեց, տրկլորացրեց նրան, սաքի թե ոսկի չգողանա։ Նա մնաց մենակ օթախում։ Օթախը լիքն էր օձերով, որ ինչ մարդ Քոսեն խաբում քցում էր էս օթախը, օձերը կծում էին ու սպանում, հետո Քոսեն գալիս էր մարդին մորթում, նրա մեջի օձի յաղուն հանում ու դեղ շինում։ Էս մարդի ձեռին էր դեռ հլա էն ճիպոտը, որ էն ծառից քաղել էր։ Մեկ էլ տեհավ, որ օձերը էկան ու իրա ձեռի ճիպոտին գլուխ տվին, գնացին. էն մարդը մնաց զարմացած։ Սաղ օրը նա մնաց անհաց, անջուր օթախում նստած։ Մեկել օրը Քոսեն էկավ, որ տանի էն

www.naregatsi.org

մեռած մարդուն ու միջի յաղուն հանի դեղ շինի, համա մնաց զարմացած, երբ տեհավ, որ դեռ սաղ աւ Քոսեն հարցրեց, թե ո՞նց էլավ, որ նա սաղ աւ Նա ասեց, որ էս ձեռիս ճիպոտը ինձ ազատեց։

Քոսեն հարցրեց, թե որտեղից ա կտրել էն ճիպոտը ու ասեց, թե որ էն ծառը շանց տա, նա նրան շատ փող կտա։

Քոսեն նրան վեր կալավ ու տարավ, որ շանց տա իրան էն ծառը։ էն մարդը տարավ շանց տվեց էն ծառը, որտեղ նա իրա կացինը ու պարանը պահել էր։ Քոսեն ծառը քոքրհան արեց ու տակը փորեց։ Փորեց փորեց, մի տափակ քար քթավ. բանձրացրեց, տակը մի կարմիր օձ էր նստել։ Տվեց նրան սպանեց, կտրտեց լըցրեց պղինձը ու դրեց կրակի վրա, որ էփի։

Իրա քունը տարավ ու նրան ասեց.

— Դու մուղայիթ կաց, որ էրեսի եղը չթափի, երբ որ կէփի, դու ինձ վեր կացրու։

էն մարդը ինքն իրան ասեց.— Սա որ զարթնի, պտի ինձ սպանի, լավ է ես հիմիկուց ինձ սպանեմ՝ էս պղնձի էրեսը քաշեմ ու խմեմ, որ յաղու աւ։

Նա խմեց էրեսը քաշելով ու էլավ Լողմա հեքիմ։ Ինչ քար, ինչ բոլ խոսում էր՝ նա իմանում էր։ Ամեն մի քոլը ասում էր, թե ես էս բանի դեղ եմ, էնպես որ ինչ թավուր դեղ ուզենար, կարար շինի։ էրկու ջանավար ինչ որ իրար հետ ասում, խոսում էին՝ նա հասկանում էր։ Քոսեն վե կացավ ու տեհավ, որ պղնձի էրեսը քաշել են, խմել։ Նրան հարցրեց՝ նա ղորդը ասեց, որ ինքն ա խմել։

Քոսեն ասեց.— Լա՛վ, բաս ես քո աշկերտը, դու իմ ուստեն։

Քոսեն ու Լողմա հեքիմն իրար հետ գնացին, ճամփին ուրիշ մարդկերանց էլ ռաստ էկան, նրանց էլ իրանց ընկեր շինեցին ու գնացին։ Գշերը վրա հասավ։ Նրանք մի մաղարա մտան, տեհան միաչքանի շոբան՝ դագանակը ուսին, իրա էծերը, որ մինը մի ձիու չափ կըլներ, տուն էր անում։ էս միաչքանի շոբանը նրանց սիրով իրա մոտ ղոնաղ արեց ու ասեց, որ էս գշեր իրա մոտ են, տեղ չէթան։ Նրա հետ հաց կերան ու պառկեցին քնելու։ Մաղարի մեջտեղը կրակը վառվում էր. միաչքանի շոբանը մաղարի դռանը մի մենձ ջաղացաքար էր դեմ տվել, որ նրանք էլ չկարենան դուս գալ։ Երբ որ լավ քնեցին էս ղոնաղները, սավայի Լողմա հեքիմից, որ մտիկ էր անում, թե վերջը ինչ ա ըլնելու. տեհավ որ, էն միաչքանի շոբանը տաքացրած շիշը կոխեց իրա ընկերներից մինի փո-

www.naregatsi.org

ը, կրակի վրա խորովեց ու կերավ։ Էսպես բոլորին կերավ, մնաց մենակ Լողմա հեքիմը, ու նա էլ քնեց։ Լողմա հեքիմը մտածեց, թե ո՞նց պրծնի էն չոբանից։ Կրակի մեջ դրած էր մի շիշ։ Վեր կալավ տաքացրած նրա աչքը կոխեց։ Չոբանը վեր կացավ նրա հետևից ընկավ, Լողմա հեքիմը մտավ նրա էծերի մեջ։ Չոբանը շատ շարշարվեց, համա չկարաց բռնի։ Մնաց լուսացավ։ Չոբանը դռանը կանգնած ձեռներով մին-մին մտիկ էր անում, որ նա էլ հետները չէթա։ Լողմա հեքիմը վրեն էծի մորթի քցեց ու կուզե-կուզ գնաց, նա ձեռները քսեց նրա վրեն ու թողեց։ Լողմա հեքիմը պրծնելով նրա ձեռից, հեռվից տվեց թվանքով սպանեց նրան։

Լողմա հեքիմը մենակ գնաց, գնաց մի ջաղացի ռաստ էկավ ու շունքի մթնում էր, էս ջաղացի մեջ մնաց։ Իրիկունը տեհավ, որ էկան գելը, արջը ու աղվեսը։

Աղվեսը գելին հարցրեց.— Գել աղբեր, ինչ թազա խաբար կա։

Գելը ասեց.— Աղվես աղբեր, ի՞նչ թազա խաբար պտի ըլնի. շոլումը մի ոսկոր կա, էթում եմ կրծում եմ, կրծում ու ետ գալի։ Աղվեսը հետո արջին հարցրեց, թե ի՞նչ թազա խաբար կա։

Արջը ասեց.— Առավոտը, որ ես էստեղից դուս գամ ու իմ հետևից որ թրիք թափվի, էն թրիքը ֆլան թաքավորի տղի աչքերի դեղն ա, շունքի նա քոռ ա։

Հետո արջը հարցրեց աղվեսին, թե ի՞նչ թազա խաբար կա։

Աղվեսը ասեց.— Աղբեր, ի՞նչ թազա խաբար պտի ըլնի, շոլում մի տոպրակ ոսկի կա, էթում հետը հաղ եմ անում ու գալի, համա չեմ կարում բերի։

Պուճախում տափ կացած Լողմա հեքիմը սաղ լսեց։ Հենց որ լիսացավ՝ գելը, արջը ու աղվեսը գնացին. նա էլ նրանց հետևից գնաց։ Արջը որ դուս գնաց ջաղացից, թրքեց ճամփին. նա հավաքեց ու աղլխի մեջ ածեց, հետո գնաց տեհավ՝ աղվեսը հաղ ա անում ոսկե տոպրակի հետ։ Նա մի դիհ տափ կացավ, երբ որ աղվեսը հեռացավ՝ գնաց վե կալավ ու տարավ։

Ճամփին մի մարդ ռաստ էկավ ու հարցրեց, թե ի՞նչ տեղից ա էդքան ոսկին. նա տեղը ասեց։

Էն մարդը ասեց.— Ես պտի էթամ էնտեղ ու թաք կենամ, տեսնամ նրանք ի՞նչ են խոսում։

Լողմա հեքիմը շատ աղաչանք արեց, որ չէթա ու ասեց, որ իրա ոսկու կեսը նրան կտա, համա նա չլսեց։

www.naregatsi.org

էն մարդը գնաց ջաղացը ու թաք կացավ, որ լսի թե ի՞նչ են խոսում։

Աղվեսը հարցրեց էլի արջին.— Ի՞նչ նոր խաբար կա։

Արջը ասեց.— Ա՜յ աղբեր, էլ չեմ ասի, չունքի լսել են ու իմ թրիքը հավաքել տարել։

Աղվեսը ասեց.— էն տոպրակը, որ լիքն էր ոսկով ու ես ամեն վախտ էթում նրա հետ հաղում էի, լսել են ու տարել էն ոսկին, ոնց էրևում ա, մի մարդ ամեն վախտ գալիս ա ու լսում մեզ։

Էս ասեց ու աղվեսը ման էկավ, չընի թե մարդ ա տափ կացել։ Քթավ էն տափ կացած մարդին ու էնքան տվին, որ տեղն ու տեղը սպանեցին։

Հիմա խաբար տանք Լողմա հեքիմից։ Նա գնաց էն թաքավորի մոտ ու ասեց, որ նրա տղի աչքերը կարա լավացնի, ու ղորդ որ լավացրեց։ Թաքավորը ուզում էր իրա աղջիկը տա նրան, համա չուզեց, չունքի ինքը կնիկ ուներ, համա շատ լիրբ ու անզգամ։

Նա տենում էր Լողմա հեքիմը ամեն բան իմանում ա, մի խոսքով իմաստուն ա, հարցնում էր նրան, թե ինչիցն ա, որ նա էդքան խելոք ա ու իմաստուն, համա նա չէր ասում, չունքի որ ասեր, ինքը կմեռներ։

Լողմա հեքիմը ուզեց, որ էնթավուր ղանջղ կնկանից պրծնի ու խաբեց, որ ֆոր ա քթել, լիքը ոսկի ու էրծաթ ու ասեց, որ էթան բերեն։ Ինքն ու իրա կնիկը գնացին հասան ֆորին։

Մարդը ասեց.— Ես կախ ըլնեմ ու հանեմ էրծաթ, ոսկին։

Կնիկը ասեց.— Ինչո՞ւ, հազր ես կախ ըլնեմ, դու ուզում ես էթաս լավերը վեր կալնես ու ինձ փսերը մնա՞, էդ քու բանը չի։

Ինքը կախ էլավ պարանով. ճամփի կիսին մարդը պարանը կտրեց, քցեց մեջը ու մի մենձ քար դրեց բերնին, գնաց։

Էդ ֆորում դևեր կային։ Էդ ղանջղ կնիկը էնքան ձեն տվեց ու ճղավեց, որ դևերն էլ նրանից վախենում էին ու ուզում էին դուս գա, համա չէր ըլնի, քարը դրած էր բերնին։

Մի վախտ Լողմա հեքիմը գնաց տենա, թե ինչ ա էլե իրա կնիկը։ Քարը վե կալավ թե չէ, դևերը դուս էկան ու աղաչանք արին, որ էն ղանջղ կնկանից ազատի։ Նա ասեց, որ իրա կնիկն ա ու ինքն ա բերել քցել էդ ֆորը, որ պրծնի ձեռից։

Դևերից մինը ասեց.— Բաս որ դու ինձ լավություն արիր իմ ընկերների հետ պրծացրիր էն ղանջղի ձեռից, ես էլ ուզում եմ քեզ

www.naregatsi.org

լավություն անեմ։ Ես կէթամ ու ֆլան թաքավորի տղի մեջը կմտնեմ ու երբ որ դու գաս, ես դուս կգամ. նրանից դենը կէթամ ուրիշ թաքավորի մոտ, համա դու չգաս ինձ հանելու, թե չէ նրանից դուս կգամ ու քեզ կմտնեմ. նա կպրծնի, դու չես պրծնի։

Դևը գնաց մտավ էն թաքավորի տղի մեջ։ Նա գնաց ասեց, որ ինքը կհանի, չունքի ինչ հեքիմ բերին չկարաց լավացնի նրան։ Լողմա հեքիմը գնաց նրա մոտ թե չէ, դևը դուս էկավ ու գնաց ուրիշ թաքավորի տղի մեջ մտավ։ Թաքավորն էլ լսել էր, որ Լողմա հեքիմը կարա լավացնի, կանչեց. համա նա չէկավ։ Չունքի շատ աղաչանք արին, վեր կացավ գնաց ու դևին ասեց.— Թե ճար ունես՝ տես, կնիկս հրես գալիս ա։

Դևը ասեց.— Բաս որդի՞ մտնեմ։

Նա ասեց.— Արի էս պարկի մեջ մտի։

Նա էլ մտավ թե չէ, տարավ թունդիրը քցեց ու էրեց. էսպեսով թաքավորի տղեն պրծավ դևից։ Թաքավորը իրա աղջիկը տվեց նրան։

www.naregatsi.org

33. ՋԻՆՆԻ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չըլնի մի թաքավոր։ Էս թաքավորը իրեք տղա ուներ, իրեքին էլ դեռ հլա չէր պսակել։ Մի անգամ էս իրեք աղբրտինքը գնացին ման գալու. տեհան, որ իրեք քվերտանք, որ գնացել էին ջուր բերելու, նստել են ու իրար գովում։

Նրանցից մինը ասում էր.— Ես որ մարդի էթամ էն թավուր լավ-լավ հացեր պտի թխեմ, որ բոլորի խելքը էթա իմ թխած հացերի վրա։

Մեկելը թե.— Որ ես մարդի էթամ, լավ-լավ խալիչեք պտի գործեմ։

Համա վրա երրորդ աղջիկը, որ ամենքից պուճուրն էր, ասեց.— Ես որ մարդի էթամ պտի էն թավուր տղա բերեմ, որ ճկութը ոսկի ըլնի ու էն թավուր աղջիկ, որ մազերը ոսկի ըլնի։

Թաքավորի տղերքը էս քվորտանց խոսքերը լսեցին ու նրանցից մինը ասեց.

— Ես, աշխեր, էն աղջիկն եմ ուզում, որ լավ հաց ա թխում։

Մեկելը թե.— Ես էն աղջիկն եմ ուզում, որ լավ խալիչա ա գործում։

Համա վերջի աղբերը, որ ամենքից պուճուրն էր, ասեց.

— Աղբեր, ես ոչ մեկին չեմ ուզում, սավայի նրանից, որ ոսկե ճկութ ու ոսկե մազերավոր բալեք բերի ինձ համար։

www.naregatsi.org

էս ասեցին ու ամեն մարդ իրա ուզած աղջիկը վե կալավ տարավ։ Էկան իրանց հորը ասեցին, որ իրանց սրտների ուզածը էս աղջկերքն են ու ավելացրին, որ ոնց որ ըլնի պիտի պսակվեն։ Թաքավորը ուզեց, որ իրանց ուզած աղջերկանց վրա չպսակվեն. ուզում էր նրանց թաքավորների աղջկերանց վրա պսակեր, համա չունքի մի անդամ նրանք սիրել էին նրանց, էլ իրանց խոսքից ետ չկանգնեցին ու պսակվեցին իրանց սրտի ուզած աղջկերանց վրա։

Մի քանի վախտ անց կացավ. էն էրկու աղջկերքը իրանց ասածը չկարացին անի, համա ամենքից պուճուր աղջիկը արեց։ Անց կացավ իննը, տաս ամիս, նրա մարդը ուրիշ երկիր գնաց. կնիկը պառկեց ու բերեց մի տղա՝ ճկութը ոսկի ու մի աղջիկ՝ մազերը ոսկի։

Էս իրեք քվերտանք իրանց մարդկերանց հետ մի տեղ էին մնում։ Էս որ տեհան էն մեկել էրկու քվերտինքը, ամաչեցին ու, չունքի նա դեռ խելքի չէր էկել, էն էրկու նախշուն բալեքանց վե կալան ու նրանց տեղը դրին էրկու շան բալեք։ Խեղճ աղջիկը, որ խելքի էկավ, տեհավ, որ էրկու շան բալեք. ասսուն փառք տվեց ու ինքն իրան ասեց. «Ասսու կամքն ա, սրանով էլ պտի նրանից շնորհակալ լինեմ»։

Սրա մարդը, որ էնտեղ չէր ու գնացել էր ուրիշ երկիր, իրա աղբրտանցից նամակ ստացավ, որի մեջ ասվում էր, թե. «Քու կնիկը էրկու շան թուլա ա բերե, ի՞նչ անենք, պահե՞նք մինչև դու գաս, թե դեն գցենք»։ Նա որ կարդաց թե չէ, գրեց, որ թուլեքը դեն գցեն ու նրան գոմշի կաշվի տակի մեջ դնեն ու քցեն մեյդան, մի թակ դնեն նրա կշտին ու ամենքին հրամայեն, ով որ անց կենա, նրա վրա թքի ու էն թակով նրա գլխին մի դրրբ տա։ Ոնց որ նա գրել էր՝ էնպես էլ արին նրա աղբրտինքը. ով որ անց էր կենում նրա վրա թքում ու թակով տալիս էր նրա գլխին, հետո անց կենում։ Մարդ ա, պատահում էր, որ ըլնում էին էն թավուր մարդիկ, որ նրա վրա խղճում էին ու չէին խփում՝ պատժվում էին։ Իսկ էն անջիդյար քվորտինքը էն էրկու աղիզ բալեքանցը, դրին մի կտոր շաքար նրանց բերանը, դրին մի ղութկի մեջ, դուռը փեչատեցին ու քցեցին ծովը։ Գնաց, գնաց էս-ղութիկը ու մի ձուկ բռնող տեհավ ջրի երեսին, մտավ հանեց ղութիկը, ուրախ-ուրախ բաց արեց ու տեհավ, որ էրկու նաշխուն, աննման էրեխեք։

www.naregatsi.org

Ինքն իրան ուրախացած ասեց.— Հազիր ես էրեխա չունեի, աստած ինձ էրեխա տվեց՝ կտանեմ ու ինձ համար կմենձացնեմ։

Վերցրեց ու տարավ տուն. տանը նրա կնիկը մենձացնում էր։ Մի քանի տարուց հետո նա մենձացավ ու էլավ տասչորս-տասնհինգ տարեկան տղա։ Միշտ էթում էր դուս, իրա թայդաշ տղերքանց հետ խաղ անում։ Համա նրա թայդաշ տղերքը նրան ամընչացնում էին ասելով, որ նա հեր ու մեր չի ունեցել, եթիմ ա էլե ու ձկնապանը նրանց պահում ա։

Էս ջահել էրեխանց մատաղ սրտներին դիպավ էդ խոսքը, թե եթիմ են իրանք. էն սհաթը գնացին իրանց խորթ հորն ու մոր մոտ ու ասեցին.

— Ջունքի մեզ ասում են, որ մենք եթիմ ենք ու մեզ ջրից դուք եք հանե, պահե, մենձացրե՝ էթում ենք. շնորհակալ ենք ինչքան մեզ պահեցիք, մենք կէթանք մեր հալալ հորն ու մոր մոտ։ Աստծ, ձեր էս լավության համար, որ արիք մեզ, նրա տեղակը տա. մեզ թողեք էթանք։

Մարդ ու կնիկ ասեցին, որ չէթան, համա քիր ու աղբեր չլսեցին ու ճամփա ընկան։ Անց կացան ծովը ու մեկել ղրաղին մի տուն շինեցին, որ տենողի խելքը կէթար նրա վրա, էնքան լավ էր շինած։ Աստծու հրամանով էլ աշխարհում ի՛նչ ջանավար որ կար, էկավ ու նրա տունը պահեց՝ էլ արջեր, էլ գելեր, էլ աղվեսներ, էլ ֆլեր, մի խոսքով՝ ի՛նչ ջանավար որ կար աշխարքի էրեսին։ Ո՞վ կարար նրա տունը մտնի, երբ որ արջը իրա թաթերը բանձրացրած դռան շեմքին նստել էր, գալողի գլխին էն թավուր կրամփեր, որ աչքի լիսը բուրը կընկներ։

Ամեն օր աղբերը էթում էր ավղուշ, համա նրա քիրը մնում էր տանը ու յա կար անում, յա իրա ազիզ աղբոր շորերը լվանում, յա թե չէ իրանց համար կիրակուր էր հազիր անում, որ իրիկունը գար իրա աղբերը ու հաց ուտեին քիր ու աղբեր։

Մի անգամ էլ, տղեն գնաց ավղուշ։ Իրա հետ տարավ աղվեսին, որ նրա նոքարն էր ու ամեն տեղ նրա հետ էր։ Նա ռաստ էկավ մի թաքավորի, որ իրա մարդկերանց հետ էկել էր ավի։

Էս մեր ղոչաղը նրան գլուխ չտվեց, թաքավորը բարկացած ասեց.

— Դու ո՞վ ես, որ ինձ գլուխ չես վե բերում, ես թաքավոր եմ, դո՞ւ ինչ ես։

www.naregatsi.org

Կռիվ արին թաքավորի մարդիկը էն տղի հետ. նրանք մի քանի հազար կըլնեին, իսկ նա մենակ։ Աղվեսը էն սհաթին գնաց ու ինչքան ջանավար կար տանը իմաց արեց՝ էկան ջարդեցին թաքավորին էլ ու նրա անհամբարք ղոշնին էլ։

Իրիկունը տղեն տուն էկավ ու իրա քվորը ասեց, թե ինչ կռիվ պատահեց իրան։

Քիրը ասեց.— Ինչո՞ւ ինձ չկանչեցիր. աստոծ մի արասցի քեզ մի բան ըլներ, էն վախտը ես ի՞նչ պտի անեի. սրանից դեն ո՛ւր որ էթաս, ես էլ պտի գամ հետևիցդ, չունքի ես քեզ սաղ աշխարհի հետ չեմ փոխի. դու ինձ համար ավելի արժես, քան թե մի խազինա ոսկի, իմ գլուխը քեզ պես աղիզ աղբորը ղուրբան։

Մեկել օրը, հենց որ աղբերը գնաց ավղուշ, քիրն էլ նրա հետ գնաց։ Մինչև իրիկուն իրար հետ ավ արին ու նա տուն էկավ, որ կիրակուր հազիր անի, տղեն մնաց էնտեղ։ Սրան մի թաքավոր ռաստ էկավ. էս իրա հերն էր։ Իրար բարև տվին, էս թաքավորը նրան ասեց, որ դա իրան ղոնաղ, համա նա ասեց, որ.

— Մինչև ես չէթամ իմ քվորը հարցնեմ՝ չեմ գա։ Դու գնա՛, ես իմ քվորը կհարցնեմ ու հետո կգամ։

Իրիկունը տղեն էկավ տուն ու մին-մին ասեց, ինչ որ էլավ մեշումը։ Մի անգամ էլ նա գնաց ծովից մանդր ձկներ բռնեց թոռով ու բերեց տվեց քվորը, որ տապակի։

Քիրը նրան ասեց.— Աղբե՛ր, դրանք դեռ հլա պուճուր են, տար բաց թող, չէ որ դրանց մերը կմղկտա, ոնց որ քեզ ինձանից խլեն՝ ես կմղկտամ, չէ որ նրանց ջիգյարն էլ մեզ նման ջիգյար ա։

Աղբերը սուս ու փուս տարավ քցեց ծովը։ Ձկների թաքավորը էս որ տեհավ, զարմացավ նրա բարեսրտության վրա ու դուս էկավ տղին ասեց.

— Էսքան հազարավոր մարդիկ ծովից ձուկ են բռնում ու չեն խնայում, համա դու մեղք էկար ինձ վրա ու էն պուճուր ձկներին էլիեստ ծովը քցեցիր. արի էսօր ինձ մուտ ղոնաղ, ես ձկների թաքավորն եմ։

Տղեն ձկանց թաքավորի մեջքին նստեց ու ծովի վրովը գնաց։ Ձկների թաքավորը տարավ, և հանկարծ մի մենձ դարբաս բացվեց ու ներս մտան։ Ջրի տակը էս ձկների թաքավորի պալատն էր. սրան ասում էին Ջիննի թաքավոր։

www.naregatsi.org

Թաքավորը ասեց նրան.— Ուզի՛ր, ինչ որ կամենում ես՝ քեզ կտամ։

Տղեն, շունքի իրա իմաստուն քիրը սովրցրել էր, ուզեց նրա աղջիկը։

Թաքավորը ուրախությամբ տվեց նրան։ Հետո ուզեց նրա մատանիքը, որ նրանով ինչ ուզենար կաներ։ Հետո ասեց, որ իրա լեզուն իրա բերնումը պտտի։ Ջիննի թաքավորը պտտեց, ու նա էն թավուր իմաստուն էլավ, որ ծովի ձկները ինչ որ խոսում էին՝ նա իմանում էր։ Մի խոսքով, թե քար, թե փետ, ինչ որ խոսում էին իրար հետ՝ նա իմանում էր։ Թաքավորը իրա աղջիկը պսակեց նրա վրա, համա ասեց, որ ջրի վրով նրան ման չածի, թե չէ էլի կփախչի։ Թաքավորը ջխտին էլ ճամփու քցեց ու նրանք գնացին։ Տղեն տարավ աղջկանը իրա քվոր մոտ, նա շատ սիրեց նրան ու լավ մտիկ էր անում։

Էս պուճուր աղջկա մեկել էրկու քվերտինքը իմացան, որ էն էրկու էրեխեքը, որ իրանք ծովն էին քցել, դուս են էկել ու իրանց համար ծովի ղրաղին տուն են շինել։ Վախեցան, չըլնի թե բանը իմացվի. մի թլիսմ անող պառավի շատ փող խոստացան, թե որ նա կարենա էն քիր ու աղբորտանց վնաս տա։ Էն պառավը աղքատի շորեր հագած գնաց նրանց տունը։ Նրանք սիրով ընդունեցին ու նրանց տանը բան էր անում՝ շորերն էր լվանում, մախլաս, ինչ որ ձեռիցը գալիս էր՝ անում էր։

Մի օր նա ասեց տղին.— Ձեզ ամեն բան թամամ ա, համա մի բան պակաս ա. էնա մի փարի, որ էթաս բերես նրան էլ, ամեն բան կունենաս,— հալբաթ որ էն քավթառի միտքն էր, որ նա էթա ու էլ չկարենա ետ գա։

Տղեն վե կացավ, որ էթա, համա նրա քիրն ու կնիկը չթողին։ Նրա կնիկը ասում էր, որ ինքը փարուց սիրուն ա, էլ էթում ա ի՞նչ անի։ Տղեն չլսեց ու ձին նստեց, թուր-թվանքը կախ արեց ու ձիով գնաց։ Գնաց, գնաց, շատն ու քիչը աստոծ գիտա, տեհավ, որ ճամփի վրա մի ծեր մարդ նստել ա ու մի մենձ կծիկ թել ետ ա տալի մեկելի վրա ու վախտ-վախտ ծանդր ու թեթև ա անում։ Հարցրեց, թե ի՞նչ ա անում։

Ծերը ասեց.— Ես դրած եմ էստեղ, որ սաղ աշխարքը կշռեմ. որտեղ որ պակաս ա՝ ավելացնեմ, ավելը՝ պակասցնեմ. էս էրկու կծիկով եմ կշռում սաղ աշխարքը։

www.naregatsi.org

էս ծերը հարցրեց, թե նա ո՞ւր ա էթում։ Նա ասեց, որ էթում ա փարըքանց մոտ։ Ծերը ասեց, որ մեղք ա՝ չէթա, չունքի ով գնացել ա էդ ճամփով, էլ ետ չի էկել։ Համա նա ասեց, որ ոնց որ ըլնի պտի էթա բերի։

Ծեր բարին տեհավ, որ չի ըլնում, իրա բռնած ճամփից ետ չի թում ասեց.

— Կէթաս ֆլան ծովը, էնտեղ սաղ փարիք են ու լողանում են։ Կէթաս նրանցից մեկի շորը կփախցնես։ Հետևիցդ քար ձեն կտա՝ «տարա՜ն», քոլ ձեն կտա «տարա՜ն», համա դու ըսկի ետ թամաշ չանես, ու փախի գնա։ Փարին հետևիցդ կընկնի, որ բռնի. մարդ ա կըլնի որ հասնի, դու չխաբվես. նա քեզ կտանի մի հավուզ ու սուտ լողացնելը կդնի, վրեդ ջուր կածի ու դու կըլնես քար. մուղայիթ կաց՝ նրան չլսես, թե չէ բանդ բուրդ ա, ջահել-ջիվան ջանդ նրան ղուրբան կըլնի։

Ծերը իրա խոսքը հենց որ պրծավ թե չէ, տղեն ձին քշեց դպա փարիքը։ Նրանք իրանց շորերը հանել ու ծովում լողանում էին։ Նրանցից մնի շորերը փախցրեց։ Փարին էն սհաթին դուս էլավ ջրից ու ընկավ նրա ետևից։ Տղի քամակից քար ձեն էր տալի՝ «տարա՜ն», քոլ ձեն էր տալի՝ «տարա՜ն», համա տղեն կրակի նման էր էթում, որ փարին չհասնի։ Համա փարին էկավ հասավ նրան ու խաբեց տարավ էն հավուզը, ասեց, որ շորերը հանի, որ նրա վրեն ջուր ածի, որ լողանա, հետո նա իրա վրա կածի։ Խեղճ տղեն խաբվեց ու լսեց նրան. նրա վրա հենց որ ջուր ածեց՝ տեղն ու տեղը քար էլավ ու մնաց։ Փարին էն տղի թուրը-թվանքը ու ինչ ասպար էլ որ ուներ, կապեց ձիու վրա ու նրա էկած ճամփովը ղրկեց։ Ձին էկավ պառավ մարդի մոտով անց կացավ. նա իմացավ, որ քար ա էլե։ Ձին դուզ գնաց իրանց տունը։ Նրա քիրը որ տեհավ, լեղին պատռվեց. էն սհաթին ձին նստեց, թուր-թվանքը կախ արեց ու գնաց իրա աղբոր հավարին։ Էն պառավ մարդին ռաստ էկավ, հարցրեց, թե չի՞ տեհել մի ջահել տղի։ Նա ասեց, որ ղորդ ա, տեհել ա, էկավ անց կացավ ու փարիքանց ձեռքով նա քար ա էլել հիմա։ Ինչ որ էն տղին էր ասել, էն էլ էս աղջկան ասեց, որ իրան մուղայիթ կենա ու չլսի նրան. էնքան տա փարուն, որ նա իրա աղբոր վրա էլի ջուր ածի ու սաղացնի. նա դրա համար ուրիշ ջուր ունի։

Ղոչաղ աղջիկը իրա աղբոր սիրով էրված, ձին քշեց ու հասավ

www.naregatsi.org

փարրքանց լողանալու տեղին։ Նրանցից մեկի շորերը փախցրեց։ Ամեն դհից ձեն տվին, որ «տարա՞ն», նա չլսեց ու քշեց ձին։ Փարին, որ նրա ետևից էր ընկել, հասավ նրան. էլի էն տղի նման ուզեց խաբել ու ասեց, որ էթանք հավուզում լողանանք։ Համա աղջիկը էնքան տվեց նրան, որ նա ներողություն ուզեց ու խոստացավ տա նրա աղբորը։ Իրար հետ գնացին էն հավուզը ու աղջիկը ջուր ածել տվեց իրա քարացած աղբոր վրա։ Լավացավ, էլավ առաջվա տղեն։ Էլ ինչքան քարացած մարդիկ կային, բոլորի վրա էլ ջուր ածել տվեց՝ նրանք էլ սաղացան։ Փարուն քիր ու աղբեր վե կալան ու բերին տուն։

Մի քանի վախտ անց կացավ սրանից հետո։ Մի անգամ էն տղեն Ջիննի թաքավորի աղջկա հետ գնաց ծովի վրա գյամով ման գալու. էն աղջիկը փախավ՝ մտավ ծովը, էլ չկարաց բռնի նրան։ Վե կացավ օխտը հոգով գնաց, որ հետ բերի նրան։ Գյամով ծովի վրովը անց էր կենում, մի ձուկ դուս էկավ ու ասեց նրան.— Ջիննի թաքավորի աղջիկը փախավ Կապուտ սարը, էղտեղ շինած ա իրա համար ամարաթներ։— Նա շունքի ձկների լեզուն իմանում էր, իմացավ աղջկա տեղը։ Էս գշեր էս օխտը հոգին պտի ծովի վրա անց կացնեին։ Գշերվա մի վախտ նա զարթնեց ու տեհավ, որ իրա ընկերներից էրկուսը պակաս են։ Քնեց ու մեկ էլ վեր կացավ, տեհավ որ էրկուան էլ պակսեցին։ Նա թաքուն ղարավուլ քաշեց ու տեհավ, որ մի ձեռք մեկնվեց, ուզում էր էլի իրա ընկերներից քաշի. համա նա թրով տվեց ու էդ դևին սպանեց։ Հետո առավոտը նրանք դուս էկան ցամաք։ Էստեղ դևերը նրանց վրա տվին՝ քառասուն հատ։ Սրանք էն դևի ընկերներն էին, որ էն տղեն սպանեց ծովի վրա։ Քառասուն դյուրզ մի դրրբ էին քցում, նա մենակ ի՛նչ պտի աներ։ Նա մի թղթի վրա գրեց ու կապեց ծիծեռնակի ոտից, թռցրեց։ Աստծու հրամանով ծիծեռնակը գնաց ու նրա քվոր տանը վեր էկավ։ Քիրը կարդաց թե չէ, էն սհաթին իրա աղբոր հավարին հասավ, ջարդեց դևերին ու ազատեց աղբորը։ Տղեն քվորը էլիետ տուն ղրկեց ու ինքը գնաց առաջ։ Մի տեղ նա վեր էկավ, որ հաց ուտի, համա կրակ չուներ, որ կիրակուր էփեր։ Նա գնաց, տեհավ որ քառասուն դև նստել են ու կրակ արել. մի բուռը կրակ վե կալավ ու անխոս ետ էկավ։ Էդ կրակը դեն ածեց ու մին էլ գնաց բերեց՝ առանց նրանց հարցնելու։ Էս անգամ էլ դեն ածեց կրակը ու գնաց, որ թազա բերի կրակ։

www.naregatsi.org

էս անգամ դևերը ասեցին նրան.— Առաջին անգամ մենք չխոստացինք աստծու խաթեր, երկրորդ անգամ քու ջահելության խաթեր, էս անգամ ո՞ւմ խաթեր թողնենք։

Էս դևերը քառասուն անծին էրինջ ածել էին մի մենձ պղնձի մեջ, դրև կրակի վրա ու էփում էին։

Դևերը ասեցին.— Թե որ կարացիր էս մենձ պղինձը կրակի վրիցը վեր կալնի ու էլի ետ դնի, հո մենք քո պուճուրը, դու մեր մենձը, հո թե չկարացիր, պտի կուվես մեզ հետ։

Նա էն մեծ պղինձը մի էրկու-իրեք անգամ վերցրեց ու վեր դրեց։ Դևերը մնացին զարմացած ու ասեցին նրան.

— Դու մեր մենձը, մենք քու պստիկը։

Դևերը նրան տվին մի մենձ գոմշի տիկ, որ նա էթա խմելու ջուր բերի, թե ղոչաղ ա։ Նա գնաց փքեց, բերանը կապեց ու բերեց տուն։ Նրանք շատ զարմացան, հետո նրան ասեցին.

— Թե ղոչաղ ես, էսքան ջուրը մենակ մի դըրբում խմի։

Նա դրեց բերանը ու փուքը թողեց։ Նրանք հենց իմացան, թե սաղ խմեց ու ասեցին.

— Էդքան ջուրը մենք էրկու շաբթում անջախ էինք պրծացնում, դու ո՞նց խմեցիր։

Էդ դևերը էս տղին տարան իրանց տուն. մի դև նրան փչեց, տղեն կպավ օջորքիցը, չունքի դևի հուրքը էնթավուր զորություն ունի, որ ինչ որ ըլնի, դեն կքցի։

Դևերը նրան հարցրին, թե ի՞նչ ա անում։ Նա ասեց, որ ուզում ա տան գերանները հանի ու բերի նրանց փորը կոխի։ Դևերը վախենում են ու փախչում։ Տղեն էթում ա հասնում Կապուտ սարը։ Ջիննի աղջիկը էնտեղ էր. ինքը դուս էկավ ու նրա ոտները ընկավ, որ ների ու չսպանի. ինքը արեց, նա չանի ու խոստացավ, որ էլ չի փախչի։ Էկան հասան իրանց տուն։

Էդ վախտերքը էն թաքավորը, որին նա առաջվա վախտ ռաստ էր էկել, էկավ նրա մոտ, որ գա տանի ղոնախ։ Ջիննի թաքավորի աղջիկը, չունքի իմաստուն էր, նրան ասեց, որ դա իրա հերն ա ու. «էն կնիկը, որ մեյդանի առաջ նստած ա ու բոլորն էլ նրա վրա թքում են՝ դու նրա վրա չես թքի։ Կտանես մի փունջ վարդ կդնես առաջը ու մի չարսավ նրա վրա կքցես ու կասես թաքավորին.— Թե որ ղաթրին ծին կա, հո մարդն էլ շան թուլեք կարա բերի. էս իմ մերն ա ու դու իմ հերը»։

www.naregatsi.org

Թաքավորը զարմացավ ու հրամայեց էն մեկել քվոլտանցը սպանել. հետո իրար հետ գնացին ծովի ղրաղից նրա քվորն էլ բերին ու Ջիննի թաքավորի աղջկանը։ Նրանք էնքան ուրախացան, հենց իմանաս մի տոպրակ ոսկի էին գտել։

www.naregatsi.org

34. ՅՈԹՆ ԱՂՋԻԿՆԵՐ[1]

Ընում ա չի ընում մի մարդ, մի կնիկ։ Դրանք էլ ունենում են օխտը աղջիկ։

Մեկ օր էդ կնիկը մարդին ասում ա.— Ա՛յ մարդ, մի ճար արա էս աղջկերքը կորցնելու համար։

Մարդը ասում ա.— Ինչ ճար անեմ։

Կնիկն ասում ա.— Թխի օխտը հատ աղի բոքոն ու վե կալ դրանց տար մի սարի գլուխ. ընտեղ դրանք կսովածանան ու հաց կուզեն, դու էդ բոքոնները տուր դրանց ուտեն։ Երբ կուտեն կկըշտանան, ախար չէ՞ որ աղի ա, կծարավեն ու ջուր կուզեն։ Էն վախտը դու ասա ըստեղ կացեք՝ ես գնամ ձեզ համար ջուր բերեմ։ Եվ որ կհեռանաս, թող ու փախի տուն, նրանք ընտեղ սոված կըմնան ու կմեռնեն։

Մարդը ասում ա՝ լավ, ու բոքոն ա թխում, վեր ա ունում օխտը աղջկանը ու գնում սարը։ Եվ որ սովածանում են ու հաց են ուզում, հերը աղի բոքոնները տալիս ա դրանց։ Ուտում են թե չէ՝ ծարավում են ու ջուր են ուզում։ Հերը գնում ա ջուր բերելու ու ետ չի դառնում։

---

1 Վերնագրից ներքև փակագծերի մեջ նշված է՝ Արարատյան դաշտում (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Էդ խեղճ աղջկերքը, որ տենում են հերը չէկավ, վիճակ են գցում իրար մեջ, թե ում վրա ընկնի՝ նրան մորթեն ուտեն, չունքի ծարավի հետ էն վախտը սոված էլ էին։ Վիճակ գցեցին և ընկավ պուճուր քվոր վրա։

Էդ խեղճը մեծ քվորը ասեց.— Գլուխս շատ ա քոր գալի, մի քութութ արա, ետով կմորթեք.— ու գլուխը դրեց մեծ քվոր ծնկան վրա։

Էդ վախտը մաններով[1] գետինը քշփորում էր, բիրդան տեսավ մի շամիշ, վեր կալավ էդ շամիշը տվեց մեծ քվորը և ինքը իր մանները լիզեց։ Մեկել քվերտինքն էլ ուզեցին։ Խեղճը էլի քշփորեց գետինը էլի մի քանի շամիշ գթնավ ու տվեց մեկել քվերտանցը։ Քանի շատ էր խորացնում գետինը՝ էնքան շատ էր շամիշ դուս գալի։

Վերջը մի բալանիք դուս էկավ ընտեղից, ետով մի դուռը բացվեց։ Էդ բալանքովը էդ դուռը բաց արին՝ տեսան հրես թաքավորի ձիանը ախոռումը կապած են՝ առաջներն էլ լիքը շամիշ ածած։

Էդ պուճուր աղջիկը ամեն օր գնում ա, գոքը շամիշ ա լըցնում, բերում ա տալիս քվորտանցը, որ ուտեն ու նրան չսպանեն։ Թաքավորի նոքարը տենում ա, որ ձիանը օր-օրի վրա լղարում են ու թաքավորին հայտնում ա։ Թաքավորը հրամայում ա մուղաթ կենան՝ գողին բռնեն։ Հենց որ մութը ընկնում ա՝ նոքարը տենում ա, որ մի աղջիկ մոտեցավ ձիու մարքին, դնում ա ու աղջկանը պինդ բռնում։

Եփոր հարցնում ա, թե՝ ո՞ւր ես տանում, աղջիկը ասում ա.— Տանում եմ քվորտանցս։

Թե՝ որտե՞ղ են։

— Դրսևը։

— Դե՛, էթանք նրանց էլ բերենք։

Ու բերում են թաքավորի մոտ։ Ամեն մեղքը քվերտինքը գցում են պուճուր քվոր վրա ու իրանք ազատվում։ Էն վախտը թաքավորը հարցնում ա էդ պուճուրին, թե ինչ հունար[2] ունես։

Նա ասում ա.— Ես էրկու հատ տղա կբերեմ, որ գլխներին ոսկի քաքուլ մազի փունջ ունենան։

Թաքավորը հրամայում ա դրան տանեն մի օթախում պահեն, ընչանք, որ էրեխեքը կբերի։

---

1 Մատներով (Ս. Բ.)։

2 Շնորհ (Ս. Բ.)։

23—2573

www.naregatsi.org

Անց ա կենում մի քանի օր. աղջիկը, զորթ որ, էրկու սիրուն ոսկե քաքուլավոր էրեխա ա բերում։ Համա մեկել քվերտինքը նախանձից գողանում են էդ էրեխեքը, դնում են մի զութու[1] մեջ ու գցում են գետը, որ կորչեն ու նրանց տեղը էրկու հատ շան թուլա են դնում։

Թաքավորը եփոր իմանում ա, հրամայում ա շան թուլեքը դեն քշեն, համա աղջկանը դնեն մի տոպրակի մեջ ու մենակ գլուխը դրսևը թողան[2] ու դնեն ճամփի մեջտեղը. ու հրամայում ա, որ գնացող-գալացող թքեն դրա էրեսին, իսկ ով չթքի՝ պատժին։

Մի պառավ կնիկ տեսնում ա, որ դետի էրեսին մի զութի կաղրիցը հանում ա, բաց ա անում, տեսնում, ըհը՛, երկու հատ ոսկի քաքուլով էրեխեք։ Էդ էն էրեխեքն են ըլնում։ Պառավը պահում ա դրանց ու մեծացնում ա։ Օրվա մեկ օրը էդ տղեքանցից մինը անց ա կենում՝ էն տոպրակի միջի կնկա մոտովը[3], թքելու տեղակ աղլուխը հանում ա ու նրա էրեսի թուքը սրփում։ Էս բանը հասնում ա թաքավորին։

Թաքավորը կանչիլ ա տալիս էդ տղին ու եփոր հարցնում ա, թե խի՞ չի կատարեց թաքավորի հրամանը, նա ասում ա.

— Թաքավորը ապրած կենա, ես ոնց իմ մոր էրեսին թքեի ու գլխի ոսկե քաքուլը շանց ա տալի[4]։ Էն վախտը թաքավորը հրամայեց կնկանը տոպրակիցը հանեն, լողացնեն ու խազինից շատ փող տան, որ ապրի։

Ընդուց դենը ընչաք մեռնիլները ապրեցին լավ ու բախտավոր։

Ասսանից երեք խնձոր վեր ընկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ էս տան տիրոջը։

---

1 Արկղ (Ս. Բ.):

2 Հաջորդում է՝ «չծածկեն, այլ բաց արած թողան» (Ս. Բ.):

3 Հաջորդում է բացատրությունը՝ իրա մերն ա (Ս. Բ.):

4 Հաջորդում է բացատրությունը՝ էն պառավը պատմել էր, որ էդ դրանց մերն ա (Ս. Բ.):

www.naregatsi.org

35. ԳԶՐԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ։ Մարդը գզրար կըլնի։ Մարդը օրեն մի օրը վեր ա կենում էթում ղարբութուն՝ աշխատանքի։ Կնիկը ասում իրա օրը քնատեղիցը որ վեր ա կենում, տեսնում ա գըլխատակը մի քիսա լիքը ոսկի։

Հարստանում ա, լավ-լավ օթախներ ա շինում, սուրուով ոշխար ա առնում, իլխի ա առնում։

Տասը տարի մարդը մնում ա, ենենա գալիս ա իրա հրկիրը։ Ճամփին, որ հասնում ա իրանց հանդերը, տեսնում ա ընդե մի սուրու ոշխար ա արածում, հարցնում ա.

— Էս ո՞ւմն ա։

— Գզրարի կնկանն ա,— ասում են։

Զարմանում ա, թե իրա կնիկը էս ե՞րբ հարստացավ։

Մի քիչ էլ գալիս ա, պատահում ա մի իլխու։

Հարցնում ա, ասում են.— Գզրարի կնկանն ա։

Էլի զարմանում ա, էսքան հարստութունը կնկանը էս որդիա՞ն ա։

Մի քիչ էլ գալիս ա, տեսնում ա տավարի, գոմշի նախիրը հրե ընդե արածում ա։

— Էս ո՞ւմն ա,— հարցնում ա Գզրարը մի գեղցու։

www.naregatsi.org

— Գզրարի կնկանն ա,— ասում ա էդ մարդը։

Էլի զարմանում ա, թե էս ի՞նչ բան ա՝ էսքան հարստությունը, մալն ու դոլվաթը ո՞րդիան ա իրա կնիկը ձեռք գցե։

Վեր ա կենում, գալի իրանց գեղը, իրանց տունը չի գտնում։ Սրան-նրան հարցնում ա, իրանց տունը շանց են տալի։

— Հրե՛ս,— ասում են,— էս ամարաթն ա Գզրարի տունը։

Էլի մնում ա զարմացած։ Էթում ա մննում իրանց տունը։ Կնիկը վեր ա կենում, փաթթվում մարդի ճտովը, ուրախանում, աշխարով մին ըլնում։ Մարդը դառը-տխուր էթում ա, ընդե նստում։ Եննա էթում ա մի տոպրակ բերում, իրա շաքը[1] վեր ա ունում, կնկանը լավ ծեծում, սալջարդ անում, գցում տոպրակի մեջը, շալակում ա տանում գեղիցը դուս մի մեշի միջի ծառիցը կախ անում։ Ինքը գալիս ա տուն։

Մի բեզրգյանի քարվան գալիս ա էդ ճամփովը անց կենում։ Ճենում են էդ տոպրակը։

Բեզրգյանը ասում ա իրա մարդկերանցը.

— Գնացեք բերեք, թե որ փող ըլնի՝ ձեզ ըլնի, թե որ կնիկ ըլնի՝ ինձ ըլնի։

Բերում են բաց անում, տեսնում մի կնիկ, ջարդած, ծեծած, մեջը գցած։

Կնկանը հեքմի ա գցում, լավացնում։ Կնկանն ասում ա.

— Դու իլ ինձ կնիկ, ես քեզ՝ մարդ։

Չի ուզում էդ կնիկը։

Կնիկը ասում ա.— Դու ինձ՝ աղբեր, ես քեզ՝ քիր։

Բեզրգյանը զարուլ չի ըլնում, բերում ա մի ղութիկ ա շինել տալիս, էդ կնկանը էլեստ դնում ա էդ ղութկի մեջը, ղութիկը մուշամբում ա, տանում գցում ծովը։ Ինքը քարվանի հեննա վեր ա կենում էթում իրա ճամփեն։

Էդ ղութիկն ա, էթում ա, էթում ա ջրի էրեսին, վերջը մի երկրի կշտի, ծովի ղրաղին դուս ա բերում։

Մի քյասիբ մարդ էդ ծովի ղրաղին շոր ու շոփ թոփ անելիս ա ըլնում, տեսնում ա էդ ղութիկը, ուրախ-ուրախ վեր ա ունում տանում իրանց տունը։

— Ա՛յ նանի,— ասում ա,— հրես փող եմ գտե։

---

1 Գզրարի շաքուչ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Էդ տղեն մենակ մի մեր ա ունենում։ Բաց են անում մեր ու տղա ղութիկը, տեսնում ի՞նչ՝ մի սիրուն, նաշխուն կնիկ միջին.

— Փա՜ռք քեզ աստոծ,— ասում ա տղեն,— զաթի ես քիր չունեի, էս կնիկը կըլնի ինձ քիր։

Ամեն հետ քնատեղից վե կենալիս, էդ կնկա գլխատակին էլի մի քիսա ոսկի ա ըլնում։ Դրանք հարստանում են. եքա մալ ու դովլաթի տեր դառնում։

Օրեն մի օրը էդ կնիկը ասում ա իրա տղին.

— Կէթաս թաքավորին իրա նազիր, վեզրով, պալատի մարդ-կերանցով կկանչես մեր կուշտը ղոնաղ։

Նա էլ էթում ա թաքավորին կանչում։

Թաքավորը զարմանում ա էդ իրանց էփած կերակրների վրեն, էդ պատրաստությունների վրեն։

— Էդ ո՞վ ա պատրաստե էս կերակուրները։

— Իմ քիրը,— ասում ա տղեն։

— Ինձ կո՞ւզի քիրդ,— հարցնում ա թաքավորը։

— Խի՞ չի ուզի,— ասում ա տղեն։

Բերում ա թաքավորի վրեն պսակում։

Թաքավորը վեց կնիկ ուներ։

Էդ կնիկն ասում ա.— Թաքավորն ապրած կենա, թե ուզում ես քու կնիկը ըլնեմ, հրամայիր, որ ինձ տանեն ծովի ղրաղը, լեղանամ, ենենա գամ դառնամ քո կնիկը։

Թաքավորն ասում ա լոտկաչուն, որ իրա վեց կնկա հեննա դրան էլ տանի ծովի ղրաղը, որ լեղանան։

Էդ կնիկը լոտկաչուն մի բուռը ոսկի ա տալի, ասում ա.

— Գյամին քշա, մեզ տար հանա ծովի էն էրեսը։

Սա էլ ըտենց անում ա։

Գալիս են դուս գալի ծովի ղրաղը։ Տեսնում են ըտե օխտը հարամի մեշի միջին նստել են, կրակ արե, հաց են ուտում։

— Մի՛ք վախենա,— ասում ա էդ Գզրարի կնիկը,— ես ինչ որ անեմ, դուք էլ ըտենց արեք։

Ամեն մինը էթում ա մի հարամու կշտի նստում ա, հաց ուտում։ Էդ օխտը հոգուն էլ էդ կնանիքը ընենց հարբացնում են, որ վեր են ընկնում ըտե քնում, ըսկի չեն իմանում։ Էդ օխտը կնիկը նրանց շորերը հագնում են, յարաղ-ասպաբ կապոտում, նիլնում նրանց ձիանիքը քշում։

www.naregatsi.org

էթում են էթում, մի ուրիշ թաքավորի երկիր։ Էդ երկրում թաքավորը մեռել էր, թաղա թաքավոր են ջոկելիս ըլնում։ Դրանք էլ էթում են թամաշա։ Ղուշ են բաց թողում, որ ում գլխին նստի՝ նրան ջոկեն թաքավոր։ Ղուշը իրեք հետ գալիս ա էդ Գզրարի կնկա գըլխին նստում ա։ Դրան ջոկում են թաքավոր։ Էն վեց կնկան էլ նա ջոկում ա նազիր, վեզիր։ Իրա պատկերքը քաշել ա տալի, տանում աղբրի կշտին պատիցը կպցնում, էրկու էլ ղարաուլ ա դնում, ասում ա. «Ով որ գա ջուր խմելու, էդ պատկերքը տեսնա ու ա՞խ քաշի, նրան կապեք, բերեք իմ կուշտը»։

Սրան թողանք ըստե, գնանք խաբար տանք Գզրարիցը։

Օրեն մի օրը էդ Գզրարը միտք ա անում, թե՝ էս ի՞նչ բան արի, առանց հարցնելու կնկանս սպանեցի, մի էթամ աշխարհ-աշխարհ ման գամ, բալի գտնեմ։

Վեր ա կենում գալի։ Գալիս ա էս թաքավորի գեղը, էթում ա էն աղբրի ջրիցը խմում ա, աղբրի ճակատին կպցրած կնկա պատկերը որ տեսնում ա, «ա՞խ» ա քաշում, ալբիալը դրան բռնում են, տանում թաքավորի կուշտը։

Սրա ենեուցը գալիս ա բեղրգյանը, ասում ա. «էթամ աշխարհ-աշխար ման գամ, բալի էդ կնկան գտնեմ»։

Գալիս ա էդ թաքավորի գեղը։ Աղբրիցը ջուր ա խմում «ա՞խ» քաշում։ Դրան էլ են բռնում, տանում թաքավորի կուշտը։

Ենենա գալիս ա էն թաքավորը, որի վեց կնիկը փախցրել էր։ Գեղացու շորեր ա հագնում, էթում։ Գալիս ա էդ թաքավորի գեղը։ Աղբրիցը ջուր ա խմում, «ա՞խ» քաշում։ Դրան էլ են բռնում տանում թաքավորի կուշտը։

Ենենա գալիս են էն օխտը հարամիքը, որ իրանց ձիանիքը գտնեն։ Գալիս են էդ թաքավորի գեղը։ Աղբրի ջրիցը խմում են «ա՞խ» քաշում։ Դրանց էլ են բռնում, տանում թաքավորի կուշտը։

Թաքավորը կանչում ա էդ օխտը հարամուն.

— Խի՞ իք ա՞խ քաշում,— հարցնում ա թաքավորը։

Նրանք ասում են իրանց գլխով անցկացածը։

— Ձեր շորերը, ձիանիքը որ շանց տամ կճանաչե՞ք,— հարցնում ա։

— Բա ի՞նչ կանենք,— ասում են գողերը։

Բերում ա նրանց շորերը շանց տալի, ճանաչում են։ Տալիս ա նրանց, ճամփու դնում։

www.naregatsi.org

Ննա կանչում ա էն թաքավորին, որի կնիկը փախցրել էր։

— Դու խի՞ իր ա՞խ քաշում,— հարցնում ա թաքավորը։

Նա էլ իրա գլխով անցկացածն ա նաղլ անում։

— Որ քու վեց կնիկը տամ, ձեռ կքաշե՞ս ինձանից։

— Հա՛,— ասում ա էդ թաքավորը։

Առնում ա էն վեց կնկանը, իրանց շորերը հագցնում, բերում։ Ալբիալը ճանաչում ա, իրա կնանոնցը վեր ա ունում, էթում։

Ննա կանչում ա էն բեզրգյանին.

— Դու խի՞ իր ա՞խ քաշում։

Նա էլ իրա գլխով անցկացածն ա նաղլ անում։

— Որ քու իրեք հարիր մանեթը տամ, ձեռ կքաշե՞ս ինձանից։

— Հա՛,— ասում ա բեզրգյանը։

Հանում ա նրա իրեք հարիր մանեթը նաղդ համբրում, տալի նրան։ Բեզրգյանը փողերը վեր ա ունում, էթում։

Ննա Գզրարին ա կանչում.

— Դո՞ւ խի իր ա՞խ քաշում։

Նա էլ իրա գլխով անցկացածն ա նաղլ անում։

— Որ քու կնկանը տեսնաս կճանաչե՞ս։

— Հա՛,— ասում ա Գզրարը։

Էթում ա կնկա շորեր ա հագնում, գալի ըտե կաննում։ Գզրարը տեսնալու բաշտան ճանաչում ա։

Մարդին շինում ա թաքավոր էդ երկրում, իրար հեննա ապրում են։

Աստծանից իրեք խնձոր վեր ընկավ[1] մինը ասողին, մինը անկաջ դնողին, մինն էլ ասիլ տվողին։

---

1 Գրառման ձեռագրում հեքիաթի վերջաբանը լրիվ չի տրված, հաջորդող արտահայտությունները լրացրել ենք՝ ընդօրինակելով նույն գրառման այլ հեքիաթների վերջաբանները (Ս. Կ.)։

www.naregatsi.org

36. ԹԱՓԱԳՅՈՋԻ[1] ՀԵՔԻԱԹԸ[2]

Կլնի չիլնի իրեք ախպեր, էրկու

— Դե՛, ախպեր, հլա նաղլ արա տենամ, թե խի՞ ես դու ըտենց զրռ սպիտակե։

Աբրհամը նաղլ ա անում, ասում ա.— Ախպեր ջան, ես, մին էլ մեր հարևանը վե կացանք գնացինք Հնդստան, սաքի աշխատանքի։ Գնացինք, գնացինք, շատն ու քիչը աստոծ գիտա, բեզարած, ջարդված հասանք մի խոր մեշի մեջտեղ, է՛ս դիհ մտիկ արինք, է՛ն դիհ մտիկ արինք, սաքի մի տեղ գտնենք մեզ ջանավարներիցը ազատելու համար։ Մին էլ հնդերս ասեց. «Ա՛յ, տես, էն դիհը հրե մի զաղա ա էրևում, արի էթանք տենանք»։

Գնացինք, գնացինք՝ ի՞նչ տենանք. մի թամուզ, կոկլիկ սըրբած, ղաշանք սարքած մի մենծ զաղա, էն դիհն էլ մի եքա բուխարի շինած դոդոալոն վառում ա՝ եքա-եքա քոթքները միջին. որ կրակը տեսանք՝ աշխարովը մին էլանք, թե էնա իսան կա էս չոլումը, մեզ էլ հնդեր կըլնի։ Նստեցինք դինջանանք ու աչքներս էլ ջուր կտրած մտիկ ենք անում, թե յարաբ ով պտի գա։ Մին էլ ը՛հը, ինչ տենանք, ոչխարի սուրուի տուտը պրծավ՝ էկա՞վ, էկա՞վ, էկա՞վ, էկա՞վ, ո՛չ տուտ կա, ո՛չ տակ. վերջը որ քոմմա էկան, մին էլ ի՛նչ տենանք, ախպե՛ր, հրես մի եքա ջանավարի նման մի մարդ եկավ ու եքա ջաղացի քարը գցեց դռան վրա. մի եքա չինարու ծառ քոքահան արած, ուսին դրած, դա էլ իսանի նման չէր՝ ճակատի մեջտեղը մի եքա աչք, որ չէկավ ու մի ձեռով էդ չինարին ջարդեց, լցրեց կրակի վրա՝ թուք ու մուքներս բերններումս չորացավ։ Էդ մի աչքանի ջանավարը, որ կրակը չթեժացավ, վեր կալավ պատրհանիցը մի եքա սոմի մի դուռում արեց ու կերավ, մեր թուքը-մուքը կպավ։ Մի քիչ[1] դինջացավ, վե կացավ էրկու ճղլանի շիշը վե կալավ հնգորս ոտներիցը անցկացրեց, բռնեց կրակին, խորովեց, մի դրպի կերավ, թե դուք իսան եք հասկացեք, թե ես ինչ պտի քաշած ըլնեմ։ Պառկեց քնեց։ Ես ասսու անումը տվի; վե կացա դողդողալով էն շիշը դրի կրակի մեջը, լավ տաքացավ, մինչև 22ի տաքանալը մի մենծ ոչխար մորթեցի, փոստը քաշեցի վրես ու վե կալա շիշը՝ խը՛ռթ, կոխեցի դրա էն եքա աչքի մեջը։ Դա որ չմռնչաց գոմշի ղայդա ու կատաղած է՛ս դիհ, է՛ն դիհն ընկավ, ես կաննածս տեղը մեռա, ահու։ Հերսիցը, որ տեսավ չի քթնում, վե կացավ ջաղացի քարը դռնիցը ետ քցեց ու լոք տվեց դռան առաջին՝

[1] Այս բառը ձեռագրում անընթեռնելի է, ենթադրաբար ենք դնում (Ս. Կ.)։

www.naregatsi.org

ոչխարներին մի-մին ոնների արանքովը թողաց անց կացան, ես էլ փոստը վրիս ուսուլով անցկացա, որ ձեռը քսեց՝ ես փոստը թողի ու փախա։ Դուս եկա, ո՞նց կփախնես, կաննեցի, մի ասսուն փառք տվի, ընկա ճամբա։ Գնացի, գնացի ու հասա մի մենծ քաղաքի, քաղա՞ք եմ ասում, որ տները, դուքանները տենայիք՝ խելքներդ կէթար, համա, որ միջին իսանորդի չկա՞։ Ըտեղ մի ամիս, էրկու ամիս մնացի, ինչ անեմ՝ սիրտս ճաքում էր մենակ՝ լեն, լի, բոլ, ամեն բան, համա որ հնգեր չունեի։ Մի կիրակի էլ ըտենց միտք անելով գնացի գյուլի ղրաղը ման գալու, մին էլ տեսա հրես մի տասը-տասնհինգ հուրի-մալաք աղջկերք հռհռալով, ծիծաղալով էկան թափեցին ջուրը շը՛փ-շը՛փ լեղցան, էլի գնացին։

Էգսի օրը քշերով վե կացա էդ գյուլի ղրաղին մի եքա փոս քանդեցի, մտա մեջը, էդ աղջկերքը, որ էկան լեղանալու, դուս գալու վախտը ձեռս գցեցի՝ մնի ոտիցը ղայիմ բռնեցի. քոմմա փախան, դա մնաց, էլ չթողի, տարա ամարաթներումը փակեցի, ասի. «Դու իմն ես, որ իմն ես»։ Դրա հիննա մի քանի տարի ապրեցինք՝ էրկու տղա ունեցանք։

Տղերքս որ մի չորս-հինգ տարեկան էլան, էդ կնիկս կպավ յախես թե. «Ախր, բա մենք մեղքը չենք, մինչև եփ մեզ փակես, չթողաս մի էրեխանցս թաթը բռնած էս ալվան բաղչեքումը ման գամ»։

Մարդ ի, իմ էլ սիրտը մղկտաց, թողի դրան երեխեքանց հեննա գնա ման գալու։ Էդ կնիկն ա, էրեխեքանց թևիցը բռնեց գնաց. գնաց՝ շը՛փ ընկավ էդ ծովը։

Բա ես չսիպտակեմ, ո՞վ սիպտակի, ախպեր ջան, համ էն թավուր հուրի-մալաք կնկանից զրկվեցի, համ էլ անուշ բալեքիցս։

Մի շաբաթ, էրկու շաբաթ դարդ արի, դարդ արի, տեսա որ ոչ կնիկս ա ձեռս ընկնում, ոչ տղերքս։ Էլ գլուխս հավաքեցի էդ երկրիցը փախա, գնացի, շատն ու քիչն աստած գիտա, հասա մի երկրի, էդ երկիրը շատ դիրս էկավ։ Միտք արի, թե ստեղ բնակվեմ մի վախտ։ Մնացի մի հարուստ մարդի կշտի, մի քանի շահի աշխատեցի, մի կնկա վրա պսակվեցի, իմ բաղդիցը էդ կնիկը մի տարուց ետը վեր ընկավ մեռավ։ Ըտրանց սովորութքն էլ, դու մի ասի[1], թե

---

1 Գրառման ձեռագրում այս արտահայտությունը պարզ չի ընթերցվում, ենթադրաբար ենք դնում և «դու» բառը լրացնում (Մ. Բ.)։

www.naregatsi.org

ասենց ա ըլնում. թե կնիկը մեռնի մարդին էլ հետն են տանում թաղում, թե մարդն ա մեռնում կնկանն են տանում թաղում։ Ինձ էլ, որ կնիկս մեռավ, քաշ տվին հետը, տարան թաղեցին, էհ, ի՞նչ կըլնի իմ հալը, սոված, ծարավ, գեննի տակին։ Մի էրկու շաբթից հետը մին էլ տեսա կողքիս փոս են քանդում, աշխարովը մին էլա, թե էնա մի մարդ էլ կգա մոտս, համա ձեզանից պահեմ, աստանից ինչ պահեմ, աղոթք ի անում, թե մեռնողը մարդ ըլնի, որ կնիկը սաղ ըլնի, բա չասես, հենց ըտենց էլ էլավ, բերին մի ջահել տղա, հետն էլ մի սիրուն, նաշխուն հարսը կողքին ղուրուրին պպզացրին, ֆողը վրա տվին։ Է՞հ, որ վերջի կարգը կատարեցին, գնացին՝ ուսուլով գնացի էդ հարսի կուշտը. թե՛ նա ուրախացավ, թե՛ ես։ Հետեղ մի քանի վախտ մնացինք։

Մի օր իրար հեննա նստած ինք, մին էլ տեսանք մի սև օձ ֆշշալով եկավ էդ կողքի փոսիցը գետինը ծակեց դուս էկավ. էդ օձի ծակովը, որ լիսը ընկավ՝ աշխարովը մին էլանք. մի թքա փոսը մենծացրինք ու մենք էլ ետևիցը դուս էկանք գնացինք դուզ ծովի ղրաղը՝ լոտկաչու հեննա բարշեցինք, նստեցինք, որ անց կենանք։ Դու մի ասի էդ լոտկաչու աչքը ընկնում ա կնկանս, ուզում ա լոտկեն շուռ տա։ Ծովի միջիցը մի ձեն ա գալի թե. «Դուզ տա՛ր, թե չէ քեզ տարպու-տարաղ կանեմ»։

Իրեք հետ ուզում ա շուռ տա, իրեք հետն էլ էդ ձենը լսում ա, ահու դուզ տանում, սաղ-սալամաթ տեղ ա հասցնում։

Եվ դուս եկանք շորը, գյամչին կպավ յախես, թե.

— Ֆողը տո՛ւր։

— Համի, ասսու սիրուն, չունեմ, թող էթամ աշխատեմ, բերեմ։

Գյամչին, թե.— Որ ըտենց ա, կնիկդ կպահեմ կշտիս մինչև ֆողը բերես՝ տանես։

Մին էլ էն դհիցը տեսա ինչ. էրկու սիրուն նաշխուն տղա ծովիցը դուս էկան ամեքը մի բուռը անգին քար տվեցին, թե. «Ա՛ռ, հայրիկ, գյամչու քրեհը տուր»։

Էլ գլխիս խե՞լք կմնա։ Դրի դրանց գոգս, մի կուշտ պաչեցի, էլի գնացին շրփալով ջուրը ընկան։

Դեհ, համի էս ա, ախպեր ջան, էսքան բալբալա քաշողը սև մազ կմնա՞ գլխին։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ՝ մինը ասողին, մինը՝ անկաջ դնողին, մինն էլ՝ ասիլ տվողին։

---

www.naregatsi.org

37. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԿԱ ՀԵՔԻԱԹԸ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թաքավոր, էդ թաքավորը ընենց մի զուլում ղոչաղ թաքավոր ա ըլնում, որ սաղ իրա մհալը ուռի պես դողում ա դրանից։

Օրենը մի օր էդ թաքավորը քեֆ ա սարքում, բոլ գինի են խմում. քեֆի մի վախտին թաքավորը տենում ա, գինին պակասում ա, կանչում ա իրա վեզրին, հրամայում ա թե.

— Թե՛զ, էս սհաթը գնա գինի բեր։

Էդ վեզիրն ա, վեր ա կենում, էթում ա գինու։ Թաքավորը սաբրն ա անում մի սհաթ, էրկու սհաթ, մախլասի ընչանք լիս, անջախ վեզիրը տուն ա գալիս, թաքավորը դոռում ա.

— Հը՛, ո՞նց ես, էս սհաթը քեզ քյալա անել տամ, էս սաղ քշերը ո՞ւր իր կորեն։

Վեզիրը ասում ա.— Թաքավորը ապրած կենա, որ դռնիցը դուս եկա, տեհա հրես մի աղքատ քուչում վեր ընկած ա, մեռած. ինչ անեի, ինչ չանեի՝ մեշկիս գոդիկը ետ արի շինեցի պատան, կապեցի, տարա թաղեցի. հենց նոր գերեզմաններիցն եմ գալիս։

Թաքավորը էդ որ լսում ա՝ գլխի որդերը իրար են գալիս, թե էդ ոնց բան ա, որ իրա երկրումը ըդենց ղոչաղ մարդ ա էլե, որ իրանից չի վախեցե, էկել ա իրա աղքատի ֆոգին առել ա. էն

www.naregatsi.org

սհաթը շորերը հագնում ա ասպասվորվում ա, քահլան ձին նըստում ընկնում ա իրա երկիրը. էս յան ա ման գալիս, էն յան ա ման գալիս՝ տենում ա հրեն էն դիհը մի ղարիպ մարդ ա էրևում. դուղ ձին քշում ա դրա դիհը.

— Հը՛,— հարցնում ա դրան,— դու ես համարձակվե էկե իմ երկիրը, աղքատի ֆոգին քուչումը առե, ա՜յ քու սենց, ընենցը. սկի սաձն իր պորտովը, ղուշն իր թևովը չի համարձակվում դալ իմ երկիրը, դու ո՞նց ես էկե, դե որ ըտենց ղոչաղ ես՝ արի իրար հեննա գյուլաշ կպնենք, տենանք էդ ո՞նց ղոչաղն ես։

Էն մարդը ասում ա.— Հա՛, ես եմ արե, թե ուզում ես հ՚արի կպնենք։

Դրանք կպնում են իրար. մի սհաթ, էրկու սհաթ, մի օր, էրկու օր, վերջը վրա իրեք օրումը էն մարդը ասում ա.

— Ես Գաբրել հրեշտակն եմ։

Ու բկիցը ղայիմ բռնում ա. կամանց-կամանց ուզում ա ֆոգին հանի։ Ֆոգին հասցնում ա մինչև ոտի բիլակները։

Թաքավորը ընկնում ա դրա ոտները.— Ամա՜ն, հրեշտակ ջա՛ն, մեղք արի, հլա ջահել-ջիվան եմ։

Հրեշտակն ասում ա.— Մի մարդի ֆոգի չտաս՝ քո ֆոգու տեղը, ես քեզ բաց չեմ թողա։

Թաքավորը ասում ա.— Մի պառավ հեր ունեմ, յավաշ կանչեմ գա, նա իրա ֆոգին իմ ֆոգու տեղը կտա։

Կանչում ա հորը, ասում ա.— Ա՛յ հեր, ես մեղք եմ. հլա ջահել եմ, արի քու ֆոգին տուր իմ ֆոգու տեղը, թող սա հեռանա։

Հերը ասում ա.— Ա՛յ որդի, ինչ անենք քեզ հեր եմ, համա հլա ապրել եմ ուզում։ Ես խի՞ եմ քու տեղը մեռնում, կյանքը ինձ համար շատ քաղցր ա, չեմ ուզում մեռնեմ, թե ուզում ա՝ թող քու ֆոգին տանի։

Թաքավորը հրեշտակին ասում ա.— Հերս ռազի չէլավ, համա մերս էն սհաթը ռազի կըլնի. նա հո չի թողա իրա ազիզ բալեն մեռնի, ինքը՝ պառավ կնիկ, սաղ մնա։

Էն սհաթը կանչիլ ա տալի իրա պառավ մորը, ասում ա.— Ա՜յ մեր, Գաբրել հրեշտակը էկել ա հոգիս առնում ա, հմի ասում ա. «Թե կուզես մի ուրիշ մարդի ֆոգի տու, ես էթամ». ինչ կըլնի, ա՜յ մեր, մեղք եմ, ջահել-ջիվան եմ, ինձ ազատա, արի դու իմ տեղակ մեռի, ա՛յ տես, ֆոգիս մինչև ծնկներս ա հանել։

www.naregatsi.org

— Է՜հ, ա՛յ որդի,— ասում ա մերը,— դրուատ ա դու մեռնես՝ ես լաց կըլնեմ, դարդ կանեմ, համա ես հլա ուզում եմ ապրեմ, տենամ էս աշխարքի վերջը ինչ ա ըլնում։

Խեղճ տղի սրտին դանակ տայիր, արին չէր կաթա, ճարը կտրած, որ էնա քիչ էր մնում, որ ֆոգին բերնովը դուս գա՝ կընկանը կանչիլ ա տալի։— Այ կնիկ,— ասում ա,— հրես Գաբրել հրեշտակը ուզում ա իմ ֆոգին առնի, դու չե՞ս գա իմ տեղակ մեռնի։

— Վա՜յ ֆողն իմ գլխին,— կնիկը ասում ա,— բա դու մեռնես, ես սաղ մնա՞մ. չէ՛, ախպեր, սաղ կյանքս քեզ եմ տվել, մնում ա մի ֆոգիս, ըն էլ առ քու ձեռովը, ինձ տար թաղա. լավն էն ա ես մեռնեմ, դու սաղ մնա։

Էս որ լսում ա՝ Գաբրել հրեշտակը մնում ա սառած. էն սհաթը աներևույթ ա ըլնում դրանց աչքիցը. դու մի ասի, էթում ա աստուն խաբար տա։ Էթում ա, աստուն պատմում ա իրա աչքով տեսածը, անգաջով լսածը։ Աստոծ էլ որ լսում ա՝ հրամայում ա Գաբրել հրեշտակին էրկսի կյանքն էլ իրանց բաշխի։

Անց ա կենում մի սհաթ, էրկու սհաթ՝ մարդ ու կնիկ մնում են սառած իրար էրեսի մտիկ անելով։ Մին էլ տեսնում են՝ հրես երկինքը սպիտակեց, մի թեավոր բան վեր էկավ։ Վեր ա գալի, իրանց կողքին կաննում ա, տեսնում են էն Գաբրել հրեշտակն ա. էնա խեղճ մարդի սիրտը դողն ընկնում ա, թե ոնց բան ա, խեղճ կնիկը իրա տեղակ պտի մեռնի, համա Գաբրել հրեշտակը ծիծաղում ա, ասում ա.

— Աստոծ ձեր էրկսի ֆոգին էլ ձեզ ա բաշխում, համա էլ ուրիշ անգամ չխառնվեք աստու հրամանի մեջ։

Հենց էն խոսքն են լսում, լսելու բաշտան հրեշտակը աներևույթ ա ըլնում։

Նոր թաքավորն ու թաքուհին էթում են պալատումը թաղդան քեֆ, ուրախություն սարքում, աղքատներին բոլ փող բաշխում, օխտն օր, օխտը գշեր ուտում են, խմում՝ քեֆ անում։

Նոր աստանից երեք կարմիր խնձոր ա ընկնում՝ մինը հեքիաթ ասողին, մինը՝ լսողին, մին էլ՝ սաղ արար աշխարին։

www.naregatsi.org

38. ՋԻԳՅԱՐՈՎ ՔԻՐ

Քիր ու աղբեր են ըլնում, ո՛նչ հեր են ունենում, ո՛նչ մեր։ Աղբոր անումը Սիմոն էր։ Սա մի դուքանդար էր, ձեռին էլ լավ առուտուր ուներ, լավ տուն ու տեղի, լավ մլքի տեր։ Սրա քիրն էլ էնքա՜մ սիրուն էր, էնքա՜մ սիրուն, որ նրա էրեսին ինչքամ մտիկ տայիր, չէիր կշտանա, մի խոսքով ալամ աշխարհը որ ման գայիր, դրա հատը աղջիկ չիր գտնի։

Սիմոնը ուզում էր էթա Ստամբոլ, ընտե դուքան դնի, դհա լավ աշխատանքի կպչի, ու որ ինչ ա քվոր կարոտը չքաշի՝ նրա պատկերքը հանել ա տալի, կշտին պահում, որ զարբությունում վախտ-վախտ նրա էրեսին մտիկ անի, սիրտը մխիթարի։ Քվոր կշտին թողում ա իրա հալատարիմ նոքարներին, թամբահ անում, որ նրան լավ մուղաթ կենան ու քվոր հետն էլ մնաս բարով անում, ընգնում ճամփա։

Ստամբոլ ա հասնում թե չէ, ընտե դուքան ա դնում, որ ինչ ա էն անճանանչ քաղաքումը շատ մուշտարի քթնի, կամաց-կամաց իրա ապրանքի գինը պակասացնում ա, ասենք՝ մի զատ խալխը էրկու մանեթով են ծախում, սա մի մանեթով ա տալի. բաս էլ ով էր գժվե, սրան թողած, ուրշից առուտուր աներ։

Աղաք Ստամբոլում սրան ըսկի մարդ չէր ճանաչում, համա

www.naregatsi.org

մի քանի վախտ որ կացավ սաղ Ստամբոլցիք սրա մուշտարին դառան ու համեշա հենց սրանից ին առուտուր անում։

Ըսենցով Սիմոնը Ստամբոլում շատ մենձ անում հանեց։ Ընչանք թաքավորի տղեն էլ նրա կուշտը դնալ-գալ ուներ, նրան էնքամ էր սիրում, ոնց որ հալալ աղբորը։

Մի հետ էլ թաքավորի տղեն գալիս ա Սիմոնի կուշտ. էն քշեր էլ հենց նրա տանը քնում։ Չեմ գիտում ոնց ա ըլնում, Սիմոնը էդ իրիկունը քվոր պատկերքը մտիցը քցում ա, թողում ստոլի վրեն։

Առավոտը թաքավորի տղեն նրանից թեզ վեր ա կենում, տեսնում էն պատկերքը՝ խելքը վրեն էթում ա։ Ստոլի վրիցը վեր ա ունում, դնում ծոցը։ Սիմոնին ըսկի բան էլ չի ասում։ Առավոտը Սիմոնը էթում ա իրա առուտուրին, թաքավորի տղեն էլ դառը, տխուր էթում իրանց տունը։

Սրանից մի քանի օրեն ետը, Սիմոնի միտն ա ընդնում քվոր պատկերքը։ էթում ա, տեսնում իրա դրած տեղը չի։ Ման ա գալի, ման՝ չի քթնում, համա ուղբրով իմանում ա, որ թաքավորի տղեն պտի տարած ըլնի։ էթում ա աղաչանք-պաղատանք անում, թե իրա ստոլի վրիցը հո պատկերք չի՞ վե կալե, տա՛։

Թաքավորի տղեն ասում ա.— Դրուստ ա, ինքն ա վե կալե. համա կուզեր իմանա, թե էս ի՞նչ աղջկա պատկերք ա։

Սիմոնը ասում ա, թե էդ իրա քիրն ա։

Թաքավորի տղեն, ղորթ ա, նրան բան չի ասում, համա իրա մեջը քանի էթում՝ հալ ու մաշ էր ըլնում. քշեր-ցերեկ հենց էն աղջկա վրա էր միտք անում, թե ո՞նց անի, որ նրան իրան կնիկ առնի։

Թաքավորը տեսնում ա, որ իրա տղեն օրեց-օր ետ ա էթում, մաշվում։

Մի օր հարցնում ա.— Ա՛յ որդի, ինչ ա պատահե քեզ, խի՞ ես ըտենց կիսաջան էլե, ռանգ-մռանգդ քցե, թե մի դարդ ունես, ասա՝ դարման անեմ, ըտենց պահելոն հո՛ չիլնի։

Ըստե, նոր նա հոր աղաք սիրտը բաց ա անում, ասում ա, որ իրա աչքը ըստեղ ա՝ Սիմոնի քվոր վրա, ո՛չ բեզրգյանի աղջիկ ա ուզում, ո՛չ թաքավորի. կա՝ նա ա, չկա՝ նա ա. նրանից սավայի էլ ուրիշի չի առնի։

Թաքավորն ասում ա.— Որդի՛, թե որ սիրտդ ըդենց տաք կպել ա Սիմոնի քվորը, էդ մի դժար բան չի. կկանչեմ նրան՝ քիրը կուզեմ քեզ, էլ դրա համար խի՞ են էդքան դարդ անում։

www.naregatsi.org

Երեսմանց ասենք Թաքավորը ըսենց էր ասում, որ ի՛նչ ա տղի սիրտը չկոտրի, համա ինքը հալբաթ որ չէր ուզի իրա տղեն Սիմոնի նման մի հասարակ մարդի քիր առնի, հազիր որ կարար Թաքավորի յա բեզրգյանի աղջիկ ուզի։

Էս վախտերքը Ստամբոլա սաղ դուքանդարները Թաքավորին Սիմոնի վրա գանգատ են տվե, Թե. «Էս մարդը մեր ապրուստը կտրել ա. իրա ապրանքը կես գնով ա տալի ու մեր ամենքի մուշտարին իրա կուշտը քաշում. մենք օրական մի կոպեկի առուտուր էլ ա չունենք»։

Համա Թաքավորը սրա համար Սիմոնին չէր կարա մի բան անի. չունքի էս մի ըսենց մհանա չէր, որ նրան մի դհով կորցնել տար։ Թազա մհանա մեջ բերին։

Թաքավորի բեզրգյանը մի օր ասեց.— Թաքավորն ապրած կենա, ես էս քանի տարի ա, որ Սիմոնի քվորը սիրում եմ, էդ աղջըկանը ոնց ես ուզում քու տղին, չէ որ քու անմի համար էլ ա փիս։

Էս բանը Սիմոնի անգաջն ա ընգնում. գալիս ա Թաքավորին բեզրգյանից գանգատ անում, ասում.

— Թե ղորթ քու բեզրգյանը էսքամ տարի քվորս սիրել ա, Թող էթա նրանից մի նշանարան բերի, էն վախտը ինձ կախ տալ տու, Թե չկարաց բերի՝ հո նրան պտի կախ տաս, որ խալխի վրա զուր տեղը բամբասանք չանի։

Թաքավորը ասեց.— Լա՛վ։

Մարդ ղրգեց բեզրգյանին կանչեց, հարցրեց Թե.— Էս բանին ղաբո՞ւլ ա։

Նա ասեց.— Հա՛, ղաբուլ եմ, կէթամ, ինչ նշանարան ուզում ա, կբերեմ, որ նոր հավատա։

Քվոր Թաթմանի մի Թայը Սիմոնի կշտին էր մնացե. հանեց բեզրգյանին շանց տվեց, ասեց.

— Հրես, Թե կարացիր սրա Թայը բերե, էն վախտը կէրևա, որ ղորթ նրան սիրել ես, Թե չէ, հո չէ։

Բեզրգյանը Սիմոնից չորս օր մհուլ ուզեց, որ էթա նրանց քաղաքը, ետ գա։

Սիմոնը նրան չորս օր մհուլ տվեց, ու նա ընգավ ճամփա։

Հենց որ հասավ նրանց քաղաքը, հարց ու փորձ արեց, քթավ Սիմոնի քվոր տունը։ Գնաց ասեց, Թե նրա աղբոր կշտից ա գալի,

24—2573

www.naregatsi.org

Նրանից շատ բարով ա բերե, համ էլ ասեց, թե մի քանի օր պտի ըստե մնա, չունքի մի քիչ բան-ման ունի։

Խեղճ աղջիկն էլ միամիտ հավատաց. նրան ջոկ օթախ տվեց, որ քանի ըստի ա՝ մեջը կենա ու աղբոր խաթեր շատ լավ էլ պատիվ էր տալի։

Իրեք օրը անց էր կացե, մնացել էր մի օր վադեն թամմի, համա բեզրգյանը դեռ չէր կարացե մի ֆանդով նրա թաթմանի թայը ձեռք բցի։

Հենց վրա չորս օրը, Սիմոնի քիրը իրա մարմարից շինած հավզումը լոլանալիս թաթմանի թայը մտիցը բցեց, թողաց հավզի ղրաղին։ Ոնց էլավ բեզրգյանը էս վարավուրտ արեց, գնաց թաթմանի թայը վե կալավ ու առանց Սիմոնի քվորը տենալու էկավ Ստամբոլ. տարավ թաքավորին տվեց։

Թաքավորն էլ կանչել տվեց Սիմոնին, շանց տվեց հարցրեց.— Է՞ս ա քվորդ թաթմանի էս մի թայը, թե չէ։

Սիմոնն ասեց.— Դրուստ ա, էս նրա թաթմանի թայն ա. համի ի՞նչ կասեմ, որ բեզրգյանը նրան սիրելիս ա էլե։

Ոնց որ իրար հեննա խոսք ին կապե, թաքավորը Սիմոնին պտի կախիլ տար։ Համա Սիմոնը թաքավորին աղաչանք արեց, որ իրան մի քանի օր մհուլ տա, էթա քվոր կուշտը, հենա գա՝ ինչ ուզում են անեն։ Թաքավորը նրա հեննա մարդիկ դրեց, որ տանեն նրանց քաղաքը, քվորը տենա էլ ետ բերեն։

Սիմոնը իրանց քաղաքը դեռ չէր հասե, նրա քվորը իմացում տվին, թե աղբերդ գալիս ա։

Խեղճ աղջիկը ուրախանում, աշխարով մին ա ըլնում ու դուս գալի աղբոր աղաքը։ Համա աղբերը նրան որ տենում ա, ըսկի չի ուզում էրեսին էլ ա մտիկ անի. մենակ իրեք հետ էս խոսքն ա ասում. «Ամո՛թ քեզ, ամո՛թ քեզ, հազար ամո՛թ», ու ետ դառնում ճամփից, գալիս Ստամբոլ, որ խեղդեն։

Աղջիկը էն սհաթը մատը կծում ա. իմանում ա, թե բանը ընչումն պտի ըլնի։ Էլ երկար միտք չի անում. ինքն էլ աղբոր ետնուց ա էթում։ Նրանից թեզ հասնում Ստամբոլ, չունքի սա ծովով էր գալի, համա նա՝ չորով։

Ըստե մի պառավի տան վեր ա գալի։ Իրիկունը զըրցի վախտը պառավին հարցնում ա, թե ըսկի ի՞նչ թազա խաբար կա էս քաղաքումը։

www.naregatsi.org

Պառավն ասում ա.— Ըսկի՞, խանում ջան, ըստե մի Սիմոն անմավոր դուքանդար կա. Թաքավորը նրա քիրը պտի իրա տղին ուղեր, համա վերջը իմացվեց, որ նա ուրիշ սիրող ա ունեցե. դրա համար Թաքավորը հրամայել ա, որ նրա աղբորը խեղդեն։ Էդ Թավուր քվոր ծիծը ծակվի, ինչ ասեմ, որ աղբորը ընենց զուլումի մեջ ա քցե։

— Լա՛վ,— ասեց աղջիկը,— մաղ խուզվածը[1] խի՞ էր ջոկ սիրող անում. նրա տեղակ պտի նրա քվորը կախ տային, որ լավ ըլներ։

Էն քշերը նա պառավի տանը քնեց, առավոտը թեզ վե կացավ, գնաց դուռ Թաքավորի կուշտը։ Էթում ա, տենում, աղբորը տանում են, որ խեղդեն։

Աղջիկը խալխի մեջը ճղելոն աղաք ա գալի, կաննում Թաքավորի աղաքին, ասում.— Թաքավորն ապրած կենա, ես մի գանգատ ունեմ, կըլնի՞ ասեմ անգաջ անես։

Թաքավորն ասում ա.— Խի՞ չիլնի, ասա, տեսնանք, ի՞նչ ես ասում։

Աղջիկը դհա սիրտ առավ ու ասեց.— Թաքավորն ապրած կենա, քու բեզրգյանը իմ սիրողն ա. ինձ տարենը հազար մանեթով ա բռնե. համա ընչանք ըսօր իմ փողը չի տվե։ Աղաչանք եմ անում, ասես փողս տա. ես էլ մի խեղճ աղջիկ եմ, ուրիշ ոչ մի տեղան էլ ապրուստ չունեմ։

Թաքավորը բեզրգյանին հարցնում ա, թե խի՞ չի էս աղջկա փողը տալի։ Նա երդում կրակն ա ընդնում, թե էդ աղջկա երեսը ո՛նչ տեհել ա, ո՛նչ էլ, որ փող պարտք ըլնի, յա չէ։ Աղջիկը նրա բերնից թուղթ ա ուզում, որ իրան ըսկի չի ճանաչում։ Բեզրգյանն էլ մի թղթի վրա գրում ա, ձեռք քաշում, թե էս աղջկա հեննա ըսկի ճանանչություն չի ունեցե ու տալի նրան։

Նոր աղջիկը արշա ընգավ, ասեց, որ ինքը Սիմոնի քիրն ա ու Թաքավորին մին-մին նաղլ արեց, թե նրա բեզրգյանը ոնց ա էկե իրանց տանը կացե. իրա թաթմանի թայը գողացե, բերե շանց տվե, ասե, թե իրա սիրողն ա։ Բեզրգյանը մնաց բերանը բաց, էշ կտրած՝ սառած կաննած։

Թաքավորը հենց իրա աչքովը տեհավ, իրա անգաջովը լսեց,

---

1 Հաջորդում է փակագծում առնված՝ աղջիկը (Ս. Կ.)։

www.naregatsi.org

որ բեղրդյանը սուտ էր ասում, թե Սիմոնի քվորը սիրելիս ա էլեւ էլ առանց հարցնելու հրամայեց էն սհաթը Սիմոնի տեղակ բեղրդյանին կախ տան։

Սիմոնը ուրախությունից հենց իմացավ սաղ աշխարհը իրան տվին. էկավ քվոր ճտովը փաթաթվեց, ճակատը պաչեց, որ էն թավուր չիդյարով քիր ա։

Սրանից եղը Սիմոնը էթում ա, իրա տուն ու տեղը բերում Ստամբոլ։

Նո՛ր, թաքավորի տղեն նրա քվորն առնում ա. դափ ու զուռնով, լավ քեֆով հարսանիք ըլնում։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

www.naregatsi.org

39. ՄԱՐԴ ՈՒ ԿՆԿԱ ՍԵՐԸ ՈՒՐԻՇ ԹԱՎՈՒՐ ԲԱՆ Ա

Մի վախտ Ղլաթ քաղաքում մի մարդ էր կենում՝ անումը Շաղո։ Շաղոն ալեի-մալեի մի տղա ուներ։ Նա ուզեց, որ իրան Հովան տղին իրա սաղ վախտը նշան դնի ու պսակի։ Շաղոն նրան նշան դրեց Շուշան անմավոր մի աղջկա վրա, որին Հովանը շատ վաղուց էր, որ սիրել էր։ Շաղոն Հովանին վե կալավ գնաց Վան քաղաքը, որ հարսանիքի համար զադ-մադ առնի։ Ճամփեն Վանա ծովի վրովն էր։ Ինչ որ պետքն էր առավ, գյամու վրա դրեց ու ճամփա ընկավ։ Դեռ հլա նոր էին հասել ծովի միջտեղը, որ էնթավուր քամի վե կացավ ծովի վրա ու գյամին բաթմիշ արեց։ Հովանը ընկավ ծովը, համա Շաղոն՝ նրա հերը մնաց սաղ։

Շաղոն շատ ա մղկտում, էսպես հաղ ա ասում Հովանի բերնից.

Շաղո բարձեր բեռ մի խինա,
Իր Հովանին խարսնիք կենա,
Մեր էրիրական, դու մի էրիրա,
Ձիս խըտ քեզի տարրեդար էրա։

Շաղո բարձեր բեռ մի քասա[1]*,*
Հովան կենա նորափեսա,

---

1 Ման, տալերք (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Մեր էրիրական, դու մի էրիրա,
Ձիս խըտ քեզի տարրեդար էրա։

Շատ բարև տարեք իմ մերկան[1],
Քիչ բարև տարեք իմ խերկան[2]
Նովեր ցամքին, էլնիմ իգամ,
Մեր էրիրական դու մի էրիրա,
Ձիս խըտ քեզի տարրեդար էրա։

Շուշանը՝ նրա կինը իմանում ա, որ Հովանը խեղդվել ա, յաղու ա խմում, որ մեռնի ու իրա սիրտը իրա նշանածից հետո ուրիշին չտա։

Շուշանը երգում ա.

Տո կիսրիկ, քարե մարիկ,
Մե էլե Ճամփա իշկա,
Տո՛ տեքրիկ, պաղ ախպրիկ,
Պուտ մ՚ջրիկ, խոքիս էլավ։

Շուշանը էս հաղը կըլկըլացնելուց եդ մեռնում ա։
Շուշանի կեսուրը նրա բերանից ասում ա.

Տո՛ մարե, Շուշան դո՞ր ա,
Տո՛ լաո, գացե բեր[3], սալն[4] ա սրտին։
Տո՛ մարե, Շուշան դո՞ր ա,
Տո՛ լաո, գացե ջրի, սալն ա սրտին.
Տո՛ մարե, Շուշան դո՞ր ա,
Տո՛ լաո, գացե ջրի, սալն ա սրտին.
Տո՛ մարե, Շուշան դո՞ր ա,
Տո՛ լաո, գացե արտը, սալն ա սրտին։

Շաղոն, Շուշանը ու նրա կեսուրը մինչև հիմա թաղած կան Վանա ծովի ղրաղին, մի տեղ ու վրեն քար կանգնեցրած, մարդիկ գալիս են ուխտ։

---

1 Մորը (Ս. Բ.)։
2 Հորը (Ս. Բ.)։
3 Գրառման ձեռագրում բանահավաքը բացատրել է սուրու, մինչդեռ նշանակում է ոչխարի կիթի վայրը (Ս. Կ.)։
4 Քար (Ս. Բ.)։

www.naregatsi.org

40. ՉՈԼԱԽ ԿՆԻԿ

Քիր ու աղբեր են ըլնում։ Աղբերը իրա համար կնիկ ա առնում։ Քիր ու աղբեր շատ սիրով էին իրար հետ։ Էս դուր չէկավ աղբոր կնկանը, ուզում էր մի կերպով քիր ու աղբեր իրարից բաժանի։ Սա կարաց իրա ուզածը անել։ Սա մի աղջիկ ծնեց, մի գիշեր մորթեց ու արնոտ դանակը դրեց քրոջ ջեբը։ Առավոտ մարդ ու կնիկ շատ զարմացան, համա իզուր։

Շատ ման գալուց հետո կինը ասեց.— Մի՛ քվորդ ջեբն էլ մանսրի։

Աղբերը մնաց շշմած, երբ նրա ջեբից հանեցին արինթաթախ դանակը։ Աղբերը իրա նոքարներին հրամայեց, որ նրա ոտները կտրեն ու տանեն գցեն մեշեքը, թո՛ղ ընտեղ գելերը ուտեն նրան։ Նոքարները աղի հրամանը կատարեցին։ Նրա ոտները կտրեցին ու տարան գցեցին հեռու մեշեքը։

Էս մեշեքանց մոտով անց էին կենում մի քանի նազիրներ։ Կնկա ձենը լսելով, սրանք գնացին ու տեհան մի սիրուն կնիկ, ոտները կտրած ստեղ գցել են։

Նազրներից մինը ասեց.— Ես պտի տանեմ սրան իմ տունը ու կնիկ շինեմ ինձ։

www.naregatsi.org

— Մեկել վեզիրները շատ ասեցին, որ չոլախին տուն ա տանում ի՞նչ անի, համա նա նրանց խոսքին ականջ չդրեց։ Վեր կալավ ու տարավ իրա տունը ու պսակվեց նրա հետ։

Մի անգամ էս վեզիրը գնաց ուրիշ երկիր։ Էս Չոլախ կնիկը ծնեց մի ոսկեքաքուլ տղա ու մի աղջիկ՝ ճկուտը ոսկի։ Մի նամակ գրեցին, տվին նոքարին ու ուղարկեցին վեզիրին։ Ճամփին նոքարը վեր էկավ Չոլախի աղբոր տանը։ Չոլախի աղբոր կնիկը նրան մին-մին հարցրեց ու իմացավ, թե բանը ընչումն ա։ Միտք արեց, որ նրա ջեբից նամակը հանի, թարս գրի։ Մի գիշեր նա էդպես էլ արեց. ջեբից հանեց նամակը ու նրա տեղակ գրեց. «Քու կնիկը էրկու շան ճուտ ա բերել, դեն գցե՞նք, թե պահենք, որ գաս»։ Նոքարը առավոտը վեր կացավ ու գնաց իրա աղի քաղաքը ու տվեց նամակը նրան։ Վեզիրը նամակը կարդալով՝ գրեց. «Թե շան ճուտ ա՝ ինչորիս ա, պահեք մինչև որ ես գամ»։ Նոքարը նամակը ջեբին ետ էկավ ու ճամփին էլի Չոլախի աղբոր տանը վեր էկավ։ Էլի նրա աղբերակինը գիշերը ջեբից նամակը հանեց ու կարդալով՝ նրա տեղը էս գրեց. «Ոսկեքաքուլ, ոսկեճկուտ էրեխեք են՝ ինչ որ են, ծովը գցեք, որ չգամ ու տեսնամ նրանց»։

Առավոտը նոքարը վեր կացավ ու ճամփա ընկավ իրանց երկիրը։ Նամակը տարավ տվեց տանը։ Երբ կարդացին՝ շատ լաց էլան, չէին ուզում, որ նրան ծովը գցեին, համա ո՞նց անեին՝ վեզիրի հրամանն էր։ Վեր կալան մանդր էրեխանցը ու նրա մորը դրին մի ղութկի մեջ ու գցեցին ծովը։ Ջուրը տարավ ու մի ցամաքի ղրաղ հանեց։ Մերը իրա էրեխեքանցով ղութկից դուրս էկավ ու իրա համար ըստեղ տուն շինեց ու բնակվում էր։ Օրեցօր նրա էրեխեքը մեծանում էին։

Հիմա գանք դպա վեզիրը։ Նա տուն ետ դառնալով շատ ու շատ զարմացավ, երբ տեսավ որ ոչ իրա կնիկը կա, ոչ էրեխեքը, որ նոր էին ծնվել։ Գլուխդ ինչ ցավացնեմ, իմացավ բանի ընչությունը։

Նոքարին հարցրեց.— Գիշերը ում տանը վեր էկար։

Նա ասեց.— Քու կնկա աղբոր կուշտը։

Էն սհաթին ձին նստեց ու գնաց նրա տունը։ Մին ու մին պատմեց իրա կնկա աղբորը իրա գլխով անցկացածը։ Նա նոր իմացավ իրա սխալմունքը.

— Էս սատանությունը,— ասեց,— էլի իմ չար կնկա բանը

www.naregatsi.org

Կըլնի,— ու հրաման տվեց իրա նոքարներին, որ նրան թիքա-թիքա անեն։

Վեզիրը ու Զոլախի աղբերը մի-մի ձի նստած գնացին նրան ման գալու։ Նովը բռնեցին ու դուզ գնացին։ Նովի ղրաղում երկար ման գալուց հետո նրանք մի տուն տեհան ու էս տան առաջ էրկու էրեխեք հաղ էին անում իրար հետ։

Մոտեցան էս էրեխեքանցը ու հարցրին.— Մեկ օրով ղոնաղ չե՞ք ուզի։

Երեխեքը պատասխան տվին.— Մեր մերը անոտ ա, ղոնաղ չի սիրում։

Վեզիրը մատը կծեց ու մտքումը ասեց. «Բալի, որ սա ա»։ Էրկուան էլ ներս մտան ու տեսան մի ոտները կտրած կնիկ կար էր անում։ Էն սհաթը ճանաչեցին նրան։ Իրարու փաթթվեցին ու լաց էղան։

Մորը իրա էրեխեքանցով տարան տուն։ Էլի նա վեզրի կնիկն էր ու ուրախ իրար հետ ապրում էին։

www.naregatsi.org

41. ԱՍՏՈԾ ԳԺԻՆ ԷԼ Ա ՏԱԼԻ

Երկու աղբեր են ընում, մինը՝ գիժ, անխելք, մեկելը՝ խելոք։ Սրանք մի կով ունեին, էլ զադ չունեին։ Ջունքի սրանց փողը հատել էր, էն գիժ աղբերը կովի շլնքից պարան կապեց ու տարավ ծախելու։

Էս գիժ աղբերը տարավ, տարավ շոլում մի ծառից կապեց։ Մեկ էլ տեհավ մի խլեզ իրա բնից դուռ էկավ ու փախավ։

Գիժը ասեց.— Սանամեր խլեզ, կովս ուզո՞ւմ ես առնի՝ ա՛ռ, հրես ըստեղ կապում եմ. ես գիտեմ ձեռիդ հիմի փող չես ունենա, մի քանի տարուց ետ կգամ ու փողս կուզեմ։

Գիժը էկավ տուն։ Խելոք աղբերը հարցրեց.— Ա՛յ տղա, կովը ի՞նչ արիր, յա ո՞ւմ վրա ծախեցիր։

Նա ասեց.— Սանամեր խլեզը առավ, ձեռին փող չուներ, ասեց՝ հետո արի փողդ առ։

Անցավ մի քանի վախտ. գիժ աղբերը իրա խելոք աղբորը վերցրեց, որ իրար հետ էթան սանամեր խլեզից կովի փողը բերեն։ Գիժ աղբերը տեհավ, որ ո՛չ կով կա, ո՛չ զադ, մնում ա մենակ նրա ոսկորները, գելերը վաղուց կերել էին գժի կովին։

Դնաց սանամեր խլեզի բնի մոտ կանգնեց ու բղավեց բարձր ձենով.

www.naregatsi.org

— Ամոթ չի՞, սանամեր, իմ փողը ինչո՞ւ չես տալի, իմ կովը ինչպես կերել ես, որ մենակ ոսկորներն ես թողե. ոտների կաշին էլա թողնեիր, որ տրեխ կարեի ինձ համար, բոբիկ եմ, ամոթ չի՞, փողս ինչո՞ւ չես տալի։

Գիժը էս խոսքերը նոր էր վերջացրել, խլեզը բնից դուս էկավ ու փախավ։ Գիժը նրա հետևից ընկավ, խլեզը գնաց ու մի շատ մենձ քարի տակ մտավ։ Գիժը բարկացած, էն մենձ քարից ժնջըլներ կապեց ու վեր քաշեց, խլեզը տակից փախավ։ Համա գիժը երբ որ դեն գցեց, տեհավ, որ մի կարաս լիքը ոսկի։ Երկու աղբերտինքն էլ ջեբները, ծոցները լցրին ու հետ էկան։

Գնալիս գիժը ասեց.— Ես պետք է սանամոր տունը շալակեմ, տանեմ։

Ղորթ, որ, ժնջլները կապեց քարից ու շալակեց։ Էկան, էկան մի մենձ ծառի տակ վեր էկան։ Ջունքի գշերը վրա հասավ, էս երկու աղբերտինքը նի էլան ծառը, որ ընտեղ անահ քնեն, ջանավարները նրանց զիան չտան։ Գիժ աղբերը սանամոր տունն էլ ծառի վրա բարձրացրեց։

Հենց էս գշերն էլ բեզրգյանը իրա մարդկերանցով էկել էր էս ծառի տակը՝ քեֆ անելու։

Մի քիչ կացավ, գիժը ասեց.— Ես պտի սանամոր տունը ներքև թողնեմ, ջունքի բեզարել եմ։

Խելոք աղբերը շատ աղաչանք արեց, համա նա չլսեց ու թողեց ներքև։ Մենձ քարը ճղները կոտրտելով ներքև ընկավ ու նրանցից որին սպանեց, որն էլ կարաց փախնի ու ազատվի։ Ներքև էկան երկու աղբրտինքը ու ինչ որ կար-չկար՝ հավաքեցին ու տարան իրանց երկիրը։

Գիժը, երբ իրանց երկիրը հասավ, գնաց թաքավորի մոտ ու ասեց, որ քո բեզրգյանին ես ու իմ աղբերը սպանեցինք իրա օղյուշաղի ու մարդկերանց հետ։ Թաքավորը գժին ասեց, որ գնա իրա աղբորը կանչի։ Գիժը էկավ ու իրա խելոք աղբորը ասեց, որ թաքավորը կանչում ա։

Խելոք աղբերը գժին ասեց.— Դու ըստեղ կաց, դուռը պահի, ես կէթամ։

Խելոք աղբերը դեռ հլա նոր էր հասել թաքավորի մոտ, մեկ էլ տեսնես գիժը տան դուռը շալակած էկավ ու թաքավորի մոտ կանգնեց։

www.naregatsi.org

Խելոք աղբերը թաքավորին ասեց.— Թաքավորն ապրած կենա, տեսնում ես՝ ես որ ասեցի դռանը մուղաթ կաց, նա շալակել ա բերել, սրան կըլնի՞ հավատալ։

Թաքավորը նրա գժությունը տեսնալով՝ չհավատաց նրան ու թողեց նրանց իրանց քեֆին[1]։

---

1 Հաջորդում է հետևյալ արտահայտությունը. «Տեսնում եք, սիրելի կարդացողներ, ասատծ գժին էլ ա տալի», որը բանահավաքի հավելումն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

42. ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ՉՈԲԱՆԸ [1]

Մեկ օր թաքավորի մեկը կանչում ա իր մոտ իր պալատականներից իրեքին ու ասում ա.

— Իրեք հարց պտի տամ ձեզ, թե գտաք՝ էնա շատ փող կտամ ձեզ, թե չգտաք՝ պտի գլխներդ կտրիլ տամ։ Գնացեք մի շաբաթ միտք արեք ու եկեք ինձ ասեք տենամ։ Առաջին. տարվա ո՞ր տարին ա ամենալավը, երկրորդ. օրվա ո՞ր օրն ա ամենալավը, երրորդ. սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը։

Էդ իրեք մարդը գնացին միտք արին, միտք արին, հինգ օր անց կացավ, բան չիմացան, թե ինչ ասեն թաքավորին, վերջը խոսք կապեցին՝ ընկնեն քաղաքե-քաղաք, գեղե-գեղ՝ հարց ու փորձ անեն, բալի մի խելոք մարդի ռաստ բերեն, որ կարենա էդ հարցերին պատասխան տա։ Գնացին ընկան քաղաքներն ու գեղերը, ման էկան, ման էկան, մի սաղ օր ու գշեր ման էկան, տենց մի խելոք մարդ չգտան։ Վերջը՝ գլխներիցը ձեռ վե կալան ու ասացին. «Աղբեր, ինչ որ ճակատներիս գրված ա՝ էն էլ պտի ըլնի. բալի հենց էտ էր գրած, որ թաքավորը մեզ սպանի։ Գնա՛նք, թող մեր գլուխը կտրի, ճարն ինչ»։

---

[1] Վերնագրից ներքև, փակագծերի մեջ հավանաբար բանահավաքի կողմից, նշված է՝ Թիֆլիզում—Հավլաբարի մասնումը (Մ. Կ.)։

www.naregatsi.org

Ու մյուս օրը առավոտըհանց ետ են դառնում ու ընկնում են ճամբա։ Գալիս են գալիս՝ բիրդան մի սիրուն հաղի ձին ա ընկնում դրանց անգաջին. կաղնում են, անգաջ են անում՝ տեսնում են որ չոբանի հաղի ձեն ա։

— Տղե՛ք,— ասում են,— ջհանդա՞մ, չէլավ-չէլավ՝ էկեք մի էտ փորձն էլ փորձենք. գնանք էդ չոբանին հարցնենք, բալի մի ճարանի մեր դարդին,— ու գնում են չոբանի մոտ։

Մոտենում են, տեսնում՝ մի ուրախ չոբան, քարի վրա նստած, ոչխարները առաջին արածում են, ինքն էլ ձեռը դրել ա չանի տակն ու ձենը աշխարքը գցել։

— Բարի օ՛ր, չոբան բիձա։

— Ասսու բարի՛ն, բարի աղեք։

— Ցարա՞բ, ա՛յ չոբան բիձա, որ մի բան ասենք, կարա՞ս մեզ օգնես։

— Ասեք տեսնամ, գլխիս վրա։

— Ա՛յ չոբան բիձա, ախր թաքավորը մեզ մի հարց ա տվել ու ասել ա, թե չպատասխանեք՝ գլխներդ կկտրեմ. հիմի մենք չենք գիտում, թե ի՞նչ ասենք։ Նա ասում ա. «Իմացեք՝ տեսնամ տարվա ո՞ր տարին ա ամենալավը, օրվա ո՞ր օրն ա ամենալավը, սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը»։

— Ա՞յ հեր օրհնածներ, էդ շատ հեշտ հարց ա. ինձ տարեք թաքավորի մոտը՝ ես նրան կպատասխանեմ։ Համա պտի ամեն մեկդ մի զատ տաք ինձ՝ մեկդ մի բուռը ոսկի տվեք, մեկդ մի բուռը էրծաթ, մեկդ էլ տասը հատ մատանիք, լա՞վ։

— Շա՛տ լավ,— ուրախ-ուրախ ասեցին պալատականները ու էն սհաթը նրանցից մեկը վազեց քաղաքը, ինչ որ չոբանը ուզում էր, բերեց տվեց իրան ու ասեց.— Դե՛, թեզ արա, գնա՛նք։

Չոբանը էդ ոսկին, էրծաթն ու մատանիքները տարավ տվեց կնկանը ու ետ դառավ էդ մարդկանց հետ քաղաքը՝ թաքավորի մոտը, ոչխարներն էլ հենց հանդումը թողեց։ Քաղաքումը չոբանին լավ շորեր հագցրին ու տարան թաքավորի մոտ։

Թաքավորին ասեցին.— Մեզ տեղակ էս մարդին ենք բերել, որ քու հարցին պատասխան տա։

Թաքավորն ասեց.— Լա՛վ։

Թաքավորը վե կալավ.— Ասա տեսնամ՝ տարվա ո՞ր տարին ա ամենալավը։

www.naregatsi.org

Զորանը ասեց.— Թաքավորն ապրած կենա, էս տարին ա ամենալավը, չունքի էս տարի ես բիրդան հարստացա, որ ըսկի մի տարի չէր էղած։

— Լա՛վ,— ասեց թաքավորը,— բա օրվա ո՞ր օրն ա ամենալավը։

Զորանը ասեց.— էս օրն ա ամենալավը, չունքի էսօր չորանը թաքավորի հետ հավասարվել ա ու թաքավորի պալատումը կաղնած թաքավորի հետ խոսում ա։

— Էդ էլ լավ,— ասեց թաքավորը,— հիմի ասա տենամ՝ սհաթվա ո՞ր սհաթն ա ամենալավը։

Զորանն ասեց.— էս սհաթն ա ամենալավը, չունքի էս սհաթին իրեք մարդ նհախ մեռնելուց ազատվեցին։

Թաքավորը շատ զարմացավ չորանի խելքի վրա ու ասեց.— Դու տարար, գնա՛, ինչքան փող որ ուզում ես, վե կալ խազինից ու քեզ հալալ ա։

Զորանը գնաց թաքավորի խազինիցը մի եքա մեշոկ ոսկի վե կալավ ու տարավ իր տունը։ Ընդուց դենը չորանը ոչխարը տվեց ուրըշի, տունը տվեց ուրըշի, ինքը կնկանը, էրեխանցը վե կալավ էկավ քաղաքը, մի լավ տուն առավ, սարք ու կարք առավ. խաս շորեր առավ՝ մի խոսքով դառավ մի հարուստ աղա ու աղի պես ապրեց ընչանք մեռնիլը։

Ասսանից իրեք խնձոր վեր եկավ. մեկը ասողին, մեկը լսողին, մեկն էլ էս տան տիրոջը։

www.naregatsi.org

43. ՊԻԾԱՆ ԿԱՄ ՊԻԾԻԿ[1]

Ըլնում ա չի ըլնում մի դարվիշ, մի պառավ, մեկել մի Պիծան անմով տղա։ Մեկ օր դարվիշը տանից դուս գալու վախտը էդ Պիծանին դնում ա մի պարկի մեջ՝ բերանը կապում ա ու ասում.

— Պիծա՛ն, ես գնում եմ ուրիշ տեղ, ըստեղ կաց ընչանք ետ գամ։

Պիծան, դո՛ւ Պիծան, հենց որ դարվիշը հեռանում ա թե չէ՝ դա տոպրակը ճղում ա, միջիցը դուրս ա գալիս ու գնում նիլում տանձի ծառը։

Դարվիշը ետ ա գալիս, տեսնում ա, որ Պիծանը տոպրակումը չի, ասում ա. «էդ շան տղեն տանձի ծառը նիլած կլնի»։ Ու դորթ, որ գնում ա տանձի տակ՝ տեսնում ա ծառի վրա նստել ա, տանձերը քաղում ա, ուտում ա, կոթերն էլ ներքև ա շպրտում։

Դարվիշն ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, մի տանձ գցես, որ ուտեմ ու կոթը գլխիդ տամ։

Պիծանը չի լսում դարվիշին ու իրան հըմար տանձն ուտում ա, կոթը ներքև շպրտում։

---

1 Վերնագրից ներքև, փակագծի մեջ նշված է՝ Արարատյան դաշտում (Ս.Կ.)։

www.naregatsi.org

Վերջը դարվիշը խեղճ ու կրակ նիլնում ա ծառը, Պիծանին բռնում ա ու վեր բերում, տանում էլի էն տոպրակի մեջը դնում, ասում.

— Գնում եմ ուրիշ տեղ, ըստեղ կաց ընչանք ես գամ։

Հենց որ դարվիշը հեռանում ա, դա տոպրակիցը էլի դուս ա գալիս. էս անգամ տոպրակը քար ա լցնում, որ դարվիշը չիմանա, թե դարդակ ա, ու գնում նիլնում իր տանձի ծառը։ Դարվիշը գալիս ա, տոպրակին մտիկ ա տալիս ու ասում. «Էս անգամ Պիծիկը ինձ լսել ա, տոպրակումն ա մնացել»։ Ասում ա ու վեր ա ունում քցում շալակը, որ տանի տա պառավին՝ մորթի, մի լավ հարիսա էփի։

Ճամփին տենում ա տոպրակը շատ ծանդր ա, ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, ինչ շատ ծանդրացել ես։

Եփոր հասնում ա տուն, տոպրակը վեր ա դնում ու բաց անում՝ ի՞նչ ա տենում, Պիծանի տեղակ մանդր քարեր...

— Վա՜յ,— ասում ա,— էն շան տղեն էլի խաբեց ինձ,— ու տոպրակը վեր ա ունում, վազում ա դպա տանձի ծառը։ Գնում ա, տենում իրան համար հանդարտ նստել ա ծառի վրա, տանձ ա ուտում ու կոթերը գետինը շպրտում։

Դարվիշը բարկացած նիլնում ա ծառը՝ դրան դնում ա տոպրակի մեջը, գցում ա շալակը, վեր գալիս ու գնում տուն։

Հասնում ա տուն ու ասում.

— Ա՜յ պառավ, դե հիմի դանակը սրի, սրան մորթի, էս գիշեր մի լավ հարիսա էփի, որ առավոտը վեր կենամ ուտեմ։

Ու ինքը գնում ա քնելու։

Պառավը դանակը դնում ա առաջն ու սրում ա։

Պիծանը ասում ա.— Ա՜յ պառավ, էդ դանակը տուր տենամ սո՞ւր ա, թե գուլ. թե սուր ա էն վախտը գլուխս կտրի, էլ ինչ ես զուր տեղը ավելորդ սրում։

Պառավը դանակը տալիս ա Պիծանին։ Պիծան, դո՛ւ Պիծան, դանակը առնում ա թե չէ՝ տեղիցը վեր ա կենում ու պառավի գլուխը կտրում։ Ետով պառավին կոտորում ա ու տանում ա դնում կճուճը, թունդիրը վառում ա, կճուճը դնում թունդրան մեջը, որ հարիսա էփի։

Եփոր էփում ա պրծնում, գնում ա նիլնում սան գլուխը ու ընտեղ մնում։

Առավոտը դարվիշը վեր ա կենում, գնում ա թունդրան միջիցը

25—2573

www.naregatsi.org

կճուճը հանում ա, տենում ա շատ լավ հարիսա ա էփվել, դնում ա առաջը ու իշտահով ուտում ա, հենց իմանում ա Պիծանի միսն ա։ Ուտելու վախտը պառավի տոտիկը ընկնում ա ձեռը. դարվիշը վեր ա ունում էդ տոտիկը ու ասում.— Էս Պիծանի տոտիկն ա՞, էս Պիծանի տոտիկն ա՞։

Պիծանն էլ սան գլխիցը ասում ա.— Էդ պառավի տոտիկն ա՞, էդ պառավի տոտիկն ա՞։

Դարվիշն ասում է.— Վա՞յ, շան որդի...,— ուզում ա նիլնի ամնն ու ընտեղ դրան ձվիկ-ձվիկ անի։ Համա չի իմանում, թե ոնց նիլնի ու ասում ա.— Պիծա՛ն, Պիծա՛ն, էդ ոնց նիլար ընտեղ։

Պիծանն էլ ասում ա.— Ա՞յ քու տունը շեն, ըստեղ նիլնելումն ինչ կա. ա՛յ թվանքը վե կալ՝ սանը դեմ դիր, ընենց որ կոթը ներքևն ըլնի, լուլեն վիրևը, ոտդ դիր չախմախի վրա ու բարձրացի, էն վախտը կհասնես ինձ։

Խեղճ դարվիշը ոտը դնում ա չախմախի վրա թե չէ՝ թը՛խկ, թվանքը բացվում ա ու դուզ դարվիշի փորը մտնում։

Պիծանը վեր ա գալի ու դարվիշի ունեցած չունեցածին տեր ա կաղնում ու ըտենցով հարստանում։

Ասանից իրեք խնձոր վեր էկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ էս տան տիրոջը։

www.naregatsi.org

44. ՓԸՓԸՔ, ԲԸՓԸՔ, ՖԸԼԸՔ

Իրեք աղբրտինք են ըլնում՝ Փըփըք, Բըփըք ու Ֆըլըք։ Իրեքն էլ իմաստուն են ըլնում։ Սրանք ալեյի-մալեյի մի ջորի ունեին։ Մի անգամ գողերը էկան տարան էս ջորին։ Իրեք աղբրտինքը, չունքի իմաստուն էին, իմացան, թե ով ա տարել ու գնացին ուզեցին իրանց ջորին։

Գողը ասեց.— Ես մի բան կդնեմ ձեռիս վրա, թե իմացաք ինչ ա, հո ձեր ջորին ես եմ վեր կալել ու կտամ։

Նա մի աման հարիսա շորի մեջ փաթթեց ու հարցրեց նրանց.— Էս ի՞նչ ա։

Մի աղբերը ասեց.— Արի՛, դա ցորեն ա։

Մեկելը թե.— Ցորեն ա, համա մարդի թևով ա ծեծված։

Էն մեկելը թե.— Ցորեն ա ու մարդի թևով ծեծված, հարիսա ա ու շորի մեջ փաթթած ա։

Գողը զարմացավ, թե նրանք ո՛նց գտան, նրանց ջորին իրանց տվեց ու ճամփու քցեց։

www.naregatsi.org

45. ՍԿԼԻԿ ՈՒ ԲԱԿԼԻԿ

Կըլնի չըլնի մի մարդ, մի կնիկ։ Մարդի անունը Բակլիկ ա ըլնում, իսկ կնկանը՝ Սկլիկ։ Սրանք մի շատ խելոք աղջիկ ունեին, որին շատ վախտ էր՝ մարդի էին տվել։ Մարդ ու կնիկ էլ լափ գիժ էին։

Մի օր Սկլիկը ասեց Բակլիկին.— Ա՛յ մարդ, արի էթանք մեր աղջկանը տեսություն, զադ մադ էլ առնենք ու տանենք նրան։

Թունդիրը վառեցին, որ գաթա թխեն։ Որը հում, որը էփած բողչեն կապեցին, մի տիկ գինի առան, մի թուփ էլ չիթ ու ճամփա ընկան դպա իրանց աղջկա գեղը, որը շատ հեռու չէր իրանց մոտից։ Ամառվա շոքից երկիրը հազար ու մի տեղից տրաքտրաքվել ու ճղքճղքվել էր։

Սկլիկը ասեց մարդուն.— Տե՛ս, երկիրը ինչքան ծարավ ա, բերանը բաց ա արել ու ջուր ա ուզում, արի էս գինին ածենք բերանը, խմի ու կշտանա։

Բնրեցին սաղ տկով գինին ածեցին երկրի ճեղքերը ու գնացին։ Դեռ հլա մի քիչ նոր էին հեռացել ըստեղից, մի ծառ տեհան, որ կատաղած քամուց ճղքերը ժած էին գալիս։

Էլի Սկլիկը ասեց.— Ա՛յ մարդ, տես ոնց ա մրսում էս ծառը,

www.naregatsi.org

արի էս թոփ չիթը ծառին փաթաթենք, մեղք ա, տես ոնց ա դողդողում, վա՜յ, վա՜յ, հաքին շորեր չունի, որ չմրսի։

Էս թոփ չիթն էլ էս ծառին փաթաթեցին ու իրանք գնացին։ Իրանց աղջկա մոտ հասան Սկլիկ-Բակլիկը։ Հանեցին էն գաթեքը, որ սաղ բորբոսնել, հոտել էին, չունքի տաք-տաք էին դրել բողչեն ու կապել, չէին թողել, որ մի քիչ դընջանա ու հովանա։

Սրանց աղջիկը մի էրեխա ուներ։ Մի անգամ չեմ գիտում ոնց էլավ, մարդ ու կնիկ տանից ուրիշ տեղ գնացին ու իրանց էրեխեն թողին տանը, որ Սկլիկ-Բակլիկը նրան թամաշ անեն։ Սրանց տանը մի հարիր ղազ կար։

Սկլիկը տեհավ, որ ղազերի գլխները կեղտոտ են, ինքն իրան ասեց.— Վա՜յ, վա՜յ, իմ աղջիկը մաջալ չի ունեցե, որ սրանց գլխները լվանա, մեղք էլ են։— Էս ասում ա ու մի մենձ պղինձ դնում կրակին ու տաքացնում, որ նրանց գլխները լվանա։

Բերում ա ինչքան ղազեր կան, բոլորի գլխները մին-մին կոխում ա եռման ջրի մեջ, հանում, ղրաղ դնում։

Դեռ հլա ինքն իրան պարծենում էլ ա.— Տե՛ս, Բակլիկ, ոնց դընջացան, էլ ժաժ չեն գալի, քնել են։— Անխելք Սկլիկ, հալբաթ դինջ կըլնեն, որ սատկել են։ Հետո նրանց էրեխուն եռման ջրի մեջ լողացրեց, սա էլ էնպես քնեց, որ էլ չվերկացավ։

Մի քանի վախտից հետո մարդ ու կնիկ էկան տուն. աղջիկը իմացավ, թե իրա մերը ինչ տնաքանդություն ա արել, համա իրա մարդին բան չասեց ու խաբեց, թե ինքն իրան մրսել ա։ Մարդը, չունքի Սկլիկ-Բակլիկը էթում էին իրանց տունը, գնաց սուրուի միջից մի չաղ ոչխար ջոկեց ու բերեց տվեց նրանց՝ փեշքաշ, որ իրանց տուն տանեն։

Սկլիկ-Բակլիկը ասեցին.— Էս լղար ոչխարը տալիս ես՝ ի՞նչ անենք, թող մենք էթանք ու ջոկենք՝ որը որ չաղն ա։

Իրանք գնացին ու որտեղ լղար, հիվանդոտը գտան՝ վեր կալան տարան։

Ճամփին Սկլիկը ասում էր Բակլիկին.— Տես, ա՛յ մարդ, ի՞նչ չաղն ա՝ եղը բերնից կաթում ա։— Խեղճը չի իմանում, որ բերանից փսլինք-մսլինքն ա թափում։

Մարդ ու կնիկ հենց որ հասան տուն, էն լղար ու հիվանդ ոչխարը մորթեցին, դրին թունդիրը, որ լավ կարմրի, ու իրանք դուռը կողպեցին, բալանիքը դրսևից քաշ արին դռան վրա ու գնացին

www.naregatsi.org

սարը, որ ատամախոթիչ բերեն մի դաստա, երբ որ խորոված ոչխարի միսը ուտեն ու ատամների արանքին մնա, նրանով հանեն։

Իրանք դուս էլան տանից, մի մարդ պատահեց։

Սկլիկը ասեց.— Ա՜յ աղբեր, չէթաս մեր դուռը բաց անես, քալնիքը, որ կախ ա արած դրսից, բաց անես նրանով ու ներս մտնես թունդրից մեր խորոված ոչխարը հանես, տանես։

Ղարիբ մարդը ասեց.— Ես ինչ գործ ունեմ ձեր տան հետ, ինչ ուզում եք՝ արեք։

Էս մարդը գնաց դուռը բաց արեց, թունդրից խորոված ոչխարը տարավ տուն ու իրա համար քեֆ արեց։

Սկլիկ-Բակլիկը ետ էկան, որ խորոված ոչխարն ուտեն՝ տեհան որ չկա։ Իրանց գլխին շատ վայ տվին, համա բանը բանից անց էր կացել։

www.naregatsi.org

46. ԳԵԼԸ ՄՈՒԽՍԻ ԸԼՆԵԼՈՒ Ա ԷԹՈՒՄ

Մի գել, շունքի շատ էր պառավել, վե կացավ ու ճամփա ընկավ, որ Լթա Երուսաղեմ ու մուխսի ընի, դա։ Գնաց, գնաց, շատն ու քիչը աստոծ գիտա։ Ճամփին գիլին մի ոշխար ա պատահում։

— Բա՛րև, գել աղբեր,— ասեց ոշխարը։

— Ինձ մի ասի գել, ասա մուխսի,— պատասխան տվեց գելը։

Ըստեղից գնաց ու մի ձիու պատահեց։

— Բարո՛վ, գել աղբեր,— ասեց ձին։

— Ինձ մի՛ ասի գել, ասա մուխսի,— պատասխան տվեց գելը։

Մի քիչ էլ գնաց, պատահեց մի ջորու։

— Բարո՛վ, գել աղբեր,— ասեց ջորին։

— Ինձ մի՛ ասի գել, ասա մուխսի,— պատասխան տվեց գելը։

Գելը գնաց էսպես օխտը տարի ման էկավ ման ու էլի հետ էկավ. հալբաթ որ էսքան վախտին նա մանանա էր ուտում։

Հետ գալիս ջորին պատահեց։

— Բա՛րև, մուխսի,— ասեց ջորին։

— Ինձ մի ասի մուխսի, ասա գել, թե չէ կուտեմ քեզ։

Ջորին ասեց.— Բաս թե էդպես ա, արի նալներիս մեխերը հանի, թե չէ ուտելիս բողազդ կխրվի ու կխեղդվես։

Ջորին ոտը բարձրացրեց ու գելը էկավ, որ նալի մեխերը հանի։ Ջորին որ մի քացի տվեց, հետ-հետ գնաց, վեր ընկավ։ Ջորին փախավ գնաց, իսկ գելը իր ճամփեն շարունակեց։

www.naregatsi.org

էկավ ձիուն պատահեց։

— Բա՛րև, մուխսի.— ասեց ձին։

— Ինձ մուխսի մի ասի, թե չէ կուտեմ քեզ,— պատասխան տվեց գելը։

Ձին ասեց.— Բաս թե որ էդպես ա, արի նստի վրիս, ես քեզ քիչ-քիչ ման ածեմ, հետո կեր։

Գելը նստեց ձիու վրեն, ձին տարավ սար քցեց, ձոր քցեց ու գետնովը տալով ինքը փախավ գնաց։ Գելը գլխին վայ տալով էլի վեր կացավ ու գնաց։ Ճամփին ոչխարը ռաստ էկավ։

— Բա՛րև, մուխսի աղբեր,— ասեց ոչխարը։

— Ինձ մուխսի մի ասի, թե չէ կուտեմ քեզ,— ասեց գելը։

Ոչխարը ասեց.— Լա՛վ, թե որ պտի ինձ ուտես, արի ես քեզ տանեմ սուրուի մեջ, էնտեղ դհա լավերը կան, քեզ համար վեր կալ, տար։

Գելը լսեց ոչխարին ու գնաց սուրուի մեջ։ Հենց որ շոբանի շները տեհան, վրա հասան ու գիլին գզզեցին, թիքա-թիքա արին։

www.naregatsi.org

47. ԱՂՎԵՍԸ ԵՎ ՋԱՂԱՑՊԱՆԸ

Մի ջաղացպան ամեն վախտ տենում էր, որ իրա ջաղացի ալիրը խառնած ա։ Շատ միտք արեց, համա չիմացավ, թե ալիրը ով ա խառնում։ Մի օր նա ղարաուլ քաշեց ու տեհավ, որ մի Աղվես էկավ ու ալիրը պոչով խառնեց։ Ջաղացպանը էն սհաթը վրա հասավ ու բռնեց Աղվեսին։ Աղվեսը շատ աղաչեց, պաղատեց, որ իրան վնաս չտա ու խոստացավ, որ ֆլան թաքավորի աղջիկը իրան կնիկ կբերի։

Ջաղացպանն էլ ասեց.— Լա՛վ, թե որ դու կարենաս էդպես մի լավություն անի...

Մեկել օրը առավոտը քշերով-քշերհանա Աղվեսը ջաղացպանի հետ ճամփա ընկավ։

Աղվեսը ներս մտավ թաքավորի պալատը ու ասեց.— Թաքավորն ապրած կենա, Ջաղշաղ թաքավորի տղեն էկել ա, քու աղջիկը պտի նրան տաս։

Թաքավորը խոսք տվեց, որ աղջիկը նրան կտա։ Էն սհաթը ջաղացպանի ալրոտ ու քնձրոտ շորերը հանել տվեց, թազա մի ձեռք շոր կարեց նրա համար ու ոտից մինչև գլուխ զարդարեց։ Մեծ ղոշուն տվեց նրան ու իրա աղջիկն էլ նրա վրա պսակելով ճամփու գցեց։

Ճամփու կեսին Աղվեսը նրան ասեց.— Ես առաջ-առաջ էթամ ու ձեզ համար կերակուր պատրաստեմ։ Հենց որտեղ տենաք վառած կրակ, էնտեղ էկեք։

www.naregatsi.org

Էս մեր Աղվեսը առաջ գնալով՝ ճամփին մի վիշապ պատահեց, որը մի քանի երկիր առել էր իրա ձեռի տակը։

Աղվեսը ասեց վիշապին, թե.— Ճար ունես՝ տե՛ս, էրկու-իրեք թաքավոր իրար հետ էկել են քեզ վրա կռիվ, որ քու երկիրը խլեն ձեռիցդ։

— Աղվես աղբեր, բա՛ որդի տափ կենամ, որ պրծնեմ։

Աղվեսը ասեց.— Հրե՛ս, էս խոտի դեզի մեջ։

Վիշապն էլ էդպես արեց, տափ կացավ խոտի դեզի մեջ։

Սատանա Աղվեսը խոտի չորս դհիցն էլ կրակ տվեց ու վիշապին մեջը էրեց, ու նրա սաղ երկիրը իրան մնաց։ Էս կրակը որ տեհան թաքավորի մարդիկը դպա էս կրակը վազեցին ու վեր էկան էս վիշապի քաղաքի մեջ։ Էրկու-իրեք օրից հետո թաքավորի ղոշունը ետ դառավ։ Մնացին Աղվեսն ու ջաղացպանը։

Մի օր Աղվեսն ասեց ջաղացպանին.— Որ մեռնեմ, ինձ ո՞նց կթաղես, որ քեզ էս թավուր լավություն արի։

— Խաչով-խաչփառով, ժամով-պատարագով քեզ թաղի, կտամ,— ասեց ջաղացպանը։

Մի օր Աղվեսը ղաստամեռ տվեց։

Ջաղացպանը նոքարին ասեց.— Էս Աղվեսի պոչից բռնի, քուշեն գցի։

Նոքարն էլ բռնեց նրա պոչից ու շպրտեց քուշեն։

Աղվեսը վեր կացավ ու էկավ ջաղացպանի մոտ.— Ա՛յ դու ալրոտ ջաղացպան, ես քեզ թաքավորի որդի շինեցի ու քեզ համար էսպես կնիկ ճարեցի, դու իմ ղաղրը էսպե՞ս ես իմանում։

Ջաղացպանը աղաչանք արեց, որ ների ու խոստացավ, որ մեռնելուց հետո նրան մեծ պատվով կթաղի։

www.naregatsi.org

48. ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չըլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք ունենում են օխտը աղջիկ։ Մի օր մարդը էթում ա գութան անելու՝ հանդը։

Կնիկը ինքն իրան ասում ա.— Էսքան աղջկերքը ես ինչ եմ անում, արի թունդիր վառեմ ու բոլորին ածեմ մեջը, խորովեմ։

Ղորթ որ թունդիրը լավ թեժացրեց ու աղջկերանցը ածեց մեջը։ Համա նրա պստիկ աղջիկ Քյանդեքը մտավ թնդրի ակը։

Երբ որ Էրվեցին, պրծան, կնիկը ինքն իրան ասեց.— Վա՜յ, վա՜յ, մեկին էլա չթողի, որ մարդուս գութանը հաց տանի։

Քյանդեքը թունդրի ակից ձեն տվեց.— Ազի՛, ես ըստի եմ, ես ափուի համար գութանը հաց կտանեմ։

Քյանդեքի մերը հացը կապեց դաստախնում ու կերակուրը փարխաջով նրա ձեռը տվեց ու ճամփու դրեց։ Քյանդեքը հասավ գութանավորների մոտ, կերակուրն ու հացը տվեց հորը։

Հերը ասեց նրան.— Որդի, գնա հրեն քեզ համար ման արի, համա ընդեղ մի խնձորի ծառ կա, նրանից չուտես։

Քյանդեքը գնաց ու հենց որ տեհավ կարմիր-կարմիր խնձորները՝ խելքը գնաց, քաղեց ու կերավ։ Էն սհաթին մի պառավ կնիկ էկավ։ Սա մարդագել էր ու աչքերը քոռ։

Մարդագելը ասեց.— Աղջի, մի խնձոր տաս ուտեմ։

Քյանդեքը ասեց.— Արի մոտ, քցեմ բերանդ։

www.naregatsi.org

Մարդագելը ասեց.— Աչքերս քոռ են, դե բե դի բերանս։

Աղջիկը տարավ ու դրեց մարդագելի բերանը, էն սհաթը նը-
բան բռնեց մարդագելը։ Մարդագելը Քյանդեքին դրեց մեշոկի մեջ,
բերանը կապեց ու քցեց ուսը, գնաց իրա տունը։ Ճամփին Քյան-
դեքը ասեց, որ վեր դնի, ուզում ա պողել։ Մարդագելը վեր դրեց
նրան։ Քյանդեքը մեշոկի մեջ լիքը քար ածեց ու ինքը փախավ
գնաց, չունքի մարդագելը քոռ էր՝ չտեհավ։

Մարդագելը երբ շալակեց մեշոկը ասեց ինքն իրան.— Քյան-
դեք աղջիկ, էս ինչ ծանդր ես։ Տարավ մեշոկը տանը բաց արեց,
ինչ տենա՝ լիքը քար։ Մարդագելը էլի գնաց Քյանդեքի հավարին։
Էս անգամ էլ բռնեց բերեց։ Ճամփին Քյանդեքը վեր էկավ ու մեջը
ձին ածեց, ինքը փախավ։ Մարդագելը շալակեց ու տարավ։

Նա էլի ասեց.— Քյանդեք բալա, վրես ջուր մի ածի,— չունքի
ձյունը հալվում էր ու մեջքը թաց անում։ Մարդագելը տուն հա-
սավ ու բաց արավ մեշոկը՝ տեհավ որ ձին ա։ Մարդագելն էլի
գնաց նրա հավարին։ Էլի բռնե ց ու բերեց։ Քյանդեքը մհանա բրռ-
նեց ու վեր էկավ։ Էս անգամ մեշոկը լիքը փուշ ածեց ու ինքը փա-
խավ։ Մարդագելը շալակեց ու տարավ։

Ճամփին մարդագելը ասեց.— Քյանդեք բալա, ասեղով մի
ծակի մեջքս,— չունքի փշերը մարդագելի մեջքը ծակում էին։ Տուն
հասավ նա ու բաց արեց մեշոկը, տեհավ, որ փուշ ա մեջը։ Մեկել
օրը մարդագելը էլի գնաց Քյանդեքի հավարին։ Էս անգամ բերեց,
ու ճամփին ինչքան աղաչանք արեց աղջիկը, որ վեր բերի, չլսեց
ու դուռ տուն տարավ։ Իրա աղջկանը ասեց, որ Քյանդեքին մորթի
ու թունդիրը վառի, որ գա էփի։ Ինքը դուս գնաց։ Մարդագելի աղ-
ջիկը թունդիրը վառեց, ջուրը հազրեց, ուզում էր նրան մորթի,
համա Քյանդեքը մարդագելի աղջկանը մորթեց ու միսը դրեց պղնձով թունդրի վրա։ Ինքն էլ օջորքը նի էլավ։ Մարդագելը իրիկունը տուն էկավ ու տեհավ, որ թունդիրը վառած ա ու ամեն բան հազիր, ասեց.

Քյանդքի մսիկ անուշ ա,
Քյանդքի մսիկ անուշ ա։
Քյանդեքը վերևից ձեն տվեց.
Աղջկա մսիկ անուշ ա,
Աղջկա մսիկ անուշ ա։

www.naregatsi.org

Մարդագելը զարմացած ասեց.— Վա՜յ Քյանդեք բալա, ո՞նց նի էլար ըտեղ։

Աղջիկը ասեց.— Փետեր դրի ու նի էլա։

Մարդագելը բերեց փետեր դրեց, որ նիլնի, համա վեր ընկավ, կուռը կոտրվեց։

Էլի հարցրեց նրան.— Բալա, ո՞նց նի էլար ըտեղ։

Նա պատասխան տվեց.— Բուրդ գզելու սանդերքը դրի ու նի էլա։

Մարդագելը բերեց սանդերքը դրեց, որ նի ըլնի, համա ոտնեբը ամեն տեղից ծակծկվեցին ու սանդերքի ծերերը ոտի էրեսով դուս էկան։

Մարդագելը հարցրեց էլի.— Քյանդեք բալա, ո՞նց նի էլար ըտեղ։

Նա ասեց.— Աղի ջվալները դրի ու նի էլա։

Մարդագելը աղի ջվալները բերեց դրեց, որ նի ըլնի, համա աղը լցվեց էն ծակոտած տեղերը ու մեռավ։

Քյանդեքը օջորքից վեր ա գալի ու էթում մարդկերանց իմաց տալի, գալիս են՝ ինչ ուներ-չուներ մարդագելը, վերցնում տանում։

www.naregatsi.org

www.naregatsi.org

Գանձասարեան

www.naregatsi.org

www.naregatsi.org

1. ԱՆԳԻՆ ԲԻԼԲՈՒԼ ՈՒ ՏԻԿԻՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Կըլնի-չըլնի, ժամանակով մեկ թաքավոր կըլնի, էս թաքավորին մեկ ժառանգ կունենա աշխարքի էրեսին։

Էդրա տան մեջ մեկ խատ շուատ կունենա. ժառանգին կասի.— Էս ջուխտ շուատը ման կտաս. ում ոտով կըլի, կառնիս։ Էն աղջիկ շաշ չըլի։

Էկավ վախտին, էս թաքավորը վաղճանվեց. էս տղեն ուզեց կարգըվել, վազիր, վաքիլ ընկան մեջ, ում աղջիկը կուզե, կարգեն։

Ասաց.— Իմ խոր վասիաթ կա։

Էն ջուխտ մաշիկ վեր կալեց, ընկյավ քաղաքի մեջ ման գալի, ո՛րտեղ որ դպավ՝ վեզիրի դուռ գընաց, վեքիլի դուռ գընաց, խարստի գնաց, մեկի ոտով չէղավ։ Քաղաք քաղքով ման էկավ, իլաճ մուքուն չէլավ։ Մեկ շաշ աղջիկ պատահեցավ՝ ինչպես ոտով ձևիս, կարիս։

Տղեն ասաց.— Դյու շաշ իս, իմ խոր վասիաթն ա, քե չպիտի առնիմ։

Շատ տեղ դիպավ, իլաճ չէլավ, վերջ գնաց շաշ աղջկա վրեն կայնավ։ Վեքիլ, վեզիր բերեցին, կապեցին էդ աղջկան, պսակեցին։ Բայց ի՛նչ անես, էդ աղջկան մեկ խատ զարկյար սիրող ունի։

Էդ ասենք՝ էս աղջիկ ինչ արավ. լըղըմ զարկեց, ինչքան թաքավորի խազինեք ու մալ ու դալվաթ կար, քաշեց գետնու տակը,

26—2573

www.naregatsi.org

թաքավորի տղեն ավուր խացի կարոտ քցեց։ Շատ խղճացավ. «Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ, մշակութուն անեմ»,— ասաց։

Տղի մահալ կտրեց էդ անիրավ աղջիկը, ամեն օր ասում էր.— Քու պատանք կարիմ, անիրավ մարդ, ինչու չէրթաս աշխատիս։

Էս աղջիկը ի՞նչ անում ա — օրական մըկ անգամ խրկում, զարկյարին կանչիլ ա տալի, իրա խամար մատանիք շինի։

Տղեն կէրթա բազար, որ իրա խամար աշխատանք անի։

Մեկ օր տեսավ մե վաճառական մարդ.— Ջանը՛մ,— ասաց,— էս տղեն ինչո՞ւ աշխատանք պտնի անի։

Կանչեց, ասաց.— Տղա՝, ի՞նչ ա պատահեր քըզի, որ քյասիպութուն քըզի հաղթեր ա։

— Ա՛յ հայրիկ, ինչ ասեմ քեզ։— ասաց,— իմ անզգամ կնիկ էսպես օյին կխաղա իմ գլուխ, ընձի տանջում ա։

— Ըսկի քըզի ի՞նչ ասում ա։

— Օրական մե անգամ ասում ա. «Գնա՛, զարկյարին կանչի, ընձի խամար մատնիք շինի»։

Էս վաճառական մարդ շատ սիրտ ցավաց էդ էրեխու վրեն, ասաց.— Քեզ տամ մի մանեթ փող, էս օր բանելու մի գնար. գնա էս օր պարկի, հանգիստ քնի. հ՞իրկուն եթե կնիկ ասի. «Գնա՛, զարկյարին կանչի», դու գնա, կանչի, դու տանից դուս չգաս. մտիկ արա իրարու ինչ են ասում, ինձ ասա։ Եթե գինի, արաղ կխմեն, քըզի էլ տան, դու ածի քու յախով, մինչև տաս ստաքան, քըզի կդնիս գինովութուն, կպառկես, մտիկ կանիս, ինչ են ասում։

Էս տղեն գնաց տուն. մութ կոխեց, իրա անզգամ կնիկ էդրա յախեն քակեց.— Ա՛յ մարդ— ասաց,— տեսնամ, ինչ էս աշխատեր։

Ասաց.— Մե մանեթ փող եմ բերեր։

Էս մի մանեթ փողը ձեռքից առավ. խրկեց, էրկու խավ բերել տվեց, ասաց.— Գնա՛, զարկյարին կանչի, թող գա մեզ ղոնախ։

Տղեն գնաց զարկյարին կանչեց. տարավ տունը։ Խրկեցին, գինի, արաղ բերել տվեցին, խմեցին. տղեն տաս ստաքան խամպրեց, հ՞ուրին տվեց գինովութուն, պառկեց։

Էս անզգամ կնիկ ասաց.— Բոլ չէլավ, դուն թաքուն էթաս ու գաս, ախր մեր ոսկի խազինեք գետնու տակ փթեց։

— Ապա ի՞նչ անենք,— ասաց զարկյարը,— էդրա շլինքը կտրենք, իրար առնենք, կյանք էնինք աշխրքի էրեսին։

www.naregatsi.org

Զարկյար ասաց.— Մինչև քու օսկիք, ապրանք չտենամ, քըզի չպիտի առնեմ։

Ցանար վառեցին, աղջիկը առաջ ընցավ, զարկյար քյամակից, տղեն էլ զարկյարի քյամակից։ Մտան նեքսև, զարկյար ապրանք որ տեսավ, աչքեր սառեց։

Տղեն տեսավ, որ իրա խոր ապրանք բիրատի պախած ա, թե օսկիք, թե արծաթ, թե ակնունքներ։

Տղեն ետ դառավ դպա իրա տեղը։

Զարկյարն էդ ապրանքի մեջ ման գա, գա, տղի շըլինքը կտրի։

Մինչև ման էկավ, ժամեր տևեցին, ասաց.— Էս չէլավ, էսօր լիս ա, էգուց գամ, գլուխ կտրիմ։

Աղոթարան բացվեց, տղեն իրան քցեց վաճառականի մոտը, ասաց.— Սերն աստուծո, ընձի պրծացուս

— Ինչպե՞ս տեսար։

— Տեսա, որ իմ խոր խաղինեն բիրատի մաղազեն էր։

Ասաց.— Ա՛ռ, քըզի մե մանեթ փող տամ, գնա, մե զողալ առ, կըտանիս տուն, կպախիս. հ՚իրկուն կողորկե զարկյարի քամկից. մի՛ կանչի։ Կէրթաս տուն, դռներ կփակիս, կառնիս դակենակը, էն կնկան էնքան կտփես, չանք զողալ կչարդի, մինչև փետ չարդի, կմեռնի։ Լիս կբացվի, էդրա աղբրներ դավի կանին. «Ինչու սպանիր մեր քիրը». դու ասա. «Ես խապարութեն չունեմ», թե որ շատ կզորին, կասես. «Իմ տներ կծախեմ, կիտամ էնդրա արունքը։ Էն ժամանակ տոլք կհանին, դուն էլ տոլք կէրթաս մինչև էրկու միլիոն, կկայնիս։ Իրեք օր ժամանակ կուզես, բանալիք քու ձեռ կպախես, իրեք օրը ինչ որ կա, կքաշես իմ տուն։

Իրիկուն տղեն կէրթա տուն, կնիկ կասի,— Ինչ իս բերե։

Կասի խինդ շահի փող իմ բերեր։

Տասը խինդ շահի կտա կնկան։

— Շուտով գնա՛, զարկյարին կանչի, թող գա։

Կէրթա մեկ զողալ կառնի։ Մութ կկոխի, տուն կյուգյա։

Կնիկ կասի.— Զարկյար խի՞ չէկավ։

— Հըմի կյուգյա,— ասաց։

Մեկ սահաթ, էրկու սահաթ, ոտքը քաղաքին մեջ խանդարտեց. էս տղեն դռներ փակեց. զողալ քաշեց, էնքան տվեց, մեռավ։

Լիս բացվավ, էդրա աղբերներ դավի արևցին։

— Իրա մախով ա մեռե, ըսկի խաբարութուն չունիմ,— ասաց։

www.naregatsi.org

Դրեցին տղի շլինքին, աղջկա արունք ուզեցին։

— Զատ չունեմ, մե տուն ունեմ, ծախեք, առեք արունք։

Տոլք կանչեցին, մեկը խարիր մանեթ տվեց, մեկ-մեկ քեսա։

Խոսքը գնաց, խասավ զարկյարին. «Ֆլան տները տոլք ա»։

Զարկյար տեսավ, օհո՛, իրա սիրող սպանած ա. լաց էլավ, ասաց.— Էս տուն ընձի կվայելե, քանի որ խաց ու պանիր կերեր եմ, ես գնահատութուն կանեմ իրեք հարիր մանեթ։

Տղեն ասաց.— Ես մեռա՞ծ իմ, խաղար մանեթ կիտամ։

Զարկյար ասաց.— Միլիոն կիտամ, չեմ թողիր ոչ ով առնի։

Տղեն ասաց.— Էրկու միլիոն ընձի մոտ։

Զարկյար.— Իրեք միլիոն ընձի մոտ,— ասաց։

Էս տոլքը զարկյարի վրեն կայնեց։

Տղեն ասաց.— Ընձի իրեք օր ժամանակ տվեք։

— Իրեք չէ, չորս օր էլ քու ձեռք մնա,— ասաց զարկյար։

Մութ կոխեց, գնաց էրկու խատ խամալ գտավ, հախը կտրեց գիշերվան իրեք մանեթ, խազինեք բիրետի կրեց վաճառականի տունը։ Էքսի օրը զարկյարին կանչեց, բանալիք զարկյարին ձեռք տվեց։ Զարկյար առավ բանալիք, ուրախ-ուրախ գնաց մտավ մաղազին, մտավ որ զատ չկա, դարդակ ի. գլոխ էս պատին տվեց, էն պատին տվեց, չորացավ։

Խաբար տանք էս տղի մոտիցը. էն տղեն հ՞իրկուն մութն էր, գնաց վաճառականի տունը, պտի խացկերութուն անեն։ Վաճառականը ասեց.— Ընձի մեկ խատ աղջիկ ունեմ, անդամալուծ ա. մեկ գունդ միս ա, ոչ ոտը ունի, ոչ բերան, ոչ ձեռք ունի, ոչ քիթ. թե որ կառնիս, կտամ կարողութունս էլ քեզ. ես եմ. իմ մեկ կին, թե որ չառնես, քեզ զատ չեմ տալի. հ՞ուր էկեր ես, էն տեղ գնա։

Տղեն ասաց.— Ես մեկ գունդ միս ի՞նչ անեմ։ Վեր կացավ, գնաց, աղջկա օթախի դուռ բաց արեց, տեսավ որ մեկ հյուրի-փերի աղջիկ նստած ա, նե ուտես, նե խմես... շատ սիրուն աղջիկ ա։ Հետ դառավ, գնաց անոր մոտը։

— Հայրի՞կ,— ասաց,— էս աղջիկը տու ընձի, իմ մալ քըզի։

Ասաց.— Տվեցի էն աղջիկը, իմ մալն էլ քեզ, քու մալն էլ քեզ։

Տղեն պսակվեց, պրծավ։ Մեկ էրկու տարի տղեն էս տեղ մնաց, համ զոքանչը, համ աները մեռան, մնացին ինք, իր կին։

Տղեն ասաց.— Էս տեղ մեզի ձեռք չտար, շատը թողենք. քիչը վե կալենք, էթանք։

www.naregatsi.org

Գնացին, Ստամբոլա քաղաք դուա էլան։

Էս տղեն մեկ բոդնոց ակունք-անգին քար լիք լցեց. տարավ Թաքավորին հետիյե. Թաքավոր գնահատեց, որ մեկ խատ անգին քար քաղաք կառնի ու չծախի։

— Ա՛յ տղա,— ասաց,— ինչ ես խնդրում։

— Թաքավորի սաղութուն եմ ուզում. ես էկեր եմ ղարիպ երկրե, քեզ ժողովուրդ դարձե։ Ընձի խամար մեկ տեղ տուր՝ տուն շինեմ, նստեմ միջին։

Թաքավոր մտածեց. մեկ խաս պաղչա ուներ, տվեց ըդրան. տղեն քառասուն ատեճե խորոտ տներ մի շինեց, իրան Մանուշակին մեջը դրեց։ Բայց ինչ անես, որ միտքը փոխվավ՝ կինը թողավ, որ էրթա էրուսաղեմ, մուղսի դառնա։ Մտածում ա՝ օ՛, ես որ էրթամ, իմ կնիկ ո՞ւմ խետ պտի խոսա, էրթամ մեկ խատ ծառա բռնեմ։

Վեր կացավ գնաց բազարը, տեսավ որ մեկ մարդ մեկ խատ բիլբուլ ա ծախում։

— Բիլբուլի մարիֆաթը ի՞նչ ա, ա՛յ մարդ,— ասաց.

— Մարիֆաթը էս ա. մարդի խետ խոսում ա։

— Դին ի՞նչ ա։

— Տաս օսկի ա,— ասաց։

Բիլբուլը առավ, տարավ Մանուշակ խանումի խամար։

— Կնի՛կ, շատ լավ բան ա, ծառա բերեմ՝ լավ չի, էսի քըզի ձեռքատու յա։— Դռներ փակեց, թողեց բիլբուլ տունը, գնաց։

Էդ քաղաքի Թաքավոր մեկ խատ տղա ունի, օխտը տարի մեկ ջեյրանի քամակից գնացեր ա. օխտը տարին թամամեց դարձավ-էկավ. տեսավ տներ մե շինված, էդ ջեյրանը մեջը նստած ա, ասաց Թաքավորին.

— Հայրի՛կ, քու աչքն էլ, իմ աչքն էլ լիս ըլլի, իմ ջեյրան բերիր, պահ տվեր իս։

— Հայ որդի՛,— ասաց,— խո դու գիժ չիս. ի՞նչ ջեյրան, էդրա տերը քաղաք կառնի, չծախի, հեռու կաց։

Էդ տղեն խռովեց. տանից դուա էկավ, գնաց մեկ ջատու պառավի պատահեց.

— Անա՛, աստուծո սիրուն ըլլի, դու սրուի կողմանե ինչպես ես։

— Շատ լավ, ինչպես քու սիրտ ուզա։

— Կարող ես իմ ջեյրան ընձի խամար բերես, ի՛նչ ուզես՝ կտամ։

www.naregatsi.org

— Ընչի՛ կարող չեմ. էգուց գնամ, բերիմ։

Ջասես, անզգամ պառավը ջատրպազ սեր էրավ, թռավ, մտավ ագուշկով նեքսև.

— Ամա՛ն, քվոր աղջիկ,— ասաց,— բարով-սիրով էկեր ես էս տեղ. չասես ընձի մորքուր կա. էրթամ, տեսնամ ինչպես ա։

— Ա՛յ ջանըմ,—ասաց,—ա՛յ գյոզմ, ընձի էստեղ բարեկամ չկա։

Պառավ էս կնկան համոզեց, քարոզեց, որ տանի ղոնախ։

Բիլբուլը կանչեց.— Խանը՛մ, Հ՞ուր ի՞ս էրթում. կաց, բան եմ ասըմ, նոր գնա,— խանըմ կայնեց։

— Խանը՛մ,— ասաց,— ժամանակով մեկ ախքատ մարդ կըլի, էս ախքատ մարդուն սիրուն կնիկ կունենա. բայց խանըմ, լավ ականջ էրա, գյացին մեկ գյամուչու պատահեցին. նստան գյամին, որ էթան իրանց հայրենիքը դուս գան։ Դուս էկան, փող չկա որ տեն գյամուչուն։— Բիլբուլ ասաց.— Խանը՛մ. լավ ականջ էրա, գյամուչին սաստեց. «Փո՛ղ տուր». թե՝ «Փող չունեմ տամ, որտուց տամ»։ Ասաց. «Կնիկ թող մնա փողի գրավը. դու գնա, բեր»։ Խանըմ, մինչև որ տուն գնաց, էս անիրավ գյամուչին էս խեղճ աղքատի կնկան փախցուց։ Էս ախքատ մարդը մնաց փոր ու փոշման, ա՜խ-վա՜խ անելով։ Խանըմ, լսեցիր, ինչ էղավ, ինչ օյին էկավ ախքատի գլոխ, քու գլոխն էլ օյին կգա, մի՛ գնար։

Խանըմ բիլբուլի խոսքին ականջ էրավ, ետ դառավ, նստավ, ասաց.

— Պառա՛վ, դու գնա, ես չեմ իգա։

Պառավ գնաց տուն, Թաքավորի տղեն ասաց.

— Անիրա՛վ պառավ, ինչու չբերեցիր իմ գյուլի փերին։ Ասաց.

— Խնդրում եմ, ժամանակ տաս. սապոկներ անկարել էր։

Լուսուն էլի վեր կացավ, գնաց-գնաց, մտավ նեքսև։

— Ա՛յ քվոր աղջի՛կ,— ասաց,— իմ տղեն պտի պսակվի, առանց քըզի չի պսակվի։

Վեր կացավ, կնկան խելք էր, իրան շորեր խագավ. էլի պտի գնա, էլի բիլբուլ ձեն տվեց.

— Խանը՛մ, Հ՞ուր ես էթում. կաց, պտի բան ասեմ, ախր քըզի բան ասեցի, դու չես ասեր, թե էդ ախքատի կնկան գյամուչին տարավ, որտեղ դուս բերեց։

Էս անզգամ պառավը բիլբուլի վրեն բարկացավ, ուզեց շլինք քաշեր։ Խանըմ ասաց.

www.naregatsi.org

— Դե՛, իմ բիլբուլին բան մի ասի, ի՛նչ կասի, թըղ ասի։

— Խանըմ,— ասաց բիլբուլ,— գյամուշին առավ կնիկը, տարավ· քաղաքին մոտացավ, գյամին կայնացրուց, ասաց. «Այ ախբատ կնիկ, տանեմ քըզի առնեմ»։ Ասաց. «Ինչո՞ւ ախբատ եմ, ի՞նչ, ես գե՞ղ եմ, գնա՛, քըզի բարեկամ չկա՞, ա՛ռ, արի, ընձի պատիվով տար»։ Գյամուշին վեր կացավ, գնաց իրա տունը. իրան մարդ, բարեկամ թոփ արավ, դափ ու զուռնա վեր կալեց, գնաց ուր կընկան վեր կալի, բերի։ Գնաց որ ոչ գյամի կա, ոչ կնիկ, փոր փոշման մնաց մղկտալով, լալով։ Խանը՛մ,— ասաց բիլբուլ,— ոնց որ գյամուշին փոշման էլավ, դու էլ կըլիս, մի գնար էդ պառավի խետ։

Խանըմ էկավ, շորեր խանեց, նստեց.

— Գնա՛, չըմիգա,— ասաց։

Պառավ վեր կացավ, գնաց տունը. թաքավորի տղեն էկավ.

— Չի բերեցի՛ր, ինչո՞ւ ընձի կխափես։

— Ասաց. «Խնդրում եմ, ընձի մինթանա, կար ունեմ, կարեմ, էգուց կգամ»։

— Բոլ չէլավ ընձի խափիս, քու շլինք կկտրիմ։

Սերպահդ պառավն էր, իրան ջան անծուխ քսեց, կապըտցրուց, գնաց մտավ նեքսև, ասաց.

— Քվոր աղջիկ, աստրծու սիրուն ըլլի, էնքան իմ տղեն ընձի տփեր ա, «Առանց իմ մոր քվոր աղջկան չեմ պսակվիր» ասըմ ա։

Կնկան խելքն էր, որ մղկտաց, էլի էլավ, իրա շորերը խագավ։

Կնիկ դռան վերեն խասավ, որ պետք է դուռ բաց անի.

— Խանըմ, հ՞ո՞ւր ես էթում,— ասաց բիլբուլ,— կաց՝ բան ասեմ, բա չե՞ս ասեր բիլբուլս սոված է, ծարավ ա։

Խանըմ տվեց բիլբուլին ջուր, կուտ։

Պառավ մոտացավ դրա շլինք կտրի, բիլբուլը պոռաց.— Ամա՞ն, խանըմ, էդի մի թողե ընձի մոտ։

Ասաց.— Դե՛ն, պառավ, չմոտենաս իմ բիլբուլին։

Դարձավ բիլբուլին.— Դե, ասա, բիլբուլ,— ասաց խանըմ։

Ասաց.— Խանը՛մ, չըս ասի, էն խեղճ քյասիպ կնիկ առանց մարդի, ծովի վրա գյամին առավ, ո՞ւր տարավ, գնաց։

— Դե՛, բիլբուլ, ասա՛, տեսնամ, ո՞ւրտեղ գնաց։

— Գնաց, մե թաքավորի պատահեց. ամա խանըմ, լավ ականջ էրա. էս թաքավոր էս կնկա բռնեց, գյամու միջից տարավ. թե՝ «Քեզ պտի առնեմ», ասաց։ Էսի ասաց. «Ես քու լայեռի աղջիկ

www.naregatsi.org

չեմ, բոշի աղջիկ եմ»։ Թե. «Հնար չկա, ուզում ես բոշի ըլես, ուզում ես մըթրըպի ըլես, քեզ պտի առնեմ»։ «Ընձի խինգ օր ժամանակ տուր, ես քու ղառավաշներու խետ ման գյամ, նորեն գյամ»։ Է՜յ, խանըմ,— ասաց բիլբուլ,— էդ թաքավոր քյառսուն ղառավաշ, մեկ կնիկ դրեց խետ, ման էկան, գնացին ծովու ղռաղը։ Էդ կնիկ՝ քյառսուն ղառավաշ, թաքավորի կնիկը գյամու մեջ առավ, գնաց։ Խինգ օր թամամեց, թաքավոր էլավ, ման էկավ. ոչ ղառավաշ կա, ոչ կնիկ կա. փոր-փոշման նստեց, ասաց. «Հեյ վա՜խ, հեյ վա՜խ, համ գնաց քյառսուն ղառավաշս, համ գնաց կնիկս, համ գնաց էն կնիկ»։ Շատ փոր փոշման էլավ թաքավորը։ Խանը՛մ,— ասաց բիլբուլ,— եթե դու անզգամ պառվի խետ գնացիր՝ փոշմանիս, դու արի, մի՛ գնար։

Խանըմ բիլբուլի խոսքին ականջ էրավ, շորեր խանեց.

— Պառա՛վ, դու գնա,— ասաց։

Պառավ վեր կացավ. լաց ըլելով թողեց, գնաց։

Թաքավորի տղեն ասաց.— Պառա՛վ, անզգամ պառավ, ինչո՞ւ չբերեցիր։— Ուզեցավ պառվու քելլե անի։

Պառավ շատ աղաչանք էրաց.— Ընձի մի՛ սպանիր, էգուց անպատճառ կբերեմ։

Լիս բացվեց. պառավ վեր կացավ, իրան քցեց խանըմի դուռը, թե.

— Աստըծու սիրուն ըլի, վեր կաց, գնանք ընձի իմ տղեն էնքան ջարդեր ա, պտի սպանի։

— Պառա՛վ, ջեհնամ, էնքան աղաչանք կանես, վեր կաց էթանք։

Վեր կացան, դուռը բաց արեց, պտի էթա, բիլբուլը կանչեց.

— Խանը՛մ, Հ՞ուր էս էթում, չես ասի. «Կա՛ց բարի, պտի էթամ»։

Պառավ բիլբուլի վրեն բարկացավ.

— Անզգա՛մ, բոլ չէլա՞վ։

— Ամա՞ն, խանըմ, ասա պառավին դեն էթա։

Դարձավ.— Խանը՛մ, մեկ բան պտի ասեմ, ասեմ ու գնա՛։

— Դե՛, ասա, բիլբուլս։

— Խանըմ, էս գյամու մեջ տղամարդ չկա. բիրետի Հարմատ ին. էս կնիկը առավ էս քյառսուն ղառավաշը, թաքավորի կնիկը, ո՞րտեղ գնաց։

— Ես ի՞նչ իմանամ. ո՞րտեղ գնաց, դու ասա՛, ո՞րտեղ գնացին։

www.naregatsi.org

— Գնացին, պատախան քյառասուն ու էրկու հարամու, համա, խանըմ, լավ ականջ էրա, էս քյառասուն հարամիք լցվեցին գյամու մեջը, քյառասուն էրկու կնիկ դյուա բերեցին, ամեն հարամի մեկ ղառավաշ փախցրուց, իրա խամար հեռու կայնացրուց. էս քյասիպ կնիկ ի՞նչ արավ.—«Է՞յ, հարամիք, էդ ինչ եք անըմ,— ասաց,— դրուատ որ տղամարդ բաղդ չունի»։ Է՞յ խանըմ,— լսե,— էս քյասիպ կնիկ ինչ արավ. կանչեց հարամու բաշուն. «Ես ութ ավուր ճանապար քե խամար իմ էկած. դուք քյառասուն ու էրկու հարամի իք, մենք էլ քյառասուն ու էրկու հ՞արմատ ենք. ձեր հարամու բաշին ո՞ր մեկն ա»։ Էն մեկն ասաց. «Ես իմ»։ Ասաց. «Դու իմ մարդն իս, արի՛, իմ կշտին կայնի»։ Ամեն հարամու մեկ ղառավաշ տվեց. բայց ասա, խանըմ, ի՞նչ թավուր տվեց մարդի։ Ասաց. «Իմ իրավունքով պտի ըլի, կբերեք քյառասուն տիկ գինի. կբերեք տաս խատ օխշար, որ մորթիմ, խարսնիք անեմ»։ Համա խանըմ,— ասաց բիլբուլ,— լավ ականջ էրա՝ կնիկն ինչ ա անըմ։ Էս քյասիպ կնիկը, էս թաքավորի կնկան, ղառավաշներուն ասաց. «Մեկդի ձեր մարդին չի մոտանեք. ամեն մարդ իրան մարդին գինի խմացնի, չըլլիմ, չիմանամ դու խմեք։ Կխմացնեք. բիրատի գինովացնեք. ընդոնց շորեր կխանեք, խագնեք։ Ասպասները կկապեք, ձիանք խեծնեք, որ ըս տեղեն փախնենք»։ Խանըմ, լավ ականջ էրա. էկան օխշար մորթեցին. խարսնիս արեցին, խմեցրին, շորերը խագան, ասպասները կապեցին, խեծան, փախան։ Էն պաշտան հարամիք էլան. տեսան ո՛չ շոր, ո՛չ ձիանք, ո՛չ ասպաս, ո՛չ կնանիք. չփլախ էնտե նստած են։

Էդ կնանիք գնացին մե հ՞ուրիշ քաղաք դուս էկան։ Էդ քաղքի թաքավոր վախճանած էր, դոլվաթ ղուշի կա, էսոնց կարգադրութուն էնպես ա, որ գցում են, ում գլխուն վե գա՝ կդնին թաքավոր։ Դոլվաթ ղուշին գցեցին, էկավ, իջավ էս քյասիպ կնկա գլխին։ Համա խանըմ, էս տեղի լոթիք-փոթիք տփեցին, քաղքից դուս արեցին։ Էլի ղուշը թալեցին, էլի քաղքից դուս գնաց, նստավ ընդոր գլխի վրեն. էլի պտի ջարդեն, հոգեվախ մարդիկ էկան, ասին. «Աստված էս ա կամեցե»։ Ընդունեցին, խանըմ,— ասաց բիլբուլ,— լավ ականջ էրա, տե՛ս, ի՛նչ արավ կնիկ. կանչեց էդոնց մարդեր, ասաց. «Վաքիլ-վազիր ի՛նչ որ կա, իմ մարդեր պիտի անեմ»։ Բիրատի իրա մարդեր պախեց իրա մոտը։ Բերեց իրա պատկերը քաշել տվեց, աղբրի վրա զարկել տվեց. թանպիհ արեց, ինչ կանդար

www.naregatsi.org

աղբուր կա, փակեն. մնաց բաց էդ աղբուր։ Բայց խանում, չասե՛ս, համ գյամուչին, համ իրա մարդը, համ թաքավորը, համ քյառասուն հարամիք իրարու քամակից մանն էին գալի։ Էկավ էս կնկա մարդը. քաղաքի մեջ ջուր չգտավ, մարդի մեկ ասաց. «Հա, էն տեղ աղբուր կա, գնա՛, խմի՛»։ Գնաց, ջուր խմեց, աչքը ընկավ պատկերքին՝ ա՜խ քաշեց. ղարավուլներ բռնեցին, տարան թաքավորի մոտը. օրերից մեկ օր գյամիչին էկավ, էնպես ջուր խմեց, ա՜խ քաշեց, էն էլ դրեց մեկ մութ օթախ, խաց, ջուր չտվեց։ Խանում, չես ասի, խեղճ հարամիք ինչ էլան, առանց շորի, տկլոզ։ Էնդրնե էտև քյառասուն հարամիք էկան. ընդոնք էլ ջուր խմեցին, պատկերը տեսան, ա՜խ քաշեցին, էնոնք էլ բռնեց։ Թաքավորն էլ դերվիշ ղըլըղինտա էկավ, էն էլ բռնեց։ Խանում,— ասաց բիլբուլ,— տե՛ս, ինչ դատաստան պտի անի։

Էս կնիկ մեկ-մեկ խարցուց. էդ հարամիք ասացին. «Մեր մեջ քյառասուն էրկու հարամատ պատահեցան, մենք թամազու[1] ենք, կին չունենք, մեզի կին առինք, մեզի խափս տվեցին. մեր բաներ առան, տարան»։ Թաքավոր հրամայեց ձի, ասպապ ու շորեր տան ուրանց. ամենքին էլ շորս խարիր մանեթ տվեց, որ էթան, պրսակվին։

Համա խանում, կանչեց թաքավոր բերել տվեց, խարցուց. «Դյու ֆլան քաղքի թաքավոր իս, խի՞ դարվիշ ղըլըղնտա իս»։ Էն էլ պատմեց իր գլխից անցածը։

Կանչեց, ընդրա կինը բերել տվեց. «Կճանչնա՞ս,— ասաց,— ա՛ռ, գնա»։ Համա ղառավաշներ չգային։ Կանչեց գյամուչուն, գյամուչին ասաց. «Մեկ կնիկ ունեի, առավ իմ գյամին, փախավ»։ — Քու կնիկն էր թե քու սիրող։

Ասաց. «Վալա՛, իմ սիրողն էր»։— Մարդ ուներ, թե չունե՞ր։ «Մարդ ուներ»,— ասաց։— Որ ուներ, խի՞ առեցիր։ «Գյամուն փող են տալի»։ Կանչեց էրկու ջալատ, գլոխը զարկին։ Կանչին էն կնկա մարդին։ Խանում,— ասաց բիլբուլ,— դու տեսար էն կնիկ քանի մարդու ձեռք ընկավ. չխափվավ, դու էդա փիս պառվումենե խափվեցար։— Պառա՛վ, ե՛լ, գնա՛,— ասաց։

Խանումի դուռ տփեց իրա մարդը։ Պառավը փախավ, իրա մարդը մտավ նեքսև։ Կերան խման։ Բիլբուլի գինը խազար մանեթ էր։

---

1 Կարոտ (Ս. Բ.)։

www.naregatsi.org

2. ՇԵԽ ՍԱՏԻ

Շեխ Սատի անվոր մե մարդ կըլլի, չկարգվի. ասին-ասին, էս մարդի խելքը գողացան վազիրն ու նազիրը։ Էն խոսք տվեց.

— Ի՞նչպես կարգվիմ,— ասաց,— էնպես աղջիկ պտի առնիմ, որ խում կաթ ուտող չըլլի։

— Ինչպե՞ս անենք, էփած կաթ ուտող գտնենք,— ասին։

Ընկան աշխար ման էկան. մեկ քյասիպ կնիկ անճար ու աղքատ աղատվեց՝[1] մե աղջիկ բերեց, չթողեցին իրա մոր կաթ ուտեր. տվեցին փարի զոռը, բերեցին, տարան տվեցին Շեխ Սատուն։

Շեխ Սատին բերեց, դեղրունքով էդ աղջկան պախպանեց։

Օրից մե օրը տասնըխինգ տարեկանը լմացավ, բերեց կարգեց իրա վերեն։

Սատին քյառուն ատեճե մե տուն շինեց, ասաց.

— Իմ Հարմատ[2] դյուա չկա, Հաչք չգցի մարդի։

Դռներ վերեն փակեց, ավ-ղուշ անելու կէրթեր։

Կամ մե տարի, կամ էրկու տարի յոլա գնացին։

Օրերից մե օրը էկավ ճհելի մեկը փենճերի տկով գնաց. մտիկ տվեց, մի շատ սիրուն-գեղեցիկ կնիկ փենճերի մեջ նստած ա, ա-

---

1 Մնավ (Ս. Բ.):

2 Կին (Ս. Բ.):

www.naregatsi.org

սաց. «Էս կնիկ իմ կնիկ ըլլեր, ես ավուր խացի կարոտ ըլլեի»։ Իրա մտքի մեջ ասաց, ընցավ։

Բայց ինչ ասե՛ս, էս կնիկն էլ վերևից սիրտ խարապ էլավ ասաց. «Ա՜խ, էս մարդը քեշկա իմ մարդը ըլլեր»։

Էս մարդը գնաց, մե ճատու պառավի թուշ էլավ, ասաց.

— Նանե՛, դու սրոի կողմանե ի՞նչպես իս։

Ասաց.— Ինչպես որ պտուկ եռա, խուփը բերնին պուղը դուշգա, ես էնպես իմ։

Խանեց տաս օսկի տվեց պառավին, պառավ ուրախացավ։

— Նանե՛,— ասաց տղեն,— կարա՞ս ընձի տանես էն կնկամոտը։

— Իմ փեշեկիս անունը ի՞նչ ա,— ասաց պառավը։

Մե խատ դյուլկեր բերել տվեց պառավ, ասաց.

— Ի՞նչ տամ քե, մե խատ ղութի շինես էս պոյին, էս չափին։

Պառավը մե օսկի տվեց, դյուլկերը ղութին շինեց։

Բերեց տղեն դրեց միջին, տվեց խամալի շալակ, գնաց։

Էս ճատու պառավ ի՞նչ արավ. թեզպեխ բռնեց ձեռը, ասաց. «Տեր օղորմյա, տեր օղորմյա» ու գնաց Շեխ Սատու դռան կայնեցդյուռ փակ էր։

Շեյխ Սատին նեճրից էկավ, տեսավ մեկ պառավ դռան կայնած ա.

— Նանե՛,— ասաց,— դյու ի՞նչ կնիկ իս։

— Ես կէրթամ էրուսաղեմ, քե պախապան կենա, մե քիչ ամանաթ կա, քե պախ տամ։

— Պառա՛վ, տեղ շա՞տ, մե տեղ քցի, թող էրթա։

— Դյո՛ւ, քու հ՚արմատը դո՞ր կքնիք, էն տեղ պախի։

— Տա՛ր էն օթախը, որ ես իմ հ՚արմատը պառկում ենք։

Տարավ, էն օթախի մեջ դրեց, ինք թողեց գնաց։

Աղոթարան բացվեց, Շեխ Սատին էլի գնաց նեճիր։

Էս տղեն ղութու մեջ խաղաց։

Էս կնիկ ասաց.— Ինս ես, ճընս ես, արի՛, ես կտոր-կտոր կըլլիմ։

Տղեն դյուս էկավ, կնիկ տեսավ իրա տեսած տղեն էր, փաթաթվեցին իրար, քեֆ ուրախութեն արեցին։

www.naregatsi.org

Մեկ օր, երկու օր վրեն ընցավ։ Շեխ Սատին չգնաց նեճիր, ընկավ քամակի վրեն ու պառկեց, տեհավ օճոռքի վրեն մեկ թուք կախ ընկեր ա պատից, շորացեր ա։

Շեխ Սատին շատ դիտող էր, ասաց իրան-իրան. «էս թուք ես իմ թքիր, իմ կնիկ վերև չկարա թքի, վերև տղամարդիկ կթքեն»։ Գնաց օտաց ճանապար, մտիկ տվեց, որ տղամարդի ջրվեթ կա. «Հա՜յ-վախ, հա՜յ-վայ,— ասաց,— իմ կնիկ խարապ էլավ»։ Լիս չընկավ հեշ. իրա մտքի մեջ պահեց։

Կնկա շորս, խինդ ավուր խաց տվեց, դռներ փակեց, գնաց։

Գնաց մե շոլ դաշտի մեջ, մութ կոխեց դրա վերեն. մեկ չինարի ծառ կար, իրա ձին պխովեց, ինք վեր կացավ, չինարի վերեն նստեց։ Գիշերվա վախտին մի ծանտր բաղրկյան էկավ, էդ չինարի տակ իրա բեռներ թափեց, իրա տավար, ձիանք, դեվեքը տարան պահելու. մնաց բաղրկյան բաշին։ Իրա ճեպից խանեց թութունի ղութին, որ ափսունեց, ղութուց մեկ խատ կնիկ դյուա էկավ, որ կնիկ դյուս էկավ, բաղրկյան բաշին քնեց։

Էս կնիկ մե խատ քնու ուլինք դրեց բաղրկյան բաշու ականջը։

Կնիկն ա, իրա ծամերու միջից խանեց մի կապոց, ափսոնեց. ո՛ր ափսոնեց, կապոցի միջից էլավ մե խատ ճեհել տղա, իրար խետ կերան, խմեցին, քեֆ արեցին։

Էլի էդ կնիկ էդ մարդ դրեց կապոցը ու դրեց ծամերու մեջ, քնու ուլինքը բաղրկյան բաշու ականջեն խանեց. էն կնիկ իրա մարդու խետ խաց կերավ, պրծավ։ Էլ էս մարդը դրեց ղութու մեջ, դրեց ճեպ։

Ձեն տվեցին իրարու, իլխրքը բարձեցին, գնացին։

Շեխ Սատին իրան ձին բերեց, խեծավ, քամակից բաղրկյան բաշուն խասավ.

— Բարի լուս քե՛, պաղրկյան,— ասաց։

— Աստրծու խերն ու բարին, դու ի՞նչ մարդ իս, ո՞ր ես էթում։

Ասաց.— Ստամբոլա քաղաք, Շեխ Սատու տունը։

Ասաց.— Շեխ Սատին ես իմ։

Ուրախացան իրար վրեն, գնացին Ստամբոլա քաղաք դյուա էլան։ Շեխ Սատին քյառսուն ատեճե դռներ բաց արեց, դանկեր քաշեց նեքսև, գնա՛ց կնկան թամպեխ էրավ, ասաց.

— Կնի՛կ, վեց մարդի խաց խաղրի։

www.naregatsi.org

Կնիկ էլավ վեց մարդի խաց խաղրեց։

Էկավ Հիրկուն, ճրագ կպոցը վախտը նստավ խացի վրա իրեք մարդ։

Կնիկ ասաց.— Դյու ասիր վեց մարդու խաց խաղրե, մկա իրեք մարդ կա։

— Բան չկա, կնի՛կ, հիմի կգան։

Շեխ Սատին դարձավ բազրկյան բաշուն.

— Բազրկյան բաշի՛, իմ քիրը սոված կըլլի, խա՛ն, կտորմ՛խաց ուտի։

Բազրկյանը շշկռեց.— Ի՞նչ քիր, ինչ կնիկ, ի՞նչ բան,— ասաց։

— Խնդրե՛մ, խան, խան,— ասաց։

Զոռեց, խանել տվեց։

Ասաց.— Քյուրի՛կ, ահա, էն գդալ քե, էն քարղան քե, նստի իմ կողքին, կի՛։

Էդ կնիկ նստավ որ խաց ուտեր, Շեխ Սատին ասաց.

— Քյուրիկ, խան էն կապոցի միջի մարդը, խաց ուտի, անոթի կըլլի, ճհել տղա ա, մեղք ա։

Զոռեց-զոռեց, դյուա բերեց, ասաց.

— Տղա՛, էն քարղան, էն գդալ քե, ղարիպ մարդ իս, նըստի, կի՛։

Դարձավ իրա կնկան.

— Կնի՛կ,— ասաց,— էն թուքը որ էն տեղ շորացեր ա, նրան էլ բեր, խաց ուտի, մեղք ա։

Կնիկ ուրացավ, ասաց.— Ա՛յ մարդ, ի՞նչ թուք, ի՞նչ բան։

Շեխ Սատին վեր կացավ, ղութու դյուռ բաց արեց, ասաց.

— Հարագա՛ ջան, արի՛, նստի իմ կողքին. մկա դղվեցինք վեց խոգին. խաց անուշ արե՛ք։

Էլ խա՛ց կուլ կէթա, մացին սառած։

Շեխ Սատին ասաց.— Բազրկյան, էս մեկ իմ կնկա, էս մեկելն էլ քյու կնկա սիրողն ա, որ մենք խաչ ավետարանով պսակված ինք, մեզ չեն սիրըմ մեր կնկտիք, էսոնց ին սիրըմ. արի՞, դեյմիշ չըլլինք. դյու բիր քյու մալ, ես էլ իմ մալ բաշխինք էն մարդոց, էրթանք դոր որ անդարտ տեղ կա։

Իրանց մալ բաշխեցին իրանց կնկա սիրողքերուն, իրանք վեր կացան, գնացին։

Շատ ու քիչ գնացին, տեսան որ մե մարդ մե մեշի միջից դյուա

www.naregatsi.org

են բերում, քառասուն փահլիվան ընկած ա էն կողք, քառասուն հարմատ ա ընկած էն կողք, չըն թողնի էս մարդու փեշ գետին առնի, սրբու պես։

Շեխ Սատին ասաց.— էս մարդ անդարտ ի, մենք էլ էրթանք փեշից բռնենք, որ անդարտ ըլլենք։

Ամեն մի փեշից բռնեցին, առան բերին տունը։

Տեսավ, որ սեղան փռված ա, աստված ինչ որ ստեղծեր ա, սեղանի մեջ կա։

Էն մարդ գնաց, սեղանի գլուխ նստեց։

Ամեն փահլիվան իրա հարմատը առավ, սեղանի վրեն նստեց։

Շեխ Սատին նստավ դռան քամակը։

Խացը կերան, պրծան ինչվան ժամերու վախտ, մութ կոխեց։

Ամեն մարդ առավ իրա կնիկը, էս մարդուն գլուխ տվեցին, գնացին։

Մնաց վերջը մի արաբ, մե շատ սիրուն հարմատ, գնացին մեծ մարդի գլուխ տվեցին ու գնացին։

Էն մեծ մարդը «ա՜խ» քաշեց։

Որ ա՜խ քաշեց, Շեխ Սատին բաղրկյանին պզեց, ասաց.

— Սրա դարտը մեր դարտից շատ ա, խի՞ ախ քաշեց։

Էս մարդը դարձավ, սրանց ասաց.

— Ի՞նչ մարդ եք, գնացեք մե տեղ գտեք։

— Մենք ղարիպ մարդ ինք, տեղ չունինք, գիշեր պտի պախես։

Մնացին մինչև քնելու։

Շեխ Սատին քաշեց թուրը, գնաց գլխի վրեն կայնեց, ասաց.

— Ա՛յ մարդ. ինչ դարտ ունիս, ընձի ասա։

— Ընձի դարտ չունեմ, ընձնից վազն արի,— ասաց։

— Քու շնլինք կզարկեմ, որ չասես։

Ասաց.— Նստի՛, կասեմ։

— Ընձի աշխարքի վրեն շատ սիրուն կնիկ ունեի, էդ կնիկ շատ անճար խիվանդացավ, ասի. «Ա՛յ կնիկ, սիրտդ ինչ ա ուզում, բերեմ. ա՛յ կնիկ, ղուրբան»։ Ասաց. «խի ես ղուրբան ըլլում, էգուց կմեռնեմ. մեկն էլ կբերես»։ Ասի. «էրկինք, գետինք, աստված վկա ըլլի, քեզնից սավայի հարմատ չառնիմ, չպսակվեմ»։ Շատ միտք արի, չըլլի թե հարմատս մեռնի, ես իմ ուխտ չկատարեմ. բռնի... կտրեցի։ Իմ հարմատ լավացավ։ Մեկ տարի, էրկու տարի իմ կընկան մոտ չգացի. իմ կնիկ ասաց. «Դյուռ կնիկ ես, իմ մոտ չըս

www.naregatsi.org

պառկիր։ Ես էլ ասի. «Ա՛յ կնիկ, պաս իմ պախի, ուխտ իմ էրի»։ Էկավ իմ կնիկ ընձի վրա, իմացավ։ «Կնի՛կ,— ասի,— քյառասուն փահլիվան ունեմ. ո՞ր մեկ կսիրես»,— էս սև արաբին առավ։

Շեխ Սատին ասաց.— Բազրկյա՛ն, էլի մեր կնիկ, էլի մեր կնիկ, սրա դարդը մեր դարդից շատ ա։

Վեր կացան, գնացին. իրանց կնանիք առան, նստան։

www.naregatsi.org

3. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԵՐԸ

Թաքավորն ու վեզիրը էլան գնացին ման գալու. գնացին մեկ քաղաք, տեհան՝ մեկ գեղեցիկ նստեր էր օթախի փանջարեն, մեկ երիտասարդ մարդ նստած էր մոտը՝ մարգրիտե շուպուխը էս օղուլուշաղի քթի խզմիցը անց էր կացրե, առեր էր ձեռքը, քաշում էր։

Ասավ.— Իրիշկե՛, վազիր, ի՞նչքան սեր ունին, վազի՛ր, կարա՞ս ընդրան[1] դլխանց հանել։

Ասավ.— Շատ շուտով կհանեմ. ի՞նչի համար, թաքավոր։

— Տեսնենք անբախտ կըլլի իր մարդիցը, էդքան որ սեր ունի։

Դարձան, էկան իրանց տեղը։ Վազիրը էլավ առավոտը գնաց, դտավ մեկ պառավ, ասավ.

— Պառա՛վ, քեզ կտամ քու քաշով օսկի, գնաս էն գեղեցիկ կնոջ մոտը թե. «Թաքավորը կամենում է քեզի առնեա»։

Պառավը գնաց. գեղեցիկ կինը ասավ.— Եթե Թաքավորը կամենա, էս գիշերը կվերջացնեմ իմ մարդին։

Պառավը նստ դառավ դրպա վազիրը։— Աչքդ լուս ըլլի, վազի՛ր, կատարիմ քու խորհուրդը, խոսք ա տվեր, կվերջացընե իրան մարդին էս գիշեր։

---

1 Կնոջը (Ս. Բ.)։

27—2573

www.naregatsi.org

Վազիրը էկավ, հայտնեց թաքավորին.— Էս գիշեր կվերջացընի էն գեղեցիկ կինը իրան մարդին։

Մութն ընկավ, թաքավորն ասավ.— Վազի՛ր, վե՛ր կաց, գընանք տեսնենք՝ ի՞նչպես էլավ էն կնոջ բանը։

Գնացին փանջարի տակը, տեհան ի՞նչ՝ իրեք հոգի փանջարի տակը։ Էդոնք էրկուսով տալտալանմիշ էլան պարիսպի տակը. տեհան ի՞նչ՝ մեկ հատ պարան փանջարից քցեցին դըպա էդ իրեք մարդին. մարդները բռնեցին պարանը, ձգեցին։ Թաքավորը տեհավ, որ խոխոռոց է գալում, թուրը քաշեց, քցեց պարանին՝ կտրըվավ, էդ իրեքը փախան։

Ձեն տվեց վերիցը էն գեղեցիկ կնիկը.— Ինչի՞ թուլացրիք պարանը... կենդանի՞ է էդ մարդը հալա։

Վեր կացան, գնացին նեքսև, տեհան մարդը վեր ընկած՝ ուշը գնացած է։

— Ա՛յ կնիկ, էս ի՞նչ արեցիր։

— Տնավրնե՛ր, ես ձեզի ասեցի շատ քաշեք պարանը, դուք շուտ թողեցիք, կիսամեռնել է էլեր իմ մարդը, կկենդանանա, շուտով կտրե՛ք գլուխը, թող վերջանա։

Պարանը հանեցին շլինքիցը, քիչ ջուր քցին էրեսին, կենդանացավ. խոսեց թաքավորին հետը, ասավ.

— Էս ի՞նչ արեցիք իմ գլուխը։

— Ի՞նչ է պատահեր քեզի, որ ասում ես։

— Գլուխս կնկաս ծնկին էր. իմացամ պարանը քցին շնլիքիս, էլ չեմ իմացե ի՞նչ էլե, ի՞նչ չէլե. կարելի ա ձեր բանն ա, դուք եք իմ մոտը կանգնած։

— Ո՛չ, երիտասա՛րդ, մենք ենք քեզի ազատողը. առավոտը կանենք քու կնոջ դատաստանը,— ասեցին ու ետ դարձան, էկան իրանց դիվանը։

Առավոտը օղորկին ֆարաշները. գնացին, բերին էդ մարդն ու կնիկը. կանչեցին միրզաղապները, կնկան լավ ղայտին փրթեցին։

Թաքավորը ասավ.— Վեզի՛ր, ես գնում եմ մանգալու. ես քեզի կտամ տասնըհինգ օր ժամանակ, էդ տղին կտամ քեզի ամանաթ, իմ քաղաքին չես թողի մնա կինարմատ. կկոտորես բոլորն էլ, իրեք տարեկանից չարի վերջ՝ ի՛նչքան էգեղեն կա։

Թաքավորը պատվիրեց, էլավ գնաց։

Վազիրը էլավ, գնաց իրան տունը, շատ էր մտածում. հայրն ասավ.

www.naregatsi.org

— Ի՞նչ շատ ես մտածում, որդի՛։

— Թաքավորի զաղապը բռներ ա, հայրիկ։

— Պատճառը ի՞նչ ա։

— Մեկ կնոջ համար ա, ասավ. «Քաղաքին պետք է չթողիս էգեղեն, բոլորը՛ կոտորիս», տասնըհինգ օր է տվե ընձի ժամանակ։

— Էդրա համար մի՛ մտածիր, որդի, ես կտամ Թաքավորի պատասխանը։

Տասնըհինգ օրը թմավ, Թաքավորը էկավ, կանչեց իրան վազիրին, ասավ.

— Ընչի չի կատարիր իմ բաղձանքը։

— Հայրս ասավ. «Ես կտամ Թաքավորի պատասխանը»։

— Կանչե՛ք, թող գա դրա հայրը։

Հայրը էկավ, Թաքավորին գլուխ տվեց, պատասխանեց.

— Ի՞նչ ես հրամայում, Թաքավո՛ր։

— Ը՞նչի չի թողեցիր՝ կատարեր իմ բաղձանքը։

— Ես կտամ քու պատասխանը, Թաքավո՛ր. ես քառասուն տարի հարամությունն արեցիմ, Թաքավո՛ր, իմ ընկերներիս բաց թողիմ, մեղա գոչիմ իմ աստուծուն, բոլոր մեղքերիցս դարձ էկամ, դրպա տունը գալու էլամ, պատահամ մեկ երիտասարդի, աչքս ընկավ դրա հալալներին ու ձիուն. իրեք կյուրդ տվիմ դրա քամակին. ամենեին չդառավ դրպա ընձի. ձին քշեցիմ դրպա վրեն, թուրը քաշեցիմ որ զարկեի, ձեռը քցեց, ընձի բռնեց, ընձի դրեց իրան ոտի տակը՝ ձիուն վրեն. Թաքավո՛ր, մի սահաթ էնպես գնաց, քիչ էր մնում հոգիս դուս գար. շատ աղաչեցի, բաց թողեց։ «Հուր կէրթամ, արի՛ հետս»,— ասավ։ Գնացինք մեկ զաղի դուռ, վեր էկավ ձիուցը, գնաց դրպա նեքսեը. ես էլ դողում եմ ձիուս վրեն։ Թուրը ձեռը էլավ դուս, թուրը արունոտ, ասավ. «Մտի՛ նեքսև, քեզի համար փողեր վեր կալ»։ Մտամ նեքսև, քառասուն հոգի մորթեր էր. տեհամ որ մեկ յանը օսկի էր, մեկ յանը արծաթ շատ թոփ էլած կա, իմ բավականությունը վե կալամ, հանեցիմ դուռը, խուրճինով քցիմ ձիուս վրեն։ Ասավ. «Նստի ձին, գնա՛նք»։ Թաքավոր, ես էդրա հրաշքները էդպես տեհամ։ Գնացինք, հասանք մեկ գերեզմանի. «Վե՛ր կաց, բաց արա էդ գերեզմանը», ասավ։ Բաց արիմ, տեհամ մեկ մարդ սպանված, ֆորած ա էստեղ, տասն օրվա սպանված։ Էդ էլ վեր էկավ իրան ձիուցը. պլոկվավ իրան շորերը՝ բացվավ դրա ծրծերը, ես ընձի շատ զարմացամ։ Էկավ, պառկավ

www.naregatsi.org

գերեզմանատունը։ «Ա՛յ մարդ, արի կտրի իմ գլուխը, ես առամ իմ սրտի փափագը. սպանեցիմ էն քառասուն մարդը, էնդոնք են իմ մարդի դյուշմանը»։ Ասեցիմ. «Իմ ձեռները չէթա քեզի սպանեմ. պատճառը ընձի ասա, նո՛ր»։ Ասավ. «Ես եմ էս մարդի կինը, մարդս սպաններ էին էն քառասուն մարդը, դու ըլլես էն վերևի աստվածը, ես ընձի կըսպանիմ, հողը տո՛ւր իմ վրեն, գնա՛. իմ ձինը, մալը քեզի ըլլի»։ Տեստեն դրեց մարդի վրեն, Թաքավո՛ր, սիրտը քցեց խանչալի վրեն, բերնի՝ վրա ընկավ. իրան մարդի վրեն մեռավ. հողը տվեցիմ վրեն, ընկամ ճանապարհ, էկամ մեր տունը. էլամ քո հորը լալա։ Քառասուն տարի լալայությունն եմ արե քու հորը։ Թաքավո՛ր, էնպես կին էլ կար, դու ի՞նչպես պետք է կոտորեիր էդպես բյուր հազար ջանը, դու կըլլեիր մեղապարտ։

— Բոլորը ներեմ քեզի, ծերունի լալա,— ասավ Թաքավորը։

www.naregatsi.org

Ա. ԱՍՏՂ ՋՈԿՈՂ, ՀՈՏ ՔԱՇՈՂ, ՂՈՉԱՂ, ԼՈՂՆՈՐԴ

Մի տղի հերն ու մերը տանից դուս են անում։ Էս տղեն ճամ-ֆեն բռնում ա ու դուզ էթում։ Սրան մի տղա էլ ա պատահում, որ էլի նրան էլ հերն ու մերը տանից դուս էին արել։

— Ա՛յ ախպեր, ո՞ւր ես էթում։

Նա պատասխան ա տալի.— Հերն ու մերս տանից դուս են արել, ոչ մի շնորհք չունեմ, համա շատ ղոչաղ եմ. ղոչաղություն էս խանչալիս մեջն ա. որ էս խանչալը վրիցս վերցնեն՝ էլ ղոչաղություն չեմ ունենա։

— Ես էլ որ հոտ քաշեմ, կարող եմ իմանալ, թե որտեղ հաց կա։

— Էս լավ էլավ,— ասեցին էս երկու դուս արած տղերքը,— արի իրար հետ ընկեր ըլնենք։

Էս երկուսը գնացին ու մի տղի էլ պատահեցին.— Դու ի՞նչ գիտես,— հարցրին էս ընկերները։

— Ես լավ լող տալ գիտամ,— ասեց նա։

— Բաս արի, դու էլ մեզ ընկեր իլ։

Հոտ քաշողը հոտ քաշեց ու ասեց.— Էս դհոլ էթանք, էստեղ հաց կա։

Գնացին ու մի տղի էլ պատահեցին.— Դու ի՞նչ շնորհք ունես,— հարցրին սրանք։

— Ես լավ աստղ ջոկել գիտամ՝ կիմանամ, թե աշխարքում ով ա մեռնում։

www.naregatsi.org

էս Աստղ ջոկողն էլ սրանց հետ ընկեր էլավ։ Էսպես չորս ընկեր էլան՝ մինը իմանում էր, թե որտեղ հաց կա, մեկելը ղոչաղ էր, մինն էլ լավ լող էր տալի, մինն էլ լավ աստղ էր ջոկում։

Սրանց հացները հատավ. սոված ին, չէին իմանում, թե ինչ անեն։

— Արի՛, լավ հոտ քաշող ես, իմացիր որտեղ հաց կա։

Գնացին տեհան, որ մի հարս հաց ա թխում։

— Դե՛հ, Ղոչա՛ղ, գնա հաց ուզի, բեր։

Էս Ղոչաղն էլ ճամփա ընկավ դպա էն հաց թխող հարսի մոտ ու հաց ուզեց։

Հարսը նրան պատասխան տվեց.— Ա՛յ տղա, ո՞նց էկար էստեղ, էս սհաթին օխտը գլխանի վիշապը վե կկենա քեզ կուտի, թե գլխիդ ճար ունես՝ տե՛ս։

Ղոչաղ տղեն պատասխան տվեց.— Ես էլ նրա հավարին եմ էկել, պտի նրան սպանեմ։

Էս Ղոչաղ տղեն գնաց վիշապի օթախը ու տեհավ ջաղացի քարերը ամեն գլխից կախ է արած ու ինքն էլ քնել ա։ Վրա հասավ, խանչալը հանեց ու վրա բերեց գլխին։ Վիշապն ասեց. «Մին էլ տուս։ Համա տղեն էլ չխփեց, չունքի էն հաց թխող հարսն ասել էր, որ մին էլ խփի՝ կսաղանա վիշապը ու կուտի նրան։

Տղեն ասեց.— Ես մորիցս մի դըրբ եմ էլել ու մի դըրբ էլ կխփեմ։

Մեկել ընկերներին կանչեց էս Ղոչաղ տղեն ու էստեղ կերան, քնֆ արին։ Աստղ ջոկողին էստեղ թողեցին ու իրանք գնացին մեկել վիշապների մոտ, որ էս վիշապի ախպերտինքն էին։ Աստղ ջոկողը միշտ նայում էր աստղերին, որ տենա, իրա ընկերները ինչ հալի են։

Մեկել վիշապի մոտ հասան։ Սրան էլ սպանեցին ու Լող տվողին էստեղ թողեցին ու էն էրկսով ճամփա ընկան մեկել վիշապի մոտ։ Մեկելին էլ սպանեցին ու Հոտ քաշողին էստեղ թողին։ Ղոչաղը մենակ գնաց չորրորդ ախպոր մոտ։ Նրա մոտ մի սիրուն աղջիկ կար. էս վիշապին սպանեց ու էն սիրուն աղջիկը իրա կնիկը շինեց։ Թաքավորները քանի անգամ մեծ ղոշըններով էս Ղոչաղ տղի վրա էկան, որ սպանեն ու էն աղջիկը փախցնեն, համա չկարացին, չունքի բոլորին էլ ղիմա-ղիմա էր անում իրա խանչալով։

www.naregatsi.org

Օրանց տունը մի պառավ կնիկ կար։ Մի թաքավոր էս պառավ կնկանը կաշառք տվեց, որ իմանա, թե էն տղի ուժը ո՞րդի ա։

Մի օր հարցրեց էս պառավը էն Ղոշաղ տղին.— Քու ուժը ո՞րդի ա։

Տղեն հանաքներ արեց.— Ուժս էս ավելի մեջն ա։

Առավոտը գշերով-գշերհանա ավելը տարավ ու վաղեվաղ գցեց ծովը։ Համա տեհավ, որ էս սուտ էր։ Էլի էն տղի յախից բռնեց, որ ասի, թե ուժը որդի ա։ Էնքան տղի գլուխը դանդ արեց պառավը, որ ասեց, թե իրա ուժը խանչալի մեջն ա։ Գշերվա մի վախտ նրա գլխի տակից խանչալը հանեց ու տարավ գցեց ծովը։ Տղեն էն սհաթը ուժից ընկավ ու էն թաքավորը էկավ աղջկանը փախցրեց, տարավ։

Աստղ ջոկողը տեհավ, որ երկնքում իրա ընկերների մի աստղը կորել ա. իմացավ, որ նրան մի բան ա պատահել։ Էն սհաթը վեր կացավ ու գնաց մեկել ընկերներին հավաքեց, գնաց նրա մոտ։ Տեհան, որ հոգին տալու վրա ա ու խանչալը մոտը չի։ Հոտ քաշողը հոտ քաշեց ու խանչալի տեղը իմացավ։ Ընկերները գնացին ծովի ղրաղը։ Լավ Լոզ տվողը ծովն ընկավ ու տեհավ, որ մի մենձ ջանավարի գլխի տակ խանչալը դրած ա, ինքն էլ քնել ա։ Ուստուլով խանչալը գլխատակից հանեց ու էս ջանավարի գլուխը կտրեց։ Սաղ ծովի էրեսը արինը կալավ։ Ընկերները իմացան, թե նրան մի բան պատահեց, համա մի քանի սհաթից հետո տղեն ջրի տակից թռավ դուրս ու խանչալը բերեց առանց ղնի։ Մեկ էլ սկվեց ղինը բերեց, խանչալը դրին մեջը ու տարան Ղոշաղ տղի վրից քաշ արին։

Էն սհաթը տղեն վեր կացավ։ Աչքերը տրորեց ու ասեց.— Էս ինչքան եմ քնել, դուք ընչի՞ եք էկել, գնացեք ձեր տեղերը։

Թաքավորը իմացավ, որ տղեն էլի ղոշաղացել ա՝ ուզեց, որ փախչի։ Սաղ իրա երկրի մեջ ջառ կանչել տվեց, որ տանից ո՛չ ով դուս չգա, չունքի թաքավորը իրա կնկա հետ պտի ման գալու էթա։ Համա թաքավորի միտքն էր, որ թաքուն փախչի։ Տղեն մի ծառի տակ թաք կացավ. հենց որ թաքավորը էկավ, որ փախչի՝ վրա հասավ, փախցրեց իրա կնկանը ու էկավ ընկերտանց մոտ։

www.naregatsi.org

5. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ

Մարդ ու կնիկ են ընում։ Մարդը շատ նախապաշարված է լինում ու բոլորովին չի հեռանում կնկա մոտից, սաղ տարիներով տանը նստում էր ու չէր գնում աշխատելու, կարծելով թե կինը կարող է անառակություն անել։ Մի անգամ կինը ասեց մարդին, որ լավ կանի գնա աշխատելու, ինքը խոստանում է, որ անառակություն չի անի։

Մարդը լսեց կնկա խոսքին ու գնաց ուրիշ երկիր աշխատելու։ Կնիկը տունը միշտ կողպած էր պահում։ Մի երեկո տեսավ, որ մի աղքատ դրսից բաց արեց նրա դուռը և խնդրեց իջևանելու։ Նա սկզբում մերժեց՝ ասելով, որ իր մարդը հրամայել է ոչ ոքի չընդունել, բայց հետո խղճաց նրա վրա ու ընդունեց յուր տունը։ Երեկոյան իրիկնահաց բերեց, ինչ որ տանը ուներ, իրար հետ հաց կերան ու քնեցին։ Այն աղքատի համար առանձին տեղ քցեց, իր համար առանձին ու քնեցին։ Առավոտը վեր կացավ կնիկը ու տեսավ աղքատը տանը չէ, նա մնաց զարմացած։ Նստեց յուր սենյակը և տեսավ, որ ամեն կողմը լիքն է փողերով. նա հետո դլխի ընկավ որ այդ ծերունին աստվածն էր, որ եկել էր իրեն փորձելու։ Նա սրանից հետո էլ առաջվա աղքատը չէր, մեծ հարստության

www.naregatsi.org

տեր դարձավ ու մի քանի ծառաներով էր ապրում։ Մի քանի տարուց հետո եկավ նորա մարդը, տեսավ թե ինչպես է հարստացել. սկսեց կասկածել, թե երևի նա անառակությամբ է ժողովել այս բոլորը ու մի անգամ իրանց բարեկամի մոտ գնալիս, որ մերձակա գյուղում էր լինում, նրան սպանեց։ Նորա գերեզմանի վրա աստծո հրամանով լույս վայր եկավ։ Մի անգամ թաքավորի տղեն յուր երկու ծառաներով եկավ այս տեղերը որսի, նկատեց այս լույսը ու յուր ծոցից հանելով մի տեսակ դեղ ցանեց այդ լույսի վրա ու կենդանացավ։

Թաքավորի տղեն տեսնելով նրա գեղեցկությունը, ասեց.

— Ես քեզ մարդ, դու ինձ կնիկ։

Նա ասաց.

— Չէ՛, դու ինձ որդի, ես քեզ մայր։

Թաքավորի տղեն բարկացավ սրա վրա ու հրամայեց ծառաներին տանել հեռու սպանել։ Ծառաները կատարեցին նրա հրամանը՝ տարան փոքր ինչ հեռու, բայց խղճացին ու չսպանեցին նրան։ Նրան բաց թողին, գնաց։

Գնաց, գնաց՝ մի հարուստ վաճառական պատահեց ու նրան ասեց.

— Ես քեզ մարդ, դու ինձ կնիկ։

Նա չհամաձայնվեց ու ասեց.

— Ես քեզ քույր, դու ինձ եղբայր։

Հարուստ վաճառականը բարկացավ նրա վրա ու ուղղակի ծովը գցեց, որ այդտեղից շատ հեռու չէր։ Այն ծովի մեջտեղ մի կղզի կար, ուր մի աղքատ մարդ յուր քրոջ և հինգ աղջկերանցով ապրում էր, ամենահետին աղքատության մեջ։ Ծովից ձուկ էր բռնում ու նրանց պահում։ Մի օր էլ թոռը գցեց ու տեսավ, որ ծանր է գալիս թոռը, քաշեց ու տեսավ մի սիրուն կնիկ, փառք տվեց աստծուն. «Աստված է այս տվել, երևի սրա համար էլ կերակուր կա կհասցնի»։ Այս կինը սրանց տանը ապրում էր, որպես մայր բոլորի ու յուր հարստությամբ կառավարում ողջ ընտանիքը։ Նա այս հինգ աղջիկներին ամենահայտնի մարդկերանց վրա պսակեց, որ ով գիտե, ինքը չլիներ, պիտի տանը մնային։ Հետո հրամայեց այս ձկնորսներին, որ յուրյանց տների մոտ յուր փողով այնպիսի սենյակներ շինի, որ մի քանի խալվար ցորեն տանի։ Ու երբ տեսավ սենյակները պատրաստ են, այնքան ցորեն առավ ու լցրեց այն տեղերը։

www.naregatsi.org

Էնպես որ սաղ աշխարհը սով ընկավ։ Այդ ժամանակ նա ամեն տեղ տարածեց, որ անփոխ ամենքին ցորյան է տալիս։ Աշխարհի ամեն ծայրերից գալիս էին նրանից ցորեն առնելու, տանելու։ Նրանց մեջ էին և յուր մարդը, այն թաքավորի տղեն և երկու ծառաները և էն հարուստ վաճառականը։ Այս կինը նրանց ճանաչեց ու ձկնորսին ասեց, որ ցորեն ամենքին տան, իսկ նրանց չտան։ Այդպես էլ արեց, բոլորին բաժանեց, իսկ նրանք բոլորը մնացին վերջը։ Նա ասեց, որ լավ ճաշ պատրաստեն ու նրանց յուր մոտ կանչեն, իրար հետ ճաշելու։ Իհարկե նրանք չէին ճանաչում, թե այս կինը ո՞վ է։ Ճաշի ժամանակ նա առաջարկեց, որ նրանք իրար հեքիաթ պատմեն. նրանք մերժեցին նրա խնդիրը, ասելով, որ իրանք հեքիաթ չգիտեն։ Այն ժամանակ յուր ծառային այս կինը հրամայեց բերել յուր մոտ յուր թուրը ու նա դրեց սեղանի վրա, բայց ասեց հյուրերին.

— Ես այժմ հեքիաթ կասեմ, միայն ոչ ոք դուրս չգա մինչև նրա վերջը, թե չէ նրա գլուխը կկտրեմ։

Նրանք խոստացան մինչև վերջը լսել. այս կինը սկսեց այս հեքիաթը, որ քեզ պատմեցի, ընթերցող, պատմեց մինչև այդտեղը։ Այն ժամանակ նրանք կծեցին իրանց մատները, բայց չէին կարող դուրս գնալ, որովհետև կարող էր սպանել։ Հեքիաթը վերջացնելուց հետո, նա թուրը քաշեց թաքավորի տղին, հարուստ վաճառականին սպանեց, թաքավորի տղի երկու ծառաներին բաշխեց, իսկ յուր մարդի հետ էլ առաջվա նման սիրով ապրեց։

www.naregatsi.org

6. ՄԱՐԴԻՍ ԾԱԿԱՏԻՆ ԻՆՉ ԳՐԱԾ Է՝ ԷՆԵՆՑ Էլ. ԿԸԼՆԻ

Մի թաքավոր ա ըլնում, սա ուրիշ թաքավորի վրա կռիվ ա գնում. հրամայում է իր նոքարներին, որ կռվի համար պաշար հաղրեն։ Նրա նոքարները հայտնում են՝ էնքան շատ է ըլնում պաշարը, որ ինը հարյուր ուղտ չի կարում տանի։ Նոքարները գալիս են թաքավորին ասում, որ ինը հարյուր ուղտը հերիք չէ, մի հարյուր ուղտ էլ պիտի առնվի. նա ասում է, որ առնեն։ Երբ ամեն բան պատրաստ է լինում, նա իր զորքով կռիվ է գնում, բայց կռվի մեջ հաղթվում է. իրա սաղ զորքը ջարդվում է, իսկ ինքը անջախ սաղ է մնում ու սրան գերի են տանում։ Սրա գերի տանողը էն հաղթող թաքավորի ձիապանն ա ըլնում։ Սա թաքավորին տանում ա, ոտները բխով է դնում ու գոմի մեջ փակում, մի փարխաջի նման պղինձ էլ կրակի վրա է դնում, մեջը կերակուր էփում, որ համ ինքը ուտի, համ իր եսրին տա։

Ձիապանը մի բոպն գոմից դուրս է գնում թե չէ, դրսից մի շուն ներս է մտնում, դունչը կոխում է պղնձի մեջ, որ միսը ուտի, փարխաջի ունկը նրա ճտովն է ընկնում ու նա վերցնում է պղինձը կրակի վրայից ու հա՜յ դե հա՜յ, դռնե դուռ։ Ձիապանը հետ է գալիս, տեսնում է կրակի վրա պղինձ չկա, զարմանում է, սկսում է բարկանալ իր եսրի վրա։

www.naregatsi.org

Նա ասում է.— Մի քանի օր առաջ էնքան ուտելու բան ունեի, որ ինձը հարյուր ուղտ չէր կարում տանի, մի հարյուր էշ ջոկ եմ առել. այսօր մի շուն իմ ուտելու կերակուրը կարողանում է շինքով փախցնել։

Այս խոսքերը որ լսում է ձիապանը, գլխի է ընկնում, որ սա պիտի թաքավորը լինի, ընկնում է նրա ոտները ու ներողություն խնդրում, որ էսպես վատ վարվեց նրա հետ։ Ետ արեց նրա ոտների բխովները ու ասեց, որ նա այժմ ազատ է՝ ուր կամենա կարող է գնալ։ Թաքավորը շնորհակալ եղավ ձիապանից ու դուրս եկավ գնաց։ Գնաց, գնաց, շատ ու քիչը աստված գիտե, մի սարի գլխին կանգնեց, էստեղ լավ-լավ տներ տեսավ, ներս մտավ նրա դռնովը ու տեսավ, որ ներսը մի սիպտակ միրուքով ծերունի նստած է, ինչ որ գրում է փոքրիկ թղթերի վրա ու իրա դեմ եղած ծովն է գցում։ Նա այստեղ անխոս մնաց. երկնքից կերակուր վեր էկավ ու նրա առաջը դրվեց, նա մի քանի թիքա կերավ ու մնացածը նրան առաջարկեց։ Նա էլ կերավ. էսպես նա էս ծերունու մոտ իրեք օր մնաց, միայն չէր վստահանում հարցնել, թե այդ ի՞նչ է գրում։ Միայն վրա չորրորդ օրը հարցրեց, որ այդ ի՞նչ է գրում։ Նա ասաց, որ ինքը մարդիս բախտն է գրում ու գցում ծովը։

Թաքավորը միայն մի աղջիկ ուներ, որին դեռ չէր պսակել, էլ ոչինչ չուներ։ Նա իր աղջկա բախտը հարցրեց. նա ասաց, որ նրա աղջիկը պիտի պսակվի իրանց քաղաքի հարուստի քոռից եղած տղի հետ։ Այս լուրը ցավ պատճառեց թաքավորի սրտին, թե ոնց իրա սիրուն աղջիկը մի հասարակ քոռի հարս պիտի ըլնի։ Թաքավորը էս ծերունու մոտից ուղղակի վեր է կենում ու իր երկիրը գնում, իր ժողովուրդը առաջ ընենց էին իմանում, թե իրանց թաքավորը սպանվել է, երբ սաղ տեսան, անչափ ուրախացան։

Թաքավորը մի քանի օրից հետո գնաց էն հարուստ մարդի մոտ ղոնաղ. էս մարդը պսակված չէր։ Թաքավորի գալու վրա շատ է ուրախանում այս հարուստը ու լավ-լավ փեշքեշներ է հազրում թաքավորի համար, որ գնալիս նրան տա, բայց նա ոչինչ չվեր կալավ, ասելով, որ իրա քոռը փեշքաշ անի, էդ էլ հերիք է։ Նա իր քոռին տվեց թաքավորին։ Թաքավորը վեր կալավ ու տարավ, ճանապարհին տվեց իր ծառաներին, ասելով որ տանեն հեռու տեղ, նրան սպանեն, նրա փորում երեխա կա՝ նրան էլ սպանեն։ Թաքավորի ծառաները կատարեցին նրա հրամանը։ Տարան հեռու տեղ,

www.naregatsi.org

սպանեցին նրան, տեսան փորում մի շատ սիրուն երեխա, մեղքները եկավ, որ սպանեն ու էնպես թողին էնտեղ ու իրանք գնացին ասեցին թաքավորին, որ սպանեցին։ Թաքավորը արխեին եղավ, որ իր աղջիկը այժմ էն քոճի հարս չի դառնա։ Համա աստված էս որրին չկորցրեց։ Էն հարուստ մարդը շատ ոչխարներ ուներ, որ մի շորանի էր տվել պահելու։ Այս շորանը մի օր էլ իր էծն ու ոչխարը առած հանդ դուրս եկավ։ Սրա էծերից մինը ծածուկ ամեն օր գնում էր էն երեխին ծիծ տալիս և էլի գնում։ Այս բանը նկատեց մի օր շորանը ու հետևեց էծին, տեսավ, որ գնաց մի երեխի ծիծ տվեց։ Նրա ուրախությանը չափ չկար, երբ տեսավ այս սիրուն երեխին, որովհետև ինքն էլ երեխա չուներ։ Նա վեր կալավ, շորի մեջ փաթաթեց ու տարավ իր խազեինին տվեց, նա էլ շատ ուրախացավ ու վեր կալավ իրան տղա։

Էս երեխեն մենձացավ՝ մի շատ խելոք, համեստ տղա դուրս եկավ։ Էս բանը թաքավորի ականջը ընկավ։ Նա կանչեց իր նոքարներին ու հարցրեց, որ ճշմարիտն ասեն իր տված կնկանը սպանեցի՞ն, թե՞ ոչ, ապա թե ոչ՝ նրանց կսպանի. իսկ եթե ճշմարիտը խոստովանեցին՝ կների նոցա։

Նոքարները պատմեցին գործի եղելությունը։ Թաքավորը էլի էն հարուստի մոտ ղոնաղ գնաց, նրա համար թանկ ընծաներ հազրեցին, բայց նա ոչինչ չուզեց, ասեց, որ տղեն թող մի երկու շաբաթ իր տանը ըլնի. հարուստը համաձայնվեց, տվեց նրան իր որդեգրած երեխին։ Նա վեր կալավ նրան, ճանապարհ ընկավ դեպի իրանց երկիրը։ Ճանապարհի կեսին թաքավորը ասեց էն տղին, տալով մի նամակ, որ տանի առաջ-առաջ իրենց տունը, իսկ ինքը գալիս է։ Էս նամակը իր փեչատով էլ փեչատեց, իսկ այդ նամակի մեջ գրած էր. «Այս նամակագրիս իսկույն վառած քուրի մեջ գցեցեք»։

Տղեն տարավ թաքավորի տունը։ Ճանապարհից դադրած լինելով թաքավորի բաղչում պառկեց, որ մի քիչ հանգստանա ու քունը տարավ։ Նամակը գդակի մեջ էր դրած ու կողքին վեր գցած։ Թաքավորի աղջիկը երեկոյան դուրս եկավ բաղչում ման գալու ու զարմացավ, երբ մի մարդ տեսավ պառկած իրանց բախչումը։ Մոտեցավ նրան, նկատեց նամակը, վեր առավ ու փեչատից ճանաչեց, որ իր հորն ա, բաց արեց ու կարդաց։ Այդ նամակը ճղեց ու մի ուրիշը գրեց ու դրեց նրա փափախի մեջ ու ինքը հեռացավ։ Այս նամակի մեջ այս էր գրած. «Այս նամակաբերիս իսկույն պսակել իմ աղջկա վրա»։

www.naregatsi.org

Թաքավորի մարդիկը, երբ այս նամակը ստացան, շատ զարմացան, որովհետև պատվեր էր տվել քուրեն վառած պահեն ու երբ մի նամակաբեր կուղարկի, գցեն նրա մեջ՝ այրեն։ Բայց թաքավորի հրամանն էր, ինչ կարող էին անել, պիտի իսկույն կատարեին. նրան պիտի պսակեին թաքավորի աղջկա վրա։ Թաքավորը մի Ռաշտ ուներ, սա էնպիսի կատաղած ձի էր, որ մինչև էդօր մարդ չէր կարողացել նստի նրա վրա։ Էս տղեն ինքը գնաց գոմից դուրս քաշեց և զոռով նստեց նրա վերա ու թաքավորի առաջը գնաց։

Թաքավորը էս որ տեսավ, մնաց զարմացած ու ինքը իրան ասեց. «Ճշմարիտ, որ մարդիս ճակատին ինչ գրած է, էնպես էլ կըլնի»։

Թաքավորը իսկույն վեր եկավ իր ձիուց, նորա ճակատը պաչեց ու ասեց.— Դու իմ փեսան ես։

Էսպեսով նրանք մարդ ու կնիկ էղան ու երջանիկ ապրեցին։

Ջարը էնտեղ, բարին էստեղ։

www.naregatsi.org

7. ԱԿՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Կըլնի չըլնի մի թաքավոր. նա խորը ծերության էր հասել ու առաջուց կանչեց տղին ու սկսեց խրատել. «Ա՛յ որդի ես ծերացել եմ, էսօր-էգուց պիտի մեռնեմ, դու քո քառասուն թայ տղաներից ձեռք վեր առ, նրանք քո տունը կքանդենա։ Էսպես խրատներ հերը որդուն շատ տվեց ու նա խոստացավ իսկությամբ կատարել։ Հերը մեռավ, տարան թաղեցին։ Սրա մահից հետո տղեն մտավ իր օթախը ու սուգ պահեց։ Նրա թայ տղաները էս որ իմացան, եկան նրա մոտ, սկսեցին մխիթարել, ասելով, որ ամեն մարդ էլ մեռնելու է, սուգ պահելով զատ չի դառնա։ Թաքավորի տղեն խաբվեց նրանց խոսքերից ու ինչքան հորական մուլք ուներ՝ նրանց հետ քեֆ արեց, վերջացրեց։ Նրա մայրը շատ էր խրատում իրա թայ տղաներից հեռանալ, բայց լսում չէր։ Մինչև վերջը էնպես աղքատացավ, որ նրա առաջվա ընկերները տեսնելով նրան իսկի բարև էլ չէին տալիս, նա նոր խելքի եկավ, բայց արդեն ուշ էր։ Գնաց մորն ասեց, որ մի շորս հարյուր մանեթ տա, գնա դուքան դնի ու նրանով իրանց գլուխը պահեն։ Մայրը տվեց, տղեն հենց որ դուքան բաց արեց թե չէ, էլի առաջվա նման թայդաշները մոտեցան նրան, էլի սրա դուքանը դարդկեցին։ Էս անգամ նա գնաց մորը ասեց, որ էլ ֆայդա չկա էստեղ մնալու, կէրթա ուրիշ երկիր փող

www.naregatsi.org

աշխատելու։ Մայրը համաձայնվեց, տվեց ճանապարհածախս ու ճանապարհ քցեց իր որդուն օտարություն։ Նա գնաց մի քաղաք, քուչեքով ման էր գալիս ու հարցնում, թե ով նոքար կուզի։ Մի հարուստ վաճառական ասեց, թե ինքը կուզի։ Էսպիսով նա վաճառականի նոքարը դառավ։ Մի քանի օրից հետո վաճառականը մի քանի ուղտեր վեր կալավ, իր նոքարին էլ հետը ու գնացին։ Գնացին, գնացին մի արտի մոտ կանգնեցին։ Վաճառականը ուղտերից մեկին մորթեց, քերթեց, փորը դատարկեց ու իր նոքարին ասեց, թե կարո՞ղ է նրա մեջ մտնի։ Նա ասաց, թե կարող է, ու մտավ։ Վաճառականը իսկույն նրա ետևից կարեց ուղտի փորը ու նա մնաց այնտեղ։ Մի քանի ժամանակից հետո, մեծ-մեծ միս ուտող ղշեր վեր եկան սարիցը ու էս ուղտին վեր բարձրացրին սարի վրա։ Էստեղ սաղ ուղտին ուտելով, նոքարը միջից դուրս եկավ։ Նրան ձեռ չտվին։ Վերևից նա ձեն տվեց, թե այժմ ինչպես ներքև գամ։ Վաճառականը նրան պատասխանեց, թե ինքը ճանապարհը ցույց կտա ներքև գալու, թե այդտեղ ակն ու մարգարիտներ շատ կա. առաջ վեր ածի, հետո։ Նոքարը լսեց նրա խոսքին ու սկսեց սարի գլխից ակն ու մարգարիտներ վեր ածել, իսկ ներքևը վաճառականը բարձում էր ուղտերի վրա։ Երբ վաճառականը բոլոր ուղտերը բարձեց պրծավ, ուղտերը քշեց ու գնաց։ Նոքարը ձեն տվեց ետևից, թե որտեղից վեր գա։ Նա պատասխանեց, թե որտեղից բարձրացել է, էնտեղից էլ թող վեր գա։ Խեղճը էնպես մնաց սարի գլխին։ Նա աչքը դես ու դեն գցեց, տեսավ, որ էստեղ մարդիկ կան, համա որը երկու երեսանի, որը վեց ոտանի, որը մի ձեռանի, մի խոսքով իսկի մարդու նմանություն չունեին։ Նա մնաց զարմացած։ Հանկարծ նրա քունը տարավ, նա քնեց ու երազում մի մարդ երևեցավ ու ասեց նրան. «Ա՛ռ քեզ ուտելու հաց ու խմելու ջուր, կե՛ր, կշտացիր ու էստեղից գնա հեռացիր, սրանց ո՛չ հացից կուտես, ո՛չ ջրից կխմես, թե չէ դու էլ սրանց նման կդառնաս»։ Էս ասելով նա հեռացավ։ Թաքավորի տղեն վախից զարթեցավ, տեսավ որ շատ էլ հաց ու ջուր է դրած իր կշտին։ Նա կերավ ու ջուրն էլ խմեց վրիցը։ Էդտեղից մի քիչ առաջ գնաց, ներքև մտիկ արեց, տեսավ որ մի լավ բաղ է երևում ու մեջը իր նման մարդիկ կան։ Ինքն իրան միտք արեց, որ սարից գլորվի ու ընկնի էն բաղչի մեջ, յա՛ կմեռնի, յա՛ սաղ կմնա։ Էսպես էլ արեց, երես-մերեսը շորով փաթաթեց ու սարից գլորվեց. նա դուզ ընկավ էն բաղի մեջ։ Համա մեռած էր-

www.naregatsi.org

Այնտեղի մարդիկ գնացին իրանց բաղչից Անմահական ջուր բերեցին, ածեցին նրա վրա ու նա սաղացավ։ Էս բաղի մեջ յոթ ախպերինք էին կենում, յոթն էլ պսակված. նա էլ սրանց հետ ախպերացավ, դառան ութ ախպեր։ Սրան հալալ ախպորից իսկի չէին ջոկում, տան ամեն բալանին սրան հավատում էին՝ տալիս էին. բացի մի մեծ բալանիքից, որ մեծ տեքրակինն էր պահում իր մոտ։ Էս բանի վրա նա շատ էր միտք անում, բայց պատճառը չէր իմանում։ Տան պատիկ հարսին թաքուն հարցրեց, նա ասեց, որ էն բալանին իսկի մարդի չի տա. «էս բալանով կարելի է մի տուն բաց անել, ուր աղբյուր է դուրս գալիս, ջուրը էրծաթ է, փարիների թաքավորի աղջիկը գալիս է նրա մեջ լողանալու, դու որ թաք կենաս դռան տակին, երբ նա շորերը հանի ու սկսի լողանալ, դու նրա շորերը գողացի. որ ուզի՝ չտաս, ասա՝ մինչև Սողոմոն իմաստունի անունով երդում չուտես, որ ինձ հետ կպսակվես, քեզ չեմ տա շորերդ»։ Հարսը մյուս ժամանակ խոստացավ էն բալանին գողանալ, բերել տալ իրան։

Մյուս օրը հարսը բերեց տվեց սրան էն բալանին։ Սա գնաց էն դուռը բաց արեց, ինչպես որ հարսը ասել էր, ու աղջկանը իրան կնիկ բերեց։

Մյուս եղբայրները սրա վրա ուրախացան։ Մի քանի վախտ էստեղ մնալով, նա ասաց նրանց, որ պիտի գնա իր մորը տեսնի ու էլի եկ դա էստեղ։ Նրանք համաձայնվեցին։ Նա իրա կնիկը առած գնաց իր մոր մոտ։ Մայրը շատ ուրախացավ՝ տեսնելով իր որդուն։ Թաքավորի տղեն ասեց մորը, թե ինքը գնում է ուրիշ երկիր օտարության։ Համա իր կնկանը մտիկ անի, նրան չըլնի թե բաղնիս տանի, թե չէ բանը վատ կլնի։ Մերը խոստացավ կատարել որդու պատվերը։ Մոռացանք ասել, որ նա իր մոտ դառնալով՝ նրա կինը աղատվեց ու մի սիրուն երեխա բերեց։ Որդու գնալուց հետո մայրը չկատարեց պատվերը, նա նրա կնկանը բաղնիս տարավ, էստեղ էր և թաքավորի կնիկը ու աղջիկը։ Նրանք էլ չկարողացան լողանալ, երբ տեսան այսպիսի մի գեղեցիկ աղջիկ։ Ամենը նրա երեսին էին մտիկ անում։ Տուն դառնալով նրանք այս բոլորը պատմեցին թաքավորին, նա մարդ ղրկեց ու կանչեց էս աղջկանը։ Նա եկավ, ու թաքավորը շատ զարմացավ նրա գեղեցկության վրա, բայց աղջիկն ասեց, թե այսպես նա այնքան գեղեցիկ չէ, որքան իր շորերով, որ իրանց տանը պատին քաշ է արած, համա զմրսած

28—2573

www.naregatsi.org

է, որ ես չվերցնեմ։ Թաքավորի հրամանով բերեցին այն շորերը, նա խնդրեց, որ իրան թողնեն առանձին սենյակի մեջ հագնվի, նա հագավ այդ թանկագին շորերը, լուսամուտը բաց արեց ու թռավ, նստեց չինարի ծառի վրա, որ թաքավորի պալատի առաջ տնկած էր, և ինքը՝ թաքավորը էս ծառը շատ էր սիրում, որովհետև սրա վրա ամեն տեսակ գեղեցիկ թռչուններ գալիս էին ու երգում։ Թաքավորը հարցրեց, թե ինչո՞ւ բարձրացավ այդ ծառի վրա։

Նա ասեց.

— Կտրեք ծառը և ես քունն եմ։

Նրանք կտրեցին թե չէ, նա թռավ ու գնաց էլ իր առաջվա երկիրը. էսպես թաքավորը մնաց նրա ետևից մտիկ անելով։

Մի քանի ժամանակ հետո, թաքավորի տղեն ետ եկավ ու հարցրեց, թե ո՞ւր է իր կնիկը, մայրը պատմեց եղելությունը։

Որդին ասեց.— Ես գնում եմ. երկաթե տրեխ կհագնեմ ու դավազանը ձեռիս էնքան ման կգամ, մինչև որ կգտնեմ նրան։ Նա գնաց երկրե-երկիր ընկավ ու վերջապես գտավ իր սիրուհուն, բայց նա էլ չէկավ իրանց երկիրը ու թաքավորի տղին էլ իր մոտ պահեց։

Սերը էս թավուր բան է, որ մարդին ամեն բանից զրկում է։

www.naregatsi.org

8. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿՈՐՉԻ

Մարդ ու կնիկ են լինում. ունենում են մի շատ սիրուն աղջիկ։ Մի քանի ժամանակից հետո սրա կնիկը մեռավ. նա մի ուրիշ կնիկ առավ, որ նույնպես որբևայրի էր՝ մարդը մեռել էր, սա ևս իր հետ մի աղջիկ բերեց։ Խորթ մայրը շատ վատ աչքով էր նայում նորա առաջվա կնկանից մնացած աղջկա վերա. նա միշտ քաղցած էր մնում, շատ էր բանացնում, իսկ իր հարազատ աղջկանը շատ լավ էր պահում։ Խորթ որդուն ամեն օր կովը տալիս էր, որ տանի արածացնի ու մի կտոր էլ կուտ հաց էր տալիս, ասելով.

— Տա՛ր, կովը արածացրու, էս մի կուտ հացն էլ քեզ. համդուռ կե՛ր, քո կովին ուտացրու, գնացող-էկողին էլ հաց տուր ու երեկոյան սաղ հետ բեր հացը։

Խեղճ աղջիկը լաց լինելով տանում էր կովը արածացնելու ու էլի հացը ետ էր բերում՝ ինքը քաղցած մնալով։ Իսկ երբ ուտում էր՝ բարկանում էր նրա վրա, չէր էլ ուտում, հացը սաղ էր բերում՝ էլի բարկանում էր. մի խոսքով ամեն անգամ նա գտնում էր որևէ պատճառ՝ նորա վրա բարկանալու, կամ ծեծելու։

Մի անգամ էլ, երբ այսպես լաց էր լինում, հարցրեց կովը, թե ինչո՞ւ է լաց լինում, նա ասաց, որ յուր խորթ մայրը նրան ծեծում է միշտ, ինքն էլ մի անտեր աղջիկ է. ամեն օր քաղցած են պահում։

Կովը ասեց.— Լա՛վ, մի՛ լաց լինի, ես քեզ ամեն օր կկերակրեմ, իմ երկու պոչերի մեջ՝ մեկում մեղր կա, մյուսում կարագ.

www.naregatsi.org

ամեն օր կհանես կուտես։ Երեք օրից հետո ինձ պիտի մորթեն, դուն իմ մսից չես ուտիլ, կժողովես իմ բոլոր ոսկորները ու կտանես մի անկյուն կթաղես։

Այսպես նա կովի պոզերից կերակրվում էր ու մոր տված կուտ հացը վերադարձնում էր տուն։ Մի անգամ էլ գնաց կովը արածացնելու. նա ամեն անգամ գնալիս տանում էր թեշին ու բուրդ մանում, այս անգամ էլ նա թեշին վեր կալավ ու գնաց կովը արածացնելու, նա կանգնեց մի տան կտրանը ու մանում էր թեշին. նա մոտ էր կանգնած տան երդկին։ Մանելիս հանկարծ թեշին ընկավ երդկի միջով՝ տան մեջը. նա չգիտեր թե ինչ անի, սկսեց լաց լինել, թե մայրը կծեծի, եթե առանց թեշու գնաց տուն։ Երդկից ներքև մտիկ արեց, տեսավ մի պառավ նստած է, նա խնդրեց իր թեշին։ Նա ասաց, որ ինքը մի պառավ կնիկ է, աչքերը չեն տեսնում, ոտներով չի կարում ման գալ, թող ինքը դռնով գա ու վերցնի։ Նա վախվրխելով դռնով ներս մտավ, որ վերցնի թեշին։ Երբ մտավ տուն, պառավը խնդրեց, որ գա իր գլուխը քութութի. նա գնաց քութութեց։

Պառավը ասեց.— Դու որ ինձ լավություն արեցիր, ես էլ ուզում եմ քեզ լավություն անել, էստեղից դուրս կերթաս. առաջդ իրեք աղբյուր կերևա՝ մինը սիպտակ, մինը սև, մինը դեղին։ Սիպտակ աղբյուրը կթողես, սևն էլ կթողնիս ու դեղին աղբյուրի մեջ կըկոխես գլուխդ ու մազերդ ոսկի կդառնա, նույնպես ատամներդ, եթե այն ջրից խմես։

Աղջիկը շնորհակալություն հայտնեց նորան ու գնաց, ինչպես ասել էր, արեց. մազերը ու ատամները ոսկի դարձան։ Նա գլուխը թաշկինակով կապեց՝ վախենալով, որ մայրը կծեծի իրան։ Կովը քշեց ու տուն դարձավ։ Մայրը էլի մի պատճառ գտավ ու սկսեց նորան ծեծել։ Երեկոյան մթնեց թե չէ նա նկատեց, որ սենյակի մեջ մի սաստիկ լույս տարածվեց, բայց ճրագը վառած չէր։ Նա դե՛ս, դե՛ն մտիկ արեց, բայց չկարողացավ իմանալ թե ինչից է. վերջապես նկատեց, որ իր խորթ աղջկա գլխից է այդ լույսը։ Նա գլուխը աղլուխով կապել էր, բայց թաշկինակը իր վրա մի փոքրիկ ծակ ուներ ու այնտեղից լույսը ելնում էր։ Նա հրամայեց բաց անել գլուխը, և երբ տեսավ նրա ոսկի մազերը, որ լույս էին տալիս մութ սենյակում, մնաց զարմացած, սկսեց նրան ծեծել. նա պատմեց բոլորը, թե ինչպես եղավ, որ նրա մազերը ոսկի դարձան։

www.naregatsi.org

Ինքն իրան միտք արեց, եթե սա գնաց ու մազերը ոսկի դառան, ինչու իմ աղջիկը չի կարող գնալ։

Մյուս օրը նա իր հարազատ աղջկանը ուղարկեց. կովը տվեց, որ տանի արածացնի։ Խոսք չկա, նորա համար լավ-լավ կերակուրներ եփեց ճանապարհի համար, գլուխը լվաց, լավ շորեր հագցրեց։ Նա գնաց ինչպես առաջվա աղջիկը, նա էլ կանգնեց էս պառավի կտրան վրա ու դիտմամբ թեշին վայր գցեց ձեռից նորա երդիկով ու փոխանակ խնդրելու, սկսեց հայհոյել, որ բերի իր թեշին տա։ Նա ինչպես առաջվա աղջկան, նույնպես և սորան ասեց, որ ինքը ծերության պատճառով չի կարող տալ նորա թեշին. թող ինքը գա ու վերցնի։ Նա գնաց թեշին վերցնելու, պառավը խնդրեց որ իր գլուխը քութութի. նա գնաց քութութելու և երբ տեսավ, որ նրա գլուխը կեղտոտ է՝ չքութութեց, այլ մինչև անգամ լավ հայհոյեց։

Պառավը ասեց.— Կերթաս այստեղից առջևդ իրեք աղբյուր կերևա, մինը սիպտակ, մինը սև, մինը դեղին, սիպտակի տակ չես պահի գլուխդ, այլ սևի, ու մազերդ ոսկի կդառնա։

Նա ուրախ-ուրախ գնաց ու գլուխը կոխեց սև աղբյուրի մեջ. ճակատին մի երկայն մխ դուրս եկավ։ Նա մնաց զարմացած ու գլուխը ծածկեց, որ այն չերևա ու շտապեց տուն գնալ, ճանապարհին կրկնապատիկ հայհոյելով պառավին։

Մորը ցույց տվեց իր ճակատին դուրս եկած բանը։

Մայրը խեղճ խորթ աղջկանը ծեծեց, իբր թե մեղավորը նա է, բայց ոչինչ չդառավ սորանով, դանակով կտրեց, բայց ավելի երկայն դուրս եկավ նրա փոխանակ։ Զարանները ի՞նչ, պետք է այնպես թողնեին։ Երկու օր սրանից անց կացավ. նրանք մորթեցին իրանց կովը, մատաղ արին։ Սրա մսից ևս իսկի չկերավ, այլ նրանց կերածից մնացած ոսկորները ժողովեց ու տարավ մի անկյունում, հեռու տեղ հորեց։ Երբ խորթ մայրը հարցրեց, թե ինչո՞ւ չի ուտում, նա ասաց, որ ինքը կերել է, չի ուզում։

Մի քանի օր անց կացավ սրանից հետո, մայրը ու իր աղջիկը գնացին եկեղեցի, որովհետև այդ օրը շատ նշանավոր օր էր, սաղ քաղաքը համարյա եկեղեցու մեջ էին, միայն այս խեղճ աղջկան չէին տարել։ Երբ մեր ու աղջիկ եկեղեցի գնացին, նա գնաց փորեց յուր հորած ոսկորները, տեսնի, թե ինչ են եղել, ու երբ փորեց՝ տեսավ նրա տակ մի մեծ գոմ կա, ուր մի հրեղեն ձի է կանգնած. նա ծվծվացրեց թե չէ, իսկույն սա դուրս եկավ ու ասեց նրան.

www.naregatsi.org

— Ինչ տեսակ շորեր ուզում ես, ունեմ՝ կարող ես հագնել ու ո՛ւր ուզում ես՝ կտանեմ։

Այս հրեղեն ձին ոտից մինչև գլուխ ոսկով էր պատած։ Նա լվացվեց, մաքրվեց, լավ-լավ շորեր հագավ, ոսկե բաշմակներ հագավ ու նստեց այդ ձիու վրա ու գնաց եկեղեցի։

Ձին շոքեց և նա վայր եկավ ձիուց, մոմ առավ, վառեց, ժամում աղոթք արեց։

Եկեղեցում գտնված բոլոր մարդիկը նրան էին նայում ու իրար հարցնում, թե սա ում աղջիկն է, բայց ոչ ոք չէր ճանաչում։ Եկեղեցում մի ժամ մնաց ու դուրս եկավ, ձին էլի շոքեց, աղջիկը նստեց ու քշեց· սաղ ժողովուրդը մնաց նրա ետևից մտիկ անելով։ Նա այստեղից երբ դուրս եկավ ձին էլետ առաջվա տեղում չկապեց, այլ այնպես շորերը հագած, նստած ձիու վրա, գնաց ծովի ղրաղը ման գալու, ու իր ոտից բաշմակի մի հատը ընկավ ծովի մեջ, նա տակը չգնաց այլ երեսին տմբտմբում էր։ Նա շատ ափսոսեց սրա վրա, բայց ինչ պիտի աներ. չէր կարող հանել ծովից, վախենում էր չլինի թե ձին խեղդվի. նա թողեց ծովի երեսին այն ու եկավ շտապով, ձին յուր գոմում կապեց. հանվեց ու յուր առաջվա հին շորերը հագավ, սպասում էր խորթ մոր գալուն։

Նա եկավ յուր աղջկա հետ ու սկսեցին ծիծաղել նրա վրա, թե.

— Ա՛յ այնպիսի աղջիկ պետք է լինել, ոչ թե քեզ պես կեղտոտ։ Նա էլ կարծես քեզ պես լիներ, նրա մազերը քոնի պես էին։

Նա իր մեջ ծածուկ ծիծաղում էր, բայց վախենում էր ասի։

Հիմա գնանք տեսնենք, թե ինչ եղավ նրա գցած բաշմակը։

Թաքավորի ծառան երեկոյան ձիաները բերեց ծովի ափը ջրելու։ Միայն նրանք ջուր չխմեցին, ջրի մեջ ինչ որ լույս էր երևում։ Այս լույսից նրանք վախենում, հուշտ էին լինում։ Ձիապանը լավ մտիկ արեց ու տեսավ, որ ծովի վրա մի ոսկե բաշմակ, նա իսկույն շորերը հանեց, մտավ, հանեց այն ու ուրախ-ուրախ տարավ թաքավորի տղին ընծա։ Ուրախությունից ձիանքը անգամ չջրեց։ Թաքավորի տղեն մնաց միտք անելով, թե բաշմակը ո՞մը կարող է լինել։ Ուզեց, որ անպատճառ գտնի նրա տերը։ Այսքանն էր իմանում, որ այս աղջկա քոշ է։ Ամեն տեղ, նա յուր ծառաներին, նազիր-վեզիրը առած սկսեց ման գալ, բոլոր աղջկերանց ոտները մտիկ անել, բայց ոչ ոքի ոտին չեկավ։ Այս համբավը հասավ և այս քաղաքի բնակիչներին, ուր այս աղջիկն էր կենում յուր խորթ

www.naregatsi.org

մորով։ Ամենքը լվանում, հաղրում էին իրանց ոտները, որ հաղնեն այն բաշմակը։

Խորթ մայրը ևս յուր աղջկանն էր լվանում, իսկ այն խեղճ աղջկա վրա ուշադրություն դարձնող չկար։ Թաքավորի տղեն յուր նաղիր-վեզիրներով եկավ այս քաղաքը։ Բոլոր աղջկերանց ոտները փորձեց, եկավ այս խորթ մոր տունն ևս։ Նա իսկույն այն խեղճ աղջկանը քթոցի տակ ծածկեց ու դուլպա տվեց, որ մանի, սասանելով, որ այդտեղից դուրս չգա։ Աղջկան առաջ քշեց, հագցրին նորան բաշմակը, բայց չեղավ նորա ոտին. Թաքավորի վեզիրը նստած էր այն քթոցի վրա, որի տակ ծածկած էր այն որբ աղջիկը ու դուլպա էր մանում։ Նա քթոցի ծակերից դուլպայի մլով ծակեց վեզիրի ոտը։ Նա ասաց, թե այստեղ ինչ մարդ է ծածկվել ու հրամայեց հանել։ Քթոցը հետ քցեցին ու տեսան մի սիրուն աղջիկ, բայց շատ վատ հագցրած։ Թաքավորի տղեն սրա վերայից մի բան գուշակեց։ Ուզում էր փորձել նրա ոտին, նա ասաց, թե հարկավոր չէ փորձել, այդ յուրն է. ավելացնելով, թե հաստատելու համար կարող է սրա մի թայը ևս բերել ու գնաց իսկույն ծվծվացրեց, հրեղեն ձին դուրս եկավ. աղջիկը հագնվեց սիրունիկ ու մի թայը բաշմակի ևս հագին, մի ոտը առանց բաշմակի, եկավ կանգնեց Թաքավորի տղի առջևը։ Նա իսկույն գրկեց նրան ու ասաց, թե նա իրենն է, ինքը նրանը, բաշմակի մի թայը ևս տվեց հագնի ու տարավ յուր պալատը ու մեծ հարսանքով պսակվեց նրա վրա։ Խորթ մայրը ջիգրու պատռում էր։

Մի օր սա գնաց յուր աղջկանը՝ Թաքավորի տղի կնկանը տեսնելու. այդ ժամանակ Թաքավորը ինքը տանը չէր, նրա տղեն էր տանը միայն։ Նա հարցրեց աղջկա հալը ու հետո ասեց, որ տանի ծովում լողացնի. ծովը հենց Թաքավորի պալատի առջևն էր։ Թաքավորի տղեն տվեց, որ տանի լողացնի։ Խորթ մայրը լողացնելիս բռնեց ու գցեց ծովը։ Ծովում նա մի ոսկի ձուկ դառավ։ Իսկ սրա փոխանակ յուր աղջկանը տարավ Թաքավորի պալատը։ Թաքավորն ու նրա տղեն մտիկ էին անում, որ սա ուրիշ աղջիկ էր, բայց չէին կարողանում բան ասել, վախենում էին իրանց անունից։ Էն աղջիկը, որ ոսկե ձուկ էր դառել, ծովի միջից վեր էր թռչում միշտ դուրս ու էլի ընկնում մեջը։

Թաքավորը, որ իմաստուն էր, հասկացավ թե բանը ընչումն է. իր տղին կանչեց ու ցույց տվեց այն ոսկե ձկանը, ասելով, որ նա

www.naregatsi.org

է յուր առաջվա կինը և թե այն պառավ է, որ գցել է ծովը։ Այս խոսակցությունը լսեց այն խորթ մոր աղջիկը ու սուտ հիվանդացավ։

Աշխարհում ինչքան բժիշկ բերին, նրան չկարացին լավացնել։ Վերջը ինքը ասեց, որ նա չի լավանա մինչև էն ոսկե ձուկը, որ միշտ վեր է թռչում, չբռնեն ու չեփեն իր համար, նա ուտի։ Թաքավորը հրամայեց, որ բռնեն այն ոսկե ձուկը ու իրեն տան նրան։ Նա կերավ սաղ ձուկը ու աշխատում էր, որ իսկի փուշ էլ չմնա, սուփրի վրա, այնպես որ փշով կերավ, պրծավ, բայց փշի մի կտոր սուփրի տակ մնացել էր ու նա չէր նկատել։ Երբ տարավ ծառան սուփրեն թափ տվեց դուրսը, այն փշի կտորը գետնի վրա ընկնելով, մյուս օրը մի ահագին խնձորի ծառ դուրս եկավ թաքավորի պալատի բակի մեջ, որի վրա երեք հատ շատ կարմիր խնձոր կային։ Թաքավորն իսկույն իմացավ, որ սա այն աղջիկն է ու ցույց տվեց յուր տղին։ Այս բանը լսեց դարձյալ նա ու էլի ասեց, որ տկար է և եթե չուտի այն երեք խնձորը ու այն ծառը բոլորովին չկտրեն ու այրեն փայտը, նա չի սաղանա։ Թաքավորը հրամայեց կտրել ծառը, իսկ երեք խնձորը տալ նրան ուտելու։ Ծառը երբ մանր-մանր կտրտում էին որ այրեն, մի կտոր այս ծառի փայտից հեռու ընկավ ու նրանք չնկատեցին։ Մի պառավ կնիկ ամեն օր գալիս էր ու թաքավորի տանը փետից, բանից ժողովում ու նրանով կառավարվում։ Թաքավորի շներին հաց տալիս՝ ինչ ավելանում էր, նրան էին տալիս։ Այս անգամ էլ եկավ ու փայտ ժողովելիս, նկատեց այդ փայտի կտորը, տեսավ շատ սիրուն փայտ է, վեր կալավ ու խոստացավ չվառել նրան, ու իրա տանը պահում էր։ Այս պառավը քանի գնում էր դուրս ու գալի, սրանից դենը տեսնում էր, որ յուր տունը թամուզ-իստակ ավլած է, ամեն բանը յուր տեղը դրած։ Նա զարմանում էր. թե այս ո՞վ պիտի լինի տուն մաքրողը։

Մի օր էս դրսեից ծածուկ նայեց և տեսավ, որ այն յուր սիրուն փայտի կտորի միջից մի ոսկե մազերով հրեշտակի նման աղջիկ դուրս եկավ ու սկսեց տունը ավլել։ Նա դուռը բաց արեց և նրան խստեց։ Աղջիկը ուզում էր, որ էլի հետ մտնի յուր փայտի բնի մեջ, միայն պառավը չթողեց։ Նա պառավին մի բուռը փող տվեց, նա գնաց նրա համար լավ շորեր առավ, բերեց նրան հագցրեց։ Հետո ասեց պառավին, որ գնա թաքավորին ու նրա տղին ասի, թե իրա տանը մի աղջիկ է եկել, կանչում է իրանց մոտ ղոնաղ։

www.naregatsi.org

Պառավը առաջ վախենում էր, բայց նա ստիպելով վերջապես կարողացավ ուղարկել թաքավորի պալատը։ Պառավը գնաց ու թաքավորին հայտնեց, որ այսպիսի մի աղջիկ յուր մոտ հյուր է եկել, խնդրում է, որ իրանք ևս գան յուր տունը։

Թաքավորը, որ իմաստուն էր՝ հասկացավ բանի էությունը ու իր տղեն առած գնաց։ Աղջիկը նրանց բարև տվեց, իրար հետ հաց կերան ու հացի ժամանակ թաքավորը խոսք գցեց նրա վրա, հարցրնելով թե նա այն աղջիկը չի՞։ Նա ասաց, որ այո՛, ինքը այն աղջիկն է, ու պատմեց յուր գլխով բոլոր անցածը։ Հետո թաքավորն ու տղեն փաթաթվեցին նրա ճտովը, ուրախությունից չգիտեին ինչ անեն։ Աղջիկը յուր մազից մի հատ կտրեց տվեց, որ տանեն յուր ձիու աչքի առջև բռնեն. նա ինքը կգա։ Նրա մազը տարան ձիու աչքի առջև պահելուն պես, գժի նման իսկույն վազ տվեց դպա յուր տերը։ Նա գիտեր ու ընկնում էր յուր տիրոջ ոտները, լիզում նրա երեսը։ Նա նստեց յուր ձիու վերա ու պառավին մեծ փող տալով, գնաց յուր պալատը։

Այդ խորթ մոր աղջկանը կապեցին ղաթրի պոչից ու բաց թողին, որ տանի սարով, քարով տա, մեծ թիքեն ականջը հետ բերիւ։ Իսկ այս աղջկա հետ կրկին թաքավորի տղեն ապրեց, ինչպես յուր կինը։

Ճշմարտությունը էսպեսով աշխարհումս իսկի չի կորչում։

www.naregatsi.org

9. ՓԱՐՇԵՎԱՆԳԸ ՈՒ ՆՐԱ ԱՐԱԾ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Կըլնի չըլնի մի թաքավոր. սա իրեք տղա է ունենում։ Հոր մահից հետո, սրանց տեղակ մի ուրիշ մարդ է զոռով թաքավորում ու էսպեսով նրանց զրկում։

Թաքավորի տղերքը ջահել ին ըլնում՝ չպսակված։ Իրար հետ խոսում են, թե փողի պակասություն չունենք, մեր հոր թախտը խլեցին՝ խլեցին. ի՛նչ անենք, եկեք մեր բախտը փորձենք ու պսակվենք։

Ամեն մեկը իրա համար նետ ու անեղ շինել տվեց, ու իրեքը միասին սկսեցին իրենց նետերը գցել, ասեցին՝ ում տան վրա ընկնի, նրա տանից պտի առնինք մեզ համար աղջիկ։

Նրանք գցեցին. մեծ որդու նետը ընկավ մի գեներալի տան վրա, միջնեկինը՝ մի հարուստ մարդի տան վրա, իսկ պստիկինը գնաց ծովի ղրաղը ընկավ, երևի սրա բախտն էլ էս էր։

Ամեն մարդ իր բախտի բերածը իրան կնիկ առավ։ Պստիկ եղբայրը գնաց ծովի ափը, էդտեղ քնեց։ Գիշերը ծովից մի Գորտ եկավ ու մտավ նրա ծոցը։

Առավոտը տեսավ մի Գորտ իր ծոցում. գոհությամբ վեր կացավ այս Գորտը ու տարավ իրա տունը։ Նա գնում էր որսի, իսկ

www.naregatsi.org

Գորտին թողնում տանը, բայց վերադառնալով տուն տեսնում էր տունը մաքրած է, ամեն բան յուր տեղը դրած. մնաց զարմացած։ Այս բանը երբ մի քանի անգամ կրկնվեց, նա մտքում դրեց հետևել և իմանալ, թե ով է այս բոլոր բանը անողը։

Մի անգամ էլ որսի գնաց, իր դռանը կացավ. նա դռան մեջ մի ծակ էր արել ու այն տեղից սկսեց նայել։ Տեսավ, որ իր բերած Գորտի միջից մի էնպիսի գեղեցիկ աղջիկ դուրս էկավ, որ նրա բերանը մնաց բաց, ու սկսեց տունը սրբել։ Նա իսկույն դուռը բաց արեց և նորան դրկեց։ Նա վազեց ուզում էր կրկին մտնել իր Գորտի շապկի մեջ, միայն թաքավորի տղեն չթողեց։

Աղջիկը ասեց.— Ես քունն իմ, դուն իմը, միայն չայրես այս շապիկը, թե չէ վատ բաներ կգա քո գլխին։

Նա չլսեց նրան ու տարավ շապիկը գցեց վառած թունտիրը ու այրեց, վախենալով թե նա կարող է կրկին Գորտ դառնալ։ Աղջիկը շատ տխրեց այս բանի վրա, բայց եղած բանին ի՛նչ կարող էր անել։

Մի անգամ թաքավորի տղեն գնաց որսի, երեկոյան հետ դառնալիս ճանապարհի վրա տեսավ նստած մի կարճլիկ մարդ, որի բոյը հազիվ մի թիզ լիներ, իսկ միրուքը մինչև երկինք։ Նա խընդրեց իրեն ընդունել տան մեջ իբրև ծառա. թաքավորի տղի սիրտը ցավեց նրա վրա ու ընդունեց նրան իր տան մեջ։ Նրա կնիկը զգուշացրեց, բայց նա ուշադրություն չդարձրեց նրա ասածի վրա։

Մի անգամ, երբ նա գնացել էր որսի, այս կարճ մարդը մի փետուր կրակին տվեց և մի հրեղեն ձի եկավ կանգնեց դռան առաջ։ Նա այս աղջկանը դրեց ձիու վրա, ինքը նստեց ու տարավ։

Այս ձին այնպիսի ձի էր, որ վեց տարվա ճանապարհը մի քսակի մեջ էր գնում։ Աղջկանը տարավ իր տունը, որ մի մեծ քարի տակ էր, այնպիսի քարի տակ, որ ինչքան հաղար մարդ գային՝ չէին կարող վերցնել, բայց սա մի ձեռով դեն էր գցում։

Թաքավորի տղեն այդ օրը երբ դուրս եկավ որսի, ձին ինչ որ դժվարությամբ էր առաջ գնում, կարծես չէր ուզում գնալ, կարծես մի բան էր ուզում ասել։ Այս բանը նկատեց նա ու ճանապարհի կեսից ձիու գլուխը հետ դարձրեց։ Ձին կրակի նման թռավ ու հասավ տուն. ներս մտավ՝ ի՛նչ տեսնի՝ ոչ իր կնիկն է տանը, ոչ էն կարճլիկը։ Էստեղ նա կծեց իր մատը ու միտքը բերեց իր կնկա

www.naregatsi.org

ասածը։ Նա գնաց իր մեծ եղբոր մոտ սորա համար խորհուրդ հարցնելու, պատմեց բոլոր պատահածը, նա ասաց. «Ես ինձ համար չկարացի բան անել, դու ինչ կարող ես անել»։

Այս մեծ եղբայրը, պետք է ասած, բավականին քաջ էր, նա հետո ավելացրեց. «Ես քեզ տալիս եմ հարյուր մարդի ուժ, գնա հաղթի նրանց»։

Հետո գնաց միջնեկ եղբոր մոտ։ Հարյուր մարդի ուժ էլ նա տվեց։ Հետո լսեց թե մի ուրիշ մարդ էլ կա շատ քաջ. սորա մոտ էլ գնաց, հարյուր մարդի ուժ էլ սա տվեց. հայտնելով, որ Փարշևանգ մի իմաստուն մարդ կա. «Գնա՛ նրա մոտ, նա ամենից շատ կարող է օգնել»։ Սա գնաց նրա մոտ, պատմեց իր գլխով անցկացածը։

Փարշևանգը ասեց, որ նրա հայրը իրան շատ լավություն է արել, այդ պատճառով էլ ինքը պարտավոր է նրան օգնել այս բանի մեջ և խոստացավ, որ ինչ կըգա ձեռիցը՝ չխնայի։

Փարշևանգը նրան մի փետուր տվեց, ասելով որ կտանի այնինչ քարի տակը դնելուն պես, անգին քարը մի կողմ կընկնի։ Այնտեղ է այն կարճլիկ մարդի տները, ուր յուր կինն է։

— Քո կինը կդնես ձիուդ վրա ու կքշես. նա երեք տարուց հետո դուրս կգա իր տնից. կգա քո ետևից և ճանապարհի կեսին կըհասնի քեզ, կսպանի, բայց դու առաջուց խրատիր, որ քո մարմինը կտրտած լցնի խուրջինը, դնի ձիուդ վրա, մի պլետ տա ու թողնի, նա դուզ ինձ մոտ կբերի, ես քեզ կսաղացնեմ։

Փարշևանգը ինչպես ասեց՝ նա գնաց արեց, իր կնիկը դրեց իր ձիուն ու քշեց։ Այն կարճլիկ մարդը իր տան մեջ մի իմաստուն մարդ ուներ։ Երբ երեկոյան նա վերադարձավ, ասեց, որ ֆլան մարդը տարավ իր աղջիկը։ Նա ժպտաց ասելով։

— Իմ ձեռից ևս նա ո՞ւր կարող է փախչել։

Անցավ իրեք տարի, նա նոր ձի նստեց ու մի բոպեի մեջ նրան հասավ, խլեց աղջիկը, ուզեց սպանել, նա խնդրեց, որ սպանելուց հետո իր մարմնի կտորները լցնի խուրջնի մեջ դնի ձիու վրա ու մի պլետ տա, թող ձին ուր ուզենում է գնա։

Նա խոստացավ կատարել նրա խնդիրը։ Սպանեց նորան և մարմինը դրեց ձիու վրա։ Խփեց ձիուն, ու ձին գնաց մարմինը տվեց Փարշևանգին, իսկ աղջիկը այն կարճ մարդը տարավ իր տունը։ Փարշևանգը մտավ իր զերզանքին, շվացրեց՝ հազարավոր օձեր եկան. նա այդ մարմինը տվեց նրանց, որ կտորները իրար

www.naregatsi.org

գցեն՝ սաղացնեն։ Նրանք կատարեցին նրա հրամանը. կտորները իրար կպցրին, միայն թե քիչ տեղ պակասում էր. հետո մի անգամ էլ շվացրեց՝ մի շատ մեծ օձ եկավ։ Նա ասաց սրան, որ իր պոչից կտրի ու պակաս տեղերը կպցնի. նա կատարեց իր հրամանը։ Մարմինը պատրաստ էր, մնում էր շունչ տալ. նա կանչեց նորա մեծ եղբորը։ Նա եկավ ու մի անդամ փչելով շունչ ստացավ ու վեր կացավ, նստեց իր տեղը։

— Ինչ շատ եմ քնել,— ասեց նա։

Բայց հետո նրան պատմեցին բոլորը։ Փարշանգը ասեց սորան.

— Այժմ մնում է մի ճար, որ կարողանաս քո կնիկը բերել նրա մոտից. այդ է, որ կարողանաս ձեռք բերել նորա ձիուցը։ Նրա ձիուցը միակ մի մարդ ունի. դու կերթաս նրա մոտ ու նոքար կըլինես նորա մոտ։ Քո նոքարությունը բոլորը երեք օր պիտի լինի. եթե այդ երեք օրվա մեջ դու նրա ասածները կարողացար կատարել՝ նա քեզ, ի՛նչ ուզես՝ կտա, և դու նրա ձիուց մի հատ կուզես, որ իրեք օրից հետո պիտի ծնվի։ Նա ընդամենը երեք ձի ունի։ Դու այդ երեք ձին պիտի արածացնես, այլևս ոչինչ։ Երբ ձին կտա քեզ, դու իսկույն առաջ ինձ մոտ կգաս, ես քեզ կասեմ, թե ինչպես պետք է բերել։ Իսկ եթե լավ ծառայություն չանես, նա քո գլուխը կտրելու է։ Նա իննսուն ինը մարդի գլուխ է կտրել, քունն էլ որ կտրի, հարյուրը կլրանա։

Թաքավորի տղեն, ինչպես Փարշանգը պատմեց, այնպես էլ կատարեց։ Գնաց այդ մարդի մոտ, նոքար մտավ։ Նա ասաց ծառայության բոլոր պայմանները, համարյա այն բոլորը, որ նրան ասել էր Փարշանգը։ Նրան տարավ ցույց տվեց այն բոլոր մարդոց գլուխները, որոնց վատ ծառայության համար նա կտրել էր։ Նա համաձայնեց այս բոլորին և մյուս օրվանից սկսեց իր ծառայությունը։ Նա հանձնեց սորան երեք հրեղեն ձիաներ, որոնց պետք է տաներ արածացներ առավոտյան և երեկոյան ժամը հինգին հետ բերեր։ Նա տարավ այս ձիաները արածացնելու կանաչ դաշտերի վրա։ Ձիանիքը արածում էին, նրա քունը տարավ ու քնեց այս կանաչ խոտերի վրա։ Այս հանգամանքից օգուտ քաղելով, ձիաները թռան գնացին այնպիսի տեղ, որ ամբողջ տարիներ մարդ ման գար, չէր կարող գտնել։ Վեր կացավ տեսավ ձիաները չկան, դե՛ս նայեց, դե՛ն նայեց՝ չկան։ Չգիտեր, թե ի՞նչ անի. ժամանակը արդեն լրանում էր, որ ձիաները պիտի տուն դարձներ։ Նա վերջապես,

www.naregatsi.org

վճռեց ինքը իրան սպանել, քան թե գնա ու նա իր գլուխը կտրի։ Նա ձեռքը տարավ գրպանը որ հանի դանակը, հանկարծ մի փետուր ընկավ ձեռը. նա շատ ուրախացավ. այս բոլորովին մտիցը ընկել էր, այս փետուրը Փարշևանգն էր տվել, որ նեղ օրերին կրակ տա՝ ինքը իսկույն կգա, կհասնի։ Նա իսկույն չախմախը տվեց-կրակեց փետուրը ու իսկույն Փարշևանդը հասավ նրան։ Հարցրեց, թե ինչ է ուզում և թե ինչ է պատահել։ Նա գնաց իր համար նետուաղեղ շինեց, իր ձին նստած նետը գցեց, նետը գնաց՝ ինքն էլ իր ձիով այն նետի ուղղությամբ թռավ, գնաց հասավ համարյա աշխարհի ծայրը, ուր հասել էին այն ձիաները ու ծեծելով հետ քշեց բերեց, տվեց նրան ու նա ուրախ-ուրախ տարավ տիրոջը հանձնեց։ Նա մնաց զարմացած ու տանելուն պես՝ համբուրեց նորա ճակատը ասելով, որ մինչև այսօր այսքան մարդի գլուխ եմ կտրել, ոչ մինն էլ չի կարողացել յուր ժամանակին հետ դարձնի։ Մյուս օրն էլ նա տարավ արածացնելու։ Այս անգամ էլ քնով անցավ ու ձիաները փախան ավելի հեռու. վեր կացավ տեսավ ձիաները չկան, այրեց փետուրը ու Փարշևանդը եկավ ու նա գցեց իր նետը ու նրանց ուղղությամբ գնաց, ձիաներին քշեց ու հետ բերեց։ Նա շտապով քշեց տարավ տիրոջ մոտ։ Այս անգամ էլ զարմացավ նա ու կրկին համբուրեց նորա ճակատը։ Մյուս օրն էլ նա տարավ արածացնելու ձիաները, էլի քունը տարավ. ձիանները այս անգամ թռան, երկընքին կպան, աստծո մոտ հասան։ Էլի վերկացավ, տեսավ ձիաները չկան. այն փետուրը կրակ տվեց ու Փարշևանդը եկավ գցեց իր նետը դեպի երկինքը. գնաց այնտեղ ու քշեց ձիաներին, բերեց տվեց նրան։ Նա յուր ժամանակին հանձնեց տիրոջը, նա այս անգամ էլ համբուրեց նորա ճակատը։ Հարցրեց թե ինչքան փող է ուզում, նա ասաց, թե նրան փող հարկավոր չէ, յուր նոր ծնվող ձիանոցից մեկը իրան տա, բավական է։ Ասենք շատ դժվար էր սորա համար այնպիսի մի ձի տալը, բայց ինչ կարող էր անել, քանի որ խոստացել էր։

Նա ասաց.— Այն ձիուց մի հատ իմ եղբայրն ունի, մի հատ էլ հիմա դու պիտի ստանաս, էլ ոչոք չունի։

Նա որ ասեց այս, էս մատը կծեց, իմացավ որ էն կարճլիկ մարդը ուրեմն սորա եղբայրն է, որ փախցրել է յուր կինը։ Արդեն իրեք օր անցել էր և ժամանակն էր ձիուն ծնելու։ Ծնելու ժամանակ, նրանք երկուսով գնացին ձիու մոտ կանգնեցին։ Երբ քուռակը գլուխը հանեց, նա իսկույն սանձը բերանը դրեց, որովհետև հետո էլ

www.naregatsi.org

սրան անկարելի էր սանձել, երբ առաջի ոտները դուրս հանեց, իսկույն նալեց, ամեն ոտին երեսունվեց նալն էր խփում, առաջ տասներկու հատ ոսկի նալներ, հետո տասներկու հատ արծաթ, հետո սրա վրա տասներկու հատ պողպատե, և այս ձիու արժանիքը հենց իսկ այս նալների մեջ է. ապա թե ոչ հասարակ ձիանց նման կլիներ։ Երբ մարմնի կեսը դուս եկավ՝ թամբը դրեց, երբ հետի ոտները դուրս եկան՝ դրանք էլ նալեց, միևնույն քանակությամբ նալ խփելով։ Երբ ողջ մարմինը դուրս եկավ ու կանգնեց՝ նրա խելքը գնաց նորա գեղեցկության վրա։ Նա հայտնեց յուր շնորհակալությունը նրան ու գնաց, նստեց նրա վրա ու քշեց ուղղակի Փարշանգի մոտ։ Նա ևս անչափ ուրախացավ։

Փարշանդը ասաց.— Այժմ գնա, այլևս չվախենաս, այս փետուրը տար այն քարի տակը դիր, քարը կբարձրանա. վեր կալ կնոջդ ու քշիր ձիդ, նա կգա հետևներիցդ, բայց դու չվախես, նա քեզ ոչինչ չի կարող անել։

Նա գնաց, ինչպես Փարշանդը ասել էր՝ արեց։ Քարը բարձրացավ, վեր կալավ յուր կինը, դրեց ձիու վրա ու քշեց։ Եկավ հասավ նույն տեղը, ուր առաջին անգամ նրան այդ կարճլիկ մարդը սպանել էր, այստեղ նա կրկին հասավ ու պահանջեց աղջկան. թուրը քաշեց, որ նրան խփի, բայց թուրը շհանած կես եղավ ու վայր ընկավ։ Նա իսկույն գլխի ընկավ, որ այլևս նորան չի կարող սպանել, խնդրեց որ խնայի իրեն, չսպանի։ Նա ներեց նորան։ Այն կարճլիկ մարդի և թաքավորի տղի ձիաները երբ իրար տեսան՝ ճանաչեցին, սկսեցին իրար հետ խոսել, սոքա հալալ եղբայր էին, մի մորից ծնած։ Այն կարճլիկի ձին հարցնում էր թաքավորի տղի ձիուն, թե ոնց է լայաղ անում, որ այնպիսի տգեղ արարածներին տանում է։

Նա ասաց.— Ընդհակառակը տգեղը քո մեջքինն է, մի՛ նայիր, իսկ ինձ վրա երկու ջահել սիրուն տղա և աղջիկ են նստած։

Կարճլիկի ձին վեր նայեց ու տեսավ, թե ինչպիսի տգեղ արարած է նստած յուր վրա։ Մեջքը շարժեց ձին ու նա թոզ դառավ, երկինքը բարձրացավ ու կրկին վայր ընկավ. իսկույն թաքավորի տղի կինը վայր եկավ մարդի թարքից ու նստեց նրա ձիու վրա ու գնացին երկուսը միասին։ Ամենքից առաջ Փարշանգին ներկայացան ու հայտնեցին իրանց շնորհակալությունը և հետո տեսան իրանց եղբայրներին ու այսուհետև առաջվա նման էլի սիրով ապրեցին երկար տարիներ։

---

www.naregatsi.org

10. ՔՈՒՅՐԸ ՋԻԳՅԱՐՈՎ ԿԸԼԻ

Մի շատ հարուստ վաճառական է լինում. ունենում է մի շատ սիրուն քույր, որ աշխարհի երեսին իսկի ճարել չի ըլնի։ Սա ուզում է գնա ուրիշ քաղաք խրիդ[1] անելու. ու իրա քրոջը պատվիրում է, որ տանից իսկի դուրս չգա, ուրիշների հետ չխոսի, որովհետև նրան երեխությունից էնպես էր պահել, որ նրա երեսը ոչ ոք դեռ չէր տեսել։ Այս պատվերը տվեց և իր ծառաներին, որ դռները կողպած պահեն, ոչ ոքի ներս չթողնեն։

Գալիս իր պատկերը և քրոջը հանել է տալիս, որ ինչ է օտարության է գնում՝ առանց իրար չտխրեն։ Քրոջ պատկերը ինքն է վերցնում, իրանը քրոջը տալիս. բացի այդ միմյանց մատանիներն էլ են փոխում. նա ճանապարհ է ընկնում ու մի քաղաք հասնում, ուր նա պիտի խրիդ աներ։ Նրա հարստության վրա սաղ քաղաքը զարմանում է. էս բանը ընկնում է թաքավորի ականջը. նա կանչում է սրան, հարց ու փորձ անում, թե ո՞րտեղից է, ի՞նչ բանի համար է եկել։

Նա պատմեց այս բոլորը։ Թաքավորը սորան շատ սիրեց և իրա մոտ ճաշի պահեց։ Ճաշի ժամանակ նա այնպիսի թաշկինակ հանեց, բերանը սրբեց, որ իսկի թաքավորը չէր ունենա։

---

1 Ապրանք (Ս. Բ.)։ Խրիդ առել նշանակում է առևտուր անել (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Ճաշից հետո ասեց նրան, որ նա իր խրիդը անի և հետո գիշերը գա իր պալատում քնի։ Նա շնորհակալություն հայտնեց նրան ու գնաց իր գործին, իսկ երեկոյան կրկին թաքավորի մոտ եկավ քնելու։ Հաց կերան ու պառկեցին։ Թաքավորի տղեն և նա մի սենյակի մեջ քնեցին. վաճառականը շորերը հանելիս հանեց գրպանից քրոջ պատկերը ու սեղանի վրա դրեց։

Առավոտը լուսը բացվեց թե չէ, նա շտապով վեր կացավ ու գնաց իր գործին։ Այն պատկերը մնաց սեղանի վրա։

Թաքավորի տղեն պատահմամբ նկատեց այդ պատկերը ու շատ հավանեց էդ աղջկանը. տարավ մորը ցույց տվեց ու ավելացրեց. «Թե այս աղջիկը ինձ կնիկ չլնի՝ ես ինձ կսպանեմ»։ Մարդ ու կնիկ համաձայնվեցին այդ բանին, իսկ վաճառականը իր առուտուրին գնալով՝ հանկարծ քրոջ պատկերը միտը ընկավ, ձեռը գրպանը տարավ ու տեսավ՝ չկա։ Իսկույն, առանց ժամանակ կորցնելու, շտապեց թաքավորի պալատը ու չգտավ սեղանի վրա. հարցրեց թաքավորի տղին, նա առաջին անգամ ուրացավ, բայց սաստիկ խնդրելուց հետո խոստովանեց, որ իրեն մոտ է, միայն անպատճառ նրան մտադիր է առնել իրեն կին։ Նա ասաց, որ դա իրեն քույրն է. եթե թաքավորի տղեն կբարեհաճի, նա մեծ ուրախությամբ կտա։ Բայց այս բանը ավելի հաստատելու համար մի լավ մատանի ևս տվին, իբրև նշան։

Թաքավորի վեզիրը այս իմանալով՝ մտածում էր մի պատճառ գտնել, որ այս պսակը գլուխ չգա. որովհետև ինչպե՞ս կարելի է՝ թաքավորի տղեն լայաղ անի, մի հասարակ մարդի քրոջ վրա պսակվելու։ Նա ահա թե ինչ սուտ բան հաղորդեց թաքավորին. նա ասաց, որ այդ աղջկանը ինքը լավ է ճանաչում, նա անառակ կին է։ Թաքավորը սաստիկ բարկացավ վաճառականի վրա ու հրամայեց վեզիրին, որ ինքը գնա էն աղջկա մոտ ու այդ բանի համար մի ապացույց բերի. եթե ճշմարիտ եղավ՝ վաճառականին գլխատել, իսկ եթե ոչ՝ վեզիրին. քառասուն օր ժամանակ նշանակեց։

Վեզիրը շատ փող վեր կալավ թաքավորից ու գնաց. մի տեղ վեր եկավ էդ վաճառականի քաղաքում։ Առաջ ինքը անձամբ ուզեցավ նրա քրոջ մոտ գնալ. գնաց, բայց տեսավ, որ ծառաները դռան առջև պահապան են կանգնած ու դուռն էլ փակած է՝ ոչ ոքի ներս չեն թողնում, մինչև անգամ չծանոթացրին. նա տխուր-տրր-

29—2573

www.naregatsi.org

տում հետ դառավ. արդեն երեսուն ինը օր անց էր կացել, մնացել էր մի օր, որ ժամանակը լրանա։ Մի աղքատ պառավ կին քուչովը անց էր կենում ու ամենքից ողորմություն ուզում, սորա մոտ էլ ներս մտավ ու ողորմություն ուզեց։ Նա նրան շատ փող բաշխեց ու ասեց, որ «փորձեմ, գուցե սորա միջնորդությամբ բալքի մի բան անեմ»։ Նա ասաց նրան իր միտքը ու խոստացավ իր քաշով մեկ փող տալ, եթե կհաջողացնի նրանից մի որևիցե բան գողանալ ու իրան տալ։ Քավթառ պառավը հանձն առավ ու գնաց աղջկա մոտ, իբրև աղքատ ողորմություն խնդրեց ու ասաց, որ տեսել է նրա եղբորը, որ իրանց շատ լավություն է արել, նրանից շատ բարև է բերել։

Խեղճ աղջիկը բոլորովին անմեղ, նա էլ սկսեց հարց ու փորձ անել իր եղբոր մասին. շատ պատվեց նրան վերջում, երբ շատ իրար ճանաչեցին, խնդրեց իր գլուխը լվանալ։ Նա մեծ ուրախությամբ հանձն առավ այդ. լավ լվաց նրա գլուխը ու պառկեցրեց քնելու, ասելով, որ ինքն էլ գլուխը պիտի լվանա ու քնի։ Գլուխը լվանալիս եղբոր մատանին որ մատին էր, մնաց սառլի վրա։ Պառավը վեր կալավ ու փախավ վեզիրի մոտ, որից մեծ գումար ստացավ դրա համար։ Իսկ վեզիրը շատ ուրախ վերադարձավ թաքավորի մոտ, ցույց տվեց մատանին։ Այն որ վաճառականին ցույց տվին, նա ասաց, որ հիրավի իր քրոջից է բերել ու հանձն առավ խեղդվել, միայն թե խնդրեց, որ գնա իրենց երկիրը, մի անգամ նայի իրանց տան վրա ու կրկին գա, թող խեղդեն. թաքավորը հետաձգեց նրա մահվան պատիժը ու պահապան դնելով վաճառականի հետ, թողեց գնա իրան երկիրը ու գա։

Վաճառականը երբ իրան քաղաքը հասավ, գնաց իրան տուն ու տանից մի լացի ձեն լսեց. ձեն տվեց քրոջը, սա դուրս եկավ՝ լացից աչքերը ուռած. նա միայն քրոջը երկու խոսք ասեց. «ես գնում եմ, ինձ քո պատճառով խեղդում են, արի հետևիցս». ու ինքը կրկին հետ դառավ։

Աղջիկը իսկույն մատը կծեց, որ այս լսեց։ Առանց ժամանակ կորցնելու իսկույն կառեթ նստեց, հագնելով մաքուր շորեր ու եղբոր հետևից գնաց։ Դեռ չէր հասել քաղաքը, տեսավ դաշտում մի պառավ կնիկ բահը ձեռքին ջրում է անմշակ հողը. հարցրեց նրան պատճառը, նա ասաց, թե ոչ ոք՝ չի կարա քաշի իրա սրտի դարդը։

Աղջիկը շատ ցոռեց սա վերջապես խոստովանեց, որ այսօր

www.naregatsi.org

մի երիտասարդ վաճառականի թաքավորը խեղդել է տալիս այն պատճառով, որ նրա քրոջը թաքավորի տղեն ուզում էր առնել; միայն վերջը անառակ է դուրս եկել, նրանից նշան են բերել ու այժմ թաքավորը խեղդել է տալիս, և թե նա շատ բարի մարդ էր, իրան էլ շատ օգնություն էր արել։ Մի բուռ ոսկի տվեց պառավին ու շտապեց առաջ։ Ողջ քաղաքը ժողոված էր մի տեղ, ասեղ գցելու տեղ չկար։

Ժողովուրդը մի կողմ սեղմելով նա գնաց ուղղակի թաքավորի մոտ. եղբորը արդեն կախաղան էին բարձրացրել, պիտի խեղդեին։ Նա խնդրեց մի քանի խոսք ասել, նրան իրավունք տվեց՝ տեսնելով այսպիսի մի գեղեցիկ աղջիկ, որին կարծես թե տեսել էր նա մի տեղ, միայն միտը չէր գալիս։ Աղջիկը հարցրեց թե՝ ինչո՞ւ է խեղդում էս երիտասարդին. թաքավորը պատմեց եղելությունը։

Աղջիկը ասեց, թե՝ ո՞վ է ասում այդ. նա ասեց, թե՝ իմ վեզիրը, ու կանչեց նրան աղջկա մոտ։

Աղջիկը ասեց.— Դու ե՞ս նրանից ստացել այս մատանին, եթե լինի նրան կճանաչե՞ս։

Նա ասաց.— Ինչպես չէ, իսկույն կճանաչեմ նրան, երբ կը-տեսնեմ։

Աղջիկը ասաց.— Այս մատանին իմ մատից ես հանել։

Նա ասաց.— Չէ՛, չէ՛ աստված ոչ անի, այդ ո՞վ է ասում։

Այն ժամանակ նա դարձավ դեպի յուր եղբայրը ու ասաց.— Սա իմ եղբայրն է, ես իր քույրը։

Բոլորը մնացին զարմացած։ Թաքավորը իսկույն հրամայեց վաճառականին ցած բերել ու վեզիրին խեղդել տալ։ Իսկույն կատարեցին նրա հրամանը. իսկ իր տղին պսակեց վաճառականի քրոջ վրա ու օխտը օր, օխտը գիշեր հարսանիք արին, կերան խմեցին, քեֆ արին։ Նրանք իրանց մուրազին հասան, դուք էլ ձեր մուրազին։

www.naregatsi.org

11. ՄԻ ՀԱՅԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի մարդ է ըլնում, ինքը հայ։ Սա մեռնելիս կանչում է իր որդուն ու խրատ տալիս։ Սա ասում է նույնպես և իր որդուն, թե մի հրացան ունի, որ ինչ որս ասես՝ վեր կգցի, միայն որս գնալիս՝ արեգակ տեղ որս անի և ոչ թե ամպոտ, մութ տեղերը. եթե մեկն ուզի հրացանը տեսնելու՝ իր ձեռից չհանի, ուրիշին չտա. եթե առնող լինի՝ չվաճառի, ապա թե ոչ իր գլխին վատ բան կպատահի։ Որդին խոսք է տալիս կատարել հոր հրամանը, և հայրը այդպես մեռնում է։ Սրա մահից հետո անցնում է մի քանի ժամանակ. որդին երբեմն-երբեմն որսի է գնում այս հրացանով։

Մի անգամ էլ իր ընկերներով միասին գնաց որսի։ Ընկերները մի ճանապարհի վրով գնացին, նա ուրիշ ճանապարհ բռնեց, գնաց։ Գնաց, գնաց՝ մի ամպոտ տեղ հասավ. ինքն իրան միտք արեց, թե իմ հերը ինչո՞ւ ասեց ամպ տեղ որս չանել. ես պիտի անպայման գնամ այնտեղ որս անելու։ Ու գնաց տեսավ մի մեծ թռչուն նստել է ու կրակի նման փայլում է նրա կաշին։ Նա ուզեց հրացանով տալ՝ թռավ ուրիշ տեղ նստեց. այնտեղ վազեց, որ տա՝ էլի փախավ, մի խոսքով՝ մի քանի անգամ տեղ փոխեց։ Վերջապես հասավ ու նրա թռած տեղից տվեց՝ վայր գցեց։ Նրա կաշին քերթեց՝ վեր կալավ,

www.naregatsi.org

իսկ միսը դեն գցեց։ Քաղաք վերադառնալով՝ տուն էր գնում, ճանապարհին պատահեց թաքավորի վեզիրը ու հարցրեց, թե չի ծախի էս հրացանը, նա ասաց, թե չէ. խնդրեց տեսնելու՝ շտվեց։ Հարցրեց, թե չի ծախի էս թռչունը, նա ասաց՝ կծախի, ու շատ էժան գնով ծախեց նրա վրա։ Թաքավորի վեզիրը տարավ թաքավորի պալատում կախ արեց օճորքից ու գիշեր ժամանակ էնպես էր լիս տալիս սենյակում, ինչպես ճրագը, դեռ ավելի լավ։

Թաքավորը հարցրեց, թե որտեղից է առել, նա ասաց, թե մի երիտասարդ տղից, ավելացնելով, որ «սորա հետ լավ կլինի, որ ունենաս Մարալների թաքավորը, որ սորանից ավելի լավ է պրոպրղում. նա ֆլան ծովի մեջ է բնակվում, ու թե այս բանի բերողը կարող է և նրան բերելը»։

Թաքավորը կանչում է էն տղին ու ասում, որ պիտի գնա բերի Մարալների թաքավորին։ Տաս օր ժամանակ է տալիս, երբ բերեց՝ նրան մի մեծ պարգև կտա, եթե ոչ՝ նրա գլուխը կտրել կտա։ Նա համաձայնեց. գնաց մորն ասաց թաքավորի ուզածը։

Մերը ասաց.— Ախար դու ինչո՞ւ չէիր քո հոր ասածին լսում, որ այսպիսի խաթաբալի մեջ չընկնեիր. դեռ քո գլխին շատ բաներ պիտի անցկենա։

Մայրը ասեց նրան, որ գնա թաքավորից երեսուն սայլ սպիտակ աղ ուզի, երեսուն հատ գոմշի կաշի։ Նա գնաց ուզեց այդ բոլորը թաքավորից ու բերեց տվեց իր մորը։

Մայրը ասաց.— Այս երեսուն սայլ աղը կտանես ֆլան ծովի ղրաղը շաղ կտաս, իսկ քսանինը կաշին մին-մին կգցես ծովի վրա, մի կաշին քեզ մոտ կպահես։ Մարալների թաքավորը շատ է սիրում էսպիսի աղ. նա կգա ու կսկսի ուտել. նրան ձեռք չես տա, մինչև էնքան կուտի, որ կթուլանա. էն ժամանակ ձեռիդ կաշին կփռես ջրի երեսը՝ որտեղ նա դուրս եկավ, որ էլ չկարենա ետ գնալ ու իսկույն գյամը կգցես նրա բերանը, կնստես, կգաս առանց վախենալու։

Սա, ինչպես մայրը ասել էր, գնաց արեց ու բռնեց Մարալների թաքավորին. նստեց վրեն ու տարավ թաքավորի մոտ։ Թաքավորը մնաց զարմացած՝ տեսնելով այսպիսի մի գեղեցիկ մարալ։ Նա հրամայեց վեզիրին՝ տանել այս տղին իր գանձարանը ու ինչքան փող կուզի՝ տալ նորան։ Բայց վեզիրը նորան տարավ առանձին

www.naregatsi.org

տեղ ու հարցրեց, թե հիմա էլ չի ծախի իր հրացանը, ու երբ մերժեց՝ վեզիրը, ինչպես էն թռչունի կաշին առնելիս, մի քանի ապտակ խփեց ու առանց մի կոպեկ տալու, հետ դարձրեց՝ սպառնալով դեռ նորան շատ շարչարել։ Սա գնաց իրանց տուն, բոլորը պատմեց մորը։

Վեզիրը մի քանի ժամանակ հետո հորդորեց թաքավորին՝ բերել տալ իր համար նույն ծովի մեջ եղած ամենագեղեցիկ աղջիկը՝ իր համար կնիկ։ Սորա համար դարձյալ կանչեց էն տղին ու հանձնարարեց դարձյալ բերելու, երեսուն օր ժամանակ տվեց, որ գնա ու բերի, թե չէ նրա գլուխը կկտրի։

Այս տղեն գնաց այս բանը պատմեց իր մորը. մայրը ասեց, որ այդ բանը շատ դժվար է գլուխ բերել. նա այն ծովի մեջ է բնակվում, որտեղից Մարալների թաքավորն է դուրս եկել։ Բայց եթե կարենա բերել նրան, պիտի նրա ձեռով թաքավոր լինի այս թաքավորի փոխանակ։ Այս կինը շատ իմաստուն էր, աշխարհի ամեն բանը հասկանում էր, ինչպես իր մարդը։

Նրա մայրը սկսեց պատմել, թե ինչպես պիտի գնա ու էն աղջկանը բերի.

— Մենք գոմում մի շատ լավ ձի ունենք, որ իմաստուն է. նրա վրա կնստես ու նա քեզ կտանի էն ծովի ափը. դու այնտեղ քեզ ամուր կպահես, ձին կմտնի ծովի մեջը և ուղղակի կկանգնի էն աղջկա դռանը, դու վեր կգաս ու կմտնես նրա սենյակը։ Նա երեք օրը մի անգամ է զարթնում, քո գնալու ժամանակ քնած կլինի. նրա կառավարի երկու ծայրին ոսկե շամդաններ մեջ մոմեր դրած կըլնեն, երկուսը գլխի կողմից, երկուսը ոտների կողմից վառած. դու շտապով նրան իր տեղաշորի մեջ կփաթաթես և դուրս կբերես, կնստես ձիդ ու դուրս կգաս, իսկ եթե փոքր ինչ ուշացար, նա շատ ձիաներ ունի, կխաբեն ու իրանց մոտ կքաշեն քո ձիուն էլ։

Նա գնաց ինչպես ասել էր մայրը՝ արեց ու բերեց աղջկանը, տարավ թաքավորի մոտ, մի առանձին սենյակի մեջ դրեց։ Նա դեռ քնած էր. երբ զարթնեց՝ զարմացավ, թե որտեղ է ինքը։ Այն տղան գնաց մոտը ու պատմեց, որ ինքն է բերել այստեղի թաքավորի համար և թե բացի իրենից նրա համար ուրիշ բաներ էլ է բերել, բայց այս բոլորի համար միայն ծեծ է կերել, այլևս ոչինչ։ Հետո այս տղեն գնաց թաքավորին իմաց տվեց, որ բերել է էն աղջկանը։ Նա շատ ուրախացավ այս բանի վրա ու հրամայեց իր վեզիրին,

www.naregatsi.org

նրան իր գանձարանից շատ փող տալ, բայց կրկին փողի փոխանակ մի լավ ծեծ կերավ նրանից և գնաց իրենց տունը։

Թաքավորն ու էն աղջիկը սկսեցին իրար հետ խոսել. աղջիկը ասեց, որ նրան կառնի. միայն խնդրեց, որ իր թաքավորությունը միայն երեք օր իրեն տա։ Թաքավորը այս բանին համաձայնեց։ Աղջիկը ամենքից առաջ կանչել տվեց էն տղին և թաքավորի ներկայությամբ սկսեց նրա հետ խոսել։ Թաքավորին հարցրեց, թե այս տղեն այսքան բան է բերել իր համար, նա սորան ի՞նչ է ընծայել։ Նա ասաց՝ մեծ փող է տվել։ Հետո հարցրեց էն տղին։ Նա ասաց իր բերած երեք բանի համար էլ լավ ծեծ է կերել։

Աղջիկը հետո դառնալով թաքավորին, ասաց.— Լա՜վ թաքավոր ես, քո գործերը լավ ես կառավարում ուրիշի ձեռքով։ Հետո խնդրեց տեսնել նրա գանձարանը։ Նա առաջ պարծենում էր իր գանձերով, միայն երբ գնացին տեսնելու, թաքավորը զարմացավ, թե այնքան փողերը ինչ են եղել։

Աղջիկը ասեց.— Լա՜վ թաքավոր ես, գանձարանդ ուրիշներին ես հանձնել, ինչ ուզում են՝ անում են։

Հետո ասեց թաքավորին, թե ինքն իր տանը այնպիսի ձիաներ ունի, եթե նրանց կաթով ինքը լողանա՝ կերիտասարդանա, ու այն ժամանակ ինքը կպսակվի նրա հետ։ Թաքավորը համաձայնեց, ու աղջիկը էն տղին ուղարկեց բերելու իր ձիանոցը։

Նա ասաց.— Կերթաս էն ծովի ափին կկանգնես ու ձեն կտաս իմ ձիանոցը, թե Գյուլիզարը կանչում է։ Նրանք դուրս կգան, դու իսկույն պիտի ասես, որ ես եմ ուղարկել, թե չէ քեզ կտոր-կտոր կանեն։

Նա իր ձին նստեց գնաց էն ծովի ափին կանգնեց ու ձեն տվեց. երեք կատաղած ձիաներ դուրս եկան, վախից նրա լեզուն կապ ընկավ ու չկարաց խոսի. էն ժամանակ նրա իմաստուն ձին նրա տեղակ խոսեց, ասելով թե Գյուլիզարից են ուղարկված։ Այդ ձիաները երեք հատ էին. մինը՝ Սև, մինը՝ Սիպտակ, մինը՝ Կարմիր. այնպիսի ձիաներ, որ հազիվ կարելի է ճարել աշխարհիս երեսին։ Նրանք նրա առաջը ընկան ու գնացին։ Տղեն տարավ աղջկանը ներկայացրեց, նա նրանց կաթը կթեց և այն կաթը մի մաշինի մեջ ածեց ու առաջարկեց թաքավորին, որ ծերունի էր, մոտ վաթսուն-յոթանասուն տարեկան, մտնել այն մաշինի մեջ, որ չահելանա։ Սկզբում նա վախեցավ. էդ պատճառով էլ էն տղին

www.naregatsi.org

փորձեց և երբ նա մտավ այն մաշինի մեջ՝ այնպես երիտասարդացավ, կարծես հինգ-տաս տարեկան երեխա լիներ։ Հետո թաքավորը մտավ այն մաշինի մեջ, բայց աղջիկը նրան խեղդեց. հետո ձիաներին հրամայեց՝ նրա սաղ տունը կոտորել։ Էն տղին թաքավոր դրեց էս քաղաքի վրա, պսակվեց նրա վրա ու շատ տարիներ երջանիկ կյանք վարեցին իրար հետ։

www.naregatsi.org

12. ՀԱՋԻ ԱՀՄԱԴ

Հեր ու տղա են ըլնում, իրանք էլ շատ աղքատ։ Ջունքի հերը ծերացել էր, տղեն էր էթում ֆահլություն անելու ու օրական դատածը բերում էր տալի հորը. հերն էլ տանում էր պահում, տղեն չէր իմանում, թե նա որդի ա պահում։

Մի անգամ էլ նրա տղեն գնաց ղարբություն՝ փող աշխատելու. մի սաղ տարի կացավ, հարիր մանեթ դզեց ու էլի տուն էկավ։ Իրա աշխատած փողը տվեց հորը, հերը նրա համար մի ձեռք շոր առավ, թազա[1] առավ, մախլաս՝ ընենց նրան ոտից-գլուխ թազացրեց, որ հենց կիմանայիր, թե եղի բղղից նոր ա դուռ էկել։

Քշերվա մի վախտ, որ տանը հեր ու տղա քնել էին, նա վեր կացավ, ճրաքը վառեց ու փողն էլ վեր կալավ, գնաց դրսի բակը. էն տղեն էլ էդ սաղ քշեր չէր քնել. ղարավուլ էր քաշում, որ տեսնա իրա հերը փողերը որդի ա պահում։ Հենց որ տեսավ, որ իրա հերը գնաց, գոմի դուռը բաց արեց՝ ներս մտավ, դռան շեմքի քարը դին թցեց ու ներս մտավ գետնի տակը, ինքն էլ կռացավ, մտիկ արեց, տեսավ որ գետնի տակին մի մենձ օթախ ա շինած. մեջը լիքը ոս-

[1] Հաջորդող բառը անընթեռնելի է (Ш. Կ.)։

www.naregatsi.org

կի, էրծաթ։ Էն իրա տված փողերն էլ տարավ քցեց փողերի վրա ու էլի հետ դուս էկավ։ Նրա տղեն էն սհաթը պուկ էլավ ու գնաց իրա տեղը մտավ, ղաստաքուն տվեց։ Հերը էնտեղից դուս էկավ, էլետ քարը քցեց վրեն ու գոմի դուռը հետ արեց ու գնաց արխեյին տեղը մտավ, քնեց։

Անջախ լիսացավ առավոտը. հերը գնաց բազար, տղեն մնաց տանը մենակ. ուսուլով մտավ գոմը ու էն քարը դեն տարավ, առաջը մի ծակ բացվեց. ներս մտավ ու գոգը լիքը ոսկի լցրեց, ուզում էր դուրս գա՝ էն սհաթը էրկու արաբ, թրները հանած, էկան ասեցին.

— Հաջի Ահմադի փողը ո՞ւր ես տանում։

Նա ասաց.— Ա՜յ ախպեր, էս տունը մերն ա, էս փողն էլ մենք ենք աշխատել, էստեղ հավաքել, ի՞նչ Հաջի-Ահմադ։

Արաբները ասեցին.— Էս փողերը Ստամբոլցի Հաջի-Ահմադինն ա, մինչև նրանից զապիսկա չբերես, չես կարող էստեղից փող տանի։ Երբ որ կբերես էն վախտը ինչքան ուզում ես՝ տա՛ր։ Մենք էստեղ ղարավուլ ենք, որ փողը չտանեն, մեզ ի՞նչ։

Տղեն փոր-փոշման փողը ետ դարտակեց ու դուս էկավ էնտեղից, քարը քցեց բերնին ու գնաց։

Իրիկունը հերը տուն էկավ, տղեն հոր յախեն կպավ, թե էթում եմ Ստամբոլ, փող աշխատելու։ Հերը դրա համար դհա ուրախ էր։ Իրա ամեն բանը հազրեց ու էն բաշտեն ճամփա ընկավ Ստամբոլ։ Էնտեղ կացավ մի վեց-օխտն ամիս ու վաթսուն մանեթ աշխատեց։

Շատ դես-դեն ընկավ, անջախ գտավ Հաջի-Ահմադին, նրա ոտներն ընկավ ու ասեց.

— Աղա՛, թե էս բարի իրիկունը կսիրես, մի զապիսկա տուր, որ քու պահած փողերից մի գոգ տան, տանեմ իմ գլուխը պահեմ, ես էլ մեղք եմ, էնքան ֆահլություն եմ անում, ձեռս զատ չի ընկնում։

Հաջի-Ահմադը երդում-կրակն ընկավ, թե ինքը փող չունի ուրիշ տեղ, համա նա զոռում էր, որ մի զապիսկա տա։

Հաջի-Ահմադը, որ բանից խաբարություն չուներ, միամիտ առավ, մի թղթի վրա գրեց. «Ես՝ Ստամբոլցի Հաջի-Ահմադս հրամայում եմ, որ եթե ուրիշ տեղ փող ունեմ, բոլորը այս մարդին տանեն։

Նա ուրախ-ուրախ էս թուղթը վեր կալավ ու շնորհակալ ընելով նրանից, գնաց իրա երկիրը, իրա աշխատած փողը հորը տվեց։

www.naregatsi.org

Մի օր, խոլվաթ քցելով, գնաց մտավ դոմ. քարը դեն քցեց ու ներս մտավ էն տունը, մի փեշ ոսկի լցրեց, ուզում էր էթա, էրկու արաբը էն սհաթը դուռ էկան ու չթողին։ Նա ռասպիսկեն շանց տվեց նրանց։

Նրանք ասեցին.— Էս անգամ սաղ քունն ա, մենք էթում ենք։

Արաբները գնացին, փողերը մնաց էն տղին։ Մի քանի վախտ անց կացավ, նրա հերը մեռավ. տղեն բերեց լավ այվան-օթախներ շինեց էն խազինի վրա ու մեջը նստեց։ Նա թաքավորի պես էր ապրում։

Պատահեց որ Օսմանլվի թաքավորը Ռըսի թաքավորի հետ կռիվ բաց արեց։ Ռուսը հաղթեց ու Ստամբոլ եսիր վեր կալավ, բերեց իրա երկիրը ցրվեց քաղաքները։ Դու մի ասի Հաջի-Ահմադը աղքատի շորերով էդ եսիրների հետ գա էն տղի երկիրը, որ մի քիչ առաջ Ստամբոլում ֆահլություն էր անում։

Էս տղեն մի օր տեհավ նրան, ճանաչեց. իրա մոտ ղոնաղ տարավ, լավ պատիվ տվեց, հարցրեց, թե՝ ո՞րտեղացի ես, նա ասեց՝ Ստամբոլցի։

Էս տղեն նրան ասեց.— Գնա քու օղլուշաղը Ստամբոլից բեր ըստեղ, իրար հետ ախպոր նման ապրենք։

Հաջի-Ահմադը ասեց.— Ախար դու ինձ ի՞նչ ես ճանաչում, որ էսքան պատիվ ես տալի։

Էն վախտը նա տարավ իրա խազինեն շանց տվեց նրան, ասեց, թե ոնց իրա տված ռասպիսկով էսքան փողի տեր էլավ։

Հաջի-Ահմադը գնաց իրա տունն էլ բերեց նրա մոտ ու իրար հետ ախպոր նման ապրում էին։

www.naregatsi.org

13. ՍՊԻՏԱԿ ԶԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ

Մի ձկնապան է լինում, մի տղա է ունենում։ Ամեն օր իր տղեն վերցրած գնում է ձկան ու նրանով իր ընտանիքը կառավարում։ Մի օր էլ այսպես նա իր տղին վերցնում է ու գնում ձկան։

Հենց թոռը գցում է՝ մի շատ սիրուն ձուկ է դուրս գալիս. նա տալիս է տղին, ասելով.

— Էս տար մորդ տուր, թող էփի, ես իսկույն գալիս եմ, էսպիսի լավ ձուկը ափսոս է, որ ծախեմ։ Տղի գոգում փաթաթում է ու հետ տուն ղրկում։ Նա կարծես չի ուզում հետ գնալ. ափսոսը գալիս է էսպիսի լավ ձուկը տանել մորը տալ, որ խաշի. մի կողմն է թեքվում ու ջուրը գցում։

Հայրը թոռը գցում է ու նույն ձուկը բռնում։

Էն էլ է տալիս որդուն, ասելով.— Էս էլ երկու, դե գնա՛։

Նա էլի մի կողմն է կանգնում ու գցում ծովը։ Էլի հոր թոռը հանում է. տալիս է որդուն, թե՝ արդեն էս երեք ձկները բավական է մեզ ճաշին։

Նա գնում է, բայց ճանապարհին էլի ջուրն է գցում ու դատարկ տուն է դառնում։ Երեկոյան հայրը տուն է գալիս, հուսալով որ լավ ձուկ պիտի ուտի, բայց մնում է զարմացած, երբ կինն ասում է, որ ձուկ չի բերել տղեն։

www.naregatsi.org

Հայրը որդու վրա շատ է բարկանում, դուրս է անում տանից, երեք հաց է տալիս, ասում.

— Գնա՛, ճանապարհին եթե մարդ պատահի ու ասի՝ արի՛ ընկերանանք, դու ասա՝ դեռ արի նստենք, հաց ուտենք, հետո. ով հացի ծայրից կկտրի՝ նրա հետ ընկերացի, իսկ եթե կողքից՝ նրա հետ չընկերանաս։

Որդին խոստանում է կատարել հոր պատվերը ու ճանապարհ է ընկնում։ Մի մարդ է պատահում, հարցնում է, թե նա ուր է գնում։ Նա պատասխանում է, թե ինքն էլ չգիտե։

Ասում է անծանոթը.— Արի՛ ընկեր դառնանք։

Բայց սա ասում է, որ առաջ հաց ուտենք։ Նրանք նստում են հաց ուտելու։ Անծանոթը հացի կողքից է կտրում, սա նրա հետ ընկերությունից հրաժարվում է ու առաջ գնում։ Ճանապարհին էլի մի մարդ է պատահում, ուզում է ընկերանալ, բայց հաց ուտելիս, առաջինի պես էլի հացի կողքից է կտրում, ու սա չի ընկերանում։ Շատ առաջ է գնում, մի չինարի ծառի տակ, մի Սիպտակ ձիու վրա նստած մարդու է պատահում, նա ևս ուզում է ընկերանալ։ Նստում են հաց ուտելու, սա հացի ծայրից է կտրում, ու նա սրա հետ ընկերանում է։ Երկսով իբրև եղբայր գնում են մի մեծ քաղաք հասնում։

Անծանոթն ասում է.— Իմ ձին էստեղ ծախենք ու էն փողով առուտուր անենք։

Նա իր Սիպտակ ձին ծախում է հարյուր հիսուն մանեթով ու սկսում են վաճառականություն անել։ Մեծ փող են աշխատում։ Անծանոթն ուզում է նրան պսակի. սա ասում է, որ ինքը փոքր է նրանից, նախ ինքը պիտի պսակվի։ Բայց անծանոթը նրան զորում է, ու նա ճարահատված ասում է՝ կպսակվեմ։ Ասում է, թե ո՞ւմ աղջիկն ուզեն, նա ասում է՝ ես ի՞նչ գիտեմ։

Անծանոթը ասում է.— Թաքավորի աղջիկը կուզես։

Նա մնում է զարմացած, ասում է, թե իրան ո՞վ կտա թաքավորի աղջիկը։ Բայց անծանոթը մարդ է ղրկում թաքավորի մոտ ու նրա աղջիկը ուզում։ Թաքավորն էլ զարմանում է, թե էդպիսի մի հասարակ մարդ ինչպես է համարձակվում իր աղջիկը ուզել։

Թաքավորը մարդ է ղրկում նրա մոտ ու փորձելու համար ուզում է մի բեռը հին քիսա. նա տալիս է. էլի ավելի հին քիսա փող է ուզում. նա դարձյալ ուղարկում է, ու մնում է զարմացած,

www.naregatsi.org

կանչում է ու իր աղջիկը տալիս նրան. օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում։

Զկնապանի տղեն խնդրում է թագավորից, որ գնա իր հորն ու մորն էլ բերի ու էսպես կենա իր մոտ։ Մեծ պատվով նրան ճանապարհ է գցում թագավորը։

Երկու ընկերները երբ հասնում են այն ծառի տակը, որտեղ իրար հետ ընկերացել էին, նա ասում է.

— Մենք այստեղ ընկերացանք, էստեղ էլ արի բաժանվենք. ես էն Սիպտակ ձուկն եմ, որ դու ինձ ջուրը գցեցիր ու ես նրա փոխանակ ինչքան կարողացա՝ քեզ լավություն արի. էն ձին, որ ես նստել էի, սուրբ Գևորգի Սիպտակ ձին էր. ձեն է տալիս՝ ձին կանգնում է նրա առաջ ու նա նստում է ձիու վրա, ճանապարհ է գցում նրան հորն ու մոր մոտ։

Զկնապանի տղեն շատ է խնդրում, որ իրանից չհեռանա, բայց սա չի լսում ու բաժանվում են իրարից։ Զկնապանի տղեն գնում է իր հորն ու մորը վերցնում՝ թագավորի մոտ գալիս, տարիներ ապրում են իրար հետ։

www.naregatsi.org

14. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԵՔ ՏՂԵՐՔԸ

Կըլնի չիլնի մի թաքավոր. սա էնքան հարուստ էր, որ աշխարհի երեսին ինչքան թաքավոր կար, մենակ նրա չափ հարստություն չէին ունենա։ Սա իրեք տղա ուներ, որոնք դեռ փոքր էին։ Կամաց-կամաց, սորա հարստությունը հատավ ու ինքն էլ խելքից ընկավ՝ ցնորվեց։ Այսպես պատահեց և նրա կնոջ հետ։ Թաքավորը երկար ժամանակ չերևաց իր ժողովրդին. դրանք զարմանում էին, թե ինչու չի երևում, կարծելով, թե տկար է։ Ներս մտան տուն, տեսան, որ ոչ ոք չկա տանը, բայց մեջը դափ ու զուռնա են ածում. այն ժամանակ գլխի ընկան, թե բանն ընչումն է։ Դևը ներս էր մտել՝ նրա տանը բնակվել, նրա ունեցած-չունեցածը հավաքել տարել և մինչև անգամ թաքավորին խելքից հանել։ Մի քանի ժամանակից հետո նաև թաքավորի կնոջը փախցրեց տարավ։ Թաքավորը տրտում-տխուր անց էր կացնում իր օրերը ամենավերջին աղքատության մեջ։ Նրա երեք որդիքը այնքան փոքր էին, որ չէին կարողանում հասկանալ տրտմության պատճառը։ Մի անգամ այս երեք եղբայրը գնացին ման գալու։ Միջնեկ եղբայրը տեսավ մի հարս՝ կուժը ուսին ջրից գալիս է. քարը շպրտեց ու կոտրեց նրա կուժը։

www.naregatsi.org

Հարսը բարկացավ նրա վրա ու ասաց.

— Փոխանակ իմ կուժը կոտրելու, ինչո՞ւ չեք ձեր հորն ու մոր վրա մտածում, որոնց հարստությունը դևը տարավ, իրանք գժվեցին, այս բոպեին էլ ձեր մայրը նրա մոտ է։

Այս խոսքերը ներգործություն ունեցան երեխաների վրա. իրար հետ խոսք կապեցին գնալ ու իրանց հորը հարցնել այս բանը։ Առաջ մեծ որդին ներս մտավ հոր մոտ ու հարցրեց. նա փոխանակ պատասխանելու մի լավ ապտակ տվեց. սա օ՞ֆ անելով դուրս փախավ։ Հետո միջնեկը ներս մտավ ու հոր ապտակը ստանալով ետ դարձավ։ Վերջի-վերջո պստիկ եղբայրը ներս մտավ. սրան մի ապտակ տվեց, նա մյուս երեսը դարձրեց։

Այն ժամանակ հայրը ասեց.— Էլի թե իմ դարդին դարման անես՝ դու կանես, ես քեզ կասեմ ամեն բան։

Վերցրեց իրեք թերթ թուղթ ու ամեն մեկի վրա այնպիսի մեծությամբ նուռ նկարեց, որ դժվար թե կարելի էր ձեռք բերել աշխարհիս երեսին։ Տվեց նրանց ասելով.

— Գնացեք ու ձեզանից մեկը թող այսպիսի նուռ բերի, այն ժամանակ կասեմ ձեր մոր տեղը։

Երեք եղբայրը ճանապարհի համար փող վեր կալան, նստեցին իրանց ձիաները ու ճանապարհ ընկան։ Գնացին, գնացին, շատն ու քիչը աստված գիտի, մի մեծ քարի ռաստ էկան. սրա մոտ ճանապարհը երեք էր բաժանվում. այդ քարի վրա գրած էր, թե այս երեք ճանապարհներից մեկով գնացողը ոչ շուտ, ոչ ուշ կվերադառնա, մյուսով գնացողը՝ հինգ տարվա վրա կդառնա, իսկ մյուսով գնացողը՝ հավիտյան չի դառնա։ Այս երեք եղբայրները այստեղ ուզեցին բաժանվել. իրենց մատանիները հանեցին մատներից ու էն քարի տակ դրին, ասելով, թե ով շուտ գա, իր մատանին վերցնի ու գնա։ Նրանցից պստիկ եղբայրը էն ճանապարհով գնաց, որով գնացողը էլ ետ չպտի գար, իսկ մյուս երկսով՝ մյուս երկու եղբայրները։

Տեսնենք թե պստիկ եղբայրը ուր գնաց։

Պստիկ եղբայրը գնաց, գնաց՝ մի մեծ տների ռաստ եկավ, որի առջև մի գեղեցիկ ավազան էր շինված։ Այս ավազանի մոտ մի նռենի կար, ինչպես իր հայրը նկարել էր թղթի վրա։ Այս տանը մեջ կարծես թե մարդ չէր երևում. նա անջախ դռնով ներս մտավ, նի էլավ ծառը, քաղեց երեք նուռը, մինը կերավ, իսկ երկուսը՝

www.naregatsi.org

մինը խուրջնի մի թայը գցեց, մյուսը՝ մյուս. հետո ոտները հանեց ու ավազանի սառը ջրի մեջ դրեց զովացնելու փոքր ինչ, որովհետև դադրած էր։

Այս տունը այն դևի տունն էր, որը թաքավորի ողջ հարստությունը հափշտակել էր, միևնույն ժամանակ նրա կինը, որ այս բոպեին տանն էր։

Դևի կինը նկատեց սորան և ճանաչեց. նա դուրս եկավ պատրաստվելով ու ասեց.

— Դու ո՞վ ես, որ համարձակվել ես գալ այստեղ. զուշն իր թևով, օձն իր պորտով չի կարացել գալ այստեղ, դու ո՞նց ես նկել։ Էդ հերիք չէ, դեռ նուռը քաղել ես։ Էս բոպեին դևը կըգա քեզ ձվիկ-ձվիկ կանի. մեղք ես, գնա՛, թեզ հեռացի այս տեղից,— այս ասելով գնաց նրա գրպանը մի դանակ դրեց, որ էլ նա չէր երևում։

Դևը այս խոսակցության ժամանակ որսից վերադարձավ. նա ասաց կնկանը.

— Ա՛յ կնիկ, էստեղ մարդի հոտ է գալիս։

Նա ասաց, թե իրա ահից այստեղ մարդ կարող է՞ ոտ դնել Իսկ պստիկ եղբայրը շարունակեց իրա ճանապարհը։ Երբ հասավ էն քարի մոտ, վերցրեց իր մատանին, տեսավ իր երկու եղբայրները դեռ չեն վերադարձել, ինքը սկսեց իր ճանապարհը շարունակել։ Էն քարից դեռ նոր էր հեռացել, էն մյուս երկու եղբայրներն էլ եկան ու իրար հետ գնացին իրանց ճանապարհը։ Այն երկուսը չէին կարողացել մեծ նռներ գտնել, հասարակ, մանր նռներ էին բերում։ Նրանք երբ տեսան իրանց պստիկ եղբոր բերած մեծ նուռը, նախանձվեցան ու մտքներում դրին, որ մի կերպով ձեռք գցեն այդ մեծ նռները, վախենալով, որ իրանց հերը թաքավորությունը մենակ նրան կտա՝ իր քաջության համար ու իրանց կզրկի։ Ճանապարհին նրան բռնեցին մի մեծ հորի մեջ գցեցին ու նրա բերած մեծ նռները վեր կալան, տարան իրանց հորը տվեցին։ Բայց թաքավորը մի իմաստուն թռչուն ուներ. նա թաքավորի ականջին առաջուց ամեն բան ասել էր։ Թաքավորը հարցրեց, թե որտե՞ղ է իրանց պստիկ եղբայրը։ Նրանք ասացին, թե չգիտեն, մի մեծ քար կար ճանապարհին, նրա մոտից միմյանցից բաժանվել են և զանազան ճանապարհներով գնացել։ Թաքավորը սրանց երկուսին էլ ձիանոց պոչից կապեց և քաշ տալով գետնի վրայով մեռցնել տր-

30—2573

www.naregatsi.org

վեց, իսկ պստիկ եղբոր մոտ մարդ ուղարկեց և հանել տվեց հորից։ Նա մանրամասն կերպով պատմեց իր գլխով անցածը։

Այն ժամանակ ասաց թաքավորը.— Դու որ կարացիր բերել իմ ուղած նուռը, ուրեմն կարող ես և քո մորը բերել և իմ բոլոր ունեցածը, որ դևը տարել է։

Նա ասաց.— Ես կարող եմ, միայն ինձ համար շինել տուր մի ալմասե թուր, մի այնպիսի մեծ ղարաբինա, որ քսան գրվանքա տանի։

Հայրը շինել տվեց ու բերեց որդուն ցույց տալու։ Նա հուպ տվեց երկու ձեռի մեջ և կոտրեց թուրը. այն ժամանակ տղեն ասաց, թե այս թուրը զուտ ալմասից չէ շինած։ Ինքը անձամբ գնաց ու իր աչքի առաջ շինել տվեց. կռիվ արեց վրեն ու ձին նստեց գնաց դևի հավարին։ Մայրը որ տեսավ որդուն, շատ ուրախացավ, խոսք տվեց իմանալ դևի գաղտնիքը, թե նրա ուժը որտեղ է։ Մայրը նրան թլիսմը արեց՝ ավել դառնա ու դրեց տան պուճախը։

Երեկոյան դևը եկավ, ասաց.— Մարդու հոտ է գալիս այստեղից։

Նա ասաց.— Էստեղ մարդը ի՞նչ է շինում։

Սա կպավ դևի յախեն, թե քո ուժը ախար որտեղ է, որ ամենքը քեզանից վախենում են։ Նա առաջ վախում էր պատմելու, բայց որ շատ զոռեց՝ ստիպված էր ասել.

— Այն ինչ սարի գլխին մի ուղտ է արածում, նրա փորին մի ղութիկ կա, նրա մեջ իրեք ծիտ, մինը սպիտակ, մինը կարմիր, մինը կապույտ. սրանք են իմ հոգին, որ նրանց սպանեն՝ էն ժամանակ իմ ուժն էլ կպակասի։ Դրա սպանողը պիտի ունենա ալմասե թուր ու մի մեծ թափանչա. սարի ներքևը մի հոր փորի ու հորը ծածկի մեզարով, որ չտեսնա, իսկ ինքը պիտի այդ հորի մեջ ծածկվի և երեկոյան, երբ նա վերադառնում է սարը, պետք է ղարաբինով էն փոսից տա ու թրով իսկույն գլուխը կտրի։

Առավոտը լիսացավ, դևը գնաց որսի։ Նրա կնիկը պատմեց էս բոլորը իր պստիկ տղին, որ նա էթա սպանելու էն ուղտին։ Գնաց հասավ էն սարը, նրա ներքևը սկսեց փոս փորել։ Էն սարի մոտիկ եղած քաղաքի բնակիչները երբ դուրս էին գալիս՝ ուղտի վախից փախչում էին տուն մտնում, որովհետև այդ ժամանակ նա սարն էր վերադառնում։ Սորան եկան շուտ հաղորդեցին, որ փախ-

www.naregatsi.org

չի էստեղից, նա լսեց, ասելով, որ ինքը հենց նրա համար էլ եկել է։ Փոսը փորեց, ինքը մտավ մեջը ու երեսից ծածկեց մեզարով։ Ուղտի գալու ժամանակը երբ հասավ, նա իր յարաղ-ասպարը հաղրեց։ Ուղտի գալուն պես նա փոսից ղարաբինով տվեց ու դուրս գալով էնտեղից, թրով գլուխը կտրեց։ Փորը ճղեց, հանեց էն արկըղիկը ու բաց անելով՝ երկու ծտի գլխները կտրեց, իսկ վերջինը սաղ վեր կալավ, տարավ մոր մոտ։

Դևը որսի էր գնացել. էստեղ իսկույն իմացավ, թե բանը ինչումն է։ Հազիվ հազ իրեն քաշ տալով տուն գցեց ու կնկանը ձեն տալով ասաց.

— Դու էս օրը գցեցիր ինձ։

Պստիկ տղան դուրս եկավ ու սպառնաց նրա վրա. նա խընդրեց, որ իր մոտ գա, բան ունի ասելու։ Սա ասաց, թե հեռվից ասա։ Նա կրկին ասաց, որ ներքև գա իր մոտ, նա գնաց՝ քիչ էր մնացել, որ դևը շնչով նրան իր բերանը քաշի, բայց մայրը այնպիսի թլիսմը արեց, որ նա էլավ հեռու նստեց։ Էն ժամանակ դևը սկսեց խնդրել, որ գոնե էն մի ծիտը իրեն տա, որ նրանով ապրի։

Տղան ասաց.— Թե կտաս իմ հոր բոլոր հարստությունը, զորքը և այլն, էն ժամանակ ես էլ քո ծիտը կտամ։

Դևը համաձայնվեց։— Միայն,— ասաց,— ես մի բան կասեմ, թե կարողացար կատարել, էն ժամանակ քեզ կտամ քո հոր հարըստությունը։ Դևը ասաց.— կարող ես էս քուչի մոտ վայր ընկած Սև-քարը բարձրացնել երկու ձեռով մինչև պորտդ։

Նա ասաց.— Կարող եմ,— ու բարձրացրեց պորտից ավելի վերև։

Դևը մնաց զարմացած։

Դևը ասաց.— Գնա՛, մեր պատրհանում մի փոքրիկ արկղ կա, վեր կալ, բեր այստեղ։— Նա գնաց մի ձեռով վեր կալավ, բերեց դևին տվեց։ Նա այնտեղից հանեց փետուրներ ու բաց թողեց, իսկույն սար ու ձոր թնդացին, թմբուկների ձենը ականջ էր խլացնում։ Թաքավորի ամբողջ զորքը եկավ ու կանգնեց նրա որդու առջև, կառքերով ևս։ Մայր ու որդի նստեցին կառքը, էն ծտի վիզն էլ կտրեցին՝ իսկույն մեռավ դևը։ Իրանք գնացին վեր առնելով բոլոր հարստությունը։

Թաքավորը հեռվից դուրբինտով մտիկ արեց, տեսավ, որ իր որդին մոր հետ նստած կառքի մեջ՝ գալիս են։ Նա ծնկաչոք մի

www.naregatsi.org

վերստաչափ գնաց նրանց առաջ ու համբուրեց իր քաջ ու հնազանդ որդու ճակատը։

Մարդ ու կնիկ էլի երկար ժամանակ լավ կյանք անցկացրին։ Նրանք էլ առաջվա նման աղքատ չէին։ Սաղ քաղաքը, երբ իմացավ թաքավորի պատիկ տղի արած ղոչաղությունը՝ մնաց զարմացած։

www.naregatsi.org

15. ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂԸ ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱ

Մի թաքավոր է ընում. նրա աչքի մինը քոռ ա ընում։ Աշխարհում ինչքան բժիշկներ կար՝ բերել տվեց, միայն ոչինչ չկարացին անի։ Վերջը մի պառավ եկավ ու ասեց, որ ինքը կարող է սաղացնել նրա աչքը։

Նա ասաց.— Ծովի մեջ մի այնպիսի ձուկ կա, որի արյունը եթե քսեք նրա աչքին, իսկույն կլավանա. և էն ձուկը միայն թաքավորի տղեն կարող է ճանաչել[1]։

Թաքավորը իր տղին ուղարկեց ձուկ բռնողի հետ՝ շրջել սաղ ծովի վերա ու բռնել էս ձուկը, մորթել, նրա արյունը բերել, որ քսեն նրա աչքին՝ սաղացնելու համար։ Նրանք դնացին, օխտն օր, օխտը գիշեր թոռ գցեցին, ինչքան ձուկ կար ծովում՝ բռնեցին, բայց էն ասած ձուկը չկար։ Վերջը վրա ութերորդ օրը, թոռը գցելուն պես մի այնպիսի գեղեցիկ ձուկ դուրս եկավ, որ թաքավորի տղեն չդմշեց մորթել նրան ու գցեց էլի ծովը, ասելով. «Ավելի լավ է հայրս թող էլի քոռ մնա, քան թե այսպիսի մի գեղեցիկ ձուկ մորթեմ»։

---

1 *Սրան հաջորդում է փակագծերում գրված հետևյալ նախադասությունը. «Թաքավորը մի տղա ուներ», հավանաբար ասացողի բացատրությունն է (Մ. Կ.)։*

www.naregatsi.org

Այս բանը ձուկ բռնողը գնաց հայտնեց Թաքավորին։ Թաքավորը բարկացավ իր տղի վրա և կանչեց իր մոտ, հարցրեց պատճառը։ Նա պատմեց բոլորը։ Հայրը հրամայեց նրան տանից դուրս հանել և այլևս չթողնել տուն։ Նա գնաց իրանց տանից։ Ճանապարհին նրան ռաստ էկավ մի կանաչ տեղ, ուր նա նստեց հանգիստ առնելու։ Տեսավ, որ հեռվից մի ուրիշ մարդ է գալիս. նա ուրախացավ, հուսալով նրանից մի կտոր հաց խնդրել, որովհետև ամբողջ օրը քաղցած էր, զադ չէր կերել։ Էս մարդը եկավ, իրար բարևեցին ու նստեցին։

Թաքավորի տղեն պատմեց իր գլխով անցկացածը, ու էն անծանոթ մարդը ասաց.

— Արի միմյանց հետ եղբայր դառնանք ու գնանք աշխատանք անելու, միայն այն պայմանով, որ ինչ որ աշխատենք՝ հալալ կես անենք։

Նա համաձայնեց, ճանապարհը բռնեցին ու գնացին։ Տեսան, որ վեց դև մի մեծ տնից դուրս եկան ու գնացին։ Սրանք ծածուկ նրանց հետևից գնացին մտան նրանց լավ-լավ տները։ Այստեղ ոչ մի մարդ չկար։ Թաքավորի տղեն տեսավ, որ սեղանի վրա մի բալանի է դրած. վեր կալավ ու այնտեղ մի պահարան կար, բաց արեց նրանով. սրա մեջ մի ուրիշ փոքր արկղ կար՝ բալանին նրա մոտ. բաց արեց ու նրա միջի մատանին հանելով՝ դրեց մատը ու նրանք սուս ու փուս դուրս եկան, գնացին։ Գնացին, գնացին, շատն ու քիչը աստված գիտե, մի մեծ քաղաք հասան։ Փողոցի միջով անց կենալիս Թաքավորի տղեն տեսավ՝ մի սիրուն աղջիկ նստել է լուսամուտի մոտ. նրա աչքը մնաց էս աղջկա վրա, էնպես որ ընկերը բավականին հեռացել էր նրանից, իսկ ինքը մնացել էր նույն տեղը ու նայում էր էն աղջկանը, իսկ նա՝ սրան։ Հետ դառավ սրա ընկերը ու հարցրեց, թե ինչո՞ւ էր էդքան նայում. նա պատմեց բոլորը ու ավելացրեց, որ կուզեր նրան իր կնիկը շինել։ Նա ասեց, թե էն աղջիկը էստեղի Թաքավորի աղջիկն է. ես կերթամ ու քեզ համար կուզեմ։

Նա ներս մտավ ու Թաքավորին հայտնեց իր խնդիրը։ Թաքավորը համաձայնեց, միայն այն պայմանով, որ երեք օրվա մեջ իր պալատի դեմ ու դեմը այնպիսի մի մեծ ու լավ տներ շինի, որ իրանից լավ։ Երեք օրը անցավ, Թաքավորը ղարկավ՝ տեսավ, որ ճշմարիտ շինած է ու հազար անգամ լավ իր պալատից։

www.naregatsi.org

Թաքավորը տեսավ, որ իրա ուզածը կատարեց, ասեց նրան.— Նրա առաջ երեք օրում այնպիսի մեծ բաղ-բաղչա շինես, որ երկարությունը յոթ վերստ ըլնի, լենությունը՝ երեք վերստ։

Նա այս էլ կատարեց։ Թաքավորը էլ ինչ կարող էր ասել. իր աղջիկը տվեց նրան, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց։ Թաքավորի տղի ընկերը նրան զգուշացրեց, որ չըլնի, թե կինը իր մատից հանի էն մատանին։ Մեկել օրը նրանք երկսով գնացին որս անելու. ճանապարհին հանկարծ մատանին միտն ընկավ, նայեց տեսավ, որ չկա։ Իսկույն հետ եկան, բայց էլ ոչ տուն կար, ոչ բաղբախչա։ Մնացին զարմացած։ Գնացին Թաքավորին ասեցին. նա էլ երբ տեսավ՝ զարմացավ։ Նա մտիկ արեց իր դուրբինտով, տեսավ, որ իր աղջիկը Զորս ծովի մեջտեղը, մի արաբի հետ է։ Թաքավորը հայտնեց նրանց իր աղջկա տեղը։ Նրանք ճանապարհ ընկան։ Հասան այն կանաչ տեղը, ուր նրանք եղբայր էին դառել։

Թաքավորի տղի ընկերը ասեց.— Սպասի՛ր, ես իսկույն կգամ։

Գնաց մի կատու բերեց. կատվին ասեց.— Տեսնո՞ւմ ես, այն Զորս ծովի մեջտեղը այն աղջկանը ու արաբին, պիտի գնաս նրանց մոտ՝ մի մատանի կա, որտեղ էլ պահած լինեն, պետք է բերես։

Նա ասաց, որ ինքը մենակ չի կարող գնա։ Ծովի մեջ կխեղդըվի, շան հետ կարող է գնալ։ Թաքավորի տղի ընկերը ասեց, որ գնա կանչի նրան։ Նա գնաց կանչեց շանը ու նրանց տերը հայտնեց իր ուզածը, որ գնան, բերեն։ Շունն ու կատուն գնացին։ Շունը մտավ ծովը, կատուն նստեց նրա վրա ու շունը լող տալով դուրս եկավ ցամաքը։ Տեսան որ մի մեծ տուն է շինած, դուրսը մարդ չի երևում։ Շունը դուրսը կանգնեց, իսկ կատուն ման էր գալի մի ծակի, որ կարողանա ներս մտնի։ Շունը դես-դեն ընկավ, տեղ չգտավ ներս մտնելու։ Վերջ ի վերջո նկատեց դռան շեմքի տակը մի շատ փոքր ճեղք։ Նա զոռով ներս մտավ, այնպես որ հագի կաշին պլոկվեց։ Բայց նա գնաց ներս, տեսավ որ արաբն ու աղջիկը քնած են. ամեն տեղ մտավ, ման եկավ՝ մատանին չգտավ։ Պոչը արաբի քիթը կոխեց թե չէ՝ նա փռշտաց ու բերնից մատանին վայր ընկավ։ Նա ուրախ-ուրախ վեր կալավ ու կրկին դուրս եկավ այն ճեղքով, հագավ իր կաշին։ Շունն ու կատուն սկսեցին դրսև կռվել այն մատանու համար. մեկն ասում էր՝ ես կտանեմ, մյուսը, թե՝ ես կտանեմ։ Կատուն խոհեմություն համարեց տալ շանը ու նստելով նրա վրա, գնացին ծովի միջով։ Մի քիչ էր մնացել որ ցա-

www.naregatsi.org

մար դուրս գա, շունը տեսավ հեռվից շներ են գալիս, հաչեց ու բերնից ծովը ընկավ մատանին։ Երկուսն էլ տխուր գնացին իրենց տիրոջ մոտ։ Կատուն գնաց պատմեց այս դժբախտությունը, իսկ շունը վախլությունից չգնաց նրա մոտ։

Տերը կանչեց շանը. նա ասեց.— Ճշմարիտ է, մատանին բերինք, բայց ծովն ընկավ ճանապարհին։

Տերը շանն ու կատվին ուղարկեց ու ինքը գնաց մատանին բերելու։

Շորերը փոխեց ու ծովի ղրաղը գնալով ձկնապանին խնդրեց իրեն վերցնել իրենց ծառա։ Ձկնապանը ուրախությամբ վեր կալավ նրան իր մոտ, չափավոր փող նշանակեց ամսական։ Սորա մոտ նա մի քանի ամիս ծառայություն արեց. նա բռնած ձկների փորը ճղելու պաշտոնն էր հանձն առել։ Սովում համարյա ինչքան ձուկ կար՝ բռնեցին։ Բոլորի փորը ման էկավ՝ չգտավ մատանին։ Վերջապես մի ձուկ դուրս եկավ. նրա փորը ճղեց, հանեց մատանին ու պահեց։ Ձկնապանին ասեց մյուս օրը, թե՝ իրավունք տուր գնամ հորս ու մորս տեսնեմ ու կրկին գամ։ Նա թողեց։ Գնաց նա ու մատանին տվեց թաքավորի տղին։

Նա ասեց.— Էն տունը կրկին իր տեղը գա,— և եկավ։

Գնացին տեսան, որ արաբը ու իր կնիկը քնած են։

Գնաց թաքավորին կանչեց ու ցույց տվեց իր աղջկանը, ասելով.— Առաջ է՞գը, թե ո՞րձը։

Թաքավորն ասեց, թե էգը ինչ հանցանք ունի, որձն է մեղավոր։

Նա արաբի գլուխը կտրեց, աղջկան կրկին իր կինը վեր կալավ։

Երկու ընկերները գնացին այնտեղ, ուր իրար եղբայր էին դառել։ Նա ասաց թաքավորի տղին.— Մենք խոսք ենք տվել ամեն բան կես անել,— դրա պատճառով էլ ինքը պիտի այս աղջկան կես անի։

Թաքավորի տղեն չէր ուզում համաձայնի, ասելով.— Ինչ ուզում ես՝ դու վեր կալ, ես միայն այս աղջկան կվերցնեմ։

Բայց նա չհամաձայնեց ու աղջկան թրով կես արեց։ Նրանից առաջ սև արյուն դուրս եկավ, իսկ հետո, երբ մեկ անգամ էլ վրա բերեց թուրը, հալալ արյուն՝ կարմիր արյուն թափեց։ Ու նա ասեց թաքավորի տղին.

— Այս արյունից վեր կալ, տար քսիր հորդ աչքերին՝ կլավա-

www.naregatsi.org

նա. ես այն ձուկն եմ՝ ձկների թաքավորը, որին դու բռնեցիր, բայց կրկին ջուրը գցեցիր. դու ինձ լավություն արեցիր, ես էլ իմ կողմից ինչ կարողացա՝ արեցի նորա փոխանակ։

Թաքավորի տղեն շատ ուրախացավ ու իրար ձեռք տալով, այստեղ իրարից բաժանվեցին։ Նա տարավ արյունը քսեց հոր աչքին ու լավացավ նրա աչքը։ Թաքավորը շատ սիրեց իրա որդուն, որ իր քոռ հոր համար գնացել էր աշխարհ-աշխարհ ման եկել, դեղ բերել։

www.naregatsi.org

16. ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ

Մարդ ու կնիկ են ըլնում։ Մարդը մի ջահել, քաջ տղամարդ է լինում. ամեն օր գնում է որս ու նրանով իր կնիկը պահում։ Իսկ սորա կինը ծածուկ սիրում է մի չոլախ դևի, որին նա ծածկել էր իրենց շիրախանում։ Մարդը երբ գնում էր որսի, նա այնտեղից դուրս էր գալիս։ Դևը նորա կնկանը խորհուրդ տվեց, որ մի կերպով կարողանա կորցնել տալ մարդին ու իրանք իրար հետ երջանիկ ապրեն։

Եվ նա նրան այսպիսի խորհուրդներ տվեց.— Սուտ հիվանդացիր, մարդիցդ Անմահական խնձոր ուզիր, որ նա գնա այն բերելու, որտեղից էլ չի կարող հետ վերադառնալ։

Կինը լսեց դևին ու սուտ հիվանդացավ։ Մարդը հարցրեց, թե ինչն է ցավում, նա ասաց, թե՝ կմեռնի, եթե չգնա Անմահական խնձոր բերի իր համար։ Մարդը ասեց, որ անհանդիստ չլինի, կերթա ու կբերի Անմահական խնձոր։ Մյուս օրը պատրաստություն տեսավ, ձին նստեց ու գնաց Անմահական խնձոր բերելու։

Ճանապարհին մի քաղաքում՝ իր հալալ քույրն էր մարդի տված, գիշերը վեր եկավ նորա մոտ, հայտնեց, թե գնում է Անմահական խնձոր բերելու։ Քույրը մատը կծեց ու ասեց նրան, որ յուր կինը անառակ է, որ միտք ունի կորցնելու իրեն։ Նա երդում կերավ, թե կինը իրեն շատ է սիրում։

www.naregatsi.org

Նորա քույրը ասեց.— Կերթաս կհասնես մի մեծ բաղչի, այնտեղ է Անմահական խնձորը։ Դռնից որ կմտնես՝ աջ թևի և ձախ թևի վրա տնկած են երկու խնձորի ծառ. աջ թևի կողմը տնկած խնձորի ծառից մի խնձոր կքաղես ու խուրջնի աջ թայը կքցես, ձախ ծառից՝ ձախ թայը կքցես։ Երբ ետ դառնալիս կլինես, ետևից ծառ, քոլ, քար՝ ամեն բան ձեն կտան, թե. «տարա՜վ, տարա՜վ...», բայց դու՝ չլինի թե հետ մտիկ անես, թե չէ իսկույն քար կդառնաս։ Էնտեղ դու կտեսնես շատ մարդիկ՝ իրանց ձիանցով, ասպաբով քար դառած։ Երբ մի քիչ էնտեղից հեռացար, էն ձենը կկտրվի։ Դու ձիդ կքշես դպա ինձ մոտ, առանց ինձ տեսնելու, չլինի թե գնաս։

Եղբայրը խոստացավ կատարել այն ամենը, ինչ նա ասել է ու ճանապարհ ընկավ։ Գնաց, գնաց, վերջապես հասավ էն բաղչին։ Զարմացած մնաց, երբ տեսավ հազարավոր մարդիկ, որ եկել էին Անմահական խնձոր բերելու ու տեղն ու տեղը քարացել։ Էս բանը տեսնելուց հետո նա նամաղուլ էր արել՝ հետ մտիկ չանի։ Հետո մտավ բաղչեն. ինչպես քույրն էր ասել՝ քաղեց խնձորները, նստեց ձին ու քշեց։ Ետևից սար ու քոլ ձեն տվին. «Տարա՜վ, հա տարա՜վ...», բայց նա իսկի հետ մտիկ չտվեց. նա ձիու կողքը մտած քշում էր։ Մի քիչ առաջ գնալով՝ ձենը կտրվեց։ Նա տարավ խնձորները քրոջը տվեց։ Աջ խուրջնի խնձորը կես արեց՝ կեսը ինքը կերավ, կեսը նրան տվեց, իսկ ձախ թայի խնձորը, որը հասարակ խնձոր էր, ոչ Անմահական, տվեց, որ տանի տա կնկանը։ Նա տարավ. հեռվից կնիկը երբ տեսավ գալիս է՝ զարմացավ։ Նա կերավ մարդի բերած խնձորը ու ասեց, թե հիմի մի քիչ լավ է։ Դևը տեսավ, որ սորանով բան չի լինում, մի ուրիշ բան միտք արեց ու ասեց նրա կնկանը, թե՝ Անմահական ջուր ուզի, էս անգամ որ գնաց, էլ չի կարող հետ դառնալ, էնտեղ դևերը նրան կգզգզեն։

Կնիկը մյուս օրը էլի սկսեց տնքտնքալ, թե մեռնելու է, եթե չգնա ու Անմահական ջուր չբերի։ Նա խոստացավ գնալ ու բերել։ Մյուս օրը ձին նստեց, թուր ու թվանք կապեց ու գնաց։ Գնաց, գնաց, շատն ու քիչը աստված գիտի, վերջապես հասավ մի մեծ, բարձր տների, առջևը շատ մեծ այգի։ Ձիուց վեր եկավ ու գնաց ներս։ Դռների առաջ կանգնած էին ասլան, ղափլաններ, որ եթե մարդ գա՝ գզգզեն։ Նա անվախ մոտեցավ, աջ ձեռով աջ կողմում կանգնած ասլանին չափալախեց, ձախով՝ ձախ կողմում կանգնածին ու ներս մտավ։ Տեսավ երեք էնպիսի աղջիկներ են նստել, որ

www.naregatsi.org

մարդ չուտի, չխմի՝ մենակ նրանց թամաշա անի։ Սրանք էս ջահել տղին տեսնելու պես մնացին զարմացած. հարցրին, թե ո՞նց է էլել, որ դևի ձեռից պրծել է, հալբաթ չի տեսել. «նա քնած է, թե չէ քեզ ձվիկ-ձվիկ կաներ»։ Նրանք խղճացին սրա վրա, ասելով, որ քանի դա քնած է, գնա՝ գլուխը պրծացնի, թե չէ կվեր կենա, կուտի նրան։ Նա ասաց, որ եկել է նրան սպանի ու էստեղից Անմահական ջուր տանի իր կնկա համար։ Սրանք էլ ասեցին, որ նրա կինը անառակ է, բայց չհավատաց նա։ Դևը յոթ օրը մի անգամ էր զարթնում, ուրեմն յոթ օր շարունակ քնում էր։ Բայց այդ ժամանակ դեռ նոր էր քնել։ Նա գնաց դևի մոտ. նա շիրախանում էր քնած, իսկ շիրախանի դռանը մի մեծ ջաղացքար էր գցած. նա մի ձեռով դեն գցեց քարը ու ներս մտավ. դևը քնած էր, թրով մի անգամ խփելով նրա վեց գլուխը կտրեց, մնաց մի գլուխը, չունքի յոթ գլխանի դև էր սա։ Դևը մի քիչ շուռ եկավ, ասելով. «էս ինչ լու կծեց մարմինս», նա մեկ էլ խփեց ու նրա մի գլուխն էլ կտրեց։ Հետո նրա ականջները կտրեց ու դուրս եկավ այնտեղից։ Գնաց էն ազջիկների մոտ, ցույց տվեց դևի ականջները ու ասեց, որ նրան սպանել է։ Աղջիկները ուրախությունից նրա ոտներն էին լիզում, որովհետև դևը այս աղջիկներին փախցրել էր ու իրա կնիկը շինել։

Իսկ հիմա նրանք էս տղին ասեցին.— Դու մերն ես, մենք քոնը։— Աղջկերքը նրան տարան այգին ման ածելու, խմացրին Անմահական ջրից ու Անմահական ծաղիկներից նրան հոտ քաշել տվին։ Սաղ բաղը լիքն էր այսպիսի հոտով ու ռանգ-ռանգ ծաղիկներով։ Նա մի քանի ժամանակ սրանց մոտ մնալուց հետո, ասեց, որ ինքը պիտի գնա։ Աղջկերքը գնացին մի կուժ հասարակ ջուր բերեցին ու տվեցին նրան՝ ասելով, թե Անմահական ջուր է։

Աղջկերքը ասեցին, թե.— Վեր կալ քեզ հետ էն ասլան-ղափլանին՝ ճանապարհին քեզ նրանք պետք կգան։ Իսկ եթե գնաս տուն, քո կնիկը ուզենա սպանել, դու առաջուց խնդրի, որ քո մարմինը էս ասլան-ղափլանի ձեռով ուղարկեն մեզ։ Մենք նրա բոլոր կտորները իրար կսաղացնենք, հոտ քաշել կտանք այստեղի ծաղիկներից ու կսաղանաս։

Նա ասլան-ղափլանը առած ճանապարհ դուրս եկավ ու գնաց իրանց երկիրը։

Մի քանի օրից հետո, երբ հասավ տուն, զարմացավ նրա կնիկը, թե ոնց կարաց սաղ հետ դառնալ։ Բերեց Անմահական ջուրը

www.naregatsi.org

տվեց կնկանը։ Սա խմեց, բայց այս ջուրը Անմահական չէր, այն աղջիկները գիտությամբ փոխանակ Անմահական ջրի, հասարակ ջուր էին լցրել նրա կուժը։ Նա այս անգամ ասաց, թե՝ լա՛վ։

Դևը տեսավ, որ սրանով էլ չկարաց նրան վնաս տա, այս անգամ սովորեցրեց կնկանը, որ հարցնի նրանից, թե իր ուժը որտեղ է, որ էսքան վտանգավոր տեղեր գնաց ու սաղ-սալամաթ հետ եկավ։

Նա ասաց, որ իր ուժը ձեռներումն է. եթե օխտը գութանի ղրնջլով կապեն հետևից, նա էլ բան չի կարող անի։ Նա բերեց կապեց նրա ձեռները օխտը գութանի շղթաներով հետևը՝ փորձելու համար։ Բայց նա մի թափ տալով կտրեց բոլորը։ Կինը էլի հարցրեց, թե իր ուժը որտեղ է։ Նա վերջապես ասաց, եթե իմ երկու բթերը իրարից կապեն անդի լարով, նա իսկի բան չի կարող անի։ Կնիկը բերեց անդի լարը ու կապեց նրա երկու բթերը առջևից։ Նա փորձեց՝ չկարողացավ կտրել, լարը մսի մեջ մտավ, հասավ մինչև ոսկորը. խնդրեց կնկանից՝ հետ անել լարը, բայց նա հետ չարեց ու կանչեց դևին, որ գա սպանի նրան։

Դևը երբ եկավ, տեսավ սորան, ասաց, թե ինքը չի սպանի էսպիսի ջահել, ղոշաղ տղին. իր մեղքը գալիս է. իսկ եթե կինը ուզում է, թող սպանի, ու նա հեռացավ նորա մոտից։ Նրա կնիկը իհարկե էլ չէր կարող սաղ թողնել մարդին, որովհետև այժմ նա կսպաներ նրան, այդ պատճառով էլ թուրը բերեց, որ սպանի։

Մարդը ասեց.— Իմ արինը քեզ հալալ է, սպանի ինձ, միայն անիծված ըլնես, եթե ես քեզ մի խնդիր եմ ասելու, թե չկատարես, այն է՝ որ իմ մարմինը էստեղ չթաղես, այլ մարմնիս բոլոր կտորները ածես մի խուրջնի մեջ, դնես ձիուս վրա, տաս էս ասլան-ղափլանին, թող նրանք ուր ուզում են՝ տանեն։ Զունքի եթե էստեղ մնա, դու թաղես, պիտի միշտ լաց ըլնես, դարդ անես, լավ է քեզանից հեռու ըլնի։

Կինը խոստացավ կատարել նրա կտակը ու թուրը քաշեց կըտրեց նրա գլուխը։ Մարմինը մանր-մանր կոտորեց ու ածեց նրա խուրջինը, դրեց նրա ձիու վրա, տվեց ասլան-ղափլանին։ Նրանք առան այդ ու տարան։ Միայն մարմնի մի կտորը՝ աջու ականջը մնաց նրանց տանը։ Ասլան-ղափլանը տարան էն ճանապարհով, ինչ ճանապարհով որ եկել էին։ Ճանապարհին խուրջինը վեր ընկավ ձիուց. նրանք մնացին շիվարած, թե ինչ անեն. ինչպես վերցնեն

www.naregatsi.org

դնեն ձիու վրա. էսպես մնացին, մինչև մթնեց։ Հեռու նրանք տեսան մի կրակ։ Նրանցից մեկը կանգնեց ձիու մոտ պահապան, իսկ մյուսը գնաց տեսնի, թե կրակի մոտ ով է նստած, խնդրի, որ գան խուրջինը էլի դնեն ձիու վրա։ Մարդիկ շարվել են ու տաքանում։ Նա սկսեց նրանց ոտները լիզել, հենց իմանաս մի բան էր խընդրում, բայց չէր կարում հասկացնի։

Նրանց միջի աթախելոքը հասկացավ նրա խնդիրը ու ասաց.— Տղերք սա ասլան է, որ ուզեր՝ մեզ բոլորիս էլ կտոր-կտոր կաներ, որ մեզ ձեռ չի տալիս, ուրեմն սրա մեջ մի բան կա, թող ձեզանից մինը գնա իմանա, թե ինչ ա ասում։

Մինը ձի նստեց ու նրա հետևից գնաց։ Ասլանը գնաց ու էն խուրջնի մոտ կանգնեց։ Ձիավորը հասկացավ, թե բանը ինչումն է. տեսավ խուրջինի մեջ մարդի կոտորած մարմին։ Նա վեր կալավ խուրջինը, դրեց ձիու վրա։ Ասլան-ղափլանը տարան էլի։ Վերջապես հասան իրանց տեղը, տարան տվին էն աղջկերքին։ Նրանք իսկույն հասկացան, որ կնիկն է սպանել։ Հանեցին խուրջինից նրա մարմինը, լավ լվացին, բոլոր կտորները իրար քցեցին, միայն աջու ականջը պակասեց, էդ չկար։ Ասլան-ղափլանին ասեցին, որ գնան նրա տունը, քարուքանդ անեն ու գտնեն նրա ականջը, բերեն, կամ նայեն ճանապարհին, կարելի է, բերելիս վեր են գցել։ Նրանք պոչները ցցած վազեցին, գնացին. ճանապարհին շատ մտիկ արին՝ չկար։ Գնացին նրանց տունը, կինը ինքն իրեն միտք արեց, երևի նրանք սաղ մարմինը կերել են ու այժմ էլի սովածացել, մնացած ականջն էլ բերեմ տամ՝ ուտեն։ Բերեց տվեց մարմնի մի ականջը, նրանք հռխեցին ու վազեվազ տարան։

Զոլախ դևը մտիկ արեց, տեսավ որ նրանք չկերան, այլ տարան։ Նա կնկանը ասեց, թե էս լավ չէ, որ նրանք տարան, նա էլի պիտի սաղանա, բայց կինը չհավատաց։

Ասլան-ղափլանը տարան ականջը աղջկերանցը տվին. նրանք կպցրին և էս ականջը։ Իսկույն Անմահական ծաղկներից մի փունջ բերին, հոտ քաշել տվին ու նա կենդանացավ, նստեց։

— Այս ինչ շատ եմ քնել,— ասեց նա։

Հետո աղջկերքը պատմեցին, թե ինչ է անցկացել նրա գլխով։ Նա մտքումը դրեց նրանից վրեժխնդիր լինել սորա համար։ Նա շորերը փոխեց, հասարակ շորեր հագավ, մանր-մունր բաներ ածեց մի արկղի մեջ՝ ուլունք, ասեղ և այլն։

www.naregatsi.org

Նա գնաց իրանց երկիրը ու փողոցներով անցկենալով, ձեն էր տալիս.— Ա՛յ լավ ասեղ, ա՛յ լավ ուլունք։

Ամեն կողմից հավաքվում էին առնելու։ Նա հետո գնաց իրանց տունը, ձեն տվեց դռնից։ Նրա կինը դուրս եկավ ու իրա բրդոտ երեխեքի համար ուզեց ուլունք առնել։ Նա արկղով լիքը մանրունքը դրեց նրա առջև։ Ինքը ներս մտավ նրանց տունը, տեսավ պատին կախած զենքերը։ Նա հարցրեց, թե ո՞ւմն են այն զենքերը։ Նա ասաց, ախ քաշելով, թե ուրիշ մարդի են։ Նա խնդրեց տեսնել ու մին-մին կախ արեց իր վրա, հարցնելով, թե իրեն սազո՞ւմ է։ Եվ երբ բոլոր զենքերը կապեց, թուրը հանեց, մտիկ արեց նրա երկու երեսին ու ասեց. «էդը, թե ո՞րը»։

Դևը իսկույն հասկացավ, թե բանը ինչումն է ու ասեց.— Որձը ինչ մեղավոր է, ինչ մեղք կա էդինն է։

Նա թուրը քաշեց, սպանեց, կտոր-կտոր արեց կնկանը իր բրդոտ երեխեքի հետ միասին, իսկ դևին ասեց, որ էլ այստեղ չերևա։

Սրանից հետո նա գնաց բերեց այն երեք աղջկերանցը իրանց տունը ու պսակվեց նրանց հետ։

www.naregatsi.org

17. ԽՈՍՔ ԾԱԽՈՂ

Մի թաքավորի տղա շատ փչատատամ է լինում. ինչ գործի տալիս է մերը, չի մնում. ձեռն ընկած փողը մխսում է։ Վերջիվերջո այս տղեն մտքումը դնում է ուղղվել, մի գործի կանգնել. հորից փող է վերցնում սորա համար։

Փողոցով անցնելիս, տեսնում է, որ մի մարդ ձեն է տալիս. «Ա՜յ սոզ ալան[1], ա՜յ սոզ ալան»։ Նա հետաքրքրվում է, տեսնի, թե ինչ է ծախում։ Նա մոտեցավ, հարցրեց գինը։

Նա ասաց.— Խոսքի մինը տասը մանեթ է։

Սա տասը մանեթ տվեց ու նա ասաց.— Եթե գնաս առուտուր անելու, պատահի գիշերը մի տեղ վեր գաս, դու բաց տեղ չվեր գաս, գնա սարի գլխին վեր արի։

Նա ասաց.— Լա՛վ։— Տասը մանեթ տվեց ու էլի առաջ գնաց։

Մի ուրիշ տեղ տեսավ, որ միևնույն մարդը ձեն է տալի. «Ա՜յ սոզ ալան»։ Նա էլի մոտենում է ու տասը մանեթ էլ է տալիս, որ տեսնի, թե էս անգամ ինչ կասի։

Նա այս անգամ ասում է.— Եթե մի տեղ տեսնես մարդիկ խոսում են, կամ մի աշուղ հաղ է ասում, դու գնա լսի, նրանից բան սովորի։

---

[1] Ա՜յ խոսք առնող (Ս. Բ.)։

www.naregatsi.org

Նա այս էլ իմանալով գնում է տուն։

Սրա հերը մի Ոսկե ձուկ ուներ՝ մի պստիկ ավազանի մեջ։ Մի անգամ նրա հետ հաղ էր անում, բռնելով իր ձեռների մեջ։ Հանկարծ ձուկը լեզու առավ ու սկսեց խոսիլը. «Ես ձկների թաքավորի տղեն եմ. ինձ տար գցի ջուրը, թող դառնամ ազատ, իսկ ես սորա փոխարեն քեզ շատ լավություն կանեմ. երբ ծովի վրայով անցկենաս, ինձ ձեն տուր, ես ծովի տակից քեզ համար ինչքան ակն ու մարգարիտ ուզենաս՝ կհանեմ, քեզ կտամ»։

Թաքավորի տղեն խղճաց ձկան վրա ու տարավ ջրի մեջ բաց թողեց. ձուկը ուրախ-ուրախ լող տալով գնաց։

Թաքավորի տղեն հորից ճանապարհի համար փող վերցնելով, թողեց իրանց երկիրը ու գնաց օտարության։ Մի քաղաք հասավ, փողոցում ման էր գալիս, անցնում խանութների առջևից։ Մի հարուստ վաճառական նկատեց սորան, իմացավ, որ սա ղարիբ է. կանչեց իր մոտ, հարց ու փորձ արեց ու խղճալով, որ եկել է այս տեղերը մի գործ գտնելու, իրա մոտ վերցրեց, իբրև որդեգիր։ Նա սորան շատ հավատարմությամբ էր ծառայում։

Մի անգամ ուղարկեց սորան այս հարուստ վաճառականը ուրիշների հետ մի այլ քաղաք՝ առուտուր անելու։ Նորա ընկերները այն քաղաքը հասնելով՝ ամեն մինը սկսեց իր համար ապրանք առնել, իսկ նա գնաց ծովի ափը ու ձեն տվեց էն ձկանը։ Նա դուրս եկավ ու հրամայեց ծովի բոլոր ձկներին, որ ծովի տակ ինչքան ոսկիներ, ակներ կա, դուրս ածեն։ Ձկները իրանց թաքավորի տղի հրամանը կատարեցին ու դուրս ածեցին։ Նա իր ջվալները լիքը լցրեց ու շնորհակալություն ասելով՝ հեռացավ։

Ձկների թաքավորի տղեն ասեց.— Ինչ ժամանակ ուզի՝ թող էլի գա, տանի։

Սա գնաց իր ընկերների մոտ, նրանք իրանց առուտուրը արեցին, պրծան, իսկ սա ոչինչ չառավ, գնաց մի ջվալ փթիր առավ ու բերելով ածեց ոսկով լիքը ջվալների գլխին, որ չերևա։ Նրանք ծիծաղում էին սրա վրա ու իրար մեջ փսփսում։

Մեր վաճառականները ճանապարհ ընկան իրանց քաղաքը՝ առուտուրը վերջացնելուց հետո։ Դեռ իրանց տեղները չհասած, մարդիկ գնացին առաջուց իմաց տալու, որ ֆլան վաճառականները հետ են գալիս, իսկ էն վաճառականի որդեգիրը իսկի բան չի առել, Փողերը փչացրել է, մի քանի ջվալ փթիր է առել։ Այս ասեցին սորա խազեյնին։

www.naregatsi.org

Նա ասաց.— Բան չկա, տղա է, հալբաթ ուրիշ բան չի գտել՝ չի առե. ուրիշ անգամ էլ գնա, փոխանակ փթրի, մի ավելի լավ զատ կառնի։

Մեր փթիր առնողը եկավ վեր իջավ իրա խազեյնի մոտ. ջվալները վեր բերեց ու խնդրեց որ տանեն մի օթախի մեջ առանձին փակեն։

Խազեյինը ասեց.— Փթիրը ով պիտի առնի, թեկուզ դուրսը թող մնա։— Բայց նա խնդրեց անպատճառ առանձին սենյակի մեջ փակեն. և երբ ջվալները գետնի վրա ածեց տղեն, վաճառականը մնաց զարմացած ու իր որդեգրի ճակատը պաչեց։ Անցավ մի քանի ժամանակ. այս բանի մասին ոչ ոքի չասեցին։

Մի անգամ էլ պատահեց, որ սա գնաց ուրիշ վաճառականների հետ ուրիշ քաղաք՝ խրիդ անելու։ Խրիդը վերջացնելուց հետո վերադառնում են իրենց քաղաքը։ Ճանապարհին մի տեղ մթնեց։ Գիշերը սրանք մի բաց տեղ մնացին, իրենց շադիրները տվին. բայց սա գնաց սարի գլխին իր շադիրը տվեց, հիշելով էն խոսք ծախողի ասածը։ Գիշերը մի սաստիկ սելավ էլավ ու ներքևում շադիր տվող վաճառականների ապրանքները՝ ջորիներով քշեց, տարավ։ Իրանք հազիվ հազ պրծան մահից ու պրծացրին գլուխները։ Իսկ սարի գլխին շադիր տվողին ոչ մի վնաս չդիպավ. առավոտը իրա ջորիքը բարձած վեր եկավ սարից ու շարունակեց նրանց հետ ճանապարհը դեպի իրանց քաղաքը։ Սաղ քաղաքում շավ էլավ, թե ֆլան վաճառականների ապրանքը ջուրը տարել է, իսկ ֆլան մարդը իր ապրանքներով պրծել։ Իսկ սորա խազեյինը, էլ ասել չի ուզի, որ սրան շատ սիրեց ու գովեց, ոնց որ որդի, էսպես ընդունեց սորանից հետո։ Բայց մի դեպք պակասեցրեց այդ սերը։ Այդ վաճառականի կնոջ աչքը վաղուց ընկել էր այս երիտասարդի վրա։ Բայց ոչ մի կերպով չէր հարմարվում նրա հետ խոսել։ Մի անգամ սրա խազեյինը ուղարկեց սրան իրանց տունը իմաց տալու, որ հացը շուտ պատրաստի ու ինչ որ բան պետք էր՝ գներ։ Նա ներս մտավ, ասեց իր խազեյնի հրամանը, ուզում էր դուրս գալ, սա դուռը առաջը փակեց ու ստիպում էր նրան անառակ գործ բռնելու. նա սրան ապտակ խփեց ու փախավ սրա ձեռից՝ ասելով, որ իր մոր տեղ է, ինչպե՞ս կարելի է այդ։ Նա իր խազեյինին ոչինչ չասեց։ Իսկ կինը այնպես իմացավ, թե կասի ու

www.naregatsi.org

այդ պատճառով, երբ իրան մարդը եկավ, ամենից առաջ նա գանգատվեց նրա պրիկաշչիկից, իբր թե վատ բան առաջարկեց։

Այս վաճառականը ուներ դարձյալ մի եղբայր, որը ուրիշ քաղաքում սապոն եփող էր. մի փոքրիկ որդի էլ ուներ, որ կարդում էր ուսումնարանում։ Սա մտքում դրեց վրեժխնդիր լինել իր պրիկաշչիկից ու ուղարկել իր եղբոր մոտ, որ նա այնտեղ կորցնի նրան։

Վաճառականը իր եղբոր վրա մի նամակ գրեց հետևյալ բովանդակությամբ. «Այս նամակ բերողին խեղուցն գցիր քո սապնի թեշտի մեջ ու եփիր. առանց հարցնելու անպատճառ կատարիր հրամանը»։ Այս նամակը նա տվեց իր պրիկաշչիկին ու ասեց, որ գնա իր եղբոր մոտ ու պատասխանը բերի։ Նա վեր կալավ ու գնաց։ Ինալիս ճանապարհին տեսավ, որ մի աշուղ կանգնած, իր շուրջը մարդիկ ժողոված, հաղ է ասում։ Նա հիշեց էն խոսք ծախողի ասածը ու գնաց լսելու. վերևից եկավ իր խաղեցինի որդին ուսումնարանից, խուրջինը կոնատակին։ Նա հարցրեց, թե ինչու է կանգնել. սա ասաց, որ լսում է աշուղին և թե՝ գիր ունի տանելու նրա հորեղբորը։ Երեխան ասեց, թե՝ ես կտանեմ,— ու իր խուրջինը տալով նրան, ինքը վազելավազ գնաց քաղաքը գիրը տվեց իր հորեղբորը։ Նա կարդաց ու մնաց զարմացած, թե ինչու է ուզում սպանել տալ իր հարազատ որդուն։ Բայց որովհետև նա իր մեծ եղբայրն էր, այդ պատճառով էլ նա պիտի կատարեր հրամանը։

Խեղուցն բռնեց նրան ու գցեց սաստիկ տաք թեշտի մեջ, նա հալվեց ու սապոն դառավ։ Վաճառականի պրիկաշչիկը հետ եկավ տուն, ասելով, թե նամակը տարավ։ Նա զարմացավ, թե ինչպես տարավ, որ կենդանի հետ է դառել. նա պատմեց, որ տղին ճանապարհին պատահեց ու նա առնելով ձեռից գիրը, տարել է։ Շատ վա՜յ տվեց իր գլխին, բայց արդեն ուշ էր։ Նրան կանչեց ու առանձին պատմեց բոլորը, թե այն գրի մեջ գրված էր, որ իրան սպանի, բայց իր որդու հետ է պատահել։ Նույնպես սորա պատճառը պատմեց։ Այն ժամանակ երիտասարդը մանրամասն ասեց ճշմարտությունը, թե բանը ինչպես է եղել և այն, թե ինքը այնքան արդար է այդ մեղադրանքի մեջ, որ աստված այդ պատիժը իր որդու վրա բերեց։

Վաճառականը հավատալով նրա խոսքին, խեղուցն սպանեց իր կնոջը, իր համար ուրիշ կին բերեց, սրան ևս ընդունելով որպես հարազատ որդի։ Այսպես, ճշմարտությունը երբեք չի ծածկվում։

---

www.naregatsi.org

18. ԱՆՏԵՐ ԹԱՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ստամպոլ քաղաքում մի աղքատ մարդ էր կենում իրա օղլուշաղի հետ։ Էս մարդի ունեցած-չունեցածը ալեի-մալեի քսան ձմերուկ էր։

Մի օր նա տարավ իրա ձմերուկները ծախելու։ Մեկ էլ տեհավ՝ մի մարդ էկավ ու նրանից բիլեթ ուզեց։ Նա չունքի բիլեթ չուներ, իրա ձմերըկներից մինը տվեց ու նա տարավ բիլեթի տեղակ։ Էսպես սաղ օրը ամեն մի մարդ էկավ ու նրանից բիլեթ ուզեց. նա էլ բիլեթ որ չուներ, իրա ձմերըկներից էր տալի։ Էնպես որ քսան ձմերըկից մնաց էրկու ձմերուկ։ Էն նա նստեց կերավ ու դարտակ տուն գնաց. ինչ ուներ-չուներ տանը ծախեց, մի ձեռք լավ շորեր կարել տվեց ու մի գյուրզ առավ։ Ինքն իրան ասեց. «Չունքի անտեր թաքավորութին ա, ով ինչ ուզում ա՝ անում ա, ես էլ մի բան կանեմ»։ Էթում ա գերեզմանատան մոտ մի տուն շինում ու ինչ մեռել բերում են թաղելու, նա ասում ա. «Օլեն փարասի վարմը»[1]։ Փող ա առնում ու նոր թողում, որ թաղեն։ Նա էսպես էլ հարստացավ։

Մի անգամ էլ թաքավորի մերը մեռել էր, բերին թաղելու, համա էն մարդը ասեց.

— Օլեն փարասի վարմը։

Մինչև փող չառավ չթողեց, որ տանեն թաղեն։ Էս բանը գնացին թաքավորին իմաց տվին։ Թաքավորը նրան իրա մոտ կանչեց։

---

1 Մեռելը փող ունի՞ (Ս. Կ.)։

www.naregatsi.org

Նա ասեց.— Ես քսան ձմերուկ ունեի, տարա ծախելու. էն սհաթը մի մարդ էկավ ու բիլեթ ուզեց. փող չունեի, իմ ձմերըկներից էին տանում։ Էսպեսով իմ բոլոր ձմերըկները տարան. ես մնացի պլուտ։ Ես ինքս ինձ մտածեցի, որ անտեր թաքավորությունն ա, ես էլ մի բանով պարապեմ ու փող աշխատեմ. էսթավուց փեշակ բանացրի ու հարստացա։

Թաքավորը նրան վնաս չտվեց. նրա խելոքությյան համար գեղեր տվեց, որ նա նրանցով ապրի։

www.naregatsi.org

19. ՀԱԼՎԱՉԻ ԳՅՈՉԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Ստամբոլում կենում էր հայոց Սուլթան-Մուրադ թաքավորը։ Սուլթան-Մուրադը մի օր դավրիշի շորեր հագավ ու իրա բեզրգյանի հետ գնաց գեղերը ման գալու։ Մի տան վեր էկավ. էս տանը մի աղջիկ կար, նրա վրա պսակվեց ու մի քանի վախտ կացավ էստեղ ու ինքը գնաց էլի Ստամբոլ։

Իրա կնկանը ասեց.— Մարդ ա, կըլնի որ էրեխա բերես. թե որ տղա կըլնի՝ էս բազբանդը նրա թևը կկապես ու կղրկես Ստամբոլ, որ գա ու ինձ գտնի. թե որ աղջիկ կըլնի՝ մատանիքը կդնես մատը ու կղրկես Ստամբոլ, թող գա ու հարցնի, թե Սուլթան-Մուրադը որդի՞ ա։

Թաքավորը գնաց Ստամբոլ։ Անց կացավ ինն ամիս ու էն աղջիկը բերեց մի տղա։ Էս տղեն մենձացավ ու էթում էր քուչեն հազ անում էրեխեքանց հետ։ Խալխի էրեխեքը նրան ամանչացնում էին, թե նա բիջիոր ա, հեր չի էլե նրան, եթիմ ա։ Էս խոսքերը նրա սրտին առան ու էկավ մորը ասեց, որ իրան ասի՝ թե իրա հերը ով ա։

Նա ասեց.— Դու հեր չունես. էրկու դավրիշ էկան էստեղ, մինի հետ ես պսակվեցի ինքը գնաց, ասեց որ տղա ըլնի թևին էս բազ-

www.naregatsi.org

բանդը կապի ու ղրկի Ստամբոլ, թող հարց ու փորձ անի Սուլթան-Մուրադ թաքավորին։

Էս որ լսեց տղեն, ասեց, որ ինքը կէթա նրա մոտ։ Աղջիկը նրա թևից կապեց բաղրանդը ու ճամփու քցեց Ստամբոլ։ Տղեն հասավ Ստամբոլ, մի հալվաչու մոտ աշկերտ մտավ ու լավ հալվա շինել սովորեց։ Դուա էկավ ուստի մոտից ու ինքը իրա համար դուքան դրեց՝ հալվա էր ծախում։ Էս տղեն շատ սիրուն էր, ու ամենքն էլ նրա մոտ էին գալի հալվա առնելու։ Սրա անունը դրին Հալվաչի գյոզալ, չունքի նա շատ սիրուն էր։ Էս խաբարը գնաց թաքավորի ականջը հասավ։ Թաքավորի վեզիրը մի աղջիկ ուներ՝ Թոփչի խանում անումով։ Էս աղջիկը նրան սիրեց, տեսնալով նրա սիրունությունը։ Բերել տվեց քանքանչիք ու շինել տվեց իրա օթախից մինչև Հալվաչի գյոզալի դուքանը գետնի տակից ճամփա։ Ամեն գշեր էթում էր թաքուն նրա մոտ։

Թաքավորը իրա վեզիրի հետ գնաց նրա մոտ զոնաղ։ Էն գշեր մնացին նրա դուքանումը. նա չէր գիտում, թե սրանք ինչ մարդիկ են։ Գշերվա մի վախտ, պոլի տակից ձեն էկավ. սա Թոփչի խանումն էր, էկել էր նրա մոտ։ Նա գնաց խալիչեն հետ քաշեց ու դուռը, որ շինած էր պոլի վրա, բաց արեց՝ աղջիկը ներս էկավ։ Իրար հետ նստեցին, խոսեցին։ Վեզիրն ու թաքավորը զարթուն էին. վեզիրը ուզում էր վեր կենա ու իրա աղջկանը բռնի, համա թաքավորը չթողեց ասելով.

— Տենանք վերջը ի՞նչ կըլնի։

Մի քանի սհաթ խոսելուց հետ, աղջիկը էլի իրա էկած ճամփով հետ գնաց ու Հալվաչի գյոզալը դուռը հետ արեց ու շինեց ղֆլով։ Առավոտը թաքավորը իրա վեզրի հետ գնաց իրա տունը։ Մարդ ղրկեց ու Հալվաչուն կանչեց իրա մոտ։ Թաքավորը հարցրեց, թե նա ով աւ Նա ասեց, որ՝ Սուլթան-Մուրադի որդին աւ։ Թաքավորը ուրախացավ ու հավատաց նրա ասածին, երբ որ տեհավ թևին կապած բաղրանդը։ Ինքը ասեց, որ Սուլթան-Մուրադը հենց իրա հետ խոսողն աւ։ Հետո թաքավորը, չունքի իրա բեզրգյանի աղջիկն ու իրա տղեն իրար սիրել էին, պսակեց իրար վրա։

Նրանք գնացին իրանց մուրազին, դու էլ սիրելի կարդացող[1], գնա քու մուրազին։

---

1 Այս արտահայտությունը հավանաբար բանահավաքինն է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

20. ՏԸՌԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի թաքավոր մի աղջիկ ուներ։ Մի պառավ կնիկ էլ մի տղա ուներ, հլամա էնպես թամբալ, որ սաղ օրը պառկած էր թթի ծառի տակը ու բերանը բաց էր արել, որ թութը ընկնի բերանը ու նա ուտի. դրա թամբալութենի համար անումը դրին Տըռալ, սաքի թե թամբալ։ Մի օր սա իրա պառավ մորը ասեց, որ էթա ու թաքավորի աղջիկը ուզի իրա համար։

Նրա պառավ մերը գնաց թաքավորի մոտ ու ասեց.— Խնամաթո՛ր, խնամաթո՛ր։

Թաքավորը ասեց.— Հարցրեք աղջկանս, թե ուզում ա՝ հո տարեք, թե չէ՝ հո չէ։

Հարցրին աղջկանը նա հավան կացավ ու թաքավորը էդ էրկրսին պսակեց։

Թաքավորի աղջիկը Տըռալին տանից դուռ արեց, ասելով.— Թե որ կէթաս սարից ցախ կբերես՝ քեզ հաց կտամ, թե չէ՝ չեմ տա։

Նա էլ անճարացած էթում էր սարը ցախ բերելու, որ սոված չմեռնի. էլ նա թամբալություն չէր անում։

Մի անգամ էլ գնաց ցախ բերելու մեշեն. մի ծառի քոքի տեղը տեհավ, որ էրկեն-էրկեն էրկաթի նման զադեր կան։ Նրանցից մինը

www.naregatsi.org

վե կալավ, տարավ տունը ասելով, որ իրանց համար խըշէրկաթ կշինեն։ Նրա կնիկը տեհավ, ճանաչեց, որ էն ոսկի ա, հարցրեց, թե՝ էլ կա՞ տեղը։ Նա պատասխան տվեց, որ շատ կա։ Ջիաներ տարավ ու ինչքան ոսկի արծաթ կար՝ բարձեց ու բերեց տուն։ Էնթավուր տներ շինեց, որ տենողի խելքը էթում էր։

Մի անգամ էլ Տըռալը գնաց մեշեն փետ բերելու, մի դև ռաստ էկավ։ Թրով տվեց նրա գլուխը կտրեց. դևը փախավ ու մտավ մի ֆոր՝ դեռ հլա սաղ էր, շունքի շատ գլխներ ուներ նա։

Տըռալը գնաց իրա կնկանը ասեց, որ դևի մի գլուխը թոցրել ա ու նա փախել մտել ա մի ֆոր.

— Թող քու ախպրտինքը գան ու իրար հետ էթանք տեննանք ի՞նչ կա նրա ֆորում։

Թաքավորը իրա տղաներին ասեց, որ էթան իրանց փեսին օգնեն, որ նա էթա դևին սպանի, թե չէ մի զիան կտա։ Իրար հետ գնացին, հասան ֆորի ղրաղը։ Տըռալին կախ արին պարանով հորը։ Նա տեհավ մի տաշտի մեջ մի գորտ ա լողում ու տաշտի մոտ նստել ա մի աղջիկ։

Էն աղջկան հարցրեց, թե.— Էս գորտը ի՞նչ զադ ա։

Նա ասեց, թե.— Հուրի-փարի ա։

Ղորդ որ, գորտի կաշվի միջից մի սիրուն աղջիկ դուս էկավ ու ասեց նրան.— Ո՞նց էկար էստեղ. օձը իրա պորտովը, ղուշը իրա թևովը չի կարացե գալ էստեղ, դու ո՞նց էկար։ Էս սհաթին դևը կգա ու կուտի քեզ ու մեծ թիքեդ ականջը կթողնի։

Նա ասեց, որ էկել ա դևին սպանելու։ Նա գնաց դևի տները. մտավ մի օթախ, տեհավ մի աղջիկ նստել ա։

Էդ աղջիկը նրան ասեց.— Ո՞նց էկար էստեղ, դևը հրես կգա ու կուտի քեզ։

Նա ասեց, որ էկել ա նրան սպանելու։ Դևը զարթնեց ու սկսեցին իրար հետ կռվել։ Տըռալը նրան սպանեց։ Էն աղջիկը նրան մի ղութիկ մատանիք ու ուրիշ թանգ-թանգ բաներ տվեց։ Էնպես էլ էն մեկել աղջկերքը մին-մին մի զադ տվին նրան. նա ֆորից դուս էկավ ու գնաց տուն։

Էս Տըռալը ու իրա կնիկը էնթավուր հարստացան, որ ամեն մինը նրանց մատով էր շանց տալի։ Տըռալի կնիկը իրա թաքավոր հորը իրա մոտ ղոնաղ արեց։ Թաքավորը չէր ճանաչում նրանց, համա հացի վախտը Տըռալի կնիկը ասեց.

www.naregatsi.org

— Թաքավորն ապրած կենա, ես քու աղջիկն եմ, էն էլ քու Տրուալ փեսեն. հրես ինչպես ենք հարստացել. տեսնում ես, որ աստած մեկին տա՝ էնա կտա։

Նոր ճանաչեց Թաքավորը, որ էն հարուստ մարդ ու կնիկը մինը իրա աղջիկն ա, մեկելը իրա փեսեն[1]։

---

1 Վերջում բանահավաքը գրել է. «Տեսնում եք սիրելի կարդացողներ, աշխատողին աստած տալիս ա. ոնց որ Տրուալին տվեց, երբ որ իրա թամբալությունը դեն դրեց ու գնաց մեշեն փետ կտրելու, որ բերի իրանց տան համար։ (Մ. Կ.)։

www.naregatsi.org

21. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՔԸ

Ժամանակով ապրում էր մի թաքավոր իր կնոջ ու երկու որդկերանց հետ բախտավորությամբ։ Մեկ օր գողերը թաքավորի կնոջը գողացան։ Դրա համար թաքավորը պատվից ընկավ ու աղքատացավ, այնպես որ ժողովուրդը նրան գահից վայր գցեց։ Այն ժամանակ թաքավորը վեր առավ իր երկու որդկերանցը ու ընկավ ճանապարհ, որ գնա մի հանդարտ գյուղ տեղում ապրի։ Ճանապարհին նրանք պատահեցին մի գետի։ Հայրը մի որդուն թողեց գետի ափին կանգնած, իսկ մյուսին շալակեց, որ անցկացնի մյուս ափը և հետո վերադառնա, որ մյուսին էլ անցկացնի։ Բայց հենց որ նա հեռացավ՝ իսկույն մի գայլ վազեց մենակ թողած որդու մոտը՝ նրան բռնեց ատամներով ու փախցրեց։

Հայրը այս բանը տեսնելով՝ շփոթվեց ու իր շալակած որդուն հանկարծ վայր գցեց ջրի մեջ։ Այդպես, մի որդուն գայլը տարավ, իսկ մյուս որդուն՝ ջուրը։ Թե ի՞նչ եղավ թաքավորի հետ՝ աստված է գիտում։ Միայն որդիքը ազատվեցին. գայլի տարածին բռնում է մի հովիվ ու կարգում է իրան ծառա, իսկ ջրի տարածին՝ մի ջաղացպան։

Մեկ օր այդ հովիվը իր ծառային ուղարկում է ջաղացը հաց բերելու։ Բանն այնպես է պատահում, որ այդ ծառան գիշերը մնում է ջաղացումն ու չի վերադառնում իր տիրոջ մոտ։ Այդ գի-

www.naregatsi.org

շեր այդ ծառան ու ջաղացպանինը իրար մոտ նստած պատմում են, թե ում գլուխը ի՞նչ է եկել[1]։ Երբ որ նրանք երկուսն էլ ամեն մեկը իր գլուխն եկածը պատմեց, իսկույն իմացան, որ նրանք եղբայրներ են, դրա համար խոսք տվին իրար, ընկնեն քաղաքեքաղաք, փնտրեն իրանց հորը։ Մի քաղաքում մի սովդաքյար դրանց բռնում է ու կարգում իր համար ծառա։

Անց է կենում մի միջոց, այդ սովդաքյարը մի անգամ դուրս է գալիս դաշտը զբոսնելու իր երկու ծառաների հետ։ Դաշտումը դրանք տեսնում են թաքավորի գողացած կնոջը. բայց ոչ ոք դրանցից չի ճանաչում նրան։ Այդ կինը սովդաքյարին դուր է գալիս, դրա համար էլ սովդաքյարը պսակվում է դրա վրա։ Մեկ օր երբ սովդաքյարը գնացել էր թաքավորի մոտ գործի, սովդաքյարի կինն ու ծառաները մենակ նստած իրար պատմում են ամեն մեկը իր գլխի եկածը։ Պատմելուց հետո կինը իսկույն իմանում է, որ այդ տղերքը իր որդիքն են. բայց ինքն իրան զսպում է ու դեռ չի հայտնում նրանց։

Միայն իր պատմությունը այն ձևով է շարունակում, որ նրանք հենց իրանք են հասկանում, որ իրանց մոր մոտին են նստած։ Դրա համար էլ իսկույն ընկնում են նրա գիրկը, իրար ողջունում և հետո մայրը որդկերանցը նստեցնում է ամեն մեկին մի ծնկան վրա ու հերթով համբուրում նրանց։

Այդ ժամին սովդաքյարը վերադառնալիս այդ բանը տեսնում է ու գնում թաքավորին հայտնում։ Թաքավորը հրամայում է շուտով սպանել այդ սովդաքյարի կնոջն ու ծառաներին։ Սպանելու ժամանակը կինը հանկարծ աղաղակելով խնդրում է, որ թույլ տան մի քանի խոսք ասելու թաքավորին։ Երբ որ իրավունք են տալիս, նա գնում է թաքավորի մոտ ու երբ որ իր գլխի եկածը պատմում է ու ասում, թե այն տղեքը իր որդիքն էին, իսկույն թաքավորը հրամայում է ներել ու ապրուստի համար բավականին փող ընծայել այդ կնոջը ու իր որդկերանցը։ Այնուհետև մայրը և որդիքը միասին ապրում էին բախտավորության մեջ մինչև իրանց մահը։

---

1 Ում հետ ինչ է պատահել (Ս. Բ.)։

www.naregatsi.org

22. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԵՔ ՈՐԴԻՔԸ

Ժամանակով ապրում էր մի թաքավոր իր երեք որդկերանց հետ շատ բախտավորությամբ։ Սրա որդիքը բաժանեցին իր հոր կայքերը իրար մեջ. շատ մասը վեր առան երկու մեծ եղբայրները՝ իսկ ամենափոքրին տվին մի կաղ ձի։

Մի օր, երբ թաքավորը տուն եկավ՝ կանչեց երկու որդկերանցը ու ասեց.

— Ես լսել եմ մի բան, եթե կկատարեք՝ ես այն բանը կտամ ձեզ։

— Հայրի՛կ, հայրի՛կ, պատմե այդ բանը,— ասեցին որդիքը։

Թաքավորը ասեց.— Մի ծովում կան երկու սիրուն աղջիկ, իրարից երկու սաժեն հեռավորությամբ նստած, առաջինը գցում է իր ձեռքի կարմիր խնձորը մյուսին, իսկ սա նրան, ու ոչ ոք չի համարձակվում գնալու նրանց մոտ, որովհետև ծովը շատ խորն է ու մեծ։ Իսկ դուք ունեք լավ ձիաններ. շուտով գնացեք այնտեղ ու սպասեցեք, երբ կլսեք փողի ձայն՝ այն ժամանակ վազեցեք դեպի նրանց։

Այժմ ես նրանց թողնում եմ ու դառնում եմ փոքրիկ եղբորը, որն որ ուրտում ու տխուր նստած էր միայնակ իր սենյակումը։ Նա

www.naregatsi.org

երբ որ էս բանն իմացավ՝ ինքն իրան ասեց. «Անմիտնե՜ր, դուք կարծեցիք, թե ինձ խաբեցիք, իսկ ինչպես որ երևում է դուք եք խաբվել»։

Այս ասելով նա դուրս էկավ դաշտը՝ շվացրեց և ահա նրա առաջը կանգնած է իր հրեղեն ձին։ Նա թամքեց ձիուն՝ նստեց վրեն և իսկույն կերպարանքը փոխվեց. նա դառավ մի քաջ և գեղեցիկ երիտասարդ. ձիուն սրզանգեց՝ ձին թռավ երկինք և երիտասարդին տարավ ծովի մոտ։ Երբ որ երիտասարդը լսեց փողի ձայնը՝ դարձյալ օրզանգեց ձիուն. ձին նրան տարավ աղջկերանց մոտը՝ ատամներով բռնեց երկու աղջկերանցը՝ գցեց երիտասարդի հետևը[1] և նրա հետ դարձավ։

Իսկ ժողովուրդը գոռաց.— Բռնե՜ք, տարա՜վ, բռնե՜ք...։

Բայց զուր. նա գնաց՝ ձին արձակեց դաշտումը ու ինքը նստեց իր տեղումը դարձյալ առաջվա նման՝ տխուր ու տրտում։

Երբ վերադարձան տուն եղբայրները՝ զարմանքով պատմեցին իրենց հորը այն երիտասարդի քաջության մասին, որը աղջկերանցը փախցրեց։

Հայրը ասեց.— Ապա չիմացա՞ք, թե ով էր այդ երիտասարդը։

Նրանք պատասխանեցին.— Ոչ։

Հայրը հրամայեց, որ փնտրեն ու գտնեն նրան. բայց ոչ ոք չգտավ։

Անց կացավ մի քանի օր ևս՝ այն ժամանակ թաքավորը կրկին կանչեց իր երկու որդոցը և ասեց.

— Այժմ ես փորձեցեք դնալ այն ծովը. այժմ միայն մի աղջիկ է նստած այնտեղ, գուցե երկուսով կարողանաք նրան բերել։

Այս անգամ էլ փոքր եղբայրը փախցրեց այդ աղջկան իր հրեղեն ձիու վրա։ Եղբայրները կրկին վերադարձան տուն ու զարմանքով պատմեցին հորը։ Հայրը կրկին հրամայեց փնտրել աղջիկ փախցնողին, բայց ոչ ոք չգտավ։

Որդիքը շատ տխրեցին ու միշտ միտք էին անում։

Վերջապես նրանց փոքրիկ եղբայրը եկավ հոր մոտ ու ասեց.

— Այն ես էի, որ աղջկերանցը ծովի միջից փախցրի,— և ցույց տվեց երեք աղջկերանցն էլ թաքավորին։

Այն ժամանակ թաքավորը համբուրեց նրա ճակատը ու տվեց

---

1 Շալակը (Մ. Բ.)։

www.naregatsi.org

Նրան իր ոսկե մատանին, այսինքն նշանակեց թաքավոր ու կանչելով մյուս որդոցը՝ հաշտեցրեց բոլորին իրար հետ։ Աղջկերանցից ամնասիրունը տվեց փոքր որդուն, իսկ մյուս երկուսը՝ ամեն մեկը ամեն մի մեծ որդուն ու հրամայեց որ նրանք պատվեն իր փոքր որդուն ինչպես իրանց եղբորը ու չհանդիմանեն նրան։

www.naregatsi.org

23. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԵՔ ՈՐԴԻՔԸ

Ժամանակով ապրում էր մի թաքավոր իր երեք որդկերանցով շատ բախտավորությամբ։ Մոտենում է թաքավորի մահվան օրը. նա կանչում է իր որդկերանցը և ասում է.

— Երբ որ ես կմեռնեմ, աշխատեցեք չդնալ իմ պալատի արևմտյան կողմը, որովհետև այնտեղ ձեզ մահ է սպառնում։

Բացի դրանից՝ նա առանձին խնդրեց իր փոքրիկ որդուն ու ասեց.

— Երբ որ դու աղքատության մեջ կընկնես, գնա իմ ներքնատունը, այնտեղ կապած ունեմ առաստաղից մի պարան, քո վիզը գցիր այդ պարանի մեջ ու խեղդվիր։— Ու տալիս է նրան մի փոքրիկ կնքած արկղ, որ նա միշտ ջիբումը պահի ու հետը ման ածի։

Երբ որ մեռնում է հայրը՝ մեծ որդին ասում է իր երկու եղբորը.

— Ես գնում եմ այնտեղ, որտեղ իմ հայրս պատվիրեց չդնալ, եթե յոթ օրից հետո կվերադառնամ՝ շատ լա՛վ, իսկ եթե չվերադառնամ՝ իմացեք որ սպանված եմ։

Հեծնում է ձին և գնում դեպի պալատի արևմտյան կողմը։ Երբ որ հասնում է այնտեղը, տեսնելով մարգագետնի գեղեցկությունը, ասում է.

www.naregatsi.org

— Ապերախտ հայր իմ, դրա համար էիր ինձ արգելում գալ այստեղ, որ այսպիսի դեղեցկությունը չտեսնեի։

Այս ասելով նստում է աղբյուրի մոտ և ահա ինչ է տեսնում. մոտենում է մի զարհուրելի գազան — հրեշ, տեսնելով մարդին նա ասում է.

— Ինչպե՞ս ես համարձակվել այստեղ մտնելու։

Իսկ Թաքավորի որդին ասում է.— Ես ունիմ իրավունք, որովհետև հայրս եղել է Թաքավոր և այստեղի իշխող, և ես նրա որդին եմ, ինչպես չեմ համարձակվիլ մտնելու։

Թաքավորի որդին պատասխանի տեղ ստանում է հրեշի սրի սարսափելի հարվածը ու իսկույն մեռնում է։ Հրեշը նրա դիակը տանում է սարի մյուս կողմը ու այնտեղ վայր գցում, որպեսզի մարդագետնի անուշահոտությունը չապականվի։

Երբ որ յոթ օրն անցկացավ՝ մյուս եղբայրներից մեկը[1] ասեց.

— Գնամ, տեսնեմ եղբայրս արդարև սպանվա՞ծ է, թե կենդանի։

Եվ գնաց այնտեղ, ուր որ գնացել էր եղբայրը, բայց տարաբախտաբար միևնույնը պատահեց ու դրա հետ։

Վերջապես գնում է փոքրիկ եղբայրը։ Երբ որ հասնում է այդ մարգագետնին, նստում է աղբյուրի մոտին։ Մի քիչ հանգստանալուց հետո, տեսնում է եկավ չարագուշակ հրեշը։ Հրեշը միևնույն հարցն էլ փոքրիկ եղբորը տվեց, իսկ նա երկար ու բարակ խոսակցություն անելով՝ կամաց-կամաց հանում է սուրը ու հանկարծ վրա բերում հրեշի վզի վրա ու նրա մարմինն ու գլուխը իրարից բաժանելով՝ սպանում է այդ անպիտան գազանին։

Այս բանից հետո Թաքավորի որդին տեսնում է, որ աղբյուրին մոտենում է մի եղջերու, ուզում է դրան սպանի, բայց եղջերուն հանկարծ փոխվում է մի հրապուրիչ աղջկա կերպարանք ու փախչում. դա լինում է մոտակա տեղում գտնվող Թաքավորի աղջիկը։

Թաքավորի որդին ընկնում է այդ աղջկա ետևից ու վազում. հանկարծ տեսնում է, որ աղջիկը մտավ մի գեղեցիկ պալատ, որտեղ ժողոված էին լինում մի քանի մարդիկ. դրանք Թաքավորի դատավորներից են լինում։

---

[1] Միջնեկը (Ս. Ա.)։

www.naregatsi.org

Թաքավորի որդին մտնում է այդ պալատը ու հարցնում է.

— Չտեսա՞ք, արդյոք, այստեղ մտնելիս մի եղջերու։

Նրանք ասեցին.— Տեսանք,— և ցույց տվին թաքավորի աղջկանը։

Թաքավորի որդին ասեց.— Ես կամենում եմ դրա հետ ամուսնանալ, և դատավորները առաջարկեցին հետևյալ պայմանը, եթե դու կարողացար այդ աղջկանը մի օր ու գիշերումը ծիծաղեցնել՝ այն ժամանակը մենք կտանք քեզ, ուրիշ դեպքում ո՛չ երբեք։

Այնտեղ ժողոված էին երեսուն-քառասուն հոգի, որոնք ոչ մի կերպով չէին կարողացել ծիծաղեցնել։ Դրանցից ով որ կարողանար ծիծաղեցնել, աղջիկը նրան պետք է պատկաներ։ Գալիս է հերթը թաքավորի տղին։ Սա ինչ տեսակ հնարք գործ է դնում, չի կարողանում ծիծաղեցնել։ Վերջը ջիբիցը հանում է իր հոր տված արկղիկը. կնիքը քանդում է ու բաց է անում, և ինչ՝ արկղիկի միջից դուրս է թռչում մի կատու՝ մի կենդանի մուկ բերնին բռնած։

Կատուն արկղիկիցը դուրս գալուն պես մկանը բերնիցը բաց է թողնում և մուկը փախչում է. թաքավորի աղջիկը այս տեսնելով չի կարողանում այլևս իր ծիծաղը պահել ու ծիծաղում է։

Այսպես այդ արկղիկի օգնությամբ թաքավորի որդին հասավ իր ցանկությանը՝ պսակվեց այդ աղջկա հետ։

Այնպես է պատահում, որ մի օր նա գնում է որսի և իր հետ ունենում է իր կնոջ պատկերը։ Մի առվի մոտ ջուր խմելու ժամանակ դրա գլխարկի միջից վայր է ընկնում այդ պատկերը և դա չի իմանում։ Զանազան քաղաքներ մանելուց հետո՝ վերջը դա մի քաղաքում կանգ է առնում։ Բանը այնպես է լինում, որ այդ քաղաքի թաքավորի որդին մեկ օր տանիցը դուրս եկած ժամանակը, հանկարծ գտնում է այն պատկերը, որ մյուս թաքավորի որդին կորցրել էր։ Պատկերը նրան շատ է դուր գալիս, շատ գեղեցիկ է լինում, դրա համար էլ նա խնդրում է հորը, որ փնտրեն ու գտնեն այդ աղջկանը իր համար։ Այս բանը մի պառավ կին իմանում է ու գնում է պատկերը կորցնող թաքավորի որդու մոտը ու ասում է.

— Ես կարող եմ քո կորցրած պատկերը բերել, տալ քեզ։

Եվ հետը վեր է առնում մի քիչ թույն ու գնում պատկերը գտնող թաքավորի որդու մոտ։ Թույնը խառնում է գինու հետ ու տալիս թաքավորի որդուն, սա վեր է ընկնում և այդ ժամանակ պառավը խլում է պատկերը ու տանում տալիս է տիրոջը։ Այն մյուս

www.naregatsi.org

Թաքավորի որդին կորցրած պատկերը ստանալուն պես, վերադառնում է իր եկած ճանապարհով իր կնոջ մոտ, վեր է առնում նրան ու գնում են հայրական քաղաքը։ Բայց այդտեղ բոլորը անտեր մնալուց ոչնչացել էին. ո՛չ հարստություն կար, ո՛չ կայք և ոչ մի բան, Թաքավորի որդին հետին աղքատության մեջ պիտի ապրեր։ Բայց մեկ օր մտաբերեց իր հոր խոսքերը ու ուզեց կատարել։ Գնաց ներքնատունը, տեսավ կախ արած պարանը, իր վիզը գցեց այդ պարանի մեջ, որ խեղդվի, բայց հանկարծ պարանը կտրվեց, և ինքը վայր ընկավ ու տեսավ, որ իր հետ էլ մի մեծ տոպրակ ոսկի զրնգաց գետնի վրա, որ պարանիցն էր կապած եղել, բայց ինքը չէր նկատել։

Ոսկին ուրախ-ուրախ վեր կալավ ու գնաց կնոջը պատմեց այդ բանը։ Կինն էլ, ինքն էլ ուրախացան ու մինչև մահները ապրում էին երջանկությամբ։

www.naregatsi.org

24. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ՀՈՎԻՎԸ

Ժամանակով ապրում էր մի թաքավոր։ Թաքավորի արտոմը լինում է մի այնպիսի խոզ, որ ոչ ոք չի կարողանում նրան մոտենալ։ Թաքավորը հրամայեց, որ ով այդ խոզին սպանի՝ թաքավորի փեսեն կդառնա։

Շատ մարդիկ եկան սպանելու, բայց ով մոտենում էր խոզին՝ սա նրան պատռտում էր։ Վերջը մի հովիվ է գալիս։ Դա վեր է առնում իր փայտը ու դանակը, գնում է բարձրանում մի ծառի վրա ու սպասում, որ խոզը գա ծառի տակը՝ պտուղներ հավաքելու։ Երբ խոզը գալիս է, այդ հովիվը ծառի վրից այնքան պտուղ է վեր ածում, որ խոզը ուտում, կշտանում է ու պառկում այդտեղ քնում։ Այն ժամանակ հովիվը ծառից վեր է գալիս ու քնած խոզի գլուխը կտրում, տանում թաքավորին, նրա աղջկա վրա պսակվում ու դառնում թաքավորի փեսա։

www.naregatsi.org

25. ԷՐԿՈՒ ԳԻԺ ԱԽՊԵՐՏԻՆՔ

Էրկու ախպեր են ըլնում, էրկուան էլ գիժ են ըլնում։ Սրանք ամեն վախտ տանում էին տավարը հանդը արածացնելու։ Մի անգամ պուճուր ախպերը տանից հաց վե կալավ, որ տանի հանդը իրա ախպոր համար։ Ճամփին տեհավ՝ մի մարդ իրա հետևից հա՛ գալիս ա։ Էս կապովի գիժը հացերից մինը վեր գցեց.

— Ըհը՛, ա՛ռ էս հացը ու ռադ իլ գլխիցս։

Էլի տեհավ, որ գալիս ա հետևից, մի հաց էլ գցեց.

— Ա՛ռ էս էլ, օ՜հ, ինչ աչքածակ մարդ ա էլե, էսքան տվի, չկշտացա՜վ։

Էսպես, մինչև հանդը ինչքան հաց ուներ վե գցեց, չունքի էն մարդը, որ նրա աչքին երևում էր, հենց իրա շվաքն էր։ Էկավ իրա ախպոր մոտ անհաց։

Մեծ ախպերը ասեց.— Տո՛, այ գիժ, քու հացը ո՞ւր ա։

Նա պատասխան տվեց.— Տեսնո՞ւմ ես էս մարդը, բոլոր հացը կերել ա, էլի դեռ փորը չի կշտացել ու հետևիցս գալիս ա։ Ինչ աչքածակ մարդ ա՛ էլե սա։

Տավարը էս էրկու ախպերտինքը քշեցին, որ տուն տանեն։ Ճամփին մի գետ ռաստ էկավ ու էս գիժ ախպորտանց տավարը չէր անց կենում։

www.naregatsi.org

— Հա, լալնի վախենում եք սապոկներեիդ Թրջվի, էնդուր համար չեք ուզում ջուրը անցնի,— ասեցին էս գիժ ախպերտինքը ու նրանց պճեղները դանակով մին-մին հանեցին, արինշաղաղ ոտներով գցեցին գետն ու իրանք էկան տուն։

— Տավարը տուն հո չի էկել,— հարցրին էս գիժ ախպերտինքը,— նրանք մեզանից առաջ են ճամփա ընկել։

Տեհան, որ ոչ տավար կա, ոչ էլ բան, չունքի բոլորն էլ ջրում խեղդվել էին։

www.naregatsi.org

26. ՁՈՒԱՆԻ ՏՂԵՆ

Մի չորան ա ըլնում, ունենում ա մի տղա։ Էս տղեն տեսնում ա, որ իրա հերը ամեն օր մի հաց ջուրն ա գցում։ Համա չի կարում հասկանա, թե ինչո՞ւ ա գցում օրը մի հաց ջրի մեջ։

Սրա հերը մեռնում ա, մնում ա մենակ տղեն։ Էս տղեն էլ օրը մի հաց գցում ա էն ջուրը, ոնց որ իրա հերը գցում էր իրա սաղ վախտը։

Մի օր էլ մի հաց գցում ա ջուրը ու ինքն էլ հետևից ընկնում ջուրը։ Ջուրը քշում ա էս տղին ու հացի հետ մի տեղ տակն ա անում։ Ջրի տակին տեսնում ա մի մենձ պալատ շինած ու մեջը մարդիկ են ըլնում։ Սրանց մին-մին պատմում ա, թե՝ էն հացը մենք ինք գցում։ Էն վախտը նրան շանց են տալի, որ էթա իրանց թաքավորի մոտ։ Թաքավորին էլ մին-մին ասում ա, ինչ որ էլել էր։

Թաքավորն ասում ա.— Ջունքի դուք մեզ լավություն եք արել ու ամեն օր հաց եք տվել մեզ, ի՞նչ ես ուզում, ասա՛, որ քեզ տամ։

Էնտեղ նրան ասել էին, որ թաքավորը ասի. «Ի՞նչ ես ուզում», դու ասա. «Մի անգամ բերնումս թքի, հերիք ա»։

Էս տղեն էլ թաքավորին ասեց.— Մի անգամ բերնումս թքի, էս եմ ուզում։

Թաքավորը էն վախտը ասեց.— Քու սովորցնողի շլինքը կոտրվի, համա ինչ անեմ, չունքի ուզել ես՝ պտի կատարեմ,— ու թքեց մի անգամ նրա բերնում։

www.naregatsi.org

Նա էն թավուր շնորհք առավ, որ ամեն լեզու իմանում էր՝ թե ծտի, թե շան, թե օրդակի, թե գելի. մի խոսքով, աշխարքում ինչ թավուր ջանավար կար, բոլորի լեզուն հասկանում էր։ Ջրի տակից որ դուրս էկավ, տեհավ, որ էրկու ծիտ իրար հետ խոսում են։

Մի ծիտը ասում էր մեկելին.— էս մարդու ձին էգուց կսատկի։

Էս որ լսեց թե չէ, գնաց ու իրա ձին ծախեց ուրիշի վրա։ Ղորթ որ մեկել օրը նրա ձին սատկեց։

Մի քանի վախտ անց կացավ, մի օր էլ տեհավ մի շուն կըտրան վրա նստել հաչում ա։ Էս մարդը հասկացավ, որ նա ասում ա. «Էս մարդի եզը էգուց կսատկի ու մենք կէթանք նրա միսը կուտենք»։ Վռազ-վռազ գնաց ու իրա եզն էլ ծախեց ու մեկել օրը սատկեց։ Էսպես էս մարդը իմանում էր, թե իրան ինչ վնաս պտի ըլնի։

www.naregatsi.org

27. ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Մի անգամ մի ձիավոր գնաց մեկի մոտ ղոնախ։ Երբ որ մըթնեց էս ձիավորը ձին նստեց, շնորհակալություն արեց նրանց ու դուս գնաց։ Էս ձիավորը դեռ հլա մի քիչ նոր էր հեռացել, տեհավ, որ մի մարդագել հետևից գալիս աւ։ Ձին նրա վրա քշեց ու թուրը հանեց, նրա ջուխտ ծծերը քոքից կտրեց, վե քցեց։ Համա իրան էլ վնաս չնստեց՝ իրա ձիու մորը չանչերով մարդագելը եղել էր։ Մարդագելը վազեց, ձիավորն էլ նրա հետևից։ Տեհավ, որ մտավ էն տունը, որտեղ նա էն օրը ղոնախ էր։ Նրա հետևից բուռուն քաշեց, տեհավ որ վրի մորթին հանեց ու տարավ պահեց աթարանոցում, որտեղ ցան էր լցրած, ու ինքը, որ մի սիրուն աղջիկ էր, գնաց մտավ տուն։

Էս մարդը գնաց հանեց էն մորթին ու դրսի թունդիրը լավ վառեց, քցեց էդ մորթին մեջը ու էրեց։ Էստեղ մորթին էր էրվում, տանը աղջիկը ձեն էր ածում, ծկլտում, դես ու դեն ընկնում։ Տանը-ցիքը մնացել էին զարմացած։ Հենց որ էրվեց մորթին, վերջացավ, աղջիկն էլ դնջացավ։ Հետո գնաց տուն ու մին-մին նաղլ արեց նրանց, ոնց որ պատահել էր։ Աղջկա մարդը շատ շնորհակալ էլավ նրանից։ Սրանից դենը էս աղջիկը էլ չէր էթում մարդագելություն անելու։ Առաջ ցերեկը տնեցոնց հետ ուտում, խմում, խոսում էր, համա գշերը էթում էր մարդագելություն անելու։

---

www.naregatsi.org

28. ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք էրկու տղա են ունենում։ Մի անգամ էս մարդը էթում ա սարը բոխ քաղելու։ Քաղում, պրծնում ա ու ետ գալի։ Հետը մի պարկ կորեկի հաց ա ունենում, լավ խժռում ա ու անցկացնում գլխին. մի դհից ուտում ա, մի դհից էթում իրա ճամփեն։ Ախար աչքերը կալանված ա, գադ չի տենում։ Գնաց, գնաց, մի վախտ պարկը գլխից հանեց, տեհավ, որ մի մութը տեղ ա։ Մնաց տեղն ու տեղը կանգնած։ Մտիկ արեց, տեհավ, որ հեռու մի ճրագ ա վառվում ու դպա էն ճրագը գնաց։ Մտավ տուն, տեհավ, որ մի պառավ կնիկ նստել ա տանը. սրա աչքերը քոռ էր։ Պառավ կնիկը, որ էս տան տերն էր, մարդագել էր, սաքի թե մարդի միս էր ուտում։

Պառավը շատ ուրախացավ ու ասեց.— Բարև, որդի, իմ աչքի վրեն էկար, արի նստի, զաթի որդի չունեի, աստված ինձ որդի տվեց, սրանից դեն ինձ մոտ կաց ու քեզ համար ապրի։

Մարդը ասեց, որ մի կնիկ ու էրկու տղա էլ ունի։ Մարդագելը ասեց, որ էթա իրա սաղ օղլուշաղը բերի ըստեղ ու իրար հետ ապրեն։ Մարդը վե կացավ ու գնաց բերեց իրա կնկանն ու էրկու տղերքանցը։ Մարդագելի քեֆը բացվեց, չունքի մեկի տեղակ հիմի չորսին պիտի ուտի։ Գնաց մի մենձ քար դռանը դեմ տվեց ու սկսեց մին-մին մորթել։ Առաջ մարդին վե քցեց ու մորթեց, հետո

www.naregatsi.org

աղերքանցից մեկին։ Հորը ու որդուն իատկեց, աղ դրեց, որ յավաշ-
յավաշ ուտի։ Չունքի բնզարել էր, գնաց դուս, որ քիչ դրնջանա,
հետո գա մորն ու տղին մորթի ու աղ դնի։ Գնաց մարդագելը ու
ետեից քարը դրեց դռան վրա, որ դուս չգան։ Համա մորն ու տղեն
կարացին քարը դեն քցի ու դուս էկան գնացին։ Էս մարդագելի
բակում մի մենձ ցեխ կար, էս ցեխի կողքովը գնացին։ Համա
մարդագելը ոնց որ էլավ՝ հոտն առավ ու ետեներից ընկավ. չունքի
նա քոռ էր, ցեխի մեջ խրվեց ու մնաց։ Հետո մեր ու տղա գնացին
մարդկերանց իմաց տվին, էկան ինչքան սպանած մարդիք կար
էս մարդագելի տանը՝ հանեցին ու թաղեցին։ Նրա տանը ինչ կար-
չկար՝ էլ փող, ոսկի, էրծաթ հավաքեցին ու տարան։

www.naregatsi.org

29. ԱՂՔԱՏ ՔԱՐՏԱՇ

Մի աղքատ քարտաշ է ըլնում, որ իր ապուստը մենակ քարտաշելով է ճարում, օրական երկու աբասի ա առնում ու նրանով կառավարվում, իսկ դրանից մնացածը աղքատներին բաժանում։ Հրեշտակը մի անգամ ասում է աստծուն, թե էս խեղճ մարդուն ինչո՞ւ է միայն օրական երկու աբասի տալիս, իսկ նրանից ավելի մեղավոր մարդկերանց հազարապատիկ ավելի է տալիս, այնինչ էս քարտաշը աղքատներին ողորմող մարդ է։

Աստված ասեց.— Եթե նրան հարստություն տամ՝ իր հավատը կուրանա։

Հրեշտակը ասեց, թե ինքը նորա փոխանակ պատասխանատու կլինի։

Աստված համաձայնեց։ Մյուս օրը այն քարտաշը քարը տաշելիս քարի տակ մի ահագին կտոր ոսկի գտավ։ Նա թողեց յուր քարտաշությունը, գնաց ուրիշ երկիր ու սկսեց շռայլ ապրել՝ աստծո ճանապարհից դուրս գնալով. սա պարսից տերության մեջ էր։ Մտքումը դրեց մի քանի մարդոց կաշառել, սպանել տալ փաշային ու ինքը նրա տեղը նստել, բայց այս գաղտնիքը իմացվեց ու նրան որոնում էին, որ խեղդեն։ Այս լուրը երբ քարտաշը լսեց, թողեց բոլոր հարստությունը ու փախավ էլի իրանց երկիրը ու սկսեց իր քարտաշությունը, բավականանալով օրական քառասուն կոպեկ աշխատելուց։

---

www.naregatsi.org

30. ՆԱԽԱՆՁԸ ԼԱՎ ԲԱՆ ՉԻ

Մի տան մեջ երկու տեքրակիններ են լինում. նրանցից մինը շատ բարի ա լինում, իսկ մեկելը՝ չար, կռվարար, էնպես որ չի ուզում իսկի տանը բան անել, մարդին քոմակ անել, իսկ առաջին տեքրակինը իր մարդի հետ միասին ամեն օր գնում էր դաշտը աշխատելու։

Մի օր էլ իր երեխեն վեր կալավ օրորոցով ու իր հետ դաշտը տարավ։ Երեկոյան ետ դառնալիս մոռացավ երեխային ետ հետը վերցնելու, էնպես մնաց շոլումը։ Մայրը երբ արդեն տուն էր հասել, այն ժամանակ միայն միտը ընկավ, որ երեխան դաշտումը մնացել է. էլ ո՞ւր, պիտի մնար մինչև առավոտ։ Մյուս օրը առավոտը շուտ վեր կացավ ու գնաց երեխին բերելու, տեսավ որ երկու չուսեղեն հրեշտակներ օրորում են երեխին. մնաց զարմացած, որ գելերը չեն կերել։ Այս բանը, երբ մյուս տեքրակինը իմացավ, ասեց. «Ես էլ իմ երեխին կտանեմ դաշտը կթողնեմ, որ հրեշտակները օրորենն։ Այնպես նա արեց, բայց մյուս օրը, երբ ետ գնաց, որ բերի երեխին, տեսավ, որ գայլերը կերել են, օրորոցը քարուքանդ արել։

Մարդը երբ այս իմացավ, սաստիկ բարկացավ կնոջ վրա ասելով.

— Տեքրակինդ որ երեխին թողեց դաշտումը անգիտակցաբար էր և այդ պատճառով հրեշտակները պահեցին նրան, իսկ դու չար նախանձ ես, այդ պատճառով էլ գելերը կերան. դրա համար քեզ տեղն է։

---

www.naregatsi.org

31. ՀՈՐ ՎՐԱ ՆՍՏԵՑ, ՄՈՐԸ ՀԱԳԱՎ, ՄԱՄԸ ԽՄԵՑ

Մարդ ու կնիկ են ըլնում. սրանք շատ էլ հարուստ են ըլնում։ Մի տղա են ունենում ու սրան էն թավուր ուսում են տալիս, որ մինչև ծտի լեզու էլ է իմանալիս ըլնում։ Համա սա շատ փչատատամ է ըլնում. հոր կարողությունը սաղ փչացնում է, ընենց որ ուտելու հաց չեն ունենում։ Սա իր հոր ու մորը վերցնում է ու իրանց երկրից հեռանում, ուրիշ երկիր գնում, հորը մի հարուստ վաճառականի մոտ գրավ դնում ու նրանից ստացած փողով մի ձի առնում ու նստում, մորը գրավ դնում՝ իր համար հագնելու լավ շորեր առնում ու ճանապարհ ընկնում ուրիշ քաղաք։ Ճանապարհին մի ձիավոր է ռաստ գալիս, սրան հարցնում է, թե սա ո՞ւր է գնում, նա ասում է՝ ֆլան քաղաքը։ Ձիավորը հանում է մի նամակ տալիս, ասելով որ այնինչ մարդին հասցնի, նա առնում է նամակը, իր գդակի մեջ դնում ու առաջ գնում։ Ճանապարհին սա դեսդեն է ընկնում՝ ջուր չի գտնում, թե իրա և թե ձիու համար։ Վերջապես գնում է մի ջրհոր գտնում, բայց փոքր ինչ խոր է լինում, ի՞նչ անի, ինչո՞վ ջուր հանի։ Իր գոտիկը կապում է գդակից ու փարխաջի պես ջուր հանում ձիուն տալիս ու հետո էլ ինքը խմում։ Հետո միտքն է ընկնում, որ էն գդակի մեջ էն անծանոթ մարդու տված գիրը պահած էր, հանում է թրջած նամակը ու բայց անում որ չորացնի, կարդում է՝ տեսնում գրած. «Էս նամակաբերիս խ-

www.naregatsi.org

կուլն սպանիրա։ Նա իսկույն պատռում է դիրը ու էլի առաջ գնում, ուրախանալով որ մահից լավ պրծավ։ Գնում է մի քաղաք հասնում, մի պառավի պատահում, հարցնում, թե՝ ղոնաղ չի ուզի, նա պատասխանում է, որ ղոնաղը աստծուն է, ինչո՞ւ չի ուզի։ Պառավը սիրով ընդունում է սրան իր տանը ու լավ պատիվ է տալիս։ Պառավը պատմում է սրան, որ էս քաղաքում մի թաքավորի աղջիկ կա, որ ուզում է պսակվի, ինչ մարդ կանչում է իր մոտ, խոսեցնում ու գլուխը կտրում՝ անարժան համարելով նրա հետ պսակվելը. էսպես մինչև իննսունիններորդ մարդի գլուխ է կտրել, հարյուրին մեկն է մնում, որ թամամի. էս բոլորի գլխով մի ամարաթ է շինել իր պալատի առաջ։ Նա ասում է, որ ինքը պիտի գնա նրա մոտ, խոսի նրա հետ ու պսակվի։ Պառավը ասում է, որ ինքը մենակ չգնա, բայց չի լսում։

Պառավը ասում է.— Լա՛վ, դե որ գնում ես, իմ մուկն էլ տար հետդ, սա իմաստուն է, քեզ կօգնի։

Նա այս իմաստուն մուկը առած գնում է թաքավորի տուն ու ասում, որ եկել է նրա աղջկա հետ խոսելու։ Թաքավորի աղջիկը իր օթախում ընդունում է նրան։

Նա այսպես սկսում է խոսել.— Մի դերձակ, մի դուրգալ և մի քահանա իրար հետ ճանապարհ են գնում, գիշերը մի ամայի տեղ մթնում է, ուր նոքա պիտի քնեն։ Նրանք իրար ասում են, որ հերթով մեզանից մեկը չքնի ու պահապան ըլնի։ Համաձայնվում են։ Ամենից առաջ դուրգալը է անքուն մնում, նա իր հաջաթ-մաջաթները վերցնում է ու գնում մոտիկ անտառից փայտ կտրում, բերում մարդի կերպարանքով մարդ շինում էնտեղ կանգնեցնում. հետո զարթնեցնում է դերձակին, նա զարթնում ու մարդին տեսնելով գնում է ծառի տերև քաղում ու բերում նրա համար շորեր կարում. հետո քահանային է զարթեցնում, իսկ ինքը քնում։ Քահանան շորերը հագած մարդին տեսնելով այնքան աստծուն աղոթք է անում, որ էդ մարդը շունչ է ստանում։

Հետո ինքն է ավելացնում.— Հիմա էն դուրգալին ասա՛, որ փայտից էսպեսի մարդ է շինում։

Մուկը, որ նրա հետ եկել էր, ձեն է տալիս.— Հիմա դու էն դերձակին ասա՛, որ նրա համար կարողացել է տերևից շորեր կարել։

Թաքավորի աղջիկը ասում է.— Բա իսկի չեք ասում, ո՛վ հի-

www.naregatsi.org

մարներ, էն քահանային, որ աստծուն աղոթք անելով նրան շունչ է տալիս։

Նա այսպես պատասխանում է, բայց փոշմանում է, որովհետև նա մինչև այսօր ոչ ոքի պատասխան չէր տվել։ Եթե պատասխան տար, ուրեմն նրա վրա պիտի պսակվեր։

Թաքավորի աղջիկը ասեց, որ էգուց էլ գա խոսի նրա հետ։ Մյուս օրը նա գալիս է Թաքավորի աղջկա մոտ ու հարցնում.

— Էս ի՞նչն է ինչ, որ հորս վրա նստեցի, մորս հագա, մամը խմեցի։

Նա շատ միտք է անում, չի գտնում ու ասում է, որ վաղը պատասխան կտա։ Թաքավորի աղջիկը տեղեկանում է, թե այս տղեն ո՞ւմ մոտ է վեր եկած։ Երեկոյան երբ մթնում է, շորերը փոխած, խրխա հագած ու երեսը ծածկած, իր երկու ծառաների հետ նրա մոտ է գնում, սկսում է նրա հետ հարբեցողություն անել. հարբած ժամանակ նա տղին հարցնում է, թե ի՞նչ էր, որ ինձ հարցրիր, նա հարբած լինելով պատմում է ու բացատրում այդ։ Էս երբ լսում է Թաքավորի աղջիկը ուրախությունից էնպես է շտապում, որ իր խրխեն պառավի տանն է թողնում ու դուրս փախչում գնում։ Մյուս օրը տղեն զարթնում է, տեսնում է, որ մոտը մարդ չկա, հիշում է, որ իրան խաբել են։ Նա դես ու դեն է մտիկ անում, տեսնում է, որ նրա խրխեն մնացել է, սաստիկ շտապելուց։ Նա վեր է կենում ու գնում Թաքավորի աղջկա մոտ, որ իր հարցմունքին պիտի պատասխաներ։ Աղջիկը ինչպես էն գիշեր իմացել էր, էնպես էլ արեց և իհարկե — այժմ պիտի նրա գլուխը կտրեին։ Բայց սա խնդրեց մի երկու խոսք էլ ասել և հետո նրան գլխատեն։ Իրավունք տվին խոսելու։

Նա ասաց.— Էն ի՞նչն է ինչ, ես երեք աղունիկ ունեի, նրանց մորթեցի, փետրեցի, եփեցի և դրի փլավի վրա, որ ուտեմ, հանկարծ վեր կացան ու թռան, իբր ապացույց որ այսպես է եղել, ես նրանց փետուրները կամենաք ցույց կտամ, տանն է։

Թաքավորի աղջիկն ասում է.— Էն ես եմ, որ քեզ վրա պիտի պսակվիմ։

Նրա շորերը փոխին, լավ լողացրին ու պսակեցին Թաքավորի աղջկա վրա, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին։ Հետո նա իր մորն էլ բերել տվեց իր մոտ ու երկար տարիներ իրար հետ երջանիկ ապրեցին։

---

www.naregatsi.org

32. ՇԱՆ ՋԻԳՅԱՐ

Մի հարուստ մարդ մի տղա է ունենում, որ շատ փչատատամ է ըլնում, իր հասակակից ընկերների հետ հոր ունեցածը փչացնում է։ Այս հայրը խելոք մարդ է ըլնում, հասկանում է, որ իր մահից հետո որդու վիճակը վատ պիտի ըլնի, ունեցած փողերից օճորքում պահում է և վերեից տախտակում, իսկ տախտակից մի թոկ քաշում, որ մարդ ձգի թե չէ, փողերը կթափի։ Մեռնելիս կանչում է որդուն ու խրատում, որ իր ընկերներից ձեռք վեր առնի, մեղք է, իսկ եթե էնպիսի նեղ օրը ընկնի, որ կուզենա անձնասպան լինել, թող գնա և էս օճորքից կախած թոկից կապվի ու խեղդվի։ Որդին խոստանում է կատարել հոր խրատը։ Հայրը մեռնում է, և թաղում են նրան։ Բայց հոր մահից հետո էլի նա շարունակում է յուր հարաբերությունը յուր վատ ընկերների հետ, մինչև որ վերջին աղքատության մեջ է ընկնում։ Մի օր էլ իր ընկերները մի բաղչում քեֆ անելիս են լինում, նրան չեն կանչում, որովհետև էլ փող չունի, լափ դարտակվել է։ Նա դեսից-դենից մի քանի կոպեկ է գտնում ու մի ջիգյար առնում, գնում է ընկերների հետ քեֆ անելու, ճանապարհին շները նրա վրա են ընկնում։ Նա շների ձեռքից չի կարողանում պրծնել ու իր ձեռքի ջիգյարը գցում է նրանց առաջ, ինքը ազատվում ու գնում ընկերների մոտ։ Պատմում է, թե

33—2573

www.naregatsi.org

ինչ դժբախտություն պատահեց ճանապարհին, բայց նրան ոչ ոք չի հավատում, զարմանալով՝ սկսում են իրար ասել. «Միթե շունը ջիգյար կուտի», և բոլորը այս բանին վկայում են, որ շունը ջիգյար չի ուտի և թե նա սուտ է ասում։ Էսպես նրան չեն ընդունում ոչ իրանց միջից դուս են անում։ Նա այս անգամ այնպես հուսահատվում է, որ վճռում է գնալ ու իր հոր ասած թոկով խեղդվել։ Նա գնում ու հենց ձեռք է տալիս թոկին, վերևից կարկտի պես ոսկիքը թափվում են ներքև։ Էլ ինչ ասել կուզի, որ նրա ուրախությանը չափ չկար։ Նա այս բոլոր ոսկիքը ժողովում է. սրանից դենը էլ նա առաջվա հարուստն է ու հարուստը։ Մի անգամ իր առաջվա ընկերներին իր մոտ ղոնաղ է կանչում, նրանց լավ քեֆ և ցույց տալիս։ Քեֆի ժամանակ նրանք վստահանում են հարցնելու, թե ինչպե՞ս եղավ, որ սա էսպես շուտ հարստացավ։

Նա ասում է.— Մեր տանը շատ արճիճ ունեինք. մկները այդ արճիճը բոլորը կերան և իրանց բնում ոսկի դառավ։

Նրանք այս բանին հավատում են, թե մուկը արճիճ կուտի։

Էն ժամանակ հարուստի տղեն ասում է. «Թե որ մուկը արճիճ կուտի, շունը ինչո՞ւ ջիգյար չի ուտի»։

Հրամայում է իր ծառաներին նրանց ծեծելով դուս անել։

Աշխարքը էսպես է, քանի որ փող ունես, թեկուզ ինչ սուտ ասես, անց կկենա, վայն էկել է մեր աղքատների գլխին։

www.naregatsi.org

33. ՄԱՐԴԻՍ ՓՈՂԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՏՎՈՒՄ

Մի թաքավոր արդեն շատ էր ծերացել. կանչեց իր որդուն ու խրատներ տալով, որ լավ կառավարի իր թաքավորությունը, մեռավ։ Թաքավորի տղեն դեռ ջահել էր. էդ պատճառով էլ հոր մահը շատ ներգործություն ունեցավ նրա սրտի վրա։ Նա ամեն օր գնում էր հոր գերեզմանի վրա լաց լինում։ Սորանից փոքր ինչ հեռու մի քանի լոթի-փոթիք լավ քեֆ էին անում։ Այս նկատելով իրար մեջ խորհուրդ արին, որ վերադառնալիս նրան կանչեն իրանց մոտ, գլխահան անեն ու նրա հոր փողերը վատնեն։ Թաքավորի տղեն լաց ըլնելուց հետո ուզում էր հետ գնա տուն, բայց ճանապարհին այն լոթիքը զոռով տարան իրանց մոտ նստացրին ու խմացրին. սկսեցին նրան խրատել, թե իզուր ինչո՞ւ է իրան վնասում, իր ջահել կյանքը տխրության մեջ անցկացնում. մեռավ՝ մեռավ, ի՛նչ պետք է անել. ամեն մարդ էլ մեռնելու է. իրանք էլ շատ են ցավում, իրանց որդու պես էր սիրում, մսխելու փող էր տալիս, բայց տրրտմելով ի՞նչ կդառնա։ Մի խոսքով էնքան քարոզ կարդացին նրա գլխին, որ նա գլխահան էլավ։ Իր հոր ունեցած չունեցածը բերեց նրանց հետ վատնեց։ Նորա մայրը շատ էր խրատում, համա թե պատին ասած, թե նորան. գլուխը զադ չէր մտնում, մինչև որ, հոտին աղքատության մեջ ընկան. էլ վատնելու ոչինչ չմնաց։

Մի անգամ էս լոթիքը մի տեղ քեֆ էին անում։ Սա այս իմա-

www.naregatsi.org

ցավ ու մորը ասեց, որ մի հավ մորթի, խաշի ու մի գավ գինի էլ հետը առած գնաց նրանց մոտ։ Դարվազի դուռը կողպած էր. նա գինին ու հավը գետնին դրեց ու ինքը նի էլավ, որ դարվազեն բաց անի։ Էս բանից մի շուն օգուտ քաղելով հրռխեց նրա հավը ու տարավ։ Նա շատ «Թուլա՛, թուլա՛» արեց, բայց ո՞ւր, տարավ, անուշ արեց։ Ինչ պտի աներ. գինին առած գնաց ընկերների մոտ. պատմեց այս պտահած դժբախտությունը։

Ընկերները նրան չհավատացին ու դուրս արին ասելով.— Մի գավ գինի ես բերել, ուզում ես մեզ հետ քեֆ անել. մենք ինչքա՞ն փող ենք մսխել, սուտ ասում ես, թե հավը շունը տարել է, էդ հավատալու բա՞ն է։

Նա փոր ու փոշման եդ դառավ տուն ու պատմեց մորը, որ ընկերները չընդունեցին իրան։ Մերը ասեց, թե ինչո՞ւ առաջ իր խոսքին չլսեց ու չհեռացավ նրանցից. քանի փող ուներ՝ կանչում էին, երբ հատավ փողը՝ էլ նրա երեսին մտիկ անող չկար։ Թաքավորի տղեն նոր գլխի ընկավ, բայց ուշ էր. մոր խորհրդով մի հացթուխի մոտ մտավ, նրա թխած հացերը. ծախում էր, գլխիս ....[1]։ Շատ հաջող էր գնում նորա առևտուրը. այնպես որ հաց թխողները սրան չէին կարողանում ծախելու հաց հասցնել. քաղաքի ամեն մարդիկը սրանից էին հաց առնում։ Այնպես որ քիչ-քիչ նա վրա էկավ, քիչ-քիչ փող աշխատեց։ Գողերը էս նկատեցին ու էլի նրա ղոլթուխը մտան, էլի նրան գլխահան արին ասելով, թե նա թաքավորի որդի է, ամոթ չէ՞, որ հաց է ծախում։ Թե նրա մայրը փող պահած կունենա, վերցնի բերի մսխեն։ Նրանց խոսքերը էլի բեյինը մտավ. գնաց մոր յախեն կպավ ու փող ուզեց։ Նա երդումկրակը ընկավ, թե փող չունի պահած. հորից մնացած մի շալվար կա, թե ուզում ա՝ տանի ծախի ու փողը իրեն վերցնի։ Նա վեր առավ էդ շալվարը ու հագավ, մորը ասելով, թե սազո՞ւմ է իրան։ Մայրը զարմացավ նրա ձենը լսելով, բայց նրան տեսնել, շոշափել չկարողացավ։ Երբ նա շալվարը հանեց, նորից տեսավ նորան։ Այն ժամանակ հասկացավ, որ շալվարի մեջ զորություն կա ու զգուշությամբ պահեց շալվարը։

Որդին դարձյալ սկսեց գնալ հացթուխի մոտ հաց վաճառելու։ Բայց լոթիքը էլի սրան գլխահան արին ու էլի սա կպավ մոր յա-

---

1 Ձեռագրում մի բառ անընթեռնելի է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

խեն՝ փող ուղելու։ Նա ասեց, թե հորից մնացել է էլի մի շվի. նա վեր առավ ու դաշտը դուրս գալով սկսեց ածել. իսկույն առջևը երևաց մի հրեղեն ձի՝ յուր ամեն պարագաներով զարդարած ու հարցրեց նրանից, թե ի՞նչ է հրամայում։ Նա ասաց, թե ոչինչ չունի ասելու. շատ վախտ է, հոր ձիուն կարոտել էր, ուզում էր տեսնել։ Ձին էլի աներևութացավ։ Նա այն շվին էլ զգուշությամբ պահեց հոր շալվարի հետ միասին։ Դարձյալ գնում էր հաց թխողի մոտ։ Լոթիքը էլի նրա յախեն կպան, նրան գլխահան արին։ Նա էլի մոր. ջանին գնաց ու փող ուղեց։ Մերը այս անգամ տվեց հորից մնացած մի քսակ, վերցնելով գնաց էլի հաց թխողի մոտ ու ինչքան հաց էր ծախվում, փողերը ածում էր նրա մեջ։ Երբ երեկոյան ուզում էր համբարել ծախած հացերից գոյացած փողը, նա զարմացավ, երբ տեսավ, որ իսկի սև փող չկա, բոլորը սիպտակել են։ Նա գլխի ընկավ, որ սորա մեջ էլ մի բան կա։ Գնաց մի քանի հարիր մանեթի սև փող առավ, լցրեց էս քիսի մեջ ու սիպտակ դարձրեց։ Նա էսպեսով շատ հարստացավ, ինչքան փող էր կորցրել, համարյա երկու էնքան հավաքեց։ Նա էլ հաց թխողի մոտ չէր գնում ու իրա համար լավ ապրում էր։ Գողերը էլի ուզեցին նրան մոտենալ ու մի անգամ պատահելով հարցրին, թե ինչո՞ւ իսկի էլ չի գալի իրենց հետ քեֆ անելու։ Նա ասեց, իրանք ե՞րբ ասեցին ու նա դրժեց. վճռեցին որ մի օր իրա մոտ գան քեֆ անելու։ Նշանակած օրը էդ լոթիքը էկան թաքավորի տղի մոտ. կերան, խմեցին, լավ քեֆ արին։

Նրանցից մեկը խոսակցության ժամանակ ասեց, թե մեր տանը մուկը գութանի ժնջիլը ծամելով կտրել է։

Էսպիսի սուտը լսելով թաքավորի տղեն ասեց.— էն ընչիցն է, որ շունը հավ չի ուտի, մուկը ղնջիլ կկտրի։— Էս ասելով նա հրամայեց իր ծառաներին նրանց լավ ծեծեն ու դուրս անեն։ Էսպեսով նրանց ոտը կտրվեց թաքավորի տղի տանից։ Թաքավորի տղեն մի անգամ իրանց բաղում ման էր գալիս. տեսավ էրկու թզի ծառ՝ մինը սիպտակ, մինը սև։ Սև թզից կերավ թե չէ, իսկույն գլխի վրա կանգնեց ու էլ չկարաց կանգնել ոտի վրա։ Մորը ձեն տվեց, նա եկավ , սիպտակ թզից քաղեց, տվեց նրան կերավ ու իսկույն նըստեց։ Նա ինքն իրան ասեց. «Ինձ էս էլ պետք կգա»։

Թաքավորի տղեն լսեց, որ ֆլան թաքավորի աղջկերքը շատ սիրուն են, համա ոչ ոք չի կարողանում նրանց կնիկ առնի. ով

www.naregatsi.org

գալիս ա նրանց մոտ, մի հարց են տալի. թե կարաց ասի՝ կպսակվեն, թե չէ հո սպանել կտան, նրա գլուխը կկտրեն։ Նա վեր կալավ այս բոլոր բաները ու ճանապարհ ընկավ էդ թաքավորի երկիրը, գնաց նրա մոտ։ Սաղ օրը քեֆ արեց նրանց հետ, ինչքան փող ուներ վերջացրեց։ Թաքավորի աղջկերքը նրան չղմշեցին սպանել ու մի մեզարի մեջ փաթթելով տարան քուչեն գցեցին։ Առավոտը տեսավ, որ քուչում ընկել է։ Իսկույն քաղաքից դուրս գնաց, զուռնեն փչելով՝ իսկույն ձին եկավ ու կանգնեց նրա առաջ։ Նա նստեց և մի օրվա մեջը գնաց իրենց երկիրը ու փող վերցնելով եկավ էլի նրանց մոտ։ Նորից սկսեց քեֆ անել։ Նրանք զարմացան, թե էսպես շուտ ինչպես գնաց իրենց երկիրը ու եկավ։ Այս բանը մի քանի անգամ կրկնվեց։ Աղջկերքը զարմացան, թե էսքան փողը դրան որտեղից է. նա հայտնեց գաղտնիքը։ Թաքավորի աղջկերքը նրա ձեռից խլեցին այն քսակը, երբ սաստիկ հարբեց նա և ձգեցին փողոց։ Այս կերպով խլեցին և շվին, իսկ շալվարը, այսպես պատահեց. մի անգամ նա հագավ շալվարը ու ներս մտավ նրանց տունը ճաշի ժամանակ։ Երբ իրենք հաց էին բերում, նա հափշտակում էր ու ուտում։ Նրանք մնում էին զարմացած. վերջապես նկատեցին և բռնեցին. նա սրա գաղտնիքը ևս խոստովանեց։ Թաքավորի տղեն մնաց դատարկ ամեն բանից ու միտքը դրեց նրանցից ինադը հանել։

Գնաց իրանց տունը, բաղչից սև թուզ քաղեց, շորերը փոխեց ու տարավ նրանց երկիրը ծախելու։ Ջմեռ էր, էս ժամանակ իհարկե զարմանալի էր թուզ գտնելը։ Քաղալակով լիքը թուզը գլխին դրած թաքավորի պալատի մոտով անց կացավ ձեն տալով.

— Ա՜յ լավ թուզը, ա՜յ լավ թուզը։

Թաքավորը լսելով այս, ծառաներին հրամայեց կանչել նրան։ Նա ներս մտավ ու սև թուզը ծախեց էժան գնով նրանց վրա ու վռազ-վռազ դուրս պրծավ փախավ։ Թաքավորը, նրա կնիկը, աղջիկը կերան այդ թզից թե չէ, գլխների վրա կանգնեցին, էլ չկարացին վեր կենալ։ Աշխարհքում ինչքան դոխտուր կար՝ բերին. ոչ ոք չկարաց լավացնել նրանց։ Անց կացավ մի ժամանակ, էս թաքավորի տղեն շորերը փոխեց, մի արկղի մեջ զանազան տեսակ դեղեր դրեց, շշերի մեջ ածած. սիպտակ թզից էլ քաղեց մի քանի հատ ու կտրտելով շշի մեջ ածեց։ Գնաց նրանց երկիրը ու փողոցների միջով անց էր կենում, ձեն տալիս.

www.naregatsi.org

— Ման հեքիմ ա՞մ, ման հեքիմ ա՞մ[1]։

Թաքավորի մարդիքը լսեցին այս ձենը թե չէ, իմաց տվին թաքավորին։ Նա հրամայեց ներս կանչել։ Նա ներս մտավ։

Թաքավորը հարցրեց.— Կարո՞ղ ես ինձ լավացնել։

— Կարող եմ,— պատասխանեց նա։

— Ի՞նչ կանես։

— Ոչինչ,— պատասխանեց նա։

Թաքավորը ասեց.— Եթե չկարողանաս լավացնի, գլուխդ կրտրել կտամ. ինչքան դոխտուրներ են էկել, չեն կարացել լավացնել, նրանց բոլորի գլխները ես կտրել եմ տվել։

Նա խոստացավ, որ մի շաբաթվա մեջ կլավացնի։ Առաջ թաքավորին սկսեց դեղ տալ. նրան հասարակ դեղեր էր տալիս. վերջապես մի քանի օր անցնելուց հետո, սիպտակ թզից տվեց՝ թաքավորը վեր կացավ կանգնեց ոտի վրա ու շնորհակալություն հայտնեց նրան։ Սրանից հետո էլ նրա կնոջը լավացրեց։ Ամենքից վերջը՝ նրա աղջկան։ Սորան առողջացնելիս նա պահանջեց, որ պալատում ոչ ոք չմնա. նրա հիվանդությունը այնպիսի հիվանդություն է, որ եթե նրա մոտ մարդ լինի անկարելի է նրան լավացնել։ Հնարները ինչ, պիտի նրան լսեին։ Պալատում ոչ ոք չկար։ Նա գնաց աղջկա մոտ, ճիպոտով նրան այնքան տվեց[2], որ հալից ընկավ. նա իր բաներն էր պահանջում։ Բայց նա ուրանում էր։ Վերջապես շատ ծեծելուց նա խոստովանեց, ասեց տեղերը այն բոլորի և երբ բոլորը ստացավ, նա հարցրեց.

— Որ լավացնեմ քեզ, ինձ կառնե՞ս, որովհետև այդպես ենք բարշել հորդ հետ։

Նա երդվեց, որ կառնի նրան, եթե լավացնի իրան։ Էդ ժամանակ նա սիպտակ թզից տվեց նրան, նա կերավ ու վեր կացավ, փաթթվեց նրա ճտովը։ Թաքավորն ու նրա կնիկը շատ ուրախացան ու ինչպես խոստացել էին՝ իրենց աղջիկը պսակեցին նրա վրա. օխտն օր, օխտը գիշեր հարսանիք էլավ, կերան, խմեցին, քեֆ արեցին։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր մուրազին հասնեք։ Հետո նա իր մորը գնաց բերեց ու իրար հետ լավ կյանք անց կացրին։ Աստվածանից իրեք խնձոր վեր ընկավ՝ մինն ինձ, մինը՝ Տիգրանին[3], մինը պատմողին։

---

1 Ես բժիշկ եմ (Ս. Բ.)։

2 Փակագծում գրված է՝ ոռոգզի տվեց (Ս. Կ.)։

2 Հավանաբար Տ. Նավասարդյանցին է վերաբերում ակնարկը (Ս. Կ.)։

www.naregatsi.org

34. ՔԱՐՎԱՆՍԱՐԱ

Մի հարուստ մարդ ա ըլնում. սա էնպիսի մեծ քարվանսարա է ունենում, որ տարեկան մեծ դախտ է բերում իրեն։ Մի հինգ տարեկան էլ տղա է ունենում։ Բացի սա մի ուրիշ օտար տղա էլ է ունենում որդեգրած, մոտ տասնյոթ-տասնութ տարեկան է լինում։ Գալիս է ժամանակը սա ծերանում է։

Մեռնելիս իր որդեգրածին կանչում է և ասում, որ իրա որդուն չզրկի, իբրև ախպեր իրար հետ յոլա գնան։ Նա խոստանում է, որ կկատարի այս պատվերը։ Բայց մեռնելուց հետո սկսում է զրկել սրա փոքր տղին, վատ նայել նրա վրա։ Այս բանից հետո քարվանսարայի մեջը, հանկարծ գիշերվա մի վախտ, ամեն օր մեծ ղալմաղալ է ըլնում. էնպես որ նրա միջի բնակվողները կամաց-կամաց քաշվում են ահից՝ նրա քարվանսարան դատարկ է մնում։ Սրա պատճառը ոչ ոք չի իմանում։

Էս քաղաքն է գալիս մի եպիսկոպոս. սրան պատմում են այս քարվանսարայի մասին։ Նա հետաքրքրվում է իմանալու, թե այս ի՞նչ աղաղակ կարող է լինել։ Մի օր նա գնում է քարվանսարում քնում։ Գիշերվա կեսին նա լսում է մեծ աղաղակ ու վերջը հասկանում է, որ էս քարվանսարի տերը գալիս է կռիվ, իր տված փողերն է ուզում. ասում է՝ ինչո՞ւ են նրանք զրկում իր որդունս

www.naregatsi.org

Մյուս օրը այս եպիսկոպոսը պատմում է այն քարվանսարի տիրոջ որդուն, թե գիշերը ինչ տեսավ։ Սա խոստովանում է բոլորը ու այնուհետև վատ չի նայում իր բարերարի տղին։ Սրանից դենը էն ձենն էլ վերջանում է։ Այս քարվանսարում էլի առաջվա նման մարդիկ գալիս են ու բնակվում։

Էսպես ուրիշի փողը ուտելը լավ բան չէ։

www.naregatsi.org

35. ԾՈՒՅԼ ՄԱՐԴԸ

Մարդ ու կնիկ են ըլնում. մարդը չափից դուրս ծույլ է լինում. գալիս է վարուցանքի ժամանակը, ամեն մարդ իր արտն է ցանում, բայց այս մարդը տանը նստած է։ Կինը շատ է զոռում և ստիպում, որ գնա իրենց արտն էլ ցանի։ Մարդը սերմացու ցորենն առնում է ու գնում արտը։ Ակամա կարծես բռնում այս ու այն կողմն է շաղ տալիս՝ ասելով. «Ցանելդ ըլնի, դուրս գալդ չըլնի»։ Մի կերպով պրծնում է ու տուն գալիս դադրած։ Անց է կենում մի քանի ամիս, ցորենը մենձանում՝ հասնում, քաղելու վախտն է. նա մարդին զոռով դաշտն է ղրկում։ Երբ տեսնում է, որ իրա արտը իր բոյով մին բարձրացել է՝ վախենում է, թե էսքանը ինչպես պիտի քաղի։ Հետ է գալիս տուն, սուտ հիվանդանում, վերջապես շունչը կտրում, իբրև թե մեռավ։ Կինը զարմանում է սրա հանկարծական մահի վրա, գնում է հարևաններին հայտնում, որ մարդը մեռավ։ Տերտերին բերում են ու տանում ժամում դնում։ Ծածուկ կինը մնում է եկեղեցու մեջ, որ իմանա դրուստ մեռել է իր մարդը, թե՞ սուտ ձևանում է։

Մթնում է, նա եկեղեցու բեմի վրա է բարձրանում ու բարձր ձեն տալիս. «Ա՛յ նոր մեռելներ, ա՛յ թազա մեռելներ, եկեք, քար, ցեխ կրեք, երկնքում քարվանսարա ենք շինում»։ Այս մի քանի անգամ կրկնում է։ Երբ մարդը լսում է, որ երկնքում էլ պիտի աշ-

www.naregatsi.org

խատի, դադաղից դուրս է փախչում ու տկլոր տուն վազում։ Կինն էլ նրա հետևից կարճ ճանապարհով նրանից շուտ է տուն հասնում։ Տեսնում է եկավ մարդը՝ տկլոր, դեղնած, հարցնում է զարմացած, թե ո՞նց սաղացավ։

Նա պատմում է բոլոր անցածը ու ավելացնում.— Մանգաղս առնեմ գնամ մեր արտը քաղեմ, էլեստ ողորմություն է, քանց քար ու ցեխ կրել երկնքում՝ քարվանսարա շինելու համար։ Էսպեսով նա կամաց-կամաց սկսում է աշխատել։

www.naregatsi.org

36. ԷՍ ԷԼ ՔԵԶ ՀԵՔԻԱԹ

Մի օր մի գերդաստանի մեջ թունդիրը դրել էին հարիսա, որի մեջ հավի միս էլ կար. ճաշի վախտը բերին կերան՝ կշտացան։ Հաց ուտելուց եդո, մի էրեխա հարցրեց իրա պապին, թե չի՞ կարա իրա համար հեքիաթ ասի։ Պապը էրեխին ասեց.

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս ա,
Կապուտ քուռակ տակս ա,
Շուտի շորեր պարկս ա,
Հավի հարիսեն փորս ա.
Սալ վըր սալի ծլվլա,
Հապեն վրեն կըլվլա։

— Հրես որդի, քեզ հեքիաթ,— ասեց պապը,— էլ ի՞նչ ես ուզում։

www.naregatsi.org

37. ԵՐԵՔ ՔՐՈՋ ՀԵՔԻԱԹԸ[1]

...Մեծ քույրերը նախանձով վառվեցին պստիկի դեմ։ Անցան ինն ամիս, ինն օր, ինն ժամ, պստիկ քույրը ծնեց մի արու զավակ։ Երկու քույրը գողացան իրանց քրոջ զավակը ու տեղը մի շան լակոտ դրին, իսկ երեխան մի զամբյուղի մեջ ամրացրած գցեցին ջրի մեջ ու լուր տարան խալիֆային, թե կինդ շան լակոտ է բերել։

Սաստիկ բարկացավ. ուզեց հենց նույն բոպեին գլուխը կտրել տալ, բայց համբերեց։ Այն ջուրը, որի մեջ գցեցին երեխան, անցնում էր թաքավորի պարտեզի միջով։ Զամբյուղը հանեց ջրից թաքավորի պարտեզպանը, որը զավակ չուներ և որ բաց անելուն պես երեխայի գեղեցկության վրա սքանչացավ։ Ուրախ-ուրախ տարավ յուր կնոջը ու ասաց.

— Կինս, ասուած ուրախացրեց մեզ մի զավակ տալով,— ու հանձնեց կնոջը. մի շատ սիրով խնամում էին երեխային։

Միևնույնը արին երկրորդ և երրորդ զավակ ծնանելու ժամանակ։

Խալիֆան սաստիկ բարկացավ յուր կնոջ վրա, հրամայեց ա-

---

1 Սկիզբը չկա. գրառման բնագիրը թերի է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

նարգաբար տանեն դնեն մի ավերակ մզկիթի մեջ, օրական մի կտոր հաց տան, անցնող դառնողը երեսին թքի։

Բարեբախտաբար երեք երեխաներն էլ պատահեց պարտեզպանին, որոնց շատ լավ խնամում էր. աստված օրհնեց պարտեզպանին։

Տղաները մեծացան, ծերութինը վրա հասավ. խնդրեց խալիֆային, արձակի իրան պարտեզպանությունից և քաղաքից դուրս ամայի տեղը հող տա՝ յուր այնքան ժամանակվա ծառայության համար։

Խալիֆան կատարեց յուր պարտեզպանի խնդիրը, որ և քաղաքից դուրս ամայի տեղում շինեց գեղեցիկ, հոյակապ տներ, կանոնավոր պարտեզով ու բարձր պարիսպներով։

Իր երկու տղաները որսորդությամբ էին պարապում, ինքն՝ ծերունի պարտեզպանն պարտեզն էր մշակում, իսկ կինն ու աղջիկը՝ տնային գործով։

Մի գեղեցիկ եղեմական դրախտի էր նմանում պարտեզպանի տունը, յուր պարտեզով։ Քիչ ժամանակից հետո մեռան պարտեզպանն ու յուր կինը. տները մնաց երկու եղբայրներին և քրոջը։ Մի անգամ եղբայրները երբ որսի էին գնացել, ներս մտավ մի պառավ ու ասաց աղջկան, որ պարտեզի մեջտեղում շատրվանի մեջ նըստած էր.

— Տունդ ու պարտեզդ շատ սիրուն է, ամեն տեսակ ծաղիկներով ու ծառերով զարդարված է, բայց մի բան պակաս է այսպիսի տներին ու պարտեզին։

— Ի՞նչ, նանի ջան։

— Խոսող թռչունը, Փայլուն ջուրը և Մուզիկա ածող ծառը։

Աղջիկը տխրեց. Բաղտատ քաղաքի բոլոր պարտեզներից գեղեցիկը և կանոնավորը՝ հոր պարտեզն էր համարվում, բայց էլի պակասում է. ու նա մտքումը դրեց անպատճառ լրացնել այդ պակասությունը։

Պառավը գնաց։ Աղջիկը սաստիկ տխուր նստած մտածում էր շարունակ խոսող թռչունի, Փայլուն ջրի և Մուզիկա ածող ծառի համար։

Երեկոյան դեմ եղբայրները տուն դարձան, երբ տեսան իրանց միակ քրոջը այնքան տխուր, ընկան վզով և խնդրեցին հայտնել

www.naregatsi.org

իրանց յուր վիշտն ու նեղությունը, խոստացան, որ կաշխատեն ամեն կերպ թեթևացնել այդ վիշտը, նեղությունը։

Քույրը ասաց.— Մենք ունենք գեղեցիկ պարտեզ, հոյակապ տներով, բայց ինչ նշանակություն ունի, երբ սրա մեջ չեն գտնվում խոսող թռչունը, Փայլուն ջուրը և Մուղիկա ածող ծառը։

Մեծ եղբայրը գրկի մեջ առավ քրոջը ու ասաց.— Քույրս, մի մտածի, ես կբերեմ,— ու պատրաստություն տեսավ առավոտյան ճանապարհ դուրս գալու։

Առավոտյան երբ հրաժարական ողջույն էր տալիս եղբորն ու քրոջը, ասաց.— Իմ դաշույնը թողնում եմ ձեզ մոտ. երբեմն կհանեք, եթե դաշույնս կարմրած լինի՝ իմացեք, որ սպանված եմ, իսկ եթե սևացած՝ մեծ նեղության մեջ։

Ու ճանապարհ ընկավ։ Գնաց անապատի մեջ պատահեց մի ծերունու, որ նստած՝ թելից կծիկ էր կծկում։

Ծերունին հարցրեց.— Ո՞ւր ես գնում։

Տղան պատասխանեց.— Գնում եմ խոսող թռչունը, Փայլուն ջուրը և Մուղիկա ածող ծառը բերեմ քրոջս համար։

Ծերունին որքան համոզեց տղային, որ չէրթա՝ քար կդառնա. գնացողներից մին էլ կենդանի չի վերադարձել։

Ականջ չարեց, պնդեց, որ անպատճառ պիտի գնամ։

— Եթե այդպես է,— ասաց ծերը,— առ այս կծիկը, գցիր առաջդ՝ ուր կէրթա, հետը կէրթաս, մինչև որ կկանգնի մի սարի ստորոտում։ Այն ժամանակ կիջնես ձիուցդ. մի վախիլ, ոչ ոք չի տանիլ ձիդ, կբարձրանաս սարի գլուխը. ամենևին ուշադրություն չես դարձնիլ այն ձայներին, որ կլսես։

Կծիկը ձիու առաջից թռչկոտելով գնում էր, մինչև հասավ սարին։ Տղան ձիուցը իջավ, հենց նոր ուզում էր բարձրանալ սարի վրա, լսեց աղմուկի ձայն. «Մի՞ բարձրանաչ, եկա՞ն, եփեցի՞ն...»

Տղան հենց ետ նայեց թե չէ, իսկույն քար դարձավ։

Անցան շատ օրեր։ Եղբայր ու քույր տեղեկություն չստացան իրանց եղբորից։ Մեկ օր եղբայրը դաշույնը հանեց պատյանից տեսնելու, թե եղբայրը ինչ դրության է, տեսավ որ դաշույնը բոլորովին սևացել է։ Պատրաստություն տեսավ ու հետևյալ օրը ճանապարհ ընկավ՝ եղբորը օգնության հասնելու։ Նույն նշանն էլ տվեց միջնակ եղբայրը յուր քրոջը։

www.naregatsi.org

Տղան գնաց էլի անապատի մեջ պատահեց այն ծերունուն, որին մեծ եղբայրն էր պատահել։ Միևնույնը ծերունին կրկնեց միջնակ եղբորն էլ, բայց ականջ չարեց։ Ծերունին պատմեց, որ այս օրերս էլ մի տղա գնաց ու չդարձավ։

— Նա իմ եղբայրս է,— ասաց տղան,— պետք է գնամ օգնությյան հասնելու նրան։

Միևնույնը պատվիրեց ծերը և միջնակ եղբորը, կծիկը տվեց նրան։

Կծիկը գնում էր, տղան էլ հետևում էր նրան։ Հասան սարին, տղան իջավ ձիուց, հենց ուզում էր բարձրանալ՝ զարհուրելի ձայներ կանգնացրին միջնակ եղբորն էլ, որն կագնելուն պես քար դարձավ։

Օրերի մեկում քույրը պատյանից հանեց միջնակ եղբոր դաշույնը և տեսավ, որ սևացել է։ Սկսեց վայ տալ գլխին ու ասել. «Իմ պատճառով երկու եղբայրս վտանգի մատնվեցին»։

Շորերը փոխեց. տղամարդի շորեր հագավ, դռները փակեց ու ճանապարհ ընկավ։

Սա էլ գնաց պատահեց նույն ծերունուն, որին յուր եղբայրները պատահել էին։

Ծերունին հարցրեց.— Ո՞ւր ես գնում, ա՜յ որդի։

— Գնում եմ խոսող թռչունը, Փայլուն ջուրը և Մուզիկա ածող ծառը բերելու։

Ծերունին համոզեց՝ չգնալու, բայց հնար չեղավ։ Սրան էլ տվեց կծիկը ու ասաց.

— Այս կծիկը քեզ կառաջնորդի, միայն, զգուշացիր, որքան ձայն կլսես, ուշադրություն չդարձնես, ապա թե ոչ մյուսների նման դու էլ քար կդառնաս։

Աղջիկը, որ տղամարդի շորեր էր հագել, կծիկի առաջնորդությամբ գնաց հասավ այն սարին, որի գլխին է խոսող թռչունը, Փայլուն ջուրը և Մուզիկա ածող ծառը։

Երբ մոտեցավ ստորոտին, իջավ ձիուց, ձին կապեց մի ծառից, ականջները բամբակ դրեց, գլուխը շորերով փաթաթեց, այնպես որ ամենևին չէր կարող ձայն լսել ու բարձրացավ սարի վրա։

Որքան ուժեղ հնչում էին ձայները, նա ամենևին ուշադրություն չէր դարձնում, որովհետև ոչինչ չէր լսում, մինչև հասավ սարի գագաթին ու կանգնեց խոսող թռչունի առաջ։

www.naregatsi.org

Թռչունը տեսնելով ահա մահից ազատված արարածներից մի-նը կանգնել է յուր առաջ, գլուխ խոնարհեց ու ասաց.

— Դու կլինես իմ տերս, միայն նախքան ինձ վերցնելդ գնա վերցրու Փայլուն ջրից և Մուզիկա աճող ծառից մի թերթ, որ քո պարտեզում կարող է մի ծառ դառնալ ու գնանք և մինչև սարի ստորոտը ճանապարհի վրա երկու կողմը գտնված քարերին ջուրից քիչ ցանիր և ծառի թերթերից քսիր, որ լավանան, որովհետև այդ բոլոր քարերը մարդիկ են։

Արևց ինչպես թռչունը թելադրեց ու սարի գագաթից քիչ հեռու սկսեց ճանապարհի երկու կողմը գտնված քարերի վրա ջուր սրսկել և թերթը քսել։ Ամենքը կենդանացան։ Ամենավերջինը եղբայրներն էին, որոնց աչքով նշանացի արեց, որ ոչինչ չխոսեն։ Հեռացան սարից ու եկան դեպի ծերունին և գտան նրան մեռած. թալիսմանը ծերն էր, որ թռչունը մարդի ձևոք անցնելուց հետո նա այլևս չէր կարող կենդանի մնալ։ Ներին թաղեցին ու յուրաքանչյուրը գնաց դեպի յուր աշխարհը՝ կանխապես շնորհակալություն հայտնելով յուրյանց ազատարարին։

Թռչունը կախեցին գեղեցիկ ոսկե վանդակով դահլիճի պատուհանում, որ ջուր տան։ Դիմացը գտնված շատրվանի լճակի մեջ ածեցին, թերթը նույն լճակի մոտ հողի մեջ դրին, որ արագ աճելով երկու տարվա վրա ծառ դարձավ։ Եղբայրները էլի պարապում էին որսորդությամբ, իսկ իրանց քույրը տանը զվարճանում էր ու իրան աշխարհի մեջ ամենաերջանիկն էր համարում։

Մի անգամ թաքավորը, երբ անցավ այդ կողմից, տեսավ գեղեցիկ ու հոյակապ տները, դրախտի նման պարտեզով, զարմացավ, կանչեց երկու տղաներին. ուրախ եղավ, որ յուր պարտեզպանի որդիքը այդպես հարուստ ու ապահով կյանք ունեն։

Երբ որ տուն դարձան պատմեցին իրանց քրոջը թաքավորի հետ ունեցած տեսության մասին։

Թռչունը այն կողմից ասում է.— Մի օր հրավիրեցեք տուն, շատ բան հայտնի կլինի։

Քույրը ստիպում է եղբայրներին, եղբայրները թեև ցանկանում էին հրավիրել, բայց վախենում էին՝ չգա։ Վերջապես հրավիրեցին։ Թաքավորը սիրով ընդունեց նրանց առաջարկությունը ու որոշյալ օրը գնաց յուր վեզիրներով պարտիզպանի որդվոցը հյուր։ Երբ մտավ պարտեզի մեջ, տեսավ շատրվանի մոտ եղած լճակի ջուրը,

34—2573

www.naregatsi.org

հիացավ նրա փայլելու վրա և մինչդեռ նա ջրովն էր զբաղված Մուզիկա ածող ծառը հնչեց ամբողջությամբ՝ երաժշտական կազմվածքով։ Հիացած մտավ դահլիճը, ուր էր խոսող թռչունը։ Դահլիճը զարդարված էր արևելյան ճաշակով. հենց մտնելուն պես թռչունը մարդու լեզվով ողջունեց, թաքավորը զարմացավ, ողջույնի ձայն եկած տեղը մարդ չկար, բացի թռչունը իր վանդակով։ Ողջույնը կրկնեց երեք անգամ, երբ երկու եղբայրները և քույրը ներս մտան, թաքավորին տեսան այդպես շփոթված դրությամբ, հայտնեցին, որ ողջունողը թռչուն է։ Մոտեցավ թաքավորը, զարմացավ թռչունի վրա։

Այդ ժամանակ ասաց թաքավորին.— Ինչո՞ւ եք զարմանում, մեծ թաքավոր, որ ես խոսում եմ, ինչու չզարմացաք, երբ տեսաք կինը շան լակոտ է բերել։

Թաքավորը ապշեց։

Թռչունը պատմեց երկու քույրերի արած չարագործությունները և հայտնեց որ այս ձեզ շրջապատող երկու տղաները և աղջիկը ձեր հարազատ զավակներն են, իսկ այն դժբախտ մայրը նախատինք է կրում իզուր և անիրավ տեղը մարդկանցից՝ ձեր կարգադրությամբ։

Թաքավորը յուր գրկի մեջն առավ երեք զավակներին, համբուրեց նրանց ու սկսեց լալ և դեռ չսկսած ճաշը, ինքը գնաց յուր կնոջը հանեց անպատիվ դրությունից, փառքով ու պատվով բերեց յուր որդիների մոտ ու մի քանի օրից հետո տարավ յուր պալատը, իսկ երկու քույրերին իրանց արժանի պատիժը տվեց։

www.naregatsi.org



38. ՈՆՆԵՐԸ ԿՏՐԱԾ ԿՆԻԳԸ

Ընում են, չեն ընում քիր ու ախպեր են ընում։ Սրանք իրար ընենց սիրելիս են ընում, որ մի օր իրար չտեսնային, էն օրը իրանց համար սև էր։ Համա ախպոր կնգանը էս բանը դիր չի գալի. միտք ա անում, որ մի մհանա քթնի, բալի կարենա քիր ու ախպեր իրարից բաժանի։

Մարդ ու կնիգ մի սիրուն, նախշուն էրեխա ունեին. կնիգը մի բշեր իրա էրեխուն մորթում ա ու արնոտ դանակը տանում դնում տալի ջերը։

Առավոտը որ լիսանում ա, մարդը վեր ա կենում, տեսնում իրանց էրեխեն մորթած. մնում ա զարմացած, թե էս ով պտի մորթած։ Շատ դես-դեն հարց ու փորձ ա անում, չի իմանում, վերջը կնիգը նրան թաքուն ասում ա.

— Բալի քիրդ ա արե. մի նրա ջերն էլ տես, թե նա սպանած ընի, հո նրա դանակը արնոտ կընի, մալում կանի, թե չէ՝ հո չէ։

Էս հավատալու բա՞ն ա. ախպերը քվորը, որ էնքամ սիրում էր, ըսկի էսթավուր մտքով էլ ա կանցկացնե՞ր, թե նա իրա էրեխին կսպանի։ Համա կնիգը, որ շատ զոռեց, նրա բեին էլ ընգավ, գնաց քվոր ջերերը ման էկավ, տեհավ, ըհը՛, ջերումը մի արնոտ դանակ, ասեց. «Բալի, որ սա սպանած կընի»։

Էլ առանց հարցնելու, նոքարտանցը հրամայում ա, որ քվոր

www.naregatsi.org

ոնները կիսից հետը կտրեն ու տանեն քցեն մի մեշա, ընտե ջանավարների փայ ըլնի։ Նոքարտինքն էլ ինչ կարան անի, աղի հրաման էր, կարայի՞ն նրա հրամանից դուս գա՝ քվոր ոնները կտրում են, տանում քցում մեշեն։

Մի օր, մի քանի նազրներ էս մեշի միջովը անց ին կենում. մի կնգա ձեն անգաջներն ընգավ, ասեցին.

— Էթանք տեենանք ի՞նչ ձեն ա։

Գնացին ի՞նչ տեեան՝ մի հուրի-փարի աղջիկ ոնները կտրած ընտե վեր ընգած ա. հարցրին, թե ով ա նրան ըստե քցե, նա բիրադի նոր նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի։ Էս նազրներից մինը ուզում ա էս կնգանը վրա պսակվի, մեկել վեզրները չեն թողնում. սա նրանց անգաջ չի դնում, էս կնգանը վեր ա ունում հետները տանում իրանց երգիրը, ըստե նրա վրա հարսանիք ըլնում, շինում իրա կնիգը։

Մի հետ, էս վեզիրը վեկացավ գնաց ուրիշ երգիր։ Մի քանի վախտ անց ա կենում, էն շոլախ կնիգը մի տղա, մի աղջիկ ա բերում՝ տղի քաքուլը ոսկի, աղջկա՝ ճկիթը։ Վեզրի նոքարտինքը մի մարդի ձեռով գիր են ղրգում իրանց աղի կուշտը, իմաց տալի, որ նրա կնիգը ըսենց էրեխեք ա բերե. կնքե՞ն, թե կենան ընչանք ինքը գա։

Էս գիր տանող մարդը գալիս ա, դալիս, էն շոլախ կնգա ախպոր տանը քշերը վե գալի, որ առավոտը վե կենա իրա ճամփեն էթա։ Էս շոլախ կնգա ախպերակինը գիր տանողից, որ իմանում ա թե բանը ընչումն ա, միտք ա անում բալի մի ֆանտով կարենա էս գիրը ձեռ քցի՝ տեենա մնչը ի՞նչ ա գրած։ Գիր բերողը որ քնում ա, էթում ա ուսուլով գիրը ջեբից հանում, կարդում, տեենում ա գրած ա թե. «Բեզրգյանն աբրած կենա, կնիգդ մի տղա, մի աղջիկ ա բերե, աչքդ լիս. մնի քաքուլն ա ոսկի, մեկելինը՝ ճկուտը, ի՞նչ անենք, կնքե՞նք թե կենանք ընչանք գաս»։

Էս սհաթը էս գիրը ճղում ա, թազա գիր գրում, թե՝ «Կնիգդ էրկու շան թուլա ա բերե, ինչ անենք, դե՞ն քցենք, թե պահենք, գաս»։

Էլեսա դնում նրա ջեբը [1]։

---

1 Ձեռագիրն այստեղ ընդհատվում է։

www.naregatsi.org

39. ՇԱՀ-ԱՊԱՍԻ ՆԱՂԼԻՑ

Ավել ժամանակում Շահ-Ապասն տավրիշի շորով ման էր գալիս այս գեղն, մյուս գեղն, այն քաղաք, մյուս քաղաք։ Մի խոսքով ամբողջ տեղերը։

Օրերի մի օրումն էլ Շահ-Ապասն եկավ մի գեղ և գեղում կամենում էր գիշերն մնալ։ Գնաց մի դուռնը ծեծեց, տան տերը դուրս եկավ ասեց.

— Ի՞նչ կա տավրիշ ախպեր, ի՞նչ ես ուզում։

Շահ-Ապասն ասեց, թե.— Ես դարիպ եմ, թե կարելի է տեղ տաք, այս գիշեր ստեղ քնեմ։

Տանտերն ասեց.— Ինչու չի կարելի, համեցեք նեստ։

Տանտերն զոնաղին տարավ նեստ, հրամայեց կնկան, որ զոնաղի համար պատրաստություն քաշե։ Կնիկն էլ, ոտ-ձեռք ընկած կերակուր էր պատրաստում։ Տան կիսովն էլ փարդա կար քաշած. Շահ-Ապասն տեսավ, որ փարտի հետևումը մեկը տրուն է գալիս, ասեց տանտերոջ, թե.— Եղբա՛յր, այն փարտի ետևը ինչ կա, որ տրուն է գալիս։

Տան տերն էլ չէր ճանաչում, որ սա Շահ-Ապասն ա, էնպես էր կարծում, թե տավրիշ է, ասեց.

www.naregatsi.org

— Տավրիշ ախպեր, ասանից թաքուն չի, քեզանից ինչ թաքուն հլի՝ իմ ախչիկս է։

Տավրիշն հրամայեց, որ ես հոժար չեմ, թոխ նա էլ գա այս ճրաքի առաչն։

Տանտերը կանչում ա ախչկան, թե.— Ախչի՛, արի տու էլ այստեղ, մի՛ համանչիլ։

Ախչիկն գալիս ա թե չէ՝ Շահ-Ապասի աչքն փռնում ա, ասում ա իրան մտքում, թե ես պիտի դրան ուզեմ և հանում է ջպից ախչկան երկու ոսկի է տալիս։

Տանտերը, որ ոսկին տեսնում է՝ աչքը պաց է մնում, ասում ա. «Երևի հարուստ տավրիշ է»։

Նստում են, սկսում խոսիլը, շատ ու քիչն աստված գիտա, վերչն գալիս է խոսքներ ախչկան վերա, Շահ-Ապասն ասում է, թե.— Եթե տաք ինձ՝ ախչիկն ես գուզեմ։

Տանտերը, որ տավրիշի ոսկին տեսալ ա՝ էլ սրանից լավ փեսա չի իլիլ, ինք ասում ա իրան. «Տամ, ախչիկս էլ մեծացել ա, վախտըն ա»։

Հոժարվում է, տավրիշի հետ ձեռք-ձեռքի են փռնում. տամ են, առնում են։ Տավրիշն էլի ձեռքն գցում է ջեպից երեք ոսկի հանում, տամ ախչկան նշան։

Մյուս օրն թատարիք են քաշում, ախչիկան պսակում տավրիշի վրա։

Արանքից անց է կենում մին ամիս, երկու ամիս, երեք ամիս, վերչն այս կնիկն իլում է ծանտրած։ Շահ-Ապասն հանում է իրան խուրճինից մին պոզպանտ տալիս է կնկան, թե.— Ա՛յ կնիկ, առ էս պոզպանտը, թե երախա պիրես՝ կկապես երախի կռնին, ես գնալու եմ ղարիպութուն, բալքա մեռա։

Կնիկն շատ ա չալիշ գալիս, որ մարդին չի թողնի ղարիպութուն գնա, բայց որտե՞ղ՝ Շահ-Ապասին պահել չի լիլ, պիտի գնա։ Հանում է խուրճինից մին հափուռ ոսկի տալիս կնկան, ճանապար ա ընկնում, գալիս ա իրան երկիրը։

Շատ է անցկանում, թե քիչ, այս տավրիշի կնիկն մին տղա է բերում, անումն դնում են Մամատ։ Էս Մամատն գալիս ա մեծանում, սրան մերը տալիս ա կարթիլ, սկսում ա կարթիլը, շատ հավասով, էնպես որ իրանից երեք տարի առաջ կարթողից այս Մա-

www.naregatsi.org

մատը լավ է կարթում։ Աշակերտների աչքն գալուց սրան սկսում են պիշ կանչել. էլ Մամատ չեն կանչում։

Մեկ օր, երկու օր, հինգ օր, վերջն այս Մամատն գալիս ա իրան մոր գլխին, թե.— Ասա տեսնեմ իմ հերս ով է և որտեղ է գնացել։

Մերն էլ պատմում ա, թե քու հերդ տավրիշ էր, ես, որ քեզանով ծանրած ի, նա գնաց ուրիշ քաղաք տավրիշթունք։

Էս որ տղան չի լսում, ասում է, թե.— Ես էլ պիտի գնամ քաղաք-քաղաք շուռ գամ, իմ հորը ճարեմ։

Մերն ասում է, թե.— Ա՛յ որթի, ով գիտե նա մեռավ, թե կորավ, թե փախավ, արի տու մի գնալ։

Տղան ասում ա, թե.— Չէ՛, պիտի գնամ։

Մերն տեսնում է, թե ճար չի կա՝ տղան պիտի գնա, պերում ա, մարդի տված պողպանտը կապում այս տղի կռնին, թե՝ սա քու հոր նշանած ա, այստեղ մեր ու տղա մնաս պարով են անում։

Տղան ճանապար ա ընկնում, շատն ու քիչը աստված կիտի, գնում ա, գնում, վերջն մին քաղաքի հասնում. փողն վերջանում ա, ման է գալիս իրան համար զուլուղի տեղ՝ էս մակազին, էն մակազին, վերջն մեկ վաճառականի տուր է գալիս այս տղան։

Ասում է ինքն իրան, թե.—Տղա չունեմ, ախչիկ չունեմ, այսքան տովլաթս ով պիտի ուտի, այս տղին ինձ համար տղացու վեր ունեմ,— ասում ա ու աստուծո անումն տամ՝ տղեն իրան համար տղացու վեր ունում։ Սովտակարն տղին իրուկուն տանում է տուն կնկան ասում ա. «Կնիկ էս տղին ես մեզ համար տղացու եմ վեր առել, ի՞նչ ես ասում»։

Կնիկն էլ ուրախանում է՝ Մամատի համար թազա շորեր են կարել տալիս ու տամ են սրան կարթիլ. մին քանի տարի էլ կարթում է, ուսումն վերջացնում, սովտակարն բերում է սրան իրան մակազին, շինում ամենի գլխավորն իրան պրիկազչիկների վերա։ Մին տարի, երկու տարի, վերջն տեսնում է, որ այս Մամատն էնպես աշխատող, էնպես խոնար, էնպես հալալ, որ ամեն սովտակարների աչքն սրան վերան ա։ Սովտակարն իրան տղացուին հանձնում է ամեն աշառները, տունները ու մակազինները։

Մին առ ժամանակ անցկացավ, տղան ասեց.—Էս տունի շկաֆները մին բացեմ տեսնեմ ի՞նչ կա.— մեկն բացեց, երկունը բացեց,

www.naregatsi.org

երեքն բացեց՝ վերջն մինն էլ որ չի բացեց տեսավ, որ մի՞ն պատկեր, մի՞ն պատկեր, որ մի՛ ուտիլ, մի՛ խմիլ՝ սրան թամաշա արա։

Տղան, որ այս պատկերը չի տեսավ ուշն կնաց, ընկավ այլմիշ իլավ, վերկացավ պատկերն վեր առավ ու կնաց տեպի սովտակարն. սովտակարն ասեց. «Այս պատկերը ինչի ես վեր առել. սրա իրավունքդ չի, որ փուչացունես»։

Մամատն ասեց, թե ես պիտ գնամ այս ախչկան ուզեմ։

Սովտակարն ասում է, թե սա ախչիկ չի՝ կնիկ ա, ինքն էլ ուրիշ թաքավորութունի հողումն և այս կնկան մարդն էլ այն երկիրի թաքավորի զարկարն ա. ղուշն էլ այս կնկան իրեսն տեսնել չի կարում, հիմի դու պիտ դորան բերես։

Տղան ասում ա, թե.— Յա՛ պիտի ես մեռնեմ, յա՛ պիտի այս կնկան բերեմ։

Սովդակարն տեսնում ա, թե տղացուն պիտի անպատճառ դնա, բերում ա սրան մին խուրճին ոսկի տալիս, ճանապար քցում։

Տղան ասում ա, թե.— Այսքան ոսկին ի՞նչիս է պետք։

Սովտակարը ասում է թե.— Ես տասը այսքան էլ եմ տարել, էլի տեսնել չեմ կարողացել։

Մնաս պարով են անում սովտակարն ու Մամատը։ Մամատն ճանապար է ընկնում։ Շատ է գնում, թե քիչ՝ վերջն ասուված է իմանում, գնում է հասնում այն զարկարի իլած երգիրը։ Սորաղ է անում զարկարի իմարաթն ճարում է և նրանից մին մոտ տեղ, մին պառավի տանը ղոնաղ է վեր գալիս։ Հանում է մին հափուռ ոսկի է տալիս պառավին, թե կերակուր, բան պատրաստի։ Պառավն, որ ոսկին չի տեսնում աչքերը շապրանի պիշիկի պես բացվում ա, լավից, վատից պատրաստում ա, իրուկվան սկսում են հաց ուտիլն, տղան սկսում է պառավից հարցունել զարկարի կընկան մասին, զարկարի մասին. տղան ասում է, թե.— Ես եկել եմ զարկարի կնկան տանել։

Պառավն ասում է, թե.— Զարկարի կնկան ղուշը ղուշութունով չի կարում տեսնել, ինչքան թաքավորութուններ է փուչացել, հիմի տու պիտի նրան տանե՞ս։

Տղան ասում է, թե.— Եթե դու մերութուն անես՝ կտանեմ, թե չէ ու չեմ տանիլ։

Պառավն ասում է, թե.— Իմ ձեռքիս ի՞նչ կա, որթի։

Տղան ասում է, թե.— Նանի՛, քու ձեռքին ոչինչ չկա, միայն

www.naregatsi.org

ինչ որ տեսանես՝ պիտի սուս անես, մինչև վերջի օրն, ես էլ քեզ բավականի ոսկի կտամ. կարող ես գնալ ուրիշ քաղաքում քեզ համար ապրել։

Պառավն ասում է.— Շատ լա՛վ, որթի, եթե տեսածս ասեմ՝ ինձ սպանի։

Տղան կանչել է տալիս լավ մաղարաչիք. պառավի տունից սկսում են մաղարա տալ դեպի զարկարի հայաթ, քիչ մնացած թողում են, գալիս են։ Տղան սրանց մեկին երեք է տալիս, թե ոչում ոչինչ չի ասեն, դորանք էլ շունարակալութուն են անում, գնում իրանց բանին[1]։

---

1 Գրաման ձեռագիրն այստեղ ընդհատվում է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

40. ԱՆԶԳԱՄ ՀԱՐՍԸ

Կըլնի չիլնի մի բեզրգյան. էդ բեզրգյանը պսակված կըլնի, մին էլ մի խեղճ պառավ մեր կունենա։

Ամեն տարի էդ բեզրգյանը էթում էր ուրիշ երկիր ապրանքի։

Օրենը մի օր էլի թադարեք կտենա, որ էթա ապրանքի, կկանչի կնկանը ղրաղ, կասի.

— Տե՛ս, այ կնիկ, մերս պառավել ա, մեղք ա, լավ կպահես ընչանք իմ գալը։

Կնիկը կասի.— Քա՛, բա ի՞նչ կանեմ՝ լավ չեմ պահի, բա՛ չանս էլ չի դուա գա, ինչի իմ մերը ո՛րն ա, քունը ո՛րն ա, ա՛յ մարդ. դու էդ ի՞նչ ես թամբահ անում, էն խեղճ պառավը ինձ ի՞նչ ա անում, որ ես նրան լավ չպահեմ։

Ըդենց մարդին կարխայինացնի, ճամփու կդնի։

Անց կկենա մի օր, էրկու օր, մախլասի՝ մի շաբաթ։ Մի օր հարսը մի խախալ ձու կբերի, կեսոր թեւից կբռնի կտանի իրանց գոմը, փեյինը կիտած կլնի ղրաղ տեղ, էդ ձվանները քոմմա պոլոլիկ կշարի, կեսորը կտանի վրեն ուսուլով կնստացնի կասի.

— Ֆողեմ գլո՛ւխդ, զուր մուֆթա հաց ուտող ես, սաղ օրը պարապ-սարապ հենց ուտելու ես ղոչաղ, ըսկի անելուն աչք չես դնում. էս փեյնի վրա էլա նստի ձվերի վրա, հազիր ճուտեր կհանես՝ քու կերած հացի գինն էլա դուս կգա։

www.naregatsi.org

Եկեղեցի պառավն ա՝ դառը-տխուր աղի արտասունք թափելով կնիկների փեչնի գլուխը, ուսուլով կնատի ձվերի վրա։

Հարսն էլ ասում իրան օրը մի ճոթ շոր հաց, մի կոտրած բոնձով շուր կբերի, կտա պառավ կեսորը։

Ըսենց անց կկենա մի օր, էրկու օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մախլասի՝ իրենք շաբաթ. մի օր պառավը կտենա, ըհը՝, հրես ճոտերը քոմմա տակին խլվլում են[1]։

---

1 Ձեռագիրն այստեղ ընդհատվում է (Ս. Կ.)։

www.naregatsi.org

www.naregatsi.org

Նուիրատուներ

www.naregatsi.org

www.naregatsi.org

ԱՅՐԱՐԱՏ

Այս հատորում տեղ են գտել պատմական Այրարատ նահանգի Վաղարշապատի, նրա շրջակա գյուղերի և Սուրմալու գավառի հեքիաթները։

Որպես սկզբնաղբյուրներ օգտագործված են Սարգիս Հայկունու հավաքած և հրատարակած հեքիաթները և Տիգրան Նավասարդյանցի անտիպ նյութերը։ Մի քանի խոսք այդ սկզբնաղբյուրների մասին։

1. Տպագիր նյութեր։ Տպագիր նյութերի մեջ են մտնում Ս. Հայկունու հավաքած և «Էմինյան ազգագրական ժողովածուի» II և III հատորներում տպագրված Վաղարշապատի (Էջմիածնի), Սուրմալուի, Շահրիարի և Գրամփա գյուղի հեքիաթները։

«Էմինյան ազգագրական ժողովածուի» II հատորը, որը լույս է տեսել 1901 թ. (Մոսկվա-Վաղարշապատ), բացի Սուրմալուի և Գրամփա գյուղի հեքիաթներից, պարունակում է Ս. Հայկունու ժողոված Արևմտյան Հայաստանի այլ գավառների բազմաթիվ հեքիաթներ, ինչպես և ժողովրդական վեպեր։ Հատորն ունի առաջաբան, ստորագրված «Էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագիր պրոֆ. Գր. Խալաթյանցի կողմից։ Բերում ենք այդ առաջաբանն ամբողջությամբ։

«Խմբագրության կողմից։ Մանոթ բանահավաք և բանասեր Ս. Հայկունին, որ ունի ժողոված Տաճկահայաստանի գավառներում բազմաթիվ ազգագրական նյութեր, դեռ անցյալ տարի ներկայացրել էր «Էմինյան ազգագրական ժողովածուի» խմբագրության յուր հավաքածուները։

Խմբագրությունը աչքի անցկացնելով այդ նյութերը՝ վճռեց մաս-մաս նրանք հրատարակել, դասավորելով նրանց որոշ կարգով և դյուրության համար հանձնելով բուն տպագրության գործը իրեն՝ պ. Հայկունուն, համաձայն բարձրագույն հաստատված Էմինյան դրամագլխի կանոնադրության 7-րդ հոդվածի։

Ներկա գիրքը, որ «Էմինյան ազգագրական ժողովածուի» երկրորդ հատորն է կազմում, իսկ իրեն՝ պ. Հայկունու հավաքածուներից՝ առաջին մասն, պարու-

www.naregatsi.org

նակում է յուր մեջ ժողովրդական բանավոր գրականության տեսակների երկու բաժինը, այն է՝ ժողովրդական վեպը և հեքիաթը։

Հեքիաթների բաժինը շատ ճոխ լինելով՝ մի գիրք ևս կհատկացվի նրանց, իսկ երրորդ գիրքը կնվիրվի հայ ժողովրդի բերանում շրջող քրդական վեպին, որ առանձին կարևորություն ունի, ինչպես կտեսնենք իր տեղում։

Պ. Հայկունու մնացյալ նյութերը կկազմեն հաջորդ մասերը։

Լույս ընծայած վեց վեպերից մանավանդ արժանի է ուշադրության «Դավիթ և Մհերի» Մոկաց ճյուղը կամ վարիանտը (19—50), որ ամփոփում է մի քանի նոր մանրամասնություններ և մինչև այժմ լույս տեսածների[1] հետ կազմում է մի գեղեցիկ ամբողջություն։ «Ապուղեթ» և «Շիրին շահ և Բահր» չնայած իրենց քրդական կյանքի մի քանի պարագաներին՝ հայկական ավանդության բավական կետեր են շոշափում, ուստի տեղավորեցինք նրանց հայ ժողովրդական վեպերի բաժնում, թեև կան հիշյալ վեպերի այլ ճյուղեր՝ բուն քրդական բնավորությամբ, որ դրի է առել պ. Հայկունին և որ կտպագրվեն քրդական վեպերի մեջ։

Հեքիաթները բոլորն էլ վերին աստիճանի հետաքրքրական են ըստ բովանդակության՝ շոշափելով բազմաթիվ նույն և նման եղանակներ ընդհանուր հերիաթային գրականությունից, և արժանի առանձին ուշադրության լեզվի տեսակետից (թեև դրի են առնված նրանք ոչ հատկապես լեզվաբանական նպատակով), ներկայացնելով 15-ից ավելի հայ բարբառների օրինակներ։

Թե հեքիաթների և թե վեպերի մեջ պատահած օտար բառերը (տաճկերեն կամ պարսկերեն)՝ հայերենից որոշելու համար, շարված են բնագրում նոտր տառերով, իսկ պ. Հայկունու հավաքածուների մեջ գործածած բոլոր գավառական բառերի բացատրության համար՝ կկցվի վերջին մի ընդարձակ բառարան։

Գ. Խ.

1 դեկտեմբերի, 1901 թ.
Լաղարյան ճեմարան արևելյան լեզվաց.
Մոսկվա»

«Էմինյան ազգագրական ժողովածուի» IV հատորը, որը լույս է տեսել 1902 թ. (Մոսկվա—Վաղարշապատ), բացի Վաղարշապատի (Էջմիածին) և Շահբիարի հեքիաթներից, պարունակում է նաև Արևմտյան Հայաստանի այլ գավառների բազմաթիվ հեքիաթներ և «Մասնա ծուռ» վեպի մի տարբերակ։ Այս հատորը

---

1 Արժանահիշատակ Սրվանձտյանցը առաջինն էր, որ ծանոթացրեց հայ ընթերցող հասարակությանը այդ պատմական վեպի հետ յուր «Դրոց ու բրոց» գրքվածքում (Կ. Պոլիս, 1874 թ.). Ճյուղերը հրատարակել են՝ Մ. Աբեղյան, Շուշի, 1889, Գարեգին սարկավագ, Թիֆլիս, 1892, և Բ. Խալաթյան, Վաղարշապատ, 1899։ Վեպի ռուսերեն թարգմանությունը, ըստ հրատարակության Սրվանձտյանցի, լույս ընծայեց Գ. Խալաթյանցը, «Լուսավորության նախարարության օրագրում» 1881 թ. (հոկտեմբեր), որ և հետո արտատպվեց հանգուցյալ Գր. Ջանշյանի «Ընդարձակ օգնության» երկու հրատարակությունների մեջ։ Գերմաներեն թարգմանությունը լույս տեսավ «Armeniche Bibliothek»-ի Դ հատորում, Լայպցիգ, 1887 թ.։

www.naregatsi.org

ևս ունի փոքրիկ առաջաբան, ստորագրված պրոֆ. Գր. Խալաթյանցի կողմից։ Բերում ենք այդ առաջաբանը ամբողջությամբ։

«Խմբագրության կողմից.— Ինչպես խոստացել էինք «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորի հառաջաբանում, ներկա Դ հատորում ավարտում ենք մեր անխոնջ ազգագրագետ Ս. Հայկունու ժողոված հայ ժողովրդական հեքիաթների բաժինը, որոնց մեծագույն մասը դարձյալ Տաճկահայաստանի այլ և այլ գավառական բարբառներով են գրի առնված՝ նախընթացներից ոչ պակաս գրավիչ բովանդակությամբ։

Հեքիաթների վերջում դրած է մի հավելված՝ իբրև լրացուցիչ մասն հայ ժողովրդական վեպերի և հատկապես ծանոթ «Դավիթ և Մհեր» վեպի Շատախու և Արարատյան ճյուղերը (վարիանտ) ուշագրավ նոր մանրամասնություններով։ Այսպես ուրեմն Բ հատորում հրատարակված Մոկաց ճյուղի հետ՝ նույն վեպի երեք նոր ճյուղեր կունենանք «Էմինյան ազգագրական ժողովածուի մեջ»։

Պ. Ս. Հայկունու ազգագրական նյութերի երրորդ գիրքը՝ ինչպես ասել ենք, կնվիրվի հայ ժողովրդի բերանում շրջող քրդական վեպին, որի մեջ բավական մեծ տեղ ունին գրված և իրանական կամ պարսկական վիպասանության գլխավոր դյուցազները։ Մի քանի վեպերին կկցվեն քրդերեն երգեր, նաև՝ եթե հաջողվի, ձայնագրած եղանակներ։

Գ. Խ.

1 սեպտեմբերի, 1902 թ.
Լազարյան ճեմարան Արևելյան լեզվաց.
Մոսկվա»

Ս. Հայկունու կատարած աշխատանքը բարձր գնահատության է արժանացել իր ժամանակին հայ մտավորականության կողմից։ 1902 թ. «Մշակի» № 76-ում լույս է տեսել Ստ. Մալխասյանցի ընդարձակ մատենախոսությունը «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորի մասին։ Նույն հատորի մասին գրախոսականներ են տպագրվել «Բազմավեպում» (1902 թ. էջ 457, Հ. Հ. Թորոսյան ստորագրությամբ) և «Արարատում» (1902 թ. հունվար, Հ. Մ. ստորագրությամբ)։

Ցավոք սրտի Ս. Հայկունին իր հրատարակած նյութերի մասին հանգամանալից տեղեկություններ չի հաղորդել։ Նույնիսկ անհայտ են նյութերի մի մասի ասացողները, գրառման ժամանակն ու պայմանները, մի հանգամանք, որը դժվարացնում է հեքիաթների ծանոթագրումը։

Չեն պահպանված նաև Ս. Հայկունու գրառման ձեռագրերը։ Այդ պատճառով էլ ներկա հրատարակության համար հիմք են ընդունված «Էմինյան ազգագրական ժողովածուի» մեջ տպագրված բնագրերը, որոնք վրիպակներով հարուստ են։

2. Անտիպ նյութեր։ Հատորում տեղ գտած անտիպ հեքիաթները Հայկական ՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսական արխիվի (նախկինում՝ Գրականության ինստիտուտի Բանահյուսական արխիվ) Տ. Նավասարդյանցի ֆոնդի նյութերն են։ Ինչպես հայտնի է, Տ. Նավասարդյանցը ժամանակին բանահավաքչական եռանդուն գործունեություն էր ծավալել՝ անձամբ և ուրիշ այլ մտավորականների միջոցով՝ Հայաստանի տարբեր գավառներից հավաքելով բանահյուսական բազմապիսի նյութեր։ Այդ նյութերից

35—2573

www.naregatsi.org

ընտրություն կատարելով 1882—1903 թթ. ընթացքում Տ. Նավասարդյանցը հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» 10 գրքույկներ, որտեղ հեքիաթներից բացի ընդգրկված են նաև բանահյուսական այլ ժանրերի նյութեր։ Հիշյալ պրակներում մեծ տեղ են գրավում բանահավաքի հայրենի Արարատյան դաշտի բնակավայրերի նյութերը։

Սակայն Տ. Նավասարդյանցի բանահյուսական հավաքածուում մնացել են բազմապիսի և բազմաբանակ նյութեր, որոնք անտիպ են։ Անտիպ նյութերից Արարատյան դաշտի հեքիաթների մի մասը տեղ են գտել սույն հրատարակության նախորդ՝ II հատորում։ Դրանք, ինչպես նշվել է, Տ. Նավասարդյանցի կողմից տպագրության պատրաստված «Հայ ժողովրդական հեքիաթներ» հերթական XI պրակի նյութերն են, որոնք հանգամանքների բերումով չեն հրատարակվել։ Տ. Նավասարդյանցի բանահյուսական հավաքածուի Արարատյան բնակավայրերի անտիպ մնացած մյուս հեքիաթները տեղ են գտել ներկա հատորում։

Անտիպ նյութերի մեծագույն մասը ընդգրկված է մի սավաթածավալ տետրում (գործ I, № 2)։ Դա կազմած, մի մեծ գրքանման տետր է։

Տ. Նավասարդյանցը իրար է կցել տարբեր ժամանակներում, տարբեր մարդկանց կողմից տարբեր գավառներից հավաքած բանահյուսական բազմապիսի նյութեր։ Կցված ու միացված թերթերը տարբեր համարակալում ունեն։ Այս տետրի կեսից ավելին կազմում են Արարատյան դաշտի հեքիաթները։ Տ. Նավասարդյանցի ձեռագրով տետրի ընդհանուր անվանաթերթի վրա գրված է «Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողոված՝ Տիգրանա Նավասարդյանց, 1876—80, Տբփխիս»։ Այստեղից պարզ է դառնում, որ տետրի մեջ տեղ գտած նյութերը գրի առնված կարող են լինել մինչև 1880 թվականը։ Տետրի մի անկյունում նշված է «Անմշակ նյութեր»։ Պատահում են տետրից կտրված թերթեր, դրանք այն հեքիաթներն են, որոնք Տ. Նավասարդյանցը տեղադրել է իր բանահյուսական գրքույկներում։ Հիշյալ տետրի նյութերի մի մասը Տ. Նավասարդյանցի ձեռագրով են գրված, հավանաբար ինքն է հավաքել Արարատյան դաշտի գյուղերից, հնարավոր է նաև, որ ինքն արտագրել է ուրիշի հավաքած նյութերը։

Տ. Նավասարդյանցի ձեռագրով գրված նյութերը համեմատաբար լավ են պահպանել բարբառի հնչյունական-քերականական առանձնահատկությունները։ Այդ հեքիաթներն են՝ «Ղոչաղ Միրզա», «Աղվեսը և շրաղացպանը», «Զոլախ կնիկ», «Էրկու գիժ աղպրտինք», «Զորանի տղեն», «Աստղ ջոկող, Հոտ քաշող, Ղոչաղ Լողնորդ», «Ջանպոլադի հեքիաթը», «Դունիա գյոզալի հեքիաթը», «Ենգիչարու հեքիաթը», «Ուստա Մուրադի հեքիաթը», «Մարդ ու կնկա սերը ուրիշ թավուր բան ա», «Մարդագելի հեքիաթը», «Աստոծ գժին էլ ա տալի», «Մարդագելի հեքիաթ», «Գելը մուխսի ընելու ա էրթում», «Սկլիկ ու Բակլիկ», «Փըփըկ, Բըփըկ, Ֆըլըք», «Գշերը տկլոր դուս գալը վնաս ա», «Քյուչյուք-Մուրադի հեքիաթը», «Ինամ Թաքավորի հեքիաթը», «Ջիննի Թաքավորի հեքիաթը», «Հալվաչի գյոզալի հեքիաթը», «Տըռալի հեքիաթը», «Էս էլ քեզ հեքիաթ», «Լողմա-հեքիմ», «Ավչի Ղասըմի հեքիաթը», «Շընեերկրի հեքիաթը»։

Տետրի մյուս նյութերը, որոնք նույնպես Արարատյան բարբառով են, գրված են այլ ձեռագրով և այդ նյութերում չի պահպանված հնչյունային-քերականական առանձնահատկությունները. ավելի շուտ դրանք գրական լեզվով հեքիաթ-

www.naregatsi.org

ների վերապատմումներ են, քան թե բուն գրառումներ։ Այդ հեքիաթներն են՝ «Մարդիս փողի համար են պատվում», «Քույրը ջիգյարով կըլի», «Խոսք ծախող», «Թաքավորը ու նրա երեք տղերքը», «Լավություն անողը լավություն կստանա», «Մի հայի հեքիաթը», «Անհավատարիմ կին», «Փարշանգը ու նրա արած հրաշքները», «Ճշմարտությունը չի կորչի», «Հավատարիմ կին», «Աղքատ քարտաշ», «Նախանձը լավ բան չէ», «Ակն ու մարգարիտը», «Հոր վրա նստեց, մորը հագավ, մամը խմեց», «Շան ջիգյար», «Ոսկե լագանը ու ալթափենն», «Քարվանսարա», «Քոսի հեքիաթը»։

Տ. Նավասարդյանցը այս նյութերի մասին անհրաժեշտ տեղեկություններ չի հաղորդում, թե ովքեր են հավաքել, որտեղից, ովքեր են ասացողները և այլն։ Որոշ նյութերի վերջում, աննշմարելի ձևով գրված է՝ Գանձակ, Քյուրդամիր։ Թերևս բանահավաքները ցանկացել են նշել, որ այդ նյութերը հիշյալ վայրերից են հավաքված, բայց բոլորովին չի երևում այդ տեղավայրերի լեզվական-բարբառային հետքերը։

Նշելով այդ բոլորից՝ հիշյալ նյութերն էլ ընդգրկեցինք այս հատորում, հաշվի առնելով նրանց լեզվա-բարբառային առանձնահատկությունները մի կողմից, և դրանց սյուժետային-թեմատիկ առնչությունը Արարատյան հեքիաթներին, մյուս կողմից։

Սույն հատորի անտիպ նյութերի մի մասն էլ վերցրված է Բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդի մի այլ տետրից (գործ I, № 1)։ Դրանք են՝ «Թաքավորն ու չորանը», «Թաքավորն ու իր երեք որդիքը», «Թաքավորն ու իր երեք որդիքը», «Թաքավորն ու իր երկու որդիքը», «Թաքավորն ու հովիվը», «Ցորն աղջիկներ», «Պիծան կամ Պիծիկ»։ Այս հեքիաթները տեղ են գտել մի կազմած տետրում, որը բաղկացած է տարբեր ժանրերի բանահյուսական նյութերի հավաքածուներից։ Դրանք տարբեր մարդկանց հավաքած նյութերն են՝ ուղարկված Տ. Նավասարդյանցին։ Տետրի անվանաթերթի վրա Տ. Նավասարդյանցի ձեռքով գրված է՝ «Հայ ժողովրդական երգեր», ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, երրորդ գիրք, Տփխիս, տպարան Մ. Վարդանյանցի, 1883 թ.։ Տետրի ներսում էլ կան մի շարք անվանաթերթեր, դարձյալ Տ. Նավասարդյանցի ձեռքով գրված, այլ վերնագրերով։ Վերոհիշյալ հեքիաթները տետրում գրված են «Հեքիաթներ, Արարատյան բարբառներով» ընդհանուր խորագրի տակ։ Դրանից բացի ոչ մի ծանոթություն չկա, թե ով է դրանց գրի առնողը, ասացողը, և երբ է գրի առնվել և այլն։ Նույն ձեռագրով գրված բանահյուսական այլ նյութերի կապակցությամբ ասված է, որ դրանք հավաքված են «Երևանու նահանգում»։ Հաշվի առնելով տետրի մեջ եղած անվանաթերթերի թվականը (1883) պետք է եզրակացնել, որ վերոհիշյալ հեքիաթներն էլ գրի առնված պետք է լինեն մինչև 1883 թ., հավանաբար Երևանյան նահանգում։

Հիշյալ հեքիաթները, բացառությամբ մի քանիսի, գրի են առնված առանց լեզվական ու պատմողական-ոճական առանձնահատկությունների պահպանման, կամ թե խառն վիճակում՝ գրական հայերենի և բարբառների խառնուրդով։ Պահպանելով մեր ընտրած սկզբունքները, չենք միջամտել և բնագիրը թողել ենք այնպես, ինչպես նրանք կան։ Ուղղված են բացահայտ վրիպումներն ու աղավաղումները։

www.naregatsi.org

Ներկա հատորում կան նաև նյութեր Տ. Նավասարդյանցի արխիվային ֆոնդից, որոնք ցրված են եղել այս կամ այն գործի մեջ։ Դրանք ժամանակին ուղարկված են եղել Տ. Նավասարդյանցին, բայց նա չի հասցրել տպագրության պատրաստել և մնացել է սևագիր վիճակում։

Սույն հատորի ծանոթագրությունների մեջ տրված են.

1. Տեղեկություններ ներկա հրատարակության համար հիմք ծառայած աղբյուրների (տպագիր կամ անտիպ) մասին։ 2. Գրառման հանգամանքների կամ ասացողների մասին բանահավաքների հաղորդած բոլոր վկայությունները և կողմնակի տեղեկությունները։ 3. Տվյալ հեքիաթի վերահրատարակությունների կամ թարգմանությունների մասին։ 4. Տվյալ հեքիաթի սյուժեի առնչությունը նախորդ հատորների հեքիաթների սյուժեների հետ։

Ծանոթագրությունների մեջ համառոտության համար «էմինյան աղգագրական ժողովածուն» անվանվում է՝ «էմինյան ժողովածու», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և աղգագրության ինստիտուտի Բանահյուսական արխիվը (նախկինում Գրականության ինստիտուտի Բանահյուսական արխիվը)՝ Բանահյուսական արխիվ։

1. «ՀԱԶԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ»

(էջ 17)

Տպագրվում է «էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 351—366)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Հեքիաթի վերնագրի տակ նշված է՝ «Վաղարշապատի բարբառով» 1։ Ըստ բանահավաքի հաղորդման, այս հեքիաթը պատմել է բնիկ վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին հայտնում է հետևյալը. «...Արսեն Ղրիմյան 19 տարի գիշերապահ եղած է վանքին մեջ. 55 տարեկան է, գիտի շատ հեքիաթներ, շատ վարժ է պատմելու. մոտ հարյուր հեքիաթ գիտի. սովորած է Վաղարշապատի մեջ, ինքը ևս պատմած գյուղի օթախներու մեջ՝ Մակար կաթողիկոսի հաճի Հակոբի մոտ, միշտ հեքիաթ ասած է՝ զրաղեցնելու համար» (էջ 230)։ Գրի առնողը, ինչպես երևում է, ասացողի խոսվածքի քերականական առանձնահատկությունները չի պահպանել։

Հեքիաթի սյուժեն հանրահայտ է. բազմաթիվ տարբերակներ ունի (տե՛ս, «Հազարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը», I հատոր, էջ 27, «Անմահական խնձոր», II հատոր, էջ 23)։ Դրանց մեջ հիշյալ տարբերակը աչքի է ընկնում իր ամբողջությամբ, ավարտվածությամբ, կենցաղային ու գեղարվեստական հարուստ կոլորիտով։

---

1 Գրքի ցանկի մեջ սույն հեքիաթի դիմաց նշված է՝ Արարատյան բարբառով։

www.naregatsi.org

2. «ՕՁ-ՄԱՅԻԼ»

(էջ 37)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 305—326)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին տես սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրությունը։ Կախարդական է այս հեքիաթի սյուժեն։ Այս սյուժեն շատ տարբերակներ ունի, բայց սույն հեքիաթը աչքի է ընկնում իր ամբողջականությամբ ու ավարտվածությամբ, նախնական պատկերացումները անաղարտ պահպանված են։

Սույն հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները.

«Հայ ժողովրդական հեքիաթներ», կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1950, էջ 257—281։

«Basme populare Armene», cartea Rusă, 1958, էջ 273—302 (Հայ ժողովրդական հեքիաթների ռումիներեն թարգմանությունն է, որ կատարել են Վիլենուր Թեոդորյանուն և Սիրակ Կսկանյանը, օգտվելով Ա. Ղանալանյանի 1950 թ. կազմած և խմբագրած «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուից)։

3. «ՕՁԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՆԿԱՆԻՑ ՇԱՏ ԷԼԱՎ»

(էջ 63)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 270—272)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Հեքիաթը պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Այս հեքիաթը կենցաղային-իրապատում բնույթ ունի։ Սյուժեն անզգամ կանանց պատճառած վնասների մասին է։ Սովորաբար այս սյուժեի զարգացումը ավարտվում է հորում փակված կնոջ մոտից օձի փախչելու և անզգամ կնոջ սարսափը չմոռանալու միջադեպով։ Այստեղ հեքիաթի սյուժետային զարգացումը այլ ընթացք ունի. ամուսինը անզգամ կնոջը փակում է հորում, իսկ «ջանավարներին» հանում այնտեղից, հետո կնոջն էլ է ազատում. «ջանավարները» երախտահատույց են լինում, իսկ կինը ցանկանում է մատնել ու կործանել նրան. հետո օձն է գալիս ազատում։

Սույն հեքիաթը թարգմանաբար հրատարակվել է «Армянские сказки» *ժողովածուում,* II изд. 1933, Москва—Ленинград, стр. 124—128, перевод и примечания Я. Хачатрянца, введение М. Шагинян. Рисунки, форзац, переплет и суперобложки, работы М. Сарьяна.

4. «ԱԲՐԱՀԱՄ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ»

(էջ 67)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 230—240)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին, պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին կենսագրական տեղե-

www.naregatsi.org

կությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Այս հեքիաթի մեջ զուգակցվում են երկու սյուժե. երախտագիտության փոխհատուցումը և կնոջ հավատարմության ու անհավատարմության թեման։ Թեև հեքիաթում կան կախարդական մոմենտներ, բայց այն իրապատում-կենցաղային հեքիաթ է՝ բարոյախոսական թեքումով։

5. «ՍԸՄԱՎՈՆ ԹԱՔԱՎՈՐ ԵՎ ԴՑՈՒԼ»

(էջ 80)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 257—269)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին կենսագրական տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Այս հեքիաթը բաղկացած է իրար կցված երկու անկախ սյուժեից. առաջինը՝ տիրոջ աղջկա վրա սիրահարված լավ սրինդ նվագող հովվի պատմությունն է (քրդական «Լուր-դալուր» զրույցի սյուժեի տարբերակը), իսկ մյուսը՝ կնոջ անհավատարմության թեման է, որն սկսվում է հովվի և տիրոջ աղջկա փախուստից հետո՝ ճանապարհին վիշապին հանդիպելու միջադեպով։ Վերջինս յուրահատուկ անդրադարձում է գտել այս հեքիաթում։

Սույն հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունները՝

«Հայ ժողովրդական հեքիաթներ», Երևան, 1950 թ., 350—365։

«Basme Populare Armene», 1958, 357—374։

6. «ՀՈՒԼԻԴԱ ԽԱՆՈՒՄ»

(էջ 95)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 335—342)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և տպագրել Ս. Հայկունին։ Էջատակին բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմած է Սարգիս Ղազարյան. սա լսած է յուր զոքանչ Համասիյուռ Ամիրյանեն»։

Հեքիաթը կիսակախարդական բնույթ ունի, բարոյախոսական բովանդակությամբ։ Սյուժեն հարսի կողմից զրպարտված անմեղ տալի տառապանքների և արդարի հաղթանակի մասին է։

7. «ՀՈՐ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ»

(էջ 105)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 241—249)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Պատմել է վաղարշապատցի Արսեն

www.naregatsi.org

Ղրիմյանը, որի մասին կենսագրական տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Այս հեքիաթի սյուժեն շատ տարածված է. այն վերաբերում է երդմնապահության, արդարության ու աղնվության գնահատությանը և դրան հակառակ՝ չարի, անօրենի պատժվելուն։

Հեքիաթը իրապատում-կենցաղային բնույթ ունի, բարոյախոսական թեքումով։

Այս հեքիաթի տարբերակն է «Հոր տված իրեք խրատը» հեքիաթը (II հատոր, էջ 465)։

8. «ՆՈԽՈՒՏԻ ՔԱՋԱԼ»

(էջ 117)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 273—283)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին կենսագրական տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։ Այս հեքիաթի վերաբերյալ բանահավաքը էջատակին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Քաչալներու վերա 15—20 հեքիաթի չափ լսած եմ. կան ասողներ, որոնք ամենուն ալ «քաչալ» տնուն կտան, իսկ կան ասողներ, որոնք բացահայտիչով կորոշեն, օրինակ՝ Նոխուտի քաչալ, Փունփուտի քաչալ, Ֆիլֆիլի քաչալ, Զուլամա քաչալ, Զիլզիլի քաչալ, Մուտուբաթ քաչալ և այլն։ Սորա մի ճյուղն գիտե Օհան Փիլիփոսյան. ավելի կարգավորյալ կպատմե»։

Հիշյալ հեքիաթը կախարդական բնույթ ունի, կենցաղային մասնավոր երանգով։ Սյուժեն հնարագետ և ճարպիկ հասարակ մարդու արկածների և դրա հետ կապված բազմաթիվ դժվարությունների հաղթահարման ու անարդարին պատժելու մասին է։ Սովորաբար հեքիաթներում հանդիպող քաչալները նենգ ու դաժան են, սույն հեքիաթի հերոս Քաչալը այդպիսին չէ։

Այս հեքիաթը «Քառասուն հարամի» հեքիաթի տարբերակն է (տե՛ս II հատոր, էջ 82)։

9. «ԱՂՈՒՆԻԿ ԱՂՋԻԿ»

(էջ 132)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 250—256)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Հեքիաթը կախարդական բնույթ ունի։ Տարբեր սյուժեներ են միահյուսված. հիմնականը՝ հրեղեն աղջկա մորթը (խրխին) գողանալու դեպքն է։ Կա նաև մարդուն և կնոջը միասին թաղելու էպիզոդը։ Որպես գործող հերոս հանդես է գալիս նաև Պալտոր-Ղայիշը։

www.naregatsi.org

10. «ՂԱՀՐԱՄԱՆ-ԱՍԼԱՆ ԹԱՔԱՎՈՐՆԵՐ»

(էջ 140)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 284—292)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին, պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը։

Այս հեքիաթը նույնպես կախարդական բնույթի հեքիաթ է։ Սյուժեն որդի չունեցող թագավորի մասին է. թե ինչպես դերվիշի խնձորից հետո զույգ տղա է ունենում և նրանցից մեկը երկար փորձություններից հետո հաղթահարում է դժվարություններն ու դերվիշի մոտից վերադառնում տուն։

11. «ՍՈՒՖԻՐԵՆ»

(էջ 150)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ՝ 292—304)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին, պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին բանահավաքը էջատակին թողել է այսպիսի ծանոթություն. «Արսեն Ղրիմյան — էջմիածնա վանքի գիշերապահը պատմած է. ինքը լսած է մի Մոլլադուրսունցիեն»։ Արսեն Ղրիմյանի մասին տե՛ս նաև սույն հատորի «Հազարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրությունը։

Հեքիաթը կախարդական բնույթ ունի. սյուժեն հրաշագործ սփռոցի միջոցով երախտագիտության փոխհատուցելու և դժվար փորձություններից ազատվելու մասին է։ Սկիզբը թագավորի կողմից հարսնացուներ փնտրելու և վիշապի կողմից շրջապատվելու միջադեպն է։

12. «ԴԵՐՁԻԿԻ ԱՂՋԻԿ»

(էջ 165)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 331—334)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Էջատակին բանահավաքը հայտնում է, որ «պատմած է Եփրեմ Վասակյանց»։ Ասացողի մասին այլ տեղեկություններ չի հաղորդում։

Հեքիաթը կենցաղային-զավեշտական բնույթ ունի։ Սյուժեն ճարպիկ և հնարագետ հասարակ մարդու աղջկա արկածներն են թագավորի տղայի հետ, նրան խաբելը և հաղթելը։

Սույն հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունը.

«Հայ ժողովրդական հեքիաթներ», *1950, 455—459։*

13. «ՏԱՆ ԴՈՎԼԱԹԸ»

(էջ 170)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 326—330)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։

www.naregatsi.org

Պատմել է վաղարշապատցի Արսեն Ղրիմյանը, որի մասին կենսագրական տեղեկությունները տե՛ս սույն հատորի «Հաղարան Բիլբուլ» (№ 1) հեքիաթի ծանոթագրությունում։

Հեքիաթը կիսով չափ կախարդական բնույթ ունի՝ բարոյախոսական բովանդակությամբ։ Սյուժեն ընտանիքի հովանավոր ուժի, «տան դովլաթի» մասին է, որը սիրում է խաղաղություն ու համերաշխություն։ Հեքիաթում տեղ գտած գրագի և ագահ մարդու էպիզոդը միջանկյալ է։

Սույն հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները.

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, 367—371։

«Basme populare Armene», 1958, 375—379։

14. «ՕՁ-ՄԱՆՈՒԿ ԵՎ ԱՐԻՆ-ԱՐՄԱՆԵԼԻՆ»

(էջ 175)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 20—25)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Հեքիաթի ասացողը Շահրիարի Ջաֆարապատ գյուղի բնակիչ, Սևանի վանքի միաբան Արիստակես վարդապետ Զուլոյանն է։ Հեքիաթի վերնագրից հետո նշված է՝ «Շահրիարի Ջաֆարապատ գյուղի բարբառով»։ Ասացողի մասին բանահավաքը թողել է սույն ընդարձակ ծանոթությունը. «Սույն երեք հեքիաթներն՝ «Հովիվ ախպեր», «Ախպեր գառներ», և «Օձ-Մանուկ» պատմած է Արիստակես վարդապետ Զուլոյան, որ է Սևանա միաբան և բնիկ Շահրիարի Ջաֆարապատ գյուղացի, որ այժմ Էջմիածին կգտնվի, առժամանակյա կհաճախե Գ. ճեմարանը լսելու լսարաններու մեջ։

Արիստակես վ. սույն հեքիաթներն սովորած է յուր մորեն, որպես յուր եղբայրն, որը 15 տարի առաջ իրենց գյուղի մեջ հռչակ ստացած հեքիաթ ասողներ եղած էին և կհրավիրվեին գյուղի օդաներն հեքիաթ ասելու և զբաղեցնելու հավաքված հասարակությունը։ Այս վարդապետի ասելով յուր եղբայրն անհաշիվ հեքիաթներ գիտե, իսկ ինքը մոռացած է. միայն սույն երեք կտորն, որ իր մորից սովորած է, լավ միտքը պահած է՝ յուր մայրն շատ սիրելուն իբրև թանկագին հիշատակ։ Սոքա Քորուն գյուղացի (Հին Պայազիտի մոտ) եղած են. իրենց հայրը Գրիգոր, սորա հայրը Գևորգ, որո հայրը Պողոս, Պողոսի հայրը Մանուկ, Մանուկի հոր անուն Պետո, որո հոր անուն Սևո։ Սոքա Զուլոյան կկոչվին Պողոսի Զուլո կնոջ անունով, այս Զուլոն մեծլիս և գյուղի կառավարիչ եղած է։ Սա Ջաֆարապատ գաղթած է Քորունեն Պարսից ժամանակ։

Հասան խանի իշխանության միջոցին հայեր, որպես քրդեր և Թուրքեր ծանր ղալան (գլխագին) կառնեին փեսաներեն, որով շատ աղջիկներ տունը մնացին, առ այս շատ մը ծնողք (տղայոց) դիմեցին Հասան խանի և գանգատեցան։ Հասան խանն ևս վճիռ արձակեց.— «Ով որ հասած աղջիկ ունի, չէ ամուսնացած, այլևս թող չամուսնացնե. նա պիտի հավաքե, բերե, որ յուր ծառաներու վերա պսակե»։ Այս վճռին վերա մի գիշերվան մեջ որչափ հասած աղջիկ կար պսակեցին առանց ղալանի։ Այս աղջիկներու թվուն մեջ էր Արիստակես վարդապետի մամ Ալմաստ Շաքոյանը»։

www.naregatsi.org

Հեքիաթը կախարդական բնույթ ունի։ Սյուժեն տարածված է։ Այս հեքիաթի տարբերակն է «Արևհատ և Օձամանուկ» հեքիաթը (տե՛ս I հատոր, էջ 236)։

15. «ԱԽՊԵՐ ԳԱՌՆԵՐ»

(էջ 182)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 10—19)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Վերնագրից ներքև նշված է՝ «Շահրիարի Ջաֆարապատ գյուղի բարբառով»։ Պատմել է նույն Շահրիարի Ջաֆարապատ գյուղի բնակիչ, Սևանի վանքի միաբան Արիստակես վարդապետ Ջուլոյանը։ Բանահավաքը ասացողի մասին թողել է մանրամասն կենսագրական տեղեկություններ (տե՛ս «Օձ-Մանուկ և Արին-Արմանելին» հեքիաթի (№ 14) ծանոթագրությունը։

Սույն հեքիաթը «Գառնիկ ախպեր» հեքիաթի հանրածանոթ սյուժեն է (տե՛ս նաև II հատոր, էջ 260)։ Բնույթը կախարդական է, ունի բարոյախոսական թեքում։ Մեծ բանասեղծ Հ. Թումանյանը իր «Գառնիկ-ախպեր» հեքիաթի մշակման համար անպայման նկատի է ունեցել նաև այս հեքիաթը։

Այստեղ դեր է խաղացել ասացողի հոգևորական լինելու հանգամանքը, հատկապես աղջկանը ժամհարի կողմից հայտնաբերելու միջադեպում։

16. «ՇԻՐԻՆ ՇԱՀ ԵՎ ԲԱՀՐ»

(էջ 193)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II հատորից (էջ 89—104)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Գրառման բնագիրը չի պահպանվել։ Բանահավաքը հեքիաթի վերնագրից ներքև փակագծի մեջ նշել է՝ «Կուլապի բարբառով», իսկ էջատակին թողել է սույն ծանոթագրությունը ասացողի մասին. «Նիկողոս Դավիթյան Սուրմալուի գավառի Կուլապ գյուղը ծնած 1848-ին, Ալիջան գյուղը մեծացած է մինչև 10 տարեկան հասակը, նույն գյուղի մեջ 90 տարեկան հասակ ունեցող Օվսի Գրիգորից սովորած էր Շիրին շահի վեպը։ Դարձյալ Կուլապ եկած՝ բնակած է 25 տարիե ի վեր։ Սույն Նիկողոս որմնաշար լինելով այլևայլ գյուղեր քիչ-շատ մնացած էր գործով, որով Կուլապա լեզուն կատարյալ չէր կարող խոսիլ։ Շիրին շահի վեպը՝ հին հայկական ավանդության քանի կետերը կշոշափե, որով ընթերցողները պիտի հասկանան, թե վեպս հայկական ասացվածքի ձև ունի։ Թերևս Ալիջան գյուղն ավելի լավ պատմողներ լիներին։ Վեպիս ավելի ընդարձակ մի ճյուղն գրի առած եմ Մոկաց բարբառով, որ ունի նաև երգեր։ Նույն վեպի ասող Զատիկն կասե, թե «շախ» կնշանակե «բողբոջ», վասնզի Դավթի բողբոջներին է «Շիրին շախ»։

Ս. Հայկունին այս հեքիաթը գրի է առել Սուրմալուի գավառի Կուլապ գյուղի բնակիչ Նիկողոս Դավթյանից. գրառման ստույգ վայրը և ժամանակը չի հայտնում։

Վերոհիշյալ ծանոթության մեջ բանահավաքի կողմից և «Էմինյան ժողովածուի» II հատորի «Խմբագրության կողմից» առաջաբանում այն կարծիքն է

www.naregatsi.org

հայտնվում, որ «Շիրին շահ և Բահրը» վեպ է. «...Զնայելով իրենց քրդական կյանքի մի քանի պարագաներին՝ հայկական ավանդության մի քանի կետեր են շոշափում, ուստի տեղավորեցինք նրանց հայ ժողովրդական վեպերի բաժնում, թեև կան հիշյալ վեպերի այլ ճյուղեր՝ բուն քրդական բնավորությամբ, որ գրի է առել Ս. Հայկունին և որ կտպագրվեն քրդական վեպերի մեջ» («Խմբագրության կողմից»՝ առաջաբանը ամբողջությամբ տե՛ս սույն հատորի ծանոթագրությունների ոկզբում)։ Անտես առնելով այստեղ քրդական բանահյուսության հետ ունեցած աղերսի հարցը, որ անշուշտ կա, մեզ հետաքրքրում է բանահյուսական այս ստեղծագործության ժանրի խնդիրը։ Մեր համոզմամբ «Շիրին շահ և Բահրը» հեքիաթ է՝ վիպական (էպոսի) տարրերի խառնուրդով։ Սա կախարդական հեքիաթների այն շարքին է պատկանում, որոնց սյուժեն առնչվում է նախասահմանության գուշակման և իրականացման անխուսափելիության հետ։ Այստեղ էլ, ինչպես մի շարք այլ հեքիաթներում (տե՛ս «Խոսրով-շահ» հեքիաթը, I հատոր, էջ 441), խորհրդավոր ձայնը, ուրիշ տեղերում՝ Դավրիշ, ծերունի և այլն, որոնք բոլոր դեպքերում նախասահմանության սիմվոլիկ պատկերներ են, գուշակում են, որ թագավորին եկող փորձանքը կլիներ այն ժամանակ, «երբ կնստի մսե աթոռի վրա և կուտի երկաթե ամանից»։ Այնուհետև բազմաթիվ այլ էպիզոդներ՝ թագավորի ծպտվելու մասին, դևերի հետ կռվելու և այլ փորձությունների վերաբերյալ։

Հեքիաթում կան վիպական տարրեր. այստեղ ներմուծված են պատմական անուններ ու տեղանուններ։ Հեքիաթում գործում է Լեկթեմուրը (Լենկթեմուր), որը հանդես է գալիս դևի փոխարեն և կռվի է բռնվում հերոսի՝ Բարակ շահի հետ, բայց ի տարբերություն նմանատիպ հեքիաթների, Բարակ շահը մտերմանում է Լեկթեմուրի հետ և նույնիսկ բարեկամական կապերով կապվում նրա հետ։ Հեքիաթում հանդիպում են Փրբաթման կամուրջը, Բոզ ձին-աթակին, Թուր-կեծակին, Քաջ-Վարդանը, Քաջանց երկրի, Համբարձման երկուշաբթու և մուրազ կատարվելու ավանդությունը և ուրիշ այլ անուններ ու էպիզոդներ, որոնք գալիս են «Սասնա ծռերի» ազդեցությունից։ Այս ազդեցությամբ ու տարբերով հանդերձ, սակայն, մենք գործ ունենք հեքիաթի հետ, որտեղ կերպարները, գործողությունների հանգուցալուծումը, ժանրային բնույթն ու առանձնահատկությունները որոշակիորեն տարբերվում են վեպից։

«Շիրին շահ և Բահր» հեքիաթը իր մեջ ընդգրկում է մի քանի սերունդների գործողություններ, որտեղ միահյուսված են տարբեր հեքիաթային սյուժեներ ու էպիզոդներ։

17. «ԼԱԼԱԶԱՐ»

(էջ 210)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II հատորից (էջ՝ 107—114)։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Հեքիաթի վերնագրի տակ բանահավաքը փակագծում նշել է. «Կուլապ գյուղի բարբառով», իսկ էջատակին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «1891—92 թ. Սուրմալուի գավառի Կուլապ գյուղը մնացած, գյուղացոց օդաներն հաճախած՝ մոտ 10 հեքիաթ լսած և գրի առած եմ։ Սույն լեռնային գյուղացիքը հայտնի հե-

www.naregatsi.org

քիաթ ասողներ են։ Ինչպես տեսնում ենք, ծանոթությունից պարզ չէ, թե կոնկրետ ո՞վ է սույն հեքիաթի ասացողը։ Հասկանալի է միայն, որ հեքիաթը գրի է առնվել 1891—92 թվականներին, Սուրմալուի գավառի Կուլապ գյուղում։

«Վալաղար» հեքիաթի մի տարբերակն է «Տղա դարձող աղջիկը» հեքիաթը (տե՛ս 1 հատոր, էջ 192)։ Հեքիաթի սյուժեն աղջկա՝ տղա դառնալու դեպքն է, որն իրականանում է ծանր փորձություններից ու դժվարություններից հետո։

18. «ՄԻԹԻԼ-ԽԱՎՔ»

(էջ 219)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II հատորից (էջ 115—123)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Վերնագրից հետո փակագծում նշված է՝ «Կուլապ գյուղի բարբառով»։ Էջատակին կա հետևյալ ծանոթությունը. «Զայս և «Փոկոտն» հեքիաթները պատմած է մի կույր-բարոյախոս անձ, որ անունը դժբախտաբար չեմ հիշեր»։ Այլ տեղեկություններ բանահավաքը սույն հեքիաթի գրառման հանգամանքների մասին չի հաղորդում։

«Միթիլ-խավքը» կախարդական հեքիաթ է, որի սյուժեն հյուսված է կախարդանքով կենդանու (սովյալ դեպքում օձի) կերպարանք մտած մարդու փորձությունների ամուսնանալու, կնոջ միջոցով գաղտնիքը բացվելու և երկար տառապանքներից հետո նորից մարդու կերպարանք ստանալու շուրջը։

19. «ՓՈԿՈՏՆ»

(էջ 230)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II հատորից (էջ 124—134)։ Գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Հեքիաթի անվանումը բանահավաքը թարգմանաբար է դրել՝ «Փոկոտն», իսկ ներքևը փակագծի մեջ դրել է ասացողի անվանումը՝ «Պալտը-ղայիշ», որը և հիշվում է հեքիաթի մեջ։ Այնուհետև վերնագրից ներքև փակագծում նշված է՝ «Կուլապի բարբառով», իսկ էջատակին դրված է սույն ծանոթությունը. «Սույն հեքիաթի մի այլ ճյուղը լսած եմ վաղարշապատցի Արսեն Ղրիմյանե, որ ավելի ընդարձակ պատմած է. պատահարներն մեծ մասամբ ծովեղերքը կամ ծովի վերան տեղի ունեցած են»։ Հեքիաթի ասացողի կամ գրանցման հանգամանքների վերաբերյալ այլ ծանոթություն չկա։

Այս հեքիաթը փաստորեն երկու մասից է բաղկացած։ Առաջին մասում բուն կախարդական սյուժեներ են՝ ընկերներից և տնից վտնդված մարդու արկածները, նրա հաղթանակը թյալլագյոզի (կամ այլ տեղերում՝ թափագյոզի), Պալտը-ղայիշի (կիսամարդ՝ կեսը կաշի) դեմ, որի կերպարը ծագման հնությամբ շատ հետաքրքրական է։ Երկրորդ մասը, որը սկսվում է տղայի ընտանիք վերադառնալուց հետո պատահաբար թագավորի կողմից ձերբակալվելու դեպքով, արդեն բարոյախոսական-կենցաղային բնույթ ունի, հատկապես թագավորի պայմանը տղայի կողմից կատարելու մոմենտը։ Երկրորդ մասում կրկնվում են բոլոր դեպքերը, բանահավաքը՝ Ս. Հայկունին կրճատած է եղել դրանք. «Էմինյան ժո-

www.naregatsi.org

զուլածուի» խմբագիր Գր. Խալաթյանցի պահանջով լրացրել է, բայց գրական լեզվով։ Պետք է նկատել, որ II մասում վերապատմած դեպքերի և I մասի նույն դեպքերի մեջ որոշ անհամապատասխանություն կա։

20. «ԲԱԲԸՌ»

(էջ 243)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II գրքից (էջ 134—150)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Վերնագրից ներքև փակագծում նշված է՝ «Կուլապի բարբառով», իսկ էջատակին գրված է հետևյալ ծանոթությունը. «Պատմած է Կուլապ գյուղացի Ասլանի Գևոն, որ Սինեկա հովտավայրերուն մեջ ձիերու հիվանդությունը դարմանելով կպարապեր. միջահասակ՝ 60 տարեկանի մոտ առույգ մի անձ էր, ուներ խրոխտ ձայն»։ Գրառման ժամանակը հավանաբար 1891—1892 թթ. է (տե՛ս «Վալաղարշ» (№ 19) հեքիաթի ծանոթությունը)։

Այս հեքիաթը կախարդական բնույթ ունի և լավ է պահպանվել սյուժեի ամբողջականությունը. կախարդանքով կենդանու կերպարանք ստացած գեղեցկուհու գաղտնիքը բացվում է. նա փորձություններից և երկար տանջանքներից հետո նպատակին հասնում է։ Սույն հեքիաթը զուգակցվել է մոր կողմից դևի (այստեղ Բաբբռ) հետ մտերմանալու և որդուն դավաճանելու միջադեպը, ինչպես և կախարդական խալիչայի, քոլոզի և չիպուխի միջադեպը։

Հեքիաթում հիշվող աստծո ողորմածությունը սիմվոլիկ ձևով արտահայտում է երախտագիտության գաղափարը։

21. «ՀՆԼՈՒՋԱԿ ԹԱԳՈՒՀԻՆ»

(էջ 262)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» II գրքից (էջ 305—314)։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Գրառման ձեռագիրը չի պահպանվել։ Վերնագրից հետո փակագծում նշված է՝ «Քսերքսես սուլթանը»։ Ինչպես երևում է Ս. Հայկունին գրի առած նյութերի վերնագրերի մեծ մասը ինքն է նշանակել, փակագծում դնելով հավանաբար ասացողների կողմից տրված անվանումները։ Ասացողի, գրառման ժամանակի մասին բանահավաքը տեղեկություններ չի հաղորդում։ Հավանաբար գրի է առնված Սուրմալուի Ալիճան գյուղում, որովհետև վերնագրից ներքև նշված է. «Սուրմալուի Ալիճան գյուղի բարբառով»։

Հեքիաթի սյուժեն խառն է. այստեղ զուգակցված են տարբեր միջադեպեր։ Հիմնականը՝ թագավորի անհաշտ որդու (Աբրահամ փաշա) արտաքսման միջադեպն է. թե ինչպես նա պատահում է դևերին, կռվում ու հաղթում, ապա ախպերանում նրանց հետ (որը քիչ է պատահում հեքիաթներում)։ Այս միջադեպին զուգակցվում է խորամանկ ջհուդի նենգությունն ու պատժվելը, կախարդական քարի և նրա հրաշագործ զորության մասին և այլն։

www.naregatsi.org

22. «ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 274)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար էջմիածնում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի հայտնում, թե ով է ասացողը։

Հեքիաթի սյուժեն կուրացած հոր աչքերին դեղ գտնելու մեկնած որդու փորձություններին ու արկածների մասին է. միջանկյալ հարակից սյուժե է Սինամ թագավորի պատմությունը՝ կնոջ անհավատարմության մասին։ Այս հեքիաթը աչքի է ընկնում իր ամբողջականությամբ և պատմելաձևի պատկերավորությամբ։

23. «ՔՅՈՒՉՅՈՒՔ-ՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 283)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը հավանաբար էջմիածնում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը որևէ տեղեկություն չի տալիս, թե ով է եղել ասացողը։

Հեքիաթի սյուժեն որդու փորձությունների և արկածների մասին է, որին ցանկանում է կործանել դևերի հետ կապված մայրը։ Դրան զուգակցված են այլ միջադեպեր՝ դևերի կողմից փակված հուրի-փարի աղջկանն ազատելը, ասլանի ճուտերի միջոցով փրկվելը և իր վրեժը հանելը։ Հեքիաթի մի ուրիշ տարբերակը տե՛ս սույն հատորում («Բարբռ», № 20)։

24. «ԴՈՒՆԻԱ ԳՅՈՉԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 291)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել հավանաբար Նավասարդյանցը (նրա ձեռագիրն է)։ Ասացողն անհայտ է. գրառման վայրը հավանաբար Վաղարշապատն է, որովհետև Նավասարդյանցը իր տպագիր նյութերի առթիվ հայտնել է, որ դրանք հավաքել է Վաղարշապատում։ Բարբառը Վաղարշապատի խոսվածքն է, գրականի որոշ ազդեցությամբ։

Հեքիաթը հետաքրքրական է, սյուժետային զարգացումը լավ է պահպանված։ Որոշ դեպքեր (հատկապես Դունիա գյոզալի խորամանկությունն ու պատժվելը) հիշեցնում են նույնպես Տ. Նավասարդյանցի գրի առած «Գեղցու տղեն ու թագավորի աղջիկը» հեքիաթը (սույն հրատարակության II հատոր, էջ 234)։

25. «ՈՒՍՏԱ ՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 299)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի առ-

www.naregatsi.org

նողը հավանաբար Տ. Նավասարդյանցն է (ձեռագիրը իրենն է), բայց որևէ ծանոթություն կամ հիշատակություն չի թողել, որից պարզ դառնար, թե ով է ասացողը։ Գրառման ստույգ թվականը նույնպես հայտնի չէ, բայց երևի գրի է առել 1876—80 թթ. ընկած ժամանակամիջոցում, իսկ գրառման վայրը հավանաբար Վաղարշապատն է, կամ նրա շրջակա գյուղերից մեկը։

Սույն հեքիաթը Նավասարդյանցի անտիպ և անմշակ նյութերի մեջ համեմատաբար ամենից լավ պահպանվածն է։ Ամբողջական է սյուժետային զարգացումը, և անխաթար ներկայացված են բոլոր հանգույցները։

«Ուստա Մուրադի հեքիաթը» ինքնին հետաքրքրական է իր վաղնջական հենքով և բովանդակության բազմակողմանի ընդգրկմամբ։

Սյուժետային գծերով այն հիշեցնում է եղբայրների կողմից դավված և երկար փորձություններից ու արկածներից հետո հաղթանակով դուրս եկած թագավորի փոքր տղայի կամ հասարակ, քաջ մարդու մասին պատմվող հեքիաթների շարքը։

26. «ԵՆԳԻՉԱՐՈՒ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 310)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը։ Բանահավաքը որևէ ծանոթություն կամ տեղեկություն չի թողել. հայտնի չէ, թե ով է ասացողը։ Անկասկած է, որ Վաղարշապատում է գրի առնված։

Սույն հեքիաթի սյուժեն ինքնատիպ զարգացում ունի, բայց ինչպես երևում է, պատմողը լրիվ չի ծավալել հեքիաթի միջադեպերը և համառոտակի լուծում է տվել։ Առանձին դեպքեր, ինչպես օրինակ, Ենգիչարու կերպարանափոխությունները՝ ոչխարի ծաղիկ, ձիու քուռակ, չինարի ծառ դառնալը և այլն հանդիպում են նաև այլ հեքիաթներում, բայց ամբողջությամբ վերցրած այս հեքիաթը հետաքրքրական է իր հնությամբ։

27. «ՋԱՆՊՈԼԱՏԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 316)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը (նրա ձեռագիրն է)։ Բանահավաքը չի հիշել, թե ով է ասացողը։ Ենթադրվում է, որ գրի է առնված Վաղարշապատում, 1874—80 թթ. ընկած ժամանակամիջոցում, գուցե և առաջ։

Այս հեքիաթը սյուժետային կառուցվածքով ու թեմատիկ նպատակադրությամբ Նավասարդյանցի գրի առած և հրատարակած նույնանուն հեքիաթի (տե՛ս սույն հրատարակության II հատոր, էջ 50) տարբերակն է, նկատելի շեղումներով ու տարբերություններով։ Սույն հեքիաթում բոլորովին տարբեր միջադեպ է թագավորի տղայի քեռու՝ Բժնիի հանդես գալը, վերջում իրար հանդիպելը կռվի մեջ և ճակատագրական պահին միմյանց ճանաչելը։ Ներմուծված են նաև նոր անուններ՝ Դահրմիրզա, Մրջան-խանում և այլն։

www.naregatsi.org

28. «ՂՈՋԱՂ ՄԻՐՋԱՆ»

(էջ 325)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Ասացողն անհայտ է։ Գրի է առել հավանաբար Տիգրան Նավասարդյանցը, 1876—1880 թթ. ընկած ժամանակամիջոցում, դուցե և առաջ։ Բանահավաքը որևէ տեղեկություն կամ ծանոթություն չի թողել։ Այս հեքիաթը գտնվում է անմշակ նյութերի բաժնում։

Հեքիաթը սխեմատիկ և ֆրագմենտալ է, սյուժեն և գործողությունները չեն բացված։ Կան նմանություններ ուրիշ այլ հեքիաթների միջանկյալ սյուժեների՝ հատկապես դևի հոգին ուրիշ տեղ պահված լինելու միջադեպի հետ։

29. «ՔՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 328)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է հեքիաթի գրի առնողը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—80 թթ. ընթացքում։

Սույն հեքիաթը երգիծական-կենցաղային հեքիաթ է, տերն ու ծառայի հայտնի սյուժեի մի տարատեսակը։ Այստեղ միջադեպերը և գործողությունները բավականաչափ ինքնատիպ են։

30. «ՇԸՆԵՐԿՐԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 332)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։

Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի տալիս, թե ով է ասացողը։

Հեքիաթը, բոլորովին ինքնատիպ սյուժե ունի. այստեղ պատմվում է Շընների և նրանց սովորությունների՝ մարդ ու կնոջ միասին թաղելու մասին։ Հեքիաթի պատմական արժեքը կարևոր է՝ հին հավատալիքների և պատկերացումների ուսումնասիրման համար։

31. «ԱՎԶԻ ՂԱՍԸՄԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 335)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը չի հաղորդում, թե ով է ասացողը։

www.naregatsi.org

Հեքիաթի սյուժեն օձի միջոցով իմաստուն դառնալու և կենդանիների գաղտնիքներին տիրապետելու մասին է։ Հարակից միջադեպ է կնոջ անպատկառության և նրան պատժելու դեպքը։

32. «ԼՈՂՄԱ ՀԵՔԻՄ»

(էջ 338)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի հաղորդում, թե ով է ասացողը։

Հեքիաթի սյուժեն խառն է. այստեղ կան Լողմա հեքիմ դառնալու միջադեպը, կենդանիների գաղտնիքն իմանալու, ագահ մարդու պատժվելու, անպատկառ կնոջից ազատվելու և նույնիսկ դևերին նրանով վախեցնելու միջադեպերը և այլն։

33. «ՋԻՆՆԻ ԹԱՔԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 343)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի տալիս, թե ով է ասացողը։

Հեքիաթի սյուժեն երկու քույրերի կողմից զրպարտված երրորդ քրոջ մասին է, որը հիմնականում ծավալվում է նրա երկու զավակների՝ տղայի ու աղջկա բազմաթիվ փորձությունների ու արկածների նկարագրությամբ։ Հարակից միջադեպեր են ձկների թագավորի՝ Ջիննի թագավորի ու նրա աղջկա հետ կապված դեպքերը։

Հեքիաթը ուշագրավ է իր ինքնատիպությամբ ու նախնական պատկերացումների անաղարտ պահպանմամբ։

34. «ՅՈԹՆ ԱՂՋԻԿՆԵՐ»

(էջ 352)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը։ Հավանաբար այն գրի է առնվել 1883 թ., կամ ավելի շուտ։ Գրառման ստույգ վայրը անհայտ է, բայց նշված է՝ Արարատյան դաշտում։

Հեքիաթի սյուժեն խառն է. հիմնականում ներկայացված են ոսկե մազերով երեխաներ բերող փոքր քրոջ փորձությունները։

www.naregatsi.org

35. «ԳԶՐԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 355)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ II, № 9)։ Գրառումը սևագիր վիճակում է։ Գրված է առանց համարակալման, մեծադիր էջերի վրա. ձեռագիրը դժվարընթեռնելի է, գրված է համառոտագրությամբ, կան ջնջումներ։ Ձեռագրից պարզվում է, որ Տիգրան Նավասարդյանցի գրառումն է։ Բանահավաքը հեքիաթի ասացողի, տեղի, ժամանակի կամ որևէ այլ տեղեկություն չի թողել։ Լեզվից երևում է, որ գրի է առնված Վաղարշապատում, հավանաբար 1890-ից 1900-ական թթ.։ Իր հավաքած և իրեն ուղարկված նյութերը Նավասարդյանցը սովորաբար արտագրել և պատրաստել է տպագրության առանձին պրակներով։ Ինչպես երևում է սույն հեքիաթը Նավասարդյանցը չի հասցրել արտագրել և մնացել է սևագիր վիճակում։ Կետադրությունը գրեթե բացակայում է. չեն անջատված պարբերություններն ու երկխոսությունները։ Այդ բոլորն ուղղել և ճշտել ենք։

Հեքիաթի գրառման ձեռագրում վերնագրից վեր թվարկված են յոթ այլ հեքիաթների անուններ՝ 1. Միրան եղան հեքիաթը, 2. Գյաղա թաքավորի հեքիաթը, 3. Գզրարի հեքիաթը, 4. Թափագյոզի (ծիկլոպ) հեքիաթը, 5. Ոսկե ձկան հեքիաթը, 6. Օխտը տարվա մեռած թաքավորի տղի հեքիաթը, 7. Քյալօղլու հեքիաթը։ Հիշյալ անուններից Նավասարդյանցի արխիվի թղթերում ամբողջությամբ պահպանվել է «Գզրարի հեքիաթը» և «Թափագյոզի հեքիաթը» (տե՛ս ներկա հատորը), իսկ «Միրան եղան հեքիաթի» միայն կցկտուր նշումների սևագիրն է մնացել։

36. «ԹԱՓԱԳՅՈԶԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 360)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ II, № 9)։ Գրառումը սևագիր վիճակում է։ Գրված է մեծադիր էջերի վրա, համառոտագրությամբ, առանց համարակալման, ձեռագիրը դժվարընթեռնելի է, կան ջնջումներ։ Ձեռագրից դժվար է ստույգ որոշել, թե ում գրառումն է. հավանաբար Տ. Նավասարդյանցի, կամ նրա պատվերով գրված։ Բանահավաքը հեքիաթի ասացողի, տեղի, ժամանակի մասին տեղեկություն չի հաղորդում։ Բարբառից երևում է, որ Վաղարշապատի հեքիաթներից է։ Հավանաբար այս հեքիաթը Տ. Նավասարդյանցը գրի է առել կամ ստացել է ուրիշից 1890—1900 թվականներին։ Իր հավաքած և իրեն ուղարկված նյութերը Տ. Նավասարդյանցը սովորաբար արտագրել և պատրաստել է տպագրության առանձին պրակներով։ Ինչպես երևում է այս հեքիաթը Նավասարդյանցը չի հասցրել արտագրել և մնացել է սևագիր վիճակում։ Կան սրոշ ուղղումներ, որոնք ցույց են տալիս, որ բանահավաքը վերանայել է սկզբնական գրառումը։ Կետադրությունը չի նշանակված, չեն անջատված պարբերություններն ու երկխոսությունները։ Այդ բոլորն ուղղել և ճշտել ենք։

www.naregatsi.org

Թափագյոզի սյուժեն սույն հեքիաթի մեջ երկրորդական տեղ է գրավում, այն մի անցողիկ մոմենտ է։ Հեքիաթի սյուժետային կմախքը առանձին էպիզոդներից է կազմված, որոնք ծագում են այլևայլ հեքիաթներից և օրգանապես չեն կապված իրար։ Հեքիաթում հրաշապատում տարրը խառնվել է կենցաղային մոմենտի հետ և ստեղծել է որոշ աղճատում. թույլ է նաև ասացողի վարպետությունը, բայց մի շարք մոմենտներ հետաքրքրական ու ինքնատիպ են և քիչ են հանդիպում մյուս հեքիաթներում։

37. «ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԿԱ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 364)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ III, № 26)։ Գրված է մեծադիր թերթերի վրա, սևագիր է։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, կամ ով է ասացողը։ Լեզվից կարելի է ենթադրել, որ գրի է առնված Արարատյան դաշտավայրի բնակավայրերից մեկում։

Հեքիաթը «Ասլան-աղա» վիպական երգի յուրատեսակ տարբերակն է։ Ամեն ինչ փոխվել և հեքիաթային կոլորիտ է ստացել, բայց. բովանդակությունն ու դեպքերը նույնն են։

38. «ՋԻԳՅԱՐՈՎ ՔԻՐ»

(էջ 367)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ II, № 12)։ Հեքիաթը գրի է առնված Տ. Նավասարդյանցի կողմից, մեծադիր թերթերի վրա, որտեղից մի շարք հեքիաթներ արտագրված են և հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթների» պրակներում, իսկ մի մասն էլ, որոնց թվում և այս հեքիաթը, մնացել է սևագիր վիճակում, անտիպ։ Ասացողը անհայտ է, տեղեկություն չի տրված։ Ենթադրվում է, որ հեքիաթը գրի է առնվել 1876—80 թթ. ընթացքում։ Ինչպես Տ. Նավասարդյանցի մյուս նյութերը, հավանաբար Վաղարշապատում։

Հեքիաթի սյուժեն հավատարիմ և ազնիվ քրոջ մասին է, որին զրպարտում են, սակայն կարողանում է ամեն ինչ պարզել և փրկել եղբորը։ Հեքիաթն աչքի է ընկնում լեզվա-բարբառային առանձնահատկությունների հարաղատ պահպանմամբ և գեղարվեստական-արտահայտչական հարուստ ձևերով։

39. «ՄԱՐԴՈՒ ՈՒ ԿՆԿԱ ՍԵՐԸ ՈՒՐԻՇ ԹԱՎՈՒՐ ԲԱՆ Ա»

(էջ 373)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը հավանաբար 1876—1880-ական թթ., Վաղարշապատում։ Ասացողն անհայտ է։

www.naregatsi.org

Այս հեքիաթ-ավանդությունը ստեղծվել է արևմտահայության մեջ, որը երևվում է հեքիաթում տեղ գտած երգերից և նշված տեղանուններից, բայց տարածվել և շրջանառության մեջ է մտել այլ բնակավայրերում։

Սյուժեն՝ մարդու ու կնկա (նորապսակների) սիրո ու հավատարմության և փոխադարձ անձնազոհության մասին է։

40. «ԶՈԼԱԽ ԿՆԻԿ»

(էջ 375)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը 1876—1880 թթ. ընկած ժամանակամիջոցում, գուցե և առաջ, հավանաբար Վաղարշապատում, ումից՝ հայտնի չէ։

Այս հեքիաթը նույնպես գտնվում է անմշակ նյութերի մեջ։ Գրառման ձեռագրում կան մի շարք վրիպումներ, որոնք ուղղված են։ Սյուժեն շատ տարածված է, դա զրպարտված և անմեղ քրոջ հալածանքն է (տե՛ս սույն հրատարակության I հատոր, «Ոսկե քաքուլ տղի հեքիաթը», II հատոր՝ «Հարսներն ու տալը» և այլն)։ Այս հեքիաթը, սակայն, այլ կերպ է վերջանում՝ քրոջ ոտքերը չեն ողջանում, պակաս են նաև մի քանի այլ միջադեպեր։ Ընդհանուր առմամբ գործողությունը սեղմ է ներկայացված։

41. «ԱՍՏՈՒԾ ԳԺԻՆ ԷԼ Ա ՏԱԼԻ»

(էջ 378)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար 1876—80 թթ., Վաղարշապատում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը կենցաղային-երգիծական հեքիաթների շարքին է պատկանում։ Սյուժեն պատահականությունների, դիպվածի շնորհիվ՝ ճարպիկ մարդու, գժի արկածների ու հաղթանակի մասին է։ Այսպիսի հեքիաթները շատ տարածված են (տե՛ս, օրինակ, սույն հրատարակության I հատոր՝ «Թամբալ տղի հեքիաթը», II հատոր՝ «Իրեք աղպրտինք», «Գիժ աղպոր, խելոք աղպոր նաղլը» և այլն)։

42. «ԹԱՔԱՎՈՐՆ ՈՒ ԶՈՐԱՆԸ»

(էջ 381)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Գրի է առնված Երևանյան նահանգում, ստույգ տեղը չի նշված, հավանաբար 1883 թ., կամ դրանից առաջ։ Հեքիաթի վերնագրից ներքև փակագծում նշված է՝ «Թիֆլիսում-Հավլաբա-

www.naregatsi.org

րի մասնումը։ Դրանից չպետք է եզրակացնել, թե այնտեղ են կատարվել հեքիաթի դեպքերը, դուցե ասացողն այնտեղ է լսել հեքիաթը։

Հեքիաթի սյուժեն հնարագետ և ճարպիկ հասարակ մարդու մասին է, որը իր սրամիտ պատասխաններով հաղթում է թագավորին։

43. «ՊԻԾԱՆ ԿԱՄ ՊԻԾԻԿ»

(էջ 384)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը հավանաբար գրի է առնված 1883 թ. կամ ավելի շուտ։ Գրառման ստույգ տեղը հայտնի չէ, բայց նշված է՝ Արարատյան դաշտում։

Հեքիաթը կենցաղային-երգիծական բնույթ ունի։ Հասարակ մարդու ճարպկության ու հնարամտության շուրջն է հյուսված հեքիաթի սյուժեն, թե ինչպես նա հաղթում է ու պատժում կախարդ պառավին։

44. «ՓԸՓԸՔ, ԲԸՓԸՔ, ՖԸԼԸՔ»

(էջ 387)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1810 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Բանահավաքը որևէ ծանոթություն չի թողել, թե ով է ասացողը։

Այս առակատիպ. հեքիաթը կենցաղային-երգիծական բնույթ ունի, սյուժեն՝ հասարակ աշխատավոր մարդկանց հնարամտության և ճարպկության մասին է։

45. «ՍԿԼԻԿ ՈՒ ԲԱԿԼԻԿ»

(էջ 388)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար 1876—1880 թթ. Վաղարշապատում։ Ասացողն անհայտ է։

Կենցաղային-իրապատում հեքիաթ է, երգիծական բնույթի։ Սյուժեն հիմարամուսինների արկածների և նրանց ձախորդության մասին է։

46. «ԳԵԼԸ ՄՈՒԽՍԻ ԸԼՆԵԼՈՒ Ա ԷԹՈՒՄ»

(էջ 391)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար 1876—1880 թթ. Վաղարշապատում։ Ասացողն անհայտ է։

www.naregatsi.org

Սա կենդանական հեքիաթ է, որն անվանվում է նաև վեպիկ կամ առակ։ Հեքիաթային պատմելաձև ունի։ Սյուժեն՝ դայլի հիմարության շուրջն է, թե ինչպես խաբվում ու պատժվում է։

Նման առակներ շատ կան Ս. Հայկունու «Ժողովրդական առակներ և կենդանական վեպիկներ» ժողովածուում։

47. «ԱՂՎԵՍՆ ՈՒ ՋԱՂԱՑՊԱՆԸ

(էջ 393)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Ասացողն անհայտ է, գրի է առել հավանաբար Տիգրան Նավասարդյանցը 1876—1880 թթ. ընկած ժամանակամիջոցում, գուցե և առաջ։ Բանահավաքը որևէ տեղեկություն կամ ծանոթություն չի թողել։ Այս հեքիաթը ևս գտնվում է անմշակ նյութերի բաժնում։

Հեքիաթի սյուժեն հանդիպում է առակների և կենդանական վեպիկների մեջ (տե՛ս Ս. Հայկունի, «Ժողովրդական առակներ», 1907 թ.)։ Այս հեքիաթում սյուժեն յուրահատուկ զարգացում է ստացել. դեպքերը տարբերվում են, նոր գործող դեմք է վիշապը։ Ընդհանուր առմամբ այն տպավորությունն է ստացվում, թե հեքիաթը անավարտ է։ Մինչդեռ այդպես չէ, որովհետև հեքիաթի նպատակն է՝ ցույց տալ երախտամոռության։

48. «ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 395)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը 1876—1880 թթ., Վաղարշապատում։ Ասացողի մասին տեղեկություն չկա։

Մարդագելի մասին հեքիաթները տարածված են, շատ դեպքերում դրանք կոչվում են Թափագյոզ։ Մարդագելը սովորաբար հանդես է բերվում հրեշակերպ պառավ կնոջ կերպարանքով, անպայման կույր, դաժան ու ահարկու, բայց միշտ խաբվում ու պատժվում է։ Տ. Նավասարդյանցը մարդագելի մասին երեք հեքիաթ է գրի առել։ Սույն տարբերակը ամենից ամբողջականն է, որտեղ շեշտը դրված է մարդագելին պատժող ճարպիկ ու հնարագետ փոքր աղջկա՝ Քյանդեքի արկածների վրա։ Մյուս երկու տարբերակները սխեմատիկ են՝ զրուցատիպ, և դրված են հավելվածի բաժնում։

www.naregatsi.org

ՀԱՎԵԼՎԱԾ

1. «ԱՆԳԻՆ ԲԻԼԲՈՒԼ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՆՈՒՇԱԿ»

(էջ 401)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 217—225)։ Գրաման ձեռագիրը չի պահպանվել։ Այս հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Վերնագրի տակ նշված է՝ «Վաղարշապատի և Մոկաց խառն բարբառով»։ Էջատակին գրված է հետևյալ ծանոթագրությունը. «Պատմած է Մկրտիչ-Կուլան Շահրիմանյան. սա բնիկ Մոկացի քուրդ եղած է, երկար տարի Վաղարշապատ մնացած՝ մկրտված է. լեզուն ևս խառնած լինելով, նույնությամբ գրի առի»։ Իրոք, լեզուն ներկայացնում է տարբեր բարբառների խառնուրդ։

Հեքիաթը կախարդական բնույթի է. սյուժեն իմաստուն բիլբուլի հնարամտությունն է, թե ինչպես փրկում է տիրուհուն չար պառավի խորամանկությունից։ Լրացուցիչ միջադեպ է բիլբուլի պատմությունը (հնարամիտ և աղնիվ կնոջ փրկվելը հետապնդումից)։

2. «ՇԵԽ-ՍԱՏԻ»

(էջ 411)

Տպագրվում է «Էմինյան ժողովածուի» IV գրքից (էջ 225—229)։ Գրաման ձեռագիրը չի պահպանվել։ Հեքիաթը գրի է առել և հրատարակել Ս. Հայկունին։ Վերնագրի տակ գրված է. «Վաղարշապատու և Մոկաց բարբառով»։ Հեքիաթը պատմել է մոկացի քուրդ Մկրտիչ-Կուլան Շահրիմանյան, որի մասին կենսագրական տեղեկություններ տե՛ս սույն հատորի «Անգին բիլբուլ և տիկին Մանուշակ» (Հավելված, № 1) հեքիաթի ծանոթագրության մեջ։

Հեքիաթի սյուժեն կնոջ անհավատարմության թեման է։ Այս տիպի հեքիաթներում անհավատարմությանը զուգահեռ տրվում է նաև հավատարիմ կնոջ վարքագիծը։ Սույն հեքիաթում բացակայում է այդ զուգահեռը և անհավատարիմ կնոջը հակադրված է ավելի վատթարը։ Հեքիաթը հաշտվողական վերջաբան ունի, որը հետևանք է աղավաղման ու փոփոխման։

3. «ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԵՐԸ»

(էջ 417)

Տպագրված է «Էմինյան ժողովածուի» Բ հատորում (էջ 315)։ Հեքիաթը գրի է առել Ս. Հայկունին։ Վերնագրի տակ, որը բանահավաքի կողմից է դրված, փակագծում գրված է. «Վաղարշապատի Գրամբա գյուղի բարբառով»։ Նույն էջատակին դարձյալ բանահավաքի կողմից նշված է. «Սույն հեքիաթը թե Վաղարշապատ և թե այլ գյուղեր շատ ընդարձակ և բարոյալից կպատմեն, մանավանդ ի Կուլաբ գյուղ, ուր գրի առած եմ «Համզա փահլիվան» անունով»։ Այլ տեղեկություններ չկան։ Անհայտ է ասացողը։

Այս հեքիաթի սյուժեն կնոջ հավատարմության մասին է, որը շատ տարածված է։ Հեքիաթի բովանդակությունը աղքատ է, լեզուն ու պատմելաձևը՝ ճապաղ։

www.naregatsi.org

4. «ԱՍՏՂ ՋՈԿՈՂ, ՀՈՏ ՔԱՇՈՂ, ՂՈՋԱՂ, ԼՈՂՆՈՐԴ»

(էջ 421)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատում։ Սուլյգ չի կարելի ասել, թե ով է ասացողը և երբ է գրի առնված, որովհետև բանահավաքը որևէ տեղեկություն կամ ծանոթություն չի թողել։

Սյուժեն ևս հանդիպում է՝ տարբեր հեքիաթների հետ զուգակցված։ Հեքիաթը սխեմատիկ է ներկայացված. կամ ասացողն է վատ պատմել, կամ բանահավաքն է աղճատել։ Դեպքերն ու գործողությունները աղքատ են։ Կարծես անավարտ է, չկա տրադիցիոն վերջաբանը։

5. «ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ»

(էջ 424)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Կարող է գրի առնված լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն կնոջ հավատարմության թեմայի շուրջն է, որ հանդիպում է նաև այլ հեքիաթներում (տե՛ս «Հալալը չհարամող կնիկը», II հատոր, էջ 286)։

6. «ՄԱՐԴԻՍ ՃԱԿԱՏԻՆ ԻՆՉ ԳՐԱԾ Է՝ ԷՆՆՆՑ ԷԼ ԿԸԼՆԻ»

(էջ 427)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Անհայտ են գրառողը և ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Սույն հեքիաթի սյուժեն նախախնամության սահմանածը անխախտ լինելու մասին է, որի շուրջը հյուսված են բազմաթիվ այլ հեքիաթներ, ինչպես օրինակ՝ «Մարդիս ճակատի գրածը չի ջնջվի» հեքիաթը (տե՛ս II հատոր, էջ՝ 310), որը սույն հեքիաթի հաջող տարբերակն է, ավելի ամբողջական ու բազմակողմանի։

7. «ԱԿՆ ՈՒ ՄԱՐԴԱՐԻՏ»

(էջ 430)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չեն գրառողը և ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթը պատկանում է կախարդական այն հեքիաթների շարքին, որոնց

www.naregatsi.org

սյուժեն պատվում է հրաշագործ զորությամբ առարկաներ ու հարստություն ձեռք բերելու և կերպարանափոխության շուրջը։ Այս հեքիաթը թեև վարպետությամբ չի պատմված, բայց պահպանում է վաղեմության հետքերը։

8. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿՈՐՉԻ»

(էջ 435)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ.։

Սույն հեքիաթում զուգակցված են երկու սյուժե. մեկը խորթ մոր հալածանքն է և բարի աղջկան տրված շնորհները կախարդ պառավի կողմից, իսկ մյուսը՝ նույն աղջկան հովանավորող կովի օգնության թեման՝ պարգևած ոսկե մաշիկների և դրանց հետ կապված արկածներով։

9. «ՓԱՐՇԵՎԱՆԳԸ ՈՒ ՆՐԱ ԱՐԱՄ ՀՐԱՇՔՆԵՐԸ»

(էջ 442)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն վերաբերում է կախարդական արարածների զորությամբ անմեղ մարդկանց աղատելու և պաշտպանելու թեմային։ Հեքիաթը, երևում է, որ հին ծագում ունի, բայց լավ չի պատմված։

10. «ՔՈՒՅՐԸ ՋԻԳՅԱՐՈՎ ԿԸԼԻ»

(էջ 448)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Սյուժեն արդարին զրպարտելու և վերջ ի վերջո խարդախին պատժելու մասին է, որը հանդիպում է շատ հեքիաթներում։ Մեծ մասամբ խարդախության զոհը ամուսնացած տղան է, իսկ խարդախությունը բացողը նրա կինը. այս հեքիաթում որպես այդպիսին հանդես է գալիս քույրը։

11. «ՄԻ ՀԱՅԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 452)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի

www.naregatsi.org

չէ, թե ով է գրի առել այս հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Գրառումը ենթադրվում է 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն արգելված տեղ գնալու կամ հոր պատվիրանը խախտող որդու արկածներն են, բազմաթիվ փորձություններն ու վերջ ի վերջո հաղթանակի հասնելը։ Սույն հեքիաթը «Ավչու տղի հեքիաթը» (I հատոր, էջ 323) և «Ավչի-օղլի» (II հատոր, էջ 534) հեքիաթների տարբերակն է, համեմատաբար ավելի սխեմատիկ և անհաջող պատմած։ Հեքիաթի վերնագիրը անիմաստ է և կապ չունի բովանդակության հետ։

12. «ՀԱՋԻ ԱՀՄԱԴ»

(էջ 457)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է և ասացողը։ Հավանաբար գրի է առնվել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն գանձերի հայտնաբերման հետ է առնչվում, բայց ամբողջական զարգացում չունի, կցկտուր է։ Երևում է, որ հեքիաթը հնագույն դեպքերի արձագանք է, բայց անաղարտորեն չի պահպանվել։

13. «ՍԻՊՏԱԿ ԶԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 461)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն երախտագիտության թեման է, մի հանգամանք, որ հանդիպում է հեքիաթների մեծ մասում։

14. «ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԵՔ ՏՂԵՐՔԸ»

(էջ 463)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 20)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Այս հեքիաթի սյուժեն կրտսեր թագավորազնի արկածներն են՝ հոր խընդրանքը կատարելու և դևին պատուհասելու համար։ Նման է «Հազարան բիլբուլը» կամ «Անմահական խնձոր» հեքիաթներին, բայց դեպքերի այլ դասավորությամբ և շեղումներով։

www.naregatsi.org

15. «ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂԸ ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՆԱ»

(էջ 469)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն կուրացած հոր աչքերին դեղ դնող որդու արկածներն են և դրա հետ կապված ոսկե ձկան թեման։ Այս առումով սույն հեքիաթը նման է «Ոսկե ձուկը» հեքիաթին (II հատոր, էջ 39), բայց կան մի շարք տարբերություններ ու շեղումներ։ Հեքիաթում շեշտը դրված է երախտահատույց լինելու մոմենտի վրա։

16. «ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆ»

(էջ 474)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի առնողը անհայտ է, ձեռագիրը թեև նման է Նավասարդյանցի ձեռագրին, բայց նրանը չէ։ Հայտնի չէ նույնպես ասացողը։ Կարելի է ենթադրել, որ գրի է առնված ոչ շուտ, քան 1876—1880 թթ.։

Հեքիաթի սյուժեն անհավատարմության մասին է, որը շատ տարածված է։ Գրի առնողը չի հետևել լեզվի և պատմելաձևի անաղարտության։

17. «ԽՈՍՔ ԾԱԽՈՂ»

(էջ 480)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Կարող է գրառված լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն հոր պատվիրաններին հավատարիմ մնացած տղայի հաջողություններն են, որը զուգակցված է երախտագիտությամբ հարստանալու սյուժեի հետ։ Հիշեցնում է «Հոր տված իրեք խրատը» հեքիաթը (II հատոր, էջ 465)։

18. «ԱՆՏԵՐ ԹԱՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

(էջ 484)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի հաղորդում, թե ով է ասացողը։

Հեքիաթի սյուժեն հասարակ մարդու հնարագիտության և ճարպկության մասին է, որը սակայն աղքատ ու սխեմատիկ լուծում է ստացել։

www.naregatsi.org

19. «ՀԱՎԱՔԻ ԳՅՈՉԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 486)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի հաղորդում, թե ով է ասացողը։

Հեքիաթի սյուժեն իրարից բաժանված հոր և որդու հանդիպման ու ճանաչելու մասին է, որը տրված է սխեմատիկ ու աղքատ։

20. «ՏՌԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 488)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։ Բանահավաքը տեղեկություն չի հաղորդում ասացողի մասին։

Հեքիաթը կենցաղային-երգիծական բնույթ ունի. սյուժեն անբան մարդու վերափոխման մասին է։ Հեքիաթը ամբողջական չէ, կցկտուր ու սխեմատիկ է։

21. «ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ ՈՐԴԻՔԸ»

(էջ 491)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հավանաբար գրի առնված կարող է լինել 1883 թ., կամ ավելի շուտ։ Գրառման ստույգ վայրը հայտնի չէ, բայց նշված է՝ Երևանյան նահանգում։

Հեքիաթի սյուժեն խառն է և դեպքերը անկապ, կցկտուր։

22. «ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԵՔ ՈՐԴԻՔԸ»

(էջ 493)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը հավանաբար գրի է առնված 1883 թ., կամ դրանից առաջ։ Գրառման ստույգ վայրը հայտնի չէ, բայց նշված է՝ Երևանյան նահանգում։

Սյուժեն թագավորի երեք որդիներից փոքրի քաջագործության մասին է։ Հեքիաթը սխեմատիկ ու աղքատ է։

www.naregatsi.org

23. «ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԵՔ ՈՐԴԻՔԸ»

(էջ 496)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հավանաբար հեքիաթը գրի է առնվել 1883 թ. կամ ավելի շուտ։ Գրառման ստույգ վայրը հայտնի չէ, բայց նշված է՝ Երևանյան նահանգում։

Հեքիաթի սյուժեն խառն է. այստեղ ներկայացված է թագավորի երեք որդիների կռիվը հրեշի դեմ. փոքր տղայի արկածները և հոր պատվիրանը կատարելով՝ հարստանալը։

24. «ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ՀՈՎԼՈՎԸ»

(էջ 500)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 1)։ Հայտնի չէ, թե ով է հեքիաթը գրի առնողը, անհայտ է նաև ասացողը։ Հավանաբար հեքիաթը գրի է առնվել 1883 թ., կամ ավելի շուտ։ Գրառման ստույգ վայրը հայտնի չէ, բայց նշված է՝ Երևանյան նահանգում։

Հեքիաթատիպ զրույց է՝ հասարակ մարդու ճարպկության և հնարագիտության մասին, սխեմատիկ ու աղքատ։

25. «ԷՐԿՈՒ ԳԻԺ ԱԽՊԵՐՏԻՆՔ»

(էջ 501)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը։ Ասացողը, տեղը, ժամանակը ստույգ հայտնի չեն. հավանաբար Վաղարշապատում կամ նրա շրջակա գյուղերում է գրի առնվել, 1876—1880 թթ. ընկած ժամանակամիջոցում, գուցե և առաջ։ Հեքիաթը հանրածանոթ գիժ եղբայրների սյուժեն է, բայց այստեղ կարծես սյուժեն չի ամբողջացել, թերի է մնացել։ Սովորաբար նման հեքիաթներում գիժ եղբայրները պատահաբար վերջում հաջողության են հասնում։ Ընդհանուր առմամբ սխեմատիկ է։

26. «ԶՈՐԱՆԻ ՏՂԵՆ»

(էջ 503)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հավանաբար Նավասարդյանցն է գրի առել Վաղարշապատում, բայց ասացողը, ստույգ ժամանակը հայտնի չեն (հնարավոր է, որ գրի է առնված 1876—80 թթ.)։

www.naregatsi.org

Հեքիաթը ֆրագմենտ է. թվում է, թե սյուժեն ավարտված է. սովորաբար այս կարգի հեքիաթներում հերոսը բնության գաղտնիքներին տիրապետելով, շատ փորձություններ հաղթահարելուց հետո պատժում է նաև կախարդին և ազատվում։ Հետաքրքրական է այստեղ սկիզբը։

27. «ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 505)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթի սյուժեն վերաբերում է մարդագելությանը, բայց այստեղ շեշտված է կերպարանափոխության մոտիվը։ Ի տարբերություն նախորդ հեքիաթների, որտեղ մարդագելը կույր պառավ է, այստեղ գայլի մորթի հագած սիրուն աղջիկ է, որը ազատվում է կախարդանքից և մարդկային կերպարանք ստանում։ Այս հեքիաթը սյուժետային զարգացում և որոշակի նպատակադրում չունի։ Մարդագելի մասին հեքիաթի ամբողջական տարբերակը տե՛ս այս հատորի հիմնական բնագրերի բաժնում (էջ 395)։

28. «ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 506)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1-ին № 2)։ Գրի է առել հավանաբար Տ. Նավասարդյանցը 1876—1880 թթ. Վաղարշապատում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը Մարդագելի մասին պատմվող հեքիաթների մի տարբերակ է, շատ սխեմատիկ և աղքատ։ Այստեղ ցույց է տրվում Մարդագելի ագահությունը և դաժանությունը, որի պատճառով էլ նա պատժվում ու կործանվում է։ Ավելի ամբողջական տարբերակը տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի բաժնում (էջ 395)։

29. «ԱՂՔԱՏ ՔԱՐՏԱՇ»

(էջ 508)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Այս հեքիաթը առակատիպ բարոյախոսական զրույց է, որտեղ դատապարտվում է ագահությունն ու ընչասիրությունը։ Հեքիաթում հանդես եկող աստվածը և նրա հրեշտակը այլաբանական միջոց են հիշված գաղափարն արտահայտելու համար։

www.naregatsi.org

30. «ՆԱԽԱՆՁԸ ԼԱՎ ԲԱՆ ՉԻ»

(էջ 509)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Կարող է գրի առնված լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթը կենցաղային-բարոյախոսական թեքում ունի և ուղղված է նախանձության դեմ։ Սյուժեն սխեմատիկ ու աղքատ է։

31. «ՀՈՐ ՎՐԱ ՆՍՏԵՑ, ՄՈՐԸ ՀԱԳԱՎ, ՄԱՄԸ ԽՄԵՑ»

(էջ 510)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն խառն է։ Հարստություն փնտրող հնարագետ տղայի արկածներն է ներկայացվում, ապա ընդմիջարկվում է հանելուկատիպ առեղծվածով, ո՞վ սաղացրեց մեռած մարդուն և այլն։ Հեքիաթը պահպանել է նախնական շըրջանի մտածողության հետքերը։

32. «ՇԱՆ ՋԻԳՑԱՐ»

(էջ 513)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Սույն հեքիաթը ավելի շուտ առակատիպ զրույց է՝ բարոյախոսական բովանդակությամբ։ Սյուժեն վատ ընկերների վերաբերմունքի մասին է, թե ինչպես նեղ օրին հեռանում են, իսկ լավ օրին շողոքորթում։ Կան շատ տարբերակներ։

33. «ՄԱՐԴԻՍ ՓՈՂԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՏՎՈՒՄ»

(էջ 515)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Հեքիաթի սյուժեն խառն է. այնտեղ տեղ են գտել տարբեր միջադեպեր մի շարք հեքիաթներից։ Սկզբում առակատիպ պատմվածք է հարուստ տղայի անհավատարիմ ընկերների մասին, այնուհետև զուգակցվում է կախարդական իրերի օգտագործման միջադեպը և վերջում թագավորի աղջկա կողմից դրանց հափշտակումն ու պատժվելը։

www.naregatsi.org

34. ՔԱՐՎԱՆՍԱՐԱ»

(էջ 520)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ, թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Սյուժեն՝ չարության կամ բարության փոխհատուցման թեման է, որը, սակայն, շատ սխեմատիկ լուծում է ստացել այս հեքիաթում։

35. «ԾՈՒՅԼ ՄԱՐԴԸ»

(էջ 522)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հայտնի չէ թե ով է գրի առել հեքիաթը, անհայտ է նաև ասացողը։ Հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում։

Երգիծական-կենցաղային հեքիաթ է, որի սյուժեն ծույլ, անբան մարդու և խորամանկ, հնարագետ կնոջ փոխհարաբերությունն է։

36. «ԷՍ ԷԼ ՔԵԶ ՀԵՔԻԱԹ»

(էջ 524)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, հավանաբար Վաղարշապատում, 1876—1880 թթ. ընթացքում։

Բանահավաքը տեղեկություն չի հաղորդում ասացողի մասին։

Սա մանկական-երգիծական հեքիաթի մի նմուշ է, որը որպես կանոն, սովորաբար ասվում է ամեն մի հեքիաթի սկզբում։

37. «ԵՐԵՔ ՔՐՈՋ ՀԵՔԻԱԹԸ»

(էջ 525)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ III, № 22)։ Գրառման ընագիրը թերի է, մի տետր է, որի սկզբի թերթերը չկան։ Ոչ մի ծանոթություն չկա, թե ով է գրի առնողը, կամ ասացողը։ Հավանաբար գրի է առնված Արարատյան դաշտի բնակավայրերից մեկում և ուղարկվել է Տ. Նավասարդյանցին 1876—1900 թթ. ընթացքում։ Հեքիաթի գրառման ընագիրը սեպագիր վիճակում է։

Հեքիաթի սյուժեն տարածված է. դա երեք քույրերից փոքրի դեմ մյուս քույրերի դավադրությունն է, նրա որդիների արկածները և հաղթանակը։ Այս հեքիաթը ունի բազմաթիվ տարբերակներ։

www.naregatsi.org

38. «ՈՆՆԵՐԸ ԿՏՐԱՏ ԿՆԻԳԸ»

(էջ 531)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ II, № 12)։ Հեքիաթը գրի է առնված Տ. Նավասարդյանցի կողմից մեծադիր թղթերի վրա, որտեղից մի շարք հեքիաթներ արտագրված են և տպագրված իր հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներիս» պրակներում, իսկ մի մասն էլ, որոնց թվում և այս հեքիաթը, մնացել է սևագիր վիճակում, անտիպ։ Աստցողը անհայտ է, տեղեկություն չի տրված. հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1880 թթ. ընթացքում, ինչպես Տ. Նավասարդյանցի հավաքած մյուս նյութերը, հավանաբար Վաղարշապատում։

Հեքիաթն անավարտ է. սյուժեն տալի կողմից զրպարտված քրոջ փորձություններին մասին է։ Հեքիաթում լավ են պահպանված լեզվա-բարբառային առանձնահատկությունները։

39. «ՇԱՀ-ԱՊԱՍԻ ՆԱՂԼԻՑ»

(էջ 533)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ III, № 25)։ Հեքիաթը կիսավարտ է։ Անհայտ է և գրի առնողը և ասացողը։ Հավանաբար Տ. Նավասարդյանցին ուղարկված նյութերից է, որոնք գրի են առնված 1876—1900 թթ. ընթացքում։ Թեև բարբառը խառն է, բայց երևում է Արարատյան բնակավայրերում է գրի առնված։ Բնագիրը սևագիր վիճակում է։

Հեքիաթի սյուժեն Շահ-Աբասի հետ է կապված. թե ինչպես նա դերվիշի նման շրջում էր և կատարում այն, ինչ ցանկանում էր։ Զուգակցված են նաև հեքիաթային միջադեպեր։ Հեքիաթի լեզուն՝ բարբառը խառն է։ Թողել ենք հնչյունական և քերականական տարաբնույթությունները։

40. «ԱՆԶԳԱՄ ՀԱՐՍԸ»

(էջ 538)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ II, № 21)։ Ձեռագրից կարելի է ենթադրել, որ այս հեքիաթը գրի է առել Վաղարշապատցի Գ. Աղաջանյանը, հավանաբար 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Հեքիաթի ամբողջական տեքստը չի պահպանվել, գրառումը անավարտ է. այս հատվածը դնում ենք որպես նմուշ այս տիպի սյուժեի սկսվածքի համար։

Ռ Ա Ռ Ա Ր Ա Ն

(էջ 583)

Բառարանի մեջ տրված են այս հատորում հանդիպող բարբառային դժվար հասկանալի բառերի, ոճերի ու արտահայտությունների, ինչպես նաև օտար և փոխառյալ բառերի բացատրությունները։

www.naregatsi.org

Բառերի ու դարձվածքների բացատրության ժամանակ նկատի է առնված սույն հատորի տեքստերում պարունակող իմաստն ու առումը։ Եթե նույն բառը կամ տեքը հեքիաթներում ունի մի քանի առումներ ու իմաստային տարբերություններ, ապա այդ բառի բացատրության տակ տրվում են տարբեր իմաստները։

Բառերը, տեքերն ու դարձվածքները բառարանում տրված են այբբենական կարգով, հաշվի առնելով պատումների մեջ պահպանված հնչումն ու առաջադրությունը։ Երբեմն բացատրվող բառին կից տրվում է ավելի բառի հնչյունափոխված կամ առաջադրված այլ ձևը։

Բառարանում օգտագործված են նաև հատորի էջատակերին դրված բանահավաքների բացատրությունները, հարկ եղած դեպքում ճշտելով ու լրացնելով դրանք։

Սույն բառարանը պատրաստելիս օգտագործել ենք Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912 թ.), Տիգրան Նավասարդյանցի «Բառգիրք արարատյան բարբառի» (Տփխիս, 1903 թ.), Հրաչյա Աճառյանի «Հայերեն գավառական բառարան» (Թիֆլիս, 1913 թ.), Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» (Երևան, 1944 թ.) աշխատությունները, ինչպես և տաճկերենից-հայերեն, պարսկերենից-հայերեն և մի շարք այլ բառարաններ ու բառացանկեր։

ՑԱՆԿԵՐ

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

(էջ 599)

Հատուկ անունների ցանկը ընդգրկում է ներկա հրատարակության I, II և III հատորները, ըստ որում անուններն ու տեղանունները տրված են առանձին-առանձին։

Անունների ցանկում ներկայացված են հեքիաթներում հիշվող պատմական նշանավոր դեմքերը, սովորական անձնանունները, հեքիաթային-առասպելական արարածների, կենդանիների, իրերի, գործիքների անունները, ինչպես նաև որպես հեքիաթների հերոս հանդես եկող սովորական կենդանիների, առարկաների, բույսերի, իրերի, գործիքների անվանումները և մարդկանց հատկանիշները բնութագրող մականուններն ու ածականները։

Տեղանունների ցանկը ընդգրկում է հեքիաթներում տեղ գտած պատմական ու հեքիաթային-առասպելական վայրերի անուններն ու անվանումները։

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

(էջ 609)

Առարկայական ցանկը պարունակում է I, II և III հատորների հեքիաթներում հանդիպող առարկաները, կենդանիները, բույսերը, բնության, առասպելական

www.naregatsi.org

և հասարակական երևույթները, տնտեսական, կենցաղային, կրոնական և այլ հասկացություններն ու ըմբռնումները։

Առարկայական ցանկում նույն բառի տառադարձված և հնչյունափոխված ձևերը տրված են մի տեղ, իսկ նույն իմաստն արտահայտող տարբեր բառերի համար կատարվում է համապատասխան հղում։

Հատուկ անունների և առարկայական ցանկերում բառերը տրվում են այբբենական կարգով, գիմացը հռոմեական թվանշանով համարակալելով համապատասխան հատորը, իսկ արաբական թվանշանով՝ էջերը։

Հատուկ անունների և առարկայական ցանկերի պատրաստման աշխատանքին մասնակցել է Ալվարդ Ղազյանը։

www.naregatsi.org

www.naregatsi.org

Frontispiece

www.naregatsi.org

www.naregatsi.org

ԲԱՌԱՐԱՆ[1]

Ա

Ազ—*քիչ։*
Ազատվել—*ծնել, ծննդաբերել։*
Ազի—*մայր, մայրիկ։*
Աբախելոմ—*խելոքների հայր, ամենախելոք։*
Ալեի-մալեի—*եղած-չեղածը, ընդամենը։*
Ալպեալ (ալբիալ)—*խոպուն։*
Ալպեալը—*տե՛ս ալպեալ։*
Ախիրաթտա—*հար-հավիտյան։*
Ախտ անել—*երդվել, ուխտել։*
Ածել—*1. լցնել, 2. նվագել։*
Ակոլել—*քանդել։*
Աղամ—*առաջ, առջևի կողմը։*
Աղբուր (յաղուր)—*թանկարժեք քար։*
Աղու—*թույն։*
Աճալ (աշալ)—*վերջ, վախճան, օրհաս։*
Աճրդ—*հեճուկ, զայրույթ։*
Աճրճ-մաճրճ—*թզուկ։*
Ամակ—*երախտիք։*
Ամպախ-զամպախ—*հիմար-հիմար, անմիտ, վայրիվերս։*
Այամ—*ժամանակ։*
Անգան—*անժամանակ, ուշ։*
Անեղ—*աղեղ։*
Անծուխ—*ածուխ, փայտածուխ։*
Աշել—*նայել, տեսնել։*
Աշխանա—*ճաշարան։*
Աշտ—*1. արջառ, 2. բանալի։*
Աշխ—*դարակ, բաժին։*
Ապրիշմ (ապրեշմ)—*մետաքս։*
Ապրոշ—*ոգեղ, այլանդակ։*
Առարկա—*փխբ. զրույց, պատմություն։*
Առափատա—*լավաշ հաց թխելու գործիք, բաղադ, տեփ։*
Առբղ—*նիհար։*
Առիվ—*առատաղ։*
Ասկեր (ասկար)—*զինվոր։*
Ասպաղ (ասպաթ)—*զենք։*
Ավ—*որս։*
Ավալ—*առաջ, նախկին, հին։*
Ավլատ—*զավակ։*
Ավղուշ—*1. որս, 2. թռչնորսություն։*
Ապատ—*աչյուծ։*
Ատաթ (ադաթ)—*սովորույթ, սովորություն։*

---

1 *Բառարանի վերաբերյալ բացատրական տեղեկությունները տե՛ս Մատենագրությունների մեջ (էջ 577)։*

www.naregatsi.org

Ատալեր—արդարադատ, արդարություն։
Ատե (ադե)—մայր, մայրիկ։
Ատեժ (էտաժ)—հարկ։
Աբխայիե—հանգիստ, ապահով։
Ափաշկարա—բացահայտ, բոլորին ի տես։
Ափսոսել—հմայել, կախարդել։
Աֆարիմ (աֆարիմ)—կեցցես, ապրես։

Բ

Բազար—շուկա։
Բազրանդ—ապարանշան, թևին կապելու նշան։
Բազրկյան—տե՛ս բեզրգյան։
Բարմիշ ըլնել—1. անհետանալ, կորչել, 2. սուզվել, խորտակվել։
Բալբալա—ցավ, հոգս, վնաս, դժբախտություն։
Բալկոն—պատշգամբ։
Բանա ըլնել—1. ապասել, դանդաղել. 2. մնալ, կապվել-մնալ։
Բաշտան—պես, անմիջապես, միաժամանակ։
Բատամ (բադամ)—նուշ։
Բարաֆա—լիություն, առատություն։
Բարբշել (բարիշել)—հաշտվել, համաձայնել։
Բարտան—մեծ պարկ, շվալ։
Բրուկ—փետուր։
Բեզրգյան—վաճառական։
Բեէնթիպար—ապերախտ, անհավատարիմ։
Բելու անել—հայտնի դառնալ, որոշվել։
Բեյրի—պարապ, անգործ։
Բեշրֆյարթմա—օրորոցախազ, օրորոցում նշան դնելը՝ ծնողների փոխադարձ համաձայնությունը իրենց երեխաներին՝ չափահաս դարձնելուց հետո, իրար հետ ամուսնացնելու մասին։
Բզդզդ—կճուճ։
Բզեբուլ (բբմբուլ)—փետուր։
Բիլեբ—տոմս։
Բին—1. ապօրինի երեխա, 2. փխբ. ճարպիկ։
Բիշիոր—տես՝ բին։
Բիրատի (բիրեսի)—բոլորը, միանգամից։
Բիրդան (բիրտեն)—հանկարծ։
Բիրյան—կերակրի տեսակ (յախնի)։
Բլուր—ափսե։
Բլուլ—սրինգ։
Բխով—կապանք (ոտների)։
Բխովել—կապանք դնել, կապել, կաշկանդել։
Բնամ գալ—1. ծագել, առաջանալ, աճել, 2. հրապարակ գալ։
Բոդնոց—սկուտեղ։
Բոզմիշ (փոզմիշ) ըլնել—չկայանալ, չհաջողվել, խանգարվել։
Բոլբա տալ—թրև գալ, թափառել։
Բոխ—դառնահամ բույս, ժախ։
Բոնձ—կոտրած ամանի մաս։
Բոշ—դատարկ, ունայն, թույլ։
Բրախ տալ—աղաղ արձակել։
Բուդ կապել—կերակրել, գիրացնել, բռել։
Բուբա—սիրահար, պաշտպան, ապավեն։
Բուբուլկա—շիշ։
Բուդդա-բիբի—ցորենի ոջիլ։
Բուսուն պանել, Բուսուն ֆաշել—ծածուկ մեկին հետևվել դարան մտնել, հսկել, հետապնդել։
Բուտ (բուդ)—ազդր։

www.naregatsi.org

Գ

Գախ—ժամանակ։
Գեյիմ (գեյմ)—կերպարանք։
Գեստ—զգեստ։
Գրժկնալ—բիզ-բիզ կանգնել։
Գյամի—նավ, նավակ։
Գյոզալ—սիրուն, գեղեցիկ։
Գյոլ—լճակ։
Գյուլաշ—ըմբշամարտ, կռիվ։
Գյուլլա—գնդակ (հրացանի)։
Գոբեցուկ—1. կեղտոտ, վերքոտ, 2. բորբոտ։
Գուլ—բութ։

Դ

Դադրած—հոգնած։
Դալալ—մունետիկ։
Դախտա—եկամուտ։
Դակենակ—գավազան։
Դամենչա—տես՝ թափանչա։
Դայր—թռչուն։
Դանգ անել—ձանձրացնել, հոգնեցնել։
Դանկ—1. ծանրության շատ փոքր չափ, 2. հակ։
Դապաղա (թաբաղա)—թղթի թերթ։
Դաստա—խումբ, փունջ։
Դավի—վնաս, կռիվ։
Դար—բարձունք, բլուր։
Դարաղան—կախաղան։
Դարդ ու բալա—վիշտ, դժբախտություն, հոգս։
Դարվազ—դարպաս։
Դարտ (դարդ)—վիշտ։
Դարտավարամ—վշտամոլոր, վշտաբեկ։
Դարֆ—փորձանք։
Դաֆինա—թմբկահար։
Դեղել—թունավորել։
Դրոլիկ—1. ցանքս, 2. եկամուտ, 3. բանջարանոց։
Դրպ (դբբ)—1. զարկ, հարված, 2. անգամ։
Դիզկին (դուզգուն)—1. ուղիղ, հարթ, 2. ճշմարիտ, հաստատ։
Դին—կողմ։
Դինչ—հանգիստ, անդորր։
Դինսրզ—անհավատ, անսկզբունք։
Դիվան—դատ, դատաստան։
Դյուշման (դուշման)—թշնամի, հակառակորդ։
Դոխտուր—բժիշկ։
Դովլաթ-դուշ—բառացի՝ հարստության թռչուն։
Դոր—հերթ։
Դուզ—1. ուղիղ, ճշմարիտ, 2. հարթ։
Դուզկյան—հարթ, արձակ։
Դուքսախխանա—բանտ, արգելանոց։
Դուման—մեգ, մշուշ, ամպ։
Դուռում—պատառ։
Դուրգալ (դուրգար)—հյուսն։
Դուրպին—հեռադիտակ։
Դուքան—խանութ։
Դուքանտար—խանութպան։

Ե

Եբիմ—որբ։
Եղել—շոշափել, քսել։
Եմակ—ուտելիք։
Եսիր—գերի։
Երմիշ բլել—քայլել, առաջ գնալ։

www.naregatsi.org

Զ

Զաղա—*քարանձավ։*
Զանկու—*սպասնդակ։*
Զանկուլամիշ անել — *սպասնդակել, խթել։*
Զապիսկա—*գրություն։*
Զարբեն—*բացի։*
Զարկել—*խայթել, խփել։*
Զենաֆլու—*փափկակյաց կին։*
Զենկուֆ—*ձիու սպասնդակներ։*
Զերզամպի—*ներքնատուն, նկուղ։*
Զբռ—*1. կոպիտ, անշնորհք, 2. սաստիկ։*
Զիան—*վնաս։*
Զիրպա-զիրպա—*կտոր-կտոր։*
Զեճիլ—*շղթա։*
Զոլ—*շիրտ։*
Զողալ—*երկար փայտ։*
Զոռ—*ծանր, ուժեղ։*
Զուլում—*1. աղետ, արհավիրք, 2. խիստ, սոսկալի։*

Է

Էլ—*ցեղ, տոհմ, ժողովուրդ։*
Էնբիպար—*վարկ, երախտիք, հավատարմություն։*
Էշխ—*սեր, եռանդ, փափագ։*
Էվել (ավալ)—*առաջ, նախկին, հին։*
Էր—*քարայր, քարանձավ։*
Էրիկ—*ամուսին։*
Էրկուճոգով
Էրկուֆոքիս } —*հզի։*
Էփեյճա—*բավականին։*

Ը

Ըռազի (ռազի)—*համաձայն։*
Ըռատ անել—*հեռացնել, ոչնչացնել։*
Ըռատոնա—*զգեստի տեսակ։*
Ըշատա—*արիշտա, էրիշտա, դդմաճ։*

Թ

Թադարեֆ—*պատրաստություն։*
Թազատան—*նորից։*
Թաբալոշել—*ապտակել։*
Թալան—*բախտ։*
Թալել—*գցել։*
Թախում—*1. սպասք, տարք, 2. տարքի ամբողջությունը։*
Թակալ—*դարձկար։*
Թաղաբ—*ուժ, զորություն։*
Թամազու—*կարոտ։*
Թամամ—*լրիվ, ամբողջ։*
Թամամել—*լրանալ։*
Թամաշա անել—*նայել։*
Թամբալ—*ծույլ։*
Թամբան անել—*պատվիրել։*
Թամուզ—*մաքուր։*
Թայ—*1. հակ, կապոց, 2. համապատասխան, հավասար զույգից մեկը։*
Թայդաշ—*հասակակից, ընկերակից։*
Թաշախուստ—*1. զարդարանք, 2. նազկտանք։*
Թավարզա—*հավասարակշռություն։*
Թավդիր—*տես՝ թատպիր։*
Թավլատ—*որդի, զավակ։*
Թավուր—*տեսակ, կերպ։*
Թատարիֆ—*տես՝ թադարեֆ։*
Թատպիր—*պատրաստություն։*
Թարգիվարան—*հայրենավտար։*

www.naregatsi.org

Թարf—գավակ։
Թափ—1. ուժ, զորություն, 2. անգամ։
Թափանշա—ատրճանակ։
Թամիլան—միայն թե։
Թամմիլ—1. բացի, աքացի, 2. ամբողջ։
Թեզ—շուտ։
Թեզպեխ—համբիչ, տերողորմյա։
Թեփա—գագաթ, գլուխ։
Թեփեկյոզ (թափագյոզ)—ցիկլոպ, հեքիաթային հրեշ, ճակատին մի աչք։
Թբխ—դեպի։
Թիթեն—անասունների շորացած աղբ, որ դաշտերից են հավաքում։
Թիմարել—հարդարել, քերիչով մաքրել (անասունին)։
Թիմա—կտոր, պատառ։
Թլիսմ—կախարդանք, կախարդական իր, հուռութ։
Թլսարել—շողոքորթելով խաբել, համոզել։
Թոզ—փոշի։
Թումարի—ամբողջը, բոլորը, ոչ մասմաս։
Թոռ—ուռկան։
Թոռչի—ձկնորս։
Թուրկել—թողնել։
Թոփ—հակ, կապոց, փաթեթ։
Թոփ անել—հավաքել, ժողովել։
Թոփալ—կաղ։
Թոփուզ—մահակ, լախտ, գուրզ։
Թվանք—հրացան։
Թրընտաս—քաջ, համարձակ։
Թրփոշել—մեծանալ, փարթամանալ։
Թուլա—շան ձագ։
Թումպեքափ—առանց վարտիքի։

Ժ

Ժանիր—թարախ։
Ժղանարել—թափ տալ։
Ժաւր (ժուռ) գալ—շարժվել, մահ գալ։

Ի

Իբռուխ—պղնձե չրածիկ։
Իգի—այգի։
Իզ—հետք։
Իզին—թույլտվություն։
Իլլաճ (իլլաջ)—հնար, ճար։
Իլխի—ձիերի ջոկ, երամակ։
Իլղար—խոստմունք։
Ինբիար—երկյուղ։
Իմանսըզ—անհավատ։
Ինատ—վրեժ։
Ինթիմաս—խնդիրք։
Ինչիմիշ ըլել—տանջվել, նեղվել, չարչարվել։
Ինս—կենդանի։
Իշտահ—ախորժակ։
Իսահ—մարդ, արարած։
Իրիշկել—նայել, փնտրել։

Լ

Լագլագ—արագիլ։
Լալա—խնամատար, դայակ։
Լախում—պայթեցում։
Լական (լագան)—լվացքի կոնք.
Լաչան—անպատկառ, անամոթ։
Լարել—հետապնդել, հետևից ընկնել։

www.naregatsi.org

Լոփի (լոփու)—ալիք։
Լոփլփել—խարխափել։
Լեզուն կպնել—լուռ մնալ, չկարողանալ խոսել։
Լբարաշափ—ծանրության չափ՝ լիդր մոտ 5 կգ։

Լոակա—նավակ։
Լոակաշի—նավավար։
Լուլա—փող, խողովակ։
Լքնել—հարձակվել, վրա հասնել։

Խ

Խարար—լուր։
Խազինե—տեր։
Խազինա—գանձ, գանձարան։
Խարբա—փորձանք։
Խալ—տես՝ հալ։
Խալ—բիծ, նշան մարմնի վրա։
Խալար—նվեր, ընծա։
Խալալաշվիշ բլել—ողջագուրվել, հրաժեշտ տալ։
Խալվար—ծանրության չափ։
Խախալ—խոշոր անցքերով մաղ։
Խախլատակել—խախալով մաղել։
Խաղ՞ անել—ծաղրել, անարգել։
Խամալ (ճամբալ)—բեռնակիր։
Խարաբա—ավերակ։
Խարանիս—հարսանիք։
Խելի—բավական։

Խեյրութխանա—1. անկալանոց, 2. բնչան, հանգրվան։
Խզմա—քթին հագցվող զարդ։
Խրլսել—վերջանալ, սպառվել։
Խրոնակ (խովակ)—դուռ, ճեղք։
Խշչերկար—խաչերկաթ, թանիր խառնելու երկաթե ձող։
Խի՞—ինչո՞ւ։
Խոլվար—հանգիստ, ալքից հեռու, ազատ, դատարկ (տեղ)։
Խորդել—1. դատարկել, 2. կակել, հարդարել։
Խորոտ—գեղեցիկ։
Խսել—խսիր։
Խրիտ անել—առևտուր անել։
Խրխի—մորթ, շապիկ, շղարշ։
Խուշբակ (զուշբակ)—հնդուհավ։
Խուրմա—արմավ։

Ծ

Ծկլտալ—լաց լինել, հեծկլտալ։

Ծարծ—ծածկոց, կափարիչ։

Կ

Կամաղ—պահարան՝ հագուստի։
Կանդար (ղադար)—1. չափ, 2. կշեռք։
Կառավար—մահճակալ։
Կատեպան—այգեպան։
Կեմ (գյամ)—սանձ։
Կեյմ—տես՝ գեյիմ։
Կրառնի—լծկան գոմեշ։
Կոլոնել—հավաքել, կույտ անել։
Կոնա—1. անգամալույծ, 2. բլուր։

Կպցնել—1. միացնել, 2. վառել։
Կտոտվել—փաթաթվել։
Կտոր—ոչխարի աղբ։
Կրճել—ցամաքեցնել, դատարկել։
Կուտ—կորիզ, հատիկ։
Կուպր—ձյութ։
Կուլաղ—այծենակաճ, յափնջի։
Կուլի—տարածություն։
Կուտաղ գալ—գալարվել, կծկվել։

www.naregatsi.org

Հ

Հալ—1. վինակ, 2. շատ, անթիվ։
Հալա—գեռ։
Հալալ—արդար, ազնիվ։
Հալա-հալա անել—ջոկել։
Հալբաթի—իհարկե։
Հալիվոռ—ծեր, ծերունի։
Հալաայա—ծանր հոգեվիճակ։
Հախ—1. արդար, իրավացի, 2. վճար, վարձ։
Հաղ—1. խաղ, 2. երգ, 3. անգամ։
Հաղ անել—խաղալ, պատմել։
Համամ—բաղնիք։
Համբրել—հաշվել։
Համեշա—միշտ, մշտապես, բոլորը։
Հայաթ—բակ, գավիթ։
Հայիֆ—սեռ, վրեժ։
Հայպաթ կարել—հիանալ
Հայվան—անասուն։
Հանդ—գաղջ։
Հաշա—նախասրահ։
Հաջաթ—գործիք։
Հասաս—գիշերապահ սատիկան։
Հավալմիշ ըլնել—վեր թռչել, ծառս լինել, բարձրանալ։
Հավարին հասնել—օգնության գնալ։
Հավուզ—շրավազան։
Հարագա—մշտական։
Հարխանա—հարնայխանա—քեֆի, խրախճանքի վայր։
Հարմաս (կնիկարմաս)—կին։
Հափուռ—բուռ։
Հիրատել—շղայնանալ, բարկանալ։
Հոգին տալ—մեռնել։
Հորդում—երդում։
Հոխել—բերանն առնել, վերցնել։
Հրաբունի (բաբունի)—խմասուն։
Հունար—շնորհք, հմտություն։
Հունարություն—վինարանություն։
Հուրֆ—կրակ, բոց։
Հուրֆմիշ ըլնել—1. խրտնել, 2. բարբոքել, կատաղել։

Ղ

Ղաբուլ—համաձայն, ձեռնտու։
Ղադր—հարգ, պատիվ, ուժ, կարողություն։
Ղազ—սագ։
Ղազապ—փորձանք, պատուհաս, պատիժ։
Ղազուբեն—դատավարություն։
Ղաբ—շերտ։
Ղաբիր—ջրի։
Ղալաճ—գլխագին (ամուսնության առիթով)։
Ղալխան—վահան։
Ղալմաղալ—աղմուկ, վեճ։
Ղալոն—հագուստի տեսակ։
Ղանիր—քավ, հոգս։
Ղամշի—մատակ։
Ղայա—ժայռ։
Ղայդա—եղանակ, ձև։
Ղայիմ—ամուր։
Ղայտա—տե՛ս զայդա։
Ղայֆա—սուրճ։
Ղանատ—թև։
Ղանչրդ—1. էգ շուն, 2. կին (անարգ.)
Ղաշանֆ—գեղեցիկ, սիրուն։
Ղաշղա—բծավոր։
Ղապուլ անել—համաձայնել։
Ղառղառ—ագռավ։
Ղասաս—վրեժ։
Ղաստաֆուն—սուտ քուն։
Ղավրմ-ղարդաշ—ցեղ, ընկեր։
Ղարաբինա—հրացան։
Ղարավաշ—ազատին։

www.naregatsi.org

Ղափաղ—*կափարիչ։*
Ղափլան—*վագր։*
Ղաֆազ—*վանդակ։*
Ղդար—*չափ, անգամ։*
Ղըլըղ—*հագուստ, զգեստ։*
Ղըլըղինտա—*զգեստափոխված, ծրագրված։*
Ղըմլախ—*ավազուտ։*
Ղըմշել—*ափսոսալ, մեղք գալ։*
Ղրշ ու դալ—*հայհոյանք, անարգանք։*
Ղին—*պատյան։*
Ղլին-օրի—*դեղաբույս։*
Ղնայուզ } —*մետաքսե կտոր։*
Ղնավուզ }
Ղոլան—*ձիու մեջքի փոկը, փորկապ։*
Ղոլբուխ—*անուշ, թեատակ։*
Ղոնախլըղ — *ճաշկերույթ, հրավեր, հյուրասիրություն։*
Ղոնտախ—*խանձարուր, բարուր։*
Ղոշատ—*հատատ գերան, կոճղ։*
Ղոշուն—*զորք, բազմություն։*
Ղոշ—*խոյ։*
Ղսմաբ—*բախտ, վիճակ։*
Ղստու (ղաստի)—*դիտմամբ։*
Ղրաղ—*ծայր, եզր, ափ։*
Ղուրի—*սնդուկ, արկղ, տուփ։*
Ղուլլուխ—*ծառայություն։*
Ղուճախ—*գիրկ։*
Ղում—*1. կաթիլ, 2. ավազ։*
Ղուշ—*թռչուն։*
Ղուպուր—*պատյան, դագաղ։*
Ղուռումատ—*հայհոյական խոսք*
Ղուվաթ—*ուժ, զորություն։*
Ղուտում (ղուդում)—*ողնաշար, փխբ. ուժ։*
Ղուրտ—*գայլ, գազան։*
Ղուրուխ—*արգելված արոտավայր։*
Ղֆիլ—*կափարիչ, կողպեք։*

Ճ

Ճաճ—*վեզ։*
Ճանբախ—*ճանապարհ։*
Ճանկ—*բուռ։*
Ճիժ—*երեխա։*
Ճկիթ—*ճկույթ։*
Ճղակ—*ճեղք, անցք։*
Ճղրալ—*շերմանալ։*
Ճղլակ—*ճեղք։*
Ճոթ—*1. բաժին, մաս, 2. կտորեղեն—գործվածք։*
Ճուկ—*ոտք։*

Մ

Մադաճ—*հանք։*
Մաժմժել—*շոշափել։*
Մալա—*պատ շարողի գործիք։*
Մալ—*1. հարստություն, ունեցվածք, 2. ընտանի կենդանիներ, տավար։*
Մալուլ (մալում) ընել—*երևալ, պարզվել։*
Մախսուս—*դիտմամբ։*
Մաղազա—*1. խանութ, 2. եկուղ։*
Մաղարա—*քարայր։*
Մաղարաշի—*պայթեցնող։*
Մաղսուզ—*տես՝ մախսուս։*
Մայիլ կտրել—*հմայվել, գերվել, տարվել։*
Մանանա—*ծառի կամ բույսի վրա գոյացած մի տեսակ խեժ, որն ուտվում է (գազպեհ)։*
Մանկզիլ—*տարածություն, ասպարեզ, երկարության չափ։*
Մաշին—*մեքենա։*
Մաջալ—*ժամանակ։*
Մասլահաթ—*զրույց, խորհուրդ։*
Մարբապա—*պղնձե ճաշաման։*

www.naregatsi.org

Մարիֆաթ—շնորհք։
Մարջ—գրաղ։
Մարտի—մրտանա—տղամարդու պես, համարձակ, քաջ, առատաձեռն, վեհանձն։
Մեզար—1. մաղից ու բամբակից գործած սփռոց, 2. կանացի գոգնոց։
Մեյդան—հրապարակ։
Մեյմուն—կապիկ։
Մեյտարխանա—ձիանոց, ախոռ։
Մեշա—անտառ։
Մերկ-ուրյան—մերկ։
Մեֆյան—բնակատեղ։
Մզրաղ—նիզակ։
Մզուկ—գաղտագողի։
Մբրբպ—գնալու։
Միղաֆիլ—հանկարծ։
Մինքանա—կանացի երկար զգեստ։
Մնալ—գալառ։
Մեռուլ—միջոց, ժամանակ։
Մղսել (մխսել)—ծախսել։
Մղրբպ—մութ։
Մուզդ—վճար, հախ։
Մուզիկ—երաժշտություն։
Մուժդա—ահ՛ս մուշտուլուխ։
Մուլֆ—հարստություն, ունեցվածք։
Մուխ—ծուխ։
Մուղամ—մեղեդի։
Մուշաբել—մոմլաթել։
Մուշտուլուխ—աչքալուսանք։
Մուռաբա—անպետք, կեղտոտ։
Մուսուպաթ—զզվելի, գարշելի, անիծյալ, աննկարագիր։
Մուրախաս անել—թույլատրել, արձակել։
Մուրբուզա—հալվա, խորիզ։
Մուրիկ-մուրիկ—մանրակրկիտ։
Մուֆթա—ձրի։

Յ

Յադ—օտար։
Յարանախ—պառկելու տեղ։
Յալ—1. բաշ, ձիու պարանոցի մազերը, 2. բլուր։
Յախա—օձիք։
Յաղու—թույն
Յամանե—սոսկալի։
Յանե—կողմ։
Յաշ—տարիք։
Յավշան—մանուշակ։
Յարալու—վիրավոր, վերքոտ։

Ն

Նալ—պայտ։
Նաղդ—կանխիկ, առձեռն։
Նաղլ—զրույց, պատմություն։
Նանախ—տապար։
Նամաղուլ—անխոհեմ, անմիտ։
Նաֆաս—շունչ։
Նեճիր—որս։
Նրնախ—անարդար։
Նիաթ—չար դիտավորություն, չար աչք։
Նիզե—նիզակ։
Նիլնել—1. բարձրանալ, 2. հեծնել։
Նխտից ընկնել—ուժասպառ լինել։
Նշանարան—ապացույց, նշան։
Նոբար—հերթ։
Նոխտա—սանձ՝ առանց բերանի երկաթի։

www.naregatsi.org

Շ

Շանի—հինգ կոպեկ։
Շամտաան—մոմակալ։
Շաշ—1. աչքերը ծուռ, 2. գիժ։
Շավաղի—շաղգ։
Շենյար—քաղաք։
Շենլրի—1. բնակատեղ, 2. բազմություն։
Շիրախանա—մառան, շիրառուն։
Շիրիա—պարան։
Շիֆլ (շիֆիլ)—նկար, պատկեր։
Շլակ (շալակ)—բաժին, բեռ։
Շլինեֆ—վիզ։
Շկաֆ—պահարան։
Շորվա—ջրալի կերակուր, եռուզ։
Շոռլ—միզել։
Շվան (շիվան)—լաց ու կոծ։
Շվաֆ—սուվեր։
Շֆել—պատրաստել։

Ռ

Ռոֆը հանդարտել—երթևեկությունը դադարել։
Ռոռ—արտ։

Ջ

Ջադիր—վրան։
Ջալիշ գալ—շարշարվել։
Ջախմախ—կայծհան, հրահան։
Ջամի (շամի)—սանի։
Ջանա—ծնում։
Ջանգալ—1. կարի, 2. պատատաքաղ։
Ջանշ—ձեռքի թաթ։
Ջավ անել—տարածել։
Ջաղիր (շաղիր)—տես՝ շաղիր։
Ջար (շարի)—մինչև։
Ջարսապ—սավան, ծածկոց։
Ջափալախել—ապտակել։
Ջաֆ—գզրարի գործիք՝ բուրդ, բամբակ գզելու համար։
Ջաֆուշ—մուրճ։
Ջեշիր—տեսակ, նմուշ։
Ջրփլախ—մերկ։
Ջիդարել—կապել։
Ջիմանե—կանաչ։
Ջոլ—վայրի, ամայի տեղ։
Ջոֆ—ծունկ։
Ջուր—աղոր։

Պ

Պաբալ անել—հղծել։
Պախա (բանս)—զրույց, պատմություն։
Պաղիհավա—ձրի։
Պատրնան—պատի մեջ շինած պահարան։
Պելկեյան—1. հենարան, 2. գտակատեղ, փխբ. նշան դնել։
Պլեա—մտրակ։
Պլուա—մերկ։
Պխավել—տես՝ բխավել։
Պոզպանա—տե՛ս բաղբանդ։
Պոժոժ (բոժոժ)—զանգակ։
Պոլ—հատակ։
Պողել—միզել։
Պողդ—կոկորդ։
Պոնծ—տես՝ բոնձ։
Պոպոկ—ընկույզ։
Պտուկ—պուտուկ։
Պրիկազչիկ—գործակատար։
Պուղ (բուղ)—գոլորշի։

www.naregatsi.org

Ջ

Ջալլատ—տե՛ս ջանլատ։
Ջամալ—տեսք, կերպարանք։
Ջամբարակ—գուլթանի հատատ շղթա։
Ջայրա—ճախարակ։
Ջան—մարմին, անձ։
Ջանավար—1. գազան, 2. վիթխարի, ուժեղ։
Ջանդակ—դիակ, լեշ։
Ջանը վրա գալ—կազդուրվել, ուժեղանալ։
Ջանլատ—դահիճ։
Ջառ ելնել—իմաց տալ, հաշակել, հայտարարել։
Ջառիա—ուղտերեն։
Ջատուրազ—կախարդ, վհուկ։
Ջաֆա—հոգս։
Ջզդան—երկարաճիտ կոշիկ։
Ջեննեմ—դժոխք։
Ջերկ—շարք, կարգ։
Ջիգյար—1. թոք, 2. գուլթ, սեր։
Ջինս—1. կենդանի, 2. սերունդ։
Ջնեզ—բաժինք, օժիտ։
Ջոջ—մեծ, ավագ։
Ջրինտ (ջիրիդ)—մականախաղ։
Ջրջրհանել—ջուր ցանել, սրբել։
Ջրվեր անել—միզել։
Ջուղաղ—պատասխան։

Ռ

Ռադ անել—կորցնել, հեռացնել։
Ռազի կենալ—համաձայնել, բավական մնալ։
Ռանգ-ռանգ—գունդգունդ։

Ս

Սաբր անել—համբերել, սպասել։
Սալամաթ—ապահով, առողջ։
Սալդ (սալըդ)—տեղեկություն, լուր, համբավ։
Սալջարդ անել—սատիկ ծեծել։
Սախտաթ—1. հաշմանդամ, 2. փչացած, շարքից դուրս եկած, 3. վատանդավոր։
Սաղ—1. ողջ, կենդանի, 2. ամբողջ։
Սաղի—1. մատուռակ, 2. արագավազ։
Սաղր—1. ծանծաղ, 2. ազդր։
Սանթանաթ (սալթանաթ)—հանդիսավորություն, շքեղություն, փառք ու պատիվ։
Սաչմա—կոտորակ՝ հրացանի։
Սապախատան—առավոտյան, շուտ։
Սավայի—բացի։
Սատաղ (սադաղ)—շնորհ, ի սեր։
Սարաֆ—դրամափոխ, սեղանավոր։
Սարվան—ուղտապան։
Սել—սելավ։
Սելյան—թանկարժեք քար։
Սեհրբազ—1. կախարդ, 2. խորհրդավոր, 3. գուշակող։
Սեյիզ—նոխազ, հոտին առաջնորդող այծ։
Սեյր, սեհր (սեր)—կախարդանք, հմայություն։
Սեպեպ (սաբաբ)—պատճառ։
Սերպանդ—կախարդ։
Սրմալ—այսպես։
Սրնոռ (սինոռ)—սահման։
Սրռ—դաղտնիք։
Սրֆաթ—դեմք։
Սրվել—պատապարվել։
Սինոդ—խորհուրդ, ատյան։

38—2573

www.naregatsi.org

Սմավար—*ինքնաեռ։*
Սոմի—*փռում թխած կլոր հաց։*
Սովդամյար—*առևտրական, վաճառական։*
Ստոլ—*սեղան։*
Սրե—*հերթ։*
